Կոմիտաս

Ժողովրդական երգեր

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ [illegible]

[illegible]

[illegible]

ՀԱԼԷՊ-ՍՈՒՐԻԱ

48226

N° 14
ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Ա. ՏԷՐ - ՍԱՀԱԿԵԱՆ,
39, RUE TILEL, ALEP - SYRIE

ԿՈՄԻՏԱՍ

ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ԵՐԳԱՐԱՆ

48226

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ ԵՒ ՏՊԱԳՐՈՒԹԻՒՆ
Ա. ՏԷՐ - ՍԱՀԱԿԵԱՆ

1937
ՀԱԼԷՊ - ՍՈՒՐԻԱ

ՄԱՇՏՈՑՅԱՆ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆ
* ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ *

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Նոր երգարանի մը անմիջական պէտքը չէ՛ որ մղեց մեզ պատրաստելու երգերու ներկայ հատորը, որքան ալ փոփոխութիւնն ու նորութիւնը փափաքելի ըլլան առհասարակ ամէն ձեռնարկի մէջ:

Արդարեւ, մեր դարաւոր վիշտն ու զայրոյթը աղաղակող ազգային երգերու հաւաքածոներ շատ ունինք, այլազան բովանդակութեամբ եւ ծաւալով: Հայուն ցաւատանջ կեանքին ու կենցաղակերպին պատկերը ցոլացնող, տառապանքի եղերական դրոշմով կնքուած այդ երգերու մեծ թիւին քով, հոգեկան հրճուանք մըն է տեսնել հետզհետէ զարգացումը եւ տիրական տեղ գրաւելը ուրախ, աշխատանքի, բնութեան եւ անբիծ սիրոյ արտայայտութեամբ զեղուն՝ մեր ժողովրդային ինքնուրոյն երգեցողութեան:

Աշուղական գողտրիկ էջերն ու մեր բնազաւառի ակնաղբիւրէն բխած տոհմիկ հարազատ երգերէն շատերը, սակայն, պիտի մնային մեզի անհաղորդ, եթէ ջանք չթափուէր զանոնք մէկտեղելու՝ հատորի մը մէջ:

Այս սեռի գոհար երգերը, ժամանակի խորհրդաւոր անյայտութեան ընթացքին ժողովրդի կողմէ բանահիւսուած, երգուած եւ բերնէ բերան մեզի հասած եւ կամ մեր նորագոյն երաժիշտներուն կողմէ մշակուած կամ ստեղծագործուած, կ'արժէ որ դառնան հայ հասարակութեան լայն խաւերուն սեփականութիւնը:

Ուստի, պատահական մանր մունր հրատարակութեանց եւ կցկտուր ժողովածոներու ամփոփումը պարունակող այս աշխատութիւնը ջանադիր եղած ենք դարձնել իր տեսակին լրիւ հաւաքածոն — պայմաններու ներած չափով ի հարկէ — ուր մեծ թիւ մը կը ներկայացնեն մանաւանդ Հայաստանի եւ գաղութներու մեծանուն երաժիշտներուն նոր ստեղծագործութիւններն ու աշուղական երգերը:

Ներկայ հաւաքածոյի հիմնական նպատակն է մասնաւորապէս ուսարել բազմաթիւ բազում գեղեցկութիւններով օժտուած տոհմիկ երգի եւ միանգամայն մեր մշակուած ինքնատիպ արուեստի ընդհանրացման.

ինչ որ հայ ժողովրդի մեծամասնութեան մէջ պիտի կրնայ վառ պահել հայ երգի եւ երաժշտութեան հանդէպ հասկացողութիւնը եւ պիտի մշակէ գնահատանքի խորացումը, որուն պակասէն կը տուժեն արուեստագէտն ու ժողովուրդը՝ հաւասարապէս:

Ժամանակն է որ օտարամուտ եւ թրքական մեղկ ու խենէշ երգերը տեղի տան մեր գեղջուկ եւ ժողովրդային զմայլելի երաժշտութեան, եւ հայկական երգեցողութեան քաղցրիկ շո՛ւնչը միայն հնչէ մեր երդիքներուն տակ եւ մեր բոլոր հաւաքոյթներուն մէջ:

Թող փարատի ընդմի՛շտ, այն սխալ ու թիւր մտայնութիւնը, թէ մենք չունինք հարսանեկան խրախճանութեանց յարմար երգեր: Դարերէ իվեր, Նաւասարդեան տօներէն առաջ եւ վերջ, միթէ թուրք երգերն ու եղանակնե՞րն էին որ կը թնդացնէին, նման առիթներով, հայկական բնագաւառի մեր լեռներն ու սարաւանդները: Ընդհակառակը, Գողթան Գաւառի գուսաններն ու մեր ամէն դարու աշուղները, Նայիրեան Աշխարհի մէկ ծայրէն միւսը, հայ երգի քաղցրութիւնը կը պտտցնէին միա՛յն, դարձնելով զայն մեր նախահայրերու պաշտամունքին առարկան: Այսօր ալ, հայ երաժշտութեան նուիրեալները ի՞նչ գեղեցիկ ու հոգեպարար ստեղծագործութիւններ ունին, որոնք կրնան հաւասարիլ նոյնիսկ քաղաքակիրթ երկիրներու համանման կտորներուն:

* * *

Բարեխիղճ գործ մը ներկայացնելու նախանձախնդրութեամբ. երգերու ընտրութեան ու անոնց բառերուն ճշդութեանց ստուգման համար ժամանակ եւ ջանք չենք խնայած՝ խորհուրդն ու աջակցութիւնն ստանալով արտասահմանի աւելի քան տասնեակ մը ծանօթ երգահան եւ երաժիշտներուն:

Ստիպուեցանք գործը ծրագրուածէն աւելի ստուարացնել, մէկը միւսէն արժէքաւոր երգերը դուրս չձգելու մտահոգութեամբ: Աշխատած ենք շատ քիչ տեղ տալ օտարոտի նիւթերու եւ այդ է պատճառը որ մեր ժողովրդային օբերէթներու երգերէն դուրս՝ փոքր մաս մը միայն առած ենք օտար օբերէթներէ, որոնք ընդհանրացած են մեր մէջ:

Որոշ է թէ ընկերային կամ ընտանեկան հաւաքոյթներու ընթացքին՝ նման գրպանի ընդարձակ երգարանի մը պակասն է որ յաճախ դըժուարութեան կ'ենթարկէ երգեցողութիւնը: Ուստի, վստա՛հ ենք, այդ ուղղութեամբ մեծապէս օգտակար պիտի դառնայ մեր հրատարակութիւնը, տրուած ըլլալով անոր բովանդակութիւնը որ կը գերազանցէ իր բոլոր նախորդները: Բաւական պիտի ըլլայ զայն մէկ անգամ աչքէ անցնել՝ մեր տարած աշխատանքին ծանրութիւնը գնահատելու համար:

Յոյժ փափաքելի էր անշո՛ւշտ, ունենալ մեր լոյս ընծայած բոլոր երգերու բառերուն հետ իրենց ձայնագրութիւններն ալ, նոյն հատորին մէջ. բայց. նման ձեռնարկի մը հնարաւորութիւնը կարելի պիտի ըլլար միա՛յն ներկայ ծաւալի անհամեմատ ստուարացումով եւ մեծամեծ ծախքերու յանձնառութեամբ: Ձայնագրութեան քիչ ու շատ տեղեակ՝ իւրաքանչիւր հետաքրքիր անհատ, սակայն, դիւրութեամբ պիտի գտնէ զանոնք հրապարակի վրայ. նկատելով որ մենք գրեթէ ո՛չ մէկ ժողովրդային երգ հիւրընկալած ենք, որ չունենայ իր երաժշտութեան մշակումը եւ գէթ միաձայն նօթան:

* * *

Անհրաժեշտ նկատեցինք մեր ներկայ աշխատասիրութեամբ. նոյնպէս ներկայացնել հայ երաժշտական արուեստի հիմնաստեղութեան կեանքն ու գործը ամփոփ գիծերու մէջ (*):

Ո՛չ միայն անցեալ եւ նախանցեալ դարերու պատկանող մեր աշուղ-երաժիշտները. այլեւ մեր ժամանակակից երգահանները, որոնք մեծ դեր են կատարած հայ երաժշտական արուեստի վերածնունդին եւ

(*) *Կենսագրութիւններու պատրաստութեան համար մեր ձեռքին տակ ունեցած ենք՝ Արամ Երեմեանի* «Սեւան»*ը*, *Ռուբէն Թէրլէմէզեանի քննադատական գործերը, Խորհ. Հայաստանի* «Հոկտեմբեր - Նոյեմբեր Տարեգիրք»*ը*, «Գեղունի»*ի*, «Անահիտ»*ի*, «Վէմ»*ի*, «Հանդէս Ամսօրեայ»*ի*. «Հայրենիք Ամսագր»*ի*, «Բազմավէպ»*ի*. «Կոչնակ»*ի*, «Կեանք եւ Արուեստ» *եւ* «Հօկ» *պարբերաթերթերու հաւաքածոները, Թէոդիկի* «Ամէնուն Տարեցոյց»*ները, Արիստակէս Քհնյ. Հիսարլեանի* «Պատմ. Հայ Ձայնագրութեան» *հատորը եւ այլ մասնագիտական հրատարակութիւններ:*

զարգացման մէջ, կը մնան գրեթէ անծանօթ մեր ժողովրդի ստուար մեծամասնութեան: Անոնք իրենց արուեստով անգնահատելի ծառայութիւն մատուցին հայ ժողովուրդին, մասնաւորաբար զուտ հայկական ա՛յնքան սիրուն ու գունագեղ երաժշտութեան մշակման գործով: Ժողովրդային տոհմիկ երգերը հաւաքեցին հայ գեղջուկի բերանէն, անոր հոգիի ակունքէն եւ իրենց պարզունակ *մօթիֆ*ներէն բազմաձայնի վերածեցին, մեր երգեցողութիւնը ձերբազատեցին օտարամուտ եղանակներու ազդեցութենէն եւ զուրգուրանքով մաքրեցին, բիւրեղացուցին զանոնք բիւզանդական, յունական, պարսկական, թրքական եւ այլ տարրերէն, գտնելով զուտ հայկական երանգն ու կշռոյթը:

Այսպէս, մեր երաժշտական տաղանդներու փաղանգին ծանօթացումը, վստա՛հ ենք, սատար պիտի հանդիսանայ մեր մէջ հայ երաժշտութեան արժէքին գիտակցութեան աւելի՛ ընդհանրացման: Եւ մենք հոգեպէս գոհացած եւ վարձատրուած պիտի ըլլանք, եթէ երգերու ներկայ փունջը խթան մը ըլլայ հայ յարկերէ ներս հնչեցնելու մեր աղուաբարբառ մեղեդիները, մեր աշխոյժ պարերգները, եւ այն բոլոր աւաչները — տրտում կամ զուարթ — որոնք ցեղին հոգիէն փրթան ուրախութեան կամ սուգի օր մը, եւ զայն արձագանգելու մեր գալոց ժառանգորդներու խղճին եւ զգացումներուն մէջ, սերունդէ սերունդ, աւանդութեան ոսկեղէն շղթայովը օղակուած:

Ա. ՏԷՐ-ՍԱՀԱԿԵԱՆ

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

Մեր միջնադարեան տաղերգուներուն ամէնէն նշանաւորն է Նահապետ Քուչակ, եղած է երգիչ եւ ինքնատիպ բանաստեղծ:

Ան՝ ո՛րքան իր արտադրութեան քանակով, նո՛յնքան իր հոյակապ քերթողութեամբ, պատիւ կը բերէ հայ արուեստին ու մտքին:

Արիստակէս Վրդ. Տէվկանցի կը պարտինք Ն. Քուչակի յայտնաբերումը (1882 *ին Թիֆլիս լոյս ընծայուած* Հայերգով)*: Ըստ Տէվկանցի, ԺԵ. դարու վերջերը եւ ԺԶ. դարու սկիզբները ապրած Վասպուրականցի աշուղ մըն էր Նահապետ Քուչակ, համանուն աշուղի մը թոռ:*

Ըստ Զօպանեանի, որ 1902 *ին լոյս ընծայած է* Նահապետ Քուչակի Դիւանը, *քննական ուսումնասիրութեամբ մը, Ակնեցի պիտի ըլլայ Քուչակ. գոնէ այդպէս ենթադրել կուտան իր բարբառն ու Ակնայ ժողովրդական երգերուն հետ ունեցած շատ մօտիկ նմանութիւնը:*

Ոմանք իր Քուչակ մականունին մէջ ուզեցին գտնել քուչիւկ (կարճահասակ) բացատրութիւնը, բայց աւելի բնական կը թուի քօչէկ (երգիչ, նուագածու, պարող) մեկնաբանութիւնը որ տուած է Զօպանեան:

Քուչակի տաղերը երեք խումբ են. ա) Սիրոյ տաղեր, բ) Խրատական-այլաբանական երգեր, գ) Պանդուխտի երգեր:

Սիրոյ երգերը, որոնք մեր միջնադարեան ամենաչքեղ սիրային բանաստեղծական էջերը կրնան համարուիլ, քառեակներ են՝ 2 — 8 *տող կտորներով, սեղմ, հրաբորբոք զգացումով, պճնուած՝ արեւելեան սրամիտ նմանութիւններով:*

Աւանդական կեանքին վերջին մասը Վանայ մօտ Խարակոնիս գիւղը անցուցած է Քուչակ եւ հոն ալ մեռած ու թաղուած: Իր դամբանը ուխտատեղի դարձած է գիւղացիներու:

Խրիմեան Հայրիկ Քուչակի մահուան պարագան այսպէս պատմած է.— «Քուչակ կը կանչէ գիւղացիները, ապա կ'ելլէ Խարակոնիս գիւղի Ս. Թէոդորոս Եկեղեցիին կատարը և կ'ըսէ. «Այս տեղէն ինքզինքս վար պիտի նետեմ, ուր որ իյնամ՝ այնտեղ թաղեցէք զիս»։ Գիւղացիները մտիկ չեն ըներ, կը կարծեն թէ Քուչակ զուարճաբանութիւն կ'ընէ. սակայն ան յանկարծ ինքզինքը վար կը նետէ ու կը մեռնի, և այդ օրէն Քուչակի գերեզմանը ուխտատեղի մը եղած է գիւղացիներուն»։

ՍԱՅԵԱԹ-ՆՕՎԱ

Սայեաթ-Նօվա, մկրտութեան անունով Արութին (Յարութիւն), 18րդ դարու հայ աշուղական գրականութեան ամէնատաղանդաւոր ներկայացուցիչն է։

Ծնած է Թիֆլիս. զաւակը՝ Հալէպէն Կովկաս մեկնած և հոն հաստատուած հայ արհեստաւորի մը, որ ամուսնացած է Հաւլաբարցի Սառա անուն աղջկան մը հետ։

Արութին, որ իր պատանեկան շրջանին եղած է ջուլհակ, քերթողական ձիրքով օժտուած՝ շատ կանուխէն սկսած է յօրինել սիրային գողտրիկ տաղեր, որոնք իր արուեստի թանկագին ընկեր և տաղանդին հաւատարիմ նեցուկ՝ քեմանչէին թրթռուն լարերուն վրայ, կերտեցին իր աշուղական փառքը. հետզհետէ դարձնելով զինք՝ իշխանաւորներու և արքաներու պալատին անզուգական գուսանը, հայ ժողովրդական մեծ հագներգուն՝ Սայաթ-Նօվան։ Ան եղաւ մինչև 1762. Վրաց Հերակլ Բ. Թագաւորին արքունի պաշտօնական երգիչը։

Հարիւր քառասուն երկու տարիներ անցած են մեր աշուղական գրականութեան ամենափայլուն եւ ինքնատիպ տիտանին նահատակի մահուան, բայց դեռ այսօր ալ մարդկային հոգին յուզող իր երգերը կ'արձագանգեն ամենուրեք, բոլորին հիացումին առարկայ։ Զանոնք կ'երգեն հայն ու վրացին, թուրքն ու թաթարը հաւասարապէս։

ՍԱՅԵԱԹ-ՆՕՎԱ

Սայեաթ-Նօվայի անձին և իր գրական ժառանգութեան ծանօթացումը՝ մենք կը պարտինք Բժ. Գէորգ Ախվերդեանին, որ 1852 թուականին Մոսկուայի մէջ, մեծ խնամքով եւ ընդարձակ ներածութիւնով մը լոյս ընծայեց անոր ձեռագիր «Դաֆթար»ը՝ հայերէն երգերու ժողովածուն։ Ախվերդեան, իր հրատարակած այդ ուսումնասիրութեամբ անփոխարինելի ծառայութիւն մատոյց մեծանուն աշուղի տաղանդի փայլը արժարժելու իր ժամանակաշրջանին և յետոյ։

Սայեաթ-Նօվայի երգերը գրուած են ժամանակի Թիֆլիսահայ բարբառով, զոր ինքնատիպ քերթողական ներդաշ-

նակ լեզուի մը վերածած է ան, յաճախ վրացերէն, պարսկերէն, թուրքերէն և արաբերէն բառերու խճողումով։ Իր բանաստեղծութեանց և եղանակներու ձևին և գնացքին մէջ կը տիրէ արեւելեան մահմետական ազգերու քնարերգութեան ազդեցութիւնը, թէև քրիստոնէական զգայնութեամբ, սակայն ո՛չ խորապէս հայկական։

Կովկասահայ Գրողներու Ընկերութիւնը, հիմնուած 1911ին, որուն նախագահն էր՝ ժողովրդական բանահիւսութեան, երգերու և երգիչներու սիրահար՝ Յովհ. Թումանեան, գեղարուեստական երեկոյթներու միջոցով լիուլի օգտագործեց ժողովրդականացնելու Սայեաթ-Նովայի աւելի քան կէս դար աննկատ մնացած անունը 1914ին. իր ծննդեան 200 ամեակին առթիւ։ Գեղեցիկ հրատարակութեամբ մը վերստին լոյս ընծայուեցան անոր երգերը։ Սայեաթ-Նովայի նուիրուած այդ երեկոյթներէն մի քանին եղան միջազգային գրական-գեղարուեստական հանդէսներ. ուր գլխաւորաբար վրացի գրագէտներ, մասամբ նաև ռուսեր և թաթարներ կուգային հայերու հետ վայելելու՝ հայ նշանաւոր գուսանի տաղանդի ստեղծագործութիւնները և իրենց յարգանքի տուրքը բերելու հայ ժողովրդական մեծանուն երգիչին։

Այն հանգամանքը որ Սայեաթ-Նովա երգեր ու գրեր է Կովկասի երեք գլխաւոր ժողովուրդներու, հայերու, վրացիներու և թաթարներու լեզուներով, մեծապէս կը նպաստէր որ այդ ժողովուրդներէն իւրաքանչիւրը հարազատութիւն զգար դէպի նշանաւոր հայ աշուղը։ Վրացիք յառաջ տանելով իրենց հետաքրքրութիւնը, առանձին հատորով մը լոյս ընծայեցին անոր վրացերէն տաղաւորները և այդ առթիւ մեծ գովասանքով խօսելով իր մասին. անոնցմէ ոմանք նոյն իսկ, վրացի նկատեցին զայն։

Բանասէրներէն շատեր այն կարծիքն ունին թէ Սայեաթ-Նովան ծնած է 1712—1714ին, սակայն այս թուականները հաստատուն տուեալներու վրայ յենուած չեն, որով-

հետև ուրիշներու կարծիքով ան ծնած կրնայ ըլլալ 1718ին, 1722ին կամ 1724ին։

Գալով Սայեաթ-Նովայի անուան, այդ մասին կան բազմաթիւ մեկնութիւններ։ Գարեգին Լեւոնեան՝ Սայեաթ-Նովա անունը մեկնաբանած է՝ Սայիաթ - որսորդ և Նովա-համբաւ, պարսկերէն՝ համբաւաւոր որսորդ։ Յ. Թումանեան՝ Սէյիդ (Տէր. իշխան. ուսուցիչ) և Նիվա կամ Նիւվա (նուագ, եղանակ) բացատրութիւնը ընդունելով. «երգի տէր». երաժշտութեան «իշխան» բանաստեղծական մեկնութիւնը տուած է Սայեաթ-Նովա անուան։ Վրացի բանաստեղծ Գրիշաշվիլի՝ մեր աշուղի անունը մեկնած է իբրև «նոր ուսուցիչ» պարսկերէն Սէյիդ Նիվիին նմանցնելով Սայեաթ-Նովան։

Սայեաթ-Նովա իր ստեղծագործական արուեստի ամենափայլուն շրջանին, 1768էն յետոյ. երբ արդէն մեռած էր կինը. աշխարհիկ քնարին հետ միայնգամայն լքելով չորս զաւակները. կը մտնէ Հաղբատի Ս. Նշան վանքը և կը դառնայ աբեղայ, հետագային կը ստանայ վարդապետի աստիճան եւ այդպէս ալ կը մնայ մինչև մահը։ Վանական կեանքին մէջ, 1795 թուականին, Պարսից Աղա Մէհմէտ Խանի Թիֆլիս խուժող հէծելազօրքին՝ բարբարոսութեան առաջին զոհը եղաւ

ան, վանքին խորը, աղօթքի պահուն, եղերական վախճանով մը։

Մահուան 140 ամեակին առթիւ, 1935ին, Խորհ. Հայաստանի Պատմութեան և Գրականութեան Հիմնարկութիւնը յարգանքի մեծ երեկոյ մը կազմակերպեց Սայեաթ-Նօվայի կեանքին և աշուղական գործունէութեան շուրջ. այդ դասախօսական երեկոյթին իրենց մասնակցութիւնը բերին Վրացի և Ատրպէյճանցի գրագէտներ։ Միանգամայն Պետհրատը լոյս ընծայեց իր երգերէն ութ հատը, Սարգիս Բարխուդարեանի մշակումով, ինչ որ կարեւոր էր Սայեաթ-Նօվայի երգերը աւելի արժէքաւորելու տեսակէտով։

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ԼԻՄՈՆՃԵԱՆ
(Պապա Համբարձում)

Հայկական ձայնագրութեան հիմնադիրն եղաւ Պապա Համբարձում։ Ծնած է 1768ին Պոլիս, բնիկ Խարբերդցի Հայ Հռոմէական չքաւոր ընտանիքէ մը։ Հազիւ նախնական կրթութիւն ստացած՝ դերահաս տարիքին մէջ սորվեցաւ աշակերտել դերձակի մը։ Գործէ դուրս, ան իր բոլոր ժամանակը կը յատկացնէր շարականներ երգելով և տեւականօրէն կը յաճախէր ու դպրութիւն կ'ընէր Պոլսոյ այլեւայլ եկեղեցիներուն մէջ։

Իրեն ժամանակակից Տիւզեան Յովհ. Չէլէպի, որ երաժշտութեան սիրահար մըն էր, տեսնելով երիտասարդ Համբարձումի այդ արուեստի հանդէպ ցոյց տուած չափազանց հետաքրքրութիւնը և բնական ձիրք մը նկատելով անոր մէջ, զայն առաւ իր ծնողքէն և բնակութիւն յատկացուց անոր՝ Գուրուչէշմէյի Վոսփորի եւրոպական ափին վրայ կառուցուած իր ապարանքին մէջ, որ երաժշտական կաճառ մըն էր գրեթէ, ուր Համբարձում բացառիկ առիթ ունեցաւ վարպետ երգիչներ լսելու և անոնցմէ օգտուելու։

ՊԱՊԱ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Քիչ վերջ, Համբարձում դասախօս կանչուեցաւ Մխիթարեաններու Լուսաւորչեան Վարժարանը, միանգամայն յաճախելով համբաւաւոր յոյն երաժըշտապետ Օնոփրիոս Փասլթիի քով, որ Պէզճեան Յարութիւն Ամիրայի հրամանով, Մայր Եկեղեցւոյ յարակից Ուսումնարանի մէջ, յունական ձայնագրութեամբ դաս կուտար հայ աշակերտներու։

Պոլսոյ եկեղեցիներուն մէջ, մինչեւ այն ատեն, երգեցողութիւնները կ'ըլլային յունական տեսակ մը ռնգային եղանակով. Համբարձումին խի՛ստ անախորժ կուգար այդ երաժշտութիւնը. ան, մանկութենէն ի վեր ջերմ փափաք ունէր շարականներու խազերէն ճշգրիտ և մանրամասնօրէն դասաւորուած հայկական ձայնանիշեր մէջտեղ բերելու։ Մինչ այդ, Լիմոնճեան արդէն յունական ձայնագրութեան արուեստին մէջ հմտացած, ձեռնարկեց այդ ուղղութեամբ յամառ աշխատանքի։ Տարիներու երկար ու տքնաջան ուսումնասիրութենէ յետոյ, ան կարողացաւ շարականներու հին, տարրական խազերու օժանդակութեամբ կերտել հայ ձայնագրութիւնը, դասակարգուած չափերով և ամանակներով, և եղաւ ո՛չ թէ վերանորոգիչը, այլ հիմնադիրը հայկական ձայնագրութեան, որոնցմով կարելի կ'ըլլար շարականներու երգեցողութիւնը ճշգրիտ կերպով ձայնագրել և ամէն տեղ միօրինակ երգել։

Իր առաջին գործը եղաւ բոլոր գիտցած եղանակները ձայնագրել և կանոնաւորել։ Երկար ատեն պայքարեցաւ յունական անախորժ եղանակները վտարելու, որոնք ամենուրեք տիրապետած էին մեր եկեղեցիներէն ներս։ Հակառակորդներ խեթիւ կը նայէին այս պատկառելի ուսուցչի արուեստին և անոր գտած արտասովոր պատիւին։

նակ լեզուի մը վերածած է ան, յաճախ վրացերէն, պարսկերէն, թուրքերէն և արաբերէն բառերու խճողումով։ Իր բանաստեղծութեանց և եղանակներու ձևին և գնացքին մէջ կը տիրէ արևելեան մահմետական ազգերու քնարերգութեան ազդեցութիւնը, թէև քրիստոնէական զգայնութեամբ, սակայն ո՛չ խորապէս հայկական։

Կովկասահայ Գրողներու Ընկերութիւնը, հիմնուած 1911ին, որուն նախագահն էր՝ ժողովրդական բանահիւսութեան, երգերու և երգիչներու սիրահար՝ Յովհ. Թումանեան, գեղարուեստական երեկոյթներու միջոցով լիուլի օգտագործեց ժողովրդականացնելու Սայեաթ-Նովայի աւելի քան կէս դար աննկատ մնացած անունը 1914ին. իր ծննդեան 200 ամեակին առթիւ։ Գեղեցիկ հրատարակութեամբ մը վերստին լոյս ընծայուեցան անոր երգերը։ Սայեաթ-Նովայի նուիրուած այդ երեկոյթներէն մի քանին եղան միջազգային գրական-գեղարուեստական հանդէսներ, ուր գլխաւորաբար վրացի գրագէտներ, մասամբ նաև ռուսեր և թաթարներ կուգային հայերու հետ վայելելու՝ հայ նշանաւոր գուսանի տաղանդի ստեղծագործութիւնները և իրենց յարգանքի տուրքը բերելու հայ ժողովրդական մեծանուն երգիչին։

Այն հանգամանքը որ Սայեաթ-Նովա երգեր ու գրեր է Կովկասի երեք գլխաւոր ժողովուրդներու, հայերու, վրացիներու և թաթարներու լեզուներով, մեծապէս կը նպաստէր որ այդ ժողովուրդներէն իւրաքանչիւրը հարազատութիւն զգար դէպի նշանաւոր հայ աշուղը։ Վրացիք յառաջ տանելով իրենց հետաքրքրութիւնը, առանձին հատորով մը լոյս ընծայեցին անոր վրացերէն տաղաւորները և այդ առթիւ մեծ գովասանքով խօսելով իր մասին. անոնցմէ ոմանք նոյն իսկ, վրացի նկատեցին զայն։

Բանասէրներէն շատեր այն կարծիքն ունին թէ Սայեաթ-Նովան ծնած է 1712—1714ին, սակայն այս թուականները հաստատուն տուեալներու վրայ յենուած չեն, որովհետև ուրիշներու կարծիքով ան ծնած կրնայ ըլլալ 1718ին, 1722ին կամ 1724ին։

Գալով Սայեաթ-Նովայի անուան, այդ մասին կան բազմաթիւ մեկնութիւններ։ Գարեգին Լեւոնեան՝ Սայեաթ-Նովա անունը մեկնաբանած է՝ Սայիաթ - որսորդ և Նովա-համբաւ, պարսկերէն՝ համբաւաւոր որսորդ։ Յ. Թումանեան՝ Սէյիդ (Տէր. իշխան, ուսուցիչ) և Նիվա կամ Նիւա (նուագ, եղանակ) բացատրութիւնը ընդունելով. «երգի տէր». երաժշտութեան «իշխան» բանաստեղծական մեկնութիւնը տուած է Սայեաթ-Նովա անուան։ Վրացի բանաստեղծ Գրիշաշվիլի՝ մեր աշուղի անունը մեկնած է իբրև «նոր ուսուցիչ» պարսկերէն Սէյիդ Նիվիին նմանցնելով Սայեաթ-Նովան։

Սայեաթ-Նովա իր ստեղծագործական արուեստի ամենափայլուն շրջանին, 1768էն յետոյ, երբ արդէն մեռած էր կինը, աշխարհիկ քնարին հետ միանգամայն լքելով չորս զաւակները, կը մտնէ Հաղբատի Ս. Նշան վանքը և կը դառնայ աբեղայ, հետագային կը ստանայ վարդապետի աստիճան եւ այդպէս ալ կը մնայ մինչև մահը։ Վանական կեանքին մէջ, 1795 թուականին, Պարսիկ Աղա Մէհմէտ Խանի Թիֆլիս խուժող հեծելազօրքին՝ բարբարոսութեան առաջին զոհը եղաւ

1831ի Բերայի հրդեհին հրոյճարակ եղաւ Լիմոնճեանի տունը։ Արքունի ճարտարապետ Պալեան Դր. Ամիրայ, հիացող մ՚ըլլալով Համբարձումի տաղանդին ու ծառայելու ոգիին, փառաւոր բնակարան մը կանգնեց՝ ութը սենեակներով, որպէսզի հոն հանգիստ կարենար բնակիլ բազմարդիւն երաժիշտը իր ընտանիքով։ Իսկ Պէզճեան Յարութիւն Ամիրայի կարգադրութեամբ, երաժիշտ ուսուցիչ նշանակուեցաւ յոյն Ոնոփրիոսի տեղ, Մայր Եկեղեցւոյ երգեցիկ դպրաց խումբին, իր հեղինակած նօթայով դասախօսելու եւ շարականներու երգեցողութիւնը ուսուցանելու։

Ան լոյս ընծայեց ձայնագրուած ստուար թիւով շարականներ, մեղեդիներ, տաղեր, պէսթէներ ու բէշրէֆներ, բոլորն ալ իր հեղինակութիւնները։ Հասցուց բազմաթիւ աշակերտներ, որոնք իր մահէն վերջ հետեւողներ եղան իր հիմնադրած գործին և շատեր դարձան յայտնի դպրապետներ և երաժիշտ ուսուցիչներ, որոնցմէ Արիստակէս Յովհաննիսեանին վերապահուած էր հայկական նօթաներու կիսատ մնացած նորութեանց կատարելագործումն ու զարգացումը, որ ինքն ալ ծանօթ երաժիշտ եղաւ ուսուցչին պէս և ոսկեզօծ պատուանշանի արժանացաւ օրուայ Թագաւոր Սուլթան Մէճիտէն։

Նշանաւոր օր մը աւանդեց իր հոգին Պապա Համբարձում, 1839 Յունիս 29ին. նոյն օրը մեռաւ Սուլթան Մահմուտ Բ. Թագաւորը։

ԵՂԻԱ ՏՆՏԵՍԵԱՆ

Պապա Համբարձումէն վերջ, Պոլսոյ հայութիւնը ունեցաւ Հայաստ. Եկեղեցւոյ հարազատ երգեցողութեանց աւանդապահ՝ արժանաւոր ձայնագրագէտ-երաժիշտներ, որոնցմէ ամէնէն ծանօթներէն է Եղիա Տնտեսեան.

Տնտեսեան ծնած է 1834ին եւ իր ժամանակին եղած է

ԳՐԱԴԱՐԱՆ

հայ գրականութեան եւ երաժշտութեան յայտնի դէմքերէն. տպագրիչ, ուսուցիչ, ազգային գործիչ եւ հայ լեզուափոխութեան նախակարապետ։ Ան հեղինակն է «Նկարագիր Երգոց Հայաստանեայց Ս. Եկեղեցւոյ» անուն յոյժ գնահատելի աշխատութեան մը, որուն բ. տպագրութիւնը լոյս ընծայուեցաւ վերջերս 1933ին, իր որդւոյն Լեւոն Տնտեսեանի կողմէ, Պոլսոյ մէջ։

Եղանակաւորած է ազգային կարգ մը երգեր՝ ժամանակին, իր հրատարակած «Նոր Երգարան Հայոց» անուն գրքին համար կը բանտարկուի եւ բանտի խոնաւ մթնոլորտին մէջ զոհը կը դառնայ բռնապետական ռէժիմի, 1881ին։

48226

ՏԻԳՐԱՆ ՉՈՒՀԱՃԵԱՆ

ՏԻԳՐԱՆ ՉՈՒՀԱՃԵԱՆ

19րդ դարու վերջին քառորդին, աշխարհահռչակ համբաւի մը տիրացաւ Տիգրան Չուհաճեան, իր անստգիւտ տաղանդին շնորհիւ, իբրեւ երաժշտագէտ, հեղինակ եւ վարիչ՝ գուսաներգական խումբերու։ Ա՛ն էր որ առաջին անգամ Պոլսոյ մէջ արեւելեան երաժշտութիւնն օժտեց եւրոպական արուեստի նրբութեամբ մշակուած օպերէթներով։

Ծնած է 1836ին։ Երիտասարդ տարիքէն՝ աննուաճ կամքով նուիրուեցաւ իր նախասիրած ճիւղին և հետզհետէ ձեռք բերաւ մեծ յաջողութիւններ։

1861ին, ան մեկնեցաւ Միլան, ուր քանի մը տարի հետեւեցաւ երաժշտական այլեւայլ դասընթացքներու։

Չուհաճեան 1873ին հիմնեց գուսաներգական առաջին

խումբը և այնուհետեւ սկսաւ ներկայացնել իր օպերէթներու շարքը Պոլսոյ մէջ, հայ, թուրք, յոյն, հրեայ, ռուս և եւրոպացի միջազգային բազմութիւններու առջեւ, որոնք կը լեցնէին թատերասրահը՝ արտասովոր հետաքրքրութեամբ։ Ան չբաւականացաւ Պոլսոյ նեղ շրջանակով և իր խումբով այցելեց Եգիպտոս, Աթէնք, Բարիզ, ուր եւրոպացի արուեստագէտներ, որոնք ա՛յնքան կը հիանային իր բարձր հանճարին և աննման հեղինակութիւններուն, «Հայ Վէրտի» կը յորջորջէին զայն։ Վեհապետական պատուանշաններով կուրծքը զարդարուեցաւ. Օսմանեանէն, Իտալականէն եւ Ֆրանսականէն զատ՝ ունեցաւ Ռուսականն ալ, զոր Նիգոլա Մեծ դուքսը ձեռքովը կախեց Սան-Սթէֆանոյի մէջ, ռուս և թիւրք դաշնագրին կնքումէն ետքը։

Չուխաճեան ո՛չ միայն իբրեւ երգահան ու հեղինակ՝ իր մեծ արժանիքն ունեցաւ, այլ և Թուրքիոյ մէջ նոր դարագլուխ մը բացաւ ու վճռական ազդեցութիւն մը գործեց. ստեղծելով զուսանական թատրոնը, որմէ տրամաթիկ թատրոնն ալ տրպաւորուեցաւ։ Իրմով յառաջ եկան վարպետներ — Պէնլեան եւ ուրիշներ — որոնք օր մը պիտի շարունակէին իր գործը, աւելի կամ նուազ յաջողութեամբ։

Չուխաճեան, փառքի օրերուն գոհունակութիւնն ունեցաւ իր տաղանդին բարձր գնահատումը տեսնելու... գէթ բարոյապէս։ Սակայն, ո՛չ ծափերու և ոչ ալ կեցցէներու արձագանգը կրնային սփոփել իր դառնացած հոգին՝ ձախող օրերու մէջ։

Բազմավաստակ երգահանը, որ տարիներով ա՛յնքան դափնիներ խլած էր, չկրցաւ իր արժանիքի պատիւը լիովին վայելել ծերութեան օրերուն։ Անոր կեանքը վերջացաւ 1898 փետր. 25ին, Իզմիրի մէջ։

Տարօրինակ հակասութեամբ մը, 40 տարիներ ճոխ կեանքի մը վայելքներուն մէջ, «Լէպլէպիճի»ի տաղանդաւոր հեղինակը անընդհատ ծափահարուելէ յետոյ, վերջերս, ա՛լ

թշուառութեան մատնուած՝ Իզմիրի մէկ խորշը, մեծաչուք յուղարկաւորութիւն մը ունեցաւ։ Իր դագաղին հետեւող նուագախումբը, մեծանուն հանգուցեալին պատրաստած «Մառշ Ֆիւնէպռ»ը հնչեցուց, զոր Չուխաճեան հեղինակած էր յատկապէս իր մահուան օրը նուագուելու համար։

1900ին, իր բարեկամներուն ջանքերով՝ հայ գեղարուեստի փառքը կազմող անմահ երգահանին շիրիմը կանգնուեցաւ Իզմիրի Ազգ. Գերեզմանատան մէջ։

ՆԻԿՈՂԱՅՈՍ ԹԱՇՃԵԱՆ

Նիկողայոս Թաշճեան երաժշտական իր կարեւոր գործերով 19րդ դարու վերջին կիսուն՝ ամէնէն աչքառու դէմքերէն մէկն եղաւ։ Ծնած է 1841ին, Պոլիս։ Ըլլալով Խասգիւղցի, այդ թաղի Ներսէսեան Վարժարանին մէջ ուսաւ թէ՛ հայկական և թէ եւրոպական երաժշտութիւն։ Ունեցաւ քառորդ դարու բեղմնաւոր կեանք մը, իբրեւ մեծապէս սատարող հայ երաժշտութեան զարգացման եւ տարածման։

Գէորգ Դ. Կաթողիկոսը, հայ շարականներու եղանակները կորուստէ փրկելու դիտաւորութեամբ, Նիկողայոս Թաշճեանը Պոլսէն Էջմիածին բերել տուաւ, որպէսզի ան իր երաժշտական հմտութիւնը ի սպաս դնէ շարականները ձայնագրելու։ Տարիներու աշխատանքէն վերջ, Թաշճեան այս դժուարին գործը գլուխ հանեց 1873ին, ձայնագրելով գրեթէ բոլոր շարականները, 1000 էջէ աւելի ստուար հատորի մը մէջ, տպագրուած 1875ին՝ Վաղարշապատ։

Այսպէս, Նիկողայոս Թաշճեանի աշխատանքին շնորհիւ, վերակենդանութիւն ստացան հայ եկեղեցւոյ աւանդական մեծաքանակ շարականները։ Թաշճեան իր այս տքնաջան գործին մէջ, օգնական ունեցաւ իր խոստմնալից ու ամէնատաղանդաւոր աշակերտը՝ Մակար Եկմալեան։

Մեռաւ 1885ին, դեռ երիտասարդ տարիքին մէջ։

ԱՇՈՒՂ ՋԻՒԱՆԻ

Աշուղ Ջիւանին (Սերոբ Լեւոնեան) մեր մեծագոյն ժողովրդական աշուղ-բանաստեղծներէն է։

Ծնած է 1846ին, Ախալքալաք (հին հայկական անունով՝ Ջաւախք) գաւառի Կարծախ գիւղին մէջ։ Հօրը կանխահաս մահուամբ, մանուկ Սերոբ կը մնայ որբ և դժբաղդ, հօրեղբօրը՝ Մարտիրոսի խնամքին յանձնուած։

Փոքրիկ Սերոբը, ի ծնէ օժտուած խոր զգայնութեամբ, անբաղդ մանկութեան տխուր պայմաններուն մէջ կը տառապի իր դժնդակ կացութեան դառնութենէն։ Ան իր գիւղական դպրոցին մէջ հազիւ քիչ մը կարդալ գրել սորված, դուրս կը հանուի իբր հորթարած աշխատելու համար և իր ձեռակերտ փոքրիկ սազով՝ ազատ բնութեան մէջ, գեղջուկ երգեր երգելով, օրը կ'անցնէ հորթերուն հետ։

ԱՇՈՒՂ ՋԻՒԱՆԻ

Սերոբի հօրեղբայրը, անոր մէջ նկատելով աշուղական արուեստի հանդէպ մեծ սէր և ընդունակութիւն, չօնկուր մը գնելով իրեն, զինք աշակերտ կը դնէ գիւղական աշուղ «Ուստա Սիրայի» ի մօտ, որ կը կոչուէր նաև Ղարա Ղազար։ Սերոբի վարպետը իրեն կուտայ աշուղական անուն մը, Ջիւանիկ, պարսկերէն բառ մը, որ կը նշանակէ «երիտասարդ»։ Հինգ-վեց տարի յետոյ Ջիւանին՝ չօնկուրը մէկդի նետելով՝ ձեռք կը բերէ ճեմանի մը և կը սկսի բաւական յաջող նուագել ի՛ր իսկ հիւսած սկսնակի պարզ երգերը։

Ջիւանին չուզելով գիւղական նեղ շրջանակի աշուղ մնալ, ինչպէս իր վարպետը, կ'անցնի Թիֆլիս, և յետոյ Ալեքսանդրապոլ, ուր յայտնի աշուղներու կողմէ գովեստ եւ խրախուսանք գտնելով, կը լծուի աշուղական լուրջ գործունէութեան։ Ան, Ալեքսանդրապոլի մէջ, իրեն ժամանակակից կրթական գործիչներ՝ Սարգիս Բէգնազարեանի, Հայրապետ Ղուկասեանի և Ղազարոս Աղայեանի բարեկամական օժանդակութեամբ՝ հաղորդակից կը դառնայ այդ շրջանի մշակութային կեանքին. Թիֆլիսէն գրքեր և լրագիրներ բերել կուտայ եւ մեծ եռանդով հետամուտ կ'ըլլայ ինքնօգնութեամբ իր միտքը զարգացնելու։ Իր երգերէն մի քանին կը տպագրուին Արարատ և Մեղու Հայաստանի պարբերաթերթերու մէջ։

Այնուհետեւ, Ջիւանի իր խումբով կ'այցելէ Անդրկովկասի և Ռուսաստանի հայաբնակ քաղաքները և ամէն տեղ իր երգերը կը գտնեն սիրալիր ընդունելութիւն։

1890էն քիչ յետոյ, Ջիւանին կը հաստատուի Թիֆլիս, ուր հետզհետէ կ'աւելնայ անոր ժողովրդականութիւնը և մտաւորական շրջանակներու հետաքրքիր ուշադրութիւնը՝ դէպի իր արուեստը։

Անոր երգերու ընդարձակ հաւաքածոն նախ լոյս տեսած է Էջմիածին՝ 1900ին եւ 1904ին, իսկ մահուընէն յետոյ Թիֆլիսի մէջ, 1912ին։ Երեւանի Պետհրատը 1936ին վերստին լոյս ընծայեց իր գործերու հաւաքածոն՝ նոր եւ լիակատար քննական հրատարակութեամբ, որուն խմբագրութիւնը յանձնուած էր՝ Ջիւանիի որդւոյն. յայտնի բանասէր՝ Գարեգին Լեւոնեանի։

Լեզուի տեսակէտով, Ջիւանի կարեւոր տարբերութիւն մը ունի իր երկու մեծ նախորդներէն, Նաղաշ Յովնաթանէն եւ Սայեաթ-Նովայէն։ Ջիւանին իր բոլոր երգերը յօրինած է արեւելահայերէն գրական մաքուր, անխառն աշխարհաբարով։ Ան եղած է բարքերու քննադատ, եղերերգակ, երգիծաբան, բարոյախօս, սիրոյ երգիչ եւ հայկական շնչով ու գոյնով արտայայտուող հայրենասէր քերթող մը։

1900 թուականներուն, մօտ կէս դար երգելէն ու կան-

չելէն սպառած էին անոր ուժերը, զինք ենթարկելով վաղաժամ ծերութեան։ Զիւանին մեռաւ 1909 Փետր. 24ին. թաղումը կատարուեցաւ Մարտ 7 ին մեծ հանդիսութեամբ։

ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱ.

Հայկական բազմաձայն երաժշտութեան առաջին հիմնադիրն եղաւ մեր մէջ Կարա-Մուրզան (Քրիստափոր Մարգարեան), որ ձեռնարկեց մեր ցիր ու ցան երգերու հաւաքման ու ներդաշնակման գործին։

ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱ.

Բնիկ՝ Ղրիմցի. ծնած է 1854 ին Կարասու-Բազար քաղաքը։ Նախնական կրթութիւնը ստացած՝ տեղւոյն Մխիթարեաններու Վարժարանը։ Փոքր տարիքէն բնական յարմարութիւն եւ մեծ սէր ցոյց տուած է դէպի երաժշտութիւն։ Մերժելով հօրը առաջարկը՝ ի Վենետիկ վարդապետանալու համար, կը հետեւի մասնաւոր դասերու, հմուտ երաժիշտ ուսուցիչներու մօտ։

Կարա-Մուրզա, ըլլալով հայ Կաթողիկէ ու ունեւոր ծնողքի մը զաւակ, չէ կարողացած մասնագիտական խոր կրթութիւն ստանալ։ Ան կրնար նպաստաւոր պայմաններու մէջ աւելի տաղանդաւոր դառնալ։ Եթէ նա չկարողացաւ հաւասարիլ ուրիշ արուեստագէտներու, այդ պէտք է վերագրել ո՛չ թէ անոր տաղանդի պակասին՝ այլ շրջապատող պայմաններուն, որոնք մեծ արգելքներ հանդիսացան իրեն։

Արդարեւ, Կարա-Մուրզա, իր ժամանակին՝ մեծ զոհողութեամբ եւ կատարեալ նուիրումով՝ անխոնջ աշխատող մը եղաւ հայ երգը տարածելու մեր մէջ։ Ան համակերպեցաւ

անլուր զրկանքներու, իր նախասիրած ճիւղի հիմնաւորման ու տարածման համար։

Երբ դեռ քառաձայն երգեցողութիւնը ընդունուած չէր հայերուս կողմէ և ինք նախաձեռնարկողն հանդիսացաւ այդ ուղղութեամբ, դժբաղդաբար անոր արուեստն ու ա՛յնքան թանկագին գործը՝ քիչերու կողմէ համակրանք գտաւ և ենթարկուեցաւ հալածանքներու։

Երաժշտական-հասարակական կեանքի մէջ հերոս մը եղաւ ան. մինչեւ իր կեանքին վերջալոյսը պայքարեցաւ խոչընդոտներու դէմ՝ ճանապարհ հարթելով հետագայ երաժշտագէտներու, աւելի բարենպաստ պայմաններու մէջ աշխատելու համար։

Կարա-Մուրզա իր առաջին համերգները կուտայ Պաքու և Թիֆլիս 1885 ին, և յետոյ ամբողջ Կովկաս։ Կը մտնէ ամէն գիւղ և երգեր հաւաքելով, կը ներդաշնակէ և բեմ կը հանէ։ Մշակած է ընդհանրապէս ազգային երգերու եղանակներ՝ Նալբանդեանցէն, Պատկանեանէն և Րաֆֆիէն։ Աշխատակցած է հայ և ռուս թերթերու, գրելով քննադատականներ՝ իր ճիւղի մասին։

1886 ի Օգոստոսին՝ առաջին անգամ իր խումբով Պաքուի եկեղեցիին մէջ քառաձայն կ'երգէ պատարագի արարողութիւնը։ Նոյն տարուան վերջերը կ'անցնի Պոլիս և կ'ուսումնասիրէ Թրքահայ եկեղեցական երգեցողութիւնը։ 1893 ին կը հրաւիրուի էջմիածին՝ Խրիմեան Հայրիկի օրով, բայց միջնադարեան հալածանքը իր դէմ շուտ կը սկսի և ան կ'արձակուի դպրոցէն։

Նիւթական հոգեր, սնունդի պակաս, կը քայքայեն իր առողջութիւնը և ան կը մեռնի 27 Մարտ 1902 ին, կարճատեւ հիւանդութենէ մը յետոյ։

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԻԳՐԱՆԵԱՆ

Ծնած է 1856 Օգոստ. 19ին, Աղեքսանդրապոլ։ Ինը տարեկան հասակին՝ ծաղկախտը կը զրկէ զինք տեսողութենէ։

Տիգրանեանի նահապետական տան անդամներէն նշանաւոր նուագող՝ Թառիստ Մելիք Ազամալեան մեծ ազդեցութիւն կը գործէ մանուկ Նիկողայոսին վրայ, և թափ կուտայ անոր երաժշտական բնածին ընդունակութիւններուն։

ՆԻԿՈՂԱՅՈՍ ՏԻԳՐԱՆԵԱՆ

Հայրը, 1873ին, հեռատես հոգատարութեամբ մը, պատանի զաւակը կը տանի Վիեննա, ուր զայն կը տեղաւորէ կոյրերու կայսերական ինսթիթիւտը։ Վեց տարի ան կը մնայ Վիեննա եւ կը ստանայ՝ երաժշտական բարձրագոյն կրթութիւն եւ լայն զարգացում։ 1880ին յաջողութեամբ աւարտելով երաժշտանոցի լրիւ շրջանը՝ կը վերադառնայ Հայրենի քաղաքը՝ Աղեքսանդրապոլ, ուր կը սկսի տաղանդաւոր երիտասարդի գործունէութեան բեղմնաւոր շրջանը, ազգային և արեւելեան երաժշտութեան ուսումնասիրութեան գործով։ Նիկողայոս կը ձգտի եւրոպական արուեստի մեթոտով մշակել տեղական հասարակ մուղամներն ու արեւելեան դասական երաժշտութեան մեծարժէք նմոյշները, պահելով անոնց տոհմիկ հարազատութիւնը։

Անհրաժեշտ է յատկապէս ընդգծել այն խոշոր դերը, որ Ն. Տիգրանեան կատարեց արեւելեան եւ հայ ժողովրդական երաժշտութեան զարգացման ասպարէզին մէջ։ Անոր ստեղծագործութիւնները հիմք ծառայած են մեր կարգ մը երաժիշտներուն՝ հայկական երաժշտութիւնը մշակելու գործին

մէջ։ Իր ժողովրդային երգերն ու պարերը լոյս տեսնել ըսկըսած են 1887էն ասդին։ (Եւ արդարեւ 90ական թուականները կը համարուին մեր երաժշտական մշակոյթի զարթօնքի հիմնական շրջանը. երբ իրարու կը յաջորդեն և զիրար կը լրացնեն Կարա-Մուրզան, Մակար Եկմալեանը, Նիկողայոս Տիգրանեանը. Կոմիտաս Վարդապետը և Գր. Սիւնին)։

Տիգրանեան չբաւականանալով իր երաժշտական տեսական պաշարով, կ'անցնի Բեթերսպուրկ և հոն կը լրացնէ ըստեղծագործական ուսումն ու արուեստը։

Արեւելեան երաժշտութեան նուիրուած շարք մը համերգներ տուած է բացի Կովկասի և Ռուսիոյ զանազան քաղաքներէն, Վիեննայի և Պերլինի մէջ, մինչեւ 1914։ Այդ թուականին, ան պատուուեցաւ իր երաժշտ. գործունէութեան 25 ամեայ յոբելեանով։ Իսկ 1921ին, Հայաստանի Ժողկոմխորհը իրեն տուաւ «Արուեստի Վաստակաւոր Գործիչ»ի կոչումը։

1927 Յունվր. 20ին Լենինականի պետական ակադեմիային մէջ գումարուեցաւ պատմական նիստ մը նուիրուած Ն. Տիգրանեանին, ուր ներկայ էին ակադեմականներ, բրոֆէսէօրներ, երաժիշտներ եւ ուսանողներ։ Դասախօսութիւնը բացաւ հռչակաւոր գիտնական Նիկ. Մառ, որ իր ներածական խօսքին մէջ, Տիգրանեանը ներկայացուց որպէս Առաջաւոր եւ Միջին Արեւելքի երաժշտութեան լաւագոյն ստեղծագործող-մեկնաբանողը։

Նիկողայոս Տիգրանեանի յիսնամեայ երաժշտական աշխատանքը յոյժ գնահատուելով, Հայաստանի Լուսժողկոմատի նախաձեռնութեամբ, 1933ին հանդիսաւոր կերպով տօնուեցաւ անոր յիսնամեայ գործունէութեան յոբելեանը. այդ առթիւ Հայաստանի Կենդգործկոմը՝ 1933ին, անոր տուաւ «Ժողովրդային Կոմպոզիտոր»ի տիտղոսը, իսկ այսօր Ն. Տիգրանեան կը կրէ «Աշխատանքի Հերոս»ի պատուաւոր կոչումը։

Ան՝ 80ամեայ ծերունազարդ հասակին մէջ կը շարունակէ իր թանկագին աշխատութիւնը։

ՄԱԿԱՐ ԵԿՄԱԼԵԱՆ

Հայ եկեղեցական բազմաձայն երաժշտութեան հիմնադիրն է Մակար Եկմալեան։ Ծնած է 1857ին։ Բնիկ Վաղարշապատցի, Մասիսի և Էջմիածնի հարազատ զաւակ՝ որդեգիրն էր հոգելոյս Գէորգ Դ. Կաթողիկոսի։

Եկմալեան՝ Էջմիածնի մէջ կ'աշակերտի երաժշտապետ և քաջ ձայնագրագէտ Նիկողայոս Թաշճեանին և կարճ ժամանակի մէջ ձեռք կը բերէ մեծ հմտութիւն։ Այդ օրերուն հոգեւոր երաժշտութեան բարենորոգման գործը թէեւ սկսուած՝ Քրիստափոր Կարա-Մուրզայի կողմէ, եւ սակայն կատարելագործման և հիմնաւորման պատիւը վերապահուած էր Մակար Եկմալեանի։

Ան իր արտակարգ ընդունակութիւններով արժանացաւ Գէորգ Դ. Վեհափառի բարձր ուշադրութեան և ուղարկուեցաւ Բեդրոկրատի քոնսէրուաթուարը, երաժշտական արուեստի մէջ կատարելագործուելու համար։

ՄԱԿԱՐ ԵԿՄԱԼԵԱՆ

Աւելի քան տասը տարի մնալով Բեդրոկրատ և բազմակողմանի կերպով ուսումնասիրելով երաժշտական արուեստը իր բոլոր ճիւղերով, համաշխարհային երաժշտապետներ՝ Ռուբէնշտէյնի Չայքովսկիի ուսուցչութեան օրով, հիացման առարկայ դարձաւ երաժշտապետներու շրջանակին մէջ, իր անվիճելի տաղանդով և մասնաւորապէս իր երաժշտական հազուագիւտ նուրբ լսողութեամբ։

1887 Թուականին աւարտեց քոնսէրուաթուարը իբրեւ յաջողագոյն շրջանաւարտ և վերադարձաւ հայրենիք, իր մայրենի եկեղեցիին ծառայելու, կարճ ժամանակ մը սակայն վարելով

Թիֆլիսի կայսերական երաժշտանոցի վերատեսչի պաշտօնը։

Երաժշտական լուրջ կրթութիւն ստացած և բազմակողմանի պաշար ձեռք բերած՝ Մակար Եկմալեան, մինչ այդ՝ արդէն վախճանած իր մեծ բարերար հոգելոյս Հայրապետին հայ եկեղեցական երգեցողութիւնը բարեկարգելու օգտակար ծրագիրներն իրագործելը կը տեսնէր ներդաշնակ, բազմաձայն երգեցողութեան մէջ. և ան շուտով ձեռնարկեց Բեդրոկրատի մէջ ներդաշնակած պատարագի արարողութեանց վերամշակման գործին։ Ան, հայ ազգին նուիրեց մեր ամբողջ պատարագը իր մանրամասնութիւններով. հատ մը եռաձայն՝ արական խումբի համար, նոյնը՝ քառաձայն, իսկ մէկ հատ ալ քառաձայն՝ երկսեռ խումբերու համար։

Եկմալեան, աւարտելով իր այս գլուխ գործոցը զայն քննութեանը կը յանձնէ Ռուսաստանի երաժշտական գերագոյն դատաւորներուն։ Բեդրոկրատի Քոնսէրուաթուարի գեղագիտական խորհուրդը և կայսերական պալատի եկեղեցական-երաժշտական գրաքննիչ ատեանը քննելով անոր աշխատութիւնը, ոճը կը գտնէ գեղեցիկ, քաղցրալուր և դրուատիքի արժանի։ Եւ Եկմալեան 1893 ին կ'ստանայ փայլուն վկայագիրներ յիշեալ հիմնարկութիւններէն. նոյնպէս՝ Խրիմեան Հայրիկ. սրբատառ կոնդակով մը կը նուիրագործէ և կ'արտօնէ անոր կիրարկումը Հայաստանեայց Եկեղեցիներու մէջ։

Բացի պատարագէն, Եկմալեան դաշնաւորեց ուրիշ շատ մը շարականներ և ազգային աշխարհիկ երգեր։ Սակայն, ժողովրդական երգի մշակումը Եկմալեանի մօտ՝ պատահականութիւն է միայն և իր արուեստին մէջ ո՛չ մէկ գերակշիռ արժէք կը ներկայացնէ։

Եկմալեան, մեր հոգեւոր երաժշտութեան պարծանքն ու հայ մեծանուն տաղանդներու փաղանգին բեղմնաւոր մէկ անդամն է։ Ան հոգեկան սուր հիւանդութեամբ մը ենթարկուած մտային խանգարման՝ ամբողջ երեք տարի տանջուելէ ետք, վախճանեցաւ 1905 մարտ 5 ին, Թիֆլիսի մէջ։



ԿՈՄԻՏԱՍ ՎԱՐԴԱՊԵՏ

«Ծնուել եմ 1869 թուին, Սեպտեմբերի 26-ին, Փոքր-Ասիայի Կուտինա կամ Քիւթահիա քաղաքում։ Երրորդ օրն ինձ մկրտել են և անուանել Սողոմոն։

Հայրս Գէորգ Սողոմոնեանը Քիւթահիացի է, իսկ մայրս՝ Թագուհի Յովհաննիսեանը Բուրսացի։ Երկուսն էլ Հայ են։

Հօրս ու մօրս ազգատոհմն ի բնէ ձայնեղ է։ Հայրս և հօրեղբայրս՝ Յարութիւն Սողոմոնեանը յայտնի դպիր են եղել մեր քաղաքի Ս. Թէոդորոս եկեղեցում։ Մօրս և հօրս տաճիկ լեզուով և եղանակներով յօրինած երգերը, ո-

րոնցից մի քանիսն արդէն գրել եմ 1893 թուին հայրենիքումս, դեռ երգում են մեծ հիացմունքով մեր քաղաքի ծերերը։

Մայրս վախճանուել է 1870 թուին, իսկ հայրս 1880 թուին։ Ծնողներիս մահից յետոյ ինձ՝ միամօր զաւակիս դաստիարակել և ուսմանս մասին մեծ հոգ է տարել հօրական տատս Մարիամը։

1876 թուին էր, երբ առաջին անգամ ոտքս դրի դպրոցի շէմքը։ Մեր քաղաքի վարժարանը մի չորս բաժանմունք ունեցող դպրոց էր։ 1880 թուին աւարտեցի այդ Վարժարանը և հայրս, իր մահից չորս ամիս առաջ, ինձ ուղարկեց Բուրսայի Վարժարանը։ Դեռ տարին չը բոլորած, հօրս մահուան պատճառաւ, մեր քաղաքը վերադարձայ։

1881 թուին մեր վիճակի առաջնորդը Գէորգ Վարդապետ Դերձակեանը պէտք է գնար Սուրբ Էջմիածին եպիսկոպոս ձեռնադրուելու։ Գէորգ Դ. Ամենայն Հայոց Կաթուղիկոսը հրամանագրել էր, որ առաջնորդը հետը բերէ եւ մի որբ աշակերտ, իր Ս. Էջմիածնում հիմնած Մայր Աթոռի Գէորգեան Ճեմարանի համար։ Քսան որբի մէջ վիճակն ինձ ընկաւ եւ առաջնորդն ինձ Ս. Էջմիածին բերաւ։

1881 - 1882 ուսումնական տարեշրջանին՝ Սեպտեմբեր 15ին մտայ Գէորգեան Հոգեւոր Ճեմարանն իբրեւ գիշերօթիկ սան (*) և աւարտեցի դպրոցական եւ լսարանական բաժինը 1892-93 ուսումնական տարեշրջանին։

(*) Ա. Անտոնեան իբրեւ դպրոցակից Կոմիտաս Վարդապետի՝ իր պատանեկան կեանքի յուշերուն մէջ կ'ըսէ նորեկ Սողոմոնին համար. «Երգ ու երաժշտութիւնից դուրս, ուրիշ ոչինչ չէր գրաւում նրան: Աշակերտական վազք ու խաղերին գրեթէ չէր մասնակցում, բայց իր ձայնը անվերջ լսւում էր դասարանից. ուր նա եռանդով սերտում էր հայկական նօտաները՝ «խօ, նէ, բա...», ապա եւրոպականը՝ «սօ, րէ, մի, ֆա, սօլ...»: (Իմ Գիրքը՝ Ը. հատոր. տպ. Փարիզ 1931):

Մ. Հ.

1896 *թուին, հայ յայտնի բարեգործ Աղեքսանդր Մանթաշեանի օժանդակութեամբ գնացի Բերլին երաժշտական ուսումս կատարելագործելու։ Դիմեցի աշխարհահռչակ ջութակահար Յովսէփ Յովակիմին, որ Բերլինի արքունի երաժշտանոցի տեսուչն էր։ Խորհուրդ տուաւ մտնել Ռիխարդ Շմիտթի մասնաւոր երաժշտանոցը։ Ուսուցչապետ և արքունի երաժշտագէտ տեսուչ Ռիխարդ Շմիտթը յանձն առաւ ինձ հետ պարապել առանձնապէս։*

Թէև ծանօթ էր ինձ դաշնակի ուսումը մինչև կեղծ յաջորդութիւնները, բայց սկզբից սկսեցինք, որ հիմնաւոր լինի։ Շմիտթի մօտ մնացի ուղիղ երեք տարի՝ 1896 *թուի Յունիսից մինչև* 1899 *թուի Յունիսը։ Աւարտեցի տեսական և մանաւանդ գործնական երաժշտութեան ամբողջ դասընթացքը։*

Միաժամանակ իսկական ուսանող գրուեցայ Բերլինի արքունի Ֆրիտրիխ-Վիլհէլմ Համալսարանի փիլիսոփայական բաժնում և յրացրի երաժշտութեան փիլիսոփայական պատմական դասընթացքը։ Ուսուցչապետներս էին F. Bellermann, O. Fleischer և G. Friedlander:

1899 *թուին, Սեպտեմբերին վերադարձայ Ս. Էջմիածին։*

Դեռ Գէորգեան ճեմարանի Զ. դասատան աշակերտ էի, երբ Մակար Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրով մտայ Ս. Էջմիածնայ միաբանութեան շարքը։ 1890 *թուին, Յունիսի* 8*ին ձեռնադրուեցայ աւագ սարկաւագ։* 1893 *թուին, Սեպտեմբերի* 11*ին, Մկրտիչ Ա. Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրով ձեռնադրուեցայ աբեղայ։* 1895 *թուին, Փետրուարի* 26*ին ձեռնադրուեցայ վարդապետ։ Արտասահմանում ես վարդապետ-ուսանող էի։*

Ճեմարան մտած օրից երգիչ և Մայր Աթոռի աչքի ընկնող ձայնեղ մանուկներից մէկն էի։ Գէորգ Դ. Կաթողիկոսն իջնում էր Վեհարանից Մայր Տաճար ես և մի ձայնեղ ընկերս կանգնում էինք նորա Աթոռի մօտ և այնպէս երգում միայնակները։ Մեր երգելու ժամանակ ծերունի Հայրապետի արցունքները գլորւում էին և թաւալուելով երկար ու ճերմակ մօրուսի վերայով թաղւում էին փիլոնի ծալքերի մէջ:

Մակար Ա.ի օրով արդէն գլխաւոր դասապետ էի Մայր Աթոռում Դ. դասարանից սկսած։ Մկրտիչ Ա.ի օրով 1893*ի Սեպտեմբերի սկզբին նշանակուեցի ճեմարանի երաժշտութեան ուսուցիչ։ Դաս էի տալիս հայ եկեղեցական երաժշտութիւնը հայ Նորագոյն և եւրոպական ձայնանիշերով մինչև արտասահման գնալս։ Երաժշտանոցն և Համալսարանն աւարտելուցս յետոյ,* 1899*ի Սեպտեմբերին վերսկսեցի ճեմարանի դասերս. Նշանակուեցայ Մայր-Աթոռի երաժշտապետ և վարում եմ Մայր Տաճարի բազմաձայն խումբը։*

Առաջին համերգը միացած էր Բերլինի Բ. դասախօսութեան հետ։ Եւրոպայում մեծ համերգս տեղի ունեցաւ Փարիզում, «Փարիզի Հայկական Միութեան» ձեռներէցութեամբ, 1906 *Դեկտեմբեր* 1*ին։ Այս համերգով նպատակ ունէի ծանօթացնել Ֆրանսայի երաժիշտ աշխարհին հայ ժողովրդի եկեղեցական և ժողովրդական ստեղծագործութիւններին։ Այս համերգի մասին խօսեցին գրեթէ բոլոր երաժշտական հրատարակութիւնները. իսկ մանրամասնաբար* Le Mercure Musical, 2e année. Nos. 23-24, 15 Décembre, pp. 422-424: *Փարիզի համերգից յետոյ հրաւէր ստացայ Զուիցերիայի հայ ուսանողութիւններից համերգներ տալու համար հետևեալ քաղաքներում՝ Ցիւրիխ, Լօզան և Ժընև։ Կովկասում համերգներ եմ տուել Ս. Էջմիածին, Երևան, Տփխիս և Բագու։*

Անդրանիկ դասախօսութիւնն արել եմ «Հայ ժողովրդական և եկեղեցական երաժշտութեան» մասին՝ աւարտելուցս անմիջապէս յետոյ Բերլինի «Միջազգային Երաժշտական Ընկերութեան» համար 1899 *թուին, Մայիսի* 10 *ին։* (*)

(*) Ականաւոր երաժշտագէտներու. տեսաբաններու եւ քննադատ-

Այս Ընկերութեան հիմնադիր ժողովի անդամներից մէկն էլ ես էի։ Նոյն դասախօսութիւնն Ընկերութեան խնդիրքով երկրորդեցի 1899 Յունիսի 14 ին, աւելի բազմամարդ երաժիշտ հասարակութեան առաջ նոյն քաղաքում՝ Շարվէնկայի երաժըշտանոցի սրահում։

Այս դասախօսութեան մասին գրուեցաւ թերթերի մէջ հիացմունքով և «Միջազգային երաժշտական Ընկերութեան» ամսագրի մէջ (Zeitschrift der Internationalen Musik - Gesellschaft, Jahrgang I. Heft 1 և 2 October-November, 1899, Zeite 46 - 47):

Երրորդ դասախօսութեան հրաւէրն ստացայ, նոյն նիւթին մասին, Փարիզի համերգից յետոյ, Ecole des Hautes Etudes ի վարչութիւնից, և կարդացի մի փոքրիկ համերգ կցելով, 1907 Յունուարի 13 ին։

Միւս դասախօսութիւնները նոյն նիւթի մասին արել եմ Սուրբ Էջմիածնայ Գէորգեան Ճեմարանում, Իգդիր գիւղում, Տփխիսում, Բագու, Փարիզ, Բեռն, Լօզան, Ժընեւ, Վենետիկ քաղաքներում հայերէն լեզուով հայ հասարակութեան համար։



ներու ներկայութեամբ Կոմիտաս Վ. արդապետի տուած այս խիստ շահեկան դասախօսութեան առթիւ, Պերլինի համալսարանի երաժշտութեան բրոֆեսոր՝ Օսկար Ֆլայշեր՝ մամուլի մէջ հետեւեալ կերպով կ'արտայայտուի. «1899 թուականին Պերլինի Միջազգային Երաժշտական Ընկերութեան սրահին մէջ Կոմիտաս Վ. արդապետի կատարած դասախօսութիւնը հայ հոգեւոր եւ ժողովրդական երաժշտութեան մասին, պիտի մնայ անմոռանալի: Առաջին անգամն է. որ Պերլինի մէջ այսպիսի դասախօսութիւն մը կը կարդացուի, եւ գուցէ. մինչեւ այժմ, Փարիզի համաժողովներուն անգամ այդպիսի դասախօսութիւն չէ կարդացուած»:

ԿՈՄԻՏԱՍ Վ. ԱՐԴԱՊԵՏ

Իր փառքի օրերուն

Հոս կը վերջանայ Կոմիտաս Վարդապետի մինչև 1908ի ինքնակենսագրութիւնը, որուն անշուշտ մաս չեն կազմեր այդ թուականէն յետոյ իր ունեցած յարաճուն գործունէութիւնները (համերգ, դասախօսութիւն և հրատարակութիւն) որոնք իր փառքը կերտեցին Պոլիս. Իզմիր, Եգիպտոս, Բարիզ և այլուր:

1910 ին, Կոմիտաս Վարդապետ կը տեղափոխուի Պոլիս։ Քիչ ժամանակուան մէջ կը պատրաստէ 300 հոգիէ բաղկացած «Գուսան» երգչախումբը։ Կը նուիրուի վերջին ժամանակաշրջաններու մէջ հաւաքած նիւթերու մշակման և այն անմոռանալի համերգներու շարքին՝ որ տարիներ շարունակ ամբողջ պոլսահայ և օտար հասարակութիւնը հիացումով ու խանդավառանքով կապեց իր սիրուած ու գնահատուած անձին, ինչպէս նաև իր աննման ստեղծագործութիւններուն: 1910 - 1914 շրջանի սոյն երգահանդէսները, անօրինակ եռուզեռ ստեղծեցին հայ և օտար ժողովուրդներու և մինչև արքունական անդամներու, դեսպաններու եւ արուեստագէտ դասերու մէջ, որոնք միայն սքանչացում ունէին կոմիտասեան հանճարին հանդէպ։ Ամբողջ տեղական լրագրութիւնը դղրդած էր. շաբաթներով դըրուատուեցաւ Մեծ Երաժիշտը ու փառաբանուեցաւ Հայ Երգը։

Կազմուած էր յանձնախումբ մը, որ պաշտօն ունէր ո՛չ միայն կազմակերպել հանդէսները՝ այլ ընդհանրապէս՝ հասոյթները հաւաքել ու դնել Վարդապետին տրամադրութեան տակ, որպէսզի կարենար իրագործել Պոլսոյ մէջ երաժշտանոց

մը հիմնելու իր մեծ բաղձանքը, որ դժբախտաբար կարելի չեղաւ ընդհ. պատերազմի փոթորկումին պատճառաւ։

1914 ին, Փարիզի երաժշտական Միջազգային Ընկերութեան համագումարին, Կոմիտաս Վարդապետ ի հանդէս կուգայ իր ամէնէն հմտալից մասնագիտական ընդարձակ զեկոյցով, որ նոյնպէս անվերապահ գնահատանքի կ'արժանանայ բոլոր մեծանուն երաժշտագէտներու կողմէ, որոնք խանդավառուած՝ իրեն մօտենալով կ'ըսեն. «Վարդապետ, դուք արեւելեան երաժշտութեան համար մեզի նոր բանալիներ շընորհեցիք». (Հայաստան) օրաթերթ, Թիֆլիս 1917։

Համաշխարհային պատերազմի յայտարարութեան օրերուն՝ Կոմիտաս Վրդ. կը գտնուէր Պոլիս։ 1915ի Ապրիլին, պոլսահայ մտաւորականներու տեղահանութեան ժամանակ աւերի և արիւնի մրրկէն քշուած ինքն ալ կ'աքսորուի Փոքր Ասիոյ խորերը. Չանղըրը՝ երբ տառապանքի և զրկանքի երկար ամիսներէն յետոյ մասնաւոր միջնորդութեամբ՝ Պոլիս կը վերադառնայ, ականատես՝ իր ցեղի ահաւոր խաչելութեան, տարաբախտ Վարդապետը կորսնցուցած էր արուեստագէտի իր զգայուն հոգիին և մտքին հաւասարակշռութիւնը։

1916 ին, իր մտերիմ բարեկամներու և բժիշկներու խորհուրդով կը դրուի Շիշլիի Օփիթալ տը լա Փէ հիւանդանոցը. 1919ին կը փոխադրուի Փարիզ ու կը հիւրընկալուի նախ Վիլ-Էվռարի և ապա Վիլ-Ժիւիֆի յիմարանոցը։

1935 Հոկտ. 21 ին վախճանեցաւ հայ ժողովրդական երգի առաջին գիտնական հիմնադիր, հոգիով, մտքով, ձայնով ու նուագով անթերի արուեստագէտ՝ անզուգական Կոմիտաս Վարդապետ։

Կոմիտասի ստեղծագործ հանճարը շատոնց մեռած էր հայ երաժշտութեան համար։ Անագորոյն հիւանդութիւնը երկար տարիներէ ի վեր խանգարելով անոր մտքի հաւասարակշռութիւնը, ամլութեան դատապարտած էր տաղանդաւոր վարպետին բոլոր կարողութիւնները։ Ֆիզիքական մա-

հը եկաւ առ յաւէտ չքացնելու յոյսի այն վերջին ապաւէնը՝ որով ամբողջ ազգը, հրաշքի բարեպաշտ հաւատքով մը՝ անոր ապաքինումը կ'ակնկալէր։

Ժողովրդական երգի մեծ գուսանի կորուստովը միջազգային արժէք մըն է որ անհետացաւ, իսկ հայ մշակոյթը կորսնցուց իր գիտնական արուեստագէտը։

Խորհրդային Հայաստան՝ որ Կոմիտաս Վարդապետի ողջութեանն իսկ, (1930) ծննդեան 60-ամեակին առթիւ Ռ. Թէրլէմէզեանի խմբագրութեամբ, հրատարակեց «Կոմիտաս» ժողովածուն, և տօնախմբական հանդէսներ սարքելով. 400 հոգինոց երգչախումբով մը պանծացուց անոր անունն ու գործը, վերջերս ալ՝ շքեղ հանդիսութեամբ՝ Փարիզէն Երեւան փոխադրեց իր մարմինը եւ փառաւոր թաղումով մը յանձնեց զայն հայրենի հողին, արուեստի մշակներու փանթէոնին մէջ։

* * *

Կոմիտաս Վարդապետ, 1908 Յունիս 24ին Ս. Էջմիածնայ մէջ գրած ինքնակենսագրութեան մէջ տուած է իր գործերուն հետեւեալ ցանկը.—

Իմ աշխատութիւններս են՝

Ա. Տպուած

Յօդուածներ

1. Հայոց եկեղեցական եղանակները. (Արարատ)։
2. Նիւթեր ԺԹ. դարու Հայոց երաժշտութեան պատմութեան. (Արարատ)։
3. Քննադատական յօդուածներ. (Արարատ)
4. *Das Interpunctions system der Armenier (Sammelbande der Internationalen Musik-Gesellschaft. Jahrgang I. Heft 1. Oktober—November 1899, Zeite; 54–64).*
5. *Armeniens Volkstümliche Reizentanze (Zeitschrift der Armenischen Philologie). 1901. I. B. H.*
6. *La Musique Rustique Arménienne. (Mercure Musical et*

Bulletin Français de la Société Internationale de Musique (Section de Paris) IIIe Année, 15 Mai 1907. PP. (472—490).

Երգարաններ՝

1. *Շար Ակնայ ժողովրդական երգերի* (25 *հատ*). 1895, *Ս. Էջմիածին* (*հայ ձայնանիշերով*)։
2. *Հազար ու մի խաղ, Ա. յիսնեակ*, 1904,(1)
3. *Հազար ու մի խաղ, Բ. յիսնեակ*, 1905 (2)
4. Mélodies Kurdes (13 *հատ*) *Imprimerie de Musique de P. Jerrgenson. Moscou, 1905 (?)* (3)
5. *«Հայ Քնար», հաւաքածու գեղջուկ երգերի. La Lyre Arménienne. Recueil de chansons Rustiques, Imp. C. G. Roder, Paris.*
6. *Հատով երգեր զանազան թերթերում։*

Բ. Անտիպ աշխատութիւններ՝

1. *Հայ ժողովրդական երգեր.*
2. *Հայ հոգեւոր երգեր.*
3. *Օտար երգեր զանազան լեզուներով (ինքնուրոյն).*
4. *Տաճիկ երգեր.*
5. *Զանազան պարեր նուագարանների համար.*
6. *Ուսումնասիրութիւն հայ ժողովրդական երաժշտութեան.*
7. *Ուսումնասիրութիւն հայ եկեղեցական երաժշտութեան.*
8. *Խաղարանութիւն։*

(1) Կոմիտաս Վրդ. Վենետիկեան միաբան Հայր Ղեւոնդ Տայեանին ուղղած 30 Դեկտ. 1909 թուակիր իր նամակին մէջ կը յիշէ նոյնպէս տպագրութեան վայրը՝ *«Ս. Էջմիածին»*։

(2) Անդ կը գրէ. *«Այս եւ նախընթացը պատրաստել ենք Պր. Մանուկ Աբեղեանի հետ, Ս. Էջմ.»*։

(3) Հարցականը Կոմիտաս Վրդ. ինքն իսկ դրած է: Հ. Ղ. Տայեան, ծանօթութեան մէջ կուտայ «1904» թուականը:

9. *Զանազան երաժշտական դասագրքեր.*
10. *Թարգմանութիւններ (երաժշտութեան վերաբերեալ)* (1)։

* * *

Ժամանակագրական կարգով կուտանք Կոմիտաս Վարդապետի տպագրուած հետեւեալ երաժշտական աշխատութիւնները։

Ձեռաց Տետրակ Հայ գեղջուկ համերգի, *ի նպաստ հիմնելի Հայ Երաժշտանոցին. տպ. Պոլիս* 1911, *հոն կազմակերպուած հանդէսին առթիւ:*

Ձեռաց Տետրակ Հայ սրբազան եւ գեղջուկ համերգի. *տպ. Աղեքսանդրիա* 1911, *հոն կազմակերպուած համերգին առթիւ:*

Համառօտ ամփոփում 1913 *Մայիսին Պոլիս տրուած համերգին. Նոյնը՝ նաեւ Ֆրանս. լեզուով:*

Հայ Գեղջուկ Երգեր (*թիւ* 13—22 *և* 23—32, *տետր Ա եւ Բ*). *տպ. Լայպցիկ* 1913։

Կոմիտաս *ժողովածու. Երեւանի Պետհրատի հրատարակութեամբ, կազմուած Ռուբէն Թէրլէմէզեանի կողմէ*, 1930։

Ժողովրդական Երգեր. *ազգագրական ժողովածու մը* 300 *գեղջուկ խաղերու. ձայնագրուած՝ հայ ձայնանիշերով, զոր եւրոպականի վերածելով հրատարակած է Սպ. Մելիքեան՝* 1931 *ին։ Նոյն հաւաքածոյին ետեւը իբրեւ յաւելուած՝* 25 *երգեր* «Շար Ակնայ ժողովրդական երգերի» *խորագրով։*

(1) 1908ի ինքնակենսագրութեան մէջ՝ հոս կը վերջացնէ իր տպուած եւ անտիպ աշխատութեանց ցանկը, սակայն Հ. Ղ. Տայեանի նամակին մէջ (Բազմավէպ 1936 էջ 30) կը յիշատակէ՝ *«Հայկական պատարագն ունիմ 7 տեսակ բազմաձայն դաշնակած, բայց չէ տպուած»*։ Որոշ է թէ Վարդապետին անտիպ գործերէն կարեւոր մաս մը կորուստի ենթարկուած է դժբախտաբար՝ Ընդհ. պատերազմի ընթացքին եւ յետոյ. որոնց կարգին՝ այս փառաւոր աշխատութիւնը. որ անշուշտ սրբազան երաժշտութեան իր գլուխ գործոցը պիտի կազմէր:

մը հիմնելու իր մեծ բաղձանքը, որ դժբախտաբար կարելի չեղաւ ընդհ. պատերազմի փոթորկումին պատճառաւ։

1914 ին, Փարիզի երաժշտական Միջազգային Ընկերութեան համագումարին, Կոմիտաս Վարդապետ ի հանդէս կուգայ իր ամէնէն հմտալից մասնագիտական ընդարձակ զեկոյցով, որ նոյնպէս անվերապահ գնահատանքի կ'արժանանայ բոլոր մեծանուն երաժշտագէտներու կողմէ, որոնք խանդավառուած՝ իրեն մօտենալով կ'ըսեն. «Վարդապետ, դուք արեւելեան երաժշտութեան համար մեզի նոր բանալիներ շընորհեցիք»։ (Հայաստան) օրաթերթ, Թիֆլիս 1917։

Համաշխարհային պատերազմի յայտարարութեան օրերուն՝ Կոմիտաս Վրդ. կը գտնուէր Պոլիս։ 1915ի Ապրիլին, պոլսահայ մտաւորականներու տեղահանութեան ժամանակ աւերի և արիւնի մրրկէն քշուած ինքն ալ կ'աքսորուի Փոքր Ասիոյ խորերը. Չանգըրը՝ Երր տառապանքի և զրկանքի երկար ամիսներէն յետոյ մասնաւոր միջնորդութեամբ՝ Պոլիս կը վերադառնայ, ականատես՝ իր ցեղի ահաւոր խաչելութեան, տարաբախտ Վարդապետը կորսնցուցած էր արուեստագէտի իր զգայուն հոգիին և մտքին հաւասարակշռութիւնը։

1916 ին, իր մտերիմ բարեկամներու և բժիշկներու խորհուրդով կը դրուի Շիշլիի Օփիթալ տը լա Փէ հիւանդանոցը. 1919ին կը փոխադրուի Փարիզ ու կը հիւրընկալուի նախ Վիլ-Էվռարի և ապա Վիլ-Ժուիֆի յիմարանոցը։

1935 Հոկտ. 21 ին վախճանեցաւ հայ ժողովրդական երգի առաջին գիտնական հիմնադիր, հոգիով, մտքով, ձայնով ու նուագով անթերի արուեստագէտ՝ անզուգական Կոմիտաս Վարդապետ։

Կոմիտասի ստեղծագործ հանճարը շատոնց մեռած էր հայ երաժշտութեան համար։ Անագորոյն հիւանդութիւնը երկար տարիներէ ի վեր խանգարելով անոր մտքի հաւասարակշռութիւնը, ամլութեան դատապարտած էր տաղանդաւոր վարպետին բոլոր կարողութիւնները։ Ֆիզիքական մահը եկաւ առ յաւէտ չքացնելու յոյսի այն վերջին ապաւէնը՝ որով ամբողջ ազգը, հրաշքի բարեպաշտ հաւատքով մը՝ անոր ապաքինումը կ'ակնկալէր։

Ժողովրդական երգի մեծ գուսանի կորուստը միջազգային արժէք մըն է որ անհետացաւ, իսկ հայ մշակոյթը կորսնցուց իր գիտնական արուեստագէտը։

Խորհրդային Հայաստան՝ որ Կոմիտաս Վարդապետի ողջութեանն իսկ, (1930) ծննդեան 60-ամեակին առթիւ Ռ. Թէրլէմէզեանի խմբագրութեամբ, հրատարակեց «Կոմիտաս» ժողովածուն, և տօնախմբական հանդէսներ սարքելով, 400 հոգինոց երգչախումբով մը պանծացուց անոր անունն ու գործը, վերջերս ալ՝ շքեղ հանդիսութեամբ՝ Փարիզէն Երևան փոխադրեց իր մարմինը եւ փառաւոր թաղումով մը յանձնեց զայն հայրենի հողին, արուեստի մշակներու փանթէօնին մէջ։

* * *

Կոմիտաս Վարդապետ, 1908 Յունիս 24ին Ս. Էջմիածնայ մէջ գրած ինքնակենսագրութեան մէջ տուած է իր գործերուն հետեւեալ ցանկը.—

Իմ աշխատութիւններս են՝

Ա. Տպուած

Յօդուածներ

1. Հայոց եկեղեցական եղանակները. (Արարատ)։
2. Նիւթեր ԺԹ. դարու Հայոց երաժշտութեան պատմութեան. (Արարատ)։
3. Քննադատական յօդուածներ. (Արարատ)
4. *Das Interpunctions system der Armenier (Sammelbande der Internationalen Musik-Gesellschaft. Jahrgang I. Heft 1. Oktober—November 1899, Zeite; 54–64).*
5. *Armeniens Volkstümliche Reizentanze (Zeitschrift der Armenischen Philologie). 1901. I. B. H.*
6. *La Musique Rustique Arménienne. (Mercure Musical et*

Bulletin Français de la Société Internationale de Musique (Section de Paris) IIIe Année, 15 Mai 1907. PP. (472—490).

Երգարաններ՝

1. *Շար Ակնայ ժողովրդական երգերի* (25 *հատ*). 1895. *Ս. Էջմիածին (հայ ձայնանիշերով)*։

2. *Հազար ու մի խաղ, Ա. յիսնեակ*, 1904.(1)

3. *Հազար ու մի խաղ, Բ. յիսնեակ*. 1905 (2)

4. *Mélodies Kurdes* (13 *հատ*) *Imprimerie de Musique de P. Jerrgenson. Moscou, 1905 (?)* (3)

5. *«Հայ Քնար», հաւաքածու գեղջուկ երգերի. La Lyre Arménienne. Recueil de chansons Rustiques, Imp. C. G. Roder, Paris.*

6. *Հատով երգեր զանազան թերթերում*։

Բ. Անտիպ աշխատութիւններ՝

1. *Հայ ժողովրդական երգեր.*

2. *Հայ հոգեւոր երգեր.*

3. *Օտար երգեր զանազան լեզուներով (ինքնուրոյն).*

4. *Տաճիկ երգեր.*

5. *Զանազան պարեր նուագարանների համար.*

6. *Ուսումնասիրութիւն հայ ժողովրդական երաժշտութեան.*

7. *Ուսումնասիրութիւն հայ եկեղեցական երաժշտութեան.*

8. *Խազաբանութիւն*։

---

(1) Կոմիտաս Վրդ. Վենետիկեան միաբան Հայր Ղեւոնդ Տայեանին ուղղած 30 Դեկտ. 1909 թուակիր իր նամակին մէջ կը յիշէ նոյնպէս անոր տպագրութեան վայրը՝ *«Ս. Էջմիածին»*։

(2) Անդ կը գրէ. *«Այս եւ նախընթացը պատրաստել ենք Պր. Մանուկ Աբեղեանի հետ, Ս. Էջմ.»*։

(3) Հարցականը Կոմիտաս Վրդ. ինքն իսկ դրած է: Հ. Ղ. Տայեան. ծանօթութեան մէջ կուտայ «1904» թուականը:

9. *Զանազան երաժշտական դասագրքեր.*

10. *Թարգմանութիւններ (երաժշտութեան վերաբերեալ)* (1)։

* * *

Ժամանակագրական կարգով կուտանք Կոմիտաս Վարդապետի տպագրուած հետեւեալ երաժշտական աշխատութիւնները։

Ձեռաց Տետրակ Հայ գեղջուկ համերգի, *ի Նպաստ Հիմնելի Հայ Երաժշտանոցին. տպ. Պոլիս* 1911, *հոն կազմակերպուած հանդէսին առթիւ*։

Ձեռաց Տետրակ Հայ սրբազան եւ գեղջուկ համերգի. *տպ. Աղեքսանդրիա* 1911, *հոն կազմակերպուած համերգին առթիւ*։

Համառօտ ամփոփում 1913 *Մայիսին Պոլիս տրուած համերգին. նոյնը՝ նաեւ Ֆրանս. լեզուով*։

Հայ Գեղջուկ երգեր (*թիւ* 13—22 *և* 23—32, *տետր Ա եւ Բ*), *տպ. Լայբցիկ* 1913։

Կոմիտաս *ժողովածու. Երեւանի Պետհրատի հրատարակութեամբ, կազմուած Ռուբէն Թէրլէմէզեանի կողմէ*, 1930։

Ժողովրդական երգեր. *ազգագրական ժողովածու մը* 300 *գեղջուկ խաղերու. ձայնագրուած՝ հայ ձայնանիշերով, զոր եւրոպականի վերածելով հրատարակած է Սպ. Մելիքեան՝* 1931*ին։ Նոյն հաւաքածոյին ետեւը իբրեւ յաւելուած՝* 25 *երգեր* «Շար Ակնայ ժողովրդական երգերի» *խորագրով*։

---

(1) 1908ի ինքնակենսագրութեան մէջ՝ հոս կը վերջացնէ իր տպուած եւ անտիպ աշխատութեանց ցանկը, սակայն Հ. Ղ. Տայեանի նամակին մէջ (Բազմավէպ 1936 էջ 30) կը յիշատակէ՝ *«Հայկական պատարագն ունիմ 7 տեսակ բազմաձայն դաշնակած, բայց չէ տպուած»*։ Որոշ է թէ Վարդապետին անտիպ գործերէն կարեւոր մաս մը կորուստի ենթարկուած է դժբախտաբար՝ Ընդհ. պատերազմի ընթացքին եւ յետոյ, որոնց կարգին՝ այս փառաւոր աշխատութիւնը, որ անշուշտ սրբազան երաժշտութեան իր գլուխ գործոցը պիտի կազմէր:

Հայ ժողովրդական երաժշտութիւնը. (*Նոր շարք Ա—Զ*), *տպ. Փարիզ*, 1925—1933 *շրջանին. վերհրատարակուած՝ «Կոմիտասեան Յանձնաժողով»ին կողմէ. երգերու բնագիրը ֆրանսերէնի թարգմանած է Ա. Չօպանեան։*

Դաշնաւորեալ Երգեցողութիւնք Սրբոյ Պատարագի Հայաստանեայց Առաքելական Ս. Եկեղեցւոյ, *ձայն միասեռ արական խմբի. տպ. Փարիզ* 1933, *Վ. Սարգսեանի աշխատակցութեամբ, «Կոմիտասեան Յանձնաժողով»ին կողմէ։*

Երգեր Կոմիտաս Վարդապետի. *տպ. Պոլիս* 1935, *լոյս տեսած հայերէն եւ թրքերէն լեզուներով պրակ մը* (*թիւ* 1), *որ կը պարունակէ Կ. Վ.ի ձայնագրած ժող. երգերէն մէկ քանին։ Թրք. թարգմանութիւնը կատարուած է Մ. Շալճեանի կողմէ։*

Հարսանեկան խմբերգներ եւ զանազան մեներգներ. *Հայ ժողովրդական երաժշտութիւն. Տետր Է.* (13 *երգ*) *«Կոմիտասեան Յանձնախումբ»ի կողմէն հրատարակուած*, 1937 *Փարիզ։*

* * *

Դասախօսութիւններ՝

Պերլին 1899, *Երաժշտական Միջազգ. գումարման մէջ.*

Պերլին 1899, *մասնակցութեամբ Երաժշտանոցի երգեցիկ խումբին.*

Պերլին 1901, *Ընդհ. Եկեղ. Երաժշտութեան համագումարին մէջ.*

Թիֆլիս 1905 *Ապր.* 6, *Յովնանեան դպրոցին սրահին մէջ.*

Պաքու 1905.

Փարիզ 1907 *Յունուար*, 13, Rue de la Sorbonne-*ի սրահին մէջ.*

Փարիզ 1907, *Հայ Գաղթականութեան «Մասիս» ակումբին մէջ.*

Ժընեւ 1907. *Ցուրիխ* 1907. *Պեռն* 1907.

Վենետիկ 1907, *Ս. Ղազար.*

Վենետիկ 1907, *Մ. Ռ. Վարժարան.*

Իզմիր 1911 *Յունուար, Մեսրոպեան վարժարանի սրահին մէջ.*

Աղեքսանդրիա (*քանի մը անգամներ*) 1911 *Թուին.*

Գահիրէ 1911, *Ապպաս Թատրոնին մէջ.*

Ատաբազար 1912.

Նիկոմիդիա 1912.

Պարտիզակ 1912.

Փարիզ (*երեք*) 1914 *Յունիս* 1, *Երաժշտութեան Միջազգային Համաժողովին մէջ.*

Վիեննա. Ֆիլիպէ։

Համերգներ՝

Էջմիածին 1904, *Վանքին մէջ.*

Թիֆլիս 1905 *Ապրիլ* 1, *Գեղարուեստական Ընկերութեան Թատերասրահին մէջ.*

Թիֆլիս 1905 *Ապրիլ* 3, *Գեղարուեստական Ընկերութեան Թատերասրահին մէջ.*

Փարիզ 1906, *Salle des Agriculteurs-ի մէջ.*

Ժընեւ 1907, *Երաժշտանոցի դահլիճին մէջ.*

Պաքու 1908 *Ապրիլ* 4.

Պաքու 1908 *Ապրիլ* 8.

Պոլիս 1910, *Բըթի Շանի Թատրոնին մէջ.*

Իզմիր 1911, *Փետր.* 13, *Սր. Բօրթինկի սրահին մէջ.*

Պոլիս 1911 *Մարտ* 6, *Իւնիոն Ֆրանսեզի սրահին մէջ.*

Պոլիս 1911 *Ապրիլ* 2, *Իւնիոն Ֆրանսեզի սրահին մէջ.*

Պոլիս 1911 *Ապրիլ* 9, *Բըթի Շանի Թատրոնին մէջ.*

Աղեքսանդրիա 1911 *Յունիս* 16, *Ալհամպրա Թատր. մէջ.*

Գահիրէ 1911, *Ապպաս Թատրոնին մէջ.*

Պոլիս 1911 *Մարտ* 21, *Բըթի Շանի մէջ.*

Պոլիս 1912 *Ապրիլ* 14, *Բըթի Շանի մէջ.*

Պոլիս 1912 *Ապրիլ* 21, *Բըթի Շանի մէջ։*

ԱԼԵՔՍԱՆԴՐ ՍՊԵՆԴԻԱՐԵԱՆ

Ա. ՍՊԵՆԴԻԱՐԵԱՆ

Մեր տաղանդաւոր երաժիշտներու մեծագոյն դէմքերէն է Սպենդիարեան, որ իր արուեստագիտական խոր պատրաստութեամբ և ստեղծագործութիւններով արժանացած է միջազգային ամենախիստ քննադատներու գնահատութեան։

Ծնած է 1871 Հոկտ. 20ին Կուպեռնիայի Տաւրիկեան նահանգի Կախովկա գիւղաքաղաքը՝ Դեռ երեք տարեկան հասակին՝ ան ցոյց տուած է երաժշտական ընդունակութիւն, իր քաջ դաշնակահարուհի մօր հսկողութեան տակ։ Այսպէս, ընտանեկան միջավայրի մէջ, ստանալէ ետք երաժշտական տպաւորութիւններ. 1882-ին կը մտնէ Խրիմի Սիմֆէրոփոլ քաղաքի կիմնազիան և զայն կ'աւարտէ 1890-ին։ Այդ օրերուն կը հետեւի դաշնամուրի և ջութակի մասնաւոր դասերու և կարճ ժամանակի մէջ զգալի յառաջդիմութիւն ցոյց կուտայ։

Իր նախնական կրթութիւնը ստանալէ յետոյ, կը մտնէ Մոսկուայի համալսարանը և ամբողջ ութը երկար տարիներ իբրեւ ուսանող կը նուիրուի երաժշտական ճիւղին։

1896 թուին, Մոսկուայէն կ'անցնի Բեթերսպուրկի համալսարանը, ուր տաղանդաւոր ռուս բրօֆէսէօր հեղինակներու մօտ կը խորացնէ իր երաժշտական հմտութիւնը մինչեւ 1900 թուականը։ Նոյն թուականին Սպենդիարեան կ'աւարտէ

նաեւ Բեթերսպուրկի երաժշտանոցը եւ այդ օրուընէ կ'ըսկսի անոր երաժշտական բուն գործունէութիւնը։ Նոյն շըրջանին խորապէս կ'ուսումնասիրէ միջազգային երաժշտական հանճարները եւ կ'ստանայ դրոշմը անոնց ազդեցութեան։

1901 ին, Սպենդիարեան կ'անցնի Եալթա, ուր կ'ստեղծագործէ երաժշտական լաւագոյն գործեր, որոնք հետագային կը դառնան Մոսկուայի և Բեթերսպուրկի սէմֆոնիքական համերգներու առաջնակարգ կտորները։ Շնորհիւ այս հանգամանքին՝ ան մեծ ժողովրդականութիւն կ'ստանայ։ Հրատարակիչներ լոյս կ'ընծայեն իր գործերը, որոնք հետըզհետէ կը նուագուին նաեւ ամբողջ Եւրոպա և Ամերիկա։

Այս բոլորէն յետոյ, Սպենդիարեան կը հակի դէպի արեւելեան երաժշտութիւնը, որ կը դառնայ իր արուեստին անկիւնադարձը։ Խրիմի և Կովկասի շրջաններուն մէջ, կ'ստեղծագործէ արեւելեան ոգիով ինքնուրոյն երգեր ու եղանակներ՝ նուագախումբի և դաշնամուրի համար։

1912-ին Սպենդիարեան կ'անցնի Պերլին, ուր ժամանակակից թերթեր իրեն կը նուիրեն յոյժ գնահատական էջեր։

1916-ին Թիֆլիսի մէջ կուտայ շարք մը համերգներ, միանգամայն կ'ուսումնասիրէ ժողովրդական երգերը և կ'աշխատի կարգ մը օբերաներու պատրաստութեան, միշտ դիմելով ժողովրդական գեղարուեստի կենդանի աղբիւրներուն։ Իր ստեղծագործութիւններուն մէջ երեւան կը բերէ գլխաւորապէս արեւելեան ժողովրդային հարազատ երգերու և առհասարակ արեւելեան կենդանի երաժշտութեան ամբողջ էութիւնն ու գեղեցկութիւնը, ինքնատիպ ռիթմով, սեղմ ու ամփոփ։

1924-ին Սպենդիարեան Հայաստանի Լուսժողկոմատի հրաւէրով կ'անցնի Երեւան և կը նուիրուի քոնսէրվաթուարի երաժշտական աշխատանքներուն։ 1926 Հոկտ. 3ին, իր երաժշտական գործունէութեան 25-ամեակին առիթով կատարուած յոբելեանին՝ Խորհ. Հայաստանի կառավարութիւնը

իրեն տուաւ «ժողովրդական երաժշտագէտ»ի կոչումը։

Սպենդիարեան նուրբ ճաշակով, ներդաշնակ և հարուստ երեւակայութեամբ օժտուած այն հազուագիւտ հայ երաժշտագէտն է որ 35 տարիներու աշխատանքով տիրապետեց եւրոպական եւ մանաւանդ արեւելեան երաժշտութեանց։ Անոր աշխատութիւնները առհասարակ նուագախումբի համար են, սակայն կարեւոր տեղ կը գրաւեն նաեւ մեներգները։ «Ալմաստ» օպերան, որուն նիւթը առնուած է Թումանեանի «Թմկաբերդի Առումը» քերթուածէն, Սպենդիարեանի լաւագոյն ստեղծագործութիւններէն է։ Նոյնպէս առաջնակարգ գործեր են «Երեւանեան էթիւտներ» էնդէլի, Հիճազ (սէմֆոնիք օրքէսթրի համար)։

Երեւանի երկրորդ հիւանդանոցին մէջ, թոքերու թարախային բորբոքումով մեռաւ ան, 1928 Մայիս 7ին, երբ իր ա՛յնքան բարձր տաղանդը դեռ երկար ժամանակ կրնար ի սպաս դնել հայ երաժշտութեան զարգացման գործին։

ԳՐԻԳՈՐ ՍԻՒՆԻ (Միրզախան)

ԳՐԻԳՈՐ ՍԻՒՆԻ

Հայ երաժշտական արուեստի տաղանդաւոր ներկայացուցիչներէն մէկն է Գրիգոր Սիւնին, որ բոլորեց իր երաժշտական գործունէութեան քառասնամեակը։

Ծնած է 1876 Սեպտեմբեր 10ին, Գանձակի Գետաբեգ գիւղը։ 2 տարեկան հասակին՝ զայն կը փոխադրեն Շուշի։ Երաժշտական խմորը ստացած է իր հօր՝ Ցոլհ. Վարանդեցիէն, որ նոյն շրջանին ժողովրդական բանաստեղծի և երգիչի անուն

ունէր։ Հօրը կանխահաս մահուամբ (1883) երեխան որբ կը մնայ և Շուշիի թեմական դպրոցի աշխատանքներէն դուրս, նիւթական ծանր պայմանները կ'ստիպեն զինք երգասացութեամբ զբաղուիլ եւ միանգամայն հետեւիլ ոսկերչութեան։

Աշխատած է եւ օգտուած՝ Կարա-Մուրզայէն եւ Մակար Եկմալեանէն։

1891ին կ'ընդունուի Գէորգեան ճեմարան, ուր ան կը սկսի լրջօրէն պարապիլ երաժշտութեան տեսութեամբ։ Այդ ժամանակաշրջանի ճեմարանի գիշերօթիկ սան՝ Սողոմոն Սարկաւագ (Կոմիտաս Վրդ.) որ ձայնագրագէտի համբաւ կը վայելէր. մեծապէս ազդեց Միրզախանի ընդունակութեանց վրայ։

1895ին կը մեկնի Բեթերսպուրկ եւ երեք տարի շարունակ կը հետեւի Ռարգոֆի եւ Պոլակի երաժշտական դպրոցներու ձայնամշակման, դաշնամուրի, երաժշտական ընդհ. գիտելիքներու եւ պարային արուեստներու դասընթացքներուն։ 1898ի Սեպտեմբերին որպէս թոշակաւոր ուսանող կը ընդունուի Բեթերսպուրկի պետական երաժշտանոցը և 1904ին իբրեւ քննութեան նիւթ, ներկայացնելով իր հաւաքած և մշակած երգերը, փայլուն կերպով կ'աւարտէ քոնսէրուաթուարը։

Այնուհետեւ, 1905ին, Սիւնին կը հրաւիրուի Ներսէսեան վարժարան՝ իբրեւ երաժշտութեան ուսուցիչ՝ յաջորդելով Եկմալեանին։ 1908ին, Տրապիզոնի, Սամսոնի և Կիրասոնի մէջ կը կազմակերպէ համերգներ և կը մշակէ թըրքահայ ժողովրդական երգեր։ 1910 - 1914 թուականներուն կը պաշտօնավարէ Էրզրումի Սանասարեան ճեմարանը, ուր առաջին անգամ կը հիմնէ նուագախումբ և երգչախումբ։

Ընդհ. պատերազմի հռչակումին՝ հազիւ ինքզինքը կը նետէ Թիֆլիս, ազատուելով թրքական եաթաղանէն։

1919ին կ'անցնի Թէհրան։ 1920 - 1921ի գրաւման շրջանին կը մնայ Պոլիս, ուր շարք մը համերգներ կու տայ և կը հրաւիրուի Էսաեան Օրբանոց, իբրեւ երաժիշտ - ուսու-

ցիչ։ Իր ճիւղին վերաբերեալ դասեր կ'աւանդէ նաեւ՝ Կեդրոնական, Պէրպէրեան, Հինթլեան, Պէզազեան և Գարակէօզեան դպրոցներուն մէջ։

1923 ին կը տեղափոխուի Ամերիկա և կը հաստատուի հոն, ուր մինչեւ ցարդ կ'աշխատի և կը գործէ երաժշտական արուեստի ասպարէզին մէջ, թէ՛ իբրեւ ստեղծագործող, թէ խմբավար՝ միայուն երգչախումբի, և թէ երաժշտական - հասարակական գործիչ, միշտ արժանանալով հայ և ամերիկեան մամուլի մեծ գնահատութեան։

Հաւաքած ու դաշնաւորած է ինքնուրոյն ոճով շարք մը հայ ժողովրդական երգեր, օրերաններ և ռոմանսներ. յօրինած է ինքնաստեղծ երաժշտական բազմաթիւ գործեր երգի և նուագի համար։

Գրիգոր Սիւնի իր ամբողջ կեանքը նուիրած է հայ ժողովրդական երաժշտութեան, ինչպէս նաեւ իր սեփական աշխատութիւններով հարստացուցած է մեր երաժշտական գրականութիւնը։ Ան շատոնց ծանօթ է մեր հասարակութեան, և մեծ անուն ունի իբրեւ մեր լաւագոյն երաժիշտներէն մին, որ ապրած և սնած է գեղջուկ ժողովրդի ծոցին մէջ, բանուորին ու ռանչպարին հետ կողք կողքի, անոնց զգացումներուն, սիրոյ եւ կարօտի բոլոր յոյզերուն արտայայտութիւն տուած է իր ա՛յնքան զմայլելի երգերուն մէջ։

Բազմաշխատ արուեստագէտին իբրեւ ժողովրդական յարգանքի տուրք, 1934 ին Ամերիկայի մէջ կազմակերպուեցաւ իր երաժշտական քառասնամեայ գործունէութեան յոբելեանը։

ԱԶԱՏ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Ծնած է Երզնկայ, 1878 ին։ Հօրը հետ փոխադրուած է Թիֆլիս, ուր Ներսէսեան վարժարանի մէջ կ'ստանայ իր նախնական կրթութիւնը։ Դէպի երաժշտութիւն ունեցած ընդունակութիւնը՝ հետագային զինք կը մղէ մասնաւոր

ԱԶԱՏ ՄԱՆՈՒԿԵԱՆ

դասեր ստանալու՝ Եկմալեանի և Կարա Մուրզայի մօտ։

1897—1902 Կովկասի զանազան քաղաքները կը պաշտօնավարէ իբրեւ եկեղեցական խմբավար։ 1903–1905 կ'անցնի Պեթերսպուրգ և կը կատարելագործուի երաժշտական գիտութեանց մէջ։ Կը վերադառնայ և կը նուիրուի երաժշտութեան մանկավարժական ճիւղին և 1908 էն սկսեալ լոյս կ'ընծայէ կարգ մը մանկական երգեր, օրերաններ և այլ հրատարակութիւններ։

Ազատ Մանուկեան մեր տաղանդաւոր երաժիշտ - մանկավարժներէն է, ան լաւ ուսումնասիրած է մանկական հոգին, ճաշակն ու գեղարուեստական պահանջները, որ ծանր ու գուցէ ամենակարեւոր ճիւղն է մեր մէջ, եւ այդ բոլորին համապատասխան արտադրած է խիստ յաջող աշխատութիւններ։

1921 ին Խորհ. Հայաստանի մէջ դպրոցական երաժշտութեան կեդրոնական հրահանգիչի պաշտօնին կը կոչուի։ 1923 թուականին կ'սկսի մշակել իր բանուորական երգերու շարքը։ Հայ երաժշտութեան Աշխատաւորներու Միութիւնը, իր վաստակաւոր անդամ՝ Ազատ Մանուկեանի երաժշտական-գրական գործունէութեան 25 ամեայ յոբելեանը տօնեց 1923 Մայիս 4 ին Թիֆլիսի մէջ, մեծ հանդիսութեամբ։ Իսկ վերջերս Երեւանի մէջ կազմակերպուեցաւ համերգի երեկոյ մը, իր կեանքին եւ երաժշտական գործունէութեան մասին, ուր կառավարութեան կողմէ իրեն տրուեցաւ «Աշխատանքի Հերոս»ի շքանշան եւ 3000 ռուբլի պարգեւ։

Մանուկեան ներկայիս ալ կ'աշխատի հայ երգի եւ երաժշտութեան մշակման գործին, մեծ ձեռնհասութեամբ։

ՍՊԻՐԻՏՕՆ ՄԵԼԻՔԵԱՆ

Ծնած է 1880 ին Վաղարշապատի մէջ։ Հազիւ 8 տարեկան երեխայ՝ կը կորսնցնէ մայրը, իսկ երկու տարի յետոյ բոլորովին կը որբանայ՝ հօրը մահուամբ։ Զրկուելով ընտանեկան գուրգուրանքէ, կը խնամուի մօրեղբօրը հսկողութեան տակ, յաճախելով ծննդավայրին դպրոցը։

13 տարեկանին՝ իբրեւ որբ կ՚ընդունուի Գէորգեան Ճեմարան, ուր կ՚ստանայ պատմա-փիլիսոփայական ուսում, միանգամայն երաժշտական դրոշմ՝ այդ ժամանակամիջոցի երաժիշտ-ուսուցիչ Կոմիտաս Վարդապետէն որ նոր դարձած էր արտասահմանէն։ 1902 ին Սպիրիտոն կ՚աւարտէ Ճեմարանը, ուր կը նշանակուի ուսուցիչ եւ Կոմիտասի հսկողութեամբ կը ղեկավարէ նոյն դպրոցի երգեցիկ խումբը։

1904 ին Ճեմարանի խորհուրդը կը ղրկէ զինք Պերլին, ուր չորս տարի կը խորացնէ իր երաժշտական հմտութիւնը ա՛յն ուսուցիչներու մօտ և ա՛յն դպրոցի մէջ ուր ուսած էր Կոմիտաս Վարդապետ, և կ՚ուսանի գրականութիւն և փիլիսոփայութիւն։

1908 Թուականին կ՚աւարտէ երաժշտական-ուսումնական դասընթացքը եւ կը վերադառնայ Էջմիածին։ 1909 էն մինչեւ 1920 կ՚ստանձնէ երաժշտական դասեր Թիֆլիսի Ներսէսեան վարժարանին մէջ. յետոյ, Կովկասի զանազան քաղաքներու Ազգ. դպրոցները մինչեւ 1923։ Այս շրջանը՝ Սպ. Մելիքեանի երաժշտական գործունէութեան ամենափայլուն շրջաններէն մէկն է։ Ան իր ամբողջ տաղանդը ի սպաս կը դնէ հայ երգի եւ երաժշտութեան կատարելագործման եւ տարածման։

Սպիրիտոն տուաւ երաժշտագէտներու սերունդ մը, որոնցմէ շատեր ապագային՝ իրմէ ստացած պաշարով՝ ներկայացուցիչները դարձան հայ երաժշտութեան զարգացման՝ առաւել կամ նուազ չափով։ Այս ուղղութեամբ իր առած քայլերը կ՚արժանանան ժողովրդի եւ մամուլի անվերապահ գնահատութեան։

1924 ի աշնան, Հայաստանի Լուսժողկոմատի հրաւէրով կ՚ստանձնէ Երեւանի քոնսէրուաթուարի մէջ ուսուցչի և Պետական Համալսարանի մէջ խմբապետի պաշտօն։

Սպիրիտոն Մելիքեան իբրեւ երաժիշտ ուսուցիչ տարաւ հսկայ աշխատանք, հայ մանուկի զգացումն ազնուացնելու, անոր հոգեկան աշխարհը հարստացնելու համար։ Ան տուաւ նոր, աշխոյժ եւ սիրուն ժողովրդական երգեր։ Մեծ դեր ունեցաւ հայ երաժշտութեան զարգացումը հիմնօրէն առաջ տանելու և ճաշակը բարձրացնելու։ Հրատարակեց շարք մը գիտական և երաժշտական գրքեր և պրօշիւրներ։ Որոնցմէ յիշատակենք «Դասագիրք Երգեցողութեան», «Յունական ազդեցութիւնը հայ երաժշտութեան տեսականին վըրայ», «Երաժշտութեան պատմութիւն» ևլն։

ՍՊ. ՄԵԼԻՔԵԱՆ

Ան տեւականօրէն աշխատակցած է իր շրջանի թերթերուն՝ երաժշտական արժէքաւոր ուսումնասիրութիւններով և քննադատութիւններով, որոնք մեր երաժշտական գրականութեան և պատմութեան համար խիստ արժէքաւոր են։ Շատ քիչեր իրեն չափ բազմակողմանի ուսումնասիրած են հայ երաժշտութիւնը։ Անոր հարուստ, ներդաշնակ գունաւորումներով և քնքուշ ու արտայայտիչ խաղերով ղեղուն երաժշտական կտորներուն մէջ կը փայլի արուեստագէտի տաղանդը։ Բոլոր հոգւով նուիրուած արուեստին, անխորտակելի կամքով ծառայեց ան հայ երաժշտութեան և անոր աղքատիկ գրականութիւնը զարգացուց

եւ դրաւ իր բարձրութեան վրայ։ Հայ ժողովրդի ոգին, շունչն ու հոգեբանութիւնը, անոր արտայայտութեան այլազան տրամադրութիւններու կերպերը—ուրախութիւնը, վիշտը, կատակը և այլ հոգեբանական երեւոյթներ — կ'արտացոլան իր ստեղծագործութեանց մէջ։ Այս բոլորը՝ արտայայտած է եւրոպական երաժշտութեան արուեստի նրբութիւններով։

Սպիրիտոն Մելիքեանին յանձնուած էր «Հայ երաժշտութեան պատմութիւնը» գրելու հոգը. սակայն դժբախտաբար, իր կանխահաս մահով (4 Մայիս 1933) այդ գործը մնաց կիսատ։ Անոր ապաժամ կորուստը խզեց իր 25-ամեայ ա՛յնքան բեղուն գործունէութեան ընթացքը, երբ դեռ ուժն ու կորովը շատ բարձր էին և իր արուեստը՝ վերելքի և ծաղկման շրջանին մէջ։

ԱՆՏՈՆ ՄԱՅԻԼԵԱՆ

Ծնած է Թիֆլիս՝ 1880 թուականին։ Հայրն ու պապը եղած են երաժշտասէրներ և եկեղեցական երգիչներ, որոնցմէ ազդուած է դեռատի Անտոն։ Գեղարուեստի բոլոր ճիւղերուն՝ նկարչութեան, գրականութեան, բեմի, պարի և երաժշտութեան հանդէպ բնածին ընդունակութիւն ի յայտ կը բերէ այն՝ շատ կանուխէն։

Սկզբնական կրթութիւնը կ'ստանայ Թիֆլիսի ռուսական քաղաքային դպրոցի մէջ. յետոյ Ներսիսեան վարժարան։ Դեռ դպրոցական այդ շրջանին կ'ունենայ գրական հրատարակութիւններ և անոր նկարները կ'արժանանան ցուցադրութեան։ Բեմը կը հետաքրքրէ զինք նոյն չափով, և երկու տարի կը խաղայ ան՝ Թիֆլիսի արդիստական թատրոնի խումբին հետ և միաժամանակ կ'աշակերտէ երաժշտագէտ Մակար Եկմալեանի և Կարա-Մուրզայի խումբերուն մէջ։

1900 ին, մրցումով կ'ընդունուի Թիֆլիսի երաժշտական դպրոցը, ուր կ'աւարտէ հարմոնիայի ուսմունքը։

1903 թուականին կը հրաւիրուի Ներսիսեան դպրոցը, ուր արդէն կը սկսի իր համերգային գործունէութեան։ Այնուհետեւ՝ 1905 ին կը պաշտօնավարէ Պագու՝ Հախփոխմեաց դպրոցը՝ որպէս ուսուցիչ և կը շարունակէ մինչեւ 1908։

1910 ին, Պագուի մէջ, իր ջանքերով և իր միջոցներով կը հրատարակէ «Թատրոն և Երաժշտութիւն» պատկերազարդ ամսագիրը։

1911 ին քննութիւն կուտայ Խէրսոնի Մանկավարժական-խմբապետական դասընթացքներուն և կ'ստանայ լաւագոյն աւարտական վկայական։

1919 ին երաժշտական-թատերական խումբի հետ կ'անցնի Պարսկաստան, ուր շարք մը բեմադրութիւններ և համերգներ տալէ յետոյ, պահ մը կը մնայ Էնզէլիի մէջ աւագ ուսուցչի պաշտօնով։ Այդ շրջանին կը կազմակերպէ մօտ 25 համերգներ։

ԱՆՏՈՆ ՄԱՅԻԼԵԱՆ

1920 ին կ'անցնի Պագու եւ տեղւոյն Լուսժողկոմատի կողմէ կը հրաւիրուի կազմակերպելու արեւելեան առաջին Թատերա-երաժշտական ուսումնարանը։ Նոյն տարին, Ատրբէյջանի մէջ կուտայ մօտ 70 համերգներ, հայ և օտար երգերով և երբեմն միջազգային կազմով։ 1922 ին, միանգամայն կը կոչուի տեղւոյն արեւելեան քոնսէրուաթուարի վարիչի պաշտօնին, ուր անոր խնամքին կը յանձնուին 700 հոգի երկսեռ ուսանողութիւն, եւ կը նշանակուի զինուորական դպրոցի ուսուցիչ։

Հայ երաժշտութեան պատմութեան մէջ Մայիլեան ունի իր փայլուն էջը։ Մօտ երեսուն հինգ տարիներէ ի վեր, ան նուիրուած արուեստին, աննկուն կամքով կը գործէ երաժշտական ասպարէզին մէջ։ Դրական գործերու շարքին՝ ունի մանկական և աշխատաւորական ստուարաթիւ երգեր։

1930 Մայիս 4 ին, Բագուի Լուսժողկոմատը տօնեց իր 25-ամեայ յոբելեանը։ Այդ առթիւ ցուցադրուեցան Ցոբելեարի գրական-երաժշտական երկերը, օբերաները, ձեռագիրները և պատմական լուսանկարները եւն։ Դահլիճը ծափահարութիւններով թնդաց, երբ Լուսժողկոմի կողմէ յայտարարուեցաւ թէ Ցոբելեարին կը տրուէր՝ «Հանրապետութեան գեղարուեստի վաստակաւոր գործիչ» ի կոչումը։

ՌՈՄԱՆՈՍ ՄԵԼԻՔԵԱՆ

Ռ. ՄԵԼԻՔԵԱՆ

Հայ երաժշտական մշակոյթի ականաւոր գործիչներէն մէկն է Ռոմանոս Մելիքեան։ Մեր նորագոյն երաժշտական պատմութեան մէջ, ան ունի իր մասնաւոր տեղը, որպէս ձայնական արուեստի քնարական ներկայացուցիչ։ Երեսուն տարիներու ընթացքին անոր կատարած ստեղծագործութիւններու շարքը, երաժշտական-գեղարուեստական ամբողջ աշխարհ մըն է։

Ծնած է 1883ին, հիւսիսային Կովկասի Ղզլար քաղաքը, որ իր բնանկարով կը ներկայացնէ հիասքանչ տեսարան մը։ Տեղացի հայերը, որ գաղթած են Պարսկաստանի և Ղարաբաղի շրջաններէն, յայտնի են իրենց գիւղացիական և ասպետական կեանքով։ Անոնք սիրած են՝ երգն ու արուեստը, գինին ու

պարը։ Ահա, այդ ժողովրդի ծոցին մէջ սնած և մեծցած է Ռոմանոս Մելիքեան։

Սկզբնական ուսումը կ'առնէ ծննդավայրին մէջ։ Դեռ մանուկ հասակին՝ կը կորսնցնէ հայրը։ 1896 ին իր ուսումնասէր մայրը զինք կը ղրկէ Նախիջեւանի Թեմական դպրոցը, ուր կը մնայ հօթը տարի։ Իր 12 – 13 տարեկան հասակին՝ դպրոցի մէջ, Ռոմանոս բացառիկ ուշադրութիւն կը գրաւէ գրական և երաժշտական հակումներով։

1902 թուին կ'անցնի Ռոստով և կը մտնէ տեղւոյն երաժշտանոցը, ուր գեղարուեստական ուսումնասիրութեանց մէջ աւելի կը խորանայ և կը մշակուի։ 1905ին կը հրաւիրուի Մոսկուայի Լազարեան ճեմարանը, երաժիշտ - ուսուցչի պաշտօնով. իսկ 1907 - 1908 ուսումնական տարին կ'անցընէ Մոսկուայի քոնսէրվաթուարը։ Այնուհետեւ կը դառնայ Կովկաս, ուր մօտէն ծանօթանալով հայ կեանքին եւ արուեստին՝ ցոյց կուտայ երաժշտական բեղմնաւոր գործունէութիւն։

1910 ին, կատարելագործուելու կրակը կը նետէ զինք նոր հորիզոններ, ու ան կ'անցնի Բեթերսպուրգ և մրցումով կ'ընդունուի քոնսէրվաթուար եւ կ'ստանայ ուսանողական ամսաթոշակ։ Մինչեւ 1915 Ռ. Մելիքեան հոն կ'ուսումնասիրէ մեծ արուեստագէտներու ստեղծագործութիւնները և երաժշտական արուեստի լաւագոյն էջերը։ Գեղարուեստի այդ տաճարը մեծ ազդեցութիւն կը գործէ իր վրայ։

1916ին կ'անցնի Կովկաս. կը նուիրուի հայ երաժշտութեան վերածննդեան և կը կատարէ նշանակալից նուաճումներ՝ հայ ժողովրդին նուիրելով իր «Զմրուխտ Երգեր»ն ու «Զառ-Վառ» երգերու շարքը, մինչեւ 1920։

1921ի աշնան կը հրաւիրուի հիմը դնելու Հայաստանի առաջին երաժշտանոցին։ Արուեստի այդ տաճարին մէջ, Ռոմանոս Մելիքեան, լեցուած խոր հաւատքով և արտասովոր ոգեւորութեամբ, կ'աշխատի հայ երաժշտութեան վերածընընդեան մեծ գաղափարին, կազմակերպչական և մանկավար-

ժական բացառիկ ընդունակութեամբ։ 1927 ին ան քաշուելով վարչական գործերէ, կ'զբաղուի առաւելապէս ստեղծագործական աշխատութեամբ։ 1933 ին կը նշանակուի Պետ. օբերայի երաժշտական մասի վարիչ։

Ռոմանոսի երաժշտական ստեղծագործութիւնները, թեքնիք և հոգեբանական հիւսուածքով նախ կը կրեն եւրոպական արուեստի կնիքը։ Եւրոպական արուեստի թեքնիքին տիրապետելէն յետոյ, նա աստիճանաբար կը մօտենայ հարազատ արեւելքը և կը կապուի հայրենի երգին ու երաժշտութեան ոճաւորման։ Կ'աշխատի եւրոպական արուեստի եւ մշակոյթի միջոցով տալ հայ նոր երգը, աւելի զարգացած և աւելի ազնուացած։

Անոր ստեղծագործութիւնները օժտուած են գեղարուեստական արժանիքներով, որոնց մէջ կը տիրեն բանաստեղծական նուրբ և խորիմաստ ոգի. հոգեկան յոյզերու հարազատ արտայայտութիւն, առհասարակ քնքուշ և մելամաղձիկ երանգներով, իրական կեանքի ցաւոտ և յուզումնալից էջերու արտայայտութեամբ։

Ռոմանոս Մելիքեան մեծ դեր ունեցաւ մեր ժողովրդական հին երգերը կորուստէ փրկելու գործին մէջ. ուշադրութիւն դարձուց հաւաքման և անոնց հիւսուածքներէն ստեղծեց և մշակեց նոր երգեր՝ արդիական արուեստի բարձր ըմբռնումով։ Հայ երաժշտութեան մէջ ան մտցուց թարմութիւն, գեղարուեստականութիւն, բացառապէս իր անհատական, ինքնուրոյն երաժշտական ստեղծագործութիւններով։

Հայ երաժշտութեան զարգացման գործին մէջ Մելիքեան Ռոմանոս եղաւ մեր եզական դէմքերէն մին։ Ազգը, իր այս տաղանդը կորսնցուց վաղաժամօրէն՝ 1935 Մարտ 30 ին Թիֆլիսի մէջ, սրտի կաթուածով մը՝ դեռ իր գործունէութիւնը չլրացուցած։ Անոր անունը կենդանի կը մնայ հայ երաժշտութեան պատմութեան մէջ, իբրև յուզիչ ռոմանսներու հեղինակ։

ԱՐՄԷՆ ՏԻԳՐԱՆԵԱՆ (*)

ԱՐՄԷՆ ՏԻԳՐԱՆԵԱՆ

Հայ երաժշտութեան պատմութեան մէջ առանձնայատուկ տեղ է գրաւում Արմէն Տիգրանեանը։

Ծնուել է նա Լենինականում (նախկին Ալէքսանդրապոլում) 1879 թուականին, գրասէր մի ընտանիքում։ Տնտեսական հանգամանքների պատճառով՝ Ալէքսանդրապոլից անցնում է Թիֆլիս և մտնում նախ՝ Տէր-Սարգսեանի գրավաճառանոցը, ապա՝ ծառայում մանուֆակտուրայի վաճառականի խանութում։ 1896՝ թուականին ընդունւում է Թիֆլիսի երկրորդ գիմնազիան, բայց մի տարի անց նիւթական ծանր պայմանների հետեւանքով՝ մեկնում է Տուապսէ, ապա Ալէքսանդրապոլ, ուր մասնակցում է Կարա-Մուրզայի երգեցիկ խմբին։ 1898 թւին նորից անցնում է Թիֆլիս և մտնում Կայսերական երաժշտական ընկերութեան դպրոցը։ Բնորոշ է, որ նա երաժշտական գիտական լուրջ

(*) Ծանօթ բանաստեղծ-քննադատ Արամ Երեմեան, մեր խնդրանքով բարեհաճեցաւ տրամադրել երգարանիս համար, երաժշտագէտ Արմէն Տիգրանեանի ներկայ կենսագրութիւնը, զոր կը հրատարակենք նոյնութեամբ: Այս առթիւ, պարտք կ'զգանք յիշատակել նաեւ թէ Ալ. Սպենդիարեանի, Նիկ. Տիգրանեանի, Ռոմ. Մելիքեանի, Ա. Տէր-Ղեւոնդեանի, Սպ. Մելիքեանի. Ս. Բարխուդարեանի, Ա. Ադամեանի, Ա. Մանուկեանի եւ Ա. Մայիլեանի կենսագրութիւններում եւ երաժշտական գործունէութեանց մասին մասնաւորապէս օգտուած ենք Երեմեանի *Սեւան* (Հայ Նորագոյն Կոմպոզիտորներ) երկէն. Տպ. Մխիթարեան, 1926, Վենետիկ:

բովանդակութիւն ստանալու նպատակով՝ բացի երաժշտանոցում դասաւանդուած թէորէտիկ առարկաներից, առանձին դասեր է վերցնում նաև դպրոցի դիրեկտոր երաժշտագէտ Նիկոլայ Կլէնովսկու մօտ։ Ուղիղ երեք տարի նա ստանում է երաժշտական լուրջ կրթութիւն։ 1902 թւին նա վերադառնում է իր ծննդավայրը եւ նւիրւում երաժշտական ու մանկավարժական գործունէութեան։ 1902 թւի Հոկտեմբ. 20-ին Ալէքսանդրապոլի Քաղաքային ամառնային ժողովարանի սրահում տալիս է իր առաջին համերգը։ Այդ օրից էլ սկսում է նրա համերգային-հասարակական գործունէութիւնը։ 1902-1907 թւականը պիտի համարել Տիգրանեանի ինքնուրոյն արւեստի առաջին շրջանը։ Այդ ժամանակաշրջանում նա մի կողմից՝ ծանօթանում է եւ խորապէս ուսումնասիրում ժողովրդական-աշուղական երգերը, միւս կողմից՝ Իսահակեանի եւ Յովհաննիսեանի քնարական մոտիւների ազդեցութեան տակ ստեղծագործում։ 1907 թւից սկսում է նրա երաժշտական ստեղծագործութեան երկրորդ շրջանը։ Այդ շրջանում է, որ նա վրձինում է իր երաժշտական խոշոր կտաւը՝ «Անուշ» օպէրան, որ առաջին անգամ բեմադրւեց 1912 թւին եւ որը միանգամից ժողովրդականացրեց Տիգրանեանի անունը։ Դա մեզանում ժողովրդական ոգով գրուած առաջին հայկական օպէրան է։ Ընդգծենք եւ այն, որ Տիգրանեանը 22 տարի շարունակ պաշտօնավարել է դպրոցներում եւ դասաւանդել երաժշտասէր մի ամբողջ սերունդ։

Արմէն Տիգրանեանը ունի նաեւ «Լէյլի եւ Մաջնուն» երաժշտական մի դրամա, մի շարք ռոմանսներ, ինչպէս նշեցինք, եւ թէ՛ ինքնուրոյն եւ թէ ժողովրդական մոտիւներ քառաձայն խմբի եւ դաշնամուրի համար։

ԱՐԱՄ ԵՐԵՄԵԱՆ

ԴԱՆԻԷԼ ՂԱԶԱՐԵԱՆ

Դ. ՂԱԶԱՐԵԱՆ

Ծնած է 1883ին Շուշի, Սկզբնական կրթութիւնը ստացած է ծննդավայրին Թեմական վարժարանը։ Այնուհետեւ ուսած է Բագուի երաժըշտական դպրոցը, ապա՝ Թիֆլիսի երաժշտանոցը եւ զայն աւարտած՝ 1910ին։

Կանուխէն սկսած է գործել հայ երաժշտական ասպարէզին մէջ։ Կազմակերպած է համերգներ՝ Կովկասի բոլոր քաղաքներուն մէջ, ունենալով Թիֆլիսը իրեն կեդրոն։

1922ին հիմնած է Պաթումի, իսկ 1924ին՝ Ալեքսանդրապոլի երաժշտական բարձրագոյն վարժարանները, ուր եղած է վարիչ։

Դանիէլ Ղազարեան, իբրեւ հեղինակութիւն՝ կարգ մը մանկական օպերաներէ զատ ունի դպրոցական, ժողովրդային և յեղափոխական երգեր, որոնք զինք կը դասեն մեր տաղանդաւոր երաժիշտներու կարգին։

ԱՐՇԱԿ ԱԴԱՄԵԱՆ

Գեղարուեստասէր ընտանիքի մը տաղանդաւոր զաւակը։ Վեց տարեկան հասակին ան արդէն ցոյց տուած է բացառիկ ձիրք, ջութակ և դաշնամուր նուագելու մէջ, աշակերտելով յայտնի ուսուցիչներ՝ Կարա-Մուրզայի և Ռեժինսկիի։

Ծնած է Բագու 1884ին, ուր ստանալէ յետոյ իր նախնական և միջնակարգ կրթութիւնը, կ'անցնի Բեղորկրատի համալսարանը և կը հետեւի իրաւաբանութեան, փիլիսոփայութեան և տեսական երաժշտութեան։ Այնուհետեւ կը մեկնի Պերլին և կը մտնէ տեղւոյն երաժշտանոցը, ուր խորացնելէ

յետոյ իր երաժշտական մասնագիտութիւնը, կ'անցնի Եւրոպայի առաջնակարգ կեդրոնները և շրջելով Փարիզ, Հռոմ, Ժընեւ, Ցիւրիխ, կ'ստանայ երաժշտական բազմերանգ տպաւորութիւններ։

Ընդհանուր պատերազմի նախօրեակին կը վերադառնայ Պաքու, ուր հետզհետէ կ'ստանձնէ զանազան պաշտօններ։

Խորհրդային իշխանութեան շրջանին, մօտ երկու տարի, կը վարէ Թիֆլիսի Հայ Արուեստի Տան վարչութեան նախագահութիւնը և զանազան երաժշտական պաշտօններ։ 1924ին Երեւանի երաժշտանոցին վերատեսուչ կը նշանակուի։

Արշակ Ադամեան օժտուած է գեղարուեստական և գիտական բազմակողմանի առանձնայատկութիւններով. ան յայտնի է իբրեւ երաժիշտ-մանկավարժ, նշանաւոր է իբրեւ դասախօս և ղեկավար, և արժէքաւոր՝ իբրեւ ստեղծագործող։ Ունի բազմերանգ երաժշտական կտորներ՝ բացառաբար դաշնամուրի համար։

ԱՆՈՒՇԱՒԱՆ ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ

Ծնած է 1887ին, Թիֆլիս։ Սկզբնական և միջնակարգ ուսումը ծննդավայրին մէջ ստանալէ յետոյ, 1907ին կ'անցնի Պետերսպուրգ և կը մտնէ համալսարան։ 1909ին կ'ընդունուի քոնսէրվաթուարի մասնագիտական դասարանը և կ'աւարտէ զայն՝ 1915ին, «Ազատ Գեղարուեստագէտ»ի կոչումով, իսկ 1916ին կը լրացնէ համալսարանի իրաւաբանական դասընթացքը։

1917ին կը վերադառնայ Թիֆլիս, և կը հրաւիրուի պետական երաժշտանոց, ուսուցանելու համար մասնագիտական բարձր առարկաներ, ուր մինչեւ 1924, ան կը դաստիարակէ երաժշտասէր ամբողջ սերունդ մը։

1924 թուականին «Թիֆլիսի Հայոց Երաժշտական Ընկերութեան» կողմէ, Սպիրիտոն Մելիքեանի հետ կը ղրկուի

Ա. ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ

Շիրակի շրջանը, ուր ան կը հաւաքէ ժողովրդային ստուարաթիւ երգեր, որոնք կը հրատարակուին Սպ. Մելիքեանի խմբագրութեամբ։ Տէր-Ղեւոնդեան չսահմանափակուիր երաժշտական այդ աշխատանքով, և եռանդուն գործունէութիւն ցոյց կուտայ Թիֆլիսի Հայ Արուեստի Տան մէջ, ուր առաջին անգամ ան հիմը կը դնէ երաժըշտական ուսումնարանին։

1926էն սկսեալ կը պաշտօնավարէ Հայաստանի Պետական Երաժշտանոցին մէջ, թէ՛ իբրեւ տընօրէն և թէ իբրեւ երաժշտական տեսական նիւթերու դասատու։ Իր ջանքերով ստեղծուեցաւ երաժշտանոցի օպերային դասարանը, որ հանդիսացաւ նախադուռը Հայաստանի պետական օպերային։

Խորհ. Հայաստանի կառավարութիւնը՝ գնահատելով Անուշաւան Տէր-Ղեւոնդեանի երաժշտական և մանկավարժական բեղմնաւոր գործունէութիւնը, անոր տուաւ «Բրօֆէսէօր»ի և «Վաստակաւոր Երգահան»ի կոչումը։

1935 թուականին կը նշանակուի Ատրպէյճանի Պետ. երաժշտանոցի վարիչ, ուր միանգամայն ան յառաջ կը տանի իր ստեղծագործական աշխատութիւնները։

Տէր-Ղեւոնդեանի գործերուն մէջ արեւելեան ոճը ցցուն է, և երբեմն զուտ հայկական։ Բացի երաժշտական հայերէն հեղինակութիւններէ և մանկավարժական աշխատութիւններէ, ան ունի ռուսերէն լեզուով կարեւոր գործեր, հայ աշխարհիկ և եկեղեցական երաժշտութեան և անոնց պատմութեան մասին։

Տէր-Ղեւոնդեանի երաժշտական ընդունակութիւնը երե-

ւան եկած է չորս տարեկան հասակին։ Իր բուռն փափաքն ու ուժեղ ձգտումը դէպի երաժշտական ասպարէզը, հետագային զինք մղեցին ուսումնասիրելու երաժշտութեան տեսականը, որուն տիրացաւ առանց ոեւէ դժուարութեան։

Ան, կանուխէն սկսաւ ստեղծագործել, կրելով ռուս մեծ երաժշտագէտներու ազդեցութիւնը, եւ սակայն պահելով իր ինքնուրոյն դրոշմը։ Դեռ Բեթերսպուրկ՝ ուսանող եղած միջոցին գրած է կարգ մը խմբական աշխատութիւններ։ Այդ գործերը հրատարակուած են ռուս և հայ հրատարակչական ընկերութիւններու կողմէ, որոնք գրուատիքի ենթարկուած են քոնսէրվաթուարի գեղարուեստական խորհրդին կողմէ։ Իր գործերը նուագուած են Մոսկուա, Թիֆլիս, Հայաստան ու արտասահման և գտած՝ մեծ ընդունելութիւն։

Տէր-Ղեւոնդեան ունի մանկական գեղեցիկ ժողովածուներ և հայ ժողովրդային երգերու շարք մը։ Ան իր երաժըշտական աշխատութեանց մէջ՝ որոշ չափով տեղ տուած է նաև գործիական երաժշտութեան։

Հայաստանի Խորհրդային Երգահաններու Միութիւնը՝ 1934 Յունիս 13ին՝ կազմակերպեց պատուոյ երեկոյ մը, նուիրուած՝ իր վաստակաւոր անդամին, անոր երաժշտական գործունէութեան 25 ամեակին առթիւ։

ՍԱՐԳԻՍ ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ

Ծնած է 1887ին Թիֆլիս։ Եօթը տարեկան էր երբ որբ մնաց իր ունեւոր՝ վաճառական հօր մահուամբ։ Բարխուդարեանի մայրը ո՛չ մէկ նիւթական միջոց չի խնայեց իր որդւոյն կրթութեան գործին։ Ծննդավայրին մէջ կ'ստանայ իր սկզբնական ուսումը, հայ և ռուս շրջանակներու մէջ։

12 տարեկանին կը սկսի յաջողութեամբ նուագել դաշնամուրի վրայ զանազան կտորներ, ի յայտ բերելով բնածին ընդունակութիւն։

Ս. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ

1907ին կ'աւարտէ Թիֆլիսի գիմնազիան և կ'անցնի Պերլին, երաժըշտական ուսումը շարունակելու՝ կայսերական քոնսէրվաթուարի մէջ։ 1909—1915 Բեթերսպուրկ՝ կը հետեւի պետական երաժշտանոցի բարձրագոյն դասընթացքներուն։

1917ին կը վերադառնայ Թիֆլիս և կը զբաղուի մասնաւոր դասեր տալով։ 1919—21 կը ղեկավարէ Երեւանի խմբավարական դասընթացքները։ 1922ին կը շրջի ամբողջ Հայաստանն ու Կովկասը, նաեւ Մոսկուա և Բեթերսպուրկ և կը կազմակերպէ համերգներ։

1923ին ուսուցիչ կը նշանակուի Թիֆլիսի քոնսէրվաթուարի բարձրագոյն դասարաններուն։

Բարխուդարեան մեր լաւագոյն կերպով կատարելագործուած երաժիշտներէն է։ Անոր ստեղծագործութիւնները ձեւով և ներդաշնակութեամբ ազգային բնոյթ կը կրեն։ Աշխատութիւնները եղած են ընդհանրապէս դաշնամուրային կտորներ և ժողովրդային պարեր։ Մշակման ձեւը պարզ է և իւրայատուկ, միանգամայն քնքուշ ու թեթեւ։

ԲԱՐՍԵՂ ԿԱՆԱՉԵԱՆ

Կոմիտաս Վարդապետի սաներէն։ Ծնած է Ռոտոսթօ, 1888ին։ Նուագասէր կօշկակարի մը որդին է։ 1896ին, ծնողքին հետ կը փոխադրուի Պուլկարիա և նախակրթութիւնը կ'ստանայ Խալիմիա՝ հայոց դպրոցը։

Երաժշտութեան հանդէպ ունեցած փափաքը կանուխէն զինք կը մղէ ջութակի մասնաւոր դասեր առնելու։ Հօրը ստիպումով, ապրուստի համար պահ մը կը մտնէ առեւտրական

Բ. ԿԱՆԱՉԵԱՆ

ասպարէզ, սակայն, նուագի սէրը զինք կը նետէ Պուքրէշ, ռումէն յայտնի երաժիշտ՝ Ժորժ Պույուքի վարժարանը, ուր կը հետեւի դաշնամուրի, ջութակի և դաշնաւորումի դասերու։

Քաղաքական հալածանքներու հետեւանքով կ'ապաստանի Վառնա, ուր կը մասնակցի նուագախումբերու. իբրեւ նուագապետ՝ կ'ընկերանայ նաեւ Պէնլեանի խումբին, թէ՛ Պուլկարիա և թէ Ռումանիա։

Սահմանադրութեան հռչակումին՝ կ'անցնի Պոլիս. ուր իբրեւ երաժիշտ-ուսուցիչ պաշտօնի կը կոչուի մէկ քանի ազգ. դպրոցներու մէջ, և նուագախումբեր կը կազմէ։ Այդ օրերուն է որ (1910) էջմիածնէն Պոլիս կը ժամանէ Կոմիտաս Վարդապետ և կը սկսի իր համերգային կազմակերպութեան՝ 300 հոգինոց «Գուսան» երգչախումբով։ Կանաչեան կը մտնէ նոյն խումբին մէջ և երբ դաշնաւորումի դասընթացքը կը հիմնուի. 16 ընդունակ աշակերտներէ կազմուած, ինք անոնց մէջն է արդէն։ Խումբը հետզհետէ կը մաղուի և կը մնան հինգ հոգի միայն. որոնք կը կոչուին «Կոմիտասեան Սաներ»։

Ընդհանուր պատերազմի թոհուբոհը՝ Կանաչեան կ'անցնէ զինուորական այլեւայլ ծառայութիւններով՝ Պոլիս, Կարին և Տիգրանակերտ։ Զինադադարէն քիչ առաջ, հիւանդանալով գրկուած էր Հալէպ. ամիս մը վերջ քաղաքը կը գրաւուի անգլ. բանակի կողմէ, և Կանաչեան՝ զինուորական տարազը մէկդի նետելով՝ կը կազմէ երգչախումբ մը, տարագրութենէ հետըզհետէ վերադարձող խլեակներէ. և կուտայ քանի մը համերգներ. որոնք կը կրկնուին Ադանա. ուրկէ կը վերադառնայ

Պոլիս. հոն ևս քանի մը երգահանդէսներ տալէ յետոյ, կ'անցնի Փարիզ։

Կանաչեան Փարիզի մէջ տարի մը կը հետեւի Ռընէ Լընորմանի դասընթացքներուն, այնուհետեւ կը շրջի Եգիպտոս, Կիպրոս, Սուրիա, միշտ տալով համերգներ։

1926 Սեպտ.ին կը հրաւիրուի Նիկոսիա, իբրեւ երաժիշտ-ուսուցիչ Մելգոնեան հաստատութեան։ Ներկայիս նոյն պաշտօնով կը մնայ, Պէյրութի Ճեմարանը։

Կանաչեանի մշակած երգերուն գլուխ գործոցը կրնայ համարուիլ իր «Օրօրը»։ Ան, իր վարպետին, Կոմիտաս Վարդապետի նուիրական գործն է որ կը շարունակէ, համեստ բայց յարատեւ աշխատանքով։

ԿԱՐՕ ԶԱՔԱՐԵԱՆ

ԿԱՐՕ ԶԱՔԱՐԵԱՆ

Ծնած է Վան, 1893 թուականին։ 1895ի ջարդի տարին ծնողքին հետ կը փոխադրուի Թիֆլիս։ Նախնական կրթութիւնը Ներսէսեան վարժարան ստանալէ յետոյ, կը մտնէ Թիֆլիսի երաժշտական սթիւտիան։ 1914ին վերջացնելով զայն կը հրաւիրուի Ախխարաթ, որպէս երաժշտութեան ուսուցիչ, ուր կը պաշտօնավարէ տարի մը։

1915ին կ'անցնի Բեթերսպուրկ եւ կը պատրաստուի մտնել քոնսէրվաթուար. սակայն որոշ պատճառներով կը վերադառնայ Թիֆլիս եւ կ'ընդունուի տեղւոյն երաժշտանոցը, ուր՝ 1924ին վերջացնելով տեսական մասը, կ'ստանայ Ազատ Գեղարուեստագէտի կոչում և կը հրաւիրուի Հայաստանի

երաժշտանոցին քառաձայն երգչախումբի ղեկավար և սթիւտիայի վարիչ օգնական։

1930ի ամրան, Երեւանի երգեցիկ խումբը, ղեկավարութեամբ Կ. Զաքարեանի, Մոսկուայի ողիմպիականին մասնակցելով, արժանացաւ մեծ գնահատանքի։

Կարօ Զաքարեան մեր նորագոյն և խոստմնալից երաժիշտներէն է։ Ունի երաժշտական գեղեցիկ կտորներ ու երգեր։

ԱՇՈՏ ՊԱՏՄԱԳՐԵԱՆ

Մասնագիտական խոր զարգացումով, հայ արդիական երաժշտութեան խանդավառ մշակներէն է Ա. Պատմագրեան։ Ծնած՝ Թաւրիզ, 1898 թուականին։ Շառաւիղն է 17րդ դարու նշանաւոր հայ պատմագիր՝ Առաքել Դավրիժեցիի սերունդին, որմէ առած է նաեւ իր մականունը։

Նախնական կրթութիւնը ստացած է ծննդավայրին Արամեան Վարժարանին մէջ եւ միջնակարգ ուսումը՝ Էջմիածնայ Գէորգեան ճեմարանը։

Փոքր տարիքէն՝ իր մէջ յայտնուող երաժշտական արուեստի բնածին ձգտումը, կատարելագործուելու համար զինք կը մղէ մասնագիտական ուսման աղբիւրները. եւ դեռ շատ երիտասարդ, Պատմագրեան կ'ուղեւորի Պերլին եւ կը մտնէ տեղւոյն Sternsche քոնսէրվաթուարը։ Երաժշտանոցի դասերէն դուրս միաժամանակ կը հետեւի Kaiser Fr. Wilhelm համալսարանի փիլիսոփայութեան եւ գեղագիտութեան ճիւղերուն։

Այնուհետեւ, 1925ին կ'անցնի Ֆրանսա։ Փարիզի գեղարուեստական միջավայրին մէջ, հետզհետէ իր թէքնիքը զարգացուցած եւ պաշարը ճոխացուցած՝ ան հանդէս կուգայ յաճախակի յոյժ գեղեցիկ համերգներով, մինչեւ 1933։

1935ին, Ֆիրտուսիի ծննդեան հազարամեակին առթիւ, Իրանի կառավարութիւնը պաշտօն յանձնեց իրեն, Շահնամէի

Ա. ՊԱՏՄԱԳՐԵԱՆ

«Պիժանը Կիվ» գլուխը օբերայի վերածելու, ինչ որ արդէն պատրաստ է ներկայիս։

Վերջին տարիները Պատմագրեան, իր շնորհալի տիկնոջ, մեր լաւագոյն երգչուհիներէն Տիկին Ռօզ Պատմագրեանի հետ՝ երաժշտական թուրնէի մը ձեռնարկած է։ Բոլոր այն երկիրները, ուր անոնք այցելած են—Ֆրանսա, Անգլիա, Գերմանիա, ապա Արեւելք՝ Պարսկաստան, Իրաք, Լիբանան, Եգիպտոս—գտած են միշտ խանդավառ ընդունելութիւն։ Ներկայիս առժամապէս կը բնակին Աղեքսանդրիա (Եգիպտոս)։

Աշոտ Պատմագրեան կանուխէն սկսաւ ստեղծագործել։ Մեր մէջ գրեթէ առաջինը եղաւ ան, որ փորձեց հայ ժողովրդական երգերուն տալ սենֆօնիք արժէք, օգտագործելով եւրոպական արդիական սենֆօնիք նուագախումբերու թեքնիք կատարելութիւնը։ Իր առաջին ելոյթը այդ ուղղութեամբ տեղի ունեցաւ 1926-ին, Փարիզ։ Անկէ ետք կարգ մը երգահաններ շարունակեցին ընթանալ այդ ուղղութեամբ։

Իր ստեղծագործութեանց մէջ կարեւոր տեղ կը գրաւեն նուագարանային և նուագախմբային կտորներ։ Ունի ինքնուրոյն և դաշնաւորած երգեր, որոնցմէ մեծ ժողովրդականութիւն գտած են՝ «Տուտուլ», «Եար Կիւլա», «Նինամի Հարսնիքը» ևլն։ Օբերէթներ՝ «Շունն ու Կատուն», «Տէրն ու Ծառան» և «Հեքեաթ» օբերա, ներկայացուած Փարիզ, 1932ին։

Պատմագրեան ունի նաև բազմաթիւ ուսումնասիրու-

թիւններ հայկ. երաժշտութեան մասին, որոնցմէ կ'արժէ յիշել «Հայ ժողովրդական երգը» (Անահիտ 1930, թիւ 4) «Մեր երաժշտութեան անցեալից» (Ս. Փրկիչ Տարեգիրք, 1931)։ Մամուլի տակ է նաև իր «Երաժշտարան» ձայնագրութեան դասագիրք»ը։

ՎԱՂԱՐՇԱԿ ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

Վ. Սրուանձտեանց եղբօրորդին է բանահաւաք Գարեգին Եպսկ. Սըրուանձտեանցի։ Փոքր տարիքէն երաժշտական բացառիկ ընդունակութիւն ցոյց տուած է ան, ինչ որ կանուխէն կը նշմարեն ապագայ երգահանի պարագաները։

Պրուսայէն, ուր անցուցած էր իր պատանեկութիւնը, կը փոխադրուի Պոլիս։ Կարճ ժամանակի մէջ, հոն նպաստաւոր համբաւ մը կը տիրանայ իր սրինգովն ու նուագախումբերու ղեկավարութեամբ։ Երբ, Պոլիս կը հասնի Կոմիտաս Վարդապետ, Սրուանձտեանց կը յաջողի վայելել վարպետին անմիջապէս համակրութիւնը, և իր միւս ընկերներուն հետ (Սարգիսեան, Թումաճան, Կանաչեան եւ Սէմէրճեան) կը մասնակցի անոր դաշնաւորումի դասընթացքներուն։

Ընդհանուր պատերազմի տեւողութեան, Սրուանձտեանց զուրկ կը մնայ արուեստը կատարելագործելու միջոցներէն։ Զինադադարի նախընթօրին՝ Կոմիտասեան հինգ՝ սաներ, կը կազմակերպեն շարք մը համերգներ, որոնց հասոյթով կ'անցնին Փարիզ, շարունակելու՝ իրենց երաժշտական ուսումը։ Հետագային, Սրուանձտեանց բաժնուելով իր ընկերներէն, կ'անցնի Պերլին, ուր կը մնայ ամբողջ երեք տարի եւ կ'ուսումնասիրէ գերմանական երաժշտութեան զանազան դասընթացքները։ Համերգային ղեկավարութեան և դաշնաւորումի լուրջ հմտութիւն ձեռք բերած՝ ան կ'անցնի Եգիպտոս, ուր կուտայ շարք մը համերգներ։ Հայ և օտար շրջանակներ խորունկ հիացումով գնահատեցին Սրուանձտեանցի գործը և պանծացուցին անոր անունը։

Վ. Սրուանձտեանց ժամանակէ մը ի վեր կը գտնուի Ամերիկա, ուր կուտայ համերգներ։ Տեւապէս աշխատող ուժ մըն է ան մեր մէջ, որ իր ամբողջ տաղանդն ու եռանդը նուիրած է հայ երգին։

Ինքնատիպ և դաշնաւորած բազմաթիւ ժողովրդային երգերէ զատ, ունի հայկական պարեր, և ռոմանսներ, նաև՝ թարգմանուած և ռոմանթիկ երգեր՝ միջազգային մեծ երգահաններէ։

Սրուանձտեանցի երաժշտական ոճը գեղեցիկ է եւ ներդաշնակ. երաժշտական զգացումը՝ նուրբ և պարզ։ Ան յաճախ կը միացնէ հայկական մեղեդիին քնքշութիւնը եւրոպական արուեստի վսեմ շունչին։

ՎԱՐԴԱՆ ՍԱՐԳՍԵԱՆ

Ծնած՝ 1892ին Սկիւտար, երաժիշտ հօրմէ (Պիւլպիւլի Հաճի Սարգիս)։ Փայլուն ընթացաւարտ՝ Պէրպէրեան Վարժարանի (1909)։ Առեւտրական ասպարէզը մտած ու տարի մը ետք լքած է զայն՝ ծանօթանալով Կոմիտաս Վարդապետի, որուն հետ կապուած է իբր աշակերտ՝ մինչեւ 1914։ Այդ շրջանին իբր երաժշտութեան ուսուցիչ պաշտօնի կը կոչուի Պոլսոյ բոլոր միջնակարգ վարժարաններուն մէջ, ինչպէս նաեւ իբր հոգեւոր բազմաձայն երգեցողութեան մարզիչ՝ Ղալաթիոյ եւ Սկիւտարի եկեղեցիներուն եւ Հայ Աւետ. Մատրան մէջ։

Չորս տարուան արկածալից զինուորական ծառայութենէ ետք — որու ընթացքին կը լրացնէ պահեստի սպայից

ԿՈՄԻՏԱՍ ՎՐԴ. ԵՒ ԻՐ ՎԵՑ ՍԱՆԵՐԸ (1914)
Վերը՝ Վ. Սրուանձտեանց եւ Բ. Կանաչեան
Վարդապետին աջ կողմը՝ Վ. Սարգսեան, ձախէն՝ Ա. Ապանեան
Ներքեւը՝ Հ. Սեմերճեան եւ Մ. Թումաճան:

վարժարանի կրճատեալ շրջանը, իսկ վերջին երկու տարիներուն կը վարէ սպայից լրացուցիչ դասարանի քարտուղարութիւնը — հրաշքով ողջ մնացած՝ Զինադադարին, նոր թափով կը վերակազմէ իր երգչախումբերը, աշխարհիկ թէ հոգեւոր՝ կը հիմնէ Սկիւտարի «Հայ Երաժշտ. Միութիւն»ը, որուն սարքած համերգները կոչուած էին լեցնելու իր անզուգական վարպետին թողուցած մեծ պարապը։ Տարի մը ետք կը նախաձեռնէ հիմնել՝ իր հինգ դասընկերներուն հետ՝ «Կոմիտասեան Սանուց Միութիւն»ը եւ կը բեմադրէ իր եղանակաւորած «Անուշ»ը։

1920ի վախճանին կ'անցնի Փարիզ, իր ընկերներուն հետ միասին ուսանելու երաժշտապետ Լրնօռմանի առաջնորդութեան տակ։ Կը ստանձնէ Փարիզի եկեղեցւոյն բազմաձայն երգեցողութեանց ղեկավարութիւնը։ Կը կազմակերպէ զոյգ համերգներ, վերջինը՝ Փրանսայի երգիչներով։ Նիւթական անձկութիւնը կը ստիպէ զինք անցնիլ Գերմանիա, ուրկէ կը հրաւիրուի Պելճիգա եւ ուր կը հիմնէ «Արմենիա» երաժշտական ընկերութիւնը Պելճիգացի երգիչներով։ Սոյն ընկերութեան սարքած համերգները իրեն կուտան առաջին կարգի խմբավարի համբաւը՝ Պելճ երաժշտական շրջանակներու մէջ, Միեւնոյն ատեն, յայտնի բարերար Պր. Վ. Խօրասանճեանի օժանդակութեամբ կը շարունակէ իր ընդհատուած երաժշտ. ուսումը, հինգ տարի Պրիւսէլի Արքունի Երաժշտանոցին մէջ, ուր 1926ին կը ստանայ Ա. մրցանակ Contrepointի՝ եւ 1928ին՝ Բ. մրցանակ Fugueի ճիւղերուն մէջ, ուսուցչապետներ ունենալով Կլօսօն, Մառշան, եւ Իօնկըն։

Իբր երախտագէտ սան Կոմիտասի, ամէն բանէ առաջ կը նուիրուի Վարդապետին անտիպ գործերու հաւաքման ու հրատարակման աշխատանքին, Փարիզի Խնամատար Յանձնաժողովին աջակցութեամբ հետզհետէ լոյս ընծայելով 47 կտոր երգ ու խմբերգ, 7 պրակներու մէջ, ինչպէս նաեւ Պատարագը՝ լիակատար։ 1931ին կը հիմնէ Մարսէյլի «Հայ

երաժշտ. Միութիւնը՝ իր գաւառացի աշակերտներու բերնէն քաղած ու մշակած է կարեւոր թիւով հայ ժողովրդային մոթիֆներ։ Գրած է «Վիճակի Պատկեր»ը (մեներգ, խմբերգ, պար) նուագախումբի ընկերակցութեամբ, ինչպէս նաեւ «Հարսանեկան Պատկեր» մը Արմտանի մօթիֆներով։ Եկեղեցական երաժշտութենէն յիշատակելի են «Արեւագալ»ի, «Ոտնլուայ»ի եւ «Հսկում»ի արարողութիւնները մեներգի եւ խմբերգի համար գրուած՝ երգէոնի ընկերակցութեամբ։ Հրատարակած է «Հօ՛յ Նար — Երերուն Ջան» պարերգը ինչպէս նաեւ փունջ մը «Անուշ»էն։

Սարգսեան այժմ բնակութիւնը հաստատած է Պրիւքսէլ (Պելճիգա), ուր նուիրուած է հայ երաժշտութեան մշակման, ծաւալման եւ ծանօթացումին՝ օտար շրջանակներու մէջ։

Հայ ցեղն իր այս տաղանդաւոր զաւակէն կը սպասէ նորանոր երաժշտական ստեղծագործութիւններ, որոնց ատակ է Սարգսեան՝ ընդունակութեամբ եւ իր մասնագիտական խոր պատրաստութեամբ։

ԱՐԱՄ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

Կովկասահայ մեր նորագոյն տաղանդաւոր երաժիշտներէն է Ա. Խաչատուրեան։ Ծնած՝ Թիֆլիս, 1903ին։

Նախակրթութիւնն ու միջնակարգ ուսումը ստանալէ յետոյ տեղական վարժարաններու մէջ, փայլուն կերպով վերջացուց նաեւ Մոսկուայի երաժշտանոցը։ Ան կանուխէն նուիրուեցաւ ընդհանրապէս խորհրդային եւ մասնաւորապէս հայկական երաժշտութեան։ Դաշնամուրային գործերէ եւ մեծ սիմֆոնիկ ստեղծագործութիւններէ զատ, ունի հայկական ժողովրդային եղանակներ՝ յատկապէս չնչային նուագախումբերու համար։

Իր շարք մը երգերէն զատ, Սունդուկեանցի Պէպոյի երգերուն այնքան գեղեցիկ դաշնաւորումը, վերջերս նպաստեց Խաչատուրեանի անունին աւելի ժողովրդականացման։

Յ. ՄԷՀՐԱՊԵԱՆ

Հ. ՊԷՐՊԷՐԵԱՆ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ ՊԷՐՊԷՐԵԱՆ

Ծնած է Ատանա (Կիլիկիա) 1905ին։ Մինչեւ մեծ աղէտի տարին կը յաճախէ ծննդավայրին Ֆրէրներու վարժարանը։ 1915ին, ընտանիքին հետ կը տարագրուի Պաղ, ուր՝ կը կորսնցնէ ծնողքը եւ կը մնայ արաբներու մօտ։ 1917ին փախչելով կ'ապաստանի Հալէպ եւ կը տեղաւորուի Ամերիկեան որբանոց, ուր արդէն կանուխէն երեւան կը բերէ երաժշտական ընդունակութիւն։ Տարի մը յետոյ, երբ Հալէպի որբերը կը փոխադրուէին Պոլիս, Պէրպէրեան ճամբան կը փախչի իր ծննդավայրը։

Զինադադարի նախօրեակին (1918) կը մտնէ Ատանայի Արգարեան վարժարանը եւ հետագային իր ուսումը կը շարունակէ՝ Կեդրոնական։ Հոն, միանգամայն, solfege-ի մասնաւոր դասեր կ'առնէ երաժիշտ Պր. Պօղոսեանէ։

Ընտրութեամբ մը, երբ արդէն որոշուած էր, Պէրպէրեանը ղրկել Վիէննայի երաժշտանոցը. Կիլիկիոյ պարպումը

ֆրանսական ուժերէ, արգելք կ'ըլլայ այդ որոշումի իրագործման, և Պէրպէրեան կ'անցնի Իզմիր։ Իզմիրի դէպքը զինք կը նետէ Աթէնք, ուր ան 1923ին կը յաջողի մտնել տեղւոյն երաժշտանոցը։ Եօթը տարի շարունակ հետեւելով harmonieի, violonի և ձայնավարժութեան դասընթացքներուն, կ'աւարտէ 1930ին և կը ստանայ վկայական։

Աթէնքի մէջ և արուարձաններու կուտայ շարք մը համերգներ և նուագահանդէսներ և կ'արժանանայ հայ և յոյն ժողովուրդի և մամուլի գնահատութեան։ Կը հրաւիրուի Աթէնքի հայոց եկեղեցիին դպրապետութեան պաշտօնին և միանգամայն կը կոչուի Ազգ. Վարժարանի երաժիշտ-ուսուցիչ։ 1930ին կը հրաւիրուի Կիպրոսի յունական երաժշտանոցը, իբրեւ ուսուցիչ։ 1932ին կը մեկնի Լիբանան և Սուրիա. Պէյրութ, Հալէպ և Դամասկոս կուտայ համերգներ. իր եւ ուրիշ հեղինակներու գործերէն։ Պէյրութ՝ երեք տարի կը պաշտօնավարէ Հայ Ճեմարանի և Ազգ. վարժարաններու մէջ։

1935էն ի վեր հաստատուած է Հալէպ, ուր իր ճիւղը կը դասաւանդէ Մխիթարեան վարժարանի և այլ հաստատութիւններու մէջ։

Պէրպէրեան մեր երիտասարդ և խոստմնալից երաժիշտներէն է. ունի շարք մը աշխատութիւններ, որոնք իր անունը կանուխէն ծանօթացուցին հայ հասարակութեան։ Իր մեներգներէն յիշենք «Անոր» ը, «Աչերուդ փայլը», «Ոսկի երազը», «Կ'անձրեւէ տղաս» և «Սէր մը գաղտնի». իսկ խմբերգներէն՝ «Սարերի աղջիկ», «Գիւղացի գեղեցկուհին», «Տօլաւօ», «Յաւպանդուխտի», «Մարալօ» ևլն.

Ունի դաշնակի և ջութակի համար կտորներ. նաեւ երկու օբերա, «Մանուկը բնութեան հետ» և «Ռիզա», խօսք՝ Վարուժնակի։

Ց. ՄԵՀՐԱՊԵԱՆ

Ռուսահայ ծանօթ երաժիշտ Ց. Մեհրապեան արժէքաւոր մէկ անդամն է մեր հմուտ արուեստագէտներու փաղանգին։

Ան կանուխէն նուիրուեցաւ երաժշտական ասպարէզին, և կազմակերպած համերգներով, իր անունը ծանօթացուց Ռուսիոյ և մանաւանդ Կովկասի գրեթէ բոլոր քաղաքներու հասարակութեան։

1922ին անցաւ Պոլիս, ուր շարք մը երգահանդէսներ տալէ վերջ, 1923ի սկիզբը մեկնեցաւ Ամերիկա, իր տիկնոջ՝ տաղանդաւոր տաւղահար Տիկին Հելէն Մեհրապեանի հետ, որ 1912ին աւարտած է Մոսկուայի երաժշտանոցը, ապա գեղարուեստագէտի աստիճանով, և հետագային պաշտօնի կոչուած՝ նոյն երաժշտանոցին մէջ։

Ց. Մեհրապեան, Ամերիկա ժամանումէն անմիջապէս յետոյ, Նիւ-Եորքի մէջ կազմեց հայ երկսեռ երգչախումբ մը և հետզհետէ համերգներ սարքեց, նուիրուած՝ հայ երաժշտութեան, ծանօթացնելով Ամերիկացիներու՝ հայ տոհմիկ երաժշտութիւնը։ Իր երգահանդէսները, ինչպէս նաեւ Տիկին Մեհրապեանի նուագահանդէսները, ամէն անգամ և ամէն տեղ արժանացած են հայ և օտար երաժշտական քննադատներու գովասանքներուն։

Մեհրապեան ունի գեղեցիկ ստեղծագործութիւններ ժողովրդական մօթիֆներով։

Իր ինքնատիպ երգերէն խիստ ժողովրդականացած են «Խնձորի ծառի տակին», «Դու նստել ես աղբրա-ակին», «Աբեղի պէս սիրուն Զարօս» ևլն։

Մեհրապեան ներկայիս կը բնակի Ամերիկա, ուր նուիրուած է հայ երգի և երաժշտութեան տարածման և ծանօթացումին։

ՄԻՀՐԱՆ ԹՈՒՄԱՃԱՆԵԱՆ

Կոմիտաս Վարդապետի ծանօթ հինգ սաներէն մէկն է Թումաճանեան։ Նախնական ուսումը ստանալէ յետոյ Սեբաստիոյ Ամերիկեան Բարձրագոյն Վարժարանը, կ'աշակերտի Մարզուանի Անաթոլիա Գոլէճին, որուն ընթացքը կ'աւարտէ 1909ին։ Անցնելով Պոլիս, կը հետեւի տեղւոյն իրաւաբանական վարժարանին եւ ընթացաւարտ կ'ըլլայ 1914ին։

Ժամանակ մը Պոլիս, Կոմիտաս Վարդապետին կազմած երգչախումբին անդամակցելէ յետոյ, իր չորս ընկերակիցներուն հետ կը հետեւի Վարդապետին երաժշտական մասնաւոր դասընթացքին։

Զինադադարէն յետոյ կ'անցնի Եգիպտոս, և Փարաւոններու երկրին մէջ, պահ մը կը հնչեցնէ հայ երգը, կազմակերպած գեղեցիկ համերգներով։ Յետոյ շրջելով Կիլիկիա և Իզմիր, նոյնպէս կը սարքէ երգահանդէսներ, ցոյց տալով երգչախումբ ղեկավարելու բացառիկ ընդունակութիւն։ Իր համերգները ամենուրեք գնահատուած են ժողովուրդին և մամուլին կողմէ։

Թումաճանեան 1920ին կ'անցնի Փարիզ, ուր երեք տարի շարունակ կը հետեւի երաժշտական զանազան ճիւղերու և երգահանութեան արուեստին, ծանօթ մասնագէտներու մօտ։

1923ին կը մեկնի Ամերիկա, ուր կը մնայ ցարդ։ Ունի հայ երաժշտութեան մասին տեսութիւններ՝ զանազան թերթերու մէջ։ Ան իր գնահատելի բաժինը բերած է մեր երաժշտութեան և տոհմիկ երգին մշակման գործին։

ԱՐԱՑ ՊԱՐԹԵՒԵԱՆ

Ծնած է Պոլիս և ուսումը ստացած՝ Եսայեան և Կեդրոնական վարժարաններու մէջ։ 1923ին կ'անցնի Փարիզ։ Իբրև տաղանդաւոր ուսանող՝ կ'ըլլայ Նուպարեան սան, և կը յաջողի ընդունուիլ Փարիզի երաժշտանոցը, ուր կը հետեւի Հանրի Գալէի զանազան դասընթացքներուն։ Միանգամայն, Սքոլա Քանթորումի մէջ փայլուն աշակերտ մը կ'ըլլայ Վենսան տ'Էնտիի և խորապէս կ'ուսումնասիրէ շարադրութեան սկզբունքները։

ԱՐԱՑ ՊԱՐԹԵՒԵԱՆ

Պարթեւեան իր երաժշտական գործունէութեան ըսկըզբնաւորութեան շրջանին իսկ (1930), կրցաւ ուշադրութիւնը հրաւիրել հայ եւ օտար հեղինակաւոր քննադատներու։ Այդ թուականէն սկսեալ կազմակերպած նուագահանդէսներուն և համերգներուն մէջ, իբրև վարիչ և ինքնատիպ արուեստագէտ՝ ցոյց կուտայ խորունկ հմտութիւն։

Պարթեւեան ինքնիրենը կազմած է իր երաժշտութիւնը, որ մասամբ կը կրէ ֆրանսական դպրոցին ազդեցութիւնը։ Օրքէսթրասիոնն ու գրուածքը արդիական են, առանց ծայրայեղութեան։ Ինքնագիր շարադրութիւնները ներշնչուած են հայկական բնորոշ ու յաճախ միստիքական մօթիֆներէ։

Աշխատութեանց գլխաւոր առանցքը կը կազմեն հրատարակած «Նոր Երգեր»ու շարքը։

ԳՈՒՐԳԷՆ ԱԼԷՄՇԱՀ

Ծնած է Պարտիզակ, 1907ին։ Նախնական ուսումը առած է Վենետիկի Մխիթարեան Հայրերուն մօտ, նախ՝ Պոլիս, և յետոյ Վենետիկ՝ 1919ին, Մուրատ-Ռափայէլեան հաստատութեան մէջ, ուրկէ շրջանաւարտ կ'ըլլայ 1923ին։

Այնուհետեւ կ'անցնի Միլան, ուր՝ յետ մրցման, կ'ընդունուի Պետական Երաժշտանոցը և կ'աշակերտի Փիզէդդիի,

ԳՈՒՐԳԷՆ ԱԼԷՄՇԱՀ

Բոսիի, Փարիպէնի և այլ ժամանակակից երաժշտութեան ականաւոր վարպետներու։

1928ին պատասխանելով իրեն ուղղուած հարցումի մը, երաժշտանոցի Տնօրէնը կ'ըսէր. «Առանց այժմէն գատելու եւ կշռելու Ալէմշահի ամբողջական կարողութիւնը, վստահօրէն կրնամ ըսել թէ եզական են իր ներշնչման աղբիւրները և գնահատելի՝ զանոնք մշակելու և ընդլայնելու համար ցոյց տուած յատկութիւնը։ Արեւմտեան երաժշտական թեքնիքի բոլոր նրբութիւնները յարգելով և գործածելով հանդերձ, իր շարադրութիւնները դերծ կը մնան ո՛և է այլակերպումէ և կը պահեն ինքնուրոյն և հաճելի չեշտ մը»։

Տասը տարուան ընթացքին միայն չորս հոգի յաջողած են Միլանի չափազանցօրէն խստապահանջ երաժշտանոցէն ստանալ երգահանի վկայականը։ Այս չորսէն մէկն է, իբրեւ առաջին հայ աշակերտ, Գուրգէն Ալէմշահ, որ 1930ին աւարտած է երաժշտանոցի ընթացքը, ստանալով երգահանի վկայական և փրօֆէսէօրի տիտղոս։

Նոյն տարին, Սամուէլ Մուրատեան վարժարանի երաժշտութեան ուսուցչի պաշտօնին կոչումը կը փութացնէ Ալէմշահի Փարիզ հաստատումը, ուր 1931ին արդէն իսկ կազմած էր «Կիլիկիա» երգչախումբը և ասով յաճախ մասնակցած՝ օտար կազմակերպութիւններու սարքած հանդէսներուն։

Երիտասարդ երգահանի գործունէութիւնը չի սահմանափակուիր օտարներուն ծանօթացնելու մէջ՝ հայկական երաժշտութիւնը, որուն խորապէս հաւատացող և հիացող մըն է։ Վերջին տարիներու ընթացքին, ուշագրաւ և մեծապէս գնահատելի հեղինակութիւններու շարք մը զինքը կը դասեն մեր լաւագոյն երաժշտագէտներու կարգին։

Մեծ նուագախումբի յատուկ կարգ մը հեղինակութիւններէն զատ իր գործն են քանի մը ֆիլմերու երաժշտական բաժինը։ Ասոնցմէ դուրս ունի երգի և խմբերգի համար, հայ և օտար բանաստեղծութիւններու վրայ յօրինուած բազմաթիւ գործեր և հայ ժողովրդական երգերու դաշնաւորումներ։

Երիտասարդ երաժիշտը կը շարունակէ իր արգիւնաւոր գործը, ջանալով միանգամայն օտարներու համակրութիւնը հրաւիրել հայ ազգին վրայ, ծանօթացնելով և վայելել տալով անոնց՝ մեր երաժշտութեան գոհարները։

Ալէմշահ տուած է սէնֆօնիք նուագահանդէսներ, հայկական այլեւայլ գաղութներու մէջ, ցոյց տալով կազմակերպիչի և ղեկավարի յատուկ ընդունակութիւն։

ԱՐԱՐԱՆԸ ՔԱՐՈՏ Ա

Արարանը քարոտ ա,
Վայ, լէ, լէ, լէ, ջան, լօ, լօ, լօ.
Բարի տակը արօտ ա.
Իմ մայրիկ ջան, իմ քոյրիկ ջան:

Թամամ օխտը տարի ա,
Վայ, լէ, լէ, լէ, եւլն.
Գիրն աղբօրը կարօտ ա:
Իմ մայրիկ ջան, եւլն.

Բերդի բոլորն աւազ ա,
Նշխուն գիւլբէն թաւազ ա:

Կալատափը մաղել իմ,
Կողափ ձուկը աղել իմ:

Հազար ու մի դարդ ու ցաւ
Սըրտիս միջին թաղել իմ:

Սեւ ամպը սարի գլխին,
Կաքաւը քարի գըլխին.

Մէկ մէկու խօսք ինք տըւել
էն բարձըր սարի գըլխին:

ԱԼԱԳԵԱԶ ԲԱՐՁՐ ՍԱՐ Ա (*)

Ալագեազ բարձր սար ա,
Վայ լէ լէ լէ, ջան լէ լէ լէ,
Ջուրը հիւանդին դեղ ա
Վայ լէ լէ լէ, ջան լէ լէ լէ:

Մեր դըրանը խնկի ծառ, գիւլո՛ւմ ջան,
Ձե՛ր դըրանը խընկի ծառ, գիւլո՛ւմ ջան.
Խընկենին ա բերել բար, գիւլո՛ւմ ջան,
Իմ խորոտիկ պըտիկ եար, գիւլո՛ւմ ջան:

Սիրած սիրածին չեն տայ,
Վայ լէ լէ լէ, ջան լէ լէ լէ,
Էս ինչ անօրէն դեղ ա,
Վայ լէ լէ լէ, ջան լէ լէ լէ:

Մեր դըրանը խընկի ծառ, գիւլո՛ւմ ջան.
Նախշուն բլբուլ վըրէն թառ, գիւլո՛ւմ ջան.
Երթար ու գար, չորոր սար, գիւլո՛ւմ ջան.
Սիրուն եարին օրօր տար, գիւլո՛ւմ ջան:

Մեր դըրանը խընկի ծառ, գիւլո՛ւմ ջան,
Ոսկի բլբուլ վըրէն թառ, գիւլո՛ւմ ջան,
Կարմիր խնձոր անել տար, գիւլո՛ւմ ջան,
Ալուան ծաղիկ տանել տար, գիւլո՛ւմ ջան:

Գ. ՍԻՒՆԻ – Կ. Վ.

(*) Յաջորդաբար կ'երգուի «Շորորա» և «Հով, ճով, ճով լինի»:

ԱԼԱԳԵԱԶ

Ալագեազ բարձր սարին
Ձին ա կիտուել կատարին.
Սարի ճամբէք, բաց եղէ՛ք,
Էրթամ, հասնեմ իմ եարին:

Ա՜խ, իմ ճամբէն քարոտ ա,
Սիրտըս էրուած, եարոտ ա,
Ղարըբի օրն ըլնի սև,—
Աղիղ եարի կարօտ ա:

Եարիս տեսայ, լալիս էր,
Լալիս, գըլխին տալիս էր,
Ճամբայ տըւէք, ա՜յ սարեր,
Ձեռով արի՝ գալիս էր:

Յ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ Կ. Վ.

ԱԼԱԳԵԱԶ – ԷՋՄԻԱԾԻՆ

Ալագեազ բարձըր տեղ ա, եար,
Ջուրը հիւանդին դեղ ա, եար,
Ես սիրեցի, վա՜յ, խալխը տարաւ
Իմ սիրած եարը,
Թէ որ չառնեմ, վայ, ես կը մեռնեմ,
Իմ անուշ եարը:

Քեզի մեռնիմ Էջմիածին,
Աղատ անող Աստուածածին,
Նանէ՜, նանէ, նանէ, նանէ ջան:

Նանու զարդեր սարերով է,
Նանէ՜, նանէ, նանէ, նանէ ջան:

Էրւում եմ, վառւում եմ,
Չեմ գնա Նանէ ջան,
Նանէ՛, Նանէ ջան։

ԱԼԱԳԵԱԶ ՍԱՐՆ ԱՄՊԵԼ Ա

Ալագեազ սարն ամպել ա,
Վա՛յ, լէ՛, լէ՛, լէ՛, ջան լէ՛, լէ՛, լէ՛,
Աղբէր իր ձին թամբել ա։
Իմ մա՛յրիկ, ջան, իմ հո՛յրիկ, ջա՛ն:

Աղբէր իր ձին թամբել ա,
Ճարոջ դռնէն անցել ա։

Ճարոջ դռնէն անցել ա,
Ելե դաշտը՝ խաղցել ա։

Ելե դաշտը՝ խաղցել ա,
Անձրև եկե, թըրջել ա։

Անձրև եկե, թըրջել ա,
Արև զարկե՝ չորցել ա։

Արև զարկե՝ չորցել ա,
Թան կարմիր վարդ բացուել ա։

Կ. Վ.

ԱԼԱ ԿԷՕԶ ԱՉԵՐԴ
(ՈՒՇ ԼԻՆԻ ՆՈՒՇ ԼԻՆԻ)

Ալա կէօզ աչերդ, կամար յօնքերըդ,
Չեմ կարող մոռանալ տարել է սէրըդ.
Արի՛ ջան արի՛, արի՛ ջան արի՛,
Սիրտս կը վառի:

Ես, քեզի սիրեցի, որ ինձ եար լինիս,
Էրւած - վառւած սրտիս դեղ ու ճար լինիս.
Նազի՛կ ջան, սպասում եմ,
Սիրուն ջան, տանջւում եմ,
Անուշ ձայնիդ մեռնիմ:

Գ. ԵՐԻՑԵԱՆ

ԱԼ ԱՅԼՈՒՂ

Աղջիկ. Ալ այլուղըս կորաւ ձեր դուռ,
Փոթոթել է սիրտս մըրմուռ,
Բախտը ինծի գըցեց էս կուռ,
Ջա՛նօ, ջա՛ն.
Սիրուն տըղայ, տո՛ւր այլուղըս։

Տղայ. Ալ այլուղըդ ես չը գըտայ,
Երդըւում եմ՝ Աստուած վըկայ.
Ով գտել է՝ թո՛ղ բերի տայ,
Ջա՛նօ, Ջա՛ն.
Սիրուն աղջիկ, քու այլուղըդ։

Աղջիկ. Ալ այլուղըս եարս էր բաշխել
Ալ արըրշում չուրջը նաշխել,
Պատկերըս վըրէն էր քաշել.
Ջա՛նօ, ջա՛ն.
Սիրուն տըղայ տո՛ւր այլուղըս։

Տղայ. *Քու վարմունքին ի՞նչ անուն տամ,*
Ինչ է մընում որ անվերջ լամ.
Մօտըս լինի՝ բերեմ կուտամ,
Ջա՛նօ, ջա՛ն.
Սիրո՛ւն աղջիկ քու այլուղըդ:

Աղջիկ. *Ա՛խ, ի՞նչ ասեմ իմ խորթ մօրըս,*
Կամ ի՞նչ պատմեմ ազիզ հօրըս.
Խապար կուտան չէկ եղբօրըս,
Ջա՛նօ, ջա՛ն.
Տըղա՛յ, տըղա՛յ, տուր այլուղըս:

Տղայ. *Սէրըդ ինձնէն վաղ է սառել,*
Տըւած խօսքէդ ետ ես դառել,
Հաւատա՛ որ ես չեմ առել,
Ջա՛նօ, ջա՛ն.
Սիրո՛ւն աղջիկ, քու այլուղըդ:

Աղջիկ. *Մինժամէդ կուտամ, այլուղըս բեր,*
Դու ամէն օր կեր կաթի սեր,
Ինծի քարերուն մի՛ խըփեր,
Ջա՛նօ, ջա՛ն.
Անո՛ւշ տըղայ, տո՛ւր այլուղըս:

Տղայ. *Սեւուկ աղջիկ, սիպտակ հագիր,*
Ա՛ռ այլուղըդ՝ վէրքըս կապիր.
Սիրուդ գերի՝ ինձ մի՛ տանջիր,
Ջա՛նօ, ջա՛ն.
Էրուած աղջիկ, ա՛ռ այլուղըդ:

Կ. Վ.

ԱԼ ՈՒ ԱԼՈՒԱՆ

Ալ ու ալուան ես հագել,
Կարմիր լալա ես դառել,
Ինձ ասա, քեզի մատաղ,
Իշլիկդ ո՞վ է կարել:
Աղբէրջան, ջան մէտսա,
Տուն արի իմ գիւման:

Ձեռքըդ առել ես թուվանք,
Դուշմանի դէմ ես կանգնե,
Կոլորակ բարակ մէջքըդ
Փամփուշտներով ես ծածկե:
Աղբէրջան, ջան մէտսա, *եւլն.:*

Մէջքըդ կապել ես խանչար,
Տօսթին նախշած է խալ խալ,
Դօտիկդ խանչարին մատաղ,
Կերածդ կաթը հալալ:
Աղբէրջան, ջան մէտսա, *եւլն.:*

Առիւծի պէս կանգնել ես,
Պեխերըդ ոլորել ես,
Սեւ ու թուխ պեխիդ մատաղ,
Ցաղթանակը տարել ես:
Աղբէրջան, ջան մէտսա, *եւլն.:*

ԱՇՈՒՂ Գ. ՏԱԼԵԱՆ

ՄԱՐՕՅԻ ԵՐԳԸ

(ԱՆՈՒՇ)

— Ա՜խ, Անուշ Անո՜ւշ, էդ ի՞նչ ես ասում.
Բա դու չե՞ս լսում —
Էն՝ որ լանջերին խաղեր են ասում,
Ո՞ւմ հետ են խօսում.
Էն՝ որ գիշերով շըւու են փըչում.
Էն ո՞ւմ են կանչում.
Էն, որ մոլորուած, նըստած են մընում
Ո՞ւմ հետ են լինում.
Էն, որ հառաչում ու ախ են քաշում,
Էն ո՞ւմ են յիշում. . .
Ա՜խ Անո՜ւշ, Անո՜ւշ, անաստուա՛ծ Անուշ. . .
Արբեցած, Անուշ։

Ա. ՏԻԳՐԱՆԵԱՆ — Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԿԱՔԱՒԻԿ

Ա՜խ, իմ կաքաւիկ, նաշխուն, սիրունիկ,
Զալի թըփիկին միջին շըջմոլիկ.
Կը կաքաւես պար պար, ձէնիկըդ սարէ սար.
Ձէնիկիդ է էրուած կաքաւիկ քո եար։

Սև սարի գըլխին, անտառի միջին,
Սև կաղնի ներքև թառիս գիշերին,
Շափախին՝ ձէնիկըդ լեռ ու սարեր առած,
Խումբ, խումբ դուրս կը վազին հաւիկներ քընած։

Կանաչ դաշտերէն անցնիս գիշերով,
Նազ կ՚անես հըպարտ, գոռոզ քալուածքով,
Կէսօրին տաք շողին, զով առուակին քովիկ,
Շուրջըդ պար, պար անեն ձագերդ խորոտիկ։

Աշնան՝ երբ քամին թափէ տերևներ,
Վաթանըդ փոխես, չուես տաք չօլեր,
Երբ գարունի դըռներն բացուին նաշխուն, փայլուն
Թևիկներըդ բանաս սարերի գըլխուն։

Ա՜խ, իմ կաքաւիկ, խորոտիկ հաւիկ,
Վըզիկըդ նաշխուն՝ կարմիր քո տոտիկ՝
Քարի վերև թառած, սըրտիկըդ վեր ուռած,
Կարմըրուկ կըտուցով ձէն կուտաս քաջայ։

Ա. ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆ

Ա՜Խ ԻՄ ՃԱՄԲԷՆ

Ա՜խ իմ ճամբէն մոլոր գընաց,
Անտակ ծովուն դէմ առաւ.
Ա՜խ իմ սէրըս անցաւ գընաց,
Յետ գալու էլ ճար չկայ։

Դուշմանն եկաւ չուրջս պատեց,
Նաշխուն հաւքերն ի՞նչ եղան.
Դարդը եկաւ սիրտս պատեց,
Էն ալ վարդերս ի՞նչ եղան։

Խաս հաւքերը ծորում կորան,
Ագռաւ վրան կը ղըռա.
Սիրուս ալ վարդ վարդեր թառման,
Բիւլբիւլն անթև կը ողայ։

ԱԽ ԻՆՉՊԷՍ ՍԻՐՈՒՄ ԵՄ

(ԱԳԱՄ ԽԻԱ)

Ա՜խ, ինչպէս սիրում եմ ես լաւ հագնուիլ,
Անվերջ անդադար սիրոյ խօսքեր լսել,
Դու սիրիր ինձի, դու գրկիր ինձի,
Ծառայիր ինձի և այնպէս ապրիր։

Ա՜խ, տեսնում ես թէ ինչեր ես դու խօսում,
Միթէ ես քեզ համար քի՞չ եմ աշխատում.
Ամօթ է քեզի, խղճա՛ դու ինձի,
Նայիր ձեռքերուս ու քաղցած փորիս։

Ես կին եմ դու մարդ ես, դու պիտի տանջուես,
Թէկուզ որ սատկես ինձ պիտի լսես.
Հոգիդ կը հանեմ, աչքերդ էլ հետը,
Գլխիդ կը կտրեմ ահագին փետը։

Երանի մեռնեմ ու ես քեզնից պրծնեմ,
Քաղց ու տանջանքից ես ազատ կը լինեմ.
Էլ փայտ չեմ կտրիր, էլ ջուր չեմ կըրիր,
Անգգամ երեսդ էլ ես չեմ տեսնի։

Դէ՛, լաւ հերիք է որքան որ դու լացիր,
Ե՛կ գրկի՛ր, ե՛կ գրկի՛ր, ու ինձ համբուրիր.
Ես չեմ համբուրիր.— պիտի համբուրե՛ս,
Ես չեմ համբուրիր.— պիտի համբուրե՛ս։

Ա՜Խ ՀԵՌԱՑԷ՛Ք

(ԱՇՈՒՂ ՂԱՐԻՊ)

Ա՜խ, հեռացէ՛ք դուք սոխակներ,
Ջուր էք երգում գարնան սէր.
Վարդը սիրուն՝ չրացուած չորցաւ,
Մի՛ք երգեր, սիրտս ուրախ չէ։

Եօթը տարի այսպէս բոլորեց,
Սիրտս սև է, լուր չունեմ,
Եարար եարս ինձի մոռացաւ,
Սիրտս սև է, լուր չունեմ։

ԱՇՈՒՂ ՋԻՒԱՆԻ

Ա՜Խ ՄԱ՛ՐԱԼ ՋԱՆ (*)

Ա՜խ, մա՛րալ ջան,
Կոկոնըս թառամած մընաց,
Ջա՜ն, զեա՛րալ ջան,
Սիրտըս կըրակած մընաց.
Ա՜խ, մա՛րալ ջան,
Ի՞նչ անեմ իմ ապրելը,
Ջա՜ն զեա՛րալ ջան,
Իմ աչքերը թաց մընաց։

Կամար ունքերդ գոլեցիր,
Սիրել էիր՝ առեցիր.
Ինձ պէս ուժով կըտըրճին
Դու անդանակ մորթեցիր։

(*) Յաջորդաբար կ'երգուի՝ «Կուժն առայ ելայ սարը», «Սարէն ելաւ երկու մուխ» և «Գնա՛ գնա՛ ոսիդ եմ»:

Ջահիլ եմ, ընկեր չունիմ,
Ընկել եմ ես, տէր չունիմ,
Ոչ լաւ տաէք, ոչ էլ վատ,—
Հարստութեան տէր չունիմ։

Կ. Վ.

ՑՐԳ ԹԱԳՈՍԻ

(ՏԱՂԵՐԳ)

Ակռուփի մեծ կարասին բոլորտիքն են բազմեր,
Աւագ իշխանքն, մեծ պարոնայք ժողովք են հոն կազմեր.
Այո՛, այո՛, ժողովք են հոն կազմեր։

Սատանիկ է վէճն, մեծ է խնդիրն զոր հոնտեղ կը խորհին,
Թէ ի՞նչ կերպով դարման մ'ընեն հիւանդ մեր աշխարհին.
Այո՛, այո՛, հիւանդ մեր աշխարհին։

Մէկն այս կ'ըսէ, մէկն այն կ'ըսէ, կը ծագի լոյսն առտուն,
«Ինծ լսեցէք, տեարք, կը գոչէ աւանին պետն արթուն.
Այո՛, այո՛, աւանին պետն արթուն։

«Թող թագն առնու, կ'ըսէ, Բագոս և փառօք ապրի շատ,
Իսկ ցընծութիւնն ըլլայ դըշխոյ և գահն ալ յԱրտաշատ.
Այո՛, այո՛, և գահն ալ յԱրտաշատ։

Այսպէս մեզի նոր ցընծութեան արևներ կը ծագին,
Ուրախ կ'ըլլայ մեր ժամանակն և նոր՝ մեր աշխարհն հին.
Այո՛, այո՛, և նոր մեր աշխարհն հին։

Վ. Հ. ՋԱԳԸՃԵԱՆ

ԱՆՈՒՇ ՀՈՎԻԿ

(ՆՍԻԵՐԳ)

Ահա՛ ելաւ լուսինն արծաթ
Մութ ամպերու ստուերէն,
Ահա՛ նաւակն ալ գեղազարդ,
Դուրս սահեցաւ ժայռերէն.

Անո՛ւշ հովիկ, փչէ՜ յուշիկ,
Ու դէպ ինձ բեր բիւր մըր ալիք:

Նաւակին մէջ իմ գեղուհին
Փառւած՝ անփոյթ՝ լուսնի տակ,
Կը ձայնակցի իր կիթառին,
Հնչուն ձայնով մը յստակ.

Անո՛ւշ հովիկ, փչէ՜ յուշիկ,
Ու դէպ ինձ բեր երգն անուշիկ:

Ձայնով կ'երգէ սէր ու գգուանք,
Համակ յուզում ու սարսուռ,
Ու թո՛ղ, աղջի՛կ, երգն ու նուագ,
Բաց աչքերըդ ինձ դարձուր.

Անո՛ւշ հովիկ, փչէ՜ յուշիկ,
Ու դէպ ինձ բեր երգն ու աղջիկ:

Լ. ՇԱՆԹ

ԱՂԱՋՈՒՄ ԵՄ ՔԵԶ

(ԱՇՈՒՂ. ՂԱՐԻՊ)

— Աղաչում եմ քեզ հայր իմ,
Ինձ մի տա Շահ-Վալադին.
Ես չեմ գնա Շահ-Վալադին
Ես կը սպասեմ իմ Ղարիբին։
= Ջայնըդ կտրի՛ր անպիտան.

Շահ-Վալադը հարուստ է,
Թիֆլիզի մէջ մէկ հատ է,
Երջանկութեան մէջ կ՚ապրես,
Դու թագուհի կը լինես։

— Ես ինչ կ՚անեմ հարստութիւն,
Որ ես չունեմ ուրախութիւն,
Ղուրբան կ՚անեմ իմ Ղարիբին,
Անուշ ձէնին սազի թելին։
= Ջայնըդ կտրի՛ր անպիտան։

ԱՇՈՒՂ ՋԻՒԱՆԻ

ՉԱԼԻԿ - ՄԱԼԻԿ

Աղուէս պառկեր աղբի տակին, վո՜յ վո՜յ,
Աչք էր գցել չալ հաւի ձագին, վո՜յ վո՜յ,
Նստել կը տամ աչքի տակին, վո՜յ վո՜յ,
Որ մօտ չգայ նա մեր բակին, վո՜յ վո՜յ։

Ա՜յ իմ չալիկ մալիկ, չալ մալալիկ, չալ պտըտիկ.
Գըրըեստաւոր բմփլաճակաս,
Խըստասպէր բուչկան ճուտեր, վո՜յ վո՜յ,
Խըստասպէր բուչկան ճուտեր, վո՜յ վո՜յ։

Աղջի արի՛, հաւին կուտ տուր, վո՜յ վո՜յ,
Քեզ կը կերցնեմ մեղր ու կարագ, վո՜յ վո՜յ,
Համ տիրացու համ սարկաւագ, վո՜յ վո՜յ,
Աչքեր ունին ալագ մալագ, վո՜յ վո՜յ։

Ա՜յ իմ չալիկ մալիկ, չալ մալալիկ, չալ պտըտիկ,
Գըրըեստաւոր բմփլաճակաս,
Խըստասպէր բուչկան ճուտեր, վո՜յ վո՜յ,
Խըստասպէր բուչկան ճուտեր, վո՜յ վո՜յ։

ՕՐՕՐ ԱԿՆԱՅ

Աղւոր ես չունիս խալատ,
Երթամ ո՞ւր բերեմ քէ խալատ,
Օրօ՜ր,
Երթամ լուսընկան բերեմ,
Լուսուն աստղերը պէխալատ,
Օրօ՜ր։

Աղւոր ես չունիս խալատ,
Քու ամէն տեղըդ է պէխալատ,
Օրօ՜ր,
Դուն ալ խալատ բան մ՚ունիս,
Քուն չունիս, արթուն կու կենաս։
Օրօ՜ր։

Կ. Վ.

ԱՆՈՒՇԻ ՎԻՃԱԿԸ

(ԱՆՈՒՇ)

Աղջի բախտաւոր,
Երնէ՜կ քո սէրին,
Քո սարի - սովոր
Սեւ - սեւ աչերին:
Համբարձում եա՛յլա.
Եայլա ջան, եա՛յլա.
Սէր - օրեր եա՛յլա,
Եայլա ջան, եա՛յլա:

Մեռնեմ գարունքիդ,
Ծաղկած գարուն ես,
Սարի պէս մէջքիդ
Կանգնած եար ունես:
Համբարձում, եա՛յլա.
Եայլա ջան, եա՛յլա,
Սար - եարեր, եա՛յլա,
Եայլա ջան. եա՛յլա:

Ա. ՏԻԳՐԱՆԵԱՆ — Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԱՂՋԻ ԱՆԱՍՏՈՒԱԾ

(ԱՆՈՒՇ)

— Աղջի՛, անաստուա՛ծ, նըստիր վըրանում,
Ի՞նչ ես դուրս գալի, խելքամաղ անում,
Աշուղ ես չինել, չեմ հանգըստանում,
Խաղեր կապելով,
Զօլեր չափելով,
Ոչխարըս անտէր,
Ընկել եմ հանդեր:

Ամա՛ն, էրեցիր սիրտըս քո սիրով,
Ոտըս կապեցիր թել - թել մազերով,
Էլ չեմ դիմանալ կը փախցնեմ զօրով,
Ա՛յ սարի աղջիկ,
Ա՛յ սիրուն աղջիկ,
Ա՛յ դու կարմրաթուշ
Թուխամազ Անուշ:

Քո հէրն ու մէրը թէ որ ինձ չը տան,
Արիւն կը թափեմ ես գետի նըման,
Սարերը կ'ընկնեմ, կորչեմ անգիւման,
Ա՛յ սև աչքերով,
Ա՛յ ծով աչքերով,
Ունքերդ կամար
Աղջիկ, քեզ համար:

Ա. ՏԻԳՐԱՆԵԱՆ — Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԱՂՋԻԿ ԱՂՈՒՈՐ

Աղջիկ աղուոր, աղջիկ աղուոր,
Կայնել ես աղբերակին,
Հօ՛դալլօ, ջա՛ն, հօ՛դալլօ.
Ծով կը տաս արեգակին.
Դա՛լալլօ, ջան, դա՛լալլօ.
Քո շող երեսին մեռնիմ,
Հօ՛դալլօ, ջա՛ն, հօ՛դալլօ.
Ունքերիդ աղեղնակին:
Դա՛լալլօ. ջան դա՛լալօ:

Մաղերդ ոլորել ա,
Աչքերդ բոլորել ա.
Երկ՚օր ա, չէի տեսել,
Իմ սիրտը մոլորել ա։

Փոխ ես ուզում, քեզ փոխ տամ,
Ոսկի տամ, ոչ թէ հող տամ,
Թէ գըրան էլ հաւան չես,
Հոգիս հանեմ, քեզ փոխ տամ։

Կ. Վ.

ԱՂՋԻԿ ԵՄ

Աղջիկ եմ տանը գըրած,
Արծաթ եմ ոսկեջըրած.
Նայ. նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ. նայ, նայ,
Հօրն ու մօրս ի՞նչ անեմ.—
Ճակատիս էս ա գըրած։
Սիրել եմ, առնում եմ սիրատէրըս,
Առնում եմ, չի տալիս անսիրտ մէրըս։

Սիրել եմ սիրականըս,
Սիրել, մընացել տանըս.
Ա՛հ արա, երկի՛ւղ արա,
Մի՛ էրի ջիւան ջանըս։

Մի ծառ ունիմ ծիրանի,
Քամին տերեւ կը տանի.
Քա՛մի, ինձնից արի տա՛ր
Անուշ եարիս մատանի։

Մատանի ոսկեջըրած,—
Ա՛յ տըղայ, դու ինձ գըրած.
Պատճառին ի՞նչ մեղք ունի,
Ես քո սիրով չըղթայած։

«Հազար ու Մի Խաղ» Կ. Վ.

ՌՈՍՏԱՄ ԵՒ ԿԻՒԼՆԱԶ
(ՄԱՇՏԻ ԽՐԱՏ)

Ռոստամ. Աղջիկս քեզ բարով տեսայ.
Կիւլնազ. Քեզ բարի լոյս, ախ հայրի՛կ ջան։
Ռոստամ. Աղջիկս քեզ կօշիկ առնեմ.
Կիւլնազ. Առ հայրիկ ջան, ես քեզ մատաղ։
Ռոստամ. Աղջիկս քեզ վզնոց առնեմ.
Կիւլնազ. Առ հայրիկ ջան, ես քեզ մատաղ։
Ռոստամ. Աղջիկս քեզ ամուսնացնեմ.
Կիւլնազ. Ո՛չ, հայրիկ ջան, ես քեզ մատաղ։

ԱՐՄԻԿԻ ԵՐԳԸ

Աղջըկե՛րք, պար բռնեցէք՝
Արմիկի երես գովեցէք.
Ա՛յ երես, չարմա՛ղ երես,
Դու մեզ չը թողնես սեւերես։

Բարձր սարէն պաղ ջուր կուգայ՝
Արմիկի երես կը լուայ,
Ա՛յ երես, արե՛ւ երես,
Քո չափազով մեր սիրտ կերես։

Աղջըկե՛րք, պար բռնեցէք՝
Արմիկի աչեր գովեցէք.
Ա՛յ աչեր, սիրու՛ն աչեր,
Արեւի պէս փայլուն աչեր։

Աղջըկե՛րք, պար բռնեցէք՝
Արմիկի կըռներ գովեցէք.
Ա՛յ կըռներ, ուժե՛ղ կըռներ,
Դուք կը շարժէք մեծ - մեծ լեռներ։

Ղ. ԱՂԱՅԵԱՆ

ԱՂՋԿԱՅ ԳՈՎԱՍԱՆՔ

Աղջի՛, հարսնաւագ եկաւ
Վերի կալերէն.
Քեզի հինա բերին
Թղթի ծալերէն:

Աղբէր, արի՛ աղբէր,
Եզները բառնանք.
Էրթանք գարիր երկիր
Թէզօք յետ դառնանք:

Կանչէ՛, կռունկ, կանչէ
Քանի գարուն է.
Ղարիբների սիրտը
Գունդ գունդ արուն է:

Կանչէ՛, կռունկ, կանչէ,
Ձէնըդ բարակ է,
Եարիս լեզուն թազա
Մեղրած կարագ է:

Կռունկ, եղած տեղըդ
Չայիր - չիման է,
Աշխարհքը արեգակ
Ինծի դուման է:

ՈՒՌԵՆԻ

Ամէն գիշեր մեր պարտիզում
Լալկան ուռին, ծեր ուռին,
Վըշտաառաչոր լաց է լինում
Իմ ուռին:

Նա լալիս է դառնակըսկիծ
Ոճիրները աշխարհի.
Նա ողբում է սըրտի թախիծ,
Տանջանք արիւն զոհերի:

Եւ սըրբում է առաւօտուն
Կոյս արեւը նազելի՝
Իւր ծամերով հէգ ուռենու
Արցունքները բիւրեղի:

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ՏՈՒՆ ԱՐԻ՛ ՏՈՒՆ ԱՐԻ՛

Ամպել ա, ձիւն չի՛ գալի,
Մըթնել ա, տուն չի՛ գալի,
Հեռու ճանապարհի եա,
Աչքերիս քուն չի գալի:

Կանչում եմ, կանչում եմ, եա՛ր, արի՛, եա՛ր,
Մութն ընկաւ, տո՛ւն արի, անճիգա՛ր եար:

Էս գիշեր կ'անցնի դըժուար,
Կերթայ բարակ ու երկար,
Իմըս որ ա՛խ ու վախով,
Քոնըդ ի՞նչպէս կ'անցնի, եա՛ր:

ՇՈՂԵՐ ՋԱՆ (*)

Ամպել ա, ձուն չի գալի, շողե՛ր ջան,
Սարիցը տուն չի գալի․ շողե՛ր ջան,
Դո՛ւ չորորա՛, դուն օրօրա՛, շողե՛ր ջան,
Ամպի տակին ձուն կ'երեւայ․ շողե՛ր ջան:

Սիրտըս կըրակով լցուած, շողե՛ր ջան,
Աչքերիս քուն չի՛ գալի․ շողե՛ր ջան,
Դո՛ւ չորորա՛, դուն օրօրա՛, շողե՛ր ջան,
Ամպի տակին ձուն կ'երեւայ, շողե՛ր ջան:

Հուրք ա թափում վերիցը, շողե՛ր ջան:
Ես մա՛ռուայ քո սէրիցը․ շողե՛ր ջան,
Վարդավառին ինձ համար շողե՛ր ջան,
Ջուն բեր դու սարերիցը․ շողե՛ր ջան:

Սարի գլխին ձուն եկաւ, շողե՛ր ջան,
Շէկլիկ եարըս տուն եկաւ, շողե՛ր ջան,
Ուն կ'երեւայ, ձուն կ'երեւայ, շողե՛ր ջան,
Բերդի տակէն տուն կ'երեւայ․ շողե՛ր ջան:

Դեռ մուրազիս չը հասած՝ շողե՛ր ջան,
Վըրէս խորունկ քուն եկաւ․ շողե՛ր ջան,
Ուն կ'երեւայ, ձուն կ'երեւայ, շողե՛ր ջան,
Բերդի տակէն տուն կ'երեւայ․ շողե՛ր ջան:

Աշունն եկաւ սարիցը, շողե՛ր ջան,
Տերեւ թափից ծառիցը․ շողե՛ր ջան,
Շաղոն գարգով լըցուել ա,— շողե՛ր ջան,
Հեռացել ա եարիցը․ շողե՛ր ջան:

Կ. Վ.

(*) Յետոյ երգել «Շաղզը՛ր - շուղէ՛ր Եեամարս»:

ԱՄՊԻ ՏԱԿԻՑ

(ԱՆՈՒՇ)

—Ամպի տակից ջուրն է գալի,
Դօշ է տալի, փըրփըրում,
Էն ո՞ւմ եարն է նըստած լալի
Հօնգուր - հօնգուր էն սարում։

Ա՜յ պաղ ջըրեր, զուլալ ջըրեր,
Որ գալիս էք սարերից,
Գալիս՝ անցնում հանդ ու չօլեր,
Եարս էլ խմե՞ց էդ ջըրից։

Եարաբ խմեց, եարաբ հովցաւ,
Վառուած սիրտը էն եարի,
Եարաբ հովցաւ, եարաբ անցաւ
Անքուն ցաւը ջիգեարի…

—Աղջի՛, քո եարն եկաւ անցաւ,
Վառուած, տարուած քու սիրով,
Էրուած ջիգեարն եկաւ անցաւ,
Չը հովացաւ պաղ ջըրով…

Ամպի տակից ջուր է գալի,
Դօշ է տալի, փըրփըրում,
Ա՛խ, իմ աղիզ եարն է լալի
Հօնգուր-հօնգուր էն սարում։

Ա. ՏԻԳՐԱՆԵԱՆ   Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԾԱՄՈՎ ԱՂՋԻԿ

Ա՛յ աղջիկ, ծամո՛վ աղջիկ,
Վա՛յ, ծամո՛վ աղջիկ.
Շաքարից համով աղջիկ.
Ընջաւոր, փրնջաւոր, ա՛յ, ծամո՛վ աղջիկ,
Կարճըլիկ, կուրճըլիկ, վա՛յ, ծամո՛վ աղջիկ:

Ունքերըդ խելքըս տարաւ,
Վա՛յ, խելքըս տարաւ.
Թուխ աչքերըդ ծով աղջիկ:

Ընջաւոր, փրնջաւոր, ա՛յ, ծամո՛վ աղջիկ,
Կարճըլիկ, կուրճըլիկ, վա՛յ, ծամո՛վ աղջիկ:

Կապել ես քիրման գօտիկ,
Վա՛յ, քիրման գօտիկ.
Մարդ չես թողնում քեզ մօտիկ.
Տեսքով ես, համով, հոտով,
Վա՛յ, համով, հոտով.
Քան ըզծաղիկ խորոտիկ:

Գլուխդ բարձըր բռնի,
Վա՛յ, բարձըր բռնի.
Շէկ տըղէն քեզի մեռնի.
Ինծի տան արար աշխարհք,
Վա՛յ, արար աշխարհք.
Ես ուրիշին չեմ առնի:

Կ. Վ.

ԱՄՕԹ ՔԵԶ ՄՕՍԻ՛

(ԱՆՈՒՇ)

—Ամօ՜թ քեզ, Մօսի՛, թո՛ւք ու նախատինք,
Ամօ՜թ քեզ նըման գողած իգիթին,
Դեռ քու թիկունքը չէր տեսել գետին.
Ի՞նչպէս վեր ընկար դո՛ւ սարի նման,
Եկա՛ծ էր էս բանն իսկի քո գըլխին...
Դէ մեռիր էլի՛, գետինը մըտիր,
Տանը վեր ընկի՛ր, իլիկ պըտըտիր»...

Ա. ՏԻԳՐԱՆԵԱՆ — Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՄԱՇՏԻ ԽԻ ԿԻԻԼՆԱՋ

(ՄԱՇՏԻ ԻԲԱՏ)

—Ա՛յ խանում ես եկել եմ,
Քեզի ինծի կին տանելու.
Եթէ որ դու ինծի լսես,
Լաւ չորեր եմ քեզ առնելու:

—Դու մի ծերացած պառաւ,
Ջահիլ աղջիկ ի՞նչ ես անում.
Քեզ հարկաւոր է հարիւր տարեկան
Պառաւ մի այրի կին:

—Տեսնում եմ աչքիդ տակով,
Շատ ես նայում իմ երեսին,
Կը վախենամ որ այսուհետ,
Խելք չըմնայ քո այդ գլխում:

ՆԱՔԱՐԻ ԵՐԳ ՎԱՆԵՑԻՈՑ

Ա՛յ խորոտիկ, խորոտիկ,
Ա՛յ սիրունիկ կեամեալիկ:

Արև դէպաւ սարին վերէն,
Կեաքեաւն էլաւ իր բեօնէն,
Բարև արեց ծաղկըներէն,
Թռաւ, էլաւ սարին վերէն։

Ա՛յ խորոտիկ, *եւայլն։*

Երբ կեաքէւուն ձայն կը լսեմ,
Երգինն ի վեր ափւս կ՚երիշկեմ,
Կեաքեաւ կիւգեայ կըրկըրալով,
Քեարին վերէն չորչորալով։

Ա՛յ խորոտիկ, *եւայլն։*

ԱՅ ՄԱՇՏԻ

(ՄԱՇՏԻ ԽԲԱՏ)

—Ա՛յ Մաշտի ուրախացիր,
Հարսանիքդ գլուխ բերիր.
Դաֆ ու զուռնա ածեցէք,
Ուրախացէք ու պարէք։

=Ես Մաշտիս, խեղօք եմ,
Հազարներին կը ծախեմ.
Ոստամ բէգ քեզ եմ ասում
Հաստատ եղիր քո՛ խօսքում։

—Ոստամ պէկը թէ մարդ է,
Իրա խօսքին հաստատ է.
Գիւլնազ խանումը քոնն է,
Դէ չո՛ւտ փողերդ հանէ։

=Ա՛յ մաշտի մեղք եմ ես,
Մէջքս եղաւ երկու կէս.
Մատաղ լինեմ քո հարսին,
Տուր ինձ իմ մի արբասին։

ԱՅՆ ԻՆՉ ՄՈՐՄՈՔ Է

Այն ինչ մորմոք է անգին՝
Որ կ՚ամօքէ քու հոգին,
Երբ աչքերուդ պըխամակին
Մէջ կը դողամ ըղձագին։
Ազիծո՛վ...
Թախիծո՛վ...

Ու սըրտիս խոր ի՜նչ յուռթի
Ծըլարձակուեմ խորհուրդի,
Երբ աչքերէդ կը յորդի
Կարկաջուն գե՛տ մը գութի
Ազիծո՛վ...
Թախիծո՛վ...։

Հ. ՊԻՐՊԷՐԵԱՆ   Գ. ԿԱՌՎԱՐԵՆՑ

ԱՅՆ ՕՐՆ ԵՐԲ

(ԱԴԱՄ ԵՒԱ)

Այն օրն երբ Եւան և Սատանան,
Միացան՝ խեղճ Ադամն խաբեցին,
Կինն եղաւ մատնագէտ խաբերայ.
Ա՜յ, Ադամ, սարսաղ Ադամ.
Այնպէս որ սրտին մէջ նրան փափլիկ,
Դրաւ բոյն անիծուած Սատանան,
Որ նրանից այրերս՝
Լաւ, գէշ, մեծ կամ փոքրիկ,
Պիտ՝ խափուինք, յաւէտ յաւիտեան։

ՊԱՐԵՐԳ

ՏՂԱՆ— Ա՛յ սիրուն աղջիկ,
Դրախտի ծաղիկ,
Դուրս արի, տեսնեմ՝
Տեսքիդ խելառն եմ։

ԽՈՒՄԲԸ— Ջա՛ն Վարդավառ,
Վարդավառ,
Մեր դըռանը
Ոսկի ծառ։

ԱՂՋԻԿԸ— Ա՛յ խելառ տըղայ,
Վարդերի վրայ
Իսկի չե՞ս քընել,
Երազ չե՞ս տեսել։

ԽՈՒՄԲԸ— Ջա՛ն Վարդավառ,
Վարդավառ,
Ոսկի բըլբուլ
Վարդին՝ թառ։

ՏՂԱՆ— Ա՛յ երազ—աղջիկ,
Դըրախտի ծաղիկ,
Մի պաչ տուր ինձի,
Ծարաւ եմ քեզի։

ԽՈՒՄԲԸ— Ջա՛ն Վարդավառ,
Վարդավառ,
Վարդ եմ քաղել
Քեզ համար։

ԱՂՋԻԿԸ— Ա՛յ ծարաւ տըղայ,
Գիշեր լուսընկայ,
Բըլբուլի երգով
Չե՞ս հարբել գինով։

ԽՈՒՄԲԸ— Ջա՛ն Վարդավառ,
Վարդավառ,
Թէ տըղայ ես՝
Արի, տա՛ր...։

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ԱՅ ՎԱՐԴ ԼՍԻՐ

Ա՛յ վարդ լսի՛ր աղաչանքիս,
Թող տուր թփից քեզ պոկեմ,
Եւ քեզանով սիրած կոյսիս,
Զքնաղ կուրծքը զարդարեմ:

Մի՛ վախենար, նրա կրծքին՝
Չես թառամիր, քնքուշ վարդ.
Այնտեղ, նրա մատաղ կրծքին՝
Չես ունենար ո՛չ մի դարտ:

Մեղմ զեփիւռը գուրգուրալով
Կը շոյէ քեզ, քնքուշ վարդ.
Այնտեղ, նրա կրծքի տակին,
Կեանքի աղբիւր կայ առատ:

Մի՛ վախենար, նրա կրծքին՝,
Չես թառամիր, քնքուշ վարդ.
Այնտեղ, նրա փարթամ կրծքին՝
Չես ունենար ո՛չ մի դարտ:

Ա. ՍՊԵՆԴԻԱՐԵԱՆ　　　　*Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ*

ԿԱԶԲԵԳ

Անդ՝ ուր ձիւնապատ, Կազբեգը կը նիրհէր,
Իմ մեծ հայրն իւր տունն ունէր,
Էր նա խիստ վայրագ, զերդ ջէյրան արագ,
Էր վեհ հոգու տէր բայց մեռաւ վէրքէն:

Մենք ունինք առասպելներ շատ շատ,
Զանազան երգ ու պարեր շատ շատ,
Կախեթու գինին խմում ենք միշտ,
Կեանքն է մեր անդարդ, անվիշտ:

Հայրդ էր Լեզգին սպանեց անխղճաբար,
Մընացիր մենակ, տխուր անմըխիթար,
Եւ այն օրուանից մենք իրար տեսանք,
Ջերմ սրտով, սիրով մենք ընկեր դարձանք:

Մենք ունինք *եւլն.*

Եւ հօրըս մահից մեռաւ նաև մայրըս.
Մընացի մենակ տխուր անմխիթար,
Եւ այն օրուանից երբ ըզքեզ տեսայ,
Ես քեզմով միայն անվիշտ ապրեցայ:

Մենք ունինք *եւլն.*

Շատ եւ շատ սիրուն կանայք եմ սիրել,
Բայց բոլորին էլ քեզ համար եմ զոհել.
Թէ դաւաճանես կեանքիցդ կը զրկուես,
Լոկ քեզ եմ սիրում, միթէ չե՞ս տեսնում:

Մենք ունինք *եւլն.*

ԱՆՁՐԵՒԻՆ ԵԿԱՒ (*)

Անձրեւն եկաւ շաղալէն,
Ուռն ու տերև դողալէն.
Վա՜յ, լէ՛, լէ՛, լէ՛, լէ,
լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ, լէ՛.
Հըրէս եկաւ իմ ազբէր,
Ալ ձին տակին խաղալէն:
Վա՜յ, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛,
Է՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛:

Դէմ աղօթրան խաչ հանեմ,
Թըշնամու դէմ չանչ անեմ.
Ձեռըս գըցեմ վըզովը,
Մի հրեար պաչ անեմ:

Խալիչէքը փռել եմ,
Նախշուն բարձեր դըրել եմ.
Թա՛ռլան ջան, քեզ ուտելու,
Սեր, կարագ հագըրել եմ։

Տապկած հաւի ճուտ բերեմ,
Ոչխարի մածուն բերեմ.
Որ գիտենաս, անո՜ւշ ջան,
Թէ քեզ սըրտով կը սիրեմ։

Ղուշ մի՛ դառնայ թեւաւոր.
Դու խաղ կանչի՛ ձեւաւոր.
Եարա՛ր, կ՚ըլնի՞ էն օրը,
Որ գաս մեր տուն թագաւոր։

Կ. Վ.

(*) Ցեռոյ երգել «Փափուրի ջանի»:

ԱՆՑԻՐ ՍԵՒ ԱՄՊ (*)

Անցի՛ր սեւ ամպ իմ սըրտից,
Բացուի՛ր երկինք կապուտակ,
Տըխուր խաւար թուխպի մէջ՝
Ցոլա՛ գարնան արեգակ։

Թող պատառուի ցուրտ ձըմրան
Սըգոյ հանդերձ տաղտկալի,
Եւ շողշողայ բընութեան
Ոսկէ ժըպիտ ցանկալի։

Ա. ՏԷՐ ՂԵՒՈՆԴԵԱՆ   Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

(*) Ցեռոյ՝ «Սուսամ սմբուլ»:

ԳՈՂԹԱՆ ԵՐԳ

Այս գիշեր ե՛կ, ման արի՛ սրտումս, քօղերով մշուշ,
Ինձ համար դու դարել ես կարօտից այնպէս անուշ.
Ծագել ես երկընքում լուսին, աչերովդ աստղեր ես շարել,
Շրթներըդ զեփիւռի հեւքին՝ կարծես նուագ են շաղել։
Գիշերին՝ քո շունչովը՝ ցօղել ես վարդի բոյրեր,
Զոյգ կաքաւները կըրծքիդ տալիս են իրար համբոյրներ.
Սօսիներ փորձում են կրկնել քո նազանքներն երերուն,
Քո ցոլքից փրփուր են դարել՝ գետում՝ ջրերն օրօրուն.
Ո՜վ իմ հեռաւոր սիրական, ո՜վ իմ սիրական տենչալի,
Արի՛ զեփիւռի հեւքով, հովերի թեւքով արի՛,
Արի՛, սոխակի սոյլով,
Արի՛, աստղերի բոյլով,
Գողթանի գինով օծուն, գողթանի երգով արի՛։

Զ. ՊԵՐՊԵՐԵԱՆ   Գ. ԻՓԷԿԵԱՆ

ԿՆԻԿԸ

Աշխարհի ըսկիզբից այսպէս է կնիկը,
Մարդու գըլխին միշտ պատուհաս՝
Պատիժ է կնիկը։

Դրա համար էլ իմաստունները,
Երկիւղալի բաների շարքը
Դասեցին կնիկը։

Կնկայ համար հէչ չկայ բան չկայ.
Ամէն դժուար բանի՝ հնար
Կը գտնէ կնիկը։

Նրա համար հէչ փակուած դուռ չկայ,
Ամէն դռան մի բանալի
Կը գտնէ կնիկը։

Ինքն էր սատանան. օձի շապիկով,
Խեղճ Ադամին խնձորով
Խաբեց Եւա կնիկը։

Ձեռները փոքր են, արարմունքը մեծ,
Մատ մ'է ոտքը, քայլը հսկայ.
Այսպէս է կնիկը։

Մեղրից քաղցր է, թոյնից լեղի,
Այսպէս անհասկնալի է
Ամէնուն՝ կնիկը։

Ասեղից, լեզուից՝ ուրիշ զէնք չունի,
Բայց սուսերից խոր կը խոցէ՝
Կնիկը։

ՎՐՈՅՐ

ԱՉԵՐԻԴ ՄԷՋ

Աչերիդ մէջ խորհրդաւոր,
Մի ժպիտ կայ, ա՛հ ժպիտ կայ,
Որ երբեմըն շատ ըզգոյշ,
Հազար նազով ու քնքոյշ,
Մօտենում է, խաղ է անում,
Իմ հոգու հետ, թիթեռի պէս,
Փարվան անում, թեւին տալիս
Ու թռչում։

Աչերիդ մէջ մի գաղտնապահ՝
Վառ ժպիտ կայ, ա՛հ ժըպիտ կայ,
Որ՝ երբեմըն խաղ է անում
Իմ հոգու գիժ խորքերում.
Ո՛հ այդ խաղից, դու կա՛ց ըզգոյշ,
Նա խայթ ունի, նուշ ու անուշ,
Բայց թունաւոր, վտանգաւոր
Է խայթում։

Սրտի հետ էդպէս խաղալը
Վատը բան է, ա՛հ, վատ բան է.
Սիրտը ծով է փոթորկոտ,
Խորքը՝ անհուն ու անյայտ,
Կը խորտակուի, կ'անհետանայ,
Ջահիլ կեանքի ալժիլէում,
Երազների, վառ յոյսերի
Աշխարհում։

ԱՇՈՒՂ Գ. ՏԱԼԵԱՆ

ԱՉԵՐՈՒԴ ՓԱՅԼԸ

Աչերուդ փայլն որ չեղնէր,
Ադամանդն ո՞վ կը սիրէր.
Պէտք չեն ինձ վարդ նունուֆար,
Քո տեսքին եմ կարօտեր։
Սարի սրմբուլ, բաղի բըլբուլ,
Հէ՜յ, բաղի կիւլ, ճէկլիկ աղջիկ:

Ջոյգ չամամին ծոցդ որ չեղնէր,
Տաճարումն ո՞վ կ'աղօթէր.
Պէտք չեն ինձ խունկ ու կնդրուկ,
Քո բոյրին եմ կարօտեր։
Սարի սրմբուլ. բաղի բըլբուլ, եւլն.

Զ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԱՇՈՒՂԱՅԱՆ

Աչքերով խորունկ, յօնքերով կամար,
Այտերով թուխ վարդ, հասակով չինար,
Հայու խենթ աղջիկ, կ՚այրիմ քեզ համար,
Աշուղի սիրով, երգերով հազար։

Եկեր եմ տանից՝ որ եղնիկի պէս
Դըրկիս մէջ առնիս, անուշ երազես՝
Աստղ, արեւ, լուսին, դրախտ ու պարտէզ,
Կըրծքիս վրայ սեղմած՝ համբուրեմ երբ քեզ։

Առաջին գարնան ծիծեռնակին պէս,
Հայրենիքիս մէջ մեր բոյնը շինես,
Մայրական սիրով ձագեր պատրաստես,
Երգըս երգելով՝ օրրանըդ օրրես։

Ա. ՊԱՐԹԵՒԵԱՆ — Ե. ԱՐԵԱՆ

ԱՌԱՒՕՏ ԼՈՐ

Առաւօտ լոր մըտաւ արտ,
Վա՜խ,
Աչքըս առաւ եղաւ դարդ.
Վա՜խ։
Կու նմանէր քաֆուր վարդ.
Վա՜խ։
Լորի՛կ լոր, լորի՛կ լոր, լորի՛կ լոր, լորիկ.
Կանաչ լորիկ, կարմիր լորիկ,
Անուշ լորիկ, սիրուն լորիկ,
Վառ վառ լորիկ, լորիկ լորիկ։
Լոր, լո՛ր իմ, լոր, լո՛ր իմ, լոր, լո՛ր իմ, լորիկ։

Առաւօտ բարի լուսուն,
Ես մայիլ եմ քո տեսուն,
Լո՛րիկ, դու իմ սըրտի սուն։

Առաւօտ բարի լուսուն,
Քո խալան հարիւր յիսուն,
Համբ՚ի դն՚ի վեր քուրսուն։

Կ. Վ.

ՀԱՐՍՆԵՐԳ (*)

Առաւօտուն բարի լուս,
Աստուած պահէ ամենուս,
Թող դո՛ւս գայ լուս թըշնամուս։
Լո՛րիկ, լո՛րիկ, լո՛րիկ լո՛րիկ,
Թող դո՛ւս գայ լուս թըշնամուս.
Լո՛րիկ
Լո՛ր իմ, լո՛րիկ, սիրուն լո՛րիկ,
Լո՛րիկ, լո՛րիկ, լո՛ր իմ, լո՛րիկ,
Լո՛ր իմ, լո՛ւս լո՛րիկ։

Հազա՛ր էրնէկ է՛ն աւուր.—

Տավուլ-զուռնա չալեցուցին,
Կանաչ-կարմիր հագեցուցին,
Տարան ժամը կայնեցուցին,
Աւետարան կարդացուցին,
Ջեռը ձեռին տըւեցուցին·

(*) *Յետոյ երգել՝* «Արեւը կայնէ կէս օր»:

Տո՛ւյ, տո՛ւյ, տո՛ւյ,
Տո՛ւյ, տո՛ւյ, տո՛ւյ,
Տո՛ւյ, տո՛ւյ, տո՛ւյ:
Լո՛ր իմ, լո՛րիկ, սիրուն լո՛րիկ,
Լո՛րիկ, լո՛րիկ, լո՛ր իմ, լո՛րիկ,
Լո՛ր իմ, լո՛ւս լո՛րիկ:

Առաւօտուն բարի լուս,
Բարեւ տուր բարեւուս,
Բարին հասնէ արեւուս։
Լո՛րիկ, լո՛րիկ, լո՛րիկ, լո՛րիկ, *եւլն։*

Կ. Վ.

ԼՈՒՐԻԿ

Առաւօտուն թունդիր մուխ,
Կլոր աչքեր, ընքեր թուխ,
Աժիր, Մուշն ու Բուլանուխ։

Լուրիկ, ջանըմ լուրիկ
Բարխեմ լուրիկ, լուրիկ,

Առաւօտուն երկու մարդ,
Աչքս առաւ եղաւ դարդ.
Դու կումանիր քեաֆուր վարդ։

Գացինք արտեր բանինք լոր.
Աղջիկ տեսանք եալլի ձոր,
Նման էր կարմիր խնձոր։
Առաւօտ բարի լուսուն,
Քո խալան հարիւր լիսուն,
Վերցի զարկի մեր քարսուն։

ՊԱՐԵՐԳ

Առնեմ ելնեմ էն սար,
Առնեմ ելնեմ էն սար,
Առնեմ ելնեմ էն սար,
Սէր անելով իմ եար:
Կուրտիկ մ'ունիմ դեղին ա,
Իմ եարը ձեր գեղէն ա.
Ճամբայ տուէք առաջ գամ,
Սիրած եարիս բարեւ տամ։
Առնեմ ելնեմ էն սար, *եւլն.*

Վրան եմ զարկեր զարին,
Պայման եմ դրեր տարին,
Տարին թող գայ լրանայ,
Հետը բերէ իր բարին։
Առնեմ ելնեմ էն սար, *եւլն.*

Սեւ յօնքերդ կամար-կամար,
Ես կ'ապրիմ քեզի համար,
Օխտը տարի սեւ հագայ,
Քո անուշ խաթեր համար։
Առնեմ ելնեմ էն սար, *եւլն.*

Սարի տակին պաղ աղբիւր,
Արծաթէ թաս, ոսկէ ջուր,
Ես վառւում եմ քո սիրոյդ,
Մի թաս ուզեմ, երկուք տուր։
Առնեմ ելնեմ էն սար, *եւլն.*

Հէնց որ ծագի արեւը,
Քեզի զըրկեմ բարեւը,
Իմանամ որ իմ եարն ես,
Առնեմ ելլեմ վերեւը։
Առնեմ ելնեմ էն սար, *եւլն։*

ԱՆՈՒՇԻ ԵՐԳԸ (*)

(ԱՆՈՒՇ)

Ասում են՝ ուռին
Աղջիկ էր ինձ պէս,
Մընում էր եարին,
Ու չեկաւ նա տես:
    Խեղճը դողալով՝
    Անյոյս կըռացաւ,
    Դարդից չորացաւ,
    Ուռենի դարձաւ:

Ջըրերի վըրայ
Գըլուխը կախած՝
Դեռ դողում է նա,
Ու լալիս կամաց.
    Ու ամբողջ տարին
    Մի միտք է անում,
    Թէ եարը եարին
    Ո՞նց է մոռանում...

Ա. ՏԻԳՐԱՆԵԱՆ   Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

(*) Յետոյ երգել՝ «Ամպի տակից ջուր է գալի»:

ՓԱՐԵՐԳ

(ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ)

—Աստուած օգնական լինի,
Իմ սիրելի ընկեր Ասկեար,
Քեզ մի լաւ խորհուրդ տըւի,
Իմ սիրելի ընկեր Ասկեար:

    Մի լաւ հարսանիք անենք,
    Իմ սիրելի ընկեր Ասկեար,
    Ուրախ ուրախ քէֆ անենք,
    Իմ սիրելի ընկեր Ասկեար:
Ես ըլլեմ իմ Աստուածը,
Ես Քեզ մատաղ Աղա Ասկեար.
Էս Աղին շատ դրուստ է ասում,
Ես քեզ մատաղ Աղա Ասկեար:
    — Դէ շուտ արա ամուսնացիր,
    Ես քեզ մատաղ Աղա Ասկեար,
    Իմ ճանապարհս էլ դու բացիր,
    Ես քեզ մատաղ Աղա Ասկեար:
= Հէնց վաղուանից ես անպայման,
Արշին մալչի եմ դառնալու.
Եւ դրանէ դուռ եմ ընկնելու,
Ինձ համար աղջիկ ճարելու:
    — Ամենից լաւը նա է,
    Որ դու մեզի լսես Ասկեար.
    Եւ այդ հագուստներդ փոխես,
    Արշին մալչի դառնաս Ասկեար:
Փողոցները ման գալով,
Չթեր վաճառելով Ասկեար.
Քեզ համար մի լաւ գեղեցիկ,
Հարսանացու գտիր Ասկեար:
    Մենք հասանք մեր նպատակին,
    Դուք էլ հասնէք ձեր մուրազին.
    Աստուած կեանք տայ մեր Ասկեարին,
    Պատճառ եղաւ մեր բոլորին:
= Շնորհակալ եմ ես ձեզանից,
Սիւլէյմանից՝ որ խրատ տուաւ ինձ.
Բէգին՝ որ աղջիկը տուաւ ինձ,
Շնորհակալ եմ ես ձեզանից:

Սուլթան բէգն էլ ուրախացաւ,
Իւր ընտրածին արժանացաւ.
Տես հիմա մէջքը չի ցաւում,
Ջահան խալին արժանացաւ։

— Բա չէք ասի ես էլ գտայ
Իմ ընտրածիս՝ վերջը առայ,
Իմ Թէլլիիս մատաղ լինեմ,
Ես էլ նրան արժանացայ։
Խանումը ասին, սա Սուլէյմանին,
Խալան Սուլթանին, Թելլին Վելիին.
Ամէնքս հասանք մեր մուրատին,
Դուք էլ հասնէք ձեր մուրատին։

ԱՐԱԶԸ ՀԵՇՏԱՑԵԼ Ա.

Արազը հեշտացել ա,
Ի՞նչ անեմ հօրըս մօրըս,
Նաման նար, ճամբէքը կոշտացել ա։
Նար, նար, նաման նար,
Դարդերս շատացել ա նար, նար։

Ծաղիկ եմ բաղի միջին, նաման նար.
Մի հատ եմ Թաղի միջին, նար, նար,
Գիշեր ցերեկ, առանց քունի, նաման նար,
Դոլում եմ խաղի միջին, նար նար։

Անցնում եմ գետի էն կուռը,
Բաղեմ մի դաստա նուռը.
Ով իմ սիրածն ինձ չի տայ,
Կը քաշեմ խանի Թուրը։

ԱՐԱԶ

Արազն եկաւ լափին տալով,
ժէռ քարերին ափին տալով,
Ո՞րտեղ Թաղեմ ես իմ դարդը,
Ջոր գլուխս տափին տալով։

Ա՛յ իմ Արազ, ջուրըդ վարար,
Ոլորուն եարիս, եարար, տեսա՞ր.
Ես չը հասայ իմ մուրազին,
Արազ, եարար, կարօտս առա՞ր։

Ամպերն ընկան Մասիս սարին,
Կարօտ մնացի ես իմ եարին,
Աստուած սիրես, էրւած սրտիս,
Ջուղար բերես եկող տարին։

Գիշերն անքուն գիր կը գրեմ,
Արտասունքս գետ կը շինեմ.
Արա՛զ, ծէգը ջըրիդ չառած՝
Իմ սև դարդը քեզ կը բերեմ։

Կասես չողքը քարին ընկաւ,
Կրակը սրտին մէջն ընկաւ.
Կամար ունքից, Թուխ աչքից
Ցաւն իմ ջիւան ջանիս ընկաւ։

Յ. ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ԿԱՔԱՒԻ ԵՐԳԸ

Արեւ բացուեց թուխ ամպերէն,
Կաքաւ թռաւ կանանչ սարէն,
Կանանչ սարէն՝ սարի ծերէն,
Բարեւ բերաւ ծաղիկներէն.
Սիրունի՛կ, սիրունի՛կ,
Սիրունիկ, նախշուն կաքաւիկ:

Քու բուն հիւսած ծաղիկներով—
Շուշան, նարգիզ, նունուֆարով.
Քու տեղ լցուած ցօղ ու շաղով,
Քընես - կելնես երգ ու տաղով.
Սիրունի՛կ, սիրունի՛կ,
Սիրունիկ, նախշուն կաքաւիկ:

Քու թեւ փափուկ ու խատուտիկ,
Պըզտի կըտուց, կարմիր տոտիկ,
Կարմիր - կարմիր տոտիկներով,
Կը չօրօրաս ճուտիկներով.
Սիրունի՛կ, սիրունի՛կ,
Սիրունիկ, նախշուն կաքաւիկ:

Երբ կը կայնես մամռոտ քարին,
Սաղմոս կասես ծաղիկներին,—
Սարեր - ձորեր զըւարթ կանես,
Դարդի ծովէն սիրտ կը հանես.
Սիրունի՛կ, սիրունի՛կ,
Սիրունիկ, նախշուն կաքաւիկ:

Կ. Պ. Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՕՅԻ ՊԸՃԻՆԿՕ...

Արեւ ըլլամ՝ ծաթի՛մ, մարի՛մ վերեւէդ,
Կամ չուք ըլլամ՝ աճի՛մ, հասնի՛մ քեզի հետ.
Դէմքիդ մատաղ, ա՛յ սիրական,
Քայլերուդ հետ՝ ծաղկէ ծաղիկ վէտ ի վէտ:
Օ՛յ օ՛յ օ՛յ օ՛յ պըճինկօ՛ պըճինկօ՛ պըճինկօ՛,
Օ՛յ օ՛յ օ՛յ օ՛յ պըճինկօ՛ պըճինկօ՛ պըճինկօ՛:

Ես արեգակ՝ դու ես ծովը ծիրանի,
Հալինք լիցուինք իրար ծոցը հոլանի.
Հովը երգէ, ա՛յ սիրական,
Հազար լարով, հազար անգամ երանի:
Օ՛յ օ՛յ օ՛յ օ՛յ պըճինկօ՛ պըճինկօ՛ պըճինկօ՛,
Օ՛յ օ՛յ օ՛յ օ՛յ պըճինկօ՛ պըճինկօ՛ պըճինկօ՛:

Սրո՞ւ թէ էգ, երկու թէ մէկ մարմին ենք,
Արու եւ էգ ձագ ու թոռներ կը հանենք,
Մեր աշխարհի չորս ծագերուն,
Արեւի պէս բոց ու բարի կը շարենք:
Օ՛յ օ՛յ օ՛յ օ՛յ պըճինկօ՛ պըճինկօ՛ պըճինկօ՛
Օ՛յ օ՛յ օ՛յ օ՛յ պըճինկօ՛ պըճինկօ՛ պըճինկօ՛:

Տ. ՉԻԹՈՒՆԻ

ՊԱՐԵՐԳ (*)

Արեւը կայնեկ կէս օր,
Դէ՛ հէյլէ, դէ՛ հէյլէ, եարօ ջա՛ն.
Իմ եարը կուգայ էս օր.
Իմ եարի քալած ճամբէն,
Կը ցանեմ կարմիր մասուր:

Կ. Պ.

(*) *Նախ՝* «Առաւօտուն բարի լոյս»:

ԱՐԵՒԸ ՆՈՐ ԾԱԳԵԼ Ա

(ՈՒՇ ԼԻՆԻ ՆՈՒՇ ԼԻՆԻ)

Արեւը նոր ծագել ա,
Սիրած եարըս եկել ա.
Շաղով շուղով իմ եարը,
Բոյով սոյով իմ եարը:

Աչերիդ եմ կարօտել,
Դըժխի նման եմ դառել:
Շաղով շուղով իմ եարը,
Բոյով սոյով իմ եարը:

Հազար տղայ ինձ ուզի,
Ես ուրիշին չեմ ուզի:
Շաղով շուղով իմ եարը,
Բոյով սոյով իմ եարը:

Դարդը սրտից չէի հանում,
Քեզ մտահան չէի անում:
Շաղով շուղով իմ եարը,
Բոյով սոյով իմ եարը:

Գ. ԵՐԻՑԵԱՆ

ԼՈՐԻԿ

Արեւի շողին տակ տեսայ,
Կանաչ կարմիր էր հագէր.
Ջէն տուի ես, ձէնս չառաւ,
Ա՜խ, լորիկ էր, լորիկ էր,
Թըռաւ գնաց, լորիկ էր:

Լէ, լէ, լէ, լէ սիրուն լորիկ,
Իմ սրտի լորիկ.
Լէ, լէ, լէ, լէ սիրուն լորիկ,
Անուշ իմ լորիկ:

Լորիկն իմ՝ չէն էր գնաց,
Թողուց սիրտս մութ աւեր,
Որի համար սքուած, կապուած.
Ա՜խ, լորիկ էր, լորիկ էր,
Թռաւ գնաց լորիկ էր:
Լէ, լէ, լէ, լէ սիրուն լորիկ,
Իմ սրտի լորիկ.
Լէ, լէ, լէ, լէ սիրուն լորիկ,
Անուշ իմ լորիկ:

Ա. ՄԱՅԻԼԵԱՆ

ԱՐԵՒԻՆ ԱՅՏԷՆ

Արեւն այտէն՝
Ծիրան ցայտով,
Լուսիկ-լուսիկ ճըրագեց,
Կաքաւ ոտէն՝
Արտի հոտով,
Յուսիկ-յուսիկ կըրակեց:

Ծառի քովէն՝
Սառի հովով,
«Զիս կը սիրե՞ս» շըշընչեց,
Հոգիս խորէն՝
Սիրու ձորով,
«Զիս կը սիրե՞ս» մըրմընջեց:

Աչքի տակէն՝
Սըրտիս ակով
Ծաղիկ-ծաղիկ ծիծաղեց,
Գոգի մարգէն՝
Բարակ զարկով,
Գաղիկ-գաղիկ շաղ մաղեց:

Այրէր քուրէն՝
Սառն աղբուրով,
Տորմ-տորմ սէր փրնջեց,
Հուր աչերէն՝
Լուռ պաչերով,
Որմն-որմն ներշնչեց:

Կ. Վ.

ՋԱՐՕ

Արեւի պէս սիրուն Ջարօս,
Շափաղ տալով տուն կուգաս,
Էն մութ ձորին, իմ խոր սրտին
Շողեր տալով տուն կուգաս:

Ալ-վարդերը՝ կրծքիդ վըրան,
Լոյս ցօղերը՝ ոտներիդ,
Հովերի հետ ծամերդ թռա՛ն,
Մեռնիմ թուխ-թուխ ունքերիդ:

Արի՛ մօտըս, եղնիկ աղջի՛կ,
Արար-աշխարհ թող արի.
Նազ մի՛ անի, նազիդ մատաղ,
Անտէր սըրտէն վազն արի:

Հ. ՄԵՀՐԱՊԵԱՆ　　　Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ԱՐԵՒՆ ԻՋԱՒ

Արեւն իջաւ սարի գլխուն,
Դար ու դաշտում լոյս չը կայ.
Հաւք ու թռչունք մտան խոր քուն.—
Ա՜խ, ինձ համար քուն չը կայ:
　　Լուսնակն ընկաւ երթըկից ներս,
　　Կշիռքն ելաւ երկնքում,
　　Զով հովերն էլ մըթնշողէս
　　Աստղերու հետ են զըրցում:
—Սիրուն աստղե՜ր, անուշ հովեր,
Եարըս ո՞ւր ա՛ էս գիշեր,
Պարզ երկնքի նշխուն աչե՜ր,
Եարիս տեսա՞ք էս գիշեր...:

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ԳՈՒԹԱՆԻ ԵՐԳԸ

Արի, գութան, վարի՛, գութան,
Օրն եկել է, ճաշ դառել,
Առը չուռ տուր, խոփիդ ղուրբան,
Օրհնեալ է Աստուած, հօրօվէ՜լ:

Քաշի՛ր, եզը, ուսիդ մատաղ,
Քաշի՛ր՝ քաշենք վար անենք.
Ճիպտին արա, քըշի՛ր, հօտաղ,
Մեր սեւ օրին ճար անենք:

Պարտքատէրը գանգատ գընաց,
Բեօխվէն կը գայ, կը ծեծի.
Տէրտէրն օրհնեց, անմարձ մընաց,
Կը բարկանայ, կ'անիծի:

Էն օրն եկան Թօվջի արին,
Հարկ են ուզում տէրութեան.
Ի՞նչ տամ կօռին ու բէգեարին...
Վարի՛, վարի՛, իմ գութան։

Ձեռըս պակաս, ոյժըս հատած,
Հազար ու մի ցաւի տէր,
Ինձ են նայում մերկ ու սոված
Մի տունը լիքը մանուկներ։

Արի՛, գութան, վարի՛, գութան,
Օրն եկել է, ճաշ դառել.
Առը շուռ տուր, խոփիդ ղուրբան,
Օրհնեալ է Աստուած, հօրօվէ՜լ։

Ա. ՏԻԳՐԱՆԵԱՆ — Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԱՐԻ ՀԱՄՕՎ

Արի համօվ զուլուզ արա,
Խալխի նօքար Սայեաթ-Նօվա,
Ամէն մարդ չի կարա չահի,
Շախօվ, շուղքօվ Սայեաթ-Նօվա։

Ով քեզի լեզի պարգեւի,
Դուն տուր շաքար Սայեաթ-Նօվա,
Ղաստ արա շուշէդ չը ճարթին,
Շախօվ, շուղքօվ Սայեաթ-Նօվա։

Ամէն մարդի մարդ չիմ ասում,
Ամէն եարի եար չիմ ասում,
Շահօվ, չանօվ եար իմ ուզում,
Փառք ու պատւօվ Սայեաթ-Նօվա։

ՍԱՅԵԱԹ-ՆՕՎԱ

ԱՐԻ ՄԱՆԱՆ

Արի՛ Մանան, արի՛, գընանք մեր տունը,
Գիշեր ցերեկ զուրկ է աչքերէս քունը,
Ջա՛ն, ջա՛ն, Մանան ջա՛ն...։

Մանան սարէն կուգայ, շալկինը ծախէ.
Ոսկեթել մազերը թիկունքէն կախ է։

Երկինքը ամպել է, գետինը թաց է.
Մանանի թիկունքը կիւէն հետ բաց է։

Ռ. ՄԵԼԻՔԵԱՆ

ԱՐԾՈՒԻ ԲԱՐՁՐ

Արծթի բարձր գեղ ա,
Լօլօլօ, լօլօլօ, լօլօլօ ջան,

Ջուրը հիւանդի դեղ ա,
Լօլօլօ, լօլօլօ, լօլօլօ ջան,

Էս ինչ անօրէն դեղ ա՛,
Լօլօլօ, լօլօլօ, լօլօլօ ջան,

Սիրածն սիրածին չեն տա,
Լօլօլօ, լօլօլօ, լօլօլօ ջան,

Ուզածն ուզածին չեն տա,
Լօլօլօ, լօլօլօ, լօլօլօ ջան,

Չորս կողմը կարմիր եղայ,
Լօլօլօ, լօլօլօ, լօլօլօ ջան։

ԱՐՕՐ

Արօր, արօր, խիզախ արօր,
Հերկէ խորշեր, խոր ակօսներ, արօր.
Խոփիդ մատաղ դաշտ ու ծոր ծոր,
Ցանէ, կամնէ խոր ակօսներ, արօր։

Արօր, արօր, խիզախ արօր,
Փշրէ, պատռէ խոպան դաշտեր, արօր,
Մաճ բռնողին երազն արօր,
Վաստակն խոփին լից ամբարներ, արօր։

Կ. Վ.

ԱՐՕՐ ԵՒ ՏԱՏՐԱԿ

Արօրն ասաց տատրակ հաւքուն.
«Ինչի՞ կուլաս կուց կուց արիւն,
Երթայ լըցուի բարակ առուն»։

Տատրակն ասաց արօր հաւքուն.
«Գընաց գարուն, եկաւ աշուն,
Կըտրաւ ջըրիկ աղբիւըններուն,
Կըտրաւ խոտիկ ծաղիկներուն,
Կըտրաւ ձէնիկ կաքաւներուն.
Էնքան պիտի լամ երերուն,
Արիւն կաթէ իմ աչքերուն,—
Ես ի՞նչ անեմ իմ ձագերուն»։

Ասաց. «Դու մի՛ լա էս աշուն,
Չէ՞ վաղ կուգայ բարի գարուն,

Լոյս կը բացուի վէր աշխարհուն,
Դուռ կը բացուի խեղճիկներուն,
Ես քեզ կ'առնեմ իմ թեւքերուն,
Թըռնեմ բանձրիկ վեր ծառերուն,
Տանիմ, հանեմ վեր սարերուն,
Բուն կը դնեմ մէջ քարերուն,
Տուն կը շինեմ մէջ գեաղերուն,
Երթիկ բանամ դէմ հով քամուն,
Թոնիր թաղեմ մէջ այրերուն,
Ծուխ կը հանեմ հետ ամպերուն, —
Մեր ցաւ կուտանք հարաւ քամուն»։

Գնաց աշուն, եկաւ գարուն,
Կաթէր ջըրիկ աղբիւըններուն,
Երթար, լըցուէր բարակ առուն.
Ագըրանց—արիւն մէջ քարերուն,
Դեղին սուսուն վէր սարերուն,
Փունջ մանուշակ մէջ ձորերուն,
Կանաչ կարմիր գոյն գոյն ծաղկունք,
Դաշտերն ամէն էրանք, թըռչունք.
Ձէնիկ կուգայ գառնիկ, մաքուն,—
Մեր ապրելիք վէր Աստըծուն։

Կ. Վ.

ՀԱՅՈՑ ԳԻՆԻ

Բաժակներ առնունք, եղբարք,
Լիք լիք բաժակներ գինով.
Կարմիր ու ճերմակ գինին
Մեզ լինի անուշ համով:

Բերներիս տանենք անվախ.
Չէ դա խառնած կամ խարդախ.
Նեկտար է և ոչ գինի.
Խմենք՝ մեզ անուշ լինի։

Արաքսայ ջրով ցօղած,
Հայոց արևով հասած.
Հայոց այգին է քաղել,
Քնքուշ ձեռներով քամել:

Այս բերքն է Հայոց երկրին,
Հայաստան տնկած Նոյէն.
Անմահ, երկնային գինին,
Նա խմեց երբ իջաւ սարէն։

Այս անուշ գինին խմողը,
Սրտէն թող հանէ ոխը.
Ամէնքս ալ ըսենք ամէն,
Որ շատ տայ մեզ ամ էն։

ԳԱՄԱՌ - ՔԱԹԻՊԱ

ԲԱՐՁՐ ՍԱՐԵՐ

(ԱՆՈՒՇ)

«Բարձրը սարեր, ա՛յ սարե՛ր,
Ձէն եմ տալի վա՛յ, սարե՛ր,
Դուք էլ ինձ հետ ձէն տըւէք,
Իմ դարդերի թայ սարե՛ր։

Ա՜խ կը մեռնեմ՝ ամա նա
Վա՜յ թէ յանկարծ իմանայ,
Ես ազատւեմ էս ցաւից,
Աչքը լալով նա մընայ։

Որս եմ՝ բութէս ձեզ արած,
Ձեր ձորերին, ձեզ արած,
Կ'ուզեմ կորչեմ անգիւման,
Էս աշխարհքից բէզարած։

Կորչեմ բէզար դատարկուն,
Քար սարէ - սար դատարկուն,
Մեռնեմ պըրծնեմ էս օրից,
Բալքի առնեմ դադար - քուն։

Ա. ՏԻԳՐԱՆԵԱՆ — Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԳԵՂՋԿԱԿԱՆ

Բարձըր սարերու հովիկ
Վար իջել դըռնակն է ծեծել,
Նորուկ ջահելուկ հարսնուկ
Գիտցել թէ զարիրն է դարձել:

Զարթնել է ու վեր ելել,
Ու իջել դըռնակն է բացել.
Տեսել, որ իր մարդը չէ՝
Մոլորել ու ետ է դարձել։

Կեսրակը հարցմունք արել
«Հարսնուկ քո սրտե՞ղդ է ցաւել»։

—Մայրի՛կ, քո որդուդ սիրուն,
Իմ ամէն տեղիկս է ցաւել.—

«Մի՛ լար, մի՛ տըխրիր, հա՛րսնուկ.
Գիր կ'անեմ, որդիս կը բերեմ»:

—Գիր անես, որդիդ բերես՝
Աստըծու լուսուն տիրանաս.
Գիր չանես, ու չը բերես՝
Կ'անիծեմ ու քար կը դառնաս:

Կ. Վ.

ԳԱՐՈՒՆ ԱՌՏՈՒ

Բարի լուսի զանգեր զարկին
Զընգզընգալէն անո՜ւշ, անո՜ւշ,
Լոյսը բացւեց մեր աշխարհքին
Շողշողալէն անո՜ւշ անո՜ւշ:

Առուն հովտէն փախուստ կուտայ
Գըլգըլալէն անո՜ւշ, անո՜ւշ,
Բարակ հովը կը շընկշընկայ
Զըլզըլալէն անո՜ւշ, անո՜ւշ:

Երամ կապած կռունկն եկաւ
Կըռկըռալէն անո՜ւշ, անո՜ւշ,
Տաղ կը կարդայ քարէն կաքաւ
Կղկըղալէն անո՜ւշ, անո՜ւշ:

Հարսն ու աղջիկ հանդերն եկան,
Շորորալէն անո՜ւշ, անո՜ւշ.
Ծաղկանց բուրմունքն՝ անմահական
Սըլսըլալէն անո՜ւշ, անո՜ւշ:

Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՆՒԱ ՋԱՆ

Բերդիցը դուրս եկայ, Ալագեազ տեսայ,
Խանում Նւա ջան,
Արարատը աչերիս դուման է դառել,
Դուն կեցիր բարով, ես կ'երթամ լալով,
Լալով ողբալով, գոչ ու բարխանով,
Սարեր ման գալով, ճեգնից գասուելով
Ընկեր ճարելով, գոչ ու բարխանով:

Մէկդին ոչխարք կ'արածին մէկդին գառները,
Խանում Նւա ջան:

Կանաչել են ծաղիկները, ծառերը,
Դուն կեցիր բարով, ես կ'երթամ լալով,
Լալով ողբալով, գոչ ու բարխանով,
Ընկեր ճարելով, ընկեր ճարելով,
Ձէներ ածելով, Աստուած կանչելով:

Ափի գնանք քու ման գալած արտերը,
Խանում Նւա ջան,

Քեզի տեսայ նորացան իմ դարդերը.
Դուն կեցիր բարով ևայլն:

Ես Ալէկն եմ, Զամբըխեցի մի չիւան,
Խանում Նւա ջան,

Բռնին տարան էստուց չուրի Երեւան,
Ձեռ ու ոտըս կապին բերդը դըրեցին,
Դուն կեցիր բարով ևայլն:

Չուխա չալվար, լալով տունը բերեցին.
Օրն՛ը, գարնան օրեր, դուք ո՞ւր էք կորեր:

Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

ԿԻՆՆ ՈՒ ԳԻՆԻՆ

Բերէք շիշը, բերէ՛ք բաժակ,
Քանի խումի կայ ախորժակ.
Որսանք րոպէն զուր բերկրանքի,
Յաւերժական չէ մարդուս կեանք:

Առանց գինու փուճ է կեանքը,
Սէրն է տալիս մեզ բերկրանքը.
Սէր ու գինի, գինի ու սէր —
Այս է կեանքի մեր սփոփանքը:

Խըմենք գինի կընոջ կենաց.
Կընկան սիրենք անկեղծ սըրտանց.
Տըղամարդուն գինի ու կին՝
Ընծայել են Նոյ և Աստուած:

Լըցրէ՛ք բաժակ փըրփըրադէզ,
Բերէ՛ք իմ մօտ կին բոցակէզ.
Խմեմ, գրկեմ ու համբուրեմ —
Այնուհետև իմ կեանքը ձեզ:

ԳԱՄԱՌ - ՔԱԹԻՊԱ

ԲԶԷԶԻ ԵՐԳԸ

Բզէզը թըռաւ ծառերուն հոյ, հոյ, հոյ.
Թըռաւ եկաւ սարերուն հոյ, հոյ, հոյ.
Բամպակն աղնեց արջերուն հոյ, հոյ, հոյ,
Բուրդը գըղեց գայլերուն հոյ, հոյ, հոյ,
Հաստ ու բարակ մանեցի հոյ, հոյ, հոյ,
Տարայ շուկան ծախեցի հոյ, հոյ, հոյ:

Հ. ՊԵՐՊԵՐԵԱՆ — Տ. ՁԻԹՈՒՆԻ

ԹՈՒԽԻ ԱՂՋԻԿ

(ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ)

Բէկի աղջիկը երեւի սա է.
Մեր Ասկեարը շատ է հաւան կացել,
Ձեզ եմ ասում, շատ է հաւան կացել:

Ո՞վ կ'իմանար՝ որ Սուլթան բէկը
Այսպէս նախշուն աղջիկ է ունեցել,
Ձեզ եմ ասում, աղջիկ է ունեցել:

Ափսո՜ս, ա՜խ ափսո՜ս՝ որ չէի տեսել,
Լաւ թիքեա է, ձեռքիցըս ընկել,
Ձեզ եմ ասում, ձեռքիցըս ընկել:

ՏԱՂ ՍԻՐՈՅ

Բըլբուլի հիդ լաց իս էլի,
Վարթի նըման բաց իս էլի,
Վարթաջըրով թաց իս էլի,—
Թաց իս էլի.
Չ'կայ քիզի նըման, չ'կայ քիզի նման.
Քիզ նման, քիզ նման.—
Դու՛ն իս աննման:

Սիրունութինդ էլաւ արբար.
Մազիր ունիս՝ սիմ ու շարբար.
Քի սազ գու քայ ղուշլու ղարբար.—
Ղուշլու ղարբար,
Չ'կայ քիզի նման, չ'կայ քիզի նման.
Քիզ նման, քիզ նման.
Դո՛ւն իս աննման:

Երեսըդ է շամս ու ղամար.
Ջանըս դուս գու քայ քիդ համար։
Մէջքիդ ունիս օսկէ քամար.—
Օսկէ քամար.
Չ'կայ քիզի նման, չ'կայ քիզի նման ևլն.

Հաքիդ դարըն՝ ալ իս արի.
Բըլբուլի հիդ լալ իս արի,
Բարկ երեսիդ խալ իս արի,—
Խալ իս արի,
Չ'կայ քիզի նման, չ'կայ քիզի նման ևլն.

Դարդըս ասիմ՝ կուլան սարիր.
Էս ի՞նչ բան էր, վուր գուն արիր.—
Սայիաթ—Նովուն՝ ջունուն արիր.—
Ջունուն արիր.
Չ'կայ քիզի նման, չ'կայ քիզի նման ևլն.

ՍԱՅԵԱԹ—ՆՈՎԱ

ԴՈՒ ԴՈՒԼ

Բըկիդ մարջան ես կապել,
Զօլի ջէյրան ես դառել,
Սիրուն աղջիկ, ալւան աղջիկ, նազ աղջիկ:
Նազըս քիզի արժան չի,
Խօսքիրըդ առամանչի,
Սիրուն տըղայ, թառլան տըղայ, ջան տըղայ.
Գնա՛ ման արի, արի,
Գնա՛ ման արի, արի,
Եօննա քաղի. եան արի,
Եօննա քաղի. եան արի,
Ա՜խ դու լու դուլ, դուլ դու դուլ,
Նարի դու դուլ, դուլ դու դուլ...:

Ա. ՊԱՏՄԱԳՐԵԱՆ

ԲԼԲՈՒԼ ԹՌԱՒ

Բլբուլ թռաւ բարձր քեարին,
Կուլայ դարտեր իւր ջիկեարին.
Ես լէ խուրպան կեղնիմ եարին,
Ծիկ մօտ տարէք Սիփնա սարին:

Սիփնա սարեր դուման մըժ է,
Ես ա՛խ կենիմ, էն լէ փօշ է,
Կասեն արախ դարտին խօշ է.
Էլպէթ Կիկօն ճիպ սէրխօշ է:

Ես սէրխօշ եմ սիրով էնջախ,
Քօռ ու ջահնամ աղնի արախ.
Եար դու մարես իմ տան օջախ,
Քեզնից մահրում կէնիմ ա՛խ-վա՛խ:

Եարս որ կեղնէր կիջնէր պախչան.
Կու սառսառար ճայտին մախճան.
Աչից չոլքէն խոլցաւ իմ ջան,
Իմ հեչա կեանքի տուեց վախճան:

Կիզեամ, եար նստեր վըր խօտին,
Շուշան ցանեմ ես քեօ ոտին.
Թե քս կեղնին մէջիցըդ գօտին
Տէրտէ կօխնա մեր Ներօտին:

ԾԱՂԻԿՆԵՐՈՒՆ ՄԷՋ

Բոյր մը ցնցող կը ծաւալի՝
Ծաղիկներու կուրծքին վրայ.
Հմայք մը լուռ կը թրթռայ,
Թերթիկներուն մէջ հեշտալի։

Կը հպանցեն մեղմիկ հովեր,
Արդ դիւթանքէ ծաղիկներուն.
Վէտվէտումներ թրթռուն՝
Կը տատանին հոն տարուբեր։

Հովերն անուշ մեղմատատան,
Կը տարտղնեն բոյրերն հեռուն՝
Գինովցընող չափրակներուն,
Որոնք սիրտին հուրքեր կուտան։

Երանքներ նուրբ չինուած հուրէ,
Ակնարկներուն ցոլք մը կ'առթեն.
Ծաղիկներու թովանքն արդէն՝
Հոգին անգամ կը պարուրէ։

Մինչ հմայքներ դեռ կը տեւեն՝
Տերեւներու թոյլ խարշափին.
Թերթիկ թերթիկ կը կը թափթըփին՝
Իրենց լանջքը սարսող հովէն։

Յ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ԳԱՆԳԱՏՒՈՒՄ ԵՆ
(ԱԴԱՄ ԽԻԱ)

Գանգատւում են միշտ մարդիկ թէ անբախտ
Կեանք են վարում, աշխարհը չէ դըրախտ։
Ինք թող խմէ միշտ բաժակ դառնութեան,
Ու հայթայթէ կեանք ուրախ իր կնկան։
Ո՞վ կամենում է ապրել երջանիկ,
Բոլոր հոգւով թող սիրէ իւր կնիկ։

ՔԱՂՀԱՆ (*)

Գարնան գութան հանեցի,
Եար, նայ, նայ, նա՛յ, նայ, նա՛յ,
Արտը բամբակ ցանեցի,
Սոնա եար, նա՛յ, նայ, նա՛յ.
Ամառն եկաւ, քաղն ելաւ,
Եար, նայ, նայ, նա՛յ, նայ, նա՛յ,
Բաղհանուոր ճարեցի։
Սոնա եար, նա՛յ, նայ, նա՛յ։

Բաղհան կ'անեմ հօ՝ բարով,
Դօլմա կ'եփեմ բիբարով.
Աշնան անի լաւ օրեր,
Բամբակ քաղեմ նուբարով։

Բեռնեմ սայլը սար հանեմ,
Սար հանեմ ու տուն տանեմ.
Դուրս գայ չարի չար աչքը;
Զրմեռ հանգիստ օր կանեմ։

Կ. Վ.

(*) Նախ՝ «Զիգ տու Եաշի»:

ԳԱՐՈՒՆ Ա (*)

Գարուն ա, ձուն ա արել,
Վա՛յ, լէ, լէ, վա՛յ, լէ, լէ՛,
Վա՛յ, լէ, լէ, լէ, լէ՛.
Իմ եարն ինձնից ա սառել։
Ա՛խ, չոճա՛յ, վա՛խ, ա՛յ եար,
Ջար մարդու լեզուն:

Բամին փըչում ա պաղ պաղ,
Լերդ ու թոքս անում ա դաղ։
Եա՛ր, ինձ բէմուրադ արիր,
Սէրըդ ինձնից զատ արիր։

Կ. Վ.

ԳԱՐՈՒՆՆ ԵԿԱՒ

Գարունն եկաւ կարմիր, կանանչ,
Արշալոյսով ծիածանով,
Գարունն հագած շողք ու ճաճանչ,
Գոգն ու ծոցը ծաղիկներով։

Ականջներուն թըռչուններու,
Հազար բոյրով սէ՛ր շըշընչաց,
Աշխա՛րհ թընդաց երգով սիրու,
Աւա՛ղ գարունն ինձ բան չ'ասաց։

Սիրտըս բացի գարնան դիմաց,
Շողքի, ոսկի, անո՛ւշ գարնան,
Աւա՛ղ, աւա՛ղ, սիրտս դատարկ մնաց,
Մոռացկանի ափի նըման։

Ա. ՊԱՐԹԵՒԵԱՆ   Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ.

(*) Յաջորդաբար երգել՝ «Խումար պառկե» և «Իմ չինարի»:

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՓԱՐԵՐԳ (*)

Գացէ՛ք, տեսէ՛ք, ո՞վ է կերել զէծ.
— Գացինք, տեսանք, գէլն է կերել զէծ։
Գէլն ըզիծուն
Էծն ըզտիկուն,
Տիկ զարեուն,
Հալալէ կրմօ՛, ճալալէ,
Հալալէ ջանօ՛, ճալալէ:
Է՛ս ի՞նչ քեաֆուր գարու հասանք, հալալէ,
Է՛ս ի՞նչ խաբար կրմօ ստացանք, հալալէ։
Դէ՛հ, գնա՛, կիգամ, դէ՛հ գնա՛, կիգամ շուտ կիգամ,
Կարմիր սոլերս հագնիմ, իգամ շուտ կիգամ։

Գացէ՛ք, տեսէ՛ք, ո՞վ է կերել զգէլ,
— Գացինք, տեսանք, արջն է կերել զգէլ։
Արջն զգէլուն
Գէլն ըզիծուն,
Էծն զտիկուն,
Տիկ զարեուն,
Հալալէ կրմօ՛, ճալալէ,
Հալալէ ջանօ՛, ճալալէ:
Է՛ս ի՞նչ քեաֆուր գարու հասանք, հալալէ,
Է՛ս ի՞նչ խաբար կրմօ ստացանք, հալալէ։
Նազ մի՛ աներ, նազ մի՛ աներ, նա՛զ աղջիկ,
Մինթանովդ թող մի՛ աներ, հայ աղջիկ։
— Նազ կու էնիմ, նազ կու էնիմ, նազ տղայ,
Մինթանովս թող կու էնիմ, հայ տղայ։
Խորոտիկ, մորոտիկ,
Խորոտիկ, մորոտիկ իմ եարն է:

(*) Ձայն՝ «Լէխօ լէ լէ, լէխօ լէ լէ»:

Գայէ՛ք, տեսէ՛ք, ո՞վ է կերել զարջ,
— Գացինք, տեսանք, առիւծն է կերել զարջ:
Առիւծն զարջուն,
Արջն զգէլուն,
Գէլն բզիծուն.
Էծն զտիկուն,
Տիկ զարեւուն.
Հայալէ կրմօ՛, նայալէ.
Հայալէ ջանօ՛, նայալէ:
Է՛ս ի՞նչ քեաֆուր զարու հասանք, հայալէ:
Է՛ս ի՞նչ խաբար կըմօ ստացանք, հայալէ:
Ծառը ես եմ, բարը դու ես, Աննա ջան.
Սրտով սիրած եարըս դու ես, Աննա ջան:
— Ծառը դու չես, բարը ես չեմ, հայ տղայ,
Սրտով սիրած եարըս դու չես, հայ տղայ:
Խորոտիկ, մորոտիկ,
Խորոտիկ, մորոտիկ իմ եարն է:
Գրիգորն ե՛մ, Գրիգորն ե՛մ.
Ձեր մայլեցի Գրիգորն եմ:

ԼՈՐԻԿ

Գացի արտեր բըռնի լոր,
Աղջիկ տեսայ եայլի ձոր,
Նըման էր կարմիր խընձոր.
Լո՛րիկ, զարնան ճաւեր
Դու վարդ արիր, լո՛րիկ.
Նըման էր կարմիր խընձոր.
Լո՛րիկ, լո՛րիկ, լո՛րիկ, լորիկ.
Լո՛րիկ. զարնան ճաւեր
Դու վարդ արիր, լո՛րիկ:

Արեւ դիպաւ սարերուն,
Կաքաւ թըռաւ քարերուն,
Լորիկ կայնե վեր դարուն:
Լորի՛կ, զարնան ճաւեր եկն:

Ջուր կուգայ դոչդոչալէն,
Գըլխուդ ես դըցե վալէն,
Լո՛ր, չես հարցնե իմ հալէն:
Լորի՛կ, զարնան ճաւեր եկն:

Տար մի՛ թալի մեր դըշին,
Թող գայ նըստի քո թըշին,
Կըրակ տու զարիր փըշին:
Լորի՛կ, զարնան ճաւեր եկն:

ՎԱՅՐԻ ԾԱՂԻԿ

Գեղեցիկ, հոտաւէտ,
Դու ծաղիկ՝ լեռնային,
Ո՞ւմ համար դու բուսար,
Ո՞ւմ համար ծաղկեցիր:

Ցըրտերում մեծացար,
Անխընամ մէն-մինակ,
Մի լաւ օր չը տեսար,
Սրբի պէս վշտակիր:

Ու անցաւ քո կեանքը
Սըգաւոր, տըխրագին,
Գեղեցիկ, հոտաւէտ,
Դու ծաղիկ լեռնային:

Ռ. ՄԵԼԻՔԵԱՆ Լ. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ՈՒՌԻ

Գետակի վրայ թեքւել է ուռին,
Եւ նայում է լուռ՝ վազող ջրերին.
Երազ աշխարհում, ամէն բան յաւէտ,
Գալիս է գնում և ցընդում անհետ.
Եւ գլուխը կախ՝ նա լաց է լինում,
Ջրերը ուրախ գալիս են գնում։

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ՍԱՐ ԴԱՐԴԵՐ

Գիշերն եկաւ. աստղունքն ելան,
Լուսնակն ալօտ շողշողաց.
Ծաղկունքն ամէն, նոր քուն մըտան.
Հարհանդ - մարմանդ քուն մըտան։
Իմ սար դարդեր, իմ ծով դարդեր.
Դուք էլ մուշ - մուշ քուն մտէք:

Դուք էլ քնէք ոսկէ աստղունք.
Վարդ ու բլբուլ քուն մտէք.
Հովեր, քնէք, ծովեր քնէք.
Անո՜ւշ - անո՜ւշ քուն մտէք։
Իմ սար դարդեր, իմ ծով դարդեր.
Դուք էլ մուշ - մուշ քուն մտէք:

Դ. ՂԱԶԱՐԵԱՆ　　Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ՕՐՕՐ

Գիշերն եկաւ, եկաւ,
Օրօր, բալա, օրօր...
Քընից շորոր կաքաւ,
Օրօր, բալա՛, օրօր...

Թող քեզ հովերն օրրեն,
Նանիկ երգէ առուն,
Հորուտ մորուտ բուրեն,
Օրօր, բալա՛, օրօր...

Դու քանց սըմբուլ քընքուշ,
Դու քանց լալա աղւոր,
Դու լոյս, դու յոյս հոգւոյս,
Օրօր, բալա, օրօր։

Ռ. ՄԵԼԻՔԵԱՆ

ՑԱՅԳԱՅԻՆ

Գիշերն ուշ է,
Հովն անո՜ւշ է
Սարերուն,
Թախիծն հովին՝
Կը հեծէ վին
Մը, հեռուն։

Լուսնակին տակ,
Լիճն՝ ըսպիտակ
Կ'երազէ...
Դալարն ափին՝
Բուրեան, Նըրրին
Մետա՜քս է...

Վ. ՄՐՈՒԽԱՆՋՏԵԱՆՑ

Մի՛ լար, իմ սիրտ,
Ժըպիտն է չիթ
Արիւնի...
— Ո՜վ ծիլ թառամած,
Ննջէ առանց
Գարունի...

Քար մը ըլնար,
Ծառ մը քընար
Ընտրեցի...
Սօսափն օրօր՝
Սարսափն անդորր
Է ինծի...

Գ. ԿԱՌՎԱՐԵՆՑ

ԱՌ ՍԻՐՈՒՀԻՆ

Գիշեր ցերեկ կը հառաչեմ, ա՜խ, օրիորդ, քու սիրուդ,
Սեւ աչերուդ, վարդ այտերուդ զարնըւեցայ, ինչ օգուտ։
Քեզի համար թափառական, ես սար ու ձոր ինկեր եմ,
Ըսէ՛ ինծի բառ մ'երջանիկ թէ՝ «Ես ալ քեզ կը սիրեմ»։

Ա. ՍՊԵՆԴԻԱՐԵԱՆ

ԳԻՇԵՐԱՅԻՆ

Գիշերն անուշ է, գիշերն հեշտագին,
Հաշիշով օծուն ու բալասանով.
Լուսնկէն ճամբէն կ'անցնիմ ես գինով,
Գիշերն անուշ է, գիշերն հեշտագին։
Համբոյրներ կուգան հովէն ու ծովէն,
Համբոյր՝ լոյսէն որ չորս դին կը ծաղկի,
Այս գիշեր Տօն է, հոգւոյս՝ Կիրակի՛,
Համբոյրներ կուգան, հովէն ու ծովէն,
Բայց լոյսն իմ հոգւոյս քիչ քիչ կը մաշի,
Շրթունքս են ծարաւ, միակ համբոյրին...
Ցնծագին գիշեր է, լոյս ու լուսին,
Բայց լոյս իմ հոգւոյս, քիչ քիչ կը մաշի։

Մ. ՄԵԾԱՐԵՆՑ

ՀԱՅՐԵՆԻ ՏՈՒՆ

Գիւղին ծայրը վտակին քովիկ,
Ծառերուն մօտ կանանչ, զովիկ,
Խրճիթ մը կայ համեստ, սիրուն –
Իմ աննըմա՜ն հայրենի տուն։

Կը բաբախեն հոն անդադար
Զոյգ մը սրտեր ինծի համար.
Հօրս, մօրս անուշ սրտեր,
Գոհարներու հետ չեմ փոխեր:

Օրօրոցս հին և ցածուկ,
Հո՛ն անկիւն մը կը գտնէք դուք.
Հո՛ն բացուեցան լեզուիս կապեր,
Նախկին քայլերս հո՛ն եմ առեր։

Ուրախութիւն, հանոյք ու սէր
Հայրենի տուն են լեցուցեր.
Արեւուն տակ չկայ մէկ բան
Իմ հայրենի տանս նման:

Գիւղիս ծայրը վտակին քովիկ
Ծառերուն մօտ կանաչ զովիկ,
Մինչ կեցած է համեստ սիրուն
Իմ պաշտելի հայրենի տուն։

Մ. ԹԻՐԵԱՔԵԱՆ — Մ. ՊՈՆՏԱՑԻ

ԳՆԱ, ԳՆԱ (*)

Գնա, գնա, ռտիդ եմ,
Հա՛, նա՛, նա՛, նա՛, նա՛, նա՛, նա՛, նա՛,
Սա՛րին, օ՛, եա՛ր ջան.
Եա՛րին, օ՛, եա՛ր ջան:
Կարմիր խնձոր՝ գօտիդ եմ,
Հա՛.
Եա՛րին, օ՛, եա՛ր ջան,
Սա՛րին, օ՛, եա՛ր ջան:

(*) *Նախ՝* «Ա՜խ մարալ ջան», (բ) «Կուժն առայ» (գ) «Սարէն եկաւ երկու մուխ», *յետոյ՝* «Գնա՛, գնա»:

Դու ինձ էս տեղ չես թողնի,
Հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛, հա՛,
Սա՛րին, օ՛, եա՛ր ջան,
Եա՛րին, օ՛, եա՛ր ջան.
Ուր որ երթաս՝ մօտիդ եմ,
հա՛.
Եա՛րին, օ՛, եա՛ր ջան,
Սա՛րին, օ՛, եա՛ր ջան:

Արարանը քարոտ ա,
Քարի տակըն արօտ ա.
Ուզիդ հօթը տարի ա,
Քոյրն ախպօրը կարօտ ա,
Եար եմ գտել՝ եարի պէս.
Ընկուզենի ծառի պէս.
Ու՛ր որ երթայ՝ կայնել եմ.
Էն մեր սիրուն սարի պէս:

Կ. Վ.

ԳՆԱՑ, ԳՆԱՑ
(ԱՇՈՒՂ ՂԱՐԻԲ)

Գնա՛ց, գնա՛ց, սիրուհիս գնաց,
Նրա պէս սիրուն՝ էլ ո՞վ կ'ունենայ.
Գեղեցիկ էր նա, հրաշալի էր նա,
Նրա պէս սիրուն՝ էլ ո՞վ կ'ունենայ:
Գնա՛ց, գնա՛ց, Ղարիբս գնաց,
Սրտիս մէջ թողեց վէրքեր բիւրաւոր,
Սգի մէջ մնացի, օրս միշտ լալով,
Հանգիստս խռով, ա՜խ ուր ես շո՛ւտ եկ:
Ա՜խ, Ղարիբ, մահս մօտ է շո՛ւտ եկ,
Թոյնը գրպանումս՝ իմ դատավճիռ,
Շուտ դու դուրս արի՛, սիրահար արի՛,
Սանամիդ փրկի՛ր, էլ դու չես գտնի...:

ԱՇՈՒՂ ՋԻՒԱՆԻ

ԳՆՉՈՒ ԱՂՋԻԿ

Գնչու աղջիկ, դու սեւաչեայ, ճիկ, ճիկ, ճիկ,
Նազ մի՛ աներ, չըքնաղ եղնիկդ գեղեցիկ,
Գեղ ու քաղաք կը թափառիս միշտ բոպիկ,
Ցանկերդ չուրթիդ, կը կաքաւես ճիկ, ճիկ, ճիկ:

Հօ՛յ. հօ՛յ. հօ՛յ. հօ՛յ. պա՛ր. պա՛ր, պա՛ր,
Հնչեն թմբուկն ու կիթառ, թմբուկն ու կիթառ.
Զեփիւռի պէս կը թեւածես, կը դառնաս,
Խելառ տղոց վայրի սիրտը կ'առնես նազ:

Հիւսես կողով, ուռիներու ճիւղերով,
Զմրուխտ հագած առուակներու եզրին քով,
Դռնէ ի դուռ չահիդ համար թափառիս,
Աչերովդ չարեր գիւթես, ինչպէս գիս:
Հօ՛յ, հօ՛յ, հօ՛յ, հօ՛յ, պա՛ր, պա՛ր, պա՛ր, *եւլն.*

Դու մեն կուգաս գաղտնագողի ու ծպտուն,
Նայուածքովդ բայց կը մատնես միշտ քեզ դուն,
Քու աննման, խորհրդաւոր աչեր վառ,
Հայելի են անկեղծ սրտիդ սիրավառ:
Հօ՛յ. հօ՛յ. հօ՛յ. հօ՛յ. պա՛ր, պա՛ր, պա՛ր, *եւլն.*

Ալ թո՛ղ աղջիկ, պատրանքի այդ խօլ ձեւեր,
Բոյն մը շինենք, թափառ կեանքիդ վերջ մը բեր.
Ալ մի՛ երգեր, մի՛ հնչեցներ ճիկ, ճիկ, ճիկ,
Սիրտըս վանդակ, հոն դու երգէ, պլպուլիկ:
Հօ՛յ, հօ՛յ, հօ՛յ, հօ՛յ, պա՛ր, պա՛ր, պա՛ր, *եւլն:*

Ա. ՏԷՐ ՂԱԶԱՐԵԱՆ

ՏԷԿԼԻԿ ԽԱՐԸ

Գութանը հաց եմ բերում,
Բերանը բաց եմ բերում.
Տե՛ս քեզ ո՛րքան եմ սիրում.—
Ջուկը տապկած եմ բերում։

Էս օր գութանը մերն ա,
Մաճ բռնողը իմ հէրն ա,
Եզնարած չէկլիկ աղջէն՝
Աշխարհ գիտէ՝ իմ տէրն ա։

Վեր կացած հաւախօսին՝
Գութանն ա վարում փօսին.
Բարկ արևը երկընքում՝
Շաղն ա գլորել ակօսին։

Հա՛ւքեր, թեւանի արէք,
Եարիս հովանի արէք.
Թո՛ղ բարակ քամին փչի,
Հետն էլ դուք նանի արէք։

Կ. Վ.

ԱՆՏՈՆՆ ՈՒ ԱՇԽԷՆԸ

Գալիչու ճամբէն տուղ ա,
Օ՛յ աման, աման, աման, աման, հէյ, հոյ աման:
Անտոն կայներ Աշխէն կուզա.
Խորոտ էր Աշխէնը,
Կոլոտ էր Աշխէնը:

Անտոնենց դրանը չիչեր,
Օ՛յ աման, աման, աման, աման, հէյ, հոյ աման:
Աշխէնին տարան գիշեր,
Խորոտ էր Աշխէնը
Կոլոտ էր Աշխէնը:
Անտոնին ձիու բաշը,
Օ՛յ աման. աման, աման, աման, հէյ. հոյ աման.
Աշխէնին գլին խաչը,
Խորոտ էր Աշխէնը,
Կոլոտ էր Աշխէնը:

ԱՇՈՒՆ

Դաշտ ու այգի դեղին հագան,
Ծառ ու ծաղիկ մերկացան.
Թռչունները երամ - երամ՝
Մեր աշխարհից հեռացան:

Օրը մռայլ, ցուրտ ու տխուր,
Բարակ անձրեւն է մաղում,
Մէգն է պատել սար ու բլուր,
Էլ մարդ չըկայ դաշտերում:

Կ. ԿՈՒԼԵՆԻ Հ. ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ

ԴԱՐԴՍ ԼԱՑԷՔ

Դարդս լացէ՛ք, սարի սըմբո՛ւլ,
Ալւան - ալւան ծաղիկներ,
Դարդըս լացէ՛ք, բաղի բըլբո՛ւլ.
Ամպշող երկնուց զով - հովեր...

Երկինք—գետինք գըլխուս մըթնում,
Անտուն—անտէր կուլամ ես.
Եարիս տարա՞ն, ջանիս տարա՞ն,
Հոնգո՛ւր—հոնգո՛ւր կուլամ ես...

Ա՜խ, եարս ինձի հանեց սըրտէն,
Անճար թողեց ու գընաց.
Սրտիս սուգէն—խորունկ եարէն,
Անդեղ թողեց ու գընաց։

Դարդըս լացէ՛ք, սարի սըմբո՛ւլ.
Արուն—ալուան ծաղիկներ.
Դարդըս լացէք, բաղի բըլբուլ,
Ամպշող երկնուց գոմ—հոմե՛ր...

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ԴԱՐԴ ՄԻ՛ ԱՆԻ

Դարդ մի՛ անի, ջան ու ջիգար, միտքըդ գիլաց չը տէսնէ.
Աչըկ խամրի, անգաձ խուլանայ՝ էրէսըդ թաց չը տէսնէ։
Վո՛ւնց արէգագըն շուղ կը տա՛յ, վո՛ւնց լուսինը լուս անէ՛.
Ավալ քու տէսնօղըն մէռնի՝ քիզ գըլխիրայ չը տէսնէ։
Դուն գըլուխըդ մահի կու տաս, ես էլ քիզիդ կու մէռնիմ.
Միր էգնէն թամամ աշխարըս սօվ քաշէ,— հաց չը տէսնէ։
Թէ վուր չը գամ ու չը տէսնիմ՝ հազար բարաթ բան կօսիս.
Բաշկա մարթ վո՛ւնց գայ, վո՛ւնց խօսի, վո՛ւնց քի տըխրած
չը տէսնէ։
Աստուձու բէրնէմէն առնիս մըխիթարիչ սուրփ հօքին.
Է՛լ վաղ մէռնի Սայաթ-Նօվէն՝ ճիտըդ գըցած չը տէսնէ։

ՍԱՅԵԱԹ ՆՕՎԱ

ԱՇՆԱՆ ԵՐԳ

Դեղնած դաշտերին իջել է աշուն,
Անտառը կրկին ներկել է նախշուն.
Պաղ-պաղ մէգի հետ փչում է քամին,
Քըշում է տանում տերեւը դեղին.
Դեղնած դաշտերին իջել է աշուն,
Անտառը կրկին ներկել է նախշուն.

Ռ. ՄԵԼԻՔԵԱՆ Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԿԱՐԱՊԻ ԵՐԳԸ

Դէ՛, գընա՛ կարապ, այգը շողշողաց,
Անուշ երազով ծովը գողգողաց,
Ոսկէ արեւի վառ շողերի տակ,
Դէ՛ գընա՛ կարապ, նազ տուր ու խաղա։

Հաւքերը խմբով քեզ օրօր կ՚ասեն,
Գողտրիկ տաղերով նազքըդ կ՚օրհներգեն,
Հպարտ արծիւը քեզ ողջոյն կ՚տայ.
Դէ՛ գընա՛ կարապ, նազ տուր ու խաղա։

Ե. ՍԱՐԴԱՐԵԱՆ

ՇՈՒՏ ԱՐԻ

Դէ՛հ, շուտ արի՛, ա՛խ շուտ արի.
շուտ արի.
Նոր լէհինգ դեռ մի՛ կարի,
շուտ արի.
Դէ՛հ, շուտ արի՛, ա՛խ շուտ արի
շուտ արի.
Թող խնոցին էգուց հարի,
շուտ արի.
Դէ՛հ. շուտ արի, ա՛խ շուտ արի՛,
շուտ արի.
Բանի՛ ձեռքից դու քո հարի,
շուտ արի.
Դէ՛հ, շուտ արի, ա՛խ շուտ արի.
շուտ արի.
Քեզի պէտք չէ՛ գանձն աշխարհի,
շուտ արի.
Դէ՛հ, շուտ արի, ա՛խ շուտ արի,
շուտ արի.
Ինչպէս լինի, հնարք ճարի,
շուտ արի.
Դէ՛հ շուտ արի, ա՛խ շուտ արի,
շուտ արի.
Դու ինձ այդքան մի չարչարի,
շուտ արի.
Դէ՛հ շուտ արի, ա՛խ, շուտ արի,
շուտ արի.
Ինձ մի՛ խփի դու չոր քարի,
շուտ արի.
Դէ՛հ շուտ արի, ա՛խ շուտ արի,
շուտ արի.
Սպասում եմ, շուտ դուրս արի,
մօտ արի։

ԴԻԼԲԱՐ ՋԱՆ

Դիլբա՛ր ջան, դիլբա՛ր ջան,
Դիլբա՛ր ջան, դիլբա՛ր ջան,
Դիլբա՛ր ջան, դիլբա՛ր ջան,
Դիլբա՛ր ջան, ես սարէն կուգամ,
Ձեր բաղչին մանեմ, դիլբա՛ր ջան,
Քեզի կը գըտնեմ սիրո՛ւն ջան,
Ջա՛ն, ջա՛ն, ջա՛ն, ջա՛ն
Դիլբա՛ր ջան, դիլբա՛ր ջան,
Դիլբա՛ր ջան, դիլբա՛ր ջան։

Դ. ՂԱԶԱՐԵԱՆ

ԴՈՒ ԱՆՄԵՂ ԵՍ...

Դու անմեղ ես, քո աչերն են մեղաւոր,
Իմ հոգու հետ դու խաղում ես ամէն օր,
Յոյս ես տալիս քո հայեացքով ամէնուն,
Մերթ կանչում ես, մէկ էլ փախչում մոլորուն։
Դու անմեղ ես, քո աչերն են մեղաւոր։

Բայց հայեացքդ անմխիթար հայեացքիս
Յոյս է տալիս, ես ի՞նչ անեմ վիրաւոր,
Քեզ անիծեմ՝ բայց ինչպիսի՞ անէծքով.
Դու անմեղ ես, չէ՛, աչերդ են մեղաւոր։
Դու անմեղ ես, քո աչերն են մեղաւոր։

Լալ չգիտեմ, արցունք չունեմ ես բնաւ,
Մահն ինձ համար մի հանգիստ է ցանկալի,
Էս աշխարհում ոչ մի բան ինձ չյաղթեց,
Վախենում եմ որ քո սէրն ինձ տապալի։
Դու անմեղ ես քո աչերն են մեղաւոր։

ՀՐԱԺԵՇՏ

Դու գնում ես՝ չգիտեմ ո՞ւր,
Լուռ ու տխուր
Հեզ գունատւող աստղի նըման։

— Ես գընում եմ սրտում - մենակ,
Անժամանակ,
Ծաղկից ընկած թերթի նման։

Դու գնում ես՝ չգիտեմ ո՞ւր,
Սրտակտուր,
Լացըդ պահած իմ հայեացքից։

— Ես գնում եմ լուռ - անտրտում,
Բայց իմ սրտում
Ցաւ է անվերջ, մահո՛ւ կսկիծ ...

Ա. ՏԷՐ ՂԵՒՈՆԴԵԱՆ Վ. ՏԷՐԵԱՆ

ՍԻՐԱԿԱՆԻ ԱՆԷԾՔԸ

Դու խօսք տըւիր ինձանից չը զատուելու,
Թէ զատուէիր հախ տիրոջմէն զատուէիր.

Այ մարալ աղջիկ,
Այ ջէյրան աղջիկ,

Ես քեզ սիրի, որ դու ինձի չը թարկես,
Եթէ թարկես՝ հոգւով մարմինովըդ խարկես.
Անիծեմ, տաս տարի անկումըդ պառկես,
Եօրղանի մէջ անքայ կողերդ, աղջի՛կ։

Ում հետ էլ որ երթաս՝ հետդ չը վարուի,
Պսակուելուդ օրը՝ քօղքըդ սև կարուի.
Հօրըդ տուն ու դուռը սև քարով շարուի,
Ա՛խ ու վախո՛վ մնայ ախպէրդ, աղջիկ։

Մօրդ լեզուն ուռի, բերանը փակուի,
Քառասուն օր տանջուի՝ հոգին չը քակուի.
Ինձնէն զայրի հետըդ ով որ պսակուի,
Երեք օր չը վայլէ սէրըդ, ա՜յ աղջի՛կ։

Զգենես խամ կտաւ էնես արխալուղ,
Լէն բոլ աշխարքի մէջ օրդ անցնի սուղ,
Հացըդ կորեկ եղնի, գարին հետը կուղ,
Ոձի պէս սակաւի քո կերըդ, աղջի՛կ։

Ես մի խեղճ տղայ եմ, էրի քեզ գիւման,
Աստուածածինն էնի քո մօրդ դիւան,
Իր կենաց մէջ նա չունենայ սաղ ջան,
Որ ինձ էրաւ տընից դարբէդար, աղջի՛կ։

Պատճառն ի՞նչ էր, որ դուք չհաւնաք ընծի,
Կարօ՞տ էք դովլաթի, փափա՞ք էք գանձի.
Առաջ խօսք տուողի լեզուն պապանձի,
Տանողըդ չը տեսնի քո խէրըդ, աղջի՛կ։

Սրագեօզ աչերըդ, կամար ունքերըդ,
Ուզում եմ հեռանամ՝ չի թողնի սէրըդ.
Քեզի ինձնէն էրաւ քու քեաֆիր մէրըդ,
Խնդրում եմ չառանայ վէրքերըդ, աղջի՛կ։

Ես Ջուլայ - օղլին եմ, դարդովդ եմ կեցի,
Գիշերն եմ մտածի, ցորեկն եմ լացի.
Տասը տարի խաթրիդ ազապ մնացի,
Ծակծկի ծոցիդ մէջ ծծերըդ, աղջի՛կ։

ԳՐ. ՍԻՒՆԻ

ԴՈՒՆ ԷՆ ԳԼԽԷՆ

Դուն էն գլխէն իմաստուն իս, խիլքդ յիմարին բար մի՛ անի,
Էրազումըն տէսածի հիդ միցի մէ հէսաբ մի՛ անի,
Ես խօ՛մ էն գլխէն էրած իմ, նուրմէկանց քարար մի՛ անի,
Թէ վուր, գիդիմ, բէզարիլ իս, ուրիշին սարար մի՛ անի։

Զըկայ քիզ պէս հուքմի հէքիմ՝ դուն Ռոստոմի Զալ, թա՛քավուր.
Ասկըդ ասկէրումըն փոված, համ դուն իս փօղալ Թաքավուր.
Թէ էսանց էլ սուչ ունէնամ՝ գլուխս արա՛ տալ, թա՛քավուր.
Մըտիկ արա՛ քու Սաիդծօղին՝ նահախ տիղ ղազաբ մի՛ անի։

Եարալուն հէքիմն էնդուր գ՚ուզէ՝ գիդ տալու է, ցաւ տալու չ՚է.
Բանի գ՚ուզէ արբար ըլի՝ գուլըն ալին ղավ տալու չ՚է.
Դու քու սիրտըն խոտակ պահէ՛ եատի խօսկըն ավտալու չ՚է,
Աստուծու սէրն կանչօղի պէս գըռնէմէգ ջուղաբ մի՛ անի։

Ամէն մարթ չ՚ի կանա խըմի իմ ջուրըն՝ ուրիշ ջըրէն է.
Ամէն մարթ չ՚ի կարթա իմ գիրըն՝ ուրիշ գըրէն է.
Բունիաթս ավազ չ՚իմանաս՝ քարափէ քարուկըրէն է՝
Սէլավլի պէս՝ առանց ցամքիլ, դուն չուտօվ խարար մի՛ անի։

Բանի գ՚ուզէ քամին տանէ՝ ծօվէմէն ավազ չ՚ի պակսի.
Թէգուզ ըլիմ, թէգուզ չ՚ըլիմ մէջլիսներում սազ չ՚ի պակսի.
Թէ կու պակսիմ, քի՛զ կու պակսիմ՝ աշխարհս մէ մազ չ՚ի պակսի՛
Սայաթ-Նովու գէրէզմանըն Հինդ, Հաբաշ, Արաբ մի՛ անի։

1753 ՍԱՅԵԱԹ-ՆՕՎԱ

ԴՈՒՆ Է՛Ն ՀՈՒՐԻՆ ԻՍ

Դուն է՛ն հուրին իս՝ վուր գէմի կու ղավթէ.
Ջունքի ինձ ղավթէցիր խափօվ, Նազանի։
Սրիմիլք, արիմուտ, հարավ ու հիւսիս
Զը կայ քիզի նըման՝ չափօվ, Նազանի։

Շատ մարթ քու էշխէմէն կու դառնայ եղիդ.
Արի՛ մէ ռահմ արա՛, լաւ կացի՛ միզիդ.
Գ՚ուզիմ թէ համաշա դամ անիմ քիզիդ՝
Սանթուրօվ, քամանչօվ, դափօվ, Նազանի։

Դարդիրըս շատացաւ՝ ասիլ իմ ուզում.
Աչկէմէս արտասունք հուսիլ իմ ուզում.
Համաշա, եա՛ր, քիզիդ խօսիլ իմ ուզում.
Սիրտըս չ՚է կըշտանում փափօվ Նազանի։

Հայիտըու ես, աղաբ ունիս, ար ունիս.
Ձէռիդ դաստա կապած սուսանբար ունիս,
Տօ՛ւր ինձի սըրպանէ՝ իխտիար ունիս.
Հէնչափ ըլի՝ կէնաս բափօվ, Նազանի։

Սայիաթ-Նօվէն ասաց՝ արղ ունիմ խանին.
Ղարուլ ունիմ՝ քու խաթրու ինձ սըրպանին, —
Հէնչափ ըլի, եա՛ր, գաս իմ գէրէզմանին,—
Ածիս խուղըն վըրէս ափօվ, Նազանի։

ՍԱՅԵԱԹ-ՆՕՎԱ

ԳՆՉՈՒՀՈՒ ԵՐԳԸ

Դու նստել ես աղբրա-ակին,
Շաղը ծամերդ կը թրջէ,
Նուռ շրթունքիդ, նուշ թշերիդ
Շաւղը ջուրը կը պաչէ:
Լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛,
Լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛. լէ՛. լէ՛, լէ՛, լէ՛.
Լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ, ջա՛ն, յէ՛յ:
Անուշ աղջիկ, չեմ դիմանայ,
Սիրտըս կ՚առնի ու կուտայ,
Նուռ պաչ կ՚ուզեմ, նուշ պաչ կ՚ուզեմ
Սիրտըս կ՚առնի ու կուտայ:
Լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, նուշ:

Քո մազերդ վըզիդ բոլոր,
Վըզիդ բոլոր ոլորուն,
Ինձ արել ես թիթեռ մոլոր,
Սէրիդ բոլոր մոլորուն:

Քո աչերդ պայծառ աղբիւր,
Ուրկից սէրըդ կը ծագէ,
Քան զով երկինք՝ ջինջ ու մաքուր,
Ա՛խ, սիրտս սիրուդ պապակ է:

Ձեր թովչանքին չեմ դիմանայ,
Ծաւի աչե՛ր, ծով աչե՛ր,
Սիրտըս կ՚առնի ու կուտայ,
Նուռ պաչ կ՚ուզեմ, նուշ պաչեր ...:

Ու շրթունքըդ բաժակ արեր՝
Ոսկեջըրած, յակինթով,
Ինձ խինդի մէջ հարբեցըրիր
Սիրու գինով հոգեթով ...:

Հ. ՄԵՀՐԱՊԵԱՆ　　Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ՄԱՆՈՒԿՆ ՈՒ ՋՈՒՐԸ

Դու ո՞ր սարէն կուգաս, ջըրիկ,
Ա՛յ պաղ ջըրիկ, իմ անուշիկ.
— Ես էն սարէն կուգամ մըթին,
Ուր հին ու նոր ձիւնն է գըլխին:

Դու ո՞ր առուն կ՚երթաս, ջըրիկ,
Այ պաղ ջըրիկ, իմ անուշիկ.
— Ես էն առուն կ՚երթամ գըւարթ,
Ուր ափերն են շուշան ու վարդ:

Ռ. ՄԵԼԻՔԵԱՆ　　Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԴՈՒ ՉԵՍ ՀԱՒԱՏՈՒՄ

Դու չես հաւատում թէ քեզ եմ սիրում,
Թէ գիշեր ցերեկ անքուն անհանգիստ,
Միայն քեզ համար մտածում եմ միշտ,
Դու չես հաւատում, որ քեզ եմ սիրում:

Թէ քու վառ սիրով ես հիւանդ պառկած,
Ուժս սպառած, լեզուս չորացած,
Ասեմ՝ քո սիրոյն հոգիս կաւանդեմ,
Դու չես հաւատում, որ քեզ եմ սիրում:

Ծնողք բարեկամք երկինք և երկիր,
Իմ սիրոյս համար վկայ եմ կանչում,
Որ սիրեմ անկեղծ, դու էլ ինձ սիրես,
Դու չես հաւատում, որ քեզ եմ սիրում:

ԴՈՒՐՍ ԵԿ ԻՄ ԵԱՐ

(ԱՇՈՒՂ ՂԱՐԻԲ)

Դուրս եկ, իմ եար, վերջին անգամ քեզ տեսնեմ,
Սանամ, քեզ տեսնեմ.
Ես քո սիրուց ամէն տանջանք կը տանեմ,
Սանամ, կը տանեմ։
Սրտիս մօտիկ բացի քեզնից էլ ո՞վ կայ,
Դուրս եկ, իմ եար, ջահիլ ջիւանիս խղճա։

Հանգիստ չունիմ, դադար չունիմ, սիրահար
Սանամ, սիրահար,
Ինձ մի՛ անիր դու քո սիրուց խեղադար,
Սանամ, խեղադար։
Բաւ է որքան մաշող սրտից, անուշ եար,
Հառաչանքներ միշտ արձակեմ անդադար։

ԵԱՐ Մ'ՈՒՆԷԻ

Եար մ'ունէի բոյով չինար, տեսքով աննման,
Սիրունների թագուհին էր սիրով անսահման.
Սև աչերով, սև մազերով սև սաթի նըման.
Բարձըր ձայնով երգ էր կանչում բլբուլի նման։
Ա՜խ իմ անուշ եար, ինչո՞ւ հեռացար,
Ինչո՞ւ հեռացար եւ ինձ մոռացար:

Երբ հեռացար դու ինձանից, օրըս խաւարեց,
Կանաչազարդ պարտիզումըս վարդըս թառամեց.
Պատէն կախուած իմ ջութակըս ընկաւ փըշրուեց,
Լացող սիրտըս վերջին անգամ արձագանգ տուեց.
Ա՜խ տուէք թևեր, թևեր որ թռչիմ.
Թևեր որ թռչիմ, իմ եարին հասնիմ:

ԵԱՐ ՋԱՆ, ԱՐԻ (*)

Եա՛ր ջան, արի, դուն մի առնի էն տըղին,
Թէ որ առնես, երբէք օրուայ հարս ըլնես։
Վո՜յ, եա՛րօ՛ ջա՜ն:

Կ. Վ.

ՓԱՅԼՈՒՆ ԱՍՏՂԻԿԸ

Ե՛ար, քեզ նման փայլուն աստղիկ,
Դեռ ոչ մի մայր չի ծնել,
Ջա՛ն, քեզ նման մի խաս ծաղիկ,
Դեռ մի աշխարհ չի ծլել։

Ինչքան որ մեծ դարդ ունենամ,
Սրտիս անհուն խորքերում,
Մէկ քեզ տեսնեմ կը մոռանամ,
Վարդ կը բացուի իմ սրտում։

Ինչպէս ծաղկանց, ծարաւ ծաղկանց,
Անձրևն է, ցօղն է ամպերով,
Դու էլ ցօղն ես միշտ իմ կենաց,
Շրթունքներով, այտերով։

ԱՇՈՒՂ ՇԵՐԱՄ

(*) *Իբրև շարունակութիւն կ'երգուի* «էս օր ուրբաթ է պաս է» *և* «Ջուր կուգայ վերին սարէն»:

ԵԱ՛Ր, ՔԻԶ ԻՍԿԻ

Եա՛ր, քիզ իսկի ղալալ չ՚ըլի՝ քու դուշմընին չառ բայարած,
Հուսըդ աշխարըս բըռնիլ է՝ բալասանի ծառ բայարած.
Թըխտիրըդ ոսկէ վարաղով Աստաֆուր իս՝ ճառ բայարած.
Տէսնօղըն չարքըն չ՚ի գիտի լուսնի աստղ պայծառ բայարած։

Ամէն մարթ չ՚ի կարա մըտնի՝ էշխիդ ջուրըն հիդ, ղալում,
Մըտնում է խարսուն կամուրջըն, չ՚ասիս՝ թէ մէ գիդ է, ղալում.
Ունքիրըդ սալիդ սաղախ է. թէրթէրուկըդ նիտ է, ղալում.
Մըտնօղըն էլ չ՚ի գուս էհա՝ գուռ մահու պատճառ բայարած։

Բարակ մէջկըդ՝ ղարղուղամիչ. էրէսըդ Թայֆուրի նըման.
Օրըն խարսուն ռանգ կու փօխիս, վա՛նց մէկըն չ՚է տօլի նըման.
Եփ խաղում իս՝ վառվըռում իս օյի բէրնի հուլի նըման.
Մութըն տիղըն լուս իս տալի առանց կըրակ վառ բայարած։

Բարօվըն բարօվ չ՚իս տա՝ Թաքավուրի սալամի պէս.
Ձէռնիրըդ սիպտակ մաքայաթ, լիղուդ ոսկէ ղալամի պէս.
Ձարուղարրարէ ղըրօշա՝ ման իս գալի ալամի պէս.
Տէսնօղըն էնպէս կ՚իմանայ՝ Շահ իս գալի ջառ բայարած։

Եա՛ր, քիզանից հիռանալըս մէռնէլուս վըրայ ղըժար ա.
Լիղուդ քաղցըր, խօսկըդ քաղցըր. ակռաքնիրըդ անգին քար ա.
Երիք քսան ու տասըն խալըն էրէսիդ բօլօրքըն չար ա.
Վունց օր Սայեաթ-Նօվու լիղուն եօթանասուն բառ բայարած։

1758 ՍԱՅԵԱԹ-ՆՕՎԱ

ԵԱՐՕ ՋԱ՛Ն

Եարօ ջա՛ն, դու Մասիսի սարն ես,
Եա՛ր, եարօ ջա՛ն, դու իմ սրտի տէրն ես,
Եանմ, եանմ, էս էլ բախտի բան ա:
Ալ պլուզիդ մեռնեմ, շալ պլուզիդ մեռնեմ,
Եարոյի կարմիր պլուզին մեռնեմ:

Եարօ ջա՛ն, փայթօն զանիդ կ՚անեմ,
Եա՛ր, եարօ ջա՛ն, քեզ մեր տունը տանեմ,
Եանմ, եանմ, էս էլ բախտի բան ա:
Ալ պլուզիդ մեռնեմ, սեւ աչերիդ մեռնեմ,
Եարոյի կարմիր պլուզին մեռնեմ:

Եարօ ջա՛ն, արի գնանք ժամը,
Գնանք ժամը, գինջանայ մեր ջանը,
Եանմ, եանմ, էս էլ բախտի բան ա:
Ալ պլուզիդ մեռնեմ, բոյ ու բուսիդ մեռնեմ,
Եարոյի կարմիր պլուզին մեռնեմ:

Փողոցում բարև կուտաս կ՚անցնես,
Ի՞նչ կը լինի մէկ էլ հալըս հարցնես,
Եանմ, եանմ, էս էլ բախտի բան ա:
Ալ պլուզիդ մեռնեմ, կամար ունքիդ մեռնեմ,
Եարոյի կարմիր պլուզին մեռնեմ:

Եարօ ջա՛ն, շատ մի ցաներ բամպակ,
Կ՚երթամ Թիֆլիս, վրէդ կ՚անեմ զանգատ,
Եանմ, եանմ, էս էլ բախտի բան ա:
Ալ պլուզիդ մեռնեմ, ալ բեհրիդ մեռնեմ,
Եարոյի կարմիր պլուզին մեռնեմ:

ՌՈՄԱՆՍ

Եկաւ սէրն այս գիշեր,
Թեւերով նըրբին.
Իմ ոսկի հին յուշեր
Արթնցան կրկին։

Երկինքն ու ջինջ ծով
Գրկեր են իրար.—
Կը շրջիմ թախծով,
Մենակ ու մոլար։

Տես երկինքն ու ջինջ ծով,
Գրկեր են իրար.
Ալ բաւ է որ թախծով
Շրջիմ ես մոլար։

Դու ծովի նման
Փըռուէ՛ իմ աղուոր,
Ես ծոցըդ շաղ տամ,
Աստղերս բոլոր...։

ՀՄԱՅԵԱԿ ՇԷՄՍ

ՀԱՄԲԱՐՁՄԱՆ ԳԻՇԵՐ

(ՆԱԽԵՐԳԱՆՔ «ԱՆՈՒՇ» Ի)

Եկէ՛ք, քոյրե՛ր, սէգ սարերի
Չքնաղագեղ ոգիներ,
Եկէ՛ք, ջահել սիրահարի
Սէրը, սրտանք վայելենք։

Օխտն աղբիւրից ջուր է առել
Կոյս սափորով, լուռ ու մունջ,
Օխտը ծաղկից ծաղիկ քաղել,
Կապել սիրոյ ծաղկեփունջ։

Ջուրն ու ծաղիկ աստղունք դըրել,
Խընդիրք արել աստղերին,
Փափաք սրտով խընդիրք արել՝
Բարի ժըպտան իր սէրին...

Ափսո՜ս, Անո՛ւշ, սարի ծաղիկ,
Ափսո՜ս իգիթ քու եարին,
Ափսո՜ս բոյիդ թելիկ-մելիկ,
Ափսո՜ս էդ ծով աչքերին...

Վուշ-վո՜ւշ, Անո՛ւշ, վուշ-վո՜ւշ, քուրիկ
Վո՜ւշ քու սէրին, քու եարին,
Վուշ-վո՜ւշ, Սարօ՛, վուշ-վուշ իգիթ,
Վո՜ւշ քու սիրած սարերին...։

Ա. ՏԻԳՐԱՆԵԱՆ   Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԵԿ ԻՄ ՍՐԻՆԳ

Ե՛կ իմ սրինգ, իմ բարեկամ սըրտագին,
Նիհար շրթներդ, ո՛հ, երերուն,
Դի՛ր գալկահար իմ շըրթներուն,
Երգենք ու լանք, լանք ու երգենք տըրտմագին։

Լա՛ց, զի լոկ քեզ գըտի հատորն իմ սրտին.
Դու բարունակ էիր կանաչ,
Երբ մի անգութ ձեռք անճանաչ
Կտրեց ըզքեզ, անջատեց մայրն ու որդին,

Եւ թոյլ տըւիր որ լանջիդ վրայ դալարուտ
Ծակեր բացուին, վէրք երկաթի.
Թող այդ վիրաց, ըսիր, կաթի
Արիւն, բողոք, միակ ըմփոփ վիշտերուդ։

Ես ալ մանուկ էի անմեղ երբ վաղուց՝
Մի անծանօթ պատճառ վըզիս
Լուծ մը դըրաւ, ո՜րբ կոչեց զիս՝
Եւ հօր ու մօր սիրոյն կարօտ զիս թողուց։

Իմ ալ կուրծքս ծակծըկեցին ժանտ վէրքեր,
Եւ որպէս դուն սիրես որմին
Յենուլ, լալ, մինչեւ որ մին
Չի յուզէ քեզ, չե՛ս հառաչեր, չես երգեր.

Լըռիկ մնջիկ սիրեմ և ես հեռու կալ
Ընկերութեան ժխոր ժըխորէն,
Եւ իմ սըրտին, հոգւոյն խորէն
Զըննել, ըղձալ լոկ, զարմանալ ու խօկալ։

Եւ քանի որ նոյնն է ծընունդ մեր և կեանք,
—Մարդուն քըմայ դուն հըպատակ,
Եւ անծանօթ մի նըպատակ
Անհուն կամաց մը մէջ թողած է իմ կեանք.—

Ինչո՞ւ նոյն հոգն չամփոփէ մեզ, ի՛մ սըրինգ,
Չէ՞ որ սիրող սըրտից կըրկին
Նո՛յնն են դըժոխք և նոյն՝ երկին,
Յիշէ՛, ընդ քեզ ապրիլ, մեռնիլ ուխտ ըրինք։

Թող երգէոն, դաշնակ, քընար գեղգեղեն,
Յեկեղեցւոջ, ի գինետան,
Աղօթք ու պար թըռչին, խայտան.
Թող այլք վայլեն հաճոյք մարմնոյ, հոգեղէն.

Ա՜խ, իմ սըրինգ, աշխարհ յոյսով թող բերկրի,
Թող բաղդն անոր ժըպտի յոյսին,
Ե՛կ, ես և դու ի միասին
Լա՛նք ու երգե՛նք, մեր բաժինն այս է յերկրի։

Գ. ՊԷՇԿԷՕԹԻՒՐԵԱՆ

ՂԱՐԻՊԻ ՀՐԱԺԵՇՏԸ

(ԱՇՈՒՂ ՂԱՐԻՊ)

Ղարիպ. Ե՛կ, մայրական օրհնութիւնդ տուր ինձի,
Օտար երկիր պիտի մեկնիմ այսու յետ։

Մայրը. Ինձ թողնելով, ո՞ւր ես գնում, որդի ջան,
Առանց քեզի օրս սև է այսու յետ։

Ղարիպ. Մայր անուշիկ, ե՛կ քու որդուդ դու օրհնիր,
Էլ ո՞վ գիտէ դուցէ չտեսնեմ քեզի։

Քոյրը. Նարգիզ քոյրդ, աղաչում է եղբայր իմ,
Թող քո միտքը, օտար երկիր մի գնայ։

Ղարիպ. Դու քո վիշտը աղօթքներով փարատիր,
Ուր որ գնամ, յոյս ունիմ որ, յետ կըգամ։

ԽԱՄԱՆ ՋԱՆ

Ես աղջիկ եմ եար կ'ուզեմ, եաման ջան.
Մէջքիս շալէ ճառ կ'ուզեմ, եաման ջան.
Որ տունն որ հարս երթամ, եաման ջան.
Ոսկին սարէսար կ'ուզեմ, եաման ջան։

Հարթը կոմուն կապեցի, եաման ջան.
Նստայ տակը կթեցի, եաման ջան.
Մեղր ու կարագ, կաթն ու իւղ, եաման ջան.
Աղիզ եարիս ղրկեցի, եաման ջան։

Բըլբուլ եմ վարդ մ'կուզեմ, եաման ջան.
Զիս սիրող եար մ'կուզեմ, եաման ջան.
Թէև վարդ դեռ չէ բացուած, եաման ջան.
Ես գիրկդ հանգչիլ կ'ուզեմ, եաման ջան:

Ա՜խ, մի հալիր մի մաշիր, եաման ջան.
Եւ իմ դարդս մի մարեր, եաման ջան.
Պիտի տեսնես զիս շուտով, եաման ջան.
Ես եարդ եմ շատ գութով, եաման ջան:

ԿՈԼԽՈԶՆԻԿ ԵԱՐ

Ես աղջիկ եմ թէլ կը մանեմ,
Թուշըս թուշիդ դէմ կը հանեմ,
Որ իմանաս քեզ կը սիրեմ
Սրտով. սիրած կոլխոզնիկ եար.
    Սրտով սիրած կոլխոզնիկ եար,
    Հոգիս չունի քուն ու դադար:

Խալխի առաջ նազ մի՛ արա,
Հի՛չ հանաքի չես դիմանայ,
Որ ուզում ես պաչիկ արա,
Բայց թէ ալէմը չիմանայ։
    Սրտով սիրած կոլխոզնիկ եար. եւլն։

Աչերիցըդ քունդ է փախեր,
Սիրոյ կայծից ջանդ է վառւել,
Մի՛ ամաչի, դարդ մի՛ արա,
Էլի խօսքով նազ մի՛ արա։

Արի գընանք դալմի բաղչէն,
Թև թևի տանք, ման գանք, եար ջան.
Պաչիկ ցանենք, պաչիկ քաղենք,
Աչք անողի աչքը հանենք։

ԵՍ ԱՂՋԻԿ ԵՄ

Ես աղջիկ եմ, հէր չունիմ,
    Վա՜յ, լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ՛, լէ, լէ, լէ՛.
Մի սըրտացաւ տէր չունիմ.
    Վա՜յ, լօ, լօ, լօ՛, լօ, լօ, լօ՛, լօ, լօ, լօ՛,
Հօրից, մօրից զըրկըւած՝
    Վա՜յ, լէ, լէ, լէ՛, լէ, լէ՛, լէ՛,
Աշխատող աղբէր չունիմ:
    Վա՜յ, լօ, լօ, լօ՛, լօ, լօ, լօ՛, լօ, լօ, լօ՛:

Ղարիբ հաւքը բուն չունի,
Որբ աղջիկը տուն չունի,
Ինձ նըման սեւաբախտը
Աշխարհքումըս ի՞նչ ունի։

Ծաղից արեւը սարէն,
Կանչից կաքաւը քարէն.
Սիրածս էլ ա ինձ տըւէք,
Լաւանայ սըրտիս եարէն։

Կ. Վ.

ԹՌՉՈՒՆԻ ՄՏԱԾՄՈՒՆՔԸ

Ես ապրում էի մի փոքրիկ տան մէջ,
    Առատ ու անփոյթ,
Աշխարհքն ինձ համար կլոր էր անվերջ,
    Կեղեւը կապոյտ։

Նըրանից յետոյ աչքըս բաց արի,
Մի փոքրիկ բընում,
Տեսայ՝ աշխարհքը յարդից է շինած,
Ու մայրս է շինում։

Մի օր ալ բընից գըլուխըս հանած,
Նայում եմ դէս դէն,
Տեսնեմ՝ աշխարհքը տերեւից շինած,
Մեր բոյնը վըրէն։

Հիմակ թըռչում եմ հեռո՜ւ, շատ հեռո՜ւ,
Ամէն տեղ գընում,
Բայց թէ աշխարհքը ինչի՞ց է շինած,
Էլ չեմ հասկընում։

Ա. ՏԵՐ ՂԱԶԱՐԵԱՆ — Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԵՍ ԲԼԲՈՒԼ ԵՄ

Ես բլբուլ եմ, մի բուն ունեմ,
Մի բուն ունեմ, սարին է.
Սիրտըս բոց է, սիրտըս խոց է,
Մէջը լիքը արին է։

Վա՜յ լէ՛ լէ՛ լէ՛, վա՜յ լէ՛, լէ՛ լէ՛ լէ՛,
Վա՜յ լէ՛, լէ՛ լէ՛ լէ՛, լէ՛ լէ՛ վա՜յ լէ՛ լէ՛:
Սիրտըս բոց է, սիրտըս խոց է,
Մէջը լիքը արին է:

Սիրտըս կուլայ կը մըղկըտայ,
Ցաւը թափեց թեւերըս.
Վարդըս քաղած, թուփը դատարկ,
Էլ ո՞ւմ սանեմ երգերըս։

Վա՜յ լէ՛ լէ՛ լէ՛, վա՜յ լէ՛, լէ՛ լէ՛ լէ՛,
Վա՜յ լէ՛ լէ՛ լէ՛ լէ՛ լէ՛ լէ՛, վա՜յ լէ՛ լէ՛:
Վարդըս քաղած, թուփը դատարկ,
Էլ ո՞ւմ սանեմ երգերըս:

Ռ. ՄԵԼԻՔԵԱՆ — Ա. ԽՆԿՈՅԵԱՆ

ԵՍ ԵԿԵԼ ԵՄ

(ԱՇՈՒՂ ՂԱՐԻԲ)

Ես եկել եմ որ դու ինձ մի տեղ տաս,
Եար ջան,
Ընկածների դրութիւնը հասկանաս,
Մայրս մեռնի, դու մեղապարտ կը մնաս
Եար ջան,
Սիրուն հայրիկ, մայրս փողոցում մընաց։

Ունեցածս կերայ, արի մեծ վնաս,
Եար ջան։
Կեանքում ոչ բաժին ունեմ, ոչ մի մաս,
Մօրս, քրոջս պահիր, մեծ վարձք կը ստանաս,
Եար ջան,
Սիրուն հայրիկ, մայրս փողոցում մնաց։

ԱՇՈՒՂ ՋԻՒԱՆԻ

ԳՈՎՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ես իմ անուշ Հայաստանի արեւահամ բառն եմ սիրում,
Մեր հին սազի ողբանուագ, լացակումած լարն եմ սիրում,
Արնանման ծաղիկների ու վարդերի բո՛յրը վառման,
Ու Նայիրեան աղջիկների հեզաճկուն պա՛րն եմ սիրում։

Սիրում եմ մեր երկինքը մուգ, ջրերը ջինջ, լիճը լուսէ,
Արեւն ամրան ու ձմեռուայ վիշապաձայն բուքը վսեմ,
Մթում կորած խրճիթների անհիւրընկալ պատերը սեւ,
Ու հնամեայ քաղաքների հազարամեայ քա՛րն եմ սիրում։

Ո՛ւր էլ լինեմ, չեմ մոռանայ ես ողբաձայն երգերը մեր,
Չե՛մ մոռանայ աղօթք դարձած երկաթագիր գրքերը մեր,
Ի՛նչքան էլ սո՛ւր սիրտըս խոցեն արիւնաքամ վէրքերը մեր,
Էլի՛ ես որբ ու արնավառ՝ իմ Հայաստան-եարն եմ սիրում։

Իմ կարօտած սրտի համար ո՛չ մի ուրիշ հէքեաթ չկայ,
Նարեկացու, Քուչակի պէս լուսապսակ ճակատ չկայ,
Աշխա՛րհ անցիր, Արարատի նման ճերմակ գագաթ չկայ,
Ինչպէս անհաս փառքի ճամբայ՝ ես իմ Մասիս սա՛րն եմ սիրում։

Զ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԵՂԻՇԷ ՉԱՐԵՆՑ

ՀԱՅՐԵՆԻ ԳԱՐՈՒՆ

Ես իմ աշխարհի գարունը կ'ուզեմ
Զուարթ ու վսեմ, գետակը փրփուր,
Հաւքերը կայտառ, ծաղիկը պայծառ։

Այս օտար երկրի գարունն է մռայլ,
Ծաղիկը անփայլ, արեւը կրակ,
Գետակը տխուր, թռչունները լուռ։

Մեր սիրուն ձորի զեփիւռն է քնքուշ,
Արեւը անուշ։
Ա՜խ, իմ աշխարհի գարնան եմ կարօտ,
Անուշ ու հոտոտ։

Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

Յ. ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ

ԵՐԱԶ

Ես լսեցի մի անուշ ձայն,—
Իմ ծերացած մօր մօտ էր.
Փայլեց նշոյլ ուրախութեան,
Բայց ափսո՜ս որ երազ էր։

Կարկաչահոս աղբիւրն այնտեղ
Թաւալում էր մարգարիտ.
Նա յստակ էր որպէս բիւրեղ,
Այն երազ էր ցնորամիտ։

Եւ մեղեդին տխուր, մայրենի,
Յիշեց մանկութեանս օրեր.—
Մօրս համբոյրն ես զգացի,—
Ա՜խ, ափսո՜ս որ երազ էր։

Կրծքին սեղմեց կարօտագին,
Աչքերս սրբեց — շատ թաց էր,—
Բայց արտասուքս գնում էին,—
Ա՜խ, այդ ինչո՞ւ երազ էր։

Բ. ԿԱՆԱՉԵԱՆ

Ս. ՇԱՀԱԶԻԶ

ՓՈՂ ՈՒՆԵ՞Ս
(ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ)

— Ես կը գնամ միայն նրան,
Ո՛վ որ փողեր շատ ունի.
Ո՛վ որ փողեր շատ ունի,
Դարդ ու ցաւեր հէչ չունի։
— Փող ունե՞ս, — հա՛, հա՛, — փող ունե՞ս, — հա՛, հա՛...
— Փող ունես՝ ես քոնն եմ. փող չունես՝ գնա՛ կորիր։

= Քեզ կը սիրեմ մի պայմանաւ,
Որ ինձ անկեղծ եար լինես.
Որ ինձ անկեղծ եար լինես,
Դարդ ու ցաւից ազատես,
— Փող ունեմ, — գալի՞ս ես, — փող ունեմ, — գալի՞ս ես.
— Գիտեմ դու գալիս ես, գիտեմ դու հոգիս ես։

— Փողը մի այնպիսի բան է,
Որի ուժը շատ մեծ է.
Որի ուժը շատ մեծ է,
Դարդ ու ցաւից կ'ազատէ։
— Փող ունե՞ս — հա՛, հա՛, փող ունե՞ս, եւլն.

= Սէրը մի այնպիսի բան է,
Որի ուժը շատ մեծ է.
Որի ուժը շատ մեծ է,
Դարդ ու ցաւից կ'ազատէ։
— Փող ունեմ, գալի՞ս ես, փող ունեմ, եւլն.։

ԵՍ ՂԱՐԻԲՆ ԵՄ
(ԱՇՈՒՂ ՂԱՐԻԲ)

— Ես Ղարիբն եմ, բլբուլ եմ,
Բլբուլ եմ՝ ալ վարդ կ'ուզեմ.
Եարըս տեսայ, ալ վարդ էր,
Բլբուլ եմ՝ ալ վարդ կ'ուզեմ։

— Եարիս բոյը չինարի,
Ինքը նազլի նազանի.
Աչքերը աստղի նըման,
Ունքերը մէկ մէկ կամար։

— Լուսաչաղից գեղեցիկ,
Արքայական մի թուշնիկ.
Հեզ ոսկեթել մազերով,
Կեանքըս խլեց նազերով։

— Տեղը գրեց մի փունջ հիւս,
Տոչոր սրտիս որպէս յոյս,
Որ ես լարեմ՝ լարեր լոյս,
Երգեմ չըքնաղ սէրը կոյս։

ԱՇՈՒՂ ՋԻՒԱՆԻ

ԵՍ ՄԷ ՂԱՐԻԲ ԲՈՒԼԲՈՒԼ

Ես մէ զարիբ բուլբուլի պէս, զուն ծակէ զափազի նըման.
Լըէզըս գի վուտից տակըն՝ անց կա՛ց, փիանդազի նըման.
Եա՛ր, քիզից խօսիլ իմ ուզում՝ Շահի իլթիմազի նըման.
Աջայիբ սուրաթի տէր իս՝ ռանգըրդ է զուլզաղի նըման։

Եա՛ր, մտիկ խա բաղչի մէջըն, աջայիբ սէյրան խա անում.
Շուշկըդ արեգագի նման է՝ տեսնօղին հէյրան խա անում.
Ջիգարիս կըրակ խա տըլլի, էրվում իմ՝ բիրիան խա անում.
Վո՛ւնց մէ գօղալ չ'է ունիցի՝ էտ քու արած նազի նըման։

Հէնց իմացի՛ եա՛ր, քու զուլ իմ, թանգ հախօվ գընած չը-
րաղ իմ.
Դըրանըդ նընգած ըլիմ. օ՛վ տէսնէ, ասէ՝ տուսաղ իմ.
Էշխէմէդ հիվանդացիլ իմ, վո՛ւնց մեռնում իմ, վո՛ւնց թէ
սաղ իմ։
Ծօվի պէս ուրաղան իմ տալիս, գըժվիլ իմ Արազի նըման։

Օ՛վ կու տէսնէ՝ ջունուն կու՛լի՝ բարդ էրէսից խալ խա անում.
Էլ ջուքամըն զո՛ւն կու քաշիս, չուն մահիս՝ խիալ խա անում.
Եա՛ր, ես քիզ բարօվ իմ տալիս, —չուռ խա գալի զալ խա անում՝
Զունքի խօսկըդ անց է կէնում բէլլու չահանդարի նըման։

Սայաթ-Նօվէն ասաց՝ կու լամ, չ'իմ լաց ըլի՝ թէ ճար ունէնամ.
Էլ ե՛ս կու քաշիմ էս զուսէն՝ թո՛ւղ 'լի ահ ու զար ունէնամ.
Եա՛ր, քիզ վըրէն արք ունէնամ, մէ լավ խիտիար ունէնամ՝
Առնում, տանիմ մէջլիսնիրըն՝ օսկէջըրած սազի նըման։

ՍԱՅԵԱԹ - ՆՕՎԱ

ԵՍ ՄԻ ԳԱՆԳԱՏ ՈՒՆԵՄ

(ԱՇՈՒՂ ՂԱՐԻԲ)

Ես մի գանգատ ունեմ՝ բաղդի չըջանից,
Բաղդը ինձ հետ թշնամացաւ, ես ինչպէ՞ս անեմ,
Ես ինչպէ՞ս անեմ, ես ինչպէ՞ս անեմ:

Վախենում եմ՝ անջատուեմ սիրած եարիցըս,
Կանչել է սիրուհիս, որ շուտով ես հասնեմ
Որ շուտով ես հասնեմ, որ շուտով ես հասնեմ:

Սգաւոր է սիրուհիս, գիտեմ անշուք է,
Թէ չհասնեմ նրան՝ ինձ համար ամօթ է,
Ինձ համար ամօթ է, ինձ համար ամօթ է:

Հիմայ ճանապարհը ձմեռ է, բուք է,
Սիրուհիս ինձ սպասում է, ես ինչպէ՞ս անեմ,
Ես ինչպէ՞ս անեմ, ես ինչպէ՞ս անեմ:

ԱՇՈՒՂ ՋԻՒԱՆԻ

ԵՍ ՈՐ ՄԵՌՆԻՄ

Ես որ մեռնիմ՝ ինձ կը թաղէք խնձորենու շուքին տակ,
Որ գարունքին չիրմիս ծուփ գան ծաղիկները բոլորտակ.
Եւ ամառը աղջիկներն ալ վըրաս կանգնին՝ երգելով,
Թաղեն, լեցնեն գոգն ու ծոցը, կարմիր կարմիր խնձորով:

Եւ աշունքին՝ սիրոյս նըման մեռած լացած մի երազ,
Տերեւները թալուկ ու դեղին՝ իջնեն մեռնին իմ վըրաս:
Երբ ձմեռ գայ լըռին ու հեզ. տերեւները ճիւղերէն
Շիրմիս կաթին արցունքի պէս մենութեան մէջ ձիւնեղէն:

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

Ա. ՊԱՐԹԵՒԵԱՆ

ԵՍ ՈՐ ՏԵՍԱՅ

(ԱՇՈՒՂ ՂԱՐԻԲ)

Ես որ տեսայ սիրտս եղաւ ցիրուցան,
Երկնային կրակը վառուեց իմ սրտում:

Ինձ թուաց թէ նորից դէմքը աննըման,
Ես տեսնում եմ քընիս մէջը երազում:

Ես լսեցի մի անուշ ձայն՝ սիրտ մաշող,
Այնքան նման քաջի ձայնին՝ սէր երգող:

Սիրտս թընդաց անուշ երգի բերկրանքով,
Սիրում եմ նրան, սիրում եմ ջերմ սիրով:

ԱՇՈՒՂ ՋԻՒԱՆԻ

ԵՍ ՈՐՔԱՆ ԷԼ (*)

(ՄԱՇԴԻ ԻԲԱԴ)

Ես որքան էլ ծերացած լինեմ,
Հազար ջահելի կարժենամ,
Աղջիկ չեմ ուզի ամէն մարդուց,
Ամէնի տանը ես չեմ գնա,
Չեմ բարեւի ամէնին։

Ե՛կ, Գիւլնազ խանում, ինձ մօտ ե՛կ,
Իմ անգինըս, ինձ մօտ ե՛կ,
Քե՛զ մատաղ, քե՛զ մատաղ, քե՛զ մատաղ ե՛կ։
Դու ես ճարը իմ ցաւերի,
Չեմ խնայի իմ կեանքս, իմ ջանս,
Իմ մալս, իմ փողս քեզ։

ԵՍ ՉԵՄ ԹՈՂՆԻ

(ԱՇՈՒՂ ՂԱՐԻԲ)

—Ես չեմ թողնի որ առանց ինձ դու տխրես,
Սանամ, դու տխրես.
Կը տամ քեզի այս նուէրը յիշատակ,
Սանամ, յիշատակ.
Գընում եմ, գընում եմ, հեռանում եմ ես,
Բաժանւում եմ, բաժանւում եմ ես քեզանից։

(*) *Յետոյ երգել՝* «Մաշդի Իբադ դու մեր տունը»։

—Գնա՛, Ղարիբ, ճամբիցըդ յետ մի մնայ,
Ղարիբ, մի մնայ.
Ակամայից յօժարեցայ ես հիմա,
Ղարիբ ես հիմա.
Այրւում եմ, խորվում եմ, ես քո կրակով,
Վառւում եմ, խորվում եմ, ես քո սիրով։

—Թող նա լինի մինչեւ դարձս, քեզ ընկեր,
Սանամ, քեզ ընկեր.
Պահէ՛ նրան քո կրծքին տակ ամէն օր,
Սանամ, ամէն օր.
Այրւում եմ, տանջւում եմ, ես քո հայեացքով,
Վառւում եմ, խորվում եմ, ես քո կրակով։

ԱՇՈՒՂ ՋԻՒԱՆԻ

ԵՍ ՍԱՐԷՆ ԿՈՒԳԱՅԻ (*)

Ես սարէն կուգայի՝
Դուն դուռը բացիր,
Ձեռըդ ծոցըդ տարար՝
Ա՛խ արիր, լացիր։
Վա՛յ. վա՛յ, վա՛յ, վառւում եմ,
Վա՛յ. վա՛յ, վա՛յ, ճաղւում եմ,
Հալւում եմ, վառւում եմ։

Ես մի պինդ պաղ էի՝
Դու մըմուռ լացիր.
Քո հրեղէն արցունքով
Ինձի հալեցիր։

(*) *Յաջորդաբար կ'երգուի՝* «Զինչ ու զինչ տամ» *եւ* «Քէլէր ցոլէր»։

Ես մի չոր ծառ էի՝
Դու գարնան արև,
Քո սիրով ծաղկեցաւ
Իմ ճիւղն ու տերև։

Թէ ինձ չէիր առնի՝
Ինչո՞ւ սիրեցիր.
Մի բուռ կրակ եղար՝
Սիրտըս էրեցիր։

Կ. Վ.

ԳԱՂՏՆԻՔ

Ես սիրել եմ վարդը ալժգոյն
Սիրուց տանջուած այտերի,
Մելամաղձոտ խաղաղութիւն,
Զոյգ սևորակ աչքերի։

Ես պահել եմ սրտիս խորքում
Մի լուռ գաղտնիք սիրային,
Եւ այն երբեք, ոչ մի երգում
Յայտնելու չեմ աշխարհին։

Բայց և պահել անկարող եմ,
Օ՜, դըժուար է համբերել,
Չասել՝ ինչո՛վ բաղդաւոր եմ,
Չասել՝ ինչպէ՛ս եմ սիրել։

Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԵՍ ՍԻՐԵՑԻ

Ես սիրեցի. բայց ոչ ոք
Սիրածներէս գիտցաւ թէ
Զինքը ո՛րքան սիրեցի...
Ո՞վ կարդալ սիրտը գիտէ։

Ամենէն մեծ հրճուանքիս,
Ամենէն սուր վիշտերուս
Ներշնչողները, աւա՜ղ,
Զիս չեն ճանչնար այս պահուս։

Սէրըս կարծես այն գետն էր՝
Որ իր հոսանքը անբաւ
Առաւ լերան ձիւներէն
Ու լեռը զայն չըտեսաւ։

Սէրըս այն դուռն էր կարծես՝
Ուրկէ ոչ ոք մըտաւ ներս.
Ծաղիկներով ծածկըւած՝
Գաղտնի պարտէզ մըն էր սէրս։

Եւ եթէ սէրըս ոմանք
Երկինքին վրայ՝ անսահմա՛ն
Տեսան ծուխի մը նըման,
Կըրակն անոր չըտեսան...։

Ես սիրեցի, բայց ոչ ոք
Սիրածներէս գիտցաւ թէ
Զինքը ո՛րքան սիրեցի...
Ո՞վ կարդալ սիրտը գիտէ։

Գ. ԱԼԵՄՇԱՀ　　　Վ. ԹԷՔԷԵԱՆ

ԵՐԳ ՍԻՐՈՅ

Ես սիրել եմ մի զոյգ աչեր,
Նման փայլուն աստղերի.
Նրանք խորն են որպէս եթեր,
Նման յուզուող ջրերի։

Ես գերուեցայ նոցա փայլից,
Արար աշխարհ մոռացայ,
Չքնաղ կոյսին ջերմ կարօտից,
Աշուղ դարձայ երգ հիւսեցի։

Կանաչ կարմիր փունջ կապեցի
Որ իմ սիրած եարին տամ.
Նա անգութ էր ձեռքէս չառաւ.
Թողուց որ սեւ բախտըս լամ։

Բայց այն կոյսը անտարբեր էր,
Սէրըս նրան չէր գրաւում,
Իմ վառ սէրը լոկ ցնորք էր,
Նա տեղ չունէր աշխարհում։

ԿԱՐՄԻՐ ԱՐԵՒ

Ես սիրում եմ կարմիր արեւ,
Ես սիրում եմ կանաչ տերեւ.
Ա՛յ, արեւիկ, ծիւ, ծիւ, ծիւ,
Ա՛յ, տերեւիկ, տիւ, տիւ, տիւ։

Ինձ տըւել էք երկու թեւիկ,
Ինձ տըւել էք փոքրիկ սըրտիկ.
Ա՛յ, իմ թեւիկ, ծիւ, ծիւ, ծիւ,
Ա՛յ, իմ սըրտիկ, տիւ, տիւ, տիւ։

Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ — Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԵՍ ՔՈՒ ՂԻՄԷԹԸՆ

Ես քու ղիմէթըն չ՚իմ գիդի՝
Ջավահիր քարին նըմանիս.
Տէսնօղին Մէջլում կու չինիս՝
Լէյլի՝ գիդարի նըման իս։

Աշխարումըս իմըն դու՛ն իս
Բէմուրվաթ իս, մուրվաթ չ՚ունիս.
Պըռօշնէրից նարաթ ունիս,—
Ղանդու չաքարի նըման իս։

Դադա պիտի՝ թարիփդ ասէ,—
Ակնէքըդ խաղուծ սրմաթ է,
Ունքըդ Փըռանգի ատլաս է,—
Ջար պալամքարի նըման իս։

Մադիրըդ նըման ռէհանի
Դուն ուրիշ խիալ մի՛ անի,
Ուահմ արա՛, հօքիս մի՛ հանի,—
Մուրվաթօվ խարի նըման իս։

Վո՞ւնց ղիմանամ էշխի չարին՝
Աշկէմէս կաթում է արին.
Սայա՛թ-Նօվա, նաղլու խարին
Գըրնած նօքարի նըման իս։

ՍԱՅԵԱԹ-ՆՕՎԱ

ԵՏ ԴԱ՛Ռ, Ե՛Տ, ԻԳԻ՛Թ (*)

(ԱՆՈՒՇ)

Ետ դա՛ռ, ե՛տ, իգի՛թ,
Ետ դառ, անիրա՛ւ
Կարօտած եարիդ
Աչքը ջուր դառաւ։

Ոչխարդ էն սարում
Ցուռ տուր տուն արի՛,
Փախի՛ր գիշերով
Ու թագուն արի...

Ա՛խ, էն կանանչ սարի լանջին
Ո՛վ է քընած էն տըղէն,
Վըրէն քաշած սև եափընջին,
Կուռը հանած էն տըղէն...

Ջա՜ն, իմ եարն է, ջանի՜ն մեռնեմ,
Ծաղկի հոտով նա հարբել,
Սարի լանջին, հովի միջին
Մուշ-մո՛ւշ, անուշ մըրափել։

Վե՛ր կաց վե՛ր, իգի՛թ,
Վե՛ր կաց, անիրա՛ւ,
Ոչխարըդ բեր կիթ,
Օրը ճաշ դառաւ...

Արի՛, ջա՛ն, արի՛,
Քու գալուն մեռնեմ,
Թուխ չորան, արի՛,
Կարօտըս առնեմ...

(*) Նախ երգել՝ «Սիրուն աղջի՛կ ի՞նչ ես լալիս»:

Տեսէ՛ք, տեսէ՛ք, դափ ու զուռնով
Ի՞նչ հարսանիք է դուրս գալի,
Մարդիկ ուրախ՝ թօն ու ձենով
Ձի են խաղում, չափ տալի...

Աղջի, աղջի, մըտիկ արէք,
Էս ի՛նչ տեսիլք ես տեսայ,
Ո՛վ էր տեսել էսպէս հարսնիք—
Ո՛չ հարս ունեն, ոչ փեսայ...։

Բերում են հըրէ՛ն,
Ամա՜ն, մեր տան դէմ
Վե՛ր դըրէք, վըրէն
Հիւսերըս քանդեմ...

Ես էլ եմ գալի՛ս,
Էդ ո՞ւր էք տանում...
Ինձ էլ թաղեցէք
Իր գերեզմանում...

Ա՛խ, չէ՛, ամա՜ն, ասում են դա
Մի դիակ է յո՛ւռ, սառա՛ծ,
Արիւնը չոր՝ դէմքի վըրայ,
Աչքերն անթա՛րթ, սիպտակած:

Նա սիրուն էր անուշահոտ,
Աչքերը լի ծիծաղով,
Նա գալիս էր ցօղոտ-շաղոտ,
Հանաքներով ու խաղով...

Արի՛, ջա՛ն իգիթ,
Արի՛, անիրա՛ւ,
Կարօտած եարիդ
Աչքը ջուր դառաւ։

Էլ մի՛ ուշացնի,
Ես շատ եմ կացել,
Էլ մի՛ լացացնի,
Ես շատ եմ լացել.
Տե՛ս կը խըռովե՛մ,
Լաց կըլեմ ես է՛լ...
Չեմ խօսիլ քեզ հե՛տ...
Չեմ սիրել քեզ է՛լ...։
Վուշ-վո՜ւշ, Անո՜ւշ, վուշ-վո՜ւշ, քուրի՛կ,
Վո՜ւշ, քու սէրին, քու եարին,
Վուշ-վո՜ւշ, Սարօ՛, վուշ-վո՜ւշ, իգի՛թ,
Վո՜ւշ — քու սիրած սարերին...։

Ա. ՏԻԳՐԱՆԵԱՆ   Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԵՐԱԶՈՒՄՍ ՄԻ ԱՍՏՂ ՏԵՍԱՅ
(ԱՇՈՒՂ ՂԱՐԻԲ)

Երազումս մի աստղ տեսայ,
Մայրիկ, Թիֆլիս քաղաքումը,
Կ'ուզեմ տեսնել ա՛խ, ես նրան,
Մայրիկ, Թիֆլիս քաղաքումը։
Սիրոյ շանթը ա՛խ, ինձ կըպաւ,
Մայրիկ, Թիֆլիս քաղաքումը.
Սանամի սէր՝ սըրտիս կըպաւ,
Մայրիկ, Թիֆլիս քաղաքումը։
Սիրունների անգրանիկն է,
Արեւ չէ այլ արփինիկ է,
Խօջա Սահակի աղջիկը,
Մայրիկ, Թիֆլիս քաղաքումը։

ԱՇՈՒՂ ՋԻՒԱՆԻ

ՂԱՐԻԲ ԵՒ ՍԱՆԱՄ
(ԱՇՈՒՂ ՂԱՐԻԲ)

—Երազումս տեսայ կոյսն գեղեցիկ,
Ա՛խ, նրա սափորի ջուրն էր անուշիկ.
Ա՛խ, այդ քո աչերը,
Երկնային հայեացքը,
Քո կամար յօնքերը։
—Երազիս մէջ ինձ հետ անուշ խօսեցիր,
Ոսկէ թասով անմահական ջուր տըւիր.
—Հարբեցրիր ինձի, դառայ ես խեղադար,
Չունիմ հանգիստ, չունիմ դադար քեզ համար.
—Ի՞նչ հրաշքով պատահեցանք մենք միմեանց,
Նոր լոյս ծագեց, նոր արեգակ մեզ համար։

ԱՇՈՒՂ ՋԻՒԱՆԻ

ԵՐԵՒԱՆԱՅ ՍԱՐԻՑՆ ԵՄ

Երեւանայ սարիցն եմ,
Մեծ բաղի խնձորիցն եմ.
Վայ լէ լէ, լէ լէ, լէ լէ,
Վայ լէ լէ, լէ լէ, լէ լէ.
Քամին տուեց թալ արեց
Վաթանս մոլար արեց։
Արազը հեշտացել ա,
Ճամբէքը կօշտացել ա.
Ի՞նչ անեմ հօրս ու մօրս,
Դարդերս շատացել ա։
Առուի վրի ճիչ խոտը,
Շան տղի անուշ հոտը,
Բխով ելաւ ոտքս ինկաւ
Մեխակ եղաւ ծոցս ինկաւ։

ԱՐԱՐԱՏԵԱՆ

ԵՐԵՒԱՆ ԲԱՂ ԵՄ ԱՐԵԼ

Երեւան բաղ եմ արել,
Նէյնիմ աման, նէյնիմ աման, նէյնիմ աման,
Չիգեարըս տաղ եմ արել,
Բոյիդ մեռնիմ, սարի աղջիկ, սիրուն աղջիկ.
Սարի մարալ, ջէյրան աղջիկ:

Տօսղ ու դուշմանի միջին,
Նէյնիմ աման, նէյնիմ աման, նէյնիմ աման,
Լացըս ծիծաղ եմ արել.
Բոյիդ մեռնիմ. սարի աղջիկ. սիրուն աղջիկ,
Սարի մարալ, ջէյրան աղջիկ:

Կանգնել եմ, գալ չեմ կարող.
Նէյնիմ աման. նէյնիմ աման. նէյնիմ աման.
Լըցուել եմ, լալ չեմ կարող.
Բոյիդ մեռնիմ, սարի աղջիկ. սիրուն աղջիկ.
Սարի մարալ. ջէյրան աղջիկ:

Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

ԵՐԵՒԱՆ ԲԱՂ ԵՄ ԱՐԵԼ (*)

Երեւան բաղ եմ արել.
Ջան ա՛րեւ, ա՛րեւ աղբէրըս.

Հոգիս մատաղ եմ արել,
Իմ ա՛րեւ, ա՛րեւ աղբէրըս.

Էլի, բարեկամի մօտ,
Ջան ա՛րեւ, ա՛րեւ աղբէրըս,

Լալըս ծիծաղ եմ արել,
Իմ ա՛րեւ, ա՛րեւ աղբէրըս:

Կ. Վ.

(*) *Յետոյ կարելի է երգել՝* «Տուն արի, *և* «Արեւը կայնե կէսօր»:

Ա՛Խ ՍԻՐՈՒՆ ՍԻՐԱԿԱՆ

Երեւանից դուրս եկայ
Թիֆլիս քաղքին մօտեցայ,
Փողոց, փողոց ման եկայ,
Սիրականս չտեսայ:
Ա՛խ, սիրուն սիրական,
Ինձ մի թողուր անպաշտպան:

Սիրականըս ուշացաւ,
Դրուժինս գէշացաւ,
Եկայ ճամբան նայելու,
Ամբողջ կեանքս մաշեցաւ:
Ա՛խ, սիրուն սիրական,
Ինձ մի թողուր անպաշտպան:

ԱՌԱՋԻՆ ՍԷՐ

Երէկ տեսայ քեզ պարտիզում,
Ծաղկած էիր վարդի պէս.
Եւ քո պատկերդ հոգուս խորքում
Նկարուեցաւ լուսատես:

Այնտեղ, ո՛վ կոյս, ինձ գերեցիր,
Այնտեղ ես քեզ սիրեցի,
Այնտեղ հոգիս ջերմ, սիրալիր
Ես քեզ ընծայ բերեցի:

Այժմ չունիմ մի ուրախ ժամ,
Տըխուր է սիրտս իբր դագաղ,
Ես մեռանել մինչեւ անգամ
Ցանկանում եմ, ո՛հ, աւա՛ղ:

Որպէս օձից՝ ժանտ թունաւոր
Դու ինձանից փախչում ես.
Տեսանելով ինձ սգաւոր՝
Ծիծաղում ես, խնդում ես...

Ս. ՇԱՀԱԶԻԶ

ՏՈՒՆ ԱՐԻ

Երթիկ, երթիկ բանել ես,
Երթկայ տակին կանել ես.

Տուն արի, տուն արի, տուն արի, եա՛ր,
Մթնել ա, տուն արի, անչիզեար եար,
Կանչըմ եմ, եար, արի, եարալու եար:

Ջէն տուր՝ ձէնըս չառար,
Մաղեամ ինձէն ջորե՞լ ես։

Ջուն գնեմ թուէն խաշեմ,
Ելնեմ երթիկը աշեմ,
Տեսնեմ եարս գալիս ա,
Զոքեմ չաքմէքը քաշեմ։

Հանդէն գաս գեղը մտնես,
Իմ քցած տեղը մտնես,
Ընձէն գլուման եար բանես,
Բէմուրազ հողը մտնես։

Ծառնե՛ր, դուք ծիրան միք տայ,
Ճղներ, դուք էլ բար միք տայ,
Ես ղարիբ եմ, ղոնախ եմ,
Դարդերս իրար միք տայ։

ԵՐԿԱՐԻՐ ԳԻՇԵՐ

Երկարի՛ր գիշեր, մեծ սարի դարձի՛ր,
Դաժան, սեւ խաւա՛ր, իջի՛ր, թանձրացի՛ր,
Իմ մուրազն առայ այսօր իրիկուն,
Վերջապէս եկաւ հիւր եարս թաքուն։

Եօթ սարի ետեւ կանգնի՛ր, արշալո՛յս,
Թէ չէ կը փախցնէ սիրածիս քո լոյս.
Թող յաւէտ այսպէս խաւարում մնամ,
Միայն եարս միշտ կրծքիս ունենամ։

ՆԱՀԱՊԵՏ ՔՈՒՉԱԿ

ԵՐԿԻՆՔՆ ԱՄՊԵԼ Է

Երկինքըն ամպել է,
Ի՜նչ անուշ թոն է.
Գամ գըռնէն անցնեմ՝
Հօգեակըս հոն է։

Երկինքըն ամպել է,
Գետինը թաց է.
Եարըս քընել է,
Երեսը բաց է։

Երկինքըն ամպել է,
Ի՜նչ անուշ երակ.
Սըրտիս մէջ լըցաւ
Մի բուռը կըրակ։

Երկինքըն ամպել է,
Գետին չաղերով.
Ես քեզ սիրել եմ
Անուշ խաղերով։

Երկինքըն ամպել է,
Գետինը մութ է.
Ես քեզ ուզել եմ,
Թո՛ղ ասեն՝ սուտ է։

Նորո՛ւր, դու, չէկի՛կ եար,
Տեսնեմ՝ դու ո՛ւմն ես.
Իրաւ եմ ասում՝
Դու իմ սըրտումն ես։

Կ. Վ.

ԳԱՐՈՒՆ

Եւ այս գարուն կ'անցնի շուտով,
Կը թառամի մանուշակ,
Կ'ծածկուի սեւ վարագուրով
Երկնից դէմքը անուշակ։

Միայն սէրը միշտ կը մնայ
Իմ սրտումը կենդանի,
Ոչի՛նչ՝ սիրող սրտի վերայ,
Բռնանալու ոյժ չունի։

Ա. ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ

ՄՇԵՑԻ ՊԱՆԴՈՒԽՏԻ ԵՐԳԸ

Եօթն օր, եօթ գիշեր
Համային ի գօտիս թառամըշեր,
Եար մզիկ գըռնէն զուրս չելներ,
Փըշուր մի սիրտ մըշիկ խալներ։
Վա՛յ, լօ՛, վա՛յ, լօ՛, վա՛յ, լօ՛, վա՛յ, լօ՛:
Եարսի խըռովա, շամամ թըռումա.

Երթամ Ստամբօլ,
Դաղիմ փարա բօլ,
Իմ եարի համար
Առնիմ ջուխտ մի սօլ.
Արի՛, եար, արի՛, խըռով մի՛ կենայ,
Աստուծոյ բանն, եա՛ր, մըզիկ չի՛ մնայ:

Առնիմ զգամբուրբէս՝
Ցեխնամ քու մամու յերդիս,
Զիմ կարբուս ձէն լըսես,
Անուշ քընէզ ի զարթիս.

Կայներ ես յիգին՝
Խաղող կու քաղես,
Համամ ծըծերով՝
Շաքար կու մաղես,
Ալմաստ բիչաղով՝
Զիմ սիրտ կու զաղես:

Արի՛, եար, արի, եւայլն։

Ազջի, էրեցայ քու դարդէն,
Գամ նըստիմ քու հէրանց բաղչէն,
Լ՛նքան զարնեմ, է՛նքան ասեմ,
Զուր հալի միս, թափի իմ ջանէն.
Արթուն թէ քընած՝
Ընկել եմ քու փէշ,
Խօցերս շատ են,
Մի՛ անիր ինձ գէշ.
Կը մեռնիմ սիրով,
Կը տեսնես իմ լէշ:
Կանչեմ՝ եա՛ր, արի՛, — Ճարիկ ձէն չի՛ տայ,
Ընկեր եալցըր եուն՝ անուն էլ չի՛ տայ:

Կ. Վ.

ԳԱՐԵՐԳ ԹՌՆՈՑԻ (*)

Զա՛ր՝ զը՛նգը, զա՛ր՝ զընգը, բո՛ղ զընգա.
Պարենք գիշեր լուսընկայ:
Էս գիշեր՝ լուսնակ գիշեր,
Զա՛ր՝ զընգը, զա՛ր՝ զընգը, բո՛ղ զընգա.
Ձիւնն եկեր՝ գետին նախշեր,
Պարենք գիշեր լուսընկայ:
Էլի պարը բոլորուի,
Զա՛ր՝ զընգը, զար՝ զընգը. բո՛ղ զընգա,
Եարըս միջին մոլորուի,
Պարենք գիշեր լուսընկայ:

Կ. Վ.

ԶԱՐԿԵՑԷՔ ԹԱՌԸ

Զարկեցէ՛ք թառը,
Մորթեցէ՛ք գառը,
Գինու պակալը
Թանկ արժէ:

Ի՞նչ էք երազում,
Ոսկի էք դիզում,
Էս փուճ աշխարհից
Ի՞նչ էք սպասում,
Մեռնիլը որ կայ
Ամենիս համար,
Ամենիս համար
Է մահը:

Զարկեցէ՛ք թառը,
Մորթեցէ՛ք գառը,
Գինու պակալը
Թանկ արժէ:

(*) *Նախապէս երգել՝* «Հինգ էծ ունիմ»:

ԶԻՆՉ ՈՒ ԶԻՆՉ ՏԱՄ (*)

Զի՞նչ ու զի՞նչ տամ լողուորչուն.—
Զոմս զոմս էր.—
Զիմ լաչակ տամ լողուորչուն.
Թոմս թոմս էր.
Ո՛չ էառ, ո՛չ հաւնեցաւ,
Զոմս զոմս էր.
Ո՛չ եհան, ծամկալ ծոցէն:
Թոմս թոմս էր:

Զի՞նչ ու զի՞նչ տամ լողուորչուն.—
Զիմ մէջկապ տամ լողուորչուն.
Ո՛չ էառ, ո՛չ հաւնեցաւ,
Ո՛չ եհան ծամկալ ծոցէն:

Զի՞նչ ու զի՞նչ տամ լողուորչուն.—
Զիմ չապիկ տամ լողուորչուն.
Ո՛չ էառ, ո՛չ հաւնեցաւ,
Ո՛չ եհան ծամկալ ծոցէն:

Զի՞նչ ու զի՞նչ տամ լողուորչուն.—
Լուսնակ գիշեր պագ մը տուի.
Հետ էառ, հետ հաւնեցաւ,
Հետ եհան ծամկալ ծոցէն:

Կ. Վ.

(*) *Ցետոյ՝* «Իմ գլխու մուքէն կիտամ»:

ԶՈՅԳ ԶՈՅԳ ԿՌՈՒՆԿ

Զոյգ զոյգ կըռունկ երկան վիզ,
Պապօ, մամօ կարգէք զիս։

Համ զիւլ, համ վարդ, համ ճարգիգ,
Պապօ, մամօ կարգէք զիս:

Ալիպուխտը քնա՛մ ես,
Ես ինչ պապու քայ է։

Էզման մեռել բոռկեն վիզ,
Պապօ, մամօ կարգէք զիս:

Կ. Վ.

ԶՈՒԱՐԹ ՆԱՒԱՍՏԻՆ

Զուարթ նաւաստին
Ծովերուն վըրայ,
Հովին հոսանքին
Դիմագրաւ կ'երթայ։

Ձերդ ծովու թռչուն
Մինչ ծայրը կայմին,
Իր երգը հընչուն
Կը յանձնէ հովին։

Կ'անցնի վըտանգէն
Աշխոյժ եւ ուրախ,
Ու չազդեր իրեն
Մըրրիկն անգամ վախ։

Սև ամպն ալ վերէն
Երբ իջնէ գըլխուն՝
Կը կրկնէ նորէն
Իր երգը հընչուն։

Զ. Հ. ԱՍԱՏՈՒՐ

ԶՈՒԳՈՒԱԾ, ԶԱՐԴԱՐՈՒԱԾ

Զուգուած, զարդարուած թաւիշ կանաչով,
Ցոլում են դաշտեր ոսկի ճաճանչով։

Մայիսը սիրուն գոհար է մաղել.
Թերթերը ծաղկանց ցոլքով շաղախել։

Հազար հազարով թըռչուն է երգում—
Դաշտերը կանաչ զընգում-զըրընգում։

Ա. ԽՆԿՈՅԵԱՆ

ՔԱՄԱՆՉԱ

Էմէն սազի մէջըն գօված ղո՛ւն թամամ ղան իս, քամանչա.
Նաքաղ մարթ քիզ չ'ի կանա ճէանի դուն նըրա պան իս քամանչա.

Ղատ արա՝ էլ լավ օրէրուն էղիլըն հանիս, քամանչա.
Քիզ ինձնից օ՞վ կանայ խըլի՝ աշուղի բան իս, քամանչա։

Անգաճըդ էրծաթէն պիտի, գըլուխըդ ջավահիր քարած,
Կուրծըդ չիրմայէմէն պիտի, փուրըդ սադաֆօվ նախշ արած,
Սիմըդ օսկէն քաշած պիտի, էրկաթըդ փանջարա արած
Օչ օվ գիմէթըդ չ'ի գիդի՝ լալ ու ալմասն իս, քամանչա։

Ծիպուտըդ վարազնած պիտի՝ թահր ունէնայ հազար ռանգօվ.
Ձարըդ ռաշի կուղէն պիտի՝ վուր դուն խօսիս քաղցըր հանգօվ.
Շատին զարթուն կու լուսացցնիս, շատին կու քընէցնիս րանգօվ
Անուշահամ գինօվ լիքըն ղո՛ւն օսկէ թասն իս, քամանչա։

Ածօղիդ էրկու կու չինիս, առաչ չայի ղափա փ'ուզիս.
Կու մէծըրվիս այիննումըն, պարապ վախտի րափա փ'ուզիս.
Եփ վէր դու քաս մէջլիսումըն քաղցըր զօղ ու սափա փ'ուզիս
Բօլօրքըդ փօզալնիր չարած մէջլիսի կէսն իս, քամանչա։

Շատ տըխուր սիրտ կու խնդացնիս, կուկըտրիս հիվընդի դուզըն.
Եփ քաղցըր ձայնըդ վիր կօնիս՝ բաց կու՚լի հիգըդ խաղօղըն.
Խալխին էս ըլթիմազն արա՛ ասին «Ապըրի քու ածօղըն».
Քանի սաղ է Սայեաթ-Նօվէն, չատ բան կու տէսնիս, քա-մանչա։

ՍԱՅԵԱԹ-ՆՕՎԱ

Է՛Յ ԲԷՄՈՒՐԱԶ

Է՛յ բէմուրազ մի սըղանի,
Զունքի արիր սէր, Նազանի.
Թէ քիզ ավէլ յադ յար սիրիմ,
Ումբըրէս չունիմ խէր, Նազանի։

Աշխարումըս դուն իմ ջան իս,
Դուն իմ Շահ իս, Սուլթան, Խան իս,
Ի՞նչ կուլի միզ մըտիկ անիս.
Հազարէն մէ չէր, Նազանի։

Ղարիբ դավրիշ իմ, հաջ չունիմ,
Գլխիս էրծաթէ թաջ չունիմ.
Իս քիզ ավէլ իլաջ չունիմ.
Դուն դարի ինձ տէր, Նազանի։

Կըրակ տըվիր կրակն աւէլի,
Զախմախ ունիս դուն ցավէլի.
Աշխարում քիզնից ավէլի
Օ՞վ ասավ թէ կէր, Նազանի։

Սայեաթ Նօվէն իմ, ճար չունիմ,
Ցիս վուրթըն իմ մին խար չունիմ,
Թէ դուն ասիր յադ յար չունիմ,
Իդըրարըթ գըլթար, Նազանի։

ՍԱՅԵԱԹ-ՆՕՎԱ

ԳԻԺ ԴԱՆԻԷԼԻ ԵՐԳԸ
(ԶԱՐ ՈԳԻ)

Է՛յ ժողովուրդ, երգս լսէք,
Ես բլբուլ իմ Գիւլիստանի բաղերից,
Է՛յ ժողովուրդ, դարդս լսէք,
Ես բայղուշ իմ Դաղստանի ժայռերից։
Բոլոր մնաց քարերի տակ,
Մինիկ բալաս, մարալի պէս գեղեցիկ,
Մազեր ունէր ոսկէ թելեր,
Աչեր ունէր կապոյտ կապոյտ խոշորիկ։
Է՛յ ժողովուրդ, երգս լսէք,
Ես բլբուլ իմ Գիւլիստանի բաղերից,
Է՛յ ժողովուրդ, դարդս լսէք,
Ես բայղուշ իմ Դաղստանի ժայռերից։

ՇԻՐՎԱՆԶԱԴԷ

ԷՆ Ո՞Վ ԷՐ ՆԱՆԻ (*)
(ԱՆՈՒՇ)

— Էն ո՞վ էր, նանի՛, որ կանչում էր մեզ.
Դու չես իմանո՞ւմ. ականջ դի՛ր ու տես...

— Հերիք է, Անո՛ւշ, ներս արի դաշտէն,
Քանի՞ դուրս թըռչես, նայես դէս ու դէն,
Տեսնողն էլ կասի—ի՞նչ աղջիկ է սա,
Հազար մարդի մօտ կ'երթայ կը խօսայ։

— Մըտի՛կ տուր, նանի՛, էն սարի լանջին,
Ի՞նչքան ալուոկ է տալի կանանչին.
Նանի՛, թող գընամ քաղեմ ու հիւսեմ,
Էն սարի լանջին «ջան գիւլիւմ» ասեմ։

(*) Նախ՝ «Աղջի՛ անաստուա՛ծ»:

— Հանգիստ կաց, Անո՛ւշ, դու հասած աղջիկ՝
Ի՞նչ ունիս ջահել չոբանների մօտ,
Նըստիր վըրանում, քու գործին մըտիկ,
Պարկեշտ կաց, աղջի՛, ամօթ է, ամօ՛թ։

— Ա՜խ, սիրտս, նանի՛, չը գիտեմ ընչի՝
Մին լաց է լինում սեւակնա՛ծ, տըխուր,
Մին թեւ է առնում, ուզում է թըռչի՛,
Չը գիտեմ՝ թէ ուր, չը գիտեմ՝ թէ ուր...

Նանի ջան, նանի, ես ի՞նչպէս անեմ,
Ի՞նչ անի անքուն անհանգիստ Բա՛լէգ...
Նանի ջան, Նա՛նի, կուժը թող թանեմ,
Աղբիւրը գընամ աղջիկների հետ...

Ա. ՏԻԳՐԱՆԵԱՆ — Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԷՆ ՏԵՍԱԿ ԿԻՆ

(ԹՄԿԱԲԵՐԴԻ ԱՌՈՒՄԸ)

Էն տեսակ կին,
Ես իմ հոգին,
Թէ աշուղն էլ ունենար,
Առանց զէնքի,
Առանց զօրքի
Շահերի դէմ կը գնար։

Սիրոյ հընոց,
Կըրակ ու բոց,
Էնպէս աչքեր թէ ժըպտան,
Մարդու համար՝
Օրուայ պէս վառ
Գիշերները լոյս կը տան։

Վարդի թերթեր
Էնպէս շուրթեր
Թէ յաղթութիւն քեզ մաղթեն՝
Էլ քեզ ո՛չ Շահ,
Ո՛չ ահ ու մահ,
Ո՛չ զէնք ու զօրք կը յաղթեն։

Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԷՆՔԱՆ ՍԻՐՈՒՆ

Էնքան սիրուն ու գիտուն ես,
Ուզում ես դու ողջն իմանալ.
Գըլխիդ կարմիր լաչակ ունես,
Քըրքընչան ես ինչպէս կանալ։

Խնձորի պէս թարզա ես հա՛ր,
Մի ծաղիկ ես բացւած հոտով.
Թէ որ ունես խիղճ ու ջիգեար
Մի՛ թողնի դու ինձ կարօտով։

Եա՛ր ջան, մինակ մի խօսք ասա,
Էլ չը լինի էս իմ հոգսը.
Միայն ասա՝ թէ սպասիր,
Միայն ասա՝ կըգամ Ջագոը։

Դեռ կը սպասեմ հազար տարի,
Մինչեւ ուզածդ օրը հասնի.
Երբ ողջ գիւղը կըգայ պարի,
Երբոր կանեմ մի ճոխ հարսնիք։

Էնքան սիրուն ու գիտուն ես,
Ուզում ես դու ողջն իմանալ.
Գըլխիդ կարմիր լաչակ ունես
Քըրքընչուն ես ինչպէս կանալ։

Ս. ՎԱՀՈՒՆԻ

ՄԻՐՆՐԳ

Էշխեմէն էնպէս վառվիլ իմ՝ վունց մեջլում հա՛ր իմ ասում,
Գօզալի տեսուն կարօտ իմ՝ հիդ քաշվի՛ սա՛ր, իմ ասում.

Ղուրբան իմ ծուցիդ նըռանըն,
Հօքիս տամ չիմչատ կըռանըն,
Թաք պահկիմ հարի դըրանըն,—
Դըլխօքըս քար իմ ասում։

Հաքիլ իս ատլաս խասեմէն,
Խըմեցո՛ւ ձեռիդ թասեմէն,
Համաշա էշխիդ բասեմէն
Էրվում իմ, ճար իմ ասում.

Բաղ կու սիրիմ, իս բաղման չ'իմ՝
Բաղի տիրուչըն ճանանչիմ.
Բըլբուլ իմ՝ սիրօվ վարթ կանչիմ,—
Հիդ քաշվի՛, խա՛ր, իմ ասում։

Մէջլիսնէրու խաղըն դուն իս,
Վանքէրումըն տաղըն դուն իս,
Սայեաթ-Նօվու բաղըն դուն իս,—
Կարօտ իմ, բառ իմ ասում։

1757 ՍԱՅԵԱԹ-ՆՕՎԱ

ԷՇԽԸՆ ՎԱՌ ԿՐԱԿ Է

Էշխըն վառ կըրակ է՝ էրվէլօվ գու քայ.—
Շատ մարթ կօսէ՝ իս հարի հիդ ման գու քամ։
Իս դարդէմէն օվ չ'է քաշի՝ վո՛ւչ քաշէ.
Օ՛վ հար սիրէ, էլ չասի թէ. «ջա՛ն, գու քամ»

Շատ մարթ կայ՝ է՛ն դըլխէն սըրտում ունէ ղամ.
Բաղի մարթ չ'է քաշի, էշխէմէն է խամ.
Ինչ ասիս կօնիլ տայ՝ սէրն է անըսկամ.—
Հալվէցայ, մաշվէցայ. է՛լ ի՛նչ «ջա՛ն, գու քամ»

Էշխըն վուր կայ՝ հազար բարաթ հանդ ունէ.
Ուշկ ու միտկըն կու քընէցնէ՝ բանդ ունէ.
Բըռնածըն չ'ի թօղնի՝ դայիմ չանգ ունէ.—
Ընդու համա՝ խան հիդ կ'էհամ, խան գու քամ։

Թէ դուն էշխի հիդ մանդալըն հարցընիս՝
Չ'ի գիմանա Ռօստոմ Զալըն՝ հարցընիս.
Թէ բէմուրվաթ հարի հալըն հարցընիս՝
Ասում է թէ «Սուլթան գու քամ, խան գու քամ։»

Սայեաթ-Նօվէն ասաց՝ չատի ջանք դըրի,
Մէ բախտ չը տեսայ հում կաթնակիրի.
Օվ օր ինձ չ'ի սիրի, իս էլ չ'իմ սիրի.
Սէրըն սէր կու բէրէ, սիրէկան գու քամ։

ՍԱՅԵԱԹ-ՆՕՎԱ

ՈԻԽՏ

Էջմիածին երթամ ուխտ,
Պագնեմ սեղան ջուխտէ ջուխտ.
Կանչեմ զօրաւոր սըրբեր,
Իմ հիւանդին անեմ թուղթ։
Անտառս—կար Աստուածածին,
Դու ողջ պահէ նանի բալին։

Լուսաւորչի ծառները,
Մատաղ անեմ գառները,—
Լուսաւոր զօրքից մեռնեմ,
Ջոկել ես արդարները։

Էջմիածի՛ն, քո վանքը
Լինքն ա Աստըծու բանքը.—
Աղաչեմ Լուսաւորչին
Պահէ իմ սըրտի կեանքը։

Կ. Վ.

ԳԱԼԻՍ Է

Էս առուն ջուր է գալի,
Մի տեսէք — ո՞ւր է գալի.
Գալիս է, գալիս է, սէր անէ,

Քեննին մահանա արել,
Իր եարին հիւր է գալի։
Գալիս է. գալիս է. սէր անէ:

Վարդ եմ քաղել մաղերով,
Վէր իմ դըրել շաղերով,
Արի՛, իմ սիրեկան եար,
Առաջ գամ քեզ տաղերով։

Տանըս տակին կայ Նըռնի,
Ես բարձ բերեմ դու կըռնի՛,
Ես դու մի բաղում պիտենք,
Դու չինարի, ես նըռնի։

Կ. Վ.

ԻՄ ԲԱԽՏԻՆ

Էս գիշե՛ր, ամպհով գիշե՛ր,
Կարօտ աչքիս քուն չի գայ.
Էս վըշտեր, մըրմուռ-յուշեր,
Իմ սև սըրտէս վաղ չեն գայ...

Շա՛տ եմ լացել,— իմ աչքէն
Քունը վաղուց է թըռել.
Շա՛տ եմ լացել, եար, քու սէրէն,
Սիրտըս խոր վէրք է դառել։

Իմ չոր գըլո՛ւխ, քուն չունիս,
Դարդոտ գըլո՛ւխ, տուն չունիս,
Աշխար — աշխարհ ման կուգաս,
Սիրած գըրկում բուն չունիս...

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ՋԷՅՐԱ՛Ն, ՋԷՅՐԱ՛Ն (*)

Էս գիշեր, զով գիշեր,
Լուսինը ելել ա,
Անո՛ւշ եար, քո սիրոյն,
Հանգիստս կորել ա։

Բոյիդ բոյին մատաղ լինեմ,
Ջէյրա՛ն, ջէյրա՛ն,
Սեւ աչերիդ մատաղ լինեմ,
Ջէյրա՛ն, ջէյրա՛ն:

(*) Ցեռոյ կարելի է երգել՝ «Կողբայ եման սէլերը»:

Ափսո՜ս էս գիշերին,
Որ մենակ ման կուգամ,
Կանչում եմ՝ տուն չես գայ,
Առանց քեզ ո՞ւր գնամ։

Բոյիդ բոյիդ մատաղ լինեմ,
Ջէյրա՛ն, ջէյրա՛ն,
Կամար ունքիդ մատաղ լինեմ,
Ջէյրա՛ն, ջէյրա՛ն։

Համբերանքս ծով դառաւ,
Լալիս եմ քո սիրոյն,
Անուշ եար, չո՛ւռ արի,
Ընքուշ եար, տո՛ւն արի։

Բոյիդ բոյիդ մատաղ լինեմ,
Ջէյրա՛ն. ջէյրա՛ն,
Ալ թշերիդ մատաղ լինեմ,
Ջէյրա՛ն. ջէյրա՛ն։

ԵՐԻ ԵՐԻ ԵՐԻ ՋԱՆ (*)

Էս գիշեր լուսը տեսայ,
Երի, երի, երի ջա՛ն.
Իմ եարը դուսը տեսայ.
Երի, մարալօ՛ ջէյրան.
Ելել էր ուխտ էր գալի,
Երի, երի, երի ջա՛ն.
Հրացանը ուսը տեսայ։
Երի, մարալօ՛ ջէյրան։

(*) *Նախ երգել՝* «Սարերի վրով գնաց»։

Արև էր ամպի տակին,
Սուրբ Յակոբ ճամբի տակին,
Մի էնպէս աղբէր ունեմ,
Հրեղէն ձին թամփի տակին։

Արեւը սարի վերայ,
Մամուռը քարի վերայ,
Ես ոսկի սարք պիտէի,
Իմ սիրած եարի վերայ։

Հէ՜ն, սարէն մարդ ա գալի,
Սարը կըրակ ա տալի.
Առաջըս աղլուխ բացաւ,
Իմացայ վարդ ա տալի։

Կ. Վ.

ԷՍ ԳԻՇԵՐ (*)

Էս գիշեր, լուսնակ գիշեր,
Վա՜յ, լէ՛, լէ, լէ՛, լէ՛, լէ՛,
լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛,
Ձիւնն եկեր, գետին նաշխեր,
Ո՞վ է տեսել՝ սիրած եարը մոռանայ.
Ով մոռանայ՝ երկու աչքով կուրանայ.

Աչքերդ դէմ արա՝ պաչեմ,
Վա՜յ, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛,
լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛,
Կեռ ունքեր, կարմիր թըշեր։
Ո՞վ է տեսել՝ սիրած եարը մոռանայ.
Ով մոռանայ՝ երկու աչքով կուրանայ։

(*) *Նախ՝* «Ախ մարալ ջան»։

Ա՛յ գիշեր, դարձի՛ր տարի,
Հայցըս թող լինի գարի,
Մենակ եարըս ինձ համար
Սրտով խօսքը կատարի։

Ա՛ղջի, քու չարը տանեմ,
Քու սիրուդ ինձ կը սպանեմ.
Դու իմ խօսքին ականջ դիր,
Ես մօրըդ հաւան կանեմ։

Կ. Վ.

ԻՄ ՃԱՄԲԻԿԸ

Իս ճամբէքը ոլոր ա
Վա՛յ լէ, լէ, լէ, լէ, լէ. լէ, լէն,
Ես քեզ տեսայ մոլորա,
Նա, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ, նայ,

Մոլորիս մէկ ճար արա,
Ինձ էլ քեզ ընկեր արա։

Ծառեր դուք ծիրան մի՛ք տայ,
Ճղներ դուք էլ բար մի՛ք տայ։

Ես ղարիբ եմ, զոնաղ եմ,
Դարդերս իրար մի՛ք տայ։

Սև փուշին վիզս եմ քցել,
Կրակը սիրտս եմ ցցել։

Թամամ հինգ օր չեմ տեսել,
Իմ եարը միտս եմ քցել։

ԿԻՆՆ ՈՒ ԳԻՆԻՆ

(ԹՄԿԱԲԵՐԴԻ ԱՌՈՒՄԸ)

«ԱԼՄԱՍՏ» ՕՓԵՐԱ

Էսպէս է ասել հընուց էս մասին
Ֆարսի բիւլբիւլը, անմահ Ֆիրդուսին.
Ի՛նչը կը յաղթի կեանքում հերոսին,
Թէ չը լինին
Կինն ու գինին։

Արեւի նըման ճակատը պայծառ,
Նայում է խըրոխտ, կանգնած ինչպէս սար.
Ո՛վ կանի նըրան գետնին հաւասար,
Թէ չը լինին
Կինն ու գինին։

Պարում է ասես կըռիւ գընալիս,
Գետընքից վերեւ թըռչում, ման գալիս.
Ո՛վ ցած կը բերի նըրան թըռչելիս,
Թէ չը լինին
Կինն ու գինին։

Թէկուզ եւ արար աշխարհ գայ վըրան,
Կերթայ դէմ ու դէմ, տեղ չի տալ իրան.
Ռուստէմ Զալն էլ չի յաղթիլ նըրան,
Թէ չը լինին
Կինն ու գինին։

Ա. ՍՊԵՆԴԻԱՐԵԱՆ

Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԷՍ ՔԱՆԻ ՕՐ Է

(ԱՇՈՒՂ ՂԱՐԻԲ)

— Էս քանի օր է առանց քէֆի,
Ա՛յ, Դիժ Մանուկ ես չորացայ.
Թող մեր կեանքը տխուր չանցնի
Եւ մեր բաղդը միշտ մեզ ժպտայ:

Աշխարհիս մէջ հիւրի նման,
Ինչպէս եկանք՝ էնպէս կ'երթանք.
Յիմար կը լինի քէֆ չանողը,
Ուրախ կեանքից համ չառնողը:

— Ես քեզ մատաղ, լաւ ես ասում,
Սրտիս միջիցն ես դու խօսում.
Ես քեզ համար մի քէֆ սարքեմ,
Որ կեանքումդ տեսած չը լինես,

Աշխարհիս մէջ հիւրի նման, ելն.

ԱՇՈՒՂ ՋԻՒԱՆԻ

ԷՍ ՕՐ ԻՄ ԽԱՐԻՆ ՏԵՍԱՅ

Էս օր իմ եարին տեսայ բաղչի մէջըն ման գալով,
Գէզլինըն զարթարվէցաւ իմ եարի օսկէ նալով:
Բլբուլի պէս պըտուտ էկայ՝ վարթի վրայ ձէն տալով.
Ջունուն էլաւ խիլքս գլխէս, սիրտս տխուր, աչկս լալով.
Ցոյց ունիմ իմ Սախըլծօղլիմէն՝ մեր դուշմանն ըլի էս հալով:

Եա՛ր, էտ քու նազ ու ղամզով՝ ջանըս փուլ ու փանդ ես արի,
Խմիլ ես էշխօվ շարբաթն, պռօշնիրդ ղանդ ես արի.
Խաթու խալով, քաղցր լիզվով՝ շատ ինձ պէսին բանդ ես արի.
Տո՛ւր դանակն ինձի, սպանէ՛, մի՛ տար՝ բիչխանդ ես արի.
Զունքի մահս եարիմէն է. թո՛ւղ 'լի մէռնիմ լավ գօղալով:

Տարին տասէրկու ամիս մաղիրդ հուսած կու 'լի.
Պռօշէմէդ մեղր է կաթում, թօղնիս՝ եախէդ թաց կու 'լի.
Գարնան ձնչի նման՝ կարմիր վարթի հիդ, բաց կու 'լի.
Ի՞նչ օգուտ է քու բաղմնչուն, ղարիբ բլբուլն լաց կու 'լի.
Մուրվաթ չ'ունիս. պտուտ գու քայ բաղչի վրայ ճըկճըկալով:

Եփ քու սուրաթն քու քաշին՝ նաղշումն չնուք կու տաս.
Կու վառվռաս ճրաքի պէս՝ սաղչումն չնուք կու տաս.
Մըշկօվ լիքն բըրօլի պէս՝ թաղչումն չնուք կու տաս.
Բաց կու 'լիս կարմիր վարթի պէս՝ բաղչումն չնուք կու տաս.
Բամին գիրչի փօթլիդ մէջն՝ հուտդ գու քայ վռվռալով:

Ես է՛լ ուրիշ եար չ'ունիմ, էս գլխէն վաղ իմացի՛.
Անգաճ արա՛, մատաղ իմ քիզ, է՛ս խօսկս սաղ իմացի՛.
Մտիկ արա՛, քու Սախըլծօղլին, տուզ՝ նամադ՝ աղ իմացի՛.
Սայեաթ-Նօվին մի՛ ջգրէցնի, էշխէմէդ՝ տուսաղ իմացի՛.
Խիլքս գլխէմէս տարիլ ես քու բէմուրվաթ գարդիշ տալով:

ՍԱՅԵԱԹ-ՆՕՎԱ

ԷՍ ՕՐ ՆՈՐԸ ՆՈՐԵԼ Է

Էս օր նորը նորել է,
Նորել է, բոլորել է,
Եա՛ր, քո լուսնակ երեսից,
Իմ սիրտը մոլորել է:

Քան լուսինն ամպի տակով,
Դու ջուր կ'երթաս ղըրակով,
Հոգիս քեզ մատաղ լինի,
Սիրտըս կ'էրես կըրակով:

Յ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

ԷՍ ՕՐ ՈՒՐԲԱԹ Է (*)

Էս օր ուրբաթ է պաս է.
　Դէ՛, նէ՛, զը՛նգը, զը՛նգը, դէն, նէ, ջան.
Սրտիկ արծաթէ թաս է.
　Դէ՛, նէ՛, զը՛նգը, զը՛նգը, դէ՛ն, նէ, ջա՛ն.
Սրտիկ, մալուլ մի մնա, —
Աշխարհ մարդու չի՛ մնա։

Աշունն եկաւ ցօղալէն,
Ծառի թրփեր դողալէն.
Սրտի՛կ, մալուլ մի՛ մնա, —
Աշխարհ մարդու չի՛ մնա։

Կռունկ կանչեց սարերուն,
Ղարիբ տըղէն երերուն.
Սրտի՛կ, մալուլ մի՛ մնա, —
Աշխարհ մարդու չի՛ մնա։

Ելել եմ ու ճար չունեմ,
Մեռնելու հընար չունեմ։
Սրտի՛կ, մալուլ մի մնա, —
Աշխարհ մարդու չի՛ մնա։

* * *

Ջուր կուգայ վերին սարէն,
　Սարն ոլորելէն.
Կը թափի մարմար քարէն՝
　Կաթ - կաթ ծորելէն։

Կ. Վ.

(*) Նախ՝ «Եար ջան արի»:

ԱՂՆԵՐՍԱՆՔ
(ՍՕՍ ԵՒ ՎԱՐԴԻԹԵՐ)

Ընչա՞նք ես դիմանամ,
Էրում ա ջանըս, Վարդիթե՛ր,
Հիրիք ա ինձ չարչարես,
Կտրիր ցաւըս, Վարդիթե՛ր։

Սէրըդ կրակ ա դառել,
Վառում ա սիրտըս, Վարդիթե՛ր,
Հէրիք ա ինձ սպաննես,
Իմ հոգեհան Վարդիթե՛ր։

* * *

Բան եմ ասում ականջ դիր,
Հոգուդ մատաղ, Վարդիթե՛ր,
Ինձ մի քցիր չոլերը,
Կտրիր ցաւս, Վարդիթե՛ր,
　Վարդիթե՛ր...
　Իմ Սօսի՛...

Հանգիստ ու դադար չունիմ,
Խըղճա ինծի Վարդիթե՛ր,
Աստուած սիրես խնայիր,
Թող մնամ խաղաղ, Վարդիթե՛ր։
　Վարդիթե՛ր...
　Իմ Սօսի՛...

Ջանըս դալուկ, ցաւատանջ,
Մեղանում հալ չմնաց,
Ինձ մի քցիր չոլերը,
Մի չարչարիր, Վարդիթե՛ր։
　Վարդիթե՛ր...
　Իմ Սօսի՛...։

Դ. ՂԱԶԱՐԵԱՆ　　Պ. ՊՌՕՇԵԱՆՑ

ՓԵՍԱՅԻ ԵՐԳ

Թագւոր բարով, հազար բարով,
Դու վարդ ես կանաչ տերեւով.
Էջմիածին զարեւդ օրհնէ,
Մէկ Աստըծու զօրութիւնով։
    Թագւոր բարով, հազար բարով,
    Դու վարդ ես կանաչ տերեւով.
    Երուսաղէմ զարեւդ օրհնէ,
    Մէկ Աստըծու զօրութիւնով։
Թագւոր բարով, հազար բարով,
Դու վարդ ես կանաչ տերեւով.
Սուրբ Կարապետ զարեւդ օրհնէ,
Մէկ Աստըծու զօրութիւնով։

Կ. Վ.

ՓԵՍԱՅԻ ՏԱՆ ԱՌԱՋ

Թագւորի մէ՛ր, դո՛ւս արի,
    Տե՛ս, քե ի՞նչե՛ր ենք բերե.
Թագւորի մէր, դո՛ւս արի,
    Քե գլուխ գըմբող ենք բերե.
    Քե լուաց արող ենք բերե.
    Գըրդնակ կարող ենք բերե.
    Քե տախտ աւլող ենք բերե.
    Քե տաշտ մաքրող ենք բերե.
    Քե հաց թըխող ենք բերե.
    Օջխըդ կոտրող ենք բերե.
    Ծամ խարիկող ենք բերե.
    Կարկտան արող ենք բերե.
    Սօլեր չիտկող ենք բերե.
    Բուրդի գըզող ենք բերե.
    Ջախրակ մանող ենք բերե։

Կ. Վ.

ԹԱՄԱՄ ԱՇԽԱՐՀ

Թամամ աշխար պըտուտ էկայ՝ չը թօղի Հարաչ, նազանի.
Ջը տեսայ քու գիդարի պէս՝ դուն գիփունին բաշ, նազանի.
Թէ խամ հաքնիս, թէ զար հաքնիս, կու չինիս զումաշ, նազանի.
Էնդու համա քու տեսնօղըն, տասում է՝ վա՜շ վա՜շ նազանի։

Դուն պատվական ջավահիր իս, է՛րնէկ քու առնօղին ըլի.
Օվ կու գըթնէ՝ ա՛խ չ՛ի քաշի, վա՛յ կու կօրցընօղին ըլի.
Ափսո՛ւս վուր չուտօվ մէռիլ է, լուսըն քու ծընօղին ըլի.
Ապրիլ էր, մէկ էլ էր բէրի քիդի պէս նաղաշ, նազանի։

Դուն է՛ն գըլխէն ջուհարդար իս, վըրէդ զարնըշան է քաշած.
Դասչամագիդ թիլի մէչըն մէ չադա մարջան է քաշած.
Աչկիրըդ օսկէ փիալա՝ չարխէմէն փընջան է քաշած.
Թէրթէրուկըդ՝ նիտ ու նաշտար, սուր ղալամթըրաշ, նազանի։

Էրէսըդ՝ փարսէվար տախմ, նըման է չամս ու ղամարին.
Բարակ մէչկիդ թիրման շալըն՝ նըման է օսկէ քամարին.
Ղամայըն ձէռին չ'է կանգնում, մաթ չինէցիր նաղըշքարին.
Եփ նըստում իս՝ թութի զուչ իս, եփ կանգնում իս՝ ռաշ, նա-
զանի։

Ես է՛ն Սայաթ-Նօվասին չ'իմ՝ վուր ավզի վըրայ հիմնանամ.
Աջա՞բ միդիդ ինչ իս կամում՝ սըրտէդ մէ խաբար իմանամ։
Դուն կըրակ, հաքածըդ կըրակ. վո՞ւր մէ կըրակին դիմանամ.
Հինդու ղալամքարու վըրէն ծածկիլ իս՝ մարմաշ, նազանի։

ՍԱՅԵԱԹ-ՆՕՎԱ

1758

ԹԱՌԱՄԵՑԱՒ ԿԱՐՄԻՐ ՎԱՐԴԸ
(ՍՕՍ ԵՒ ՎԱՐԴԻԹԵՐ)

Թառամեցաւ կարմիր վարդը,
Բաղի բլբուլ էլ չի երգում,
Նազ մի անի, նազից մեռնեմ,
Քո նազն ինձի կ'սպանի։
Սօսի սիրտը ո՞նց անջանայ,
Աչերը ջուխտակ փինճան ա,
Տեսնողի լեզուն մնջանայ,
Սօսի սիրտը ո՞նց անջանայ։

Դ. ՂԱԶԱՐԵԱՆ　　　Պ. ՊՌՕՇԵԱՆՑ

ԹԵՒ ԱՌՆԷԻ

Թեւ առնէի, ղուշ էղնէի, թռնէի,
Վեր սլացող էն թռչնիկին ռնէի.
Լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛,
Լէ՛. ջան, մեծամն է խաս է,
Ա՜խ. սիրուն է, ոսկէ քաս է,
Նէ՜յ. ով որ նրան տեսնի մէկ անգամ,
Հասնի մէկ անգամ,
Էլ իր կեանքում
Դարդ ու ցաւը չի մօտենայ, նէ՜յ, նէ՜յ.
Անգին զարդ է,
Անփուշ վարդ է,
Լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛:
Բարձրացել է, ամպերի հետ խաղ կ'անէ,
Սեւ աչերէն, մարդկանց կայծեր շաղ կ'անէ.
Լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, լէ՛, եւն։

ՏԽՐԵՐԳ

Թոյլ տո՛ւր մըտնեմ, խընձոր քաղեմ,
Ծոցըդ—դըրախտն եդեմական,
Ծըծերիդ մէջ գլուխըս պահեմ,
Քընե՛մ քընով անմահական։

Քո չըրթունքից ծըծեմ գինի,
Ծըծեմ, հարբեմ, ինձ մոռանամ,
Ցետոյ թող գայ գրողն ինձ տանի,
Դըժոխք թէկուզ յետոյ գընամ։

Բայց ի՞նչ անեմ, եա՛ր, ա՛խ ու վա՛խ,
Ուրիշինն ես, ո՛վ ինչ կասի։
—Տօ՛, մի նայիր, մըտիր անվախ,
Լեզուն չորնայ, ո՛վ բամբասի...։

Ն. ՔՈՒՉԱԿ

ԱՐԾՈՒԻ ՍԷՐԸ

Ծեր քարափին արծիւ նըստաւ,
Արծիւ նըստաւ ու երգեց.
Ջուրի միջին աղջիկ տեսաւ,
Նըշխուն տեսքէն զարնըւեց։

—«Հէ՛յ, ջա՜ն աղջիկ, մարալ աղջիկ,
Ափսո՜ս, թըռչիլ չը գիտես,
Էգ ծըմակում լըռիկ—մընջիկ
Պիտի թօշնես ծաղկի պէս։

Թէ թըռչէիր—իմ ժայռերէն
Քեզ թագուհի կ'ընտրէի,
Քուն գար աչքիդ՝ իմ թեւերին
Անուշ երգով կ'օրրէի։

Էդ աչքերդ՝ ինձ սեւ գիշեր,
Ծըպիտըդ՝ վառ արեգակ.
Անձէր երկինք քեզ չէր իշխեր
Ու կը լինէր հըպատակ:

Եարա՛բ, թըռչել հէչ չը գիտե՞ս,
Քեզ ո՞վ ծընեց առանց թեւ.
Եարա՛բ, կեանքում հէչ ուզած չե՞ս
Օզում թըռչել միշտ թեւթեւ...»:

Էսպէս երգեց ժէռ քարափէն
Հըպարտ արծիւն անգուսման,
Թըռաւ, անցաւ, սարէն, ձորէն,
Լալով բախտըն աղջըկան:

Շ. ԿՈՒՐՂԻՆԵԱՆ

ԾԱՄԹԵԼ (*)

—Իմ գլխու փուլթէն կիտամ
Դէ՛ խանճա ծամբելն ի ծովէն.
Լողուորի մէկ լէ ես եմ,
Ձե՛մ խանճա ծամբելն ի ծովէն.
Իմ գլխու չամբար կիտամ,
Դէ՛ խանճա ծամբելն ի ծովէն,
Լողուորի մէկ լէ ես եմ.
Ձեմ խանճա ծամբելն ի ծովէն:

—Իմ վզի վզնոց կիտամ
Լողուորի մէկ լէ ես եմ,
Իմ սերսուփ ծամեր կիտամ,
Լողուորի մէկ լէ ես եմ,

(*) Նախ՝ «Զի՞նչ ու զի՞նչ տամ լողուորչուն»:

Եար ունի, եար ունի,
Եարսի եօթ ախպէր ունի,
Եար ունի, եար եւլն.
Եօթ լէ գացած բանելու.
Նախրադնէն ուռի ծառ,
Խնձոր թալեմ արի՛ տար.
Խնձորի կէս կծած էր,
Զորս բոլորն արծըթած էր.
Ախպէրս ուզեց չը տըւի.
Անուշ եարի խըկած էր:

—Իմ խաքի չալիկ կիտամ,
Դէ՛ խանճա ծամբելն ի ծովէն.
Լողուորի մէկ լէ ես եմ,
Ձեմ խանճա ծամբելն եւլն.
Իմ գօշի սրտնոց կիտամ,
Լողուորի մէկ լէ ես եմ:

—Իմ թեւի թեւնոց կիտամ,
Լողուորի մէկ լէ ես եմ,
Իմ վզի վզնոց կիտամ,
Լողուորի մէկ լէ ես եմ:

—Իմ ծամի ծանրութենէն,
Ծամթելս կտրե ընկե ի ծով,
Իմ ծամթելն խան տա՛ւր ի գլխ,
Քու ջըհել արեւն յարով:

—Իմ ջուխտակ աչից վրայ,
Ծամթելդ խանեմ իտամ քըզի,
Ե՞ր կիտաս յըն օրն Աստուած,
Որ էրանեկ իտան մըզի:

ԱՆՑԱԾ ԳԱՐՈՒՆ

Իմ խենթ գարնան օրեր անուշ՝
Եկէք ինծ կրկին.
Սուրբ ցնորքներ, յուշեր քնքուշ՝
Իմ երազ կեանքին.
Հիմա աղքատ, թշուառ եմ ես,
Սիրտս է պարապ ու լքին.
Բայց դուն մինչ տաս յուշ հըրակէզ,
Դուն՝ ժըպիտն իմ թախծին։

Իմ սուրբ վըշտով հըպարտ եմ ես,
Գահազուրկ արքայ.
Ամէն անգամ որ յիշեմ քեզ,
Կը մոռնամ կեանքըս.
Լոյսի՛ աղջիկ, եկար անցար,
Տիրեցիր իմ հէգ սըրտիս.
Դուն անհուն ես, կապոյտ պայծառ,
Դեռ հեռուէն կը ժպտիս։

Ն. Ե. ԱԼԵՔՍԱՆԵԱՆ — Հ. ՇԷՄՍ

ԳՈՎԱԿԱՆ ԵԱՐԸ (*)

Իմ չինար եարին,
Իմ գոհար եարին,
Ո՞վ է բան ասել
Գովական եարին։
Իմ գոհար եարին,
Իմ չինար եարին,
Ո՞վ է բան ասել
Գովական եարին։

Կ. Վ.

(*) Նախ՝ «Երեւան բաղ եմ արել» և «Մեր բաղը ծառ ա»:

ԻՄ ՉԻՆԱՐԻ ԵԱՐԸ (*)

Իմ չինարի եարը, իմ չինարի եարը.
Իմ չինարի եարը. գովական եարը:

Արեւ թըռվըռով եկաւ,
Իմ չինարի եարը.
Մեր բանը կըռուով եկաւ,
Դարդիման եարը.
Թըշնամու որդին մեռնի,
Իմ չինարի եարը,
Իրա չար սըրտովն եկաւ։
Դարդիման եարը:

Իմ չինարի եարը, իմ չինարի եարը.
Իմ չինարի եարը, գովական եարը:

Ծըրագը վառ ա, վառ ա,
Հօր հետ վատամարդ դառայ.
Մէր ու աղբէր թող տըւի,
Ես իմ սիրածին առայ։

Քարափի ծէրին կանչի.
Թո՛ղ թըշնամին ամանչի.
Արեւիդ մեռնիմ եա՛ր ջան,
Չինարի պէս կա՛նանչի՛։

Կ. Վ.

(*) Նախ՝ «Գարուն ա ձիւն ա արել» և «Խումար պառկե երես բաց»:

ԹԷԼԼԻԻ ԵՐԳԸ
(ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ)

Իմ սիրած ե՛կ, քեզ եմ սպասում,
Գիշեր ցերեկ մտածում եմ,
Աղի արտասուք թափում եմ,
Այրւում եմ, բայց քեզ չեմ տեսնում։

Ի՞նչ կը լինէր յանկարծ գայիր,
Էրուած սրտիս ճար բերէիր,
Ձեռքիցս բռնած տուն տանէիր,
Սիրուն Թէլլի, ինձ ասէիր։

Ես էլ կրծքիդ փաթաթուէի,
Ծիծաղէի, արտասուէի,
Քո Թէլլին եմ, քեզ ասէի,
Մարմար կրծքիդ ես փարուէի։

ՍԻՐԱԿԱՆՍ

Իմ սիրականի կարօտից տարած՝
Տեսայ փողոցում նրան իմ դիմաց,
Ծով-ծով աչքերը գետին խոնարհած,
Շիկնած ամօթխած բարեւեց կամաց։

Եւ ինչպէս շոգում սառը աղբիւրին
Հանդիպի յանկարծ ծարաւած ճամբորդ,
Հպի շրթունքով կենսարար ջրին
Եւ ծծէ ագահ այն ջրից յորդ-յորդ.

Ես խենթի նման եարիս գրկելով՝
Պինդ-պինդ պաչեցի աչքերը խորին.
Վա՜յ ինձ - նա գնաց լալով, կրկնելով՝
«Խայտառակ եղայ օրը կէսօրին»։

Ն. ՔՈՒՉԱԿ

ԻՄ ՍԻՐՏԸ

Իմ սիրտը միշտ մի անանուն,
Մի անանուն ցաւ է տանջում,
Անտես մի վիշտ խորը թափում,
Խորը թափում եւ անհընչիւն։

Կայ մի մորմոք, մի վիշտ անհուն,
Մի վիշտ անհուն որ չի ննջում,
Կայ անամոք մի տխրութիւն,
Մի տխրութիւն ամէն ինչում։

Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ Վ. ՏԷՐԵԱՆ

ԻՆՁ ՄԻ ԽՆԴՐԻ

Ինձ մի՛ խնդրի, ես չեմ երգի,
Տխրութիւնս է անհագին.
Աղեկտուր նորա ձայնից
Կը խորտակուի քո հոգին։
Ո՛չ, քեզ համար այդպիսի երգ
Երգելու չեմ ես երբէք:

Ես երգեցի սարի վերայ,
Ուր չորացան խոտ ու վարդ,
Անապատ է այնտեղ հիմա,
Սեւ, ամայի անապատ։
Հառաչանքից այրւած սրտում
Էլ ծաղիկ չի դալարում:

Բոյր ու գինիկն ես կ'ուզէի,
Եւ արշալոյս ոսկեվառ,
Որ մի պայծառ երգ հիւսէի
Ու երգէի քեզ համար:
Բայց իմ սիրտը բռնած են դեռ
Հուր հառաչանք, սեւ գիշեր:

Ա. ՄԱՅԻԼԵԱՆ — Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԻՆՉ ՈՐ ՀԱՐՑՆԷՔ
(ՈՒՇ ԼԻՆԻ ՆՈՒՇ ԼԻՆԻ)

Ինձ որ հարցնէք կնկայ հետ
Գործ չը բռնէք դուք երբէք.
Թէ սխալուել էք, գործ բռնել,
Վայն եկել ա ձեզ տարել:

Աստուած որ կնկայ ստեղծել,
Մարդկանց դրանով է պատժել,
Երկար մազեր է տուել,
Խելքը գլխից է առել:

Թէ որ մի գաղտնիք ունէք,
Կնկայ բերան չը գցէք,
Ուժնից պիտ' գաղտնիք մնայ,
Առաջինը կ'իմանայ:

Ինչքան նեղ տեղը լինէք,
Կնկան խորհուրդ չը հարցնէք,
Թէ խորհուրդ է նա տուել,
Հակառակը պիտ' վարուել:

Գ. ԵՐԻՑԵԱՆ

ԻՆՉ ՈՒ ԻՄ ՍԻՐԵԿԱՆ

Ինձ ու իմ սիրեկան եարին՝ մէ տարի բէրած գիդէնաք.
Ա՛խ քաշելէն՝ սրտաս մէջըն արունն մէրած գիդէնաք.
Գիշեր ցէրէկ՝ եարի խաթրու՝ ջիգարըս էրած գիդէնաք.
Աչկըս թաց, բէրանս ցամաք, լիզուս հիդքէրած գիդէնաք:

Սիրտըս փուրումըս թուլացաւ անգալնէրու գախ անէլէն,
Ուշկ ու միտկըս խառնըվէցաւ խուռըն խուռըն խաղ հանէլէն,
Աչկէմէս ջուհարըն գընաց՝ եարէն կարօտ՝ ա՛խ անէլէն,
Էլ ապրէլու ումիկ չ'ունիմ, իմ օրըս կէրած գիդէնաք:

Էրած խօրված ման իմ գալի, մէ տիղ չը կայ մար ունէնամ.
Լիզվօվ չ'իմ կանացի ասի, թէգուզ խօսկըս փարդ ունէնամ.
Ափսուսալու հազար ափսուս՝ ես էս ղադա դարդ ունէնամ.
Էշխէն ուշկ ու միտկըս կապած, ինձ ջըրի տարած գիդէնաք:

Սիրտըս փուրումս սըքուր է, ալ աչկիրըս լաց է անում.
Ծօվըն նընգած ամրի նըման դօշս ու եախէս թաց է անում.
Քանի վուր մըհլամ իմ գըռնում, դուգունս, էլ խիստ բաց է անում
Հալվէցայ արնաքամէլի՝ եարէս հիդարած գիդէնաք:

Օվ տէսնում է, է՛ս է ասում. «Վա՛յ քու դարին, Սայեաթ-Նօվա,
«Համաշա քիզ պիտինք տէսնի՝ աչկըդ արին, Սայեաթ-Նօվա,
«Ինչօ՞վ չ'էլաւ, չը ռաստ էկա՞ր մէ լա՛վ եարին Սայեաթ-Նօվա.
Ունըրըրս էրազի պէս գընաց՝ ծառըս չը խէրած գիդէնաք:

ՍԱՅԵԱԹ - ՆՕՎԱ

1759

ԱՇՈՒՂՆԵՐԻ ՄՐՑՈՒՄԸ

(ԱՇՈՒՂ ՂԱՐԻԲ)

Աշուղ. Ի՞նչ ասացիր, եկար ասպարէզ մտար,
Զգիտե՞ս որ այստեղ բանաստեղծներ կան,
Միթէ՞ դու այս քաղաքը անտէր գտար,
Ի՞նչ էիր իմացել, ո՛վ դու անտէր տղայ։

Ղարիբ. Արի՛ վարպետ, քեզի զաղար պահէ,
Չլինի թէ զղջաս ու ասես, մեղայ.
Բանաստեղծութիւնը մի ծանր բան է,
Ո՞վ տակից դուրս գայ՝ նա տղամարդ է։

Աշուղ. Քեզ ո՞վ խրախուսեց կամ ուրեց հաւնեց,
Որ այդպէս խօսում ես անհընազանդ,
Շուտով ձեռքից սազը ինձ կը տաս, պարո՛ն,
Կը լինես աշակերտ մեզ մօտ, երախայ։

Ղարիբ. Տեղըդ ծանր նստի՛ր, վարպետ բարեկամ,
Քեզ սազ առնելը հիմա խրատ կը տամ,
Խայտառակ կը լինես՝ չի քաշի մի ժամ,
Քեզ նման վարպետը, ինձ սազ կը տայ։

Ղարիբ. Ի՞նչ գօտի է՝ վրան ունի տասը գոյն,
Ո՞վ է կապում այդ գօտին միեւնոյն,
Ի՞նչ ճամբորդ է՝ համ ցաւ ունի համ խնդում,
Այս խորհուրդը, վարպե՛տ, նախ ո՞վ կ'ասէ։

Աշուղ. Քեզանից հարցնեմ, ո՛վ վարպետ գոված,
Այն ի՞նչն է չարժող մարդուն չարունակ,
Մի օրօրոցում տաս եղբայր կան պառկած,
Երբ որ օրօրես, նրանք կ'անեն աղաղակ։

Ղարիբ. Քեզ բացատրեմ, ո՛վ վարպե՛տ գոված,
Այդ երգն է մարդկանց շարժում չարունակ.
Սազի վրայ տասը թէլեր կան պառկած,
Երբ որ նուագես, նրանք կ'անեն աղաղակ։

Աշուղ. Լսի՛ր ո՛վ վարպետ, հարցընեմ մի բան,
Երաժշտութիւնը նախ ո՞վ հընարեց.
Ուղիղ պատմութիւնն աշխարհի ծագման,
Ո՞վ գրեց, ամփոփեց եւ շարադրեց։

Ղարիբ. Ահա՛ բացատրեմ խօսքերիդ միտքը,
Երաժշտութիւնն Յուբալն հընարեց.
Ուղիղ պատմութիւնն աշխարհի ծագման,
Մովսէսն ամփոփեց և շարադրեց։

Աշուղ. Ի՞նչ է իմաստութեան սկիզբն արդար,
Ի՞նչ լոյս է վառւում, անշէջ անխաւար,
Ի՞նչ անմեղ էր, մահ ճաշակեց մեզ համար,
Այն լապտերի լոյսը մէկ անգամ մարեց։

Ղարիբ. Տիրոջ վախն է գիտութեան սկիզբն արդար,
Արեգակն է վառվում անշէջ, անխաւար,
Քրիստոսն էլ մահ ճաշակեց մեզ համար,
Երբ որ խաչւեց, ճիշդ արեւն խաւարեց։

Աշուղ. Ի՞նչ գօտի է վրան ունի եօթը գոյն,
Ո՞վ է կապում այդ գօտին միեւնոյն.
Այն ի՞նչ բան՝ առաջ մեղը է յետոյ թոյն,
Ի՞նչ բժիշկ էր, որ այդ բան նշմարեց։

Ղարիբ. Աղեղնակն վերան ունի եօթը գոյն,
Այդ երկինքն է, որ կապում է միեւնոյն,
Այն խաղողն առաջ մեղր է, յետոյ թոյն,
Փորձուած մարդն է որ այդ բանն նշմարեց։

ԱՇՈՒՂ ՋԻՒԱՆԻ

Ի՞ՆՉ ԿԱՅ ԷՐՆԱԿ

Ի՞նչ կայ էրնակ, ա՛յ ծիծեռնակ,
Էդ քընքուշիկ քո բընում,
Որ դու էդպէս հազար տեսակ
Գեղգեղում ես ու երգում:

Առաւօտեայ էն սուրբ ծէգին
Բաց ես անում կըտուցըդ,
Քաղցըր ձէնով ու սրտագին՝
Ծըլւըլում ես հոգուցըդ:

Ի՞նչ կայ էրնակ, ա՛յ ծիծեռնակ
Էդ քընքուշիկ քո բըդում,
Որ դու էդպէս հազար տեսակ
Գեղգեղում ես ու երգում:

Ռ. ՄԵԼԻՔԵԱՆ   Ց. ԱՂԱԲԱԲԻ

ՈՐՍՈՐԴԻ ԵՐԳԸ

Ի՞նչ կայ որսից լաւ. լեռներով ձորերով
Թափառում ենք ազատ, որսալով համարձակ.
Երբ փողն է հընչում, շըները են հաչում,
Արիւնը մեր կըրծքում եռում է բորբոքում:

Եղնիկը սլանայ, թէ այծը դուրս վազի,
Գնդակը մեր անշեղ՝ տեղն ու տեղ կը թողնի.
Երբ մութն է կոխում, խարոյկ ենք մենք վառում
Եւ գինով լի թասը, ձեռքից ձեռք է անցնում.

Թռալա՛ լա՛ լա՛ լա՛ լա՛ լա՛ լա՛ լա՛ լա՛.
Թռալա՛ լա՛ լա՛ լա՛ լա՛ լա՛ լա՛ լա՛ լա՛...

ՏԱՂ ՍԻՐՈՅ

ՍԱՅԵԱԹ-ՆՕՎԷՆ

Ի՞նչ կօնիմ հէքիմըն, ինչ կօնիմ ջարէն՝
Քու տըվածըն ուրիշ դիղ է, օ՛ւրիշ դիղ:
Էրում է մըհլամըն, չ'է լավնում եարէն.
Քու տըւածըն ուրիշ դիղ է, օ՛ւրիշ դիղ:

ՍԻՐԷԿԱՆՆ

Ասաց թէ. «Հիռացի՛ գըլխէմէս գընա՛,
«Քու ասածըն ուրիշ տիղ է, օ՛ւրիշ տիղ:
«Էտ քու արարմունքըն քիղի չ'ի մընա,
«Քու ասածըն ուրիշ տիղ է, օ՛ւրիշ տիղ:»
Ուրիշ տիղ, ամա՛ն, ուրիշ տիղ:

ՍԱՅԵԱԹ-ՆՕՎԷՆ

Ասի թէ. «Էշխէմէդ չ'իմ հանգչում տանըս,
«Ջէռնիրըս թըլացաւ՝ չ'է չինում բանըս,
«Էրվէցաւ ջիգարըս, մաշվէցաւ ջանըս՝
«Քու տըվածըն ուրիշ դիղ է, օ՛ւրիշ դիղ:»

ՍԻՐԷԿԱՆՆ

Ասաց. «Իմ դիղէմէն քիզ չը կայ չարա,
«Գընա՛ թէ խիլք ունիս՝ գըլխիդ ճար արա՛,
«Թէ չէ՝ անիլ կու տամ քիզ փարա փարա.
«Քու ասածըն ուրիշ տիղ է, օ՛ւրիշ տիղ:»

ՍԱՅԵԱԹ-ՆՕՎԷՆ

Ես բըլբուլ իմ, վարթըս մընաց խարումըն.
Կըրակ դըրիր սըրտիս խուցի եարումըն.
Վո՛ւնց գըրանքումըն կայ, վունց դավթարումըն՝
Քու տըվածըն ուրիշ դիղ է, օ՛ւրիշ դիղ:

ՍԻՐԷԿԱՆՆ

Ասաց թէ․ «Բի զարար՝ չինէցիր չահրդ․
«Կըտրէցիր ագարըդ, կըտրէցիր ահըդ․
«Մի՛ վիթի արուներդ, մի՛ չանց տա մահրդ,
«Բու սասծըն ուրիշ տիղ է, ո՛ւրիշ տիղ։»

ՍԱՅԵԱԹ - ՆՕՎԷՆ

Ասի թէ․ «Մագիլըրդ սուրմա խս անում,
«Հէնց գիդիս՝ չ'իմ գիտի, հա՛ր, չ'իմ իմանում.
«Սէրըդ ինձ մահ դարաւ՝ էլ չ'իմ դիմանում,
«Բու տըվածըն ուրիշ գիղ է, ո՛ւրիշ գիղ։»

ՍԻՐԷԿԱՆՆ

Թաքաւուրի թագի լայիղ քարըն իմ,
Շիրինի պէս Փահրադի գիդարըն իմ,
Ես է՛ն գըլխէն Սայեաթ—Նօվու եարըն իմ,
Բու սասծըն ուրիշ տիղ է, ո՛ւրիշ տիղ։

ՍԱՅԵԱԹ - ՆՕՎԷՆ

Հիդըս խօսի՛, մի՛ կէնա խըռօվի պէս.
Տալղա տըվիր՝ գէմիս տարար ծօվի պէս.
Կու մէռնիմ,- չ'ես տէսնի Սայեաթ-Նօվի պէս.
Բու տըվածըն ուրիշ գիղ է, ո՛ւրիշ գիղ։
Ամա՛ն, ուրիշ դիղ:

1756 ՍԱՅԵԱԹ - ՆՕՎԱ

ՃԱԿԱՏԱԳՐԷՆ ՄԻ ՓԱԽՉԻՐ

(ԶԱՐՏԱՇ)

Ինչո՞ւ այլ տեղ փնտռել երջանկութիւնն անյատակ,
Երբ ան բոյն է դըրած այստեղ՝ մեր կուրծքերուն տակ,
Ուրտեղ որ կայ սէր, այնտեղ եւ երջանկութիւն կայ,

Երջանիկ է ան՝ որ իր մէջ ունի սէր ոսկեայ,
Ան՝ որ ճաշակեր է սիրոյ կենսատու նեկտարէն,
Որ ուրախ կեանքի բաժակէն խմեր է արդէն։
Կեանքը չ'արժեր երբ արդէն,
Սէրը մարդու սիրտէն
Ի սպառ եղած է անհետ,
Նա մեռած է յաւէտ։
Սէ՛րն է, սէ՛րն է միայն կեանք
Եւ հաճելի տանջանք,
Արեւ մըն է ոսկեվառ
Համով ու հոտով նեկտար
Ամէն մարդու մէջ սէր մը կայ,
Որ անոր կեանք կուտայ,
Ճակատագիրն է այդ՝ մարդուն,
Մի՛նչ անբաժան և արթուն։
Ա՛հ ճակատագրէն մի՛ փախչիր,
Կեա՛նքըն ալ չի փախչիր...
Սատանի կտոր մը մեր մէջը միշտ կ'ապրի,
Սիրուն մարդկանց հմայքէն մեր սիրտը միշտ կ'այրի.
Մեր մէջը միշտ կ'ապրի կտոր մը սատանի,
Այսպէս կ'ապրին խեղճ աղջիկները չանթանի։

* * *

Այր մարդիկ, անառակ, ա՛խ, չար մարդիկ,
Կիներըս բըռած են խաղալիկ։
«Առանց քեզի չեմ ապրիր,
Հաւտա չեմ ապրիր,
Առանց քեզի կեանք չունիմ,
Առանց քեզի չեմ ապրիր,
Հաւտա չեմ ապրիր,
Առանց քեզի կեանք չունիմ,
Հաւտա կեանք չունիմ։»

Մինչ այս խօսքերով կը խաբեն անմեղ կիները,
Մինչ այս խօսքերով կը խաբեն անմեղ կիները։
Ա՜խ, ճակատագրէն մի՛ փախչիր,
Կեա՛նքն ալ չի փախչիր։
Ա՜խ, կիներ խղճալի, ա՜խ խղճալի կիներ,
Այր մարդոց հաճոյքին դուք գերի էք դարձեր,
Կը վառեն մեր հոգին, կը տանջեն, կը խաբեն
Եւ այսպէս կ'ապրինք մենք կիներս ամէն։

ԹԸԽԿՈՆ ԴԷ

Ինչո՞ւ Բինգէօլը մըտար,
Դըլէ՛, Մըկո՛ն, դէ՛,
Բաղի բըլբուլը գըտար·
Ափոն թըխկո՛ն դէ.
Թըխկո՛ն, թըխկո՛ն, թըխկո՛ն դէ՛,
Ափո՛ն կո՛նդէ, թը՛խկոն դէ.
Դըլէ՛ Մըկոն, դէ՛,
Ափոն թըխկոն, դէ՛:

Սուսամ սըմբուլ,
Բաղի բըլբուլ,
Ինչո՞ւ Կարօյին առար,
Դըլէ՛, Մըկո՛ն, դէ՛,
Անտէր ու գերի դառար,
Ափոն թըխկո՛ն, դէ.
Թըխկո՛ն. թըխկո՛ն, թըխկո՛ն դէ՛,
Ափո՛ն կո՛նդէ, թը՛խկոն դէ. Եւլն.

Ռ. ՄԵԼԻՔԵԱՆ

Ե՛Կ, ԵԱՐՍ, ԵԿ

(ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ)

Ինքս հարուստ վաճառական լինելով,
Վերջ ի վերջոյ ես չթեվաճառ դարձայ
Ե՛կ, եարս ես, ե՛կ, լաւս ես, ե՛կ, ջանս ես, ե՛կ.
Գիշեր ցորեկ փողոցները ման գալով,
Վերջ ի վերջոյ ես իմ ուզածին գտայ.
Ե՛կ, եարս ես, ե՛կ, լաւս ես, ե՛կ, ջանս ես, ե՛կ։

ԻՆՋԻՆԱՐ ԵԱՐ ՋԱՆ

Ինջինար եար ջան,
Փունջինար եար ջան,
Ո՞վ էր բան ասե,
Սիրական եար ջան։

Էս եանը քամի,
Էն եանը քամի,
Արագի վրէն,
Բանըմ ա գեամի։

Էս եանը նուշ ա,
Էն եանը փուշ ա,
Կողբեցին եկաւ,
Կարմրաթուշ ա։

Արագի վրէն,
Բանըմ ա լօդկա,
Սիրածս եկաւ,
Գլխին շլապկա։

Ինջինար եար ջան,
Փունջինար եար ջան,
Թէ կ'առնես մարջան,
Քե կ'ասեմ եար ջան։

Էս եանը պատ ա,
Էն եանը պատ ա,
Քաղքցուն կառնեմ,
Որ փողը շատ ա։

Ցուշի Ցուշական,
Փարփի Բիւրական,
Սիրեր եմ կ'առնեմ,
Սրտով սիրական։

Մանէթը խուրդի
Սրի աբասի,
Էն տղին կ'առնեմ,
Անունն Աղասի․․․։

ՀՈՎՈՒԵՐԳՈՒԹԻՒՆ

Իրիկուան դէմ արտը սաթէ՝
Ի՜նչ անուշ սէր տե՛ս կը կաթէ.
Ծառերուն տակ հոգիս հիմա
Պիտի ուզէր զինքն ակամայ։

Լուսին ալ կայ, հոգ մի՛ ըներ,
Գուցէ չերթանք տուն այս գիշեր.
Ծովը հեռուն տե՛ս կը ցոլայ,
Կ'ուզես որ ի՞նքն ալ քեզ պէս լայ։

Մարդիկ այստեղ մեզ չեն տեսներ,
Եկո՛ւր, նստինք քիչ մըն ալ դեռ,
Ծղրիթին հետ եղած ընկեր,
Եկուր սիրենք քիչ մըն ալ դեռ։

Ա. ՏԱՐԹԵՒԵԱՆ ԶՈՒԼՖԱԼԵԱՆ

ԼԷ՛ ԼԷ՛ ԽԱՄԱՆ

Լէ՛, լէ՛, խաման, խամա՛ն, Կոլէ՛,
Արե՛, էրթա՛նք մեր խաս պախչէն,
Ես վարդ քեաղեմ, դիւ ալուզէն,
Ես փունջ ունիմ, դիւ զարկ մախչէն։

Լէ՛, լէ՛, խաման, խամա՛ն, Կոլէ,
Արե՛, էրթա՛նք սարն ի սէյրան,
Կարմրի երես պլղտկա բերան,
Քո տարօղի տընեկ վերան։

Արեւն առև վեր խոր ձորուն,
Ես քե սիրեմ աշնան խոլուն,
Ջուրն ի փըռթէ կուգեայ սարէն,
Կուգեայ կաթի համար քարէն։

Երեւանայ բերած խամեմ,
Լիզուդ դիր մէջ բերնիս ծամեմ,
Քո սիրտ մէջ իմ սըրտին քեամեմ։

Վարդ կանաչի, քաղել չի գայ,
Եար պզտիկ է, սիրել չի գայ,
Տաս խորոտ է, թողնել չի գայ։

Դու բարակ ես, բարունակ ես,
Արեգական նըմանակ ես,
Մէջ իմ սըրտին անանակ ես։

ՊԱՐԵՐԳ ԹԱՄԶԱՐԱՅԻ

Լէ, լէ, լէ, լէ՛ Թամզարա,
Լէ, լէ, լէ, լէ՛ Թամզարա,

Աղջիկ, դու ինձ եար կ'ըլլա՞ս,
Դարդերուս դարման կ'ըլլա՞ս։

Լէ, լէ, լէ, լէ՛ Թամզարա,
Լէ, լէ, լէ, լէ՛ Թամզարա.

Աղջիկ մազերըդ թուխ է,
Էս ի՞նչ բարութի մուխ է,
Մուխ հանողը քոռանայ,
Ինծի քեզի մոռանայ։

Լէ, լէ, լէ, լէ՛ Թամզարա, և այլն։

Մեխակի ծառ եմ տնկեր,
Քեզ համար հիւանդ ընկեր,
Օխտը տարի տեւում է,
Օտար երկիր եմ պառկեր։

Լէ, լէ, լէ, լէ՛ Թամզարա, և այլն։

ԼԷ՛Պ ՀՕ՛, ԼԷ ԼԷ

Լէ՛պ հօ՛, լէ՛, լէ՛, լէ՛պ հօ՛, լէ՛, լէ,
Լէպհօ՛, լէպհօ՛, լէ՛պ հօ, լէ.

Ձեր տան տակին վար կանիմ,
Ձոր քրդերին քար կանիմ,
Ոչ իմ սիրած ինծի տայ,
Գիժութիւնս թարկ կանիմ։

Էն սարը բանձրը սար ա,
Տակը զընձըլած քար ա,
Ես քե էն տեղ սիրեցի,
Էդ ո՞վ արաւ աշկարա։

Եազի գօւզը սաւել ա,
Աչքիս լուսը մարել ա,
Վա՛յ էն շըմշատ աչքերին,
Ուշքըս միտքըս տարել ա։

ԼԷՓՕ ԼԷ ԼԷ

Լէփօ լէ լէ, լէփօ լէ լէ, լէփօ լէ լէ, հօտայի
Հողալլու ջան, հողալլու ջան, հողալլէ
Հողալլու ջան, հողալլու ջան, հողալլէ
Գիւզել շիրին, խարալլը ջան, խարալլէ։
Գիւզել շիրին, խարալլը ջան, խարալլէ։

Հօլէյ, հօլէյ, հօլէյլէ,
Հայրըս տունը թող ճգնի,
Մայրըս տունը թող չեղնի,
Դէ տղերք ելէք թող հանենք,
Ձար թշնամու աչքը տանենք։

ՍԻՐԱՀԱՐԻՆ ՆԱՒԱԿԸ

Լըճի մէջ նաւակը
Մեղմ հողմիկ կը տանի,
Նորա մէջ նստած է
Սիրահար պատանի։

Պատանին ձեռքն ունի
Կիթառա ու կ՚երգէ,
Իսկ քամին կը փախցնու
Նաւակը եղերքէ։

Լըճակին մէջը կայ
Քարաշէն մի ամրոց,
Սիրուհւոյ բնակարան՝
Հանապազ փակ ու գոց։

Պատանւոյ նաւակը
Դէպ ամրոց կը վազէր,
Ուր նորա անձկալին
Սրտատրոփ կը սպասէր։

Մեղմ հովը աւելի,
Աւելի սաստկացաւ,
Երկինքը թուխպ պատեց,
Փոթորիկ բարձրացաւ։

Ալիքի լեռները
Գոռալով կը ծփան,
Պատանին աներկիւղ
Կը նուագէ կիթառան։

Լուսինը ամպերի
Տակերէն երեւցաւ,
Սոսկալի աղէտի
Պատկերը բացուեցաւ։

Կէս ճամբան ալիքը
Նաւակին խփուեցան,
Նաւակը փշրեցին,
Յոյս չը կայ փրկութեան։

Պատանին աչքերը
Լուսնակին բարձրացուց,
Կիթառի լարերը
Նա ուժգին հնչեցուց.

—«Տար վերջին խօսքերըս
Անձկալւոյս, ո՛վ լուսին,
Թէ՝ քաղցրիկ անունդ
Յիշելով կը մեռնիմ։»

Դադրեցաւ փոթորիկ,
Ու ալիք պառկեցան,
Ջըրի վրայ կըտորտանք
Նաւակի երեւցան։

Միրուհին սրտատրոփ՝
Նայեցաւ լըճակին,
Հասկցաւ դառնութիւնն՝
Իւր անբաղդ վիճակին։

—«Իրարմէ բաժնեցին
Մեզ աշխարհ եւ այս կեանք,
Գէ՛թ մահով այսուհետ
Ջըրի տակ միանանք»,

Ասաց՝ եւ աղաղակ
Բարձրացուց նա ուժգին,
Գլորուեց, զոհ եղաւ
Անկշտում ծովակին։

Բ. ԿԱՆԱՉԵԱՆ ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

ԼՈՅՍԴ ՏԵՍԱՅ

Լոյսըդ տեսայ այս առաւօտ,
Լոյսը դէմքիդ՝ սիրակարօտ.
Անոր թրթռուն ժըպիտներէն
Սիրտս արբեցաւ անյագօրէն։

Լըսեցի ես նըւագն հոգւոյդ,
Նետեցիր երբ նայուածքդ անքոյթ
Իմ աչքերուս... սիրտըս բացիր
Երազներու աստեղագիր...։

Ու լոյսն օրուան մինչ քեզ տարաւ,
Քու տեսիլը՛դ միշտ ես ծարաւ,
Յայգեր նըրբին իմ մէջ ծընան,
Պարուրեցին հոգիս անձայն...

Անոնք իմ նոր երգե՛րս եղան։

Զ. ՊԵՐՊԵՐԵԱՆ ԱԶԱՏՈՒՆԻ

ԳՈՒԹԱՆԵՐԳ

Լուսաստղ գըցեց դուռ,
Գութան քըշէք դար ի դուռ։
Հոռովել, հօ՛:

Արտուտ թըռաւ իր բընէն,
Լուս ծագեց աղօթրանէն։

Քամին անուշ շընկշընկայ,
Թուփն ու ծաղիկ տընկտընկայ։

Հօտաղներ, շուտ վեր ելէք,
Խարզան ու լծեր լծէք։

Մա՛ճկալ նայէ դէմ ապօթրան,
Փառք տուր Աստծուն մէկ բերան։
Մըսրայ գոմէշ լըծի տակ,
Թող գըլորի պզտիկ ակ։
Հոռովել տուր, մա՛ճկալ ջան,
Իմ ջան քո ջանին ղուրբան։—
Եզնարած եզներ տարաւ,
Խամրաջին փըլաւ բերաւ։—
Մութն ընկաւ, գութան թօրկին,
Մաճկալ, հօտաղ պառկին։
Մըրտօն պառկեր մէջ առուին,
Կը գըռմըրայ վեր պառւին։
Հօ՛տաղ, քե՛ մատաղ, պառկի՛,
Թող մեր չարկամ ակըռկի։
Գառներ զմաքիք կը ծըծին,—
Քունն անուշ պզտիկկին, մեծին։

Կ. Վ.

ԼՈՒՍԻՆՆ ԵԼԱՒ

Լուսինն ելաւ էն սարից,
Սարի բարձըր կատարից.
Շէկլիկ մէկլիկ երեսով,
Փռուեց գետնին լուսի ծով։
Ջան ա՛յ լուսին, ջան քո՛ լուսին,
Ջան քո՛ կլոր ճէկ երեսին։

Խաւարն իսկոյն չքացաւ,
Ու էլ գետինն չկայցաւ.
Լուսնի լուսից հալածուած
Խոր ձորերի մէջ մնաց։
Ջան ա՛յ լուսին, ջան քո՛ ելնի.

Բայց ամպերը մոլեգին,
Նախանձեցին լուսնեկին,
Ելան երկինք կապուտակ,
Լուսինն առան իրենց տակ։
Ջան ա՛յ լուսին, ջան քո՛ ելնի.

Ռ. ՄԵԼԻՔԵԱՆ   Ց. ԱՂԱԲԱԲԻ

ԼՈՒՍՆԱԿ ԳԻՇԵՐ

Լուսնակ գիշեր բոլորովին քուն չունիմ.
Ինձ տեսնողը կարծում է թէ տուն չունիմ։

Ննջարանս սենեակիդ պատի տակն է.
Կեանք, խնդութիւն պարզ գիշերուայ լուսնակն է։

Մի՛ լար, մի՛ լար, մեռնիմ կամար ունքերուդ.
Արտասուքը վնաս կուտայ աչերուդ։

Արի՛ գնանք խորհուրդ անենք միասին.
Ամուսնանանք, ալ չըսպասենք մեծ պասին։

ԶԻՆՈՒՈՐ ԵԱՐԸ

Լուսնակը սարի տակին
Եա՛ր, եա՛ր.
Եա՛ր, նա, նա՛յ, նայ, նա՛յ, նա՛յ,
Եա՛ր, նա, նա՛յ, նայ, նա՛յ, նա՛յ.
Մամուրը քարի տակին.
Եա՛ր.
Եա՛ր, լէ, լէ՛, լէ, լէ՛, լէ՛,
Եա՛ր, լէ, լէ՛, լէ, լէ՛, լէ՛.

Ես իմ եարին կարօտ եմ,
Եա՛ր, եա՛ր.
Եա՛ր, եա եա՛յ, եայ, եա՛յ եա՛յ,
Եա՛ր, եա, եա՛յ, եայ, եա՛յ, եա՛յ.

Քանի վարդ ու մանուշակին.
Եա՛ր.
Վա՛յ, լէ, լէ՛, լէ, լէ՛, լէ՛,
Վայ, լէ լէ՛, լէ, լէ՛, լէ՛.

Աչքըս գըցել եմ սարին,
Ոտքըս տըւել՝ լեռ քարին.
Երթայ ու էլ ետ չըգայ,
Քեզ զինուոր գըրած տարին։

Կանգնեմ քարին ու սարին,
Գիր գըրեմ ղարիպ եարին.
Արցունքով գըրեմ, կանչեմ,—
Ագու կըտրի ՚սէնց տարին։

Կ. Վ.

ԼՈՒՍՆԱԿՆ ԱՆՈՒՇ (*)

Լուսնակն անուշ, հովն անուշ՝
Վա՛յ, լէ. լէ՛, լէ, լէ,
Վա՛յ լօ, լօ՛ լօ, լօ.
Շինականի քունն անուշ,
Երնէկ էն օրեր,
Որ կ'ելնեմ սարեր:

Ծագից լուսնակ երկընուց,
Հովըւի փողն էր անուշ։

(*) Ցիտոյ՝ «Ամպել ա ձուն չի գալի» և «Շաղըր շուղըր»:

Հօտաղն եզներ կ'արածայ,
Մաճկալ պառկեր՝ քունն անուշ։

Ջըղգղուն քամին կը փըչէ,
Ծովային հովն էր անուշ։

Դաշտեր, ձորեր մինջեր են,
Ջըրեր գըլգլան՝ ձէնն անուշ։

Հաւքեր թառան իրենց բուն,
Բըլբուլի տաղն էր անուշ։

Անմահական հոտ բուրէր,
Քաֆուր վարդի հոտն անուշ։

Հասուն պտղով լի ծառեր,
Որից տակ քունն էր անուշ։

Կ. Վ.

ՀՈՎԻՒԸ

Լուսնակն ելաւ լերան գլխին,
Դաշտ ու հովիտ լուսացաւ.
Զով հովիկը, լուսնի շողին,
Լերան կըծքից վար իջաւ։

Թըռաւ, գնաց գութանւորի,
Վառուած կուրծքը զովացուց.
Թոյլ բազուկը հեզ բանւորի,
Նոր ուժերով ամրացուց։

Դէս պէն թռաւ, չուրջը նայեց,
Յանկարծ կանգնեց, քարացաւ.
Իր թեւերը մէկ էլ ուղղեց,
Դէպի դաշտը սլացաւ։

Հառաչելի անուշ ձայնը,
Դաշտ ու հովիտ լեցուեցաւ
Եւ հովիկը «հօ՜ եղ ջանո-ը»,
Ինքն էլ կրկնեց ու անցաւ։

Դ. ՂԱԶԱՐԵԱՆ Ց. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԽՆՁՈՐԻ ԾԱՌԻ ՏԱԿԻՆ

Խնձորի ծառի տակին.
Խնձորի ծառի տակին,
Խնձորի ծառի տակին,
Ես իմ եարս սիրեցի.
Խնձորի ծառի տակին.
Խնձորի ծառի տակին։
Ծառեր դուք իրար միք տայ,
Ճղներ դուք էլ պար միք տայ,
Ճղներ դուք էլ պար միք տայ.
Ես իմ եարըս սիրեցի,
Խնձորի ծառի տակին,
Խնձորի ծառի տակին։
Խնձորի ծառի տակին, և լն.

Եար ջան դու բարով եկար,
Կարմիր սօլերով եկար,
Հէ՜յ խորոտիկ իմ եարըս,
Հէ՜յ անուշիկ իմ եարըս,
Խունջիկ-մունջիկ մի՛ անի,
Խնձորի ծառի տակին։
Խնձորի ծառի տակին, և լն.

Ց. ՄԵՀՐԱՊԵԱՆ

ՋԱՆ ԳԻՒԼԻՒՄ ՋԱՆ

Խնձոր ունիմ կծած ա,
Ջան գիւլիւմ, ջան, ջան,
Չորս կողմը արծաթած ա,
Ջան գիւլիւմ, ջան, ջան,
Ջան ծաղիկ, ջան, ջան.
Այրէրս ուզեց՝ չը տուի.
Ջան գիւլիւմ, ջան. ջան.
Ասի՝ եարից ղըրկած ա.
Ջան գիւլիւմ, ջան, ջան,
Ջան ծաղիկ, ջան, ջան։

Կաքաւ կանգնել կամուրջին,
Մանկի շողեր ականջին.
Մէկ տասսա վարդ իմ քաղել,
Տարէք իմ թառլան եարին։

Ա՜յ թուխ մազաւոր աղջիկ,
Ա՜յ սարի սոլոր աղջիկ.
Ջիգեարին գիւլլէ դիպչի,
Քեզ սիրի ով որ աղջիկ։

ՀԱՐՍԱՆԵԿԱՆ ՊԱՐԵՐԳ (*)

(ԾԱՂՐԵՐԳ)

Խումար պառկի երես բաց,
Հո՛պ. հո՛պ. հո՛պպըսա, դըմբա՛.
Դեղին կապերտ, բըմբուլ բարձ։
Հո՛պ, հո՛պ. հո՛պպըսա, դըմբա,
Հէ՜յ. հէ՜յ, լա՛ւն է, հէ՜յ, հէ՜յ, լա՛ւն է,
Հէ՜յ, հէ՜յ, լա՛ւն է, հէ՜յ, հէ՜յ, լա՛ւն է։

(*) Նախ՝ «Ջիգ տու. եաշի» և «Գառնան զու բան հանեցի»։

Անուշ քընև երես բաց,
Սահակն եկաւ՝ խելք գընաց։

Հաջոնց բակն էր ղալղըրմա,
Աշնան թոխլին ղաւուրմա։

Խարար տարէք ըռեսին,
Աղջիկ բերէ վեր մըսին։

Հաւարն ընկաւ ըռեսին,
Գնացէք թափան վեր մըսին։

Հէրօն ուտէր, գիրանար,
Մըկօն խըմէր, ուրախանար։

Հաջոնց կալը՝ բոլորպար,
Խումար մէջը կը խաղար։

Ծամեր թալուկ իւր յետեւ,
Կը թըռվըռէր չատ թեթեւ։

«Հաստա՛տ մնայ մեր Հաջին,
Որ պահէ մեր նոր փեսին»։

Գարնան բացուաւ նոր լալա,
Խումար բերաւ ջուխտ բալա։

Աչքըդ լոյս, Հաջի աղա,
Թոռներուդ հալաւ արա։

Կ. Վ.

ԾԱՂԿՈՑ ՄՏԱՅ(*)

Ծաղկոց մտայ, սիրտս էրուած նարոտ էր.
Նարոտ սիրտս ազիզ եարիս կարօտ էր։

Ազիզ եարիս ձէն տըւեցի՝ ձէն չկար..
Ծաղկանց միջին անուշ վարդըս է՛լ չկար։

Անգութ եարըս իմ սրտի հետ խաղ արեց,
Թողեց գընաց՝ իմ ջիգեարը դաղ արեց։

Ա. ՏԷՐ ՂԵՒՈՆԴԵԱՆ Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՎԱՆԱՅ ՊԱՐԵՐԳ

Ծառէն կախուեր է երկու հատ լիմոն,
Էն տըղին կ'առնիմ, անունն ի Սիմոն։
Լէ՛, լէ՛. լէ, լէ, լէ, լէ, լէ,
լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ...

Էս եանը դար ա, էն եանը դար ա,
Շուղանցին եկաւ ջէօղ լեցուն փարա։
Լէ՛, լէ՛. լէ. լէ. լէ, լէ. լէ.
լէ, լէ, լէ. լէ. լէ, լէ, լէ...

Ծառէն կախուեր է երկու հատ ծիրան,
Սիրիր իմ կ'առնիմ, անունն ի Միհրան։
Հա՛, հա՛. հա, հա, հա, հա. հա,
հա, հա, հա, հա, հա, հա, հա...

Գնացինք կալեր, կտրեցինք շալեր.
Պաժ պօյին մեռնիմ, նըշանլու եար էր։
Լէ՛, լէ՛. լէ, լէ. լէ, լէ, լէ.
լէ, լէ, լէ. լէ. լէ, լէ, լէ...

Զ. ՊԷՐՊԷՐԵԱՆ Հւքց. Ա. ԳԱՍՊԱՐԵԱՆ

(*) Յետոյ՝ «Անցի՛ր, սեւ ամպ իմ սրտից»։

ՋԱՆ ԳԻՒԼՈՒՄ

(ՎԻՃԱԿԻ ԵՐԳ)

Ծառս տակը մանիշակ,
Ջան գիւլում, ջան, ջան.
Իմ եարը քանց քեզ չիշակ,
Ջան, ծաղիկ, ջան, ջան:

Սարի թրթրնջուկ թաղա
Մեղր ու մեխակ քեզ մաղա.
Ինձ պէս նաղանի աղջիկ,
Քեզ պէս տղին ո՞նց սաղայ:

Ա՜յ տղայ, եախէդ մոլ ա,
Սուրբ Կարապետ քեզ գոլ ա.
Ես քեզ խիստ շատ եմ սիրում,
Քո սիրտ ինձանէն հոլ ա:

Նախրատափին խընկի ծառ,
Խընձոր գըցեմ արի տա՛ր,
Ուրբաթ-շաբաթ քեզ մօհլաթ,
Լոյս կիրակի արի տա՛ր:

Մեր տան առաջին դարան,
Աղջկերք եկան եօ դառան.
Կուռըս տարայ որ բռնեմ՝
Շարած մարգարիտ դառան:

Ա՜յ տղայ, բաղի միջին,
Ոտներդ շաղի միջին,
Կանչի՛ կանչերուդ մեռնեմ,
Ես եմ քո խաղի միջին:

Մեր տան եօնը մառան,
Տըղերքն եկան յետ դառան,
Ձեռըս տարայ թէ բըռնեմ՝
Դիփ լալ ու մարջան դառան:

Ես աղջիկ եմ ալ կ'ուզեմ,
Բաղչէս ծալէծալ կ'ուզեմ,
Երբոր եարի տուն երթամ՝
Գօտիկս քիրմա շալ կ'ուզեմ:

Ամպել ա, ձիւն չի գալի,
Մթնել ա, տուն չի գալի.
Էս անտէր բարձի վըրայ
Առանց եար քուն չի գալի:

Ա՛յ աղջի, սաա՛, մասա՛,
Ծամերիդ տէրը խաս ա,
Թուշիդ դէմն արա՝ պաչեմ
Վաղի՝ գընա մօրդ ասա:

Արխալուղըս կարել եմ,
Ոսկէ կոճակ շարել եմ,
Նանի ջան, դարդ մի՛ անիր,
Ես սիրածըս ճարել եմ:

Արտուտս ցանել եմ գարի,
Աստուած տայ նանիս բարի,
Ինձ տըւեց ջահիլ եարի,
Դարչին—մեխակ քահրբարի:

Բարտի ծառը բարձր ա,
Սիրած եարը քաղցր ա,
Գընամ մօրըս հարցընեմ,
Թէ որ չըտայ՝ փախցըրա:

Կանգնել ես բարձր հովին,
Փըռփըռում գօշիդ մովին,
Նրնէկ ծոցիդ քընողին,
Շամամ ծըծերդ բռնողին։

Ես լուսաստղ եմ երկնքին,
Շողքըս տըւած գետինքին,
Դեռ չատ կարօտ ման կըգան
Նա իմ չալ աչք, կեռ ունքին։

Բաքուլիդ կալին մեռնեմ,
Իրեսիդ խալին մեռնեմ,
Լըսել եմ կարդացւոր ես,
Սազմոսիդ ծալին մեռնեմ։

Ծառի տակը հով, քամի,
Բաքուլըդ քամին տանի,
Բա դու սարում ու ձորում.
Իմ քունը ո՞նց կը տանի։

Ծիրան եմ քաղել նուշը,
Պտղընցիս վարդի փուշը,
Փունջ կապեմ՝ ապրօրըս տամ,
Պաչ անեմ կարմիր թուշը։

Հա՛ գէտ գընա՛, գէտ գընա՛,
Մէջքիդ քիրմէն ետ գընայ,
Դէմն արի, թուշըդ պաչեմ,
Ունքամէջըդ ետ գընայ։

Մանուշակ երկու թեր ի,
Սիրողի տունը կէրի,
Ով իմ սիրածն ինձ չի տայ,
Զը տըւողի տունն էրի։

Սիրել եմ սէրն իրեսին,
Ոսկան թերըն իրեսին,
Ով իմ սիրած ինձ չի տայ՝
Աստըծու կերն իրեսին։

Զափարի տակ չափ կը տամ,
Բխտով ոսկի թափ կը տամ,
Նա իմ պզտիկ տեղովըս,
Քեզ պէս չատին խաբ կը տամ։

Զիթ եմ հագել—սալով ա,
Գըլխիս մազը գազով ա,
Հալբա՛թ ես էլ նազ կանեմ,
Երբոր եարըս նազով ա։

Զիթ մինթան էդ հին մաշա,
Ունքերըդ ղալամքաշ ա,
Աղջի՛կ, ի՞նչ ես միտք անում,
Իմ ջանըս քեզ փէշքաշ ա։

Պուճուր աղջի՛կ, լաւ աղջի՛կ,
Դու ինձ համար ցաւ աղջիկ,
Ես քեզ թագուն սիրեցի,
Նա ո՞վ արաւ, չա՛ւ աղջիկ։

Սարերի սինձ ի՞նչ կանեմ,
Կաթով բըրինձ ի՞նչ կանեմ,
Թո՛ղ իմ սիրած ինծի տան,
Ոսկի, արծաթ ի՞նչ կանեմ։

Սարերումը տուն ունեմ,
Միջին ոսկի սին ունեմ,
Ա՛յ չան տըղայ, քիչ խօսա,
Քեզ պէս հազար չուն ունեմ։

Կանգնիլ ես, կանչում էլ չես,
Բօյիցդ ամաչում էլ չես,
Եկայ՝ կըշտովդ անց կացայ,
Տէր ես՝ ճանաչում էլ չես։

Ամպել ա ամպի տակին,
Ծունկըս ծընկանըդ տակին,
Ես քեզ ո՞րտեղ սիրեցի—
Մեխակի ծառի տակին։

Ա՛յ տղայ, դու հէրիս, մէրիս,
Ո՞ւր եկար կէս գիշերիս,
Տեղումըս քեզ տեղ չի կայ,
Գըլուխըդ դի՛ր կըռներիս։

Ծըրագ գընեմ լիսացաւ,
Կարմիր խառէն քիսացաւ,
Ես քո մօրը հարսնացու,
Դու իմ մօրը փեսացու։

Աղջի՛կ, մազերդ հիւսէիր,
Թուշդ երեսիս քըսէիր,
Ելնէիր բարձիս վըրայ՝
Բիւլբիւլի պէս խօսէիր։

Աղջի՛կ, գընանք մեր բաղը,
Պոկեմ շամամիդ թաղը,
Էդ երեսիդ չափաղը
Հանել ա սըրտիս դաղը։

Ջուն գընեմ թաւէն՝ խաշեմ,
Գընամ կարօտը եաշէմ,
Եթէ եարըս գալիս է,
Զօքեմ՝ չէքմէքը քաշեմ։

Գիւլում գիւլում, գիւլ չիչակ,
Ես-դու մանենք մին դօշակ,
Մինչև լոյսը քըչփըչանք,
Լոյսից յետոյ կըչկըչանք։

ԾԻՂ – ԾԻ՛Ղ

Ծիղ, ծիղ, ծի՛ղ, ծիղ ա,
Ծիղ, ծիղ ոսկիս կը ցոլայ․
Էն արևին շող կը տայ,
Էն ծաղկանցը ցօղ կը տայ․
Կանաչ դաշտի բուրվառն է,
Կարմիր վարդի հոտ կը տայ։

Ծիղ, ծիղ, ծի՛ղ, ծիղ ա,
Ծիղ, ծիղ ոսկիս կը ցոլայ․
Էսպէս անուշ երեխայ,
Սէր ու ծիծաղ շաղ կը տայ․
Ալար դալար կըռներով,
Կոտրած սըրտիս սիւն կը տայ։

Ծիղ, ծիղ, ծի՛ղ, ծիղ ա,
Ծիղ, ծիղ ոսկիս կը ցոլայ․
Ծի՛ղ, ծի՛ղ, ծի՛ղ ծիղ, ծի՛ղ, ծի՛ղ․․․

Ռ. ՄԵԼԻՔԵԱՆ — Ա. ԽՆԿՈՅԵԱՆ

ԾԻՐԱՆԻ ԾԱՌ

(ԿԱԼՈՒԱԾՈՑ ԳՐՍԻՄԱՆ ԵՐԳ)

Ծիրանի ծառ, բար մի՛ տա,
Վայ.
Ճղներդ իրար մի՛ տա,
Վայ.
Ամէն մէջդ մահ գալիս
Ցաւերըս իրար մի տա։

Հա՛, տուէ՛ք, յե՛տ տուէք, սա՛րեր, հովն ընկաւ,
Սրտիս խրճդում ծովն ընկաւ.
Գընայ, էլ յետ չը գայ էս տարուայ տարին.—
Սեւ դարդն իմ վըզովն ընկաւ:
Հո՛վ. հո՛վ, հովն ընկաւ.—
Սրտիս խրճդում ծովն ընկաւ:

Մեռայ քաղում բանելէն,
Մի կողմէն ջուր անելէն,
Ծառերին թուփ չը մընաց՝
Դարդիս դարման տանելէն։

Սեւ ամպը գըցել ա հով,
Մութը տըւել ա իմ քով.
Տեսնում էք՝ ինձ պատել ա
Էս անիրաւ արիւն ծով։

Նըստած տեղիս քար չունիմ,
Էրուած սըրտիս ճար չունիմ,
Ա՛յ անօրէն, փուչ աշխարհ.—
Բաղ ունիմ ու բար չունիմ։

Կ. Վ.

ԾԼԵԼ Է ԱՐՏԸՍ

Ծլել է արտըս,
Ծփում է արտըս,
Կոտրել է դարդըս.
Ձայն:

Խնդում, զըւարթ է,
Նոր բացւած վարդ է,
Արտըս ազատ է.
Ձայն:

Եկել է նորը,
Խնդութեան օրը,
Ազատ նոր կեանքը.
Ձայն:

Ա. Տ. ՂԵՒՈՆԴԵԱՆ   ԱԼԱՋԱՆ

ԾՈՎԸ

Ծովը յոգնած փըրփուր բերնին,
Ափին ընկած կը հեւայ,
Ժէռ ափերից մէգը մըթին
Ծովի վըրայ կը սողայ։

Վէրքը սըրտիս, անքուն-անտուն
Կեանքից հեռու եմ փախեր,
Կ'ուզեմ ապրեմ վայրի ափում,
Ապրեմ մենակ, անընկեր։

Աստղունք մէկ-մէկ ելան բազման
Երկնի փէրուզ աթոռքում,
Աստղերի պէս երգերս ելան
Հոգուս մըռայլ խորքերում։

Սրտիս լարերն տրտում-տրտունջ
Կեանքըս թօշնած երգեցին,
Հովը հեւաց մունջ ու մրմունջ,
Աստղունք վըրաս լուռ լացին։

Ամպերն ընկան ծովի վըրէն,
Հազար բերնով ջուր խըմին,
Թըռաւ որորն խոլոր ծովէն,
Ծըւաց, նըստաւ թուխ քարին։

— Ես է՛լ քեզ պէս, մենիկ որո՛ր,
Աչերս՝ արցունք ու տըրտում,
Կը թափառիմ ոլո՛ր-մոլո՛ր,
Կեանքի հեռո՛ւ ափերում...

Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ   Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ԱՉՔԵՐԴ

Ծով մը կապոյտ կը ծաւալի
Աչքերուդ մէջ, ուր չըկայ սէր,
Ծով մը հանդարտ, ըղձալելի,
Ուր կը ցոլան ցայտուն լոյսեր.
Բայց զգացումն հոն կը հալի
Ինչպէս տաքին՝ պատառ մը սեր։
Աշխարհներ են աչքերդ անհուն,
Ուր կան լոյսեր, յոյզեր հըսկայ,
Սառոյց, հրդեհ, բոցեր փայլուն,
Ժըպիտն ու յոյս չեն բացակայ.
Կուգան կ'անցնին անկէ սահուն
Գութն ու արցունք. լոկ սէր չըկայ։

Հ. ՊԵՐՊԵՐԵԱՆ   ՍԻՊԻԼ

ԾՈՎՈՒՆ ԽԱՒՔ ՄԸ ԿԷՐ

Ծովուն խաւք մը կէր, անունն էր արօր.
Վըզիկն էր էրկէն, սըրտիկ սեւաւոր.
Կապեմ պէզարէն, երթամ խետ ինոր,
Էն իմ դարդ գիտե, ես էլ գէօ ինոր։
Արի՛, եա՛ր, արի՛, խըռով մի՛ մընա,
Աստուծոյս մալ ձիկ, բե չի մընայ։

Ես վէրի ոչխար վէր ցասման քարին,
Թըվանքով զարկին պըրինտար արին.
Խապրիկ մի տարէք իմ սօնա եարին,
Թո՛ղ առնի դարման, գայ վէր իմ եարին։
Արի՛, եա՛ր, արի՛, խըռով մի՛ էլնի։

Պօստան մ'եմ դրե վէր էնա դարին,
Աստուած աւերէր էս տարւան տարին.
Չէ՛ լաւ մէկ չամամ օրօխկի եարին,
Շամամ թոռմաւ, իմ եար խըռովաւ։

Իգի մ'եմ տընկե—վարդ խազար ու բիւր,
Պաղչէ մ'եմ տընկե—վարդ խազար թավուր,
Կանչեմ, եա՛ր, արե՛ — սարեր լացուցեմ,
Շատ կարիպ—կուրպաթ ճամխէն դարձուցեմ։

Ծըծուերդ էր ուռե, ես առի նուռ էր,
Արի ձեռ պարզեմ, գիւ տեսի ժուռ էր.
Թէ ժուռ թէ խասուն, մօտ ձիկ կապուլ էր,
Բաղցը լեզւին մեռնեմ—անուշ պըլպուլ էր։

Էս օր ի՞նչ օր ի, պախս ի, ուրբաթ ի,
Եարօջս մեռնեմ, կարիպ կուրպաթ ի,
Աղջի՛կ, քեօ գըլուխ արծըթէ թաս ի,
Խորած վարդապետ կ'առի չը խասի։

Ըստամբոլ քաղաք վէր Սեւ ծովերաց,
Կարիպ իմ համխե եոե սարերաց.
Կարիպխս մեռնեմ իր համխներաց,
Կարօտ մընացի թուխ-թուխ աչերաց։

Մըտեր ես իգին, խաղող կը քաղես,
Շամամ ծըծերով չաքար կը մաղես,
Ալմաստ խանչալով սըրտիկս կը դաղես,
Աչքով, ընքերով գլու ձիկ կը մաչես։

Էլեր ես իգին, առուզ ջուր կուգայ,
Քաֆուր վարդ բացեր, անուշ խոտ կուգայ.
Իմ խէրանց իգին վարդ խազար թավուր,
Մէջ էն վարդերաց իմ վարդն ի քաֆուր։

Երկինքն ի ամպե, կուգեայ մարմար ձիւն,
Կուգեայ կը թափի վէր մալուլ մարդուն,
Մէկ ի՞ս իմ մալուլ, թէ աշխարհ ղիթուն,
Աստուած աւերէր նամարդ մարդու տուն։

ԸԼԼԱՅԻ, ԸԼԼԱՅԻ

Ծոցիդ կախուած խաչն ըլլայի,
Սըրտիդ սիրած մանչն ըլլայի,
Օր ու գիշեր ալ չըթունքիդ
Վրան հալուող պաչն ըլլայի։
Մի ըլլար անգութ,
Մատաղ եմ հոգուդ,
Սիրողիդ հանդէպ ունեցիր գութ:

Վարդ թըշերուդ այն ըլլայի,
Մէջքըդ կապուած շալն ըլլայի,
Կանանչ արեւուդ ես մեռնիմ,
Ճերմակ գօշիդ խալն ըլլայի։
Մի ըլլար անգութ, եւլն։

Երազներուդ ակն ըլլայի,
Գըլխիդ վայել թագն ըլլայի,
Սիրտըս սրտիդ միացնող
Զըրացուկլիք փակն ըլլայի։
Մի ըլլար անգութ, եւլն։

ՍԻՐԵՐԳ

Կայնիլ եմ՝ գալ չեմ կարող,
Լըցուել եմ՝ լալ չեմ կարող,
Քանի որ գընացել ես,
Եա՛ր ջան,
Անունըդ տալ չեմ կարող։

Աչքերըս համբիդ մընաց,
Խելքըս ինձանից գընաց.
Քո սիրուն՝ ի՛մ գլխի տէր,
Եօթն օր մընացի քընած։

Լալուարայ ջուրը սառն ա,
Օտարութիւնը դառն ա.
Տո՛ւնըդ դարձիր, ի՛մ ազբէր,
Քոյրերըս պըստիկ դառն ա։

Կ. Վ.

ՅԱՆԴԻՄԱՆՈՒԹԻՒՆ (*)

Կայնել ես, կանչում էլ չես,
Եա՛ր.
Բօյէդ ամանչում էլ չես,
Եա՛ր.
Եա՛ր, ճայ. ճայ. ճայ. ճայ, ճայ.
Նա՛յ, ճա՛յ. ճա՛յ, ճայ. ճայ, ճա՛յ,
Եկար կշտովս անց կացար,
Եա՛ր,
Տէր ես ճանաչում էլ չես,
Եա՛ր:

Սև ամպը սարի գլխին,
Կաքաւը քարի գլխին.
Չէ՞, իրար խօսք ենք տուել՝
Էն բարձր դարի գլխին։

Կ. Վ.

ԿԱՊՈՒՏ ԱՉՈՒԻ ԱՂՋԻԿ

Կայնել ես վարդի հոլին,
Վարդի ճոլին, ճոլին.
Քամին տայ կրծքիդ մոլին,
Կրծքիդ մոլին, կրծքիդ մոլին:
Երեսիդ շողին մեռնեմ,
Շողին մեռնեմ, մեռնեմ.
Աչքերուդ կապուտ ծոլին.
Կապուտ ծոլին, կապուտ ծոլին:

(*) Նախ՝ «Գարուն ա ձուն ա արել»:

Իրար հետ ծաղիկ քաղենք,
Ծաղիկ քաղենք, քաղենք.
Թրչնամու սիրտը դաղենք.
Սիրտը դաղենք, սիրտը դաղենք:

Մէկ մէկու խօսքէ չելնենք,
Խօսքէ չելնենք, չելնենք.
Աշխարհքում քանի սաղ ենք,
Քանի սաղ ենք, քանի սաղ ենք:

Կ. Վ.

Կ'ԱՆՁՐԵՒԷ ՏՂԱՍ...

Կ'անձրեւէ, տղա՛ս.... Աշունը թաց է,
Թա՛ց աչքերուն պէս խեղճ խաբուած սիրոյն....
Պատուհանն ու դուռը գընա՛ գոցէ՛
Եւ դէմըս եկո՛ւր նստիլ վեհագոյն

Լռութեան մը մէջ.... Կ'անձրեւէ, տղա՛ս....
Կ'անձրեւէ՞ երբեմն հոգիիդ մէջ ալ,
Կը մրսի՞ սիրտըդ, եւ կը դողդղա՞ս՝
Խորհելով պայծառ արեւին անցեալ,

Դըրան մը ներքեւ գո՛ց ճակատագրին....
Բայց կուլաս, տղա՛ս.... Մութին մէջ յանկարծ
Ծանըր արցունքներ աչքէդ կը գլորին....

Լա՛ց անմեղութեան արցունքը անդարձ,
Լա՛ց չըգիտնալով, խեղճ անգէտ տղա՛ս,
Խե՛ղճ որսը կեանքին, ա՛հ լա՛ց որ մեծնաս....

Զ. ՊԷՐՊԷՐԵԱՆ   Վ. ԹԷՔԷԵԱՆ

ԿԱՆՉԷ՛ ԿՌՈՒՆԿ

Կանչէ՛, կռունկ, կանչէ՛, քանի գարուն է,
Ղարիբներու սիրտը գունդ գունդ արուն է.
Կռո՛ւնկ ջան, կռո՛ւնկ ջան, գարուն է,
Կռո՛ւնկ ջան, կռո՛ւնկ ջան, գարուն է,
Ա՛խ, սիրտս արուն է:

Կանչէ՛, կռո՛ւնկ, կանչէ՛, քանի արօտ է,
Աշխարհն է արեգակ, սիրտս կարօտ է.
Կռո՛ւնկ ջան, կռո՛ւնկ ջան, արօտ է,
Կռո՛ւնկ ջան, կռո՛ւնկ ջան, արօտ է,
Ա՛խ, սիրտս կարօտ է:

Կանչէ՛, կռո՛ւնկ, կանչէ՛, քանի արեւ է,
Աշնան կ'երթաս երկիր, եարիս բարեւէ.
Կռո՛ւնկ ջան, կռո՛ւնկ ջան, արեւ է,
Կռո՛ւնկ ջան, կռո՛ւնկ ջան, արեւ է,
Ա՛խ, եարիս բարեւէ:

Կ. Վ.

ԻՄ ԸՆՏՐԱԾԸ

Կապոյտ երկնքում
Աստղեր են փայլում,
Այլ և լուսնակը,
Ամենից սիրուն,
Ամենից փայլուն
Է արեգակը.
Կանանչ դաշտերում
Եւ այգիներում
Ծաղիկներ կան շատ.
Բայց չէ ոչ մինը՝
Վարդի նմանը,
Նա է բնութեան զարդ.

Սիրուն աղջիկներ,
Ինչպէս ծաղիկներ
Ամէն տեղ շատ կան,
Բայց իմ ընտրածը,
Սրտիս սիրածը,
Հրեշտակի է նման.

Դ. ԲԱՐԽՈՒԴԱՐԵԱՆ

ԳԻՆԵՐԳ

Կարմիր գինիով եղեր իմ գինով,
Երկրիս դառնալուն այժմ եմ ապահով.
Կը կոնծեմ գինին, կ'երգեմ ուրախ քաջ,
Մէկի դէմ հազար կ'ունենամ պահանջ:
Հա՛. հա՛, հա՛, հա՛,
Բաժակները թող հնչեն,
Հա՛, հա՛, հա՛. հա՛,
Ջի՛ն, չի՛ն, չի՛ն...
Հա՛, հա՛, հա՛, հա՛,
Սիրոյ կարմիր կարկաչէն
Թող յիմարները խրտչին:
Կաթիլ մ'ափսոսանք մի՛ շատ տեսնէք ինձ,
Աշխարհն ունի բիւր հոգեր ու կըսկիծ.
Թող մեզ չըզգաստնէ բախտին ելեւէջ,
Կեանքն ա՛յս է, այսպէս պիտի գըտնէ վերջ:
Հա՛, հա՛, հա՛, հա՛,
Բաժակները թող հնչեն.
Հա՛, հա՛, հա՛, հա՛,
Ջի՛ն, չի՛ն, չի՛ն...
Հա՛, հա՛, հա՛, հա՛,
Սիրոյ կարմիր կարկաչէն
Թող յիմարները խրտչին:

Դ. ԿԱՌՎԱՐԵՆՑ

ԳԻՒՂԻՍ ՃԱՄԲԱՆ

Կեանքի նաւակն հետք չըթողուց իր ետին,
Մոռացումը առաւ ինծմէ ամէն բան,
Հին երազներս ամպերու պէս կ'անհետին.
Յիշատակն ալ կ'անցնի երգի մը նըման...։

Հոգիս սակայն կը յիշէ քեզ,
Ո՛վ ծաղկաւէտ գիւղիս ճամբան,
Ուր քալէինք գառնուկս ու ես,
Դէպի պուրակն ու բուրաստան,
Անմեղութեան երազին մէջ։

Ու քովիկէդ ղօղղօղագին
Սահէր ագուոր, վըճիտ առուն,
Մերթ կամուրջին ու մերթ մարգին
Տակ պահուելով կ'երթար հեռուն,
Ամայութեան իբրև ոգին։

Բարակ, նիհար, քանի մը ճիւղ,
Կը դառնէին վտիտ բունէդ,
Մին՝ կը դիմէր դէպ՝ անշուք գիւղ,
Կը տարածէր կ'ըլլար անհետ,
Բոլորելով խրճիթն ու հիւղ։

Մին՝ մագլցէր բըլուրն ի վեր,
Միւսը կ'իջնէր ձորակէն վար,
Ուր ուռենին կուտար ըստուեր
Ու սըրինգն իր երգը կուլար,
Զոր կրկնէին գարնան հովեր։

Տաշուած քարէ, ուղիղ ճամբան,
Կը տանի զիս արդ դէպի ծովափ,
Կը ճըմլըւի հոգիս սակայն
Մըտածումով մը հըրատապ,
Ու կը թըռչիմ հին մանկութեան։

Կեանքի նաւակն հետք չըթողուց իր ետին.
Մոռացումը առաւ ինծմէ ամէն բան,
Հին երազներս ամպերու պէս կ'անհետին,
Յիշատակն ալ կ'անցնի երգի մը նըման,
Կանցնի՜ երգի մը նման...։

Ա. ՊԱՐԹԵՒԵԱՆ — Ռ. ՈՐԲԵՐԵԱՆ

ՏՐԵՆՈՅԹԻ ՊԱՐԵՐԳ

Կէս գիշեր է, ի՞նչ կեցեր ենք արթուն,
Կանուխ ելլել պէտք է վաղը առտուն.
Նարին յօ, յօ, նարին յօ, յօ, յօ, յօ,
Տանտիկինին կըլլեցուցինք յօ, յօ:

Մեր այս գիշերն զուարճալի անցաւ,
Տանտիկինին վաղուան գործը շատցաւ.
Եա նարին եա, նարին յօ, յօ, յօ, յօ,
Տանուտէրին կըլլեցուցինք յօ, յօ:

Հերի՛ք, երթանք, ժամանակը անցաւ,
Տանուտէրին պատճառեցինք շատ ցաւ.
Նարին յօ, յօ, նարին յօ, յօ, յօ, յօ,
Տանտիկինին կըլլեցուցինք յօ, յօ:

Քունն անուշ է, շատ անուշ է քունը,
Հըրամմեցէք օր մ'ալ մերին տունը.
Եա նարին եա, նարին յօ, յօ, յօ, յօ,
Տանուտէրին կըլլեցուցինք յօ, յօ:

Վերջ տանք մեր այս յօ, յօ, երգ ու պարին,
Մաղթենք իրար անուշ «գիշեր բարի».
Նարին յօ, յօ, նարին յօ, յօ, յօ, յօ,
Մենք ալ ձեզի կըլլեցուցինք յօ, յօ:

ՌԵԲԵԿԱ ԿԻՊԷՆԼԵԱՆ

ՄԱՐԱԼԻ ԽԱՅԼԻ

Կաքաւի պէս ման կուգաս, մարալ ջան,
Կը նմանիս ջէյրի խնձոր, մարալ ջան։
Ո՜յ, մարալ, մարալ, մարալ,
Մարալ, մարալ, մարալ ջան:

Իջանք չայիրնիրը, բռնինք ծանդըր պար,
Մարալ ջան,
Սարեր ետ գընացէք, իմ եարը թող գայ,
Մարալ ջան.
Սարեր ետ գընացէք, իմ եարը թող գայ,
Մարալ ջան:

Ա. ՏԵՐ ՂԵՒՈՆԴԵԱՆ

ՋՈՅԳ ԱՉԵՐ

Կէս գիշեր էր,
Պարզ գիշեր էր,
Կը փայլէին շատ աստղեր,
Գիշերն զով էր,
Գիշերն մեղմ էր,
Կը փնտռէի զոյգ աչեր։

Զեփիւռն մեղմիկ,
Հաւքերն անդորր՝
Ննջած էին խոր քընով,
«Առուն սիրուն,
Առուն մոլոր,
Կը հոսէր միշտ անխռով»։

Ճամբէս երկա՜ր,
Ճամբէս անծա՜յր,
Յոգնեցրիր իմ յոյսեր.
«Փնտռած էակ՝
Մի զոյգ աչեր,
Զը գտայ ես ոչ մի տեղ»։

Դ. ՂԱԶԱՐԵԱՆ   Կ. ԶԱՐԽՋԵԱՆ

ՊԱՐԵՐԳ ՄՈՒՍԱ ԼԵՌԱՆ

(ՍՈՒԷՏԱՀԱՅ ԲԱՐԲԱՌՈՎ.)

Կէրմէյր Փրատան հէգուած է,
Հէլէ, հէլէ, հէլէ, հիննայէ,
Զուց էլ էղուր մէլլուած է,
Հէլէ, հէլէ, հէլէ, հիննայէ.
Կիղիցէն րոյ գէցուած է,
Հէլէ, հէլէ, հէլէ, հիննայէ,
Պըր Նիշանւիմ էսուած է,
Հէլէ, հէլէ, հէլէ, հիննայէ:

Կուգիր ընհիր հէծուցը,
Ըրկը նոռ կիր հէր ծուցը,
Շիւտ ուղիցա չիտէօրգը,
Դարձու զարկից կըրծուցը։

Խախվ տունը միրէկի,
Միրէ կինող ջիրէկի,
Հիչ մը մէխնէք, էշկընիր,
Լուսընկլայս զըղ ցիրէկի։

Չիթիլրի լուսինկյայար,
Թեզու ի սրտէյս բայար,
Մոյլար, հիքէկր՛ս, մոյլար,
Սիրիմ գիչույրդ յայար։

Իրկէնքը չիտ այուցի
Էչկէյին էլի պարկուծի,
Կինչիյա՝ էր տուս իյու՝
Լույց «ԱՆ չիտ հէրրուծիս....։

ԹԵԼԼՈՒ ՋԱՆ

Կողրայ սարը դոշ է,
Մէջի մարդը բոշ է.
Ամա՞ն Թէլլու ջան Թէլլու,
Տախամ չորերից մեռնիմ։

Հագեր ես, ալ ես եղե,
Սրտից հիլալ ես եղե,
Հերուսյ խմ բերլուլ լեզու,
Լս տարի յալ ես եղէ։

Կարմիր քարը տաշած է,
Բոյրդ պալման քաշած է,
Ինչ էնիմ գալամ պաշը,
Սիրտս հալած, մաշած է,

ԿԻՒՐՃԻ ԱՂՋԻԿ

Կիւրճիստանի մարալ աղջիկ, քեզ ինչպէ՞ս երգեմ,
Ես քեզ ո՞նց երգեմ.
Երգըս սիրոյ մի գութան չի, որ սիրտըդ հերկեմ,
Որ սիրտըդ հերկեմ.
Ուր սիրոյ հուր սերմեր ցանեմ՝ ծաղիկներ բուսնեն,
Ծաղիկներ բուսնեն.
Սիրոյդ բոյրով, մարալ աղջիկ, քո սէրը սընեմ,
Քո սէրը սընեմ։

Որ սիրուն ես՝ գիտէի այդ դեռ խուլ Իրանում
Բոյրդ չինար, այտերըդ վարդ, հմայքըդ անհուն,
Երբ դեռ հոգիս լի էր առատ հազար հէքիաթով,
Դու էլ էնտեղ անկիւն գտար, աղջիկ հոգեթով։

Լսել էի հէքիաթներում հըրաշքներով լի,
Աշխարհ տեսած պապս էր պատմում՝ երբ մանուկ էի,
Դարեր անցան առւի նըման՝ զուարթ ու հասուն,
Պապըս մեռաւ, փոշի դառաւ, քեզ հետ եմ խօսում։

Կիւրճի աղջիկ, ես քեզ տեսայ կոլխոզի արտում,
Ոսկէ հասկի լազուտի պէս ժպտում էիր դուն,
Դիզել էիր չեղջը բերքիդ, լազուտը դեղին,
Կանչում էիր ձայնովդ անուշ՝ քո սիրած եարին։

Երբ վառում էր արեւը չէկ, լանջերըդ մարմար,
Աշխատում ես, կիւրճի աղջիկ, մեծ գործի համար,
Եւ ժպտում էր հոգիդ զուարթ ու դէմքըդ վառ ման,
Ձեր կոլխոզի արտի միջին լազուտի նըման։

Դ. ՂԱԶԱՐԵԱՆ — Գ. ՍԱՐԵԱՆ

ԿԼՈՐ ՊԱՐ

Կըլոր պար, մէջը ծառ,
Փեսայ, արի՛ հարսին տար.—

Տիրնանինէ, տիրնանինէ,
Նինէ նինէ, տիրնանինէ,
Պար եկողը, նոր փեսան է:

Ց. ԱՂԱԲԱԲԻ

ԿՈՂԲԱ ԽԱՑԼԻ

Կողբա իլան սէլերը,
Կըտրաւ հոգուս թելերը.
Կամաց քշէք սէլերը,
Կապեմ չուլբուս թելերը։

Ալ եղնիմ, ալ եղնիմ,
Դուչիդ վրայ խալ եղնիմ,
Թուշըդ պագնեմ օր - գիշեր,
Ես քո սիրած եարոն եմ:

—Աղջի գընանք մեր բաղչէն,
Բանանք մեր սըրտի բողչէն
Պագըմ դու տուր, պագըմ ես,
Թող դուշմաններն ամաչեն։

Ալ եղնիմ, խալ եղնիմ,
Դուչիդ վրայ խալ եղնիմ,
Թուշըդ պագնեմ օր-գիշեր,
Ես քո սիրած եարոն եմ:

Ա. ՏԷՐ ՂԵՒՈՆԴԵԱՆ

ԿՈՏ ՈՒ ԿԷՍ

Կոտ ու կէս կորեկ ունիմ ցանելու համար,
Ճնճղուկներ թըռան եկան ուտելու համար,
Կըռացայ քար մը առայ զարկելու համար։

Ա՜յ ճնճղուկիկ
Մանրատոտիկ,
Մոխրափորիկ,
Ոտես կուտիկ,
Խըմես ջրիկ,
Առուի եզրիկ,
Պըստիկ - մըստիկ:

Փախչիս երթաս ման գալու համար։

Ղասաբներ դանակ բերին մորթելու համար,
Աղջըկերք թեւ քաշեցին փետրելու համար,
Պառաւներ պըղինձ դըրին եփելու համար։

Ա՜յ ճնճղուկիկ *հեյն.*

Դուռ - դըրկից չուրջ բազմեցին ուտելու համար,
Տէրտէրներ խաչով եկան օրհնելու համար,
Աշուղներ սազով եկան գովելու համար։

Ա՜յ, ճնճղուկիկ *հեյն։*

Ռ. ՄԵԼԻՔԵԱՆ

Կ'ՈՒԶԵՄ ԻՅՆԱԼ

Կ'ուզեմ իյնալ սիրո՛յ բուրվառ՝
Անբիծ կոյսի բազկաց մէջ,
Եւ քաղցրաբոյր խունկի մը յար
Մխալ այնտեղ միշտ անշէջ....

Ա. ՏԽՐՈՒՆԻ

ՑԱՅԳԱՅԻՆ

Կ'ուզեմ լինեմ վըշտի ցօղեր,
Աչերիդ մէջ շող կայծեմ,
Լուռ գիշերուայ անուշ հովեր՝
Փունջ ծամերըդ փայփայեմ.

Կ'ուզեմ լինեմ վարդ նազելի,
Կրծքիդ վերայ վառվըռեմ,
Արշալոյսի շողեր ոսկի,
Դէմքիդ վերայ փայլփըլեմ.

Կ'ուզեմ լինեմ ծառ ու ծաղիկ,
Քեզ գըրկումըս նինջ սըփռեմ,
Թալուկ ըստուեր, Թովիչ հովեր,
Օրօր ասեմ, օրօրեմ.

Ինչ որ ցանկաս, կ'ուզես լինեմ,
Լինեմ երկինք ու երկիր,
Լինեմ ծով, ժայռ, արև, լուսին,
Միայն, միա՛յն ինձ սիրիր.

Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ　　Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ԿՈԼԽՈԶԻ ԱՂՋԻՆ

Կանգնել ես հըպարտ՝ կոլխոզի արտում,
Այտերըդ ձեռքիդ՝ հասկերի պէս վառ,
Ու քո վառ սէրդ է ծաղկել իմ սըրտում,
Կոլխոզի աղջիկ, աչերըդ պայծառ։
　Հէ՜յ, ջա՛ն հէ՜յ ջա՛ն, հէ՜յ ջա՛ն հէ՜յ,
　Ջան ջանիկ աղջիկ՝ հաստատ ու յամառ,
　Վառ երգեր եմ ես հիւսել քեզ համար։

Մեր ընթացքի հետ այս արագահոս,
Անվախ քայլում ես դու մեզ հետ առաջ,
Դարձել ես մեր նոր օրերի հերոս,
Կոլխոզի աղջիկ՝ և՛ արի և՛ քաջ.
　Հէ՜յ, ջա՛ն հէ՜յ ջա՛ն, հէ՜յ, ջա՛ն հէ՜յ, և լն.

Մի անհուն սիրով ես քեզ սիրեցի,
Ծըփան արտերի ոսկեվարս գրկում,
Անունըդ այնպէս պայծառ գըրեցի,
Կոլխոզի աղջիկ, իմ սիրոյ գըրքում.
　Հէ՜յ, ջա՛ն հէ՜յ ջա՛ն, հէ՜յ, ջա՛ն հէ՜յ, և լն։

Մ. ԿՈՐՅՈՒՆԻ　　Դ. ՂԱԶԱՐԵԱՆ

ԳԵՂՋԿԱԿԱՆ ՍԻՐԵՐԳ (*)

Կուժն առայ, եկայ առըր,
Ջըր գըտայ ֆիդան ծառըր.
Ֆիդան ծառըր ինձ արուէք,
Ջըր քաշեմ ահ ու դառըր։

(*) Յաջորդաբար երգել՝ «Սարէն եկա երկու մուխ» և «Գնա՛ գնա՛ նետիդ եմ»։

Մեծ սարի հովին մեռնեմ.
Ճէկ տըղի բոյին մեռնեմ.
Մի տարի ա չեմ տեսել,—
Տէսնողին աչքին մեռնեմ։

Բըլբուլը դարի վերայ,
Խընձորը ծառի վերայ.
Սիրած սիրածի տային,
Զոր գետնին՝ քարի վերայ։

Կ. Վ.

ԿՐԱՆԲԱՄԲՈՒԼԻ

Կրանբամբուլին այն օղին է,
Որ մեզի քաջ ծանօթ է,
Կը խմեմ ես, կը զուարճանամ,
Բոլոր աշխարհք հոգս չէ.
Երկինք, երկիր թէ կործանին՝
Ես կը խմեմ Կրանբամբուլին։

Թէ սիրուհիս գայ գիս գրկել,
Երեսներըս համբուրել,
Կորի՛ր, կ՚ըսեմ, չուտ առջեւէս,
Ա՛լ դու ինծի համար չես։
Ահա գրկած իմ սիրուհին,
Ես կը ճնկեմ Կրանբամբուլին։

Թէ նաղեքայլ աղջիկ մ՚ինձ գայ
Սիրոյս համար լայ ողբայ,
Հազար կտոր կտրտուի նէ՝
Ընա՛ւ իմին հոգս չէ՛,
Բայց շատ կ՚ողբամ երբոր կտրի
Շիշն ու փաւալթ Կրանբամբուլի։

Թէ հարսնիքի գիս հրաւիրեն,
Ոտքով գլխով կը վազեմ,
Մէկ բարձի վրայ ծերանալնուն
Հազար տարի կը մաղթեմ.
Հարսը թող տան իրեն փեսին,
Ինծի ձգեն Կրանբանբուլին։

ՀԱԲԸՐԲԱՆ

Հա՛բրբա՛ն,
Ջա՛նէ ջա՛ն.

— Սիրել եմ՝ սերն երեսին,
Անթառամ թերն երեսին.
Ով իմ սիրածն ինձ չի տայ,
Աստըծու կերն երեսին։
Հաբրբան,
Ջանէ ջան.

— Սարի թըրթընջուկ թաղա,
Մեղր ու շաքար քեզ մաղա,
Ինձ պէս նաղանի աղջիկ,
Քեզ պէս տըղին ո՞նց սազայ։

— Պըզտիկ աղջիկ, համ ունիս,
Զորեքղիմաց ծամ ունիս,
Խունջիկ - մունջիկ մի՛ անի,
Ինձ առնելու կամ ունիս։

— Գուլթանըդ հոլա՛, հոլա՛,
Գուլթանիդ տակը քոլ ա,
Քանի՞ գըժութիւն անես,
Քեզի առնողը տոլ ա։

— Ձեր տան տակին վար կ'անեմ,
Չար ագռաւին քար կ'անեմ,
Թող իմ սիրածն ինձի տան,
Դըժուութիւնըս թարկ անեմ։
= Ջուրը իր ճամբով կ'երթայ,
Յօղածը վարդի թերթ ա,
Ինձ սիրող կըտրիճ տըղէն՝
Հազարի մէջ մի բերդ ա։
— Բուսել ես բաղի միջին,
Շամամի թաղի միջին.
Գիշեր ցերեկ միալար,
Դու ես իմ խաղի միջին։
= Աշուղի պէս խա'ղ ասա,
Բըլբուլի պէս տա'ղ ասա,
Ինչքան որ գովես՝ արժեմ,
Իմ մօր գովական փեսայ։

* * *

Հայրիրան, ջան է ջան.
Աղջի անուշ է Շուշան,
Արի երթանք Սուրբ Նշան,
Ջան է ջան,
Մատնիք տըւի քեզ նշան։
Արև դիպաւ սարերուն,
Կաքաւ թռաւ քարերուն,
Եղօն կայնէ վըր դարուն։
Ձուկն էկաւ, նստաւ կալին,
Թըման չունիմ ձըր մալին,
Կարօտ եմ յերսիդ խալին։

* * *

Հայրիրան, ջան է ջան.
Արագից ջուր ա գալի,
Հարցըրէք ո՞ւր ա գալի,
Մի յար սիրուն սիրական,
Բաժանման լուր ա գալի։

Աղուր եմ եփել աղի.
Ուտողի սիրտը դաղի,
Ես ու դուն իրար սիրենք,
Թող դուշմանը կատաղի։

Ո՞նց անկի ես բար չունիս,
Ո՞նց ջահել ես, եար չունիս,
Երկնքի ղուշ ես դառել,
Իջնելու ումուտ չունիս։

* * *

Հայրիրան

Խօր ամպ ա պարզում չի,
Սիպտակ դէյրեն սաղում չի,
Օխտը տարի ալ հագնիս, ջանէ ջան,
Սիրտդ սև ա սաղում չի։

Պուճուր աղջիկ ղալում ես,
Մազերդ ոլալում ես,
Ամէն ինձի տեսնելիս, ջանէ ջան,
Աչքով ունքով անում ես։

Ամպել ա բութա - բութա
Կերածդ կարմիր թութ ա,
Ես սիրել եմ, ես կ'առնեմ, ջանէ ջան,
Թող գեղով ասեն սուտ ա։

Կայնել ես ախտա-պախայ,
Եայլուղիդ տուտը կախ ա,
Սև տղայ, սիպտակ աղջիկ, ջանէ ջան,
Բռնել են իրար եախայ։

Արաղն յընցայ էն կուռը,
Քաղեցի դաստայ նուռը,
Ես չեմ առնի էն ծուռը, ջանէ ջան,
Կ'երթամ կ'ընկնիմ սև ջուրը։

* * *

Հարբրբան,
Ջանէ ջան,
Հարբրբանը նստել ա,
Սինամ սարը մրնել ա.

— Մողնըքայ ջուրը լողցայ,
Մողնըքայ չուչէն փողցայ,
Օխտը տարի հիւընդցայ,
Եարիս տեսայ լաւընցայ։

— Մողնըքայ ջուրը սառն ա,
Մողնի է թողն իմ եարն ա,
Թող էրթայ մուրազն առնի,
Ես դառնայ սիրածն առնի։

— Ջուխտ գութան արտ կը բանի,
Շէկ աղջիկ հաց կը տանի,
Շէկ աղջըկայ ծամերը
Խելքս ու իմանս կը տանի։

— Ալագեազը ձընել ա,
Եարըս տակին քընել ա,
Ձէն կուտամ՝ ձէնըս չ'առնի,
Էս ի՞նչ անուշ քընել ա։

ՍԻՐԵՐԳ

Հագեր ես կարմիր, կայներ ես կալը,
Օրըս սեւ արիր, կապեր ես ալը.
Փըշերն ինձ թողիր, դուն քաղիր վարդը,
Դուն սիրտըս քըցիր էս զուլում դարդը,
Դարբէզար արիր ու դադար չունիմ,
Դարդամահ արիր, անունի՛դ մեռնիմ...

Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

ՀԱԶԱՐ ԵՐՆԷԿ

Հազա՛ր երնէկ էն գիշերին,
Որ դու ինձ խօսք տըւեցիր.
Լացող թռչնիկ, իմ հէք սրտին՝
Երգըդ զարկիր խըրեցիր։
Էն օրուանից պէխաբար,
Եղար դու էլ խելագար,
Եա՛ր, եա՛ր.
Ո՛չ մի անգամ մօտիկ կուգաս,
Ոչ էլ խաբար կը հեռանաս։

Ոսկէ թասը ձեռքը գինով՝
Անուշ գինով մուրազի,
Կը տաս նրան հազար նազով՝
Ով որ քեզ կը երազի....։
Էն օրուանից պէխաբար, եւն.

ԱՇՈՒՂ ՇԵՐԱՄ

ՀԱՄԲԱՐՁՈՒՄ
(ԱՆՈՒՇ)

Համբարձումն եկաւ, ծաղկունքը արեան
Ցօղել են հանդեր նախշուն գորգերով,
Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան
Վիճակ հանելու աշխոյժ երգերով.

«Համբարձում, եայլա,
Եայլա ջան, եա՛յլա,
Սև սարեր եա՛յլա,
Եայլա ջան, եայլա։

Երգ ու բոյլ խառնած,
Թև-թևի բռնած
Զուգում են լեռներ,
Ծաղիկ են քաղում,
Ծաղկի հետ խաղում,
Ինչպէս թիթեռներ։

Համբարձում, եայլա,
Եայլա ջան, եայլա,
Լաւ օրեր, եայլա,
Եայլա ջան, եայլա։

***

Ա՛յ ջան տըղայ. չորան տըղայ, ո՞ւմն ես դու.
Աստուած գիտի, աշխարհ գիտի՝ իմն ես դու:
Համբարձում եայլա, ելի։

Պէխը ծիլ ծիլ. բոյը գիլ գիլ, էն եարին,
Ինչ զարդ ունիմ քանի նա կայ աշխահին։
Համբարձում եայլա, ելի։

Ա. ՏԻԳՐԱՆԵԱՆ　　　　Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՀԱՅՈՑ ԱՂՋԻԿՆԵՐ

Հայո՛ց աղջիկներ, ձեր հոգուն մատաղ,
Երբ միտս էք գալիս՝ ասում եմ ես ա՜խ,
Հալւում եմ, հալւում օտարութեան մէջ.
Ա՜խ, սիրտըս խորւում, ցաւիս չկայ վերջ։

Երբ կարմիր գինին բաժակումս տեսած՝
Սեղանիս վըրայ առաջս է դրած՝
Աչքըս ակամայ վըրան եմ ձգում,
Ձեր սիրուն պատկերն եմ մէջը տեսնում։

Հայո՛ց աղջիկներ, ձեր հոգուն մեռնեմ,
Ձեր սիրուն աչերն էլ ե՞րբ կը տեսնեմ,
Էն սև սև աչերն սև ունքով պատած,
Կարծես՝ երկնային գալամով քաշած։

Էլ ե՞րբ կը տեսնեմ ես ձեզ ման գալիս,
Բաղ ու բաղչայում սէյրան անելիս,
Որտեղ ամօթից վարդն էլ է դեղնում,
Երբոր ձեր կարմիր թըշերը տեսնում։

Հայոց աղջիկներ, ի՜նչ անուն տամ ձեզ,
Թէ հրեշտակ ասեմ՝ հրեշտակ չեմ տեսել,
Թէ մարդ անուանեմ՝ բեթամաղ կ'անեմ,
Ուրեմն ի՞նչ անեմ, մոլորուած եմ ես։

Ձեր սէրն է միայն սրտումս պահուած,
Ձեր սիրով միայն եմ ես կենդանի,
Ձեր սէրը միայն էս կեանքս մաշուած,
Օտարութեան մէջ դեռ կը պահպանի։

Ա. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

ՕՀԱՆ ԵՒ ՇՈՂԻ

(ՈՒՇ ԼԻՆԻ, ՆՈՒՇ ԼԻՆԻ)

— Հանգիստ եղիր, Օհան ջան,
Ես կը սարքեմ ամէն բան,
Հէնց էս օր կը պըսակենք,
Որախ հարսնիք կը սարքենք,
Մի բարձի կը ծերանանք,
Կը վայելենք հանգիստ կեանք։

= Հանաքը մէկ կը լինի,
Անհամութեան չեն հասցնի,
Ձեռք վերցրու դու ինձանից,
Մի խօսի էլ Նշանից,
Դու ինձ գըլխից հանեցիր,
Զօրով վըզիս կապուեցիր։

— Ես հօ՛ քեզ մօտ չեմ եկել,
Դու ես եկել, ինձ գըտել.
Էս մատանին տուեցիր,
Մարդկանց մօտ նըշանուեցիր,
Հիմա ո՞նց ես յետ կանգնում,
Ու ինձ խայտառակ անում։

= Ա՜, կնիկ գլխիս ցաւ դարձար,
Խաբէութեամբ կնիկ դարձար,
Ջակօնով մեծ պատօքա,
Սրա պատիժը շատ սորօքա.
Ո՞ւմ կ'ուզես դու հարցըրու,
Ինձանից դու ձեռք վերցրու։

— Ես վախեցող պտուղ չեմ,
Քեզ մի պայման կը դնեմ,
Նաչալնիկից դու ձեռք վերցրու,
Տըղուդ էլ խօսք հասկացրու.
Փաստափուստդ քաշեցէք,
Նաչալնիկին հանգիստ թողէք։

Գ. ԵՐԻՑԵԱՆ

ՏԱՂ ՍԻՐՈՅ

Հարբել եմ ու չեմ գինով,
Ես կ'այրիմ ու չեմ կըրակով։

Հագել եմ սիրուն շապիկ,
Աղուորի դուռը կայնելու։

Աղուորն ալ ներսէն ի դուրս,
Ծոցը լի կարմիր խընձորով։

Ասի՝ թէ հատ մի առնեմ,
Թունդ եկաւ թուխ աչքը լալով։

Լացաւ ու լալով առաւ.
«Եա՜ր, ինձ խաղք արիր ցերեկով.

«Բըռնեցիր զօռով ճօռով,
Պագ արիր հազար նազերով.

«Այն մէկ ցերեկուան պագը,
Որ կ'արժէ հազար գիշերուան»։

Ն. ԲՈՒԶԱԿ

Կ. Վ.

ԾՈՎԻ ԵՐԳԸ

Հարհանդ մարմանդ շողշողուն ծով,
Ալիքներով ինձ գրկէ,
Տար, գուրգուրայ, քո թեւերով,
Կուրծքիդ վրայ օրօրէ։
Դողդոջ երգը, լուռ գիշերին,
Իմ ականջին դու երգէ,
Գէթ մի պահիկ, վշտոտ սիրտըս
Ա՜խ, հանգստի կարօտ է։

Յուշեր, յոյզեր, երազներ վառ,
Մեղմ հեզաբար, շշնում են.
Սիրտ դադարիր, իմ անուրջ սիրտ,
Ծովն երգէ մեղմօրէն.
Շողշող հեռուն, մշուշ և լոյս
Ափերն անյոյս երազուն.
Միտքս թափառ, ա՜խ ոսկեվառ
Արև ափերն երազում։

Գիշերը հով, գիշերը զով,
Հովն էր փչում, հեզ, անուշ,
Մտամոլոր քո ափերով
Քայլել եմ մինչ արշալոյս։
Ասա՛, դու ծով, ինչո՞ւ այդպէս
Հառաչում ես անդադար.
Եկայ քեզ մօտ հանգիստ առնեմ,
Ա՜խ, հանգստի կարօտ եմ։

Ա. ՄԱՅԻԼԵԱՆ — ԿՈՍՏԱՆԵԱՆ

ԵՐԱԶ

Հեռաւոր ու ամայի, ծովերու մէջտեղ,
Ես ունենայ կ'ուզէի պալատ մը բիւրեղ։
Եւ երթայինք քե՛զ հետ միասին, սիրակա՛ն,
Թաղել մեր սէրն այդ բոյնին մէջ առանձնութեան։
Մեր շուրջը գիծ բաժանման, երկնի և ծովուն.
Խաժ հորիզոն մ'հեշտական բոլորէ՛ր անհուն։
Հոն պատմէինք իրարու, յառած աչք աչքի,
Մեր խօլ երազն օդաչու, մեր երազը ոսկի։
Ու մեզ միայն լըսէին լուռ ժայռերն անշարժ,
Մեզ միայն տեսնէին ամպերը շըղարշ։
Ծովուն շըշունչն իր խորին երգով վեհափառ,
Օրօրէր սէրը մերին, մինչև մահը գար։

ԱՐԱՅ ՊԱՐԹԵՒԵԱՆ — Ա. ՋՕՊԱՆԵԱՆ

ՄՈՌԱՑԱԾ ՈՒՂԻ

Հեռու գղեակի քնքոյշ թագուհին
Ծաղիկների մէջ, լուսեղէն այգում
Շրջում է և ինձ կանչում է կրկին
Ցերեկը տրտում, գիշերը անքուն,
Հեռու գղեակի քնքոյշ թագուհին։

Կար մի դիւթական ուրիշ ժամանակ,
Երբ նրա կանչի հրաշքին հլու՝
Ես թողնում էի օրերըս մենակ
Եւ այս աշխարհից սլանում հեռու...
Կար մի դիւթական ուրիշ ժամանակ...

Գինովցած մի այլ կեանքի խնդութեամբ
Թողնում էի այս վայրերը թառամ,
Սլանում, որպէս լուսեղէն մի ամպ,
Ես փարում նրան, փայփայում նրան,
Գինովցած մի այլ կեանքի խնդութեամբ։

Հիմա չը գիտեմ այն լուսէ ուղին.
Բայց զգում եմ դեռ, զգում եմ ինչպէ՛ս
Հեռու դղեակի քնքոյշ թագուհին
Կանչում է ինձ միշտ, կանչում է, բայց ես
Արդէն չը գիտեմ այն լուսէ ուղին...

Ռ. ՄԵԼԻՔԵԱՆ — ՎԱՀԱՆ ՏԷՐԵԱՆ

ՀԵ՛Յ ԻՄ ՍԻՐՈՒՆ

Հէ՛յ, իմ սիրուն, հազար սիրուն,
Դրախտի խնձոր ալուչ մալուչ,
Ա՛յ, եղնիկի չաքար ծորուն,
Բայց նրանից քաղցր ու անուշ։

Սիրուններում ընտիր սիրուն,
Աստուած ի՞նչ լաւ է քեզ գծեր,
Կաթով շաղուած են մօլօրուն
Քո թաքցրած չամամ ծծեր։

Եա՛ր, կը մեռնիս, կը գայ օրը,
Ծոցըդ՝ երկինք չես տանելու,
Ճիճուն կ'ուտէ այդ բոլորը,
Միթէ ի՞նձ ես լոկ զրկելու։

ԱՇՈՒՂԻ ՋՐՈՅՑԸ

(ԹՄԿԱԲԵՐԴԻ ԱՌՈՒՄԸ)

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Հէ՛յ պարոններ, ականջ արէք
Թափառական աշուղին,
Սիրո՛ւն տիկնայք, ջահե՛լ տղերք,
Լա՛ւ ուշ դըրէք իմ խաղին։

Մենք ամենքըս հիւր ենք կեանքում
Մեր ծնընդեան փուչ օրից.
Հերթով գալիս անց ենք կենում
Էս անցաւոր աշխարհից։

Անց են կենում սէր ու խընդում,
Գեղեցկութիւն, գանձ ու գահ,
Մահը մերն է, մենք մահինը.
Մարդու գործն է միշտ անմահ։

Գործն է անմահ, լա՛ւ իմացէք,
Որ խօսւում է դարէ դար,
Երնէ՛կ նրան որ իր գործով
Կ'ապրի անվերջ, անդադար։

Չարն էլ է միշտ ապրում անմեռ.
Անէ՛ծք նրա չար գործքին,
Որդիդ լինի թէ հէրն ու մէր,
Թէ մուրազով սիրած կին։

Ես լաւութեան խօսքն եմ ասում,
Որ ժըպտում է մեր սըրտին.
Ո՞վ չի սիրում, թէկուզ դուշման,
Լաւ արարքը, լաւ մարդին։

Անց ենք կենում... միայն անմահ
Գործն է խօսում լաւ ու վատ.
Ա՜խ, երանի՛ ով մարդ կը գայ
Ու մարդ կ'երթայ անարատ։

Ա. ՍՊԵՆԴԻԱՐԵԱՆ   Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԼԱՆՋԵՐ ՄԱՐՋԱՆ

Հէ՜յ ջան է ջան, լանջեր մարջան,
Մատաղ լինի հոգիս ձեզ,
Ինձ էլ տարէք, ձեր գիրկն առէք,
Ծով դարդերըս պատմեմ ձեզ։

Հեռու երկրի, խոր ձորերի,
Մութ ափերին անգիւման,
Իմ արեւին, կեանքիս հովին,
Հողմն է ծեծում վա՜խ, աման։

Քնքո՜ւշ սարեր, զմրուխտ գիշեր,
Ճամբայ տըւէք թող տուն գայ,
Սիրոյ անյագ ծարաւ պապագ,
Ջահել ջիւան եա՜րըս գայ։

Դ. ՂԱԶԱՐԵԱՆ   Վ. ԱՂԱՍԵԱՆ

ՎԷԼԻ ՑԻ ԹԷԼԼԻ
(ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ)

— Հըլէ՛ ինձ համար մարալ ես,
Ես քո աչերից մատաղ,
Ի՞նչ կ'ըլլի ինձ եար ըլլիս,
Ես քո ծամերից մատաղ։

— Դու ինձ համար մարալ չես,
Ի՞նչ ես ուզում ինձանից.
Լաւն այն է որ հեռանաս,
Ուր որ է կը գայ աղէս։

* * *

ԹԷԼԼԻԻ ԵՐԳԸ

Ս՛կ իմ սիրած, քեզ եմ սպասում,
Գիշեր ցերեկ մտածում եմ,
Աղի արտասուք թափում եմ,
Այրւում եմ, բայց քեզ չեմ տեսնում։

Ի՞նչ կը լինէր յանկարծ գայիր,
Էրւած սրտիս ճար բերէիր,
Ձեռքիցս բռնած տուն տանէիր,
Սիրո՛ւն Թէլլի ինձ ասէիր։

Ես էլ կրծքիդ փաթաթւէի,
Ծիծաղէի, արտասւէի,
Քո Թէլլին եմ քեզ ասէի,
Մարմար կրծքիդ ես փարւէի։

ԾԱՂՐԵՐԳ ԱՂՔԱՏՈՒԹԵԱՆ (*)

(ԿԱԹ ԿԹԵԼՈՒ ԵՐԳ)

Հինգ էծ ունիմ, ու էծերով,
Իլիլի, դիլիլի.
Կաթ կը կթեմ պղինձներով.
Իլիլի, դիլիլի.
Մեր կը չափեմ կալի չափով,
Իլիլի, դիլիլի.
Եղ կը հանեմ լըւի տըկով։
Իլիլի, դիլիլի։

Կ. Վ.

(*) *Յետոյ երգել՝* «Ջա՛ր զրնգը»:

ՀՈՌՈՄԵԼ Ա ԽԱՐՍ (**)

Հոռո՛մ, հոռոմ, Հոռոմել ա
Խարս.
Վարդը ձեռին թռոմել ա,
Խարս.
Աղջի՛, Հոռոմ, մատանին դըրել ես,
Նըշանուել ես, խարոյիդ խաբել ես։

Հոռոմ, Հոռոմ, Հոռոմել ա
Խարս.
Վարդ եմ թափել, թռոմել ա
Խարս.

(**) *Յաջորդաբար՝* «Երեւան բաղ եմ արել» «Մեր բաղը ծառ ա» և «Իմ Ջինար խարին»:

Աղջի՛ Հոռոմ, ոսկեքը կապել ես,
Նըշանուել ես, խարոյիդ խաբել ես։
Հոռոմ, Հոռոմ, Հոռոմել ա
Խարս.
Արեւ տեսե՝ թռոմել ա
Խարս.
Աղջի՛, Հոռոմ, բաղդադին կապել ես
Նըշանուել ես, խարոյիդ խաբել ես։

Հոռոմ, Հոռոմ, Հոռոմել ա
Խարս,
Նըշանուել ա, թռոմել ա
Խարս.
Աղջի՛, Հոռոմ, գըրողը քեզ տանի,
Արժանի չես մի քըթոց դարմանի։

Կ. Վ.

ՀՆՁԻՈՐԻ ԵՐԳԸ

Հով արա Լեզվար
Հո՛վ քամի ա.
Մեր մշակը հով կամի,
Մեր մշակը շոգել ա,
Վործ գոմշի պէս
Շոգել ա։
Լեզվար ամպ է
Ցօ՛ղ արա,
Էս օր քիչ ամպ շող արա
Մի քիչ մեզ բան
Թող արա. հէ՛յ...
Հով արա Լեզվար,
Հո՛վ քամի ա։

Յ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

ՀՈ՛Վ ԱՐԷՔ

Հո՛վ արէք, սարե՛ր ջան, հո՛վ արէք,
Իմ դարդին դարման արէք։—
Սարերը հով չե՛ն անում,
Իմ դարդին դարման անում։

Ամպե՛ր, ամպե՛ր, մի քիչ զո՛վ արէք,
Վարար անձրեւ թափէք, ծո՛վ արէք.
Գէշ մարդու օր-արեւը
Սեւ հողի տակով արէք։

Հո՛վ արէք, ամպե՛ր ջան, հո՛վ արէք,
Իմ դարդին դարման արէք։—
Ամպերը հով չե՛ն անում,
Իմ դարդին դարման անում։

Սարե՛ր, ձորե՛ր, դաշտե՛ր ու ջրե՛ր,
Մարմանդ-մարմանդ վազող աղբիւրնե՛ր,
Մի լե՛ր կացէք, իմացէ՛ք,
Տեսէ՛ք իմ սրտի ցաւեր։

Հով արէք, սարե՛ր ջան, հո՛վ արէք,
Իմ դարդին դարման արէք։
Սարերը հով չե՛ն անում,
Իմ դարդին դարման անում։

Կ. Վ.

ԼԱ՛Ց, ՄԷՐԻԿ ՋԱՆ

Հայերն առան սար ու դարեր,
Ամպերն եկան, մութն ընկաւ,
Անգին մէրի՛կ, հերի՛ք յուսաս.
Քո չողչողուն աստղն ընկաւ։
Լա՛ց, մէրիկ ջան, որ էլ չե՛մ գայ,
Վէրքը սրտիս՝ տուն չեմ գայ։

Կաթիլ-կաթիլ ամպն է ցօղում
Սեւ ու պղտոր երկընքէն,
Մաղիկ-մաղիկ վէրքս է ծորում
Իմ անդուման, սեւ սրտէն։
Լա՛ց. մէրիկ ջան, որ էլ չե՛մ գայ,
Վէրքս խորն է. ճար չկայ։

Անգութ կեանքում վէրք ըստացայ
Սրտանց սիրած ընկերէս.
Անխիղճ կեանքում վէրք ըստացայ
Անուշ սիրած քուրիկէս...
Լա՛ց, մէրիկ ջան, որ էլ չե՛մ գայ.
Ազիզ բալէդ էլ չկա՛յ...

Գր. ՍԻՒՆԻ — ԱՒ. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ՀՈՎԻՒԸ ՍԱՐՈՒՄ ՏԽՐԵՑ

Հովիւը սարում տխրեց,
Սիրոյ երգը նուագեց.
Երգը վառ աչերին, երգը վառ այտերին,
Երգը վառ օրերին։

Հէ՛յ, խեղճ հովիւ, քեզ բաժին
Խոր ձորին մընացիր,
Երգը վառ աչերին, երգը վառ այտերին,
Երգը վառ օրերին։

Ահա կուգայ նոր գարուն
Ծաղիկներով զարդարուն,

Սիրում եմ գոյնզգոյն ծաղիկներ,
Հա՛, հա՛, հա՛, գոյնզգոյն ծաղիկներ.
Հէ՜յ, խեղճ հովիւ, քեզ բաժին
Խոր ձորին մընացիր։
Երգը վառ աչերին, երգը վառ այտերին,
Երգը վառ օրերին:

Բ. ԿԱՆԱՉԵԱՆ

ՓԱԹՊԱՐ (*)

Հո՛վ, հո՛վ. հո՛վ լինի,
Եարիս տունը ծո՛վ լինի.
Թո՛ղ, թո՛ղ, թո՛ղ լինի.
Եարըս համարո՛վ լինի:
Դէ՛ զանէ՛ք, զանէ՛ք, հո՛ղը հանէք,
Մեր բըռնամու դո՛ղը հանէք:

Ծաղիկ ես ծաղկանց միջին,
Հո՛վ. հո՛վ, հո՛վ լինի,
Մի հատ ես աղջկանց միջին,
Եարիս տունը ծո՛վ լինի,
Եա՛ր, ինձ պարզերես արա,
Թո՛ղ, թո՛ղ. թո՛ղ լինի,
Իմ ընկեր մարդկանց միջին։
Եարըս, համարով լինի:
Դէ՛, զանէք, զանէ՛ք, հո՛ղը հանէք,
Մեր բըռնամու դո՛ղը հանէք:

(*) *Նախ երգել՝* «Ալագեազ սարն ամպել ա», Մեր դռանը խնկի ծառ» *և* «Ծորորա անուշ ջան»:

Արի՛, մի փաթպար խաղանք
Տընկող մընանք, չը կաղանք.
Հարսանիքիդ ալիւրը
Մուղն ու ուխտից վաղ աղանք։
Իրար հետ բաղը գընանք.
Ուտենք, խըմենք, լիանանք,
Թըշնամու աչքը հանենք,
Մեր Աստըծուց գոհանանք։
Կ. Վ.

ՀՕԴԱԼԼՕ ՋԱՆ

Հօ՛դալլօ, ջա՛ն, հօ՛դալլօ, ջա՛ն, հօ՛դալլօ,
Աղջի՛կ սիրուն, աղջի՛կ անուշ, դալալլօ
Կայնել ես ալբերակին,
Հօ՛դալլօ, ջան հօ՛դալլօ,
Ծով կը տաս արեգակին,
Դա՛լալլօ, ջա՛ն, դա՛լալլօ,
Քո չոլ երեսին մեռնեմ,
Հօ՛դալլօ, ջա՛ն, հօ՛դալլօ:
Ունքերիդ աղեղնակին.
Դա՛լալլօ, ջա՛ն, դա՛լալլօ:

Մազերըդ ոլորել ա,
Աչքերըդ բոլորել ա,
Երկ' օր ա, չեմ տեսել.
Իմ սիրտը մոլորել ա։

Փող ես ուզում, քեզ փող տամ,
Ոսկի տամ, ո՛չ թէ հող տամ.
Թէ դըրան էլ հաւան չես,
Հոգիս հանեմ, քեզ փոխ տամ։
Կ. Վ.

ՀՈՎՆ ԱՆՈՒՇ

Հովն անուշ, հովն անուշ,
Էն լուսընկայ ծովն անուշ։
    Հովն անուշ, հովն անուշ,
    Էն սարերի չոգն անուշ։

Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

ՀՕ՛, ԽԱ՛, ՀՕ՛, ԽԱ՛...

(«ԶԱՐՏԱՇ» ՕՓԷՐԷԹԷՆ)

(ՍԻԼՎԱՅԻ ԵՐԳԸ)

Հօ՛, խա՛, հօ՛, խա՛,
Ես զաւակն եմ ժայռոտ սարերուն։
Հօ՛, խա՛, հօ՛, խա՛,
Բարձր լեռներուն, այնտեղ հեռո՛ւն.
Ուր կը ծաղկի սիրուն էտըլվայս,
Ուր ձիւնը կայ մարգըրտի պէս։
Հօ՛, հօ՛, հօ՛, հէ՛յ...
Սիրտըս ուժգին կը բաբախէ։
Մեզ նման աղջիկներու հետ չըլլար խաղ.
Սիրոյ մէջ կ'ուզենք ըլլալ անկեղծ, ապրիլ խաղաղ։
Եթէ կ'ուզես ժամանց յիմար,
Գըտի՛ր աղջիկ քեզ յարմար,
Եթէ կ'ուզես ինձ միայն
Սիրել մաքուր սիրով յաւիտեան,
Հոգիս սիրաբաղձ, կուտամ անդարձ։

ՍՕՍ ԵՒ ՎԱՐԴԻԹԵՐ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Հօ՛, երդում կ'անե՛մ,
Որ քեզ չեմ թողնի,
Կեանքըս ոչ ոքի
Հետ ես չեմ կապի։
Առանց քեզի ես
Պիտ' մնամ անտէր.
Է՛լ մնաս բարով,
Է՛լ գնաս բարով,
Է՛լ մնաս բարով,
Է՛լ գնաս բարով,
Է՛լ մնաս բարով։

Դ. ՂԱԶԱՐԵԱՆ   ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆՑ

ԿԱԼԵՐԳ

Հօ՛, ռօ՛լ, օ՛, լօ՛, լօ՛, լօ՛։
Ա՛րի, ա՛րի, քե՛ մատաղ,
    Հօ՛, Ե՛զը, ջա՛ն
    Հօ՛, ռօ՛ւել, հօ՛,
    Հօ՛, ռօ՛ւել, հօ՛։

Հա՛, կա՛լ արա, մա՛ն արա,
    Հօ՛, Ե՛զը, ջա՛ն.
    Հօ՛, ռօ՛ւել, հօ՛,
    Հօ՛, ռօ՛ւել, հօ՛,

Հա՛, կալը դարման արա.
    Հօ՛, Ե՛զը, ջա՛ն,
    Հօ՛, ռօ՛ւել, հօ՛,
    Հօ՛, ռօ՛ւել, հօ՛։

Յորենն ինձ, գարմանը քեզ.
Հօ՛, Ե՛զր, ջա՛ն,
Հօ՛, ռօւել, հօ՛,
Հօ՛, ռօւել, հօ՛:

Հաչանը գարման արա,
Հաչանը գարման արա.
Պռէ՛րէ, հօ՛մ, պռէ՛,
Պռէ՛րէ, հօ՛մ, պռէ՛,
Պռէ՛րէ. ջա՛ն,

Կ. Վ.

ՍԱՅԼԵՐԳ ՂԱՉԱԽ ԳԱՒԱՌԻ

Հօ՛լ արա, գո՛մէշ, ջա՛ն,
Հօ՛լ արա, գո՛մէշ, ջա՛ն,
Հօ՛լ արա, գո՛մէշ, ջա՛ն,
Հռօլօ՛, հռօլօ՛, հռօլօ, հօ՛.
Հօ՛լ ել, հօ՛լ ել, հօ՛լ ել, հօ՛լ ե՛լ,
Հօ՛, ջա՛ն, հօ՛:

Թօ՛լ արա, գո՛մէշ ջա՛ն.
Թօ՛լ արա, գո՛մէշ, ջա՛ն,
Թօ՛լ արա, գոմէշ, ջա՛ն,
Հռօլօ՛, հռօլօ՛, հռօլօ՛, հօ՛.
Հօ՛լ ել, հօ՛լ ել. հօ՛լ ել, հօ՛լ ե՛լ.
Հօ՛ ջա՛ն հօ՛:

Կ. Վ.

ՍԱՅԼԵՐԳ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ

Հօ՛լ արա, ե՛զը,
Ջա՛ն, ա՛ղբէր. ջա՛ն, հօ՛,
Թօ՛լ արա, ե՛զը,
Ջա՛ն, ա՛ղբէր,
Դէ՛, սի՛րուն, ե՛լ, ե՛լ, ե՛լ, ե՛լ,
Դէ՛, ծի՛րան, ե՛լ, ե՛լ, ե՛լ, ե՛լ,
Դէ՛, տո՛կան, ել՛, ել՛, ել՛, ել՛, հօ՛:

Հօ՛լ արա ակը,
Ջա՛ն, ա՛ղբէր, ջա՛ն, հօ՛.
Թօ՛լ արա ակը,
Ջա՛ն, ա՛ղբէր.
Դէ՛, սի՛րուն, ե՛լ. ե՛լ, ե՛լ, ե՛լ.
Դէ՛, ծի՛րան. ե՛լ, ե՛լ, ե՛լ, ե՛լ,
Դէ՛, տո՛կան, ե՛լ, ե՛լ, ե՛լ, ե՛լ, հօ՛:

Կ. Վ.

ՍԱՅԼԵՐԳ

Մարա՛լ գոմէ՛շ, նաղ կանէ,
Դէ՛, ե՛լ, ե՛լ, դէ՛, ե՛լ, ե՛լ, դէ՛, ե՛լ, ե՛լ.
Պոչը փոթթէ՝ թօզ կանէ.
Դէ՛, ե՛լ, ե՛լ, դէ՛, ե՛լ. ե՛լ, դէ՛, ե՛լ, ե՛լ, ե՛լ:
Մարա՛լ գոմէ՛շ, նաղ կանէ,
Ջիպոտ կուտէ վաղ կանէ. Կ. Վ.

ՀՕ՛ ԵԶՆԵՐՈՒՆ

Հօ՛, հօ՛ յառաջ արօրը,
Ակօսեցէք արօրը·
Հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛, եզներ, հօ՛, հօ՛...
Հուսկ ակօս մ'օն անվհատ,
Թաղեմ ղիմ հասկ ցորենն հատ.
Հօ՛, հօ՛, եզներ, *և լն.*
Մաճն ի ձեռքիդ միշտ հերկիր,
Անիծապարտ այս երկիր·
Հօ՛, հօ՛, եզներ, *և լն.*
Հօ՛, հօ՛ յառաջ արօրը.
Ի՞նչ պէտք է մեզ մեղկ օրօրը·
Հօ՛, հօ՛, եզներ, *և լն.*
Հօ՛, հօ, կրէք լուծն աշխուժ,
Ի՞նչ փոյթ՝ պապիկն է վատուժ.
Հօ՛, հօ՛, եզներ. *և լն.*
Ո՛ն, հատիկը ակօսում
Եւ պապիկը մի փոսում.
Հօ՛, Հօ՛, եզներ, *և լն։*

ԳԱՐԵԳԻՆ ՎՐԴ.

ՀՕՅ ՆԱՐ

Հօ՛յ Նար, ամպել ա ձուն չի գալի,
Հօ՛յ Նար, մթնել ա տուն չի գալի.
Հայօ՛ն, կօնսա, ես չեմ կօնսա,
Դու կօնսա, կօնսա, կօնսա:

Հօ՛յ Նար, էս անտէր բարձի վրայ,
Հօ՛յ Նար, առանց Նար քուն չի գալի.
Հայօ՛ն, կօնսա, ես չեմ կօնսա, *և լն.*

Հօ՛յ Նար, ա՛յ աղջի, սա՛ս մասա,
Հօ՛յ Նար, ծամերիդ տէրը խաս ա.
Հայօ՛ն կօնսա, ես չեմ կօնսա, *և լն.*

Հօ՛յ Նար, թուշըդ դէս արա՝ պաչեմ,
Հօ՛յ Նար, վաղի, գընա՛, մօրդ սա՛ս.
Հայօ՛ն կօնսա, ես չեմ կօնսա, *և լն։*

ՀՕ՛Յ ՆԱՐ

Հօ՛յ Նար, հօ՛յ Նար,
Ազի՛զ Նար ջան, դուռը բաց.
Հօ՛յ Նար, հօ՛յ Նար,
Ոտներս, ոտներս ցրտուն գնաց.
Հօ՛յ Նար, հօ՛յ Նար:
Պաղ ես ձմեռուայ սառից,
Ամուր ես դու լեռ քարից.
Սոսեւէդ ինձ քաշ տալով
Տարար գըցեցիր սարից:
Հօ՛յ Նար, հօ՛յ Նար, *և լն.*
Ձիւն ա գալի վերեւից,
Ջուր ա կաթում տերեւից.
Իմ պարզ օրըս ամպել ա
Անըրախտ Նարի երեսից:
Հօ՛յ Նար, հօ՛յ Նար, *և լն.*
Ճերմակեց գետին ձընից,
Ա՛ղջի, դուրս արի տընից.
Ձեռվըդ էրուած սըրտիս
Կամ դեղ արա, կամ ջուր լից:
Հօ՛յ Նար, հօ՛յ Նար, *և լն։*

Կ. Վ.

ՀԵԼԻՆԷ ԵԱՐԸ

(ՊԱՐԵՐԳ)

Հօ՜յ, Հելինէ, Հելինէ եարը,
Զինուոր էր չեկաւ եարը.
Էն սարը, բարձր սարը,
Հօ՜յ, Հելինէ, Հելինէ եարը։

Մեխակի ծառ եմ տնկեր.
Հօ՜յ, Հելինէ, Հելինէ եարը.

Քեզ համար եմ մեծցուցեր,
Հօ՜յ, Հելինէ, Հելինէ եարը։

Վարդի թուփը բարձր է,
Հօ՜յ, Հելինէ, Հելինէ եարը.

Սիրած եարը քաղցր է,
Հօ՜յ, Հելինէ, Հելինէ եարը։

Սիրածիս մէկն ալ դուն ես.
Հօ՜յ, Հելինէ, Հելինէ եարը,

Մեր տունը ձեր տան մօտ է,
Հօ՜յ, Հելինէ, Հելինէ եարը.

Իմ սիրտըս քեզի մօտ է,
Հօ՜յ, Հելինէ, Հելինէ եարը։

* * *

Նիննամ, նիննամ, նիննարէ՜, հօյլէլէ՜,
Եարս արի բարձր լեռը, հօյլէլէ՜.
Բարձր տեղ լոյս կը վառի, հօյլէլէ՜,
Նարըմ, Նարըմ, Նարըմը, նիննարէ։

Հօ՜յ Հելինէ, Հելինէ. ջան Հելինէ, Հելինէ,
Փափուրի՛ ջան փափուրի, հէ՜յ փափուրի փափուրի,
Աղջի քո մաղերդ հինէ, հօ՜յ Հելինէ, Հելինէ։

Նոր է նոր մածուն բերէք,
Վա՛յ նանայ նա՜յ, ջա՛ն նանայ նա՜յ.
Իմ եարը հաց չէ կերեր
Վա՛յ նանայ նա՜յ։

Երեք օրուան կիրակին, գալ օրակին, գալ կիրակին
Թողէք երթամ հասնիմ ես իմ սիրածին:

Արա, ներլի. ներլի. բէյլի. բէյլի. բէյլի եար.

Լուսնակը պար է բռներ,
Լուսնակը պար է բռներ,
Աղջի տուտո՛ւյ, տո՛ւյ, տուտո՛ւյ.
Իմ սարի տուտո՛ւյ. տույ. տո՛ւյ:

Սարերի վրով գնաց,
Վա՛յ նանայ նա՜յ, ջա՛ն նանայ նա՜յ,
Իմ եարը խռով գնաց,
Վա՛յ նանայ նա՜յ։

Երեք օրուան կիրակին, գալ օրակին, գալ կիրակին *ևլն։*

Աղջի, տղին պարն ի՞նչ է,
Աղջի, տղին պարն ի՞նչ է,
Ցատքելու պարելու է,
Ցատքելու պարելու է,
Աղջի տուտո՛ւյ, տույ տուտույ,
Իմ սարի տուտույ, տուտո՛ւյ։

ՊԱՐԵՐԳ (*)

Հօ՜յ, Նազան իմ Նա՛զան իմ,
Ջա՛ն, Նա՛զան իմ, Նա՛զան իմ,
Նա՛զան, դու բարով եկար,
Կանաչ սարերով եկար,
Խոր խոր ձորերով եկար.

Գարնան սիրուն ծաղիկ ես,
Հօ՜յ, Նա՛զան իմ, Նա՛զան իմ,
Ինձ համար աղաւնիկ ես.
Ջա՛ն, Նա՛զան իմ, Նա՛զան իմ,
Գլխիս վրով պտիտ տուր,
Հօ՜յ, Նա՛զան իմ, Նա՛զան իմ,
Նախշուն թեւ թիթեռնիկ ես։
Ջա՛ն Նա՛զան իմ, Նազան իմ.

Եար ջան, դու բարով եկար,
Կանաչ սարերով եկար,
Խոր խոր ձորերով եկար։

Աղջի՛, մազերդ թուխ է,
Էս ի՞նչ պարութի մուխ է,
Մուխ անողը քոռանայ,
Ինծի, քեզի մոռանայ։

Մեխակի ծառ եմ տնկել,
Քեզ համար հիւանդ ընկել,
Օխտը տարի տեղումըս
Ես մի կըշտի եմ պառկել։

(*) *Յետոյ երգել՝* «Փափուրի Ջան»:

Ճամբայ տուէք՝ առաջ գամ,
Սիրած եարիս բարեւ տամ.
Ուխտ եմ արել, որ առնեմ,
Թող տեսնի աշխարհ ալամ։

Սա՛րեր, ձո՛րեր, յետ կացէ՛ք,
Իմ եարի ճամբէն բացէ՛ք.
Եար եարի հետ խօսելիս՝
Ականջ արէք, իմացէ՛ք։

Նշի ծառին նուշ կըլնի,
Վարդի հոտն անուշ կըլնի,
Երանէկ էն աղջըկան՝
Սիրած եարին թուշ կըլնի։

Կ. Վ.

ՊԱՐԵՐԳ (*)

Հօ՜յ նար,
Ծամեր ունիս ծիրանի,
Հօ՜յ նար,
Հոլը թել թել կու տանի,
Հապօն զոնդա. ես չեմ զոնդա. դու զոնդա
Գոնդա, զոնդա,
Հօ՜յ նար.
Աչեր ունիս գեղանի,
Հօ՜յ նար,
Անոնք ինծի կու ժպտին։
Հապօն զոնդա. ես չեմ զոնդա, *էյն.*
Հօ՜յ նար,
Շուրթեր ունիս նըռենի,
Հօ՜յ նար: Կ. Վ.

(*) *Նախ՝* «Պէզզադու աղջիկ»:

ՀՈ՛Յ ՆԱՐ

Հո՛յ նար, հո՛յ նար. հոյ նար,
Հո՛յ նար, ջա՛նըմ նար.

Մեր դուռ՝ ձեր դըրան դիմաց,
Հո՛յ նար, ջա՛նըմ նար.
Հերիք տաս աչքով իմաց,
Հո՛յ նար, ջա՛նըմ նար.

Հո՛յ նար, հո՛յ նար, հո՛յ նար,
Հո՛յ նար. հո՛յ նար, հէ՛յ.
Հո՛յ նար, հո՛յ նար, հո՛յ նար
Հո՛յ նար, հո՛յ նար, հէ՛յ.

Մեռնեմ էդ ծով աչերուն,
Հո՛յ նար, ջանըմ նար,
Հոգիս վըրդոված մնաց,
Հո՛յ նար, ջանըմ նար:

Նարըմ, նարըմ, նարըմ, նարըմ,
Նարըմ, նարըմ, նարըմ, նարըմ,
Հո՛յ նար, հո՛յ նար, հո՛յ նար
Հո՛յ նար. ջա՛նըմ նար,
Հո՛յ նար. հո՛յ նար. հո՛յ նար,
Հո՛յ նար, ջանըմ նար:
Հո՛յ հոյ, հո՛յ հոյ հոյ, հո՛յ հո՛յ:

Երերուն ջան, երերուն,
Հո՛յ լէ լէ.
Ձուն եկեր էն սարերուն,
Հո՛յ լէ լէ,
Հալեր, կաթեր ձորերուն,
Հո՛յ լէ լէ.

Գըլգըլէր մէջ կըժերուն,
Հո՛յ լէ լէ.
Ելնէր նարօջ ուսերուն,
Հո՛յ լէ լէ,
Թափուէր չամամ ծիծերուն,
Հո՛յ լէ լէ.
Դարման կ՚եղնէր խոցերուն,
Հոյ լէ լէ,
Նիննէմ, նիննէմ, նիննառէմ.
Հո՛յ լէ լէ,
Հո՛յ լէ լէ, հո՛յ լէ լէ,
Հո՛յ լէ հո՛յ լէ հո՛յ լէ լէ:

Հո՛յ նար. հոյ նար, հոյ նար,
Հոյ նար, ջանըմ նար,
Հո՛յ նար, հոյ նար, հոյ նար,
Հոյ նար, ջանըմ, նար:
Հո՛յ հոյ, հոյ հոյ հոյ, հո՛յ հո՛յ:

Վ. ՍԱՐԳՍԵԱՆ

ՀԱՅՈՑ ՀԱՄԲԱՐՁՈՒՄ

Հո՛յ նար, նարէ՛ նար, ելէ՛ք մըտնենք պար.
Հո՛յ նար, նարէ՛ նար.
Հովեր կը ծըփան, ծովեր կը ծըփան,
Սէրեր կը ծըփան, սիրտեր կը ծըփան,
Համբարձումն եկել, ծառ. ծաղիկ փըթթել,
Մեր կոյս հարսերին էլ-խինդ է բերել...
Հո՛յ նար, նարէ՛ նար.
Ջէյրան կոյս հարսեր, գոհար կոյս հարսեր,
Հո՛յ նար, նարէ՛ նար:

Թողած հին յուշեր, կանչենք սէր-օրեր,
Երգենք մեր տօն օր, ծափ տանք փառաւոր.
Մենք հայի ճիւտեր՝ ձեզ հետ միշտ ի չար,
Երգին սիրահար, այսպէ՛ս ենք սովոր....
Հ՛օյ ճար, ճարէ՛ ճար.
Գարնան ծաղկունքով՝ նաշխո՛ւն էք հագել...
Նաշխո՛ւն էք հագել՝ մեր սի՛րտն էք տարել.
Համբարձումն եկած՝ լոյս խաչն է բերել,
Հայի անարատ պսակն է օրհնել...
Հօ՛յ ճար, ճարէ՛ ճար:

Հ. ՊԵՐՊԵՐԵԱՆ Յ. ՔՀ. ՍԱՐՀԱՏԵԱՆ

ԴԵՂՁԻ ԴԱՇՏ

Հօ՛, ջա՛ն, եղներ, ջա՛ն, ջա՛ն եղներ, հօ՛, հօ՛, հօ՛,
Աքլորն կանչէ, լոյսն է բացուեր, հօ՛, հօ՛, հօ՛:

Մսուրներնիդ լեցուն է կեր, հօ՛, հօ՛, հօ՛,
Կուշտ, կուռ կերէք, դո՛ւք էք շահեր. հօ՛, հօ՛, հօ՛։

Առտուան ցօղը հողն է փըխրեր, հօ՛, հօ՛, հօ՛,
Խոփը ճեղքէ հողին խորեր, հօ՛, հօ՛, հօ՛։

Դէ՛հ, չո՛ւտ իջէք, գեղին աղբիւր, հօ՛, հօ՛, հօ՛,
Կուշտ փոր խմէք զուլալ պաղ ջուր, հօ՛, հօ՛, հօ՛։

Դէ՛հ, դէպի դաշտ աշխատանքի, հօ՛, հօ՛, հօ՛,
Ուժ, թափ տուէք՝ արօր, խոփի, հօ՛, հօ՛, հօ՛։

Ձերն է միայն՝ հալալ վաստակ, հօ՛, հօ՛, հօ՛,
Ցորեն, գարի, կորեկ, վարսակ, հօ՛, հօ՛, հօ՛։

Ա. ՏԷՐ-ՂԱԶԱՐԵԱՆ

ԳՈՒԹԱՆԵՐԳ ԼՕՌՈՒԱՅ ԳԱՒԱՌԻ

Հօ՛:—

Օրհնեա՛լ է Աստուած,
Յիշեա՛լ է Աստուած,

Հօ՛, հօ՛, եօ՛ ա՛, հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛,
Պուէ՛րէ, գոմէշ, հօ՛, հօ՛յ, եօ՛-ա՛.
Ա՛ռ, հա՛ գոմէշ, հօ՛, հօ՛յ եօ՛-ա՛,
Տա՛ռ, հա՛ գոմէշ. հօ՛, հօ՛յ. եօ՛:

Լուսը լուսացաւ,

Հա՛, հա՛,
Փա՛ռք քեզ, Տէ՛ր.

Բարին շատացաւ։

Հէ՛, հէ՛, հէ՛, հէ՛, հօ՛ հօ՛յ.
եօ՛-ա՛, հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛, հօ՛:
Պուէ՛րէ, գոմէշ, հօ՛, հօ՛յ, եօ՛-ա՛,
Ա՛ռ, հա՛ գոմէշ, հօ՛, հօ՛յ, եօ՛-ա.
Տա՛ռ, հա՛ գոմէշ, հօ՛, հօ՛յ, եօ՛:

Աղօթրան բացուաւ,

Հա՛, հա՛,
Փա՛ռք քեզ, փա՛ռք.

Մեր ժամը լցուաւ։

Հէ՛, հէ՛, հէ՛, հէ՛, հօ՛, հօ՛յ *ելի.*

Պուէ՛րէ, ջա՛ն, հօ՛, պռօ՛րօ, հօ՛ պռխու՛զի ջան.
Հօռօյայ, հօռօյայ, քէ՛ դուրքան.

Շի՛մալ ջան, հօռօլայ, քե՛ մեռնիմ.
Լա՛չին ջան, հօռօլա՛յ, հօռօլա՛յ, հօռօլօ՛.
Եղնարած քընի,
Հա՛, հա՛.
Վե՛ր կացէք, գուքա՛նաւոր.
Գութանը բանի.
Հէ՛, հէ՛, հէ՛, հէ՛, հօ՛, հօ՛յ, *ելն.*
Պռէ՛րէ, ջա՛ն հօ՛, պռօրօ, հօ՛ *ելն.*
Գալիս, գալիս է,
Հա՛, հա՛.
Այ, ճըլվը՛ս, ճըլվը՛ս.
Ակը լալիս է.
Հէ՛, հէ՛, հէ՛, հէ՛, հէ՛, հօ՛, հօ՛յ, *ելն.*

Հօ՛յ, դուս ելաւ, հօ՛ ա՛.
Հօ՛յ, դու՛ս ելաւ, հօ՛, ա՛,
Հօ՛յ, դո՛ւս ելաւ, հօ՛, ա՛.
Հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ,
Հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ.
Հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ,
Հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ.

Հօ՛յ, ռա՛ւել ա, հօ՛, ա՛,
Հօ՛յ, ռա՛ւել ա, հօ՛, ա՛,
Հօ՛յ, ռա՛ւել ա, հօ՛, ա՛,
Հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ, հօռօ, *ելն.*
Հօ՛, դո՛ւս ելաւ, հօ՛։
Օրհնեա՛լ է Աստուած
Յիշեա՛լ է Աստուած.

Մաճկալը մաճին,
Ա՛յ հօրեւօր,
Օղերն ականջին.
Հօտաղն է լալի,
Քըչի, ա՛յ յալիկ հօտաղ.
Միջակն է գալի.
Վարենք՝ չատանայ,
Տօ՛կան ջան,
Տէրն ուրախանայ.
Թա՛փ տուր՝ թեւ արա,
Ա՛յ խօփի ու ձեւիչ,
Շուռ տուր՝ սե՛ւ արա.

Օրհնեա՛լ է Աստուած,
Յիշեա՛լ է Աստուած.
Ջօրանա՛ս, հօ՛տաղ,
Քըչի՛ր փօշետօւն.
Ես քեզի՛ մատաղ.
Վարենք՝ արտ անենք,
Շէկիկ ջան,
Ձարին գարտ անենք,
Եկաւ ու գնաց,
Ջը կօտրի սամէն,
Մեծ եղը մընաց.
Թեւերն գօ՛րծ գընենք,
Ա՛յ կըտրիչ ուժաւոր
Շուտ գլուխ ելնենք.

Օրհնեա՛լ է Աստուած,
Յիշեա՛լ է Աստուած.

Շալակ ես առել,
Սէ՛ւիկ ջան,
Շալակդ առաւել.
Ծի՛ր տուր, հա՛ ծրենք,
Կարմիր խնձոր դուն,
Հայն եկաւ ուտենք,
Հողը սեւանայ,
Ծիրան ջան,
Ուսըդ հովանայ։
Հորիքն եկաւ,
Բռի՛, ա՛յ լալիկ նօտադ,
Առաւելն եկաւ։

Օրհնեա՛լ է Աստուած,
Յիշեա՛լ է Աստուած։

Կերանք, կըշտացանք
Փառք իրան,
Աստուած գոհացանք։
Մաճկալ ջան, վարէ՛,
Սէր մածուն կերար,
Արտը շատ քար է,
Սեւ հերկին աչէք,
Մուկն ի բերան մրկանուոր,
Ա՛յ եզներ, քաշէք։
Ա՛յ առաւել ա,
Սիրուն ջան,
Շալակդ առաւել ա։

Օրհնեա՛լ է Աստուած,
Յիշեա՛լ է Աստուած։

Ա՛յ, պայխս գութան,
Աստծու բան,
Ակօսիդ ղուրբան։
Թէ գոմշի ճուտ ես,
Ծաղիկ եզը,
Ա՛յ, ճիպոտ կ'ուտես։
Շալակըդ ծանր ա,
Անունիդ մեռնեմ:
Քէլքըդ շատ մանր ա։
Դարձէ՛ք աջ թեւին,
Ա՛յ խարգանտուն,
Ջօ՛ռ առէք սեւին։

Օրհնեա՛լ է Աստուած,
Յիշեա՛լ է Աստուած։

Ակը խորին է,
Ծըլվըլոտ, ճըլվըլոտ
Ձարի փորին է։
Վե՛ր քաշի, հօ՛տաղ.—
Անո՛ւշ ջան,
Շընչալուդ մատաղ։
Խտակը լըծենք,
Հոռովել տուէք,
Միջակը լըցնենք։
Միջակը հանենք.
Ա՛յ ամոլուր
Գութանից պըծնենք։

Օրհնեա՛լ է Աստուած,
Յիշեա՛լ է Աստուած։

Իրիկնահովին է.
Օրն անցաւ.
Գոմշի գովին է,
Ամպը հով արաւ,
Դէ՛, քաշէ՛ք,
Ցօղը ծով արաւ.
Այրի հօտաղը,
Քշի՛, ա՛յ տղայ,
Մորթենք մատաղը.
Հոռովել տանք,
Ա՛յ կարմիր գլուխ,
Առաւել դուրս գանք.

Օրհնեա՛լ է Աստուած.
Յիշեա՛լ է Աստուած.
Վարենք մատաղի
Խերն ու բարին մեզ
Ջար կամ կատաղի.
Ակոսն ոսկի ա,
Ա՛յ տափի ճրղի,
Մաճկալ խօսքի ա.
Հոռովել տուէք,
Ա՛յ մուրտարտուն,
Ջար կամ փախցրէք.
Ելա՛ւ, հա՛, ելաւ,
Մրդընչոցիդ մատաղ.
Գութանը ելաւ.

Օրհնեա՛լ է Աստուած,
Յիշեա՛լ է Աստուած,
Սարին հովել է,
Աչրի՛ օրավար,

Տէրը գովել է,
Աստծուն փառք տանք,
Մա՛ճկայ ջան,
Գութանը թո՛ղ տանք.
Օրհնեա՛լ ես, Աստուած,
Փա՛ռք քեզ, փա՛ռք,
Յիշեա՛լ ես, Աստուած,
Օրհնի մեր գութան,
Աստծու բան:
Օրհնեա՛լ է մեր բան.

Կ. Վ.

ԳՈՎՔ ԳՕՋԱԼԻՆ

Ջէնըդ քաղցըր ունիս՝ լամզօվ կու խօսիս.
Նա պահէ քիզ, ումն օր ծառայիս, գօղալ.
Մէչկըդ ջէյրանի է, ռունգըդ չաքարի,
Փռանգըստանէն էկած խարա իս, գօղալ.

Ղումաշ ասիմ՝ չուրէղէն է կու մաշվի.
Սալբի ասիմ՝ ախըր մին օր կու տաշվի,
Ջէյրան ասիմ՝ չատ մարթ քիզիդ կու հաշվի,
Բաս վո՞ւնց թարիփ անիմ՝ միրա իս գօղալ.

Թէ մանուշակ ասիմ՝ սարէմէն կօսին,
Թէ ջավայիր ասիմ՝ քարէմէն կօսին,
Թէ վուր լուսին ասիմ՝ տարրէմէն կօսին,
Արէգագի նըման՝ փարա իս, գօղալ.

Գ'ուզիմ թէ համաշա դըրանըդ գամ ուխտ՝
Աչկիրըդ կարմիր վարթ, նուր բացարած տուխտ,
Լիզուդ՝ դըրիչ ունիս, ձեռըդ՝ գուլգող թուղտ
Ծոմէմէն դուս էկած՝ ղարա խա, գօզալ:

Սիրոյ սիրմըդ սըրտիս մէչըն ցանէցիր,
Նաղ ու զամզով, հա՛ր, իմ հոքիս հանէցիր,
Էս քու Սայեաթ-Նօվան դո՛ւն սըպանէցիր.
Գըլխիդ էկած պաղէն առայ եա, գօզալ:

ՍԱՅԱԹ-ՆՕՎԱ

ԿԱՐԱԳ ՀԱՆԵԼՈՒ ԵՐԳ (ՎԱՆԵՑՈՑ)

Զըձո՛ւմ, կարա՛գ, ձըձո՛ւմ, կարա՛գ,
Շա՛տ եղի՛ր, չո՛տ եղիր.
Տըղէս ուտի՝ երթա՛յ քաղաք,
Կըռան զարնէ՝ հացհան չինէ.
Կըռան զարնէ՝ հացհան չինէ
Բերէ՝ մեր տաշտը քերենք:

Զըձո՛ւմ, կարա՛գ, ձըձո՛ւմ, կարա՛գ,
Շա՛տ էլիր, չո՛տ էլիր.
Պապիկն ուտէ՝ էրթայ խիղան,
Զամիչ-ընկուզ բառնայ եղան.
Բերէ ծախէ՝ էժան-էժան.
Քիչ մ'էլ թողնի՝
Թոռները վըան վըժա՛ն-վըժա՛ն...

ԳՈՒԹԱՆԵՐԳ (*)

Ձի՛գ տու, քաշի՛, ա՛յ եզը,
Արա՛ հօ՛ հօ՛, արա՛, հօ՛.
Լուծըդ մաշի, ա՛յ եզը.
Արա՛, հօ՛ հօ՛, արա՛, հօ՛,
Աստուած պահէ քո տէրը,
Արա՛, հօ՛ հօ՛. արա՛, հօ՛,
Մի՛նն էլ տաշի, ա՛յ եզը.
Արա՛, հօ՛ հօ՛, արա՛, հօ՛:

Մեր գութանը օղած ա,
Եզանց ուսը նօթած ա.
Վարէ՛ վարը, ա՛յ գութան,
Հազիւ խոփը զօղած ա:

Շողքըն ընկաւ ծըմակին,
Աստուած կը տայ մըշակին.
Սուր գութանը ծիր գընաց,
Տէր-մըշակը քամակին:

Սերմէ՛, սերմէ՛, ա՛յ մըշակ,
Սո՛ւրբ ա, սո՛ւրբ ա քո փեշակ.
Մինը հազա՛ր տուր, Ա՛ստուած,
Փե՛ղ ձէն կը տան տէր-մըշակ:

Կ. Վ.

(*) Ցետոյ երգել՝ «Գառնան զուրան հանեցի» և «Խումար պարկե»:

ՁՄԵՌՆ ԱՆՑԱՒ

Ձմեռն անցաւ, եկաւ գարուն,
Հալաւ բարձրիկ սարերու ձուն.
Ճամբայ բացուաւ ղարիբներուն,
Իմ ղարիբէն խաբար չը կայ,
Սիրտը ճամբին դադար չը կայ:
Ղարիբ երկիր ամպ ու մշուշ,
Իմ ղարիբի սիրտն է քընքուշ,
Ոտքը փոխէ՝ քըռա ու փուշ։
Հերի՛բ մընաս, դարձիր վաթան,
Իմ աղբէ՛ր ջան, ազիզ եա՛ր ջան:
Ջուրն է պըրծեր, կուգայ սարէն,
Սարէն, ձորէն, իմ աչերէն...
Մի նորոգիր սըրտիս եարէն.
Դարձի՛ր վաթան, հողն անո՛ւշ է,
Հողն անո՛ւշ է, ջուրն անո՛ւշ է...:

ԱԶԱՏ ՄԱՆՈՒԿԵԱՆ   Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ԹԻՖԼԻԶՈՒ ՔԷՖ

Ձմեռն ինչ կ'ուզէ թող ըլլի, (եար եարալի),
Թէ ագռաւն էլ սարերը ըլլի, (բար եարալի),
Մեզի ցուրտն չի վախցընի, (եար եարալի),
Թէ գլխընկերըս տաք կ'ուլլի, (եար եարալի),

Երբ Նոյին գինին կամեցաւ,
Հասած խաղողը քամեցաւ,
Էն վախտը նա գինին կոնծեց,
Ջուրը անասնոց յանձնեցաւ.

Հարըստութիւն ոչինչ է,
Կեանքը ոսկով էրծըլթով չէ,
Հարուստ տեսած ենք տարեկան,
Ախ ու վախը մեզ համար չէ։

Երբ կուգան սիրուն գարունքը,
Գընանք ղափը մեր թիկունքը,
Մենք լաւ կարմիր գինին կոնծենք,
Թողնենք վարդ պըլպուլի սուգը։

ՂԱՐԻՊ ՄՇԵՑՈՒՆ

Ղարիբ աղբէր, արի՛ մեր տուն,
Բուք բորանին ո՞ւր կ'երթաս,
Հերի՛ք այդքան թափառելով,
Սեւ գարդերդ քամուն տաս։
Անտուն աղբէր, արի՛ մեր տուն,
Էս էլ հայի օջախ է.
Իմ պաղ ջուրըս, սեւ-չոր հացս
Քեզ պէս աղբօր հալալ է։
Մշա՛կ աղբէր, արի մեր տուն,
Դարդ ու ցաւըդ ինձ պատմէ,
Լաց-լացի տանք էս մեծ տօնին,
Սիրտըս լացի կարօտ է...

Շ. ԿԻՐՂԻՆԵԱՆ

ՂԱՐԻԲ ԵՄ

Ղարիբ եմ կարօ գընացի.
Ղարիբ տեղ հարօ գընացի.
Մայրի՛կ ջան.

Փօքրուց ես օր չը տեսայ,
Անկեսուր հարօ մընացի։
Մա՛յրիկ ջան:

Ղարիբ եմ, տեղըս քար ա,
Ղարիբութիւն դժուար ա,
Աստուա՛ծ սիրէք, բան չասէք,
Ղարիբըն էս ի՜նչ անճար ա։

Ես ղարիբ եմ՝ ջուր չըկայ.
Սարերին աղբիւր չըկայ.
Վախենամ ղարիբ մեռնեմ,
Վըրէս մէր ու քուր չը՛գայ։

Սեւ եմ, սեւաւոր հաւք եմ,
Դեղին թեւաւոր հաւք եմ.
Ինձ մի բա՛ց թողէք, թըռչեմ,
Երամի սովոր հաւք եմ։

Կ. Վ.

ՂՈՒՇՍ ԳՆԱՑ

Ղուշս գնաց, թռաւ գնաց,
Սարէն-ձորէն ձայն կուտայ,
Սիրտս հետը տարաւ գնաց,
Աճապ էլի տուն կուգա՞յ։

Հազար ռանկ փետուրներով,
Ղանատները ալվալա,
Բացեց-փռեց մեծ ծովերով,
Անցա՜ւ գնաց, ա՜յ բալա։

ԱՇՈՒՂ ՇԵՐԱՄ

ՃԱՄԲԱՅ ՏՈՒԷՔ

Ճամբայ տուէք առաջ գամ,
Սիրած եարիս բարեւ տամ.
Ուխտ եմ արել, որ առնեմ,
Թող տեսնէ աշխարհ ալամ։

Սարեր ձորեր, հետ կացէք,
Իմ եարին ճամբայ բացէք.
Եար եարի հետ խօսելիս
Ականջ արէք, իմացէք։

Նըշի ծառին նուշ կըլնի,
Վարդի հոտն անուշ կըլնի,
Երանէկ էն աղջըկան,
Սիրած եարին թուշ կըլնի։

ՄԱՅԻՍ

Ճամբայ տուէք սար ու դաշտեր,
Ճամբայ բացէք էն հիւրին,
Նա բերում է ձագեր, թիթեռ,
Նախշուն օրեր մեր երկրին։

Ճամբայ բացէք, ծառեր ու խոտ,
Մեր անուշիկ էդ հիւրին,
Նա Մայիսն է ցօղոտ, շաղոտ,
Ամիսներից սիրելին։

Ճամբայ տուէք սար ու դաշտեր,
Ճամբայ բացէք էն հիւրին,
Նա բերում է ծաղեր, թիթեռ,
Նախշուն օրեր մեր երկրին։

ՄԱՃԿԱԼ

Մաճկալ ես, բեզարած ես,
Առը շուռ տուր, չո՛ւտ արի՛,
Ծուլի պէս քըրտընել ես,
Եզներն արձկի՛, տո՛ւն արի։

Կաթի սերը քաշել եմ,
Դըրել եմ հովին՝ սառի,
Ալ գոգնոցըս կապել եմ,
Արի՛ թառլան, թը՛ռ արի՛։

Տեղ եմ քըցել շըւաքում,
Բամին կուգայ, զով կ'անի,
Լուսնի շողքն է մեր ծոցում,
Չափ տո՛ւր, չափ ա՛ռ, չո՛ւտ արի։

Դատրած, բեզարած եա՛ր ջան,
Ամպերն եկան, գե՛հ արի.
Բեզարած ջանիդ զուրբան,
Ցըտից թև առ, թէ՛զ արի։

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՐԵՐԳ
ՇԻՐԱԿԻ

Մայրիկին եազմա բերին,
Քոյրիկին գօշի.
Հայրիկին մաշած փափախ՝
Կատար չունենայ։

Տօ՛, եամա՛ն, ամա՛ն,
Տօ՛, եամա՛ն, ամա՛ն,
Տօ՛, եամա՛ն, ամա՛ն.

Մազիկո՛վ աղջիկ,
Նօճիկո՛վ աղջիկ.
Քո դէյրէդ կարճ է,
Շէկ տղի խարճ է։

Մայրիկին խաս կըտրեցին,
Քոյրիկին խըրխա.
Հայրիկին սալդաթի չոր՝
Թևեր չունենայ։

Տօ՛, եամա՛ն, ամա՛ն, ելն.

Մայրիկին կօշիկ բերին,
Քոյրիկին տուֆլի.
Հայրիկին ջուխտակ չարուխ՝
Տակ էլ չունենայ։

Տօ՛, եամա՛ն, ամա՛ն, ելն.

Կ. Վ.

ՊԱՐԵՐԳ

Մայրըս մանէ մանածըս,
Գնա քաղէ ցանածըս,
Պապս հարսնիք է բռներ,
Չեմ ճանչնար նշանածըս։

Ամպը լեցուեր ձուն կուգայ,
Իրիկուն կ'ըլլայ տուն չի գայ,
Այսպէս չոր բարձի վրայ,
Առանց եարի քուն չկայ։

Այս ի՞նչ բարձրկեկ լեռ է,
Ջուրը հիւանդին դեղ է,
Սիրած սիրածին չեն տար,
Էս ի՛նչ անաւեր տեղ է։

Թռչունի նման ըլլայի,
Թռչէի քովըդ գայի,
Բարձիդ վըրայ կանգնէի,
Սոխակի պէս խօսէի։

Սէրն ի՞նչ է, սիրուիլն ի՞նչ է,
Կըտրիճ քու սէվտան ի՞նչ է,
Ծառը բարձր, պտուղը քաղցր է,
Ձեռք չի հասնիր, օգուտն ի՞նչ է։

ՄԱՇՏԻ ԻԲԱՏ

Ռուստամ Բէգ.— Մաշտի Իբատ դու մեր տունը
Հազար բարով ես եկել,
Ի՞նչպէս եղաւ որ հոգի՛ ջան,
Մտաբերեցիր, տուն մտար։

Մաշտի.— Ա՛յ մարդ քո՛ արեւն եմ ասում,
Քե՛զ ամենից շատ եմ սիրում.
Դու քո աղջիկըդ ինձի տուր,
Տե՛ս թէ ինչպէ՛ս եմ ես պահում։

Ռուստամ Բէգ.— Ա՛յ մարդ դու ինձ ասա տեսնեմ,
Դրպանըդ լի՞քն է փողերով,
Ես քեզի օրիորդ աղջիկ տամ,
Ոչ թէ այրի կին՝ սեւ չորով։

— Փող կ'ուզե՞ս, տա՛մ.
= Խնդրեմ տո՛ւր...
— Աղջիկդ կը տա՞ս.
= Կը տամ։
— Ասա՛ քո արեւ...
= Քո՛ արեւ...
— Եթէ այդպէս է տո՛ւր ձեռքըդ։

ԾՐԳ

Մատնիքը մատովս չէր,
Ա՜խ.
Սիրածը սըրտովս չէր.
Ա՜խ.
Վա՜յ, լէ, լէ, լէ, լէ, լէ, լէ
Վա՜յ, լէ, լէ, լէ, լէ։
Դերձակ մատներըդ կտրի,
Մրնթանէն բոյովս չէր։
Զարգեար թեւերըդ կտրի,
Քամարը մէջքովս չէր։
Սիրածի հէրը մեռնի,
Սիրածը սըրտովս չէր։

Կ. Վ.

ՄԱՐԱԼՕ՛ ՋԱՆ...

Մարալօ՛ ջա՛ն, մարալօ՛, մարալօ՛.
Ոսկերիչ ազբար, մատնիք մը շինէիր
Իմ եարոջ համար.
Դէ՛ եարօ՛, եարօ՛, դէ՛ եարօ՛ եարօ՛,
Եարիմ կորանի։

Աղջի անունըդ Սառէ,
Լէ, լէ, լէ, լէ՛, լէ. լէ, լէ. լէ, լէ՛, լէ,
Լէ, լէ, լէ՛, լէ, լէ. լէ, լէ՛, լէ, լէ՛, լէ։

Աչք, ունքըդ խար ու մառ է,
Վա՛յ Նուբար, Նուբար,
Վա՛յ լէ լէ Նուբար.

Բու գարտ ու տաւին ի՞նչ է
Լէ, լէ, լէ, լէ՛, լէ. լէ, լէ, լէ. լէ՛, լէ,
Լէ. լէ, լէ՛, լէ, լէ. լէ, լէ՛, լէ, լէ՛, լէ,
Բու սէրըդ գլխ կը վա՛ռէ։

Վա՛յ Նուբար, Նուբար,
Վա՛յ լէ լէ Նուբար։

Մարալօ՛ ջան, մարալօ՛, մարալօ՛,
Մարալօ՛ ջան, մարալօ՛, մարալօ՛.
Մարալօ, ջա՛ն, մարալօ՛,
Մարալօ, ջա՛ն, մարալօ՛.
Մարալօ՛ ջան, մարալօ մարալօ.
Մարալօ ջա՛ն, մարալօ՛, մարալօ՛։

Ջրի մէջի պաղ աղբիւր, մա՛րալօ,
Մէկ ես խմիմ, մէկ դու խմիր. մա՛րալօ.
Մարալօ, ջա՛ն մարալօ,
Մարալօ՛, ջա՛ն մարալօ։

Բարակ ենք, բարտի ծառ ենք, մա՛րալօ,
Կըրակ ենք, սի՛րտ կը վառենք, մա՛րալօ,
Մարալօ՛, մարալօ՛, մարալօ՛ ջա՛ն,
Մարալօ՛, մարալօ՛, մարալօ՛, ջա՛ն.

Սարեր, ձորեր հիւսէն էր, մա՛րալօ,
Եարըս պտրի լուսին էր, մա՛րալօ.
Մարալօ՛ ջա՛ն, մարալօ՛,
Մարալօ՛ ջա՛ն, մարալօ.

Բարակ ենք, բարտի ծառ ենք, մա՛րալօ,
Կըրակ ենք, սիրտ կը վառենք, մա՛րալօ.

Նորէն եկան գարնան երկայն օրերը,
Բռնեմ եարոջ ձեռքը, ելնեմ լեռները.
Լեռներուն, ա՜հ, լեռներուն պաղ ջըրերը,
Վարդ, մանիշակ քաղեմ լեցնեմ բեռները։
Մարալօ ջա՛ն, մարալօ ջա՛ն, մարալօ
Մարալօ ջա՛ն, մարալօ.

Մարէն թօնիր վառէ. դըրեր մոխիր,
Մի՛ յար Մարօ, մի՛ լար, աչքըդ կ՚աւերի.
Եօթը տարի սիրուդ տէրկեան մընացի,
Հօրդ ու մօրըդ դուռը սև քարով չարուի։
Մարա՛լօ՛ ջա՛ն, մարա՛լօ ջան, մարա՛լօ՛ ջան, մարալօ.
Մարա՛լօ՛ ջա՛ն, մարա՛լօ ջան, մարա՛լօ՛ ջան, մարալօ.
Մարալօ ջան, մարալօ ջան
Մարալօ ջան, հօ՛, ջան.
Մարալօ ջան, մարալօ ջան, մարալօ ջա՛ն հէ՛յ
Մարալօ ջա՛ն լօ՛, մարալօ, մարալօ ջա՛ն,
Լօ մարալօ.

Բարակ ենք, բարտի ծառ ենք, մարալօ՛,
Կրակ ենք սիրտ կը վառենք, մարալօ՛,

Մարալօ ջա՛ն, լօ՛ մարալօ՛,
Մարալօ ջա՛ն, լօ՛ մարալօ՛.
Բարակ ենք, բարտի ծառ ենք,
Կըրակ ենք, սիրտ կը վառենք,
Մարալօ ջան, մարալօ ջան, մարալօ ջան.
Կըրակ ենք, սիրտ կը վառե՛նք, մարալօ՛։

Հ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՄԵՐ ԲԱՂԸ (*)

Մեր բաղը ծառ ա,
Ձեր բաղը քար ա,
Ես քեզ չեմ անի
Իմ աղբօր ծառայ։
Մեր բաղը վարդ ա,
Ձեր բաղը յարդ ա,
Ամէն բան գիտեմ,
Ի դուր մի՛ ջարդա։

Կ. Վ.

ԳԻՆԻԻ ԵՐԳ

Մեր տուն ձեր տան դիմաց դիմաց,
Ես կը խըմեմ քուկին կենաց.
Գաւաթիս տակ բան չը մնաց.
Գինի՛ լից, աղբէր, գինի լից,
Խմողաց անոյշ:
Գինիին մէջ անուշ ի՞նչ կայ,
Համբոյրը ջերմ՝ վարդ աղջըկայ.
Սէր ու գինի, ալ բան չըկայ.
Գինի՛ լից, աղբէր, գինի լից,
Խմողաց անոյշ:

(*) Նախ՝ «Հոռոմ, հոռոմ» և «Երեւան բաղ եմ արել»:

Բերէ՛ք մեզի գինւոյ լաւը,
Խըմենք մոռնանք՝ վիշտն ու ցաւը,
Չ'արժեր հոգալ ափ մը կաւը։
Գինի՛ լից, աղբէր, գինի լից,
Խմողաց անոյշ:

Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

ՈԽՍՊԱՐ (*)

Մեր գըրանը խընկի ծառ,
Գիւլո՛ւմ ջան,
Ձե՛ր գըրանը խընկի ծառ,
Գիւլո՛ւմ ջան:
Խընկենին ա բերել բար,
Իմ խորոտիկ, պըշտիկ եար։
Գիւլո՛ւմ ջան:
Մեր գըրանը խընկի ծառ,
Նախշուն բըլբուլ վըրէն թառ,
Երթար ու գար շորոր տար,
Սիրուն եարին օրօր տար։
Մեր գըրանը խընկի ծառ,
Մարջան բըլբուլ վըրէն թառ,
Գընար ու գար, շըւին տար,
Անուշ եարի թեւին տար։
Մեր գըրանը խընկի ծառ,
Ոսկի բըլբուլ վըրէն թառ.
Կարմիր խնձոր անել տար,
Ալուան ծաղիկ տանել տար։

Կ. Վ.

(*) Նախ երգել՝ «Ալագեազ սարն ամպել ա»:

ԵՐԳ ՀԱՐՍԱՆԵԿԱՆ

Մեր թագւորին ի՞նչ պիտի. —
Մի քաթան շապիկ պիտի։

Մեր թագւորին ի՞նչ պիտի, —
Մի մահուդ չուխայ պիտի։

Մեր թագւորին ի՞նչ պիտի. —
Մի մահուդ շալվար պիտի,

Մեր թագւորին ի՞նչ պիտի. —
Մի քիրման գօտիկ պիտի,

Մեր թագւորին ի՞նչ պիտի. —
Մի ջուխտ լաւ գուլպայ պիտի,

Մեր թագւորին ի՞նչ պիտի. —
Մի ջուխտ լաւ կօշիկ պիտի,

Մեր թագւորին ի՞նչ պիտի. —
Մի բուխար գըլխարկ պիտի,

Մեր թագւորին ի՞նչ պիտի. —
Մի լաւ խաս փէշքիր պիտի,

ԵՐԳ ՀԱՐՍԱՆԻՔԻ

Մեր թագւորն էր խաչ.
Խաչվառ խաչ ու մաչ,
Պըսակն էր կարմիր,
Արեւն էր կանաչ,

Մեր թագւորն էր խաչ,
Խաչվառ խաչ ու մաչ,
Շապիկն էր կարմիր,
Արեւն էր կանաչ,

Մեր թագւորն էր խաչ,
Խաչվառ խաչ ու մաչ,
Ձուխան էր կարմիր,
Արեւն էր կանաչ։

Մեր թագւորն էր խաչ,
Խաչվառ խաչ ու մաչ,
Շալվարն էր կապոյտ,
Արեւն էր կանաչ,

Մեր թագւորն էր խաչ.
Խաչվառ խաչ ու մաչ,
Գօտին էր կարմիր,
Արեւն էր կանաչ։

Մեր թագւորն էր խաչ,
Խաչվառ խաչ ու մաչ,
Գուլպան էր նաշխուն,
Արեւն էր կանաչ,

Մեր թագւորն էր խաչ,
Հայոց խաչ ու մաչ,
Ձիուկն էր հրեղէն,
Թագւորն էր վրէն,

Կ. Վ.

ՍՕՍ ԵՒ ՎԱՐԴԻԹԵՐ

Մեր Սօսը Վարդին սիրեց,
Եար, նանի, նանի ջան,
Վարդիթեր նրան բաշխեց,
Եար, նանի, նանի ջան։

Վարդիթե՛ր, բախտաւոր ես,
Եար, նանի, նանի ջան,
Սօսի պէս լաւ եար ունես,
Եար, նանի, նանի ջան։

Վարդը որ կայ չուշա ա,
Եար, նանի, նանի ջան,
Կոտրած սրտին ճար չկայ,
Եար, նանի. նանի ջան։

Դ. ՂԱԶԱՐԵԱՆ — ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆՑ

ԱՐԻ ՍԻՐՈՒՆ, ԳՆԱ ՍԻՐՈՒՆ

Մեր տան ետև քառսուն կարաս.
Քառսուն կարասի գինին էր խաս,
Օսկի գիւգիւմ, արծըթէ թաս,
Ասեն թասին պագիկ մի տաս։

Արի՛ սիրուն, գնա՛ սիրուն,
Հազար էրանեկ քո տիրուն:

Բամին էկաւ էրան-էրան.
Գնաց հասաւ Մշու բերան,
Մշու հաւեր թեւաւորան.
Բեալաշի տուն սեւաւորան։

Արի՛ սիրուն, գնա՛ սիրուն *ևլն.*

ԽՈՐՈՏԻԿ ԵԱՐ

Մեր տուն ձեր տուն մօտիկ, մօտիկ,
Դու կապել ես կարմիր գօտիկ.
Երթանք քաղենք կանաչ խոտիկ,
Տեսնենք մի՞ր եարն է խորոտիկ։

Մեր տան ետեւ քառսուն կարաս,
Քառսուն կարսին գինին էր խաս.
Ոսկէ գիւգիւմ, արծաթէ թաս,
Ամէն թասէն պագիկ մը տաս։

Հով ծառի տակ պաղ աղբիւր,
Արծաթէ թաս, ոսկէ ջուր.
Մին ես խմեմ, մինը դու,
Անուշ կենանք ես ու դու։

Կ. Վ.

Օ՛Վ ԱՉԿԻԼՈՒՍ

Մէ խօսկ ունիմ ըլթիմաղօվ, անգաձ արա՛, օ՛վ աչկիլուս.
Սըրտումըս ինթիզար ունիմ, քու տիսըն բարօվ, աչկիլուս.
Աջա՞ր քիզ ինչ գէթ իմ արի՝ կէնում իս ըլռօվ, աչկիլուս.
Աշխարըս աշխարօվ կըշտացաւ, իս քիզանից սօվ, աչկիլուս։

Մագա՞մ էլ օչ օվ եար չ'է սիրի. էս ի՞նչ արիր, էս ի՞նչ բան ա.
Էշխէմէդ ջուանուն իմ էլի, ման իմ գալի եանա եանա.
Էս դարդէն օչ օվ չը քաշէ, վուր մէ դանգին չ'ի դիմանա՝
Սիրտըս լուրի պէս խօրվէցիր էշխիդ կըրակօվ, աչկիլուս։

Դօստիրըս դուշման չինէցիր, եագերուն ի՞նչպէս դօստ անիմ.
Անցկացած օրըն չ'իմ տէսնում քանի փուզէ մուր ղաստ անիմ.
Աստուած վկայ, խիստ դըժար է, գլուխըս ի՞նչպէս դուս տանիմ
Ես մէ փուքըր նավի նըման, քու էշխըն է՝ ծօվ, աչկիլուս։

Գ'ուզիմ բերանըս բաց անիմ, քօլքըդ ասիմ Թարիփի պէս.
Տաս տարի է ման իմ գալիս Փադիշահի չահիփի պէս.
Օխտըն տարի էլ ման գու քամ սազըն ձեռիս Ղարիբի պէս՝
Բուլթա Շահսանամըս գուն իս, է՛լ չ'ունիմ օչ օվ, աչկիլուս։

Թէգուզ հազար դարդ ունէնամ, ես սըրտումս ա՛հ չ'իմ ասի.
Իմ հուքմի հէքիմըն գուն իս, ես է՛լ ուրիշ Շահ չ'իմ ասի.
Սայաթ-Նօվէն ասաց. Ջալում, ես էն մահին մահ չ'իմ ասի՝
Հէնչափ ըլի՝ գուն վըրէս լաս մազըդ չաղ տալօվ, աչկիլուս։

1758 ՍԱՅԱԹ-ՆՕՎԱ

ՏՈՒՂԹԱՆ ԲԷԿԻ ԵՐԳԸ

(ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ)

Մէկ ձի առայ աշխարհ ընկայ,
Մարա՛լըս, դիլբիլմազ,
Վերջը եկայ քեզի գտայ,
Մարա՛լըս, դիլբիլմազ:
Մօտեցիր խնդրեմ, աչերդ տեսնեմ,
Ե՛կ առնեմ, դիլբիլմազ:

—Ծերացել ես դու կընիկը ի՞նչ կ'անես
Ա՛յ քափթառ.
Հեռացի՛ր խնդրեմ մարդը ի՞նչ կ'անեմ
Ա՛յ քափթառ։

Տուն կը շինեմ քեզի համար
Մարա՛լըս, դիլբիլմազ,
Մէջը զմրուխտ, ոսկի, մարմար,
Մարա՛լըս, դիլբիլմազ.
Մօտեցիր խնդրեմ, աչերդ տեսնեմ,
Ե՛կ առնեմ, դիլբիլմազ:

Ես այրի, դու այրի, դու ե՛կ,
Ինձ արի՛, դիլբիլմազ.
Ինչ ասես դու ինձ՝ յօժար եմ
Մարա՛լըս, դիլբիլմազ.
Մօտեցիր խնդրեմ, աչերդ տեսնեմ.
Ե՛կ առնեմ, դիլբիլմազ:

Ա՜յ, ի՞նչ եղաւ այս իմ հալը,
Մարա՛լըս, դիլբիլմազ,
Ջեռիցըս կորաւ իմ խաղը,
Մարա՛լըս, դիլբիլմազ.
Մօտեցիր խնդրեմ, աչերդ տեսնեմ,
Ե՛կ առնեմ, դիլբիլմազ:

ԽԱՆԱ ԽԱՆԱ

Մէջլումի պէս կորաւ խելքս,
Լէյ-լի-ջան, ման իմ գալի
Խանա խանա.
Էրվէցաւ խունի ջիգարըս,
Արնի պէս աչկս է լալի,
Խանա խանա, խանա խանա:

Բըլբուլի նըման լացիլ իմ,
Աչկիրըս արնօվ թացիլ իմ,
Էշխէմէդ հիվանդացիլ իմ,
Փառկած իմ դըժար հալի,
Խանա խանա, խանա խանա:

Էշխէմէդ գարիլ իմ եզիդ,
Հալվէցայ, մաշվէցայ քիզիդ.
Րահմ արա՛. մէ խօսի՛ միզիդ՝
Բէմուրվաթ, ձէն իմ տալի,
Խանա խանա, խանա խանա:

Էրվում իմ, կանչում իմ՝ ա՜ման.
Ծուցըդ բաղ ունքիրըդ քաման.
Աշխարհս մէջըն քիզ նըման
Չ'իմ տեսած, ման իմ գալի
Նանա նանա, նանա նանա:

Մանուշակ բաց արած հօյլին,
Կարմիր վարթ, ծաղիկ հուտօյլին,
Շատ մի՛ լացցնի Սայաթ-Նօյին՝
Աչկիլուս, կըսկըծալի՝
Նանա նանա, նանա նանա:

1757 ՍԱՅԵԱԹ-ՆՕՎԱ

ԿԻԿՕՆ Ի ԳԱՍԸՄ ՓԱՇԱ

Մըր խօր պապկը գերաղման
Թողնի հոնտեղ, կիգամ ման.
Խօգիս կէլնի իւքի տակ,
Խուստա՛ դժուար է վաստակ.
Վայ լէ, լէ՜, լէ՜, լէ՜, լէ՜, լէ՜:

Քանի ղուրպաթն եմ ընկեր.
Միջայս գօտին չեմ քակեր.
Խարընուկ անոյչ անթառամ,
Քեղնից զատ կինն է հարամ:
Վայ լէ, լէ՜, լէ՜, լէ՜, լէ՜, լէ՜:

Հիմիկ լաճերս ի՞նչ կ'անեն,
Մեռա՞ն, կորա՞ն, ի՞նչքան են,
Սիրուն Շուշան Ներօտիկ,
Կըրպօն, Մըրտօն խորոտիկ.
Վայ լէ, լէ՜, լէ՜, լէ՜, լէ՜, լէ՜:

Հիմիկ իմ արտ ի՞նչ կեղնի,
Ընձից մահրում կու դեղնի,
Մամքի, ռեհան, նունուֆար,
Գոմից պակսի մըր տաւար.
Վայ լէ, լէ՜, լէ՜, լէ՜, լէ՜, լէ՜:

Արեւ չողցեր ա պայծառ,
Նաշխուն ա դաշտ, ճեղն ու ծառ,
Ջէրգիս վերեւ են հաւքեր,
Կու ճըլվըլան մեր հաւքեր.
Վայ լէ, լէ՜, լէ՜, լէ՜, լէ՜, լէ՜:

Ա՛խ, չաշխո՞ւն եմ, ի՞նչ էրի,
Ղարիպ ընկայ, սիրտս կերի.
Տղա՛յ, սո՛ւս կաց, ի՞նչ պէտք երգ,
Կիգա՛մ, կիգա՛մ, իմ տղերք.
Վայ լէ, լէ՜, լէ՜, լէ՜, լէ՜, լէ՜,

ՄԻ ԹՈՒՆԱՒՈՐԻՐ

Մի՛ թունաւորիր տխուր անջատման լուռ վայրկեաններըս,
Թող անվերջ հոսին՝ անդարձ խնդութեան ջինջ արցունքներըս.
Ինձ մի՛ անիծիր, թող միաս բարով, թող լուռ հեռանամ,
Չէ՞ որ իմ սըրտում էլ չըկայ արեւ, թող քեզ մոռանամ.

Քեզ էլ չեմ սիրում, քեզ էլ չեմ սիրում, տանջանքս է վկայ.
Տանջանքից բացի, հիմա իմ սրտում էլ ոչինչ չըկայ,
Բայց դու չես խաբուած, այդ ես եմ խաբուած իմ խենթ յոյզերով,
Իմ ցնորք կեանքի յոյսերից հիւսած սուտ երազներով:

Քեզ էլ չեմ կորցնում, անդարձ տենչերիս թաղումն եմ սգում,
Եթերանման ջինջ երազներիս կորուստը ողբում,
Չէ՞ որ իմ սրտում այլ ծաղիկներ են ծաղկում ու բուրում,
Ո՛հ, այլ աշխարհի բոյրն ու համբոյրն էր հոգիս քեզ բերում։
Քեզ էլ չեմ սիրում, քեզ էլ չեմ սիրում, տանջանքս է վկայ եղն.

Ն. ԳԱԼԵՆՏԵՐԵԱՆ — ԱՐՄԵՆՈՒՀԻ ՏԻԳՐԱՆԵԱՆ

ՍԻՐԵՐԳ

Մի՛ լար, ալուօ՛րըս, մի՛ լար,
Լալը՝ քեզի համար չէ՛...
Թող մինաւորն հառաչէ
Իր խուցին մէջ անդալար...

Բացական չատ չուշանար,
Կուգայ և քեզ կը կանչէ՛..
Մի՛ լար, ալուօ՛րըս, մի՛ լար,
Լալը՝ քեզի համար չէ՛...

Ան՝ խաւարով չարբենար
Վէրքն իսկ՝ իրեն կակա՛չ է,
Ձի կը յիշէ՛, կը յիշէ՛...
Քո՛յր. գիտե՞ս ցաւն անհընար...
Սրբէ՛մ արցունքըդ, մի՛ լար...

ՎԱՀՐԱՄ ԹԱԹՈՒԼ

ՄԻ՛ ԼԱՐ ԲԼԲՈՒԼ

Մի՛ լար, բլբուլ, ինծ մի տանջիր,
Որ փոթորիկն անիրաւ՝
Վարդըդ սիրուն, վարդըդ կարմիր
Թըփից պոկեց ու տարաւ։

Կ'անցնեն օրերն, կըգայ կըրկին
Մի նոր գարուն վարդաբեր,
Եւ մոռացած քո վիշտը հին՝
Նորից կ'երգես վարդի սէր։

Բայց վա՛յ կեանքին այն խեղճ երգչի՝
Որ վաղաժամ որբացաւ,
Իւր սիրելի խօսուն վարդից
Նա յաւիտեան զըրկուեցաւ։

Երգչի համար գարուն չը կայ,
Ո՛չ էլ նոր վարդ կը սիրէ,
Նա պէտք է լայ, պէտք է սըգայ,
Մինչ յաւիտեան պիտ՛ լըռէ։

ՏԻԿ. Զ. ՓԱՆՈՍԵԱՆ

ՄԻ՛ ԼԱՐ

Մի՛ լար. մի՛ թացիր աչերըդ.
Աչքիդ լոյսն ափսոս է, կ'անցնի...
Մի՛ տխրիր, վարդ-գարուն հասակըդ
Մի օր է վառ մայիս, կ'անցնի։

Ի՞նչ ես ջան էդ դարտին գերուել,
Դա էլ մի գիշեր է, կ'անցնի...
Էս կեանքն էլ հեքեաթ է էսպէս,
Մի՛ շտապիր, մի՛ տանջուիր, կ'անցնի։

Ռ. ՄԵԼԻՔԵԱՆ — Դ. ԴԷՄԻՐՃԵԱՆ

ՄԻ՛ՇՏ ԶՔԵԶ

Մի՛շտ զքեզ կ'երազեմ կաթոգին,
Ձայնդ անուշ կը գրաւէ իմ հոգին.
Որպէս աստղ մեղմօրէն փայլեցար
Ճամբուս վրայ, ուր ամէն ինչ էր խաւար.
Դեռ սրտովս կը վայելեմ դէմքդ ես.
Խորհուրդներս թռչնոյ պէս կը սուրան քեզ։
Ա՜հ, մինչեւ վերնան յուշերն իմ կեանքին,
Պիտ' յիշեմ թէ որքա՜ն ես թանկագին.
Ցորեկ. գիշեր, ո՛ւր ալ գտնուիմ,
Կարօտին քեզ կ'երազէ սիրտն իմ,
Կարօտին քեզ կ'երազէ սիրտն իմ։

Մի՛շտ զքեզ պաշտեց սիրտն իմ տըխուր,
Թափառիլ երբ ուզեց տեղ մ'այլուր.
Ո՛հ, զքեզ սիրեր եմ ես միայն,
Սիրոյ հմայքն ամէն ինչ կ'ընէ ունայն.
Պիտ' մընայ սէրն իմ՝ վառ անընդհատ.
Քուկդ է սիրտն իմ աստղերուն պէս հաստատ։
Ա՜հ, մինչեւ վերնան յուշերն իմ կեանքին, եա՜ն։

Ս. ԶԱՒԷՆ

ՆԱՆԱ ԲԱԼԻԿ

Նանա՛ բալիկըս, նանա՛,
Զուր չը քընես. չեմ խանա,
Լուրիկ, լուրիկ, լուրիկ, լուրիկ։
Փախեր եկեր ենք Վանա,
Բաղդու ձեռքէն գիլանա.
Լուրիկ, լուրիկ, լուրիկ, լուրիկ,
Բալաս լուրիկ, լուրիկ։

Ա. ՏԵՐ ՂԵՒՈՆԴԵԱՆ

ՕՐՕՐ

Նանիկ արա՛, անուշ բալիկ,
Հօվլի-զօվլի թեւի տակ.
Սիրուն դէմքիդ՝ վարդ է բացուել,
Նանա՛, նանա՛, իմ հրեշտակ։

Մտաւ արեւն իր մօր գիրկը,
Ելան աստղեր ու լուսին.
Աստղ ու լուսին՝ զով հովի հետ
Նանա՛, նանա՛, քեզ ասեն։

Ա. ԽՆԿՈՅԵԱՆ

ՍԻՐԵՐԳ

Նոր է բացուել բարի լոյս,
Մէկտեղ կ'երթանք դար ի դուս։
Բոպիկ մի՛ քելէ, փուշ է,
Սի՛րունիկ, պագդ անուշ է։

Ես ձորն ի վեր ձըներակ,
Դու նըմանիս արեգակ։

Հով կը փըչէ սարն ի վեր,
Արտուտ կ'ելնէ դարն ի վեր։

Ա՛ղջի, անուշի՛կ նազեր,
Խելքըս տարաւ քու մազեր։

Երկնից կամար ունքերըդ,
Ինծի վառեց քու սէրըդ։

Մատաղ լինիմ սեւ աչքին,
Ես կարօտ եմ քու պաչին։

Կ. Վ.

ԳԱՐՈՒՆ

Նորէն գարուն, ծաղիկ ու վարդ,
Լըռած առուն կ'երգէ զըւարթ,
Դալար, գայլայլ, կապոյտ հեռուն,
Ծիծաղ ու փայլ, կ'երգեն՝ գարուն.
Օ՜, դու գարուն՝ բարով եկար,
Մեր սըրտերուն դուն խնդագար,
Զարկ ես բերեր, սիրոյ զարկեր,
Ողջո՜յն գարուն, սէր, խընդութիւն.

Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

ԱՇՆԱՆ

Նորից անձրե՛ւ, մշո՛ւշ, ամպ,
Թախի՛ծ անհուն, տխրա՛նք հեզ,
Աշո՛ւն, քեզ ի՞նչ քնքշութեա՛մբ,
Ի՞նչ խօսքերով երգեմ քեզ...

Քո մշուշը, քո ոսկի
Տերեւները հողմավար,
Դիւթանքը քո մեղմ խօսքի,
Արցունքները քո գոհար...

Հարազատ են իմ հոգուն,
Վհատութեանն իմ խոնարհ,
Ե՛ւ թփերը դողդոջուն,
Ե՛ւ խոտերը գետնահար...

Եւ քո երգը թախծալի
Իմ սրտի երգն է, կարծես,
Աշո՛ւն, քաղցր ու բաղձալի,
Ի՞նչ խօսքերով երգեմ քեզ...

Ա. ՏԷՐ ՂԵՒՈՆԴԵԱՆ   Վ. ՏԷՐԵԱՆ

ՇԱՂԳԸՐ-ՇՈՒՂԳԸՐ (*)

Շաղգը՛ր-շուղգը՛ր քեամարս,
Բոյով-սոյով իմ եարս:

Արի՛ ախպէ՛ր, խաղ անենք,
Զար թըշնամուն դաղ անենք.

Շաղգը՛ր-շուղգը՛ր քեամարս,
Բոյով-սոյով իմ եարս:

Արի՛ ախպէ՛ր, խաղ անենք,
Մեր ցաւերուն ճար անենք:

Կ. Վ.

ԼԷ ԵԱՄԱՆ

Շատ աղուորիկ աղջիկ ես,
Կարմիր վարդի փնջիկ ես,
Մօտեցիր հոտըդ առնեմ,
Քո դարդէն կը մեռնիմ ես.

Լէ եաման, լէ լէ եաման,
Լէ եաման, դու աննման,
Ամբողջ աշխարհ փնտռեցի,
Զը գըտայ քեզի նման:

Կայներ կը նայիս ծովին,
Վարսերըդ տուած հովին,
Հազար երանի կուտամ,
Բարակ մէջքըդ գըրկողին.

Լէ եաման, լէ լէ եաման *ևլն.*

(*) *Նախ՝* «Լուսնակն անուշ» *և* «Ամպել ա, ձուն չի գալի»:

Շնորհք ունիս կուսական,
Իմ մարալըս պատուական,
Հազար գեղեցիկ տեսնեմ,
Դու ես սրտիս սիրական։
Լէ եաման, լէ լէ եաման և լն.

Ես քեզի շատ կը սիրեմ,
Ինչ որ ուզես պիտ՚ բերեմ,
Մօտեցիր, մարդ չի տեսներ.
Ճերմակ ծոցէդ համբուրեմ։
Լէ եաման, լէ լէ եաման և լն.

Ն. ԳԱԼԵՆՏԵՐԵԱՆ

ԵՍ ԾԵՐ ԵՄ

Շատեր եկան իմ ճամբէքով ու անցան,
Ջերմ ու խեղդող արցունքներով եմ յիշում.
Ովքեր եկան, ովքեր բերին վիշտ ու ցաւ,
Ովքեր անցան, ինձ մոռացան, չեն յիշում։

Ու լուռ մենակ չեմ երգում էլ խինդ ու լաց.
Չեմ սիրում էլ առաջուայ պէս ամէնքին,
Պիտի գնամ ճամբորդի պէս առանց լաց,
Պիտի լինիմ օտարի պէս անհոգի:

Դառել է մութ գիշերւայ պէս իմ ուղին.
Դադարել են ճրագները վառելուց,
Ո՞վ կ՚ափսոսայ անխօս հոգւով մեռնողին.
Ո՞վ կը տենչայ նորից լոյսեր վառելու...

Ու լուռ մենակ չեմ երգում էլ խինդ ու լաց, և լն.

Մ. ՂԱՐԱԲԷԿԵԱՆ

ՇԱՓԱՂ ԿՈՒՏԱՍ

Շափաղ կուտաս բաղի միջին,
Ա՛յ կարմիր վարդ, շաղի միջին.
Բուրմունքի պէս հիւսւում ես վեր
Իմ զառ ու լալ խաղի միջին։

Խելքս է տարուել քո ալ-վարդին,
Ճար չես անում իմ ծով դարդին,
Բլբուլի պէս թռնիմ քեզ մօտ,
Կարօտցել եմ ծոցիդ վարդին։

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

Ռ. ՄԵԼԻՔԵԱՆ

ՇԷԿ ՏՂԱՅ

Շէկ տղի պօյին մեռնեմ,
Մի տարի է չեմ տեսել,
Տեսնողի աչքին մեռնեմ
ջա՜ն,
Պօյիդ մեռնեմ եա՛ր։

Այ հեւա՛, հեւա՛ սիրտըս,
Ծընծղկան թև ա սիրտըս,
Բաց անեմ տե՛ս սև ա տերտըս
ջա՜ն,
Պօյիդ մեռնեմ եար։

Յ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՐԵՐԳ

Շիկուկ, շիկուկ մազերդ, ջանըմ,
Կ՚երեւան կոր խաղերըդ,
Էլ չեմ քաշի նազերդ, ջանըմ.
Շիկուկ, շիկուկ մազերըդ։

Ուսկի՞ց կուգաս, - Երեւանէն.
Աստուած քեզի դուռ մը բանայ,
Պաչիկ մը տուր՝ սիրտս զովանայ,
Աստուած քեզի դուռ մը բանայ։

Վանայ հայլան տեսայ, ջանըմ,
Եարըս տակին քընեեր է,
Ձէն տըւի, ձէնըս չի առաւ,
Մէկէն ի մէկ ճռեր է։

ԹԵԽՊԱՐ (*)

Ճորորա՛, Ա՛նուշ ջան, ճորորա՛,
Անուշի ճորորով ես կորայ,
Ա՛նուշ, լուսնակ նորել է,
Ճորորա՛, Ա՛նուշ ջան, ճորորա՛:
Նորել՝ բակ բոլորել է.
Անուշի ճորորով ես կորայ,
Տարան-չարան ամպի մէջ
Ճորորա՛, Ա՛նուշ ջան, ճորորա՛.
Մըտել ու մոլորել է։
Անուշի ճորորով ես կորայ:

(*) Նախ երգել՝ «Ալագեազ սարն ամպել ա» և «Մեր դռանը խնկի ծառ», իսկ յետոյ՝ «Հո՛վ, հով, հով լինի»:

Ծամեր ունիս ծիրանի,
Քամին տա՛յ թել-թել անի.
Էդ կապուտակ ծով-աչեր,
Ո՛ւմ խելքն ասես՝ կը հանի։

Ալ վարդ բացուել է հովին,
Սոխակ կայնել է քովին.
Բացի իրնից ձեռ տալու՝
Մօ՛տ չի թողում ոչովին։

Վարդ եմ քաղել շաղերով,
Վեր եմ դըրել մազերով,
Մի ջուխտ չամամ եմ կորցրել,
Իրա կանաչ թաղերով։

Կ. Վ.

Ո՛Հ ԽԱՐԱԲ
(ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ)

Ո՛հ խարաբ վերջ կը լինի՞
Մեր այս ցաւ ու հոգսերեն,
Աստուած, դու խղճա մեզի
Եւ վերջ տուր մեր վիշտերին։

Ինչո՞ւ համար պէտք է մենք
Խաւարում այսպէս տանջուենք,
Ա՛խ, Աստուած, դու խղճա մեզ
Եւ վերջ տուր մեր վիշտերին։

ԱՍԿԵԱՐ ԵՒ ԱՂՋԻԿՆԵՐԸ

— Արշին մալջի մալ ցոյց տուր։
= Այս բոպէիս, խանումնե՛ր։
— Բողչադ բաց, մէկ, մէկ ցոյց տուր՝
= Ցոյց տամ, ցոյց տամ, խանումնե՛ր։

— Ցո՛յց տուր, ցո՛յց տուր ի՛նչ որ կայ.
= Թափթա, քիշմիր եւ բասմա.
— Մեզ համար տեսնենք ի՞նչ կայ.
= Ինչ որ ցանկաք. խանումնե՛ր.

— Ի՛նչ գեղեցիկ կտոր է,
Ծաղիկն էլ յարմար է,
Նորահարսի համար
Լաւն է, լաւն է.

Ա՛խ երանի, ո՛վ հարսանեաց չոր կը կարի.
Ա՛խ երանի, ո՛վ սիրած եարին տեսնի.

ՎԻՃԱԿ
(ԱՆՈՒՇ)

Ո՜հ, ինչ սեւ վիճակ քեզ բաժին ինկաւ,
Սեւաբա՛խտ քուրիկ, Նազելի Անուշ.

—Սուտ բան է, քոյրի՛կ, դու մի՛ հաւատար,
Լոկ պատահական մի չար խօսք է սա.
Սիրտըդ մի՛ կոտրիր սուտ բանի համար,
Քու խաղըդ խաղա, ջան գիւլում սաա՛:

*

—Ա՛խ, չէ՛, ես գիտեմ, ես բախտ չի ունիմ,
Ես երբե՛ք, երբե՛ք բախտ չեմ ունեցել.
Ես միշտ էլ էսպէս անբախտ կը լինեմ,
Մանուկ օրից են դեռ ինձ անիծել.

*

Ասում են՝ մի օր, ես օրօրոցում
Մի պառաւ դարւիշ մեր դուռն է գալի,
Իր խաղն ասում է ու բաժին ուզում,
Իմ նանը նրան բաժին չի տալի.

—Կորի՛, ասում է, կորի՛ մեր դռնից.
Երեխաս ճաքեց, հեռացի՛ր գընա՛...»
Ու դարւիշն այնտեղ անիծում է ինձ,
Թէ՝ դըրա օրը լացով անց կենայ...

Ա՛խ, այն դարւիշի անէծքին անգութ
Ու այս վիճակին տեղեակ է Աստուած,
Սիրտըս էլ միշտ փա՛կ. սիրտըս էլ միշտ մո՛ւթ,
Ի՞նչ կայ, չը գիտեմ, իմ առջեւ պահուած...

*

—Մի՛ տըրտմիր Անո՛ւշ, մի՛ լինիր յամառ.
Մեր ձեռքով հանած մի անմիտ վիճակ,
Մի խելառ դարւիշ, մի անէծք յիմար,
Ու լալիս ես դու այդպէս սըրտաճա՛ք...

*

Հանգի՛ստ կաց քոյրի՛կ, մի՛ վախիր այդքան,
Կեանքը քեզ համար վառ գարուն է դեռ,
Այդ քո նորահաս մատաղ կուսութեան
Առաջեւ դեռ կան երջանիկ օրեր.

Սուտ բան է քոյրի՛կ, դու մի՛ հաւատար,
Լոկ պատահական մի չար խօսք է սա.
Սիրտըդ մի՛ կոտրիր սուտ բանի համար,
Քու խաղըդ խաղա, ջան գիւլում սաա:

Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

Ա. ՏԻԳՐԱՆԵԱՆ

ԾԱՂՐԵՐԳ

Ո՜հ, ի՛նչ քաղցըր բան,
Ըլլալ կոնծաբան,
Կոնծել լաւ գինի,
Թափառիլ միշտ անբան.
Լարի՛ր թը՛մպըրըլալլա հա՛, հա՛, հա՛:

Ո՛հ, ի՛նչ գառըն բան,
Ըլլալ թըղթարան,
Տարուիլ միշտ փողը,
Գըլխին տալ սեւ հողը։
Լարի՛ք բը՛մպըրըլալլա հա՛, հա՛, հա՛։

Կ. Վ.

ԳԱՂՏՆԻՔՍ

Ո՛չ թռչունին եւ ո՛չ հովուն
Սիրելս ըզքեզ չը զրուցեցի.
«Խօսէ՛» ըսաւ ինձ ծովն անհուն,
Ծովուն ալ սիրտըս չը բացի։

Ծաղիկներուն չըսի ես քեզ,
Աստղերուն ալ չըսի ընաւ.
Չըսի լուսնին թէ այս հրակէզ
Սըրտիս մէջ սէրդ ինչպէ՞ս ծընաւ։

Սակայն թռչունն, աստղերն ամէն,
Հովն ու ծաղիկ, ծովն ու լուսին,
Քեզ ճանչնալուս առջի ժամէն
Քու վըրայօքդ ինձ կը խօսին։

Յ. ՍԻՆԱՆԵԱՆ   Կ. ՈՍԿԵԱՆ

ՀՐԱԺԵՇՏԻ ԽՕՍՔԵՐԻՑ

Ո՛չ տրտունջ, ո՛չ մրմունջ սգաւոր,
Հեռացիր, մոռացիր ինձ յաւէտ.
Իմ ուղին միշտ մըթին, մենաւոր,
Կը գընամ, իմ դժկամ ցաւի հետ։

Իմ ճամբան մշտական մի գիշեր,
Ինձ շողող ո՛չ մի շող չի ժպտայ.
Հեռացիր, մոռացիր, մի՛ յիշիր,
Ինձ այդպէս քրոջ պէս մի գթայ։

Յուսաբեկ, մութ ու մէգ թող լինի,
Իմ վերեւ թող արեւ չի ժպտայ,
Լոկ երկունք, լոկ արցունք թող լինի,
Ինձ այդպէս քրոջ պէս մի քթայ։

Ն. ԳԱԼԵՆՏԵՐԵԱՆ   Վ. ՏԷՐԵԱՆ

ՈՍԿԻ ԵՐԱԶԸ

Աղջիկ. Ոսկի երազ ես տեսայ.
Հագուած էիր զերդ փեսայ.
Ճերմակ հագուած՝ քովըդ ես
Կանգնած էի հարսի պէս։

Տղայ. Ոսկի երազն այս գիշեր,
Առջի անգամ ես տեսեր.
Ան բայց աչքով ամէն օր
Երազս է իմ հեշտօրօր։

Միասին. Երնէկ դառնար սիրական,
Ոսկի երազն իրական....

Զ. ՊԵՐՊԵՐԵԱՆ   Մ. ՏԱՄԱՏԵԱՆ

Ո՞Վ ԵՍ ԴՈՒՆ

Ո՞վ ես դուն, որ կ'անցնիս քովէս ամէն օր,
Եւ ամէն օր նազանքներով նորանոր.
Նազանքներով նորանոր.
Ո՞վ ես դուն, ո՞վ ես դուն։

Ո՞վ ես դուն, որ ինձ կը նայիս յանդիման,
Խորհրդաւոր ծով աչքերով աններման,
Ծով աչքերով աններման.
Ո՞վ ես դուն, ո՞վ ես դուն։

Ո՞վ ես դուն, որ ինձ կը ժպտիս գողունի,
Համակ դէմքովդ երկնապարգեւ գեղունի,
Երկնապարգեւ գեղունի.
Ո՞վ ես դուն, ո՞վ ես դուն։

Ո՞վ ես դուն, որ ինձ կը խօսիս մեղմ ու ցած,
Աստուածներու սիրած լեզուն անկասկած,
Սիրած լեզուն անկասկած.
Ո՞վ ես դուն, ո՞վ ես դուն։

Ո՞վ ես դուն, որ զիս կը սիրես լռելեայն,
Ըսէ ինձ գէթ, քու անունըդ միմիայն,
Անունիկըդ միմիայն.
Ո՞վ ես դուն, ո՞վ ես դուն։

Գ. ԳԱԼՖԱԵԱՆ

Ո՞Վ ԻՐԱՒՈՒՆՔ ՈՒՆԻ
(ՄԱՇՏԻ ԽՐԱՏ)

— Ո՞վ իրաւունք ունի
Եարը եարից բաժանի,
Դու հանգիստ կաց սիրուն եար,
Քեզ ո՞վ կարող է տանի։
Բոյիդ, բոսիդ ղուրբան՝
Գիւլնազ, Գիւլնազ, Գիւլնազ.
Սեւ աչերիդ ղուրբան՝
Գիւլնազ, Գիւլնազ, Գիւլնազ:

= Ես միայն քեզ եմ սիրում,
Միայն քեզանով ապրում.
Մատաղ լինեմ քո բոյիդ,
Սեւ-սեւ, կամար յօնքերիդ։
Բոյիդ, բոսիդ ղուրբան՝
Սալվար, Սալվար, Սալվար.
Սեւ աչերիդ ղուրբան՝
Սալվար, Սալվար, Սալվար:

— Երբ լսում եմ քո ձայնըդ,
Բլբուլի պէս խօսիլըդ,
Մոռանում եմ ամէն բան,
Միայն թէ քեզ ինձի տան։
Բոյիդ, բոսիդ ղուրբան՝
Գիւլնազ, Գիւլնազ, ելի։

ՈՎ ԿԵԱՆՔ ՈՒՆԻ

Ով կեանք ունի, դարդ էլ ունի,
Դարդին դարման եար էլ ունի.
Մենակ ես եմ անբախտ ծընւել,
Սիրտըս դարդոտ ու ճար չունի։

Ով սէր ունի, եար էլ ունի,
Նազան սըրտում տեղ էլ ունի.
Մենակ ես եմ սեւ օր ծընւել,
Սէրըս կուլայ ու բոյն չունի։

Ծէգը առաւ դար ու դուրան,
— Աղիզ մէրի՛կ դուռը բաց,
Քու որդին եմ, խոցւած կուգամ,
Անո՛ւշ մէրիկ, գիրկըդ բա՛ց...

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ՄԱՅՐԵՆԻ ԼԵԶՈՒ

Ո՛վ մեծասքանչ դու լեզու,
Ո՛վ հեշտ բարբառ մայրական,
Փափկահընչիւն բառերուդ
Նըման արդեօք այլ տեղ կա՞ն։

Դու որ նախ ինձ հընչեցիր
Սիրոյ քո, ո՜հ, հեշտ խօսքեր,
Այն նախ ըղքեղ թոթովել՝
Դեռ իմ մըտքէն չէ ելեր։

Իմ մայրենի քաղցըր լեզու,
Կեա՛ց անսասան, կեա՛ց յաւէտ,
Կեա՛ց միշտ լեզուդ հայկարժան,
Կեա՛ց ծաղկալից, ծաղկաւէտ։

Ի՜նչ դառըն վիշտ է սըրտիս
Երբ օտար տեղ ու լեզու՝
Բըռնի իրեն զիս քաշէ.
Սըրտէս արիւն կը հեղու։
Ո՜հ, զայն օտարն ես սիրել
Բընաւ չեմ կարող ի սրտէ,
Զէ՛ այն չէ՛ քաղցըր իմ լեզու,
Որ սիրով զիս կ'ողջունէ։
Իմ մայրենի քաղցըր լեզու,
Կեա՛ց անսասան, կեա՛ց յաւէտ,
Կեա՛ց միշտ լեզուդ հայկարժան,
Կեա՛ց ծաղկալից. ծաղկաւէտ։

Կ. Վ. Ն. ՄԵԶՊՈՒՐԵԱՆ

ՈՂԲ ԱՐՈՒՍ ԵՒ ՍԱՆԱՄԻ
(ԱՇՈՒՂ ՂԱՐԻԲ)

- Ոտքերիդ տակ ղընեմ, Սանամ, գըլուխս,
Ողբա՛, Սանամ, ողբա՛, ո՞ւր է Ղարիբդ։
- Վառւում եմ, այրւում եմ, դուրս չի գայ ծուխս,
Ողբա՛, Սանամ, ողբա՛, ո՞ւր է Ղարիբդ։

- Քեզի մատաղ լինեմ, սիրելի՛ մայրիկ,
Ինչպէ՞ս ես չը լամ, սիրելիս յետ չեկաւ։
- Աշխարհիս մէջ կեանք չունեցայ երջանիկ,
Ինչպէ՞ս ես չը լամ, սիրելիս յետ չեկաւ։

- Տե՛ս, անիրաւ բաղդը մեզի ի՜նչ արեց,
Անամօթ թշնամին դըռները փակեց։
- Արիւնս չորացաւ, շունչս դադարեց,
Ողբա՛, Սանամ, ողբա՛, ո՞ւր է Ղարիբդ։

- Ղարիբն ինծի ի՜նչ օրի հասցրաւ,
Հին ցաւերիս վերայ նոր ցաւ նա դրաւ։
- Անիրաւ թշնամին բերեց վատ համբաւ,
Ինչպէ՞ս ես չը լամ, սիրելիս յետ չեկաւ։

ՈՐՏԵՂԻ՞Ց ՊԱՏԱՀԵՑ
(ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ)

- Ո՞րտեղից պատահեց, Աստուա՜ծ իմ,
Արշին մալ ալան,
Եւ սիրտըս կըրակով լցրեց,
Այրւո՜ւմ եմ։
Ինքը լաւ, խօսքերը քաղցըր,
Արշին մալ ալան,
Սիրեցի ամէնից բարձըր,
Տանջւում եմ։

Ինձ գցեց այս դարդերի մէջ,
Արշին մալ ալան,
Հալ չը մնաց իմ սրտիս մէջ,
Այրուո՛ւմ եմ։
Զօր ու գիշեր մտածում եմ,
Արշին մալ ալան,
Եւ կարծես թէ երազում եմ,
Տանջւում եմ։

ԸՆԿԵՐՈՒՀԻՆԵՐԸ

– Ի՛նչ վատ ես տրամադրուած,
Գիւլչօհրա՛, մեզ ասա,
Ինչպէս մի խելագարուած,
Գիւլչօհրա՛, մեզ ասա,
Սիրտըդ ինչպէ՛ս է այրած,
Գիւլչօհրա՛, մեզ ասա,
Մեզ ասա, Գիւլչօհրա՛։

Օրիորդին այդ չի սազի,
Տխրելն ու մտածելը,
Այդ ի՞նչ է քեզ պատահել
Գիւլչօհրա՛, չո՛ւտ ասա,
Մեզ ասա, Գիւլչօհրա՛։

ՈՐՍԿԱՆ ԱԽՊԷՐ

– «Որսկան ախպէ՛ր, սարէն կուգաս,
Սարի մարալ կը փընտռես.
Ասա՛, եարաբ, դուն չը տեսա՞ր
Իմ մարալըս, իմ բալէս։

Դարդի ձեռքէն սարերն ընկաւ
Իմ արեւըս, իմ բալէս.
Գըլուխն առաւ քարերն ընկաւ
Իմ ծաղիկըս, իմ լալէս...

– «Տեսայ, քուրի՛կ, Նըշխուն բալէդ
Կարմիր-կանաչն է կապեր,
Սիրած եարի համբոյրի տեղ
Սըրտին վարդեր են ծըլեր։

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ՍԱՅԼՈՐԴ

Որքա՛ն լաւ օրերս գնացին,
Որքա՛ն համբոյրներ գիրգ ու սէր,
Ի՛նչ բոց հայեացքներ հրածին,
Ի՛նչ բորբոք կրծքեր գիրգ ու սէր։
Սայլորդ, մի՛ քշիր ձիերին,
Էլ տեղ չունիմ ուր շտապեմ,
Չունիմ մէկը որ ինձ սիրի.
Սայլորդ. մի քշիր ձիերին:

Անցան գարնան սէրս ու արեւ,
Ամրան գիշերները լուսնի.
Աշնան տխրագին մնաս բարեւ,
Ձմրան սէրս ափսոս մէկուսի։
Սայլորդ, մի՛ քշիր ձիերին, և լն.

Ո՛հ, դառն է հիմայ ծերացած,
Նայիլ լուռ հանգչող կրակին,
Յիշել լաւ օրերըս անցած,
Յիշել սիրած աղջիկ ու կին։
Սայլորդ. մի՛ քշիր ձիերին, և լն,

ՈՐՔԱՆ ՔԱՂՑՐ Է

Որքա՜ն քաղցր է սև գիշերւայ
Թանձըր մութը քո գըրկում.
Որքան անուշ, նազանքի յուշ՝
Շողեր ունես քո գըրկում։

Մութ գիշերւայ չար թևերում
Այնքան մեղմ ես դու գըգւում,
Որ սև մութը երգ է դառել
Ու ղընգում ա քո գըրկում։

Սև աչերիդ լուռ խորքերում
Գիշերներ կան թագնուած,
Մութ գիշերներ ինձ են գերում
Որ ես փարւում քո գըրկում.

Երբ նայում ես սև աչերիդ
Անկիւններից՝ դու ինձ թեք,
Հայեացքումդ ինձ ես գերում
Որ ես թաղւեմ քո գըրկում։

Ն. ԳԱԼԵՆՏԵՐԵԱՆ   Ա. ՏԷՐ ՅՈՎՀԱՆՆԷՍԵԱՆ

ՈՒՌԻ ԵՍ

Ուռի ես կռանալ մի՛,
Մեր տընից հեռանալ մի,
Վայ, լէ, լէ. վայ, լէ, լէ,
Վայ, լօ, լօ, ջան:

Թէ Աստուածդ կը սիրես,
Սիրել ես մոռանալ մի։

Հեռու. հեռու սըրտէս,
Ձընձըղըկի թև ա սիրտըս.
Քանց վարդը կարմիր չկայ.
Բաց՚անիմ սև ա սիրտըս։

ՈՒՍՏԻ՞ ԳՈՒՔԱՍ

Ուստի՞ գու քաս, ղարիբ բըլբուլ,
Դու մի՛ լաց՚լի, ես իմ լալու,
Դու վարթ պըտուէ՛, ես փօղալին,—
Դու մի՛ լաց՚լի, ես իմ լալու։

Արի՛, բըլբուլ, խօսի՛ բառըն,
Օխնըվլի՛ քու էկած սարըն,
Քի վարթն էրից, ինձ իմ եարըն,—
Դու մի՛ լաց՚լի, ես իմ լալու։

Ման իմ գալի դիդարի հիդ,
Վունց ղարիբ բըլբուլ խարի հիդ.
Դու վարթի հիդ, ես եարի հիդ,—
Դու մի՛ լաց՚լի, ես իմ լալու։

Սայբուի նըման կանանչ իմ,
Ե՛կ, խօսի՛ ձայնըդ ճանանչիմ,
Դու վա՜րթ կանչէ՛, ես եա՜ր կանչիմ,—
Դու մի՛ լաց՚լի, ես իմ լալու։

Ղա՛րիբ բըլբուլ՝ ձայնիդ մալում,
Ես ու դու էրվինք մէ հալում.
Սայաթ-Նօվէն ասաց՝ ղա՛լում,—
Դու մի՛ լաց՚լի, ես իմ լալու։

ՍԱՅԵԱԹ-ՆՕՎԱ

ՎԱՆԱՑ ՍԱԶ

Ուստի՞ կուգաս շորորալէն,
Աստուած պահէ քու ջուխտ բալէն.
Զագար մը տուր էդ քու մալէն,
Չի տրտնջամ ես իմ հալէն։

Ուստի կուգաս ուշիկ, ուշիկ,
Ոտքերդ խթուի կակուղ փուշիկ.
Կարմիր երես, պադն անուշիկ,
Տուր որ կծեմ կակուղ թշիկ։

Ուստի՞ կուգաս Էրեւանայ,
Աստուած քեզի դուռ մը բանայ.
Պաչիկ մը տուր, մարդ չիմանայ,
Բոշ բան մի աներ քեզ մըհանայ։

Կ. Վ.

ՈՒՐ ԵՍ ՋԱՅՆ ՏՈՒՐ

(ՈՒՇ ԼԻՆԻ ՆՈՒՇ ԼԻՆԻ)

Ո՞ւր ես, ձայն տուր, հէ՛յ անջիգեար,
Արի՛, տեսնեմ երազով,
Մէկ էլ տեսնեմ չինար բոյըդ,
Ձըլնի մեռնիմ մուրազով։

Վարդ ցանեցի, փուշ քաղեցի,
Եար փնտռեցի, եարա գտայ:

Թէ սարեր կան ճամբիդ վըրայ,
Թեւ առ, թռի՛ր, անց կացիր.
Թէ ցաւեր կան սըրտիդ վըրայ.
Դուրս վռնտիր շուտ հասիր։

Վարդ ցանեցի, փուշ քաղեցի,
Եար փնտռեցի. եարա գտայ:

Գ. ԵՐԻՑԵԱՆ

ՍԻՐԵՐԳ

Ո՞ւր էր թէ զեփիւռիկ
Ըլլայի թափառիկ,
Ոսկեթել մազերուդ
Տայի համբուրիկ.

Ո՞ւր էր թէ վարդ գոհար
Ըլլայի վառ ի վառ,
Ընտրէի ինձ բազմոց՝
Կուրծքըդ ձիւնափառ։

Ո՞ւր էր թէ քնարիկ
Ըլլայի ես թռչնիկ,
Թըռչիլ, գալ ու շոյել
Դէմքըդ գեղեցիկ.

Կամ երազ խուսափուկ
Որ գայի մինակուկ,
Քունիդ մէջ խառնել
Քու սիրտըդ փափուկ։

Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ԳԱՐՆԱՆ ՕՐԵՐ

Ո՞ւր էք կորեր գարնան օրեր,
Ջառ սարերի հովի հետ,
Կանչեմ, արի՛ք, նըշխուն հաւքեր,
Ալ շըթունքով վարդի հետ։

Աղբիւր կուգար էս քարափէն,
Կաքաւն էստեղ երգ կ՚ասէր,
Խոր ծմակէն կուգար էրէն,
Սիրտըս ուրախ կը զարնէր։

Հիմի ցուրտ է, ձիւնն է եկեր,
Ձորս դիս ձմեռ ու սառոյց,
Ա՜խ, էլ չկան արեւ օրեր,
Սիրտս էլ սառեր է վաղուց։

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ՍԻՐՈՅ ՎԻՇՏ

Ուրտեղ սիրուն կին կը տեսնեմ՝
Կը նորանան դարդերըս,
Ու երբ անուշ երգ կը լսեմ,
Կը խորանան դարդերըս։
Սահման չունին, դարման չունին,
Չեն վերջանում, չեն անցնում,
Ա՜խ, մահուան պէս, սեւ մահուան պէս,
Իմ դարդերըս, դարդերըս։
Ջառ յոյսերով, անմահ սիրով
Ես քեզ խորունկ սիրեցի.
Աստղ ու երկինք — մատաղ սիրտըս
Ոտներիդ տակ փռեցի։
Սէր չը տուիր ու աշխարհէն
Սիրտըս կըտրաւ, Շուշան ջան,
Ա՜խ, զըմրուխտէ, ա՜խ, զըմրուխտէ
Իմ յոյսե՜րըս, իմ սէ՜րըս...
Կարօտ կեցայ կընոջ սիրուն —
Սըրտի ոսկի արեւին,
Պապակ կեցայ մութ սարերին,
Բաշը փըրփուր նըժոյգին։
Կեանքըս անցաւ թեւերը թափ.
Սիրտը կոտրած սազի պէս,
Ա՜խ, ծովէն խոր, սարէն ծանըր
Իմ դարդ՜երըս, դարդե՜րըս...

Ա. Ի.

ԽԱԼԱՆ ՔԵԶ ՄԱՏԱՂ
(ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ)

Խալա. Զամթըրըս գըլխիս գըցեմ,
Խալան քեզ մատաղ, Ասկեա՛ր,
Գընամ քեզ աղջիկ ճարեմ,
Խալան քեզ մատաղ, Ասկեա՛ր։

Ասկեար. Քո ճարածն ես ի՞նչ կանեմ,
Այդ լաւ չը լինի, Խալա՛,
Աղջիկը ես պիտ՝ առնեմ,
Արդեօք սրտիս դիւր կըգա՞յ։

Խալա. Մեր օրէնքում այդ չըկայ
Որ աղջըկան տեսնեն,
Ե՛կ, իմ խորհրդով գնա,
Ու այդպէս էլ գործ արա։

Ասկեար. Քեզ լա՛ւ յայտնի է Խալա,
Որ չտեսած չեմ առնի,
Թէ որ չեմ ամուսնանայ,
Ի՛նչ ուզում ես ինձ ասա։

Վէլի. Դո՛ւ իմ սրտից խօսեցիր,
Շատ լաւ ասացիր, աղա՛,
Դո՛ւ տեղըդ ծանր նըստիր,
Ջո՛ւր մի չարչարուիր, Խալա՛։

ՍՈՒԼԷՅՄԱՆ

Այդ ի՞նչ է քո դարդը,
Այդ ի՞նչ տխրութիւն է սա,
Ի՞նչ է քո տանջանքը.
Ասա՛ տեսնեմ, ինձ ասա։

Մի՛ ամաչիր, պատմիր
Ասկեա՛ր, քո դարդը ինձի,
Ի՞նչ ես դու մտածում
Նման այդպէս գերիի։

Այս աշխարհում մի՞թէ
Քո դարդերին ճար չըկա՛յ,
Վերջ տուր մտածմունքիդ,
Պատմիր տեսնեմ թէ ի՛նչ կայ։

Միթէ դու չե՞ս լըսել,
Որ այսպիսի առած կայ,
«Աշխարհիս երեսին՝
Անկարելի բան չըկայ»։

ՋԸՄ, ՋԸՄ, ՋԸՄ

(ԾԱՂՐԵՐԳ)

—Ջըմ, ջըմ, ջըմ, ջըմ կենայ խաղա,
Կօշիկլիս ծանրութենէն ջըմ կենայ խաղա.
—Քը կօշիկ տար դի՛ր տը հան,
Դու արի խաղա։

—Ջըմ, ջըմ, ջըմ, ջըմ, ջըմ, կենայ խաղա,
Եազմայիս ծանրութենէն ջըմ կենայ խաղա.
—Եազմադ տար դի՛ր տը հան,
Դու արի խաղա։

—Ջըմ, ջըմ, ջըմ. ջըմ, ջըմ կենայ խաղա,
Մախչայիս ծանրութենէն ջըմ կենայ խաղա.
—Քը մախչան տար դի՛ր տը հան,
Դու արի խաղա։

—Ջըմ. ջըմ, ջըմ. ջըմ կենայ խաղա,
Մազերուս ծանրութենէն ջըմ կենայ ծաղա.
—Մազերդ տար դի՛ր տը հան,
Դու արի խաղա։

—Ջըմ. ջըմ. ջըմ. ջըմ, կենայ խաղա,
Ֆիստանիս ծանրութենէն ջըմ կենայ խաղա.
Ֆիստանըդ տար դիր տը հան,
Դու արի խաղա։

ՋԻՆԱՐ ԵՍ

Ջինար ես, կեռանալ մի՛,
Եա՛ր, եա՛ր,
Մեր դըռնէն հեռանալ մի՛,
Եա՛ր, եա՛ր,
Եա՛ր, նանա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ,
Նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ, նա՛յ:

Եա՛ր, քո Աստուած կը սիրես,
Հեռու ես, մոռանալ մի՛։

Ջեր բաղի դուռը բաց ա,
Ոտներս չաղով թաց ա.
Ինձանից հեռացել ես,
Աչքերս լիքը լաց ա։

Էս գիշեր երազ տեսայ,
Հերկերըս վարած տեսայ.
Ամօ՛թ քեզի, ա՛յ տըղայ,
Քո եարը տարած տեսայ։

Կ. Վ.

ՉԻՍ ԱՍՈՒՄ

Չ’իս ասում, թէ՝ լա՞ց իս էլի.
Բարօվ տէսայ, իմ սիրէկան.
Վարթի նըման բաց իս էլի
Խարէրօվ,
Խարէրօվ.
Բարօվ տէսայ, իմ սիրէկան։

Արի՜ մէ գարդըս իմացի՜,
Էշխէմէդ համան իմ լացի.
Օրըս էօղէս անց է կացի
Դարէրօվ,
Դարէրօվ.
Բարօվ տէսայ, իմ սիրէկան։

Եփ կու հաքնիս ալ ու ատլաս,
Տէմնօղլին կու չինիս մաս մաս.
Դօշիդ պիտի լալ ու ալմաս
Շարէրօվ.
Շարէրօվ.
Բարօվ տէսայ, իմ սիրէկան։

Ես քիզ գօվլիմ խաղի մէչըն.
Շամամնիրըդ թաղի մէչըն.
Ման իս գալի բաղի մէչըն
Եարէրօվ.
Եարէրօվ.
Բարօվ տէսայ, իմ սիրէկան։

Սայեաթ-Նօվէն վո՞ւնց դընջանայ՝
Աչկիրըդ օսկէ փընջան ա.

Դուշմանի լիզուն մընջանայ
Զարէրօվ,
Զարէրօվ.
Բարօվ տէսայ, իմ սիրէկան։

ՍԱՅԵԱԹ-ՆՕՎԱ

ՊԱԼԱՏԻՑ ԴՈՒՐՍ ԵԿԱՒ

(ԱՇՈՒՂ ՂԱՐԻԲ)

Պալատից դուրս եկաւ մի կոյս,
Ջարթի՛ր, որսորդ, որսըդ եկաւ,
Ողջ աշխարհին տարածեց լոյս,
Ջարթի՛ր, որսորդ, որսըդ եկաւ։

Սև մազերը երեսին թափած,
Կարծես երկինք է ամպամած,
Աստղը երկնից գաշտն էր իջած.
Ջարթի՛ր, որսորդ, որսըդ եկաւ։

Պալատի մէջ ունէր փափաք,
Լսել մի քիչ երգ ու նուագ.
Քեզ է գալիս արագ, արագ,
Ջարթի՛ր, որսորդ, որսըդ եկաւ։

Մօտը նըստաւ չատրուանի,
Առնօղլին հազար երանի,
Տեսնողի խելքը կը տանի,
Ջարթի՛ր, որսորդ, որսըդ եկաւ։

ԱՇՈՒՂ ՋԻՒԱՆԻ

ՏՈՒՏՈՒԼ

Պալքօնը ման էս գալիս,
Կտոր կտոր էս գալիս,
Աղջի՛ տուտուլ, տուլ տուտուլ,
Սարի տուտուլ, տուլ տուտուլ։

Ջուխտ բարիրոս մի քաշիր,
Եար ջան սիրտըդ մի մաշիր.
Աղջի տուտուլ, տուլ տուտուլ, ևլն.

Պալքօնի վերի ղուշը,
Պաչեմ տուտուլին թուշը,
Աղջի՛ տուտուլ, տուլ տուտուլ, ևլն.

Փեսան եկաւ, տեղ չըկայ,
Խաւիծ անեմ, եղ չըկայ,
Աղջի տուտուլ, տուլ տուտուլ, ևլն.

ԼՈՐԻԿ

Պաղ աղբիւրի մօտ
Կանգնած հայ աղջիկ,
Սափորը ուսին՝
Ինքն էր գեղեցիկ,
Առաւօտուց բռնիր վառ,
Ես մայիլ եմ քեզ համար.
Նման ես կարմիր խնձոր, լոռի՛կ.
Լոռի՛կ, լոռի՛կ, ջանըմ լոռի՛կ։

Պաղ աղբիւրի մօտ
Կանգնած հայ տըղայ,
Հրացանը ուսին՝
Ինքն էր քաջ հըսկայ։
Առաւօտուց բռնիր վառ, ևլն.

ՊԱՆԴՈՒԽՏ ԾԱՌԸ

Պատէն ծընած ծառի պէս,
Ո՜վ հոգիս, չա՜տ ղարիպ ես,
Շուքիդ մէջ ո՛չ մէկ ղայլայլ,
Ջըւե՜ր են ծիծառի պէս։

Ճիւղէդ կախ բոյնն աւերուն,
Լըքման օրրա՜ն հովերուն,
Հոգի՛ս, կարօտն ունիս դեռ
Անվերադարձ թեւերուն։

Ու խոց կուրծքն ի վար ահա՛
Շիթ առ չիթ կ'ոսկեցոլա՛յ
Սաթէ ծորումը խէժին,
Ա՜խ, պանդուխտ ծառը կուլա՛յ,
Ա՜խ, պանդուխտ ծառը կուլա՛յ։

ԱՐԱՑ ՊԱՐԹԵՒԵԱՆ   ՎԱՀՐԱՄ ԹԱԹՈՒԼ

ՊԱՐԱԽՕՏ

Պարախօտը եկաւ գըցեց հայհայը,
Փոքրիկ մըշակներին հաւաքեց թայը.
Երեւանում չըկայ իմ եարի թայը.
Զարթի՛ր, զարթի՛ր, ես քո աչերին մեռնեմ,
Արի առնեմ ես քեզի, եա՛ր,
Քեզի բալա եա՛ր, եա՛ր,
Քեզի բալա եա՛, եա՛ր,
Չեմ մոռանար ես քեզի եա՛ր.
Քեզի բալա եա՛ր, եա՛ր,
Քեզի բալա եա՛ր, եա՛ր։

Ի՞նչ ես նստել էդպէս մենակ պարտիզում,
Աչքերիցըդ փայլուն լուսինն է վազում,
Բացուած վարդ ես՝ մօտըդ բլբուլ ես ուզում։
Զարթի՛ր, զարթի՛ր, ես քո աչերին ելն։

Անուշ եար ջան, արի՛ ինձ էլ հետըդ տար,
Ինձ մի՛ թողուր օտար երկրի սիրահար,
Խեղճ աշուղ եմ՝ քո սիրուցըդ խելագար։
Զարթի՛ր, զարթի՛ր, ես քո աչերին ելն։

Արշալոյսի ցողերն իջան մաղերից,
Այգի շողով նըրանք դառան մարգարիտ,
Լոյսը բացուեց, արեւն ժպտեց աչերից։
Զարթի՛ր, զարթի՛ր, ես քո աչերին ելն։

Սոխակն եկաւ վարդի թըփին պար գալու,
Սիրած եարին զարթօնքի երգն երգելու,
Լոյսը բացուեց այգի շողեր ձօնելու։
Զարթի՛ր, զարթի՛ր, ես քո աչերին ելն։

ԱՇՈՒՆ

Պաղ պաղ փըչեց աշնան քամին,
Ուռի, լորի դող առան,
Տերեւները չոր ու դեղին,
Տխո՛ւր, խըշշան վար ինկան։

Մենակ ագռաւն ծառի ճիւղքին՝
Լուռ ծըւարաւ, սեւ հագաւ,
Ա՛խ, մէկ էլ ես ձեռքըս ծոցիս,
Աչքըս եարի դըրան մնաց։

Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ Ա. ԽՍԱՀԱԿԵԱՆ

ՊԱՐՏԷԶ ՈՒՆԻՄ

Պարտէզ ունիմ դըրախտ ա,
Ծաղիկ ծաղկունքի վախտ ա,
Գէշ աղջիկ, սիրուն տըղայ,—
Էս էլ մի ուրիշ բախտ ա։

Ոսկէ մատնիք մատներիս,
Շողքըն ընկաւ երեսիս.
Աքլոր շուտով մի՛ կանչի,
Անքուն կ'անես իմ եարիս։

Սիրտըս արնով լըցեցիր,
Կըրակով խորովեցիր.
Աչքըդ դո՛ւս գայ, ա՛յ աքլոր,
Ի՛նչ շուտ ձէնըդ գըցեցիր.

Կ. Վ.

ԳԵՂՋԿԱԿԱՆ

Պարտքով կոլը ծախեցին,
Եա՛ր, եա՛ր,
Ձըմեռ տըւին բուռնուղին.
Եա՛ր, եա՛ր,

Ընկել եմ սար սար,
Ինչպէս խելագար։

Բուռնուզ պատէն կախեցին,
Եա՛ր, եա՛ր,
Մուրհակն ընկաւ մեր վըզին։
Եա՛ր, եա՛ր,

Ընկել եմ սար սար,
Ինչպէս խելագար։

Ջիւնն եկաւ, գետինն առաւ,
Կեսրայրըս պարտքով մեռաւ.
Ես պզտիկ, էարըս պզտիկ,
Հոգսը, միտքը մեզ տարաւ։

Սիրտըս լըցուել ա կրակ,
Ինձ ազատէ՛ք, թէ կարաք,
Թէ չէ՝ էգուց էս ցաւից
Ես կը մեռնեմ անդանակ։

Կ. Վ.

ՊԱՐԵՐԳ (*)

Պեգզադո՛ւ աղջիկ, դըռնէն դո՛ւրս արի,
Քո բոյը տեսնեմ,
— Կորի՛ր գընա, հարամզադա,
Քիւրդի գեադա,
Անտառ չե՞ս մըտել, չինար չե՞ս տեսել։

Պեգզադո՛ւ աղջիկ, դըռնէն դո՛ւրս արի,
Քո երես տեսնեմ,
— Կորի՛ր գընա, հարամզադա,
Քիւրդի գեադա,
Պարտէզ չե՞ս մըտել, խընձոր չե՞ս քաղել։

Պեգզադո՛ւ աղջիկ, դըռնէն դո՛ւրս արի,
Քո աչքեր տեսնեմ,
— Կորի՛ր գընա, հարամզադա,
Քիւրդի գեադա,
Երկինք չե՞ս նայել, աստղեր չե՞ս տեսել։

(*) Ցեռոյ երգել՝ «Հօ՜յ նար ծամեր ունիս»:

Պեգզադո՛ւ աղջիկ, դըռնէն դո՛ւրս արի,
Քո կուրծքը տեսնեմ,
— Կորի՛ր գընա, հարամզադա,
Քիւրդի գեադա,
Սարեր չե՞ս պըտտել, մարմար չե՞ս տեսել։

Կ. Վ.

ՊՍԱԿ ՊՍԱԿ

Պսակ-պսակ տիկնի պսակ,
Փեսան եկաւ լիքը քսակ.
Տիրնանինէ, տիրնանինէ,
Ջուռնի ձէնը գեղով մին է։

Բոյը չինար, մէջքին քամար,
Աչքերը ծով, ունքը կամար.
Տիրնանինէ, տիրնանինէ,
Էս մեր փեսան՝ շատ անգին է։

Ռ. ՄԵԼԻՔԵԱՆ

ՊՕՅԸԴ ԲԱՐՁՐ

Պօյըդ բարձըր, սալվի չինար,
Աչքըդ նախշուն, ունքըդ կամար,
Դուն ստեղծուել ես ինձ համար.
Անգին ծաղիկ ես նոր բուսած։
Գոյնըդ նման է մարմարի,
Հագիդ շորերն էլ յարմարի,
Դուն ես վարդը այս աշխարհի,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած։
Քեզ չըտեսնելն ինձ մեծ մահ է,
Հոգիս հանեմ քեզ տամ պահէ՛.
Ինձնում եղած ինձ ի՞նչ շահ է,
Անգին ծաղիկ իմ նոր բուսած։

ՋԱՆ ԱԶՐԲԱՅՋԱՆ

Ջա՛ն,
Ազրբայջան,
Է՜յ ջան,
Իգիթ ես,
Հիմի ջահել.
Վառել ես
Բիւրամոմ ջահեր,
Վառել ես
Շող, չէմս, արև,
Ջա՛ն Ազրբայջան,
Է՜յ ջա՛ն,
Սաբահ խէյր, սալամ,
Բարև, ջան, ջան.

Ա. ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ

Ջա՛ն,
Ազրբայջան,
Է՜յ ջան,
Ջահակիր,
Ջահել, ջիւան.
Կանգնել ես
Արևի դիւան,
Կրծքաբաց,
Ալ կապած, պարթև։
Ջա՛ն Ազրբայջան,
Է՜յ ջա՛ն,
Սաբահ խէյր, սալամ,
Բարև, ջան, ջան.

Ա. ՎՇՏՈՒՆԻ

ՋԱՆ, Ա՛ՂԲԷՐ

Ջա՛ն, ա՛ղբէր, ջա՛ն ա՛ղբէր,
Ջա՛ն, եա՛րօ, ջա՛ն,
Ջա՛ն, եա՛րօ, ջա՛ն, եա՛րօ.
Ջա՛ն, ա՛ղբէր, ջան։
Սարերը ման իմ եկել,
Դաշտերը բան իմ եկել.
Ասին՝ ախբէրդ եկել ա,
Դըժի նըման իմ եկել.
Ջա՛ն, ա՛ղբէր, ջա՛ն աղբէր և լն.

Գարունը նոր ա բացուել,
Վարդը կոկոն ա դարձել.
Աղաչանքըս չիր լըսում,
Իմ սիրտըս մոմ ա դարձել.
Ջա՛ն, ա՛ղբէր, ջա՛ն աղբէր և լն.
Շըլինքըս ծուռ իր թողել,
Օտարի դուռն իր թողել.
Ինձ էնպէս իր մոռացել,
Սարի էն կուռն իր թողել.
Ջա՛ն, ա՛ղբէր, ջա՛ն ա՛ղբէր և լն։

Կ. Վ.

ՋԱՆ ՄԱՐԱԼ ՋԱՆ

Ջան, մարալ ջա՛ն,
Էս սարէն մէկ քոչ անցաւ,
Ջան, շիրին ջա՛ն,
Փոշը տըւաւ մէջն անցաւ.
Ջան, մարալ ջա՛ն,
Սիրտըս մէկ կըրակ ընկաւ,
Ջան, շիրին ջա՛ն։
Ո՛չ վառաւ ու ո՛չ հանգաւ։

Կարօտ բերդը պըլեր ա,
Եարըս մէջը քընել ա,
Ձէն տըւի ձէնըս չառաւ,
Մագեար ինձմէն ջօրել ա.
Սև փոշին հիտս եմ քըցել,
Կըրակը սիրտս եմ լըցել.
Էսօր հինգ օր է չեմ տեսել,
Իմ եարը միտս եմ քըցել.

Արեւն առաւ գերանին,
Ես մեռնեմ աւետրանին.
Ջուխտ աղունիկ դուրս ելան,
Կանանչ խոտը բերաննին։

Կ. Վ.

ՋԱՆ ՋԱՆ ՍԱՐԵՐ

Ջան ջան սարեր, մարմար սարեր,
Թիկն եմ տըւել ձեր լանջին.
Շուրջըս լըցւած ոչխար ու այծ,
Խաղ եմ կանչում ձեր լանջին։

Բար ու քարափ, աշխարհն անափ՝
Թնդում են իմ ղիլ կանչից.
Կայծակնաղարկ ժայռերը մերկ,
Զրնգըրնգում են իմ ձէնից։

Հազար գոյնի ծաղիկների,
Բոյրով արբած ամէն օր.
Շիւխ անում ու չեմ թախծում,
Խաղ եմ կանչում ամէն օր։

Ա. ՄԱՅԻԼԵԱՆ Վ. ԱՂԱՍԵԱՆ

ՋՈՒՐ ԿՈՒԳԱՅ (*)

Ջուր կուգայ վերին սարէն,
Սարն ոլորելէն.
Կը թափի մարմար քարէն՝
Կաթ-կաթ ծորոլէն,

Կ. Վ.

(*) Նախ՝ «Եար ջան արի» և «էս օր ուրբաթ է»:

ՊԻԼԻԲԻ

Ջուրն առայ, ելայ դարը,
Ես տեսայ Փիղան եարը.
Ֆիղան եարը ինձ տըւէք,
Չը քաշեմ ահ ու դարը՝

Պիլիբի. պիլիբի, պիլիբի,
Խնձոր կ'ուզէ եարըս,
Պիլիբի, պիլիբի, ատցի, ուտցի,
Խնձոր կ'ուզէ եարըս,
Շախկուռ. շուխկուռ ճեամարըս,
Բոյով, բոսով, քամարըս:
Շախկուռ, շուխկուռ ճեամարըս,
Բոյով բոսով իմ եարըս:

Ջաղացի դուռը չիման,
Ախբօրը չըկայ իման.
Բաշին քըրոջը տարին,
Մէկ բերան չասաւ համան։

Պիլիբի. պիլիբի, պիլիբի,
Խնձոր կ'ուզէ եարըս, և լն։

Կեանքիդ, արեւիդ մատաղ,
Կանաչ տերեւիդ մատաղ.
Նամակով յիշել էիր,
Ղըրկած բարեւիդ մատաղ՝

Պիլիբի, պիլիբի, պիլիբի,
Խնձոր կ'ուզէ եարըս, և լն։

ՍՊ. ՄԵԼԻՔԵԱՆ

ԱԼԱՋԱ ՊԱՐ

(ՎԱՆԱՅ, ՄՈՒՇԻ ԵՒ ՊՈՒԼԱՆԸԽԻ)

Սաման կ'ելնէր բարակ մուխ. Գրլէջան.
Եարիկ մ'ունէինք Պուլանուխ. Մրայէ:
Զարկեց մախճան, թալեց պուխ. Գրլէջան,
Երես կարմիր, աչքեր թուխ. Մրայէ:
Տրլէմ, տրլէմ սրնջարի,
Ըմրա տրլէմ սրնջարի:

Նախըր գընէն վար կ'էնէնք. Գրլէջան,
Քօռ անծեղուն քար կ'էնէնք. Մրայէ:
Իմ հէր քե աղջիկ չիտայ, Գրլէջան,
Ջահիլութիւն թարկ անենք. Մրայէ:
Տրլէմ, տրլէմ սրնջարի,
Ըմրա տրլէմ սրնջարի:

Շաղ թափեր գետին հալեր. Գրլէջան,
Բոբիկ հետիկն է կոխեր. Մրայէ.
Առայ զհետիկն ու գացի, Գրլէջան.
Եարոջ դուռ հանդըրոցուցի, Մրայէ:
Տրլէմ, տրլէմ սրնջարի,
Ըմրա տրլէմ սրնջարի:

Եարիկս ի բաղչէն էր քուն, Գրլէջան,
Բուրսայի բարձն էր գըլխուն. Մրայէ.
Գացի, գացի հեռըցայ, Գրլէջան,
Բանձըր գեղին մօտեցայ՝ Մրայէ:
Տրլէմ, տրլէմ սրնջարի,
Ըմրա տրլէմ սրնջարի:

Գացի թ'առնենք թազա հաց, Գրլէջան,
Անտէր թուլան գլխ էխած. Մրայէ.
Փախայ, էլայ վըր քարին, Գրլէջան.
Ցաւար արի իմ եարին: Մրայէ:
Տրլէմ, տրլէմ սրնջարի,
Ըմրա տրլէմ սրնջարի:

Եարոջ գըռնով ընցայ ես. Գրլէջան,
Անձրեւ եկաւ, թացւայ ես. Մրայէ.
Արեւ զարկաւ, թըռփայ ես, Գրլէջան.
Քանց կարմիր վարդ՝ բացւայ ես: Մրայէ:
Տրլէմ, տրլէմ սրնջարի,
Ըմրա տրլէմ սրնջարի:

ՍԱՐԵՐԸ ՀՈՎԵԼ Ա

Սարերը հովել ա, ծիրան ջան,
Հօ՛, հոռովել հօ՛.

Բաներուս մնացել ա, ծիրան ջան,
Հօ՛, հոռովել հօ՛.

Օրերը գնացել ա, ծիրան ջան,
Հօ՛, հոռովել հօ՛,

Էլ գնալով, անելով, ծիրան ջան,
Հօ՛, հոռովել հօ՛.

ԳՐ. ՍԻՒՆԻ

ՍԱՐԵՐԸ ՄԱՆ ԵՄ ԵԿԵԼ

Սարերը ման եմ եկել,
Եար նայ, նանի ջան,
Սիրած եարիս ծաղիկ քաղել,
Եար նայ, նանի ջան...
Ծաղիկ, վարդ իրար հիւսել
Եար նայ, նանի ջան.
Դարդլու բալիս մի փունջ կապել,
Եար նայ, նանի ջան...
Բլբուլը կանգ է առել,
Եար նայ, նանի ջան,
Ալ վարդենուն աչք է առել.
Եար նայ, նանի ջան...
Արեւն է սիրտը կապել,
Եար նայ, նանի ջան,
Շաղ ու ջավհար արցունք թափել,
Եար նայ, նանի ջան...

ԳՐ. ՍԻԻՆԻ

ՍԱՐԵՐԻ ՀՈՎԻՆ ՄԵՌՆԵՄ

Սարերի հովին մեռնեմ,
Իմ եարի բոյին մեռնեմ.
Էսօր օխտն օր չեմ տեսել,
Տեսնողի աչքին մեռնեմ,

Ախ էնիմ արուն կուգայ,
Սեւ սըրտիս զարուն կուգայ,
Ի՞նչ էնիմ ես էն եարը,
Պըտըտուի տարուն կուգայ:

Եա՛ր, եա՛ր, եար՛, եար, նա նայ,
Ա՛խ, նանի ջան, նանի,
Վա՛յ նանի, նանի ջա՛ն:

Լուսնակը կեռ ու կամար,
Քոյր մեռնի եղբօր համար,
Օխտըն օր պաս եմ պահել՝
Իմ եարի ճամբի համար:
Ա՛խ էնիմ արուն կուգայ *ելն:*

ԳՐ. ՍԻԻՆԻ

ՍԱՐԵՐԻ ՎՐՈՎ ԳՆԱՑ (*)

Սարերի վըրով գընաց,
Եա՛ր, եա՛ր,
Արօտով, արօտով,
Եարիս կարօտով.

Իմ եարը խըռով գընաց.
Եա՛ր, եա՛ր,
Մընացիր, մընացիր,
Ձինուոր գընացիր:

Ո՛չ լոր եղաւ, ո՛չ կաքաւ,
Եա՛ր, եա՛ր,
Արօտով, արօտով,
Եարիս կարօտով.

Ձեռնէս թըռնելով գընաց,
Եա՛ր, եա՛ր,
Մընացիր, մընացիր,
Ձինուոր գընացիր:

(*) *Յետոյ երգել՝* «էս գիշեր լուսը տեսայ»:

Ծաղիկ էր հոտով-մոտով,
Եկաւ, անցաւ իմ մօտով,
Աչքըս տեսաւ՝ սիրեցի,
Ու մընացի կարօտով:

Շէկ եարիս դըրի ճամբան,
Ափսո՜ս, չասի իրան բան,
Ճամբին օգնական չունի,—
Սուրբ Կարապետ պահապան:

Կ. Վ.

ՍԱՐԷՆ ԵԼԱՒ (*)

Սարէն ելաւ երկու մուխ,
Բոյիդ մեռնեմ,
Մինը հանգ ա, մինը ծուխ,
Սոյիդ մեռնեմ.

Երկու սիրուն երեւաց,
Բոյիդ մեռնեմ,
Մինը չէկ ա, մինը թուխ:
Սոյիդ մեռնեմ:

Կապոյտ քուռակն առել ա,
Ոսկի սարքը ճարել ա.
Դէմի կանաչ սարի լանջ,
Արեւի պէս վառել ա:

Իմ եարն ա շատ խորոտիկ,
Մէջքին ա ոսկի գօտիկ.
Աստուած սիրէք աղըրտիք,
Ինձ տարէք եարիս մօտիկ:

Կ. Վ.

(*) Նախ՝ «Կուժն առայ» «Գնա գնա ճետիդ եմ» (Գ.):

ՍԱՐԷՆ ԵԼԱՒ ՋՈՒԽՏ ՄԸ

Սարէն ելաւ ջուխտ մը ղոչ,
Եար ճայ, ճայ, ճայ. ճայ. ճայ,
Մինը փընչած մինը ո՛չ,
Եար ճայ, ճայ, ճայ
Նայ, ճայ. ճայ, ճայ.
Աստուած քո ղատին մեռնեմ
Եար ճայ, ճայ. ճայ. ճայ, ճայ,
Մինին կուտաս, մինին ո՛չ,
Եար ճայ. ճայ, ճայ
Նայ, ճայ, ճայ, ճայ:

Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

ՍԱՐԷՆ ԿՈՒԳԱՅ ՁԻԱՒՈՐ

Սարէն կուգայ ձիաւոր,
Վայ լէ, լէ. լէ, լէ,
Մեր տունը չարտախաւոր,

Ինջիլիկ, փընջըլիկ, կարճըլիկ եար եար.
Ինջիլիկ, փընջըլիկ, կարճըլիկ եար եար.

Հրէս եկաւ իմ աղբէր,
Երեք օրուան թագաւոր:

Ծառերի հովին ղուրբան,
Իմ եարի պօյին ղուրբան,
Երկու օր ա չեմ տեսել,
Տեսնողին աչքին ղուրբան:

Անձրև եկաւ շաղալէն,
Ուռ ու տերև դողալէն,
Հրէս եկաւ իմ աղբէր,
Ալ ձին տակին խաղալէն.

Ծամբա՛յ տուէք առաջ գամ,
Սիրած եարիս բարև տամ,
Ուխտ եմ արել, որ առնեմ,
Թող տեսնի աշխարհ ալամ.

ԳՐ. ՍԻՒՆԻ

ԹԵԻՊԱՐ (*)

Սարը սարի նըման չէ,
Հօ՛յ. օրօ՛ր, Աղի՛նօ,
Լա՛ւն ասէք, լա՛ւն ասէք՝ իմ եարի.
Իմ սիրելու վասը մ'ասէք՝ իմ եարի:

Քարը քարի նըման չէ.
Հօ՛յ, օրօ՛ր, Աղի՛նօ.
Լա՛ւն ասէք, լա՛ւն ասէք՝ իմ եարի,
Իմ սիրելու վասը մ'ասէք՝ իմ եարի:

Հարսն ու աղջիկ շատ տեսայ,
Հօ՛յ. օրօ՛ր, Աղի՛նօ,
Լա՛ւն ասէք. լա՛ւն ասէք՝ իմ եարի,
Իմ սիրելու վասը մ'ասէք՝ իմ եարի:

Մէկն էն եարի նըման չէ,
Հօ՛յ, օրօ՛ր, Աղի՛նօ,
Լա՛ւն ասէք, լա՛ւն ասէք՝ իմ եարի.
Իմ սիրելու վասը մ'ասէք՝ իմ եարի:

(*) Յետոյ երգել՝ «Սօնա եար»:

Ջառ-մանուշակ բաղի մէջ.
Թագնուել է թաղի մէջ,
Լուսաբացին ծաղկում է,
Հովի, շողի, շաղի մէջ.

Երանի քեզ, ա՛լ աղջիկ,
Ոսկիդ ծալէ-ծալ, աղջիկ.
Դու մեր տանը հարսնացու, —
Ես քեզ համար տալ, աղջիկ.

Կ. Վ.

ՍԱՐԻ ԼԱՆՋԻՆ

Սարի լանջին, մէգի միջին,
Խոխոջում է և տըրտընջում,
Ջուրը բարակ, ջուրը տխուր.
Վաշ-վիշ, վաշ-վիշ, վաշ-վիշ, վաշ-վիշ.

– Ո՞ւր կորան ո՞ւր, տերևն ու խոտ,
Մասրն ուրախ, վարդն ու շուշան.
Շուրջըս դատարկ, շուրջըս տըխուր.
Վաշ-վիշ, վաշ-վիշ, վաշ-վիշ, վաշ-վիշ.

Ո՞ւր կորան թռչներ թևթևկոտ,
Կաքաւն արի, ճագարն վախկոտ.
Շուրջըս դատարկ, շուրջըս տխուր.
Վաշ-վիշ, վաշ-վիշ, վաշ-վիշ, վաշ-վիշ.

Դ. ՂԱԶԱՐԵԱՆ — Հ. ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ

ԴԷՊԻ ՏԱՃԱՐՆ ՀՐԱՇՔԻՆ

Սարին կատարն եմ՝ արեւէն առաջ,
Վարսերով ծածան,
Մինչ երեք կոյսեր այտերով կակաչ,
Եկեր ու կ'երթան
Իրենց հոգւոյն մէջ ոսկի՛ լեցուցած...

Մին ճակտիս վրան կ'հոսի լուսարագ
Համբոյր մ'ոսկեհամ,
Ու կ'անհետի շո՛ւտ. երկրորդն սպիտակ
Ծիծերով փարթամ,
Ծա՛փ տալով հոգւոյս՝ կ'անցնի՛ զերդ փայլակ...

Միւսն ալ կ'արտասուէ՛ մինակ ու տխուր՝
Ցոյց տալով ժայռն ուր
Աղբիւրն է պահուած՝ թուփերով դալար...
Կ'երազե՛մ ես լուռ,
Ու կ'երթամ մագլել ժայռն օձագալար...։

Յ. Ճ. ՍԻՐՈՒՆԻ

ՍԱՐ ՍԱՐ

Սա՛ր, սա՛ր,
Ես սարերի ծաղիկն եմ,
Ջա՛ն, ջա՛ն,
Ես Լեւոնի քուրիկն եմ։
Ժամի դըռնէն դուրս ելայ,
Արեւի պէս լուս եղայ,
Էն սարին սա՛ր չեմ ասի,
Փիս գեադին եա՛ր չեմ ասի.
Ինձ չէր առնում՝ թող չառնէր,
Խօսք ու զըրից էլ ի՞նչ էր,

Հաց եմ թըխել փըրփըրի,
Վատ խօսողը քըրքըրի։
Ես սարերի ծաղիկն եմ,
Ես Լեւոնի քուրիկն եմ։

Կ. Վ.

ՍԱՓՈՐՆ ՈՒՍԻՍ

Սափորն ուսիս դըրի,
Ջա՛ն, եարօ՛ ջան.
Երթամ աղբիւրը ջըրի.
Ջա՛ն, եարօ՛ ջան.
Ինչ փուշ գայ իմ առջեւը,
Ջա՛ն, եարօ՛ ջան.
Չար աչքի սըրտով խըրի։
Ջա՛ն, եարօ՛, ջան,
Ջա՛ն,եարօ՛, ջան.
Ես սիրեցի, ես առայ:

Արեւը մէրը մըտաւ,
Սիրունը տէրը գտաւ.
Օտարի վատ խօսքերը
Իրանց սըրտի մէջ փըտաւ։

Աշխարհի մէջ տէր ունիմ,
Եարիս վրայ սէր ունիմ.
Ճատը բաց՝ խօսքի տէր,
Ինծի պահող հէր ունիմ։

Կ. Վ.

ՍԵՒ ԱՉՔԵՐ

Սեւ աչերէն շատ վախեցիր,
Էն մութ, անծիր գիշեր է։
Մութը ահ է, չարքեր շատ կան,
Սեւ աչերը մի՛ սիրեր։

Ա՜խ, իմ սիրտը արիւն ծով է,
Էն սեւ աչեր զարկեցին,
Էն օրուանից դադար չունեմ,
Սեւ աչերը մի՛ սիրեր...։

ԱՇՈՒՆ ՕՐԵՐ

Սեւուկ ամպեր վրայ եկան
Օրան, օրան,
Սարի վերայ շար եկան։
Ծագեց առաւօտ,
Պաղեց, սառաւ օդ։

Գոռաց երկինք, բուք առաւ.
Հեւաց, հեւաց,
Ծերուկ երկիր սուգ առաւ։
Ճաքեց հեռուն ամպ,
Երկիր դողաց բամբ։

Բողբոջ արեւ շող կապեց.
Դողաց, սողաց,
Արիւն ամպից քօղ կապեց։
Վառեց լերան լանջ,
Լերան ցաւատանջ։

Տեղաց անձրեւ մաղ տալով,
Մարմանդ, մարմանդ
Ցողնած տերեւ շաղ տալով։
Երկինք քուն դրաւ,
Եւ թռչուն թռաւ։

Յուզուած առուն փախ տըւաւ
Սողուն, սողուն,
Ջրում մշուշ կախ տըւաւ։
Քամին եկաւ վեր,
Արեւ տարուբեր։

Մոխիր ամպեր ծիր եկան
Դալուկ, դալուկ,
Սարի վերայ ցիր եկան։
Հալեց աշուն օր
Կեանքիս սեւաւոր։

Կ. Վ.

ՍԵՒՈՐԱԿ ԱՉԵՐ

Սեւորակ աչե՛ր, աչե՛ր սեւորակ.
Ձեր մէջ փայլում է մի վառ վառ կայծակ.
Դուք իմ սրտիս մէջ կրակներ էք թափում,
Դուք էք իմ տէրը, ես ձեզ եմ պաշտում։

Աչեր սեւորակ, սեւորակ աչեր,
Ձեր մէջ տեսնում եմ մի երկնային սէր.
Դըրանց սիրելու եմ մինչեւ դագաղ,
Դոցա պէտք է ես լինիմ զոհ, մատաղ։

Դուք սիրուն աչեր, դուք քնքուշ աչեր,
Սեւ էք դարձըրել իմ պայծառ օրեր.
Դուք մաշում էք ինձ անողորմագին,
Եւ չէք խնայում հասակիս ծաղկին։

Ս. ՇԱՀԱԶԻԶ

ՍԵՒՈՐԱԿ ԱՉԵՐ

Սեւորակ աչեր, սիրունիկ աչեր,
Հրաշալի աչեր, աչեր մութ գիշեր,
Երբոր ձեզ տեսայ, հանգըստից զրկուայ,
Ձեզանով միայն աշխարհ մոռացայ։

Երբոր ձեզ տեսայ, հանգըստից զրկուայ,
Ձեզանով միայն աշխարհ մոռացայ.
Այդ աչերը սեւ, ինչպէս կրակ կ՚այրեն,
Դէպ՚ մի այլ աշխարհ նրանք ինձ կը կանչեն։

Ուր տիրում է սէր, հոն փայլուն է կեանք,
Ուր չը կայ տանջանք, հոն կայ սէր, յարգանք.
Ուր տիրում է սէր՝ հոն փայլուն է կեանք
Ուր չը կան տանջանք, հոն կայ սէր յարգանք։

Չը տեսնէի ձեզ, չէի տանջուէր ես,
Կ՚ապրէի անվերջ ազատ ու անվիշտ.
Իսպառ ինձ մաշեցիք՝ աչեր սեւորակ,
Եւ երջանկութիւնս անդարձ դուք տարաք։

ՍԵՒՈՐԱԿ ՏՂԱՅ

Սեւորակ տղայ, դու բանուոր տղայ,
Ես քեզ սիրեցի անուշ գարունքին.
Սեւորակ տղայ, դու բանուոր տղայ,
Երնէկ քո եարին, քո էդ դազկեահին։

Դու բանուոր տղայ, ես գեղջուկ աղջիկ,
Դազկեան եմ դառել՝ դազկեանիդ մօտիկ:

Դու բանուոր տղայ, ես գեղջուկ աղջիկ,
Նոր եմ ես եկել գիւղից գործարան,

Որ քեզ հետ բերենք անընման գալիք
Նոր կեանքի գալիք, հուր ու մուր հըրան։

Դու բանուոր տղայ. ես գեղջուկ ալն։

Աշխատում ենք ժիր, եռանդով անվերջ,
Քեզ գուրգուրալու ժամանակ քիչ կայ.
Սեւորակ տղայ, ե՛կ քեզ հետ կերտենք
Հայրենի երկիր. չքեղ ապագայ։

Դու բանուոր տղայ, ես գեղջուկ ալն։

Դ. ՂԱԶԱՐԵԱՆ

ՍԵՒ ԱՉԵՐԻԴ

Սեւ սեւ աչերիդ ղուրբան,
Երկէն մազերիդ ղուրբան,
Կայնի մէկ, եա՛ր, սէյր անեմ,
Անուշ պաչերիդ ղուրբան։

Կոկուել ես, կ՚երթաս սէյրան,
Համ թառլան ես, համ ջէյրան,
Կայնի մէկ, եա՛ր, սէյր անեմ,
Մընացի ջանիդ հէյրան։

Կայնի մէկ, եա՛ր, սէյր անեմ.
Բաղը լիքն է վարդերով,
Սիրտըս լիքն է դարդերով,
Կայնի մէկ, եա՛ր, սէյր անեմ։

ՍԷՐ ՄԸ ԳԱՂՏՆԻ

Սէր մը գաղտնի՝ դանդաղօրէն հասունցած,
Իրար գրկող նայուածքներով խուսափուկ,
Եւ շեշտերո՜վ մըրմունջներու մէջտեղ ցած,
Որ ակամայ բացուող դռներ են ծածուկ...։

Սիրտէ ի սիրտ գացող ճամբան կը յորդի.
Մերթ արեւով մե՛րթ ամպերով կը մթնէ.
Ի՞նչ փոյթ սակայն՝ եթէ վայրկեա՛նը արդի,
Մեզ նուաղիլ, մեռնի՛լ կուտայ յուզումէ...։

Եւ տենչանքնե՛ր, շիւղերու պէս կը ծըլին,
Կանա՛չ այնպէս, այնպէս անձայն. աննըշմար,
Սիրտէ ի սիրտ գացող ճամբուն մէջ լըռին...։

Որ մ'ալ այնտեղ երկու բերան գողահար
Միակ բառով մը ամէն թումբ կը քանդեն
Եւ կը կազմեն... օ՜հ նոյն համբոյրը արդէն...։

Հ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Վ. ԹԷՔԷԵԱՆ

ԴՈՒ ՄԻ ՀԱՏ ԵՍ
(ՍՕՍ ԵՒ ՎԱՐԴԻԹԵՐ)

Սիրելի ջան, հեռացար,
Զլինի՞ թէ Սօսին մոռացար,
Սրտումս վառ ա քո սէրը,
Էրում ա ջիգեարիս ծէրը։

Դու մի հատ ես աննըման,
Աշտարակում գովական,
Փորորում ես տեսնողին.
Կրակում նրա հոգին:

Քո սէրից ինձ կ'սպաննեմ,
Աղջի՛կ, քո ցաւը տանեմ,
Արի՛, դու ինձ ականջ դիր,
Նանիդ ես բաղի կ'անեմ։

Դու մի հատ ես, աննըման,
Աշտարակում գովական,
Փորորում ես տեսնողին,
Կրակում նրա հոգին:

Դ. ՂԱԶԱՐԵԱՆ ՊԵՐՃ ՊՌՕՇԵԱՆՑ

ԶՈՒԼՈՒՄ ԱՇԽԱՐՀ

Սիրեցի եարըս տարան.
Եարս տուին ու տարան.
Էս ի՞նչ զուլում աշխարհ է,—
Պոկեցին սիրտս ու տարան։

Ցաւըս խորն է, ճար չը կայ,
Ճար կայ, ճար անող չը կայ.
Էս ի՞նչ զուլում աշխարհ է,—
Սրտակից ընկեր չը կայ։

Սարերի վըրով գնաց,
Իմ եարը խըռով գնաց.
Ո՛չ լոր էր նա, ո՛չ կաքաւ,
Ձեռիցըս թռաւ գնաց։

Լաւ օրերս անցան գնացին,
Սեւ դարդերըս մնացին.
Էս ի՞նչ զուլում աշխարհ է,—
Խոր ցաւերըս մնացին։

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ՍԻՐՈՒՀԻՍ

Սիրուհի՛ս, քեզ համար
Կեանքըս կէս եղաւ.
Քո անունն էր միայն՝
Որ ինձ կեանք տըւաւ։
Աղջի՛կ դու սիրուն,
Շըքեղ անունով,
Սեւորակ աչքով,
Երկնածիր ունքով։
Այրուի՛ քո սիրտը.
Այրեցիր հրով,
Վառուի՛ քո սիրտը,
Վառեցիր սիրով:
Մանուշակ, նունուֆար,
Վարդ, մեխակ, շուշան,
Ոչինչ են ինձ համար
Իմ անգի՛ն հոգեակ։
Մօրիցըդ գաղտուկ՝
Արի՛ մեր պարտէզ,
Ման գանք միասին,
Սիրո՛ւն, դու և ես։
Այրուի՛ քո սիրտը. *ևլն.*
Բայց ափսո՜ս, չեմ կարող,
Որ գամ քեզ տեսնեմ,
Իմ վիրաւոր սըրտին
Կարօտը առնեմ։
Դէ՛, բաւական է,
Նայի՛ր երկընքին,
Կապոյտ երկընքին,
Քո խըղճմըտանքին։
Այրուի՛ քո սիրտը *ևլն։*

ՍԻՐՈՒՆ ԱՂՋԻԿ
(ԱՆՈՒՇ)

Սիրուն աղջի՛կ, ի՛նչ ես լալիս
Էգպէս մենակ ու մոլոր,
Ի՞նչ ես լալիս ու ման գալիս
Էս ձորերում ամէն օր։

Թէ լալիս ես՝ վարդ ես ուզում,
Մայիս կը գայ, մի քիչ կաց,
Թէ լալիս ես՝ եարդ ես ուզում,
Ա՜խ, նա գընա՜ց, նա գընա՜ց...

Արտասուելով, լալով էգպէս
Ետ չես դարձնի էլ գերիդ,
Ինչո՞ւ ի զուր հանգցընում ես
Ջահել կրակն աչքերիդ։

Նըրա անբախտ հողի վըրայ
Պաղ ջուր ածա ալբիւրի,
Դու էլ գընա նոր սէր արա,
Էսպէս է կարգն աշխարհի։

***

— Շնորհակալ եմ, անցւոր ախպէր,
Աստուած պահի քու եարին.
Ճամբիդ վերջում կանգնած է դեռ
Անուշ ծիծաղն աչքերին...

Ուրախ սըրտով դուք ձեր սէրը
Վայելեցէք անթառամ.
Ինձ արցունք է տըւել Տէրը,
Ես պիտի լամ, պիտի լամ...։

Ա. ՑԻԳՐԱՆԵԱՆ   Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՍԻՐՈՒՆ ԱՂՋԻԿ

Սիրո՛ւն աղջիկ, ո՞ւր կ'երթաս,
Դէյլրէդ հագել ես կերպաս,
Զը լինի՞ որ մէկ անգամ,
Լայեղ անես, մօտըս գաս։

Ամէն գիշեր քեզ համար
Զունիմ հանգիստ, քուն, դադար,
Ինչո՞ւ մէկ դէս չես նայում,
Սրտէս չունի՞ս հէչ խաբար։

Մեր աշխարհը սարոտ է,
Դաշտեր, ձորեր քարոտ է,
Անո՛ւշ աղջիկ. չէ՛կ աղջիկ,
Սիրտըս քեզի կարօտ է։

Թեւեր չունիմ, որ թռնեմ,
Հասնիմ փէշիդ՝ պինդ բռնեմ,
Թէ որ ինձմէն հեռանաս,
Ընկնեմ քարէն ու մեռնեմ։

Շէկլիկ աղջիկ սիրաւոր,
Ոսկէ մազեր բիւրաւոր,
Ես քեզ այդքան սիրեցի,
Դու ինձ թողիր վիրաւոր։

Արեւիդ մատաղ, սիրուն ջան,
Բարեւիդ մատաղ, սիրուն ջան.
Հագել ես ալուան թանկագին,
Գեղեցիկ մարալ ես, անգի՛ն,
Այրում ես, խորովում ամէնքին։

ԱՇՈՒՂ ՇԵՐԱՄ

ՍԱՐԵՐԻ ԱՂՋԻԿ

Սիրուն աղջիկ, սարերով,
Էդ կաքաւի քայլերով,
Երկար ճամբան ո՞ւր կ'երթաս,
Օր ցերեկուան արեւով։

Նար ա՛յ, նար ա՛յ, նար ա՛յ ջան,
Նար ա՛յ, մարալ աղջիկ ջան.
Նար ա՛յ, նար ա՛յ, նար ա՛յ ջան,
Նար ա՛յ, սիրուն, ծաղիկ ջան։

Ես անարեւ ծաղիկ չե՛մ,
Սարի լանջին եմ բուսած,
Գընա՛, ես քո եարը չեմ,
Նոր մուրազի եմ հասած։

Նար ա՛յ, նար ա՛յ, նար ա՛յ ջան,
Նար ա՛յ, սիրուն տղիկ ջան.
Նար ա՛յ, նար ա՛յ, նար ա՛յ ջան,
Նար ա՛յ, Արեւ-Աղբէր ջան։

Զ. ՊԵՐՊԵՐԵԱՆ — Յ. ՔՀ. ՍԱՐՀԱՏԵԱՆ

ԻՄ ԵԱՐԸ

Սիրուն աստղեր հուր աչիկներ,
Ձեր շողն ու փայլն են սիրուն,
Սակայն եարիս, սեւ, սաթ աչեր՝
Ձեզանից էլ են սիրուն։

Հաւատացէք, աչերն այդ խոր,
Թէ լինէին երկընքում,
Մարդիկ բոլոր պիտ՝ ուզէին որ
Գիշեր լինէր միշտ կեանքում։

Լողանում է իմ եարն այսօր
Պաղ ու վճիտ ջրերում.
Իմացել են աստղեր բոլոր
Ու թագ կացեր ամպերում։

Ծերուկ լեռներ, հըսկայ ժայռեր՝
Ըստուեր ձըգէք ջրերին,
Որ արեւի չար շողիկներ
Չը համբուրեն իմ եարին։

Գ. ԱԼԵՄՇԱՀ   Ա. ՉԱՐԸԲ

ՍԻՐՈՒՆ ԹՌՉՆԻԿ
(ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ)

Սիրուն թռչնիկ, թռի՛ր գնա՛,
Սիրած եարիս բարեւ արա՛.
Ասա՛ որ նա տըխուր նըստած,
Գիշեր, ցերեկ քեզ է սպասում։

Արշին մալչի, ի՞նչ արեցիր,
Սրտումս խորունկ վէրք թողեցիր,
Ա՜խ, սիրտըս դու կըրակ լըցրիր,
Սիրտըս ու հոգիս մաշեցիր։

ՄԱՆԻՇԱԿԸ

Սիրուն մանիշակ, արդեօք ինչո՞ւ դուն
Այդպէս հովտին մէջ կը ծաղկիս հեռուն,
Տերեւներուն մէջ ինչո՞ւ պահուըտիս
Ու հպարտ ծաղկանց կարգէն կը փախչիս։

Բայց, չըքնա՛ղ ծաղիկ, երբ կը քաղեն քեզ
Աւելի անուշ բուրմունք կ'արձակես,
Քան շատ ծաղիկներ որոնք պըճնուին
Ճոխ արդուզարդով փայլուն թանկագին։

ՍԻՐՈՒՆ ՄԱՆԻՇԱԿ

Սիրուն մանիշակ
Ինչո՞ւ ես տխրել,
Կապոյտ աչերըդ
Ինչո՞ւ ես փակել.

Քեզ ո՞վ նեղացրեց,
Ո՞վ քեզ բան ասեց.
Քո անուշ հոտով
Ո՞վ չըզմայլեց։

— Սիրուն մանուկներ,
Դուք ինձ սիրեցէք.
Իմ ծաղիկներից
Փնջեր կապեցէք.

Բայց չար մարդկանից
Անգութ ձեռներից,
Չը պաշտպանեցիք
Ինձ չազատեցիք։

ՈՒՌԵՆԻ

Սիրուն ուռենի,
Կանաչ ուռենի,
Ճիւղերըդ կախ-կախ,
Ինչո՞ւ չես ուրախ.
Սի՞րտդ է ծարաւել,
Արե՞ւն է վառել.
Դեռ այդքան ջահել՝
Գըլխիկըդ կախել,
Վըշտոտ ես դառել.
Արցունք ես թափում,
Սիրուն ուռենի,
Կանաչ ուռենի։

Ռ. ՄԵԼԻՔԵԱՆ Ա. ԽՆԿՈՅԵԱՆ

ՍԻՐՈՒՆ ՋԱՆ

Սիրո՛ւն ջան, սիրո՛ւն ջան,
Սիրո՛ւն ջան, սիրտդ մի՛ բանա,
Նըշանած զինուոր եմ,
Ես չե՛մ դիմանայ.
Սիրո՛ւն ջան, սիրո՛ւն ջան:

Ծաղիկ ունիմ ալա ա,
Ալա չի՝ ալ-վալա ա.
Հեռու տեղ մի եար ունեմ՝
Նըռան հատիկ, լալա ա։

Սիրո՛ւն ջան, սիրո՛ւն ջան, եւլն.

Էս գիշեր ես դուս էլայ,
Թաթախ ձընիկ թացել ա,
Կը կաթէր մարմար քարին,
Եարիս աչքն ա՝ լացել ա։
Սիրո՛ւն ջան, սիրո՛ւն ջան, եւլն.

Լուսնակը բակ ա գըցել,
Քեզ ամպի տակ ա գըցել.
Իմ կուրացած բախտն էլ
Ինծի մենակ ա գըցել։
Սիրո՛ւն ջան, սիրո՛ւն ջան, եւլն.

Ամպել ա կամար կամար,
Կապել ես ոսկէ քամար.
Դու ուրիշ միտք մի՛ անի,
Մի ջան ունիմ քեզ համար։
Սիրո՛ւն ջան, սիրո՛ւն ջան, եւլն.

Կ. Վ.

ԱՆՈՒՇ ՍԻՐԱԿԱՆ

Սիրտս դարձել է մի մանուկ լալկան,
Զուր եմ խաբում նրան շաքարով.
Նա լալիս է միշտ, անո՛ւշ սիրական,
Եւ քեզ է ուզում օր ու գիշերով։
Ես նրան ի՞նչ ճար անեմ։

Ինչքան աշխարհում սիրուններ որ կան,
Ցոյց տըւի աչքիս, զուր եմ համոզում,
Քեզանից բացի, անո՛ւշ սիրական,
Նա ուրիշ ոչ ոք, ոչ ոք չէ ուզում։
Ես նրան ի՞նչ ճար անեմ։

Ն. ՔՈՒՉԱԿ

ԱՆՈՐ

Սիրտըս կը թըռի ջաղջի քարին պէս,
Մարմինս կը փշրի ջաղջին ալրին պէս.
Ե՞րբ պիտի լուսնայ գիշեր դարի պէս,
Տեսնէի տըղա՛ն խաչին լուսնին պէս։

Տեսնեմ կ'ըսէի, ձեռքիս վարդը տամ,
Վարդը որ չառնէ, ոսկի խնձոր տամ,
Խնձորն երբ չառնէ, մազըս քաշեմ տամ,
Ան ալ որ չառնէ, հոգիս քաշեմ տամ։

Զ. ՊԵՐՊԵՐԵԱՆ — ԹԼԿԱՏԻՆՑԻ

ԱՆՏՈՒՆԻ

ԵՐԳ ՎԸՌԸՇԻԿՆԵՐՈՒ

(ՌՇՏՈՒՆՑԻՈՑ)

Սիրտըս նըման է էն փըլած տըներ.—
Կոտրեր գերաններ. խախտեր է սըներ,
Բուն պիտի դընեն մէջ վայրի հաւքեր.
Երթամ՝ ձիկ թալեմ էն եղման գետեր,
Ընիմ ձըկներու ձագերացըն կեր։
Ա՛յ, տօ յա՛ն տրճանւէր:

Սեւ ծով մ'եմ տեսել, սիպտակն էր բոլոր.
Ալին կը զարկէր, չէր խառնի յիրար.
Էն ո՞րն է տեսել մէկ ծովն երկթաւոր,—
Անտունի սիրտն է պըղտոր ու մոլոր.
Ա՜խ, եսկի մի՛ ընէք սըրտիկ սեւաւոր։
Ա՛յ, տօ յա՛ն տրճանւէր:

Կ. Վ.

ՕՐՕՐ

Սիրտըս քեզի օրրան մ'ըրի,
Սըրտըդ մանուկ, սիրտըս օրրան,
Ուր հանգչեցար անմեղունակ.
Մինչեւ որ քեզմով կոտրի։

Արդ, դուն մեծցար ու մինչ ես ծեր,
Ծերը մանուկն է ձըմրան,
Սիրտըս մանուկ, սիրտըդ օրրան,
Հին օրերուն գիս տարուբեր։

Ա. ՊԱՐԹԵՒԵԱՆ — Դ. ՃԻԶՄԷՃԵԱՆ

ԹՌՆՈՑԻ ՊԱՐ (*)

Սո՛նա եա՛ր, Սո՛նա եա՛ր.
Սո՛նա սիրուն, Սո՛նա եա՛ր:

ՏՂԱՅ. Վարդավառը գալիս ա,
Սո՛նա եա՛ր, Սո՛նա եա՛ր.
Ծաղիկը ցընծալիս ա.
Սո՛նա սիրուն, Սո՛նա եա՛ր
Ա՛յ գիւլում կանչող աղջիկ,
Սո՛նա եա՛ր, Սո՛նա եա՛ր,
Ձէնըդ ծըլվըլալիս ա։
Սո՛նա սիրուն, Սո՛նա եա՛ր:

ԱՂՋԻԿ. Կանաչ տեղը՝ բաղում եմ,
Պարի միջին խաղում եմ.
Կաքաւի պէս սօրալով,
Տըղաներին դաղում եմ։

(*) Նախ՝ «Սարը սարին նման չէ»:

ՏՂԱՅ. Կարմիր գինին թասումը,
Ես եմ քո հաւասումը,
Ե՞րբ կը տաքնան աղջըկերք,—
Վարդավառի պասումը:

ԱՂՋԻԿ. Հայ, աղի՛ նա, աղի՛ նա,
Կարմիր գինին թասին ա.
Տըղէք ե՞րբ կը կոտրուին,—
Հորթաթողի պասին ա:

ՏՂԱՅ. Սիրո՛ւն աղջիկ, նազ ունիս,
Շահ զադայի սազ ունիս.
Հոգեմ չահ զաղի գըլուխ,
Դու իմ հոգում հազ ունիս: Կ. Վ.

ՍՈՎՈՐԵԼՈՎ ՓՈՐՁԻԵՑԻ
(ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ

— Սովորելով փորձեցի,
Ամէնքից ես ծաղրեցի.
Ցաւ ու տանջանք շատ տարայ,
Բայց վերջապէս քեզ գըտայ:
Այնպէս սիրեցի, ursnվ սիրեցի,
Հոգւով սիրեցի, եար ջա՜ն.
Որ առանց քեզ չեմ ապրի:

— Ոչ ոքի չէի տեսել,
Դարդերըս չէի պատմել.
Սէրն ի՞նչ է չըգիտէի,
Քեզ տեսնելով սիրեցի:
Այնպէս սիրեցի, ursnվ սիրեցի եւլն:

— Ա՜խ, մեր բաղդը մեզ օգնեց,
Ես ինձ թշուառ կարծեցի.
Բայց մեզ կեանքը ողջունեց,
Քեզ տեսնելով սիրեցի:
Այնպէս սիրեցի, ursnվ սիրեցի եւլն:

ՍՈՒՐԲ ԿԱՐԱՊԵՏ

Սուրբ Կարապետ չայիր չիման,
Բոլոր բարձըր մէրմէր դիւան,
Վանքերն հեռուէն կ'երեւան,
Մշու Սուլթան՝ Սուրբ Կարապետ:

Սուրբ Կարապետ գեղին մօտիկ,
Երեք օր վազեցի բոպիկ,
Ինքն կ'անէ մարդու մոտիկ,
Մեծ զօրաւոր՝ Սուրբ Կարապետ:

Սուրբ Կարապետ աղբիւր ու ջուր,
Ոտքըդ կուգայ շատ կաղ ու կոյր,
Դու ամէնուն մուրազը տուր,
Մուրազատուր Սուրբ Կարապետ:

Սուրբ Կարապետ կայնեցուցին,
Լուսեղէն հանդերձ հագուցին,
Քրիստոս գիրկը մկրտեցին,
Մկրտարար Սուրբ Կարապետ:

Սուրբ Կարապետ յելման գետեր,
Մէջն է բուսեր կանաչ խոտեր,
Քենէ կուգայ խնկի հոտեր,
Զանկլի-դիւան Սուրբ Կարապետ:

Սուրբ Կարապետ բարձր բոլոր,
Ճամբէք ունի ոլոր մոլոր,
Որ զուռ կ'երթայ շատ ուխտաւոր,
Ո՛ր ոտաւոր, ո՛ր ձիաւոր:

Մուրազ կուտայ ոտաւորին,
Օսկէ խնձոր ձիաւորին,
Որ զուռ կ'երթայ գառ ու մաքին,
Մատաղ կենին լուս կիրակին:

Սուրբ Կարապետ քեօշա-քեօշա,
Դուռդ կուգայ բէկ ու փաշա,
Ճանփէք ունի ղօչա-ղօչա,
Լուս-գերեզման Սուրբ Կարապետ։

Սուրբ Կարապետ է մէջ դաշտին,
Սրբանունքն իրեն հետ հաշտին,
Շատ խաչապաշտ իրեն պաշտին,
Մշու Սուլթան Սուրբ Կարապետ։

ՈՐՏՈՎԸ ՍԻՐԵԼ ԵՍ

Սուրբ Կարապետ քո վանքը,
Վա՜յ լէ՜ լէ՜ լէ՜ լէ՜ լէ՜
Վա՜յ լէ՜ լէ՜ լէ՜ լէ՜ լէ՜,
Վա՜յ սիրելի ջա՜ն:

Ղազախի նախշուն թամքը.
Որտովը սիրել ես.
Մոլորը թորկել ես.
Վա՜յ անուշիկ ջա՜ն,

Արդ անեմ թագաւորին,
Անցել է Հայի կեանքը։

Սեւ ամպերը պարզում չի,
Սիպտակ եայլուխ սազում չի,
Եօթ տարի ալ հագնեմ,
Սիրտս սեւ է, սազում չի։

Ծիրան եմ ծառի ծէրին,
Կերերամ հետ թերերին,
Եկան քաղեցին տարան,
Ծախեցին ախմախներին։

Կաքաւ եմ քարամիջում,
Կը կարդամ ձորամիջում.
Աստուա՛ծ, իմ մուրազըս տու՛ր,
Էս գալող շաբթու միջում։

Դու մի հատ թառլան ղուշ ես,
Մեր բաղում բուսած նուշ ես,
Աստուած վըկայ, սուտ չըկայ,
Ինձ համար շատ անուշ ես։

Անունըդ կարդացող ա,
Աղբէրըդ գիր բացող ա,
Մի գիրը բաց անել տո՛ւր,
Տեսնենք ո՞նց իմացող ա։

ԿԱՐՕՏ

Սըրտիս թագուհի,
Կարօտել եմ քեզ,
Ա՜խ, ին՛չ կը լինի
Ցանկարծ յայտնուես,

Եւ, թէկուզ իսկոյն
Դարձեալ չըքանաս,
Ինչպէս գիշերուան
Կարճատեւ երազ։

Միայն թէ տեսնեմ
Պատկերըդ մէկ էլ,
Միայն թէ ասեմ,
Ո՜նց եմ կարօտել։

Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԿԱՔԱՒԻԿ

Վա՛յ կաքաւիկ, սեւ կաքաւիկ,
Զալիկ-մալիկ սիրուն հաւիկ,
Վա՛յ քո ճուտին, էն խորոտին,
Վա՛յ սըգաւոր իր մօր սըրտին։

Էլ չես կարդում հանդ ու արտում,
Մեր սարերէն կ'երթաս տըրտում,
Վա՛յ կաքաւիկ, սեւ կաքաւիկ,
Վա՛յ իմ կորած սիրուն հաւիկ։

Ռ. ՄԵԼԻՔԵԱՆ   Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՎԱ՛Յ, ՎԱ՛Յ, ՄՕՍԻ ՋԱՆ

(ԱՆՈՒՇ)

— Վա՛յ, վա՛յ, Մօ՛սի ջան, ինձ մի՛ սպանիր.
Սրանից յետոյ չե՛մ սիրել նըրան...
Վախենում եմ ես... ղամէդ տեղը դիր...
Սիրտըս դողում է տերեւի նըման...

— Դէ՛ իմ անունով երդուիր, անըզգա՛մ,
Որ էլ Սարոյին դու չես սիրելու.
Թէ չէ՝ տեսնո՞ւմ ես խանչալը հանած
Մինչեւ դաստակը սիրտդ եմ խըրելու։

— Քու ոտի հողն եմ, Մօ՛սի ջան, Մօ՛սի,
Դու քու եսիրին երդո՞ւմ ես տալիս...
Ես էլ Սարոյին չեմ սիրում ասի.
Տեսնո՞ւմ ես չոքած ի՛նչպէս եմ լալիս...

— Դու խաբո՞ւմ ես ինձ, սուտլի՛կ, խաբեբա՛յ.
Չե՞ս սիրում ասիր. էն ի՞նչ է հապա,
Էն ի՞նչ է հապա, որ տեղն ենք մտնում՝
Հեկեկում ես դու գիշերուայ մըթնում.
Էն ի՞նչ է հապա, որ դու երազում
«Սարօ ջան, Սա՛րօ, Սարօ» ես ասում...

— Մօսի ջան, Մօ՛սի, գլխովըդ շուռ գամ.
Ինձ մի՛ սպանիր, ինձ թող էս անգամ.
Էլ չեմ սիրի ես, երբ դու չես ուզում,
Էլ չեմ կանչի ես նըրան երազում...
Ինձ մի՛ սպանիր, ղամէդ տար հեռու...
Քու քո՞յրը չեմ ես... իմ Մօսին չես դո՞ւ...

Ա. ՏԻԳՐԱՆԵԱՆ   Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ՓԱՐ ԱՒԱԶԱԿԱՑ

Վառեց երկինք իր մոմերը,
Աւազակաց համար,
Թրա լա լա լա:

Սահի զուարթ թող գիշերը,
Մեր պալատն է անտառ,
Թրա լա լա լա:

Երգեն հողմունք փոթորիկք,
Աւազակաց համար,
Թրա լա լա լա:

Գինւով լեցուին մեր փորիկք,
Եկէ՛ք, օ՜ն դուք ի պար,
Թրա լա լա լա:

ԱՆՈ՛ՒՇ ԵԱՐ

Վարդը ձեռքիդ դու ներս եկար,
Ինքդ սիրուն վարդի պէս,
Սիրտըս գերի հետըդ տարար,
Բլբուլի եար վարդի պէս։

Յօնքերըդ թուխ՝ կամար կապած,
Աչքըդ տակին ջուխտ արեւ,
Լոյս շող տուլին դարդից ամպած
Մաշուած սըրտիս ջուխտ արեւ։

Քո ճամբէն է աչքըս պահում,
Ճամբիդ մեռնեմ, անո՛ւշ եար,
Դու քաղցր երազ իմ խեղճ կեանքում,
Ա՛խ, ո՞ւր ես, ո՞ւր անո՛ւշ եար։

Յ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՆԱԶԵՐՈՎ, ՆԱԶԵՐՈՎ

Վարդի ջրով, եա՛ր, մազերդ
Շաղէ նազերով, նազերով.
Ճըղէ՛ եօթանասուն պէօլլիւկ,
Հիւսէ՛, նազերով, նազերով։

Սարըս քընէն ե՞րբ է զարթեր.
Ծով, ծով աչերդ մի թարթեր,
Արի՛ պարտէզ, կարմիր վարդեր
Քաղէ նազերով, նազերով։

Խելքս առաւ երեսիդ գոյնը,
Հատցուցիր աչերուս քունը.
Եա՛ր, սիրովդ սրտիս տունը
Տաղէ նազերով, նազերով։

Կ. Վ.

ՎԱՐԴ ԿՕՇԻԿՍ

Վարդ կօշիկը, վարդ կօշիկըս,
Վարդից գեղեցիկ մաշիկըս։

— Մեր տան մէջը քընող տըղայ,
Կարմիր խընձոր բաշխող տըղայ,
Վարդ կօշիկըս գըտնող տըղայ
Տղա՛յ, գըրկէ վարդ կօշիկըս։
Վարդ կօշիկը, վարդ կօշիկըս ուլն,

— Ձեր տան մէջը քընել չեմ ես,
Կարմիր խնձոր բաշխել չեմ ես,
Վարդ կօշիկըդ գըտել չեմ ես,
Իմ մօտըս չէ վարդ կօշիկըդ,
Վարդ կօշիկըդ, վարդ կօշիկըդ,
Վարդից գեղեցիկ մաշիկըդ։

ԿԱՐԱ ՄՈՒՐԶԱ

Ռ. ՄԵԼԻՔԵԱՆ

ԿԱՐՍԵՑՈՑ ԵՐԳԸ

Վերէն ես կուգայի՝ դու դուռը բացիր,
Ձեռքըդ ծոցըդ տարար՝ ա՛խ էրիր լացիր,
Ես էլ քեզի չառայ՝ տունը մընացիր.
Գընը, զապլի խային, եար չեղար ընծի,

Ես սարէն կուգայի, շալակըս բուրդ էր,
Լեզուդ ընծի համար վառած քուքուրթ էր,
Բոյըդ զարդու զամիչ. երեսըդ թուղթ էր,
Գընը, զապլի խային, եար չեղար ընծի,

Երկինքը ամպել էր, ի՛նչ անուշ թոն էր,
Էկայ դըռնէն անցայ, ջանանըս հոն էր.
Էրեցայ - վառեցայ, սիրտս միշտ քոնն էր,
Գընը, զապլի խային, եար չեղար ընծի,

Էսօր շարաթ էղնիր, էգուց կիրակի,
Խարըս դըռնէն անցնիր, էրթար կըրակի,
Լեզուն բանլիք էղնիր, ծոցը փըռանկի.
Գընը, ղալլի խային, եար չեղար ընծի։

ՍԻՐԱՀԱՐԸ

Վերջին վարդ, վերջին վարդ.
Սիրականիս վերջին զարդ,
Նա քեզ հանից իւր կրծքից,
Ինձ պարգեւեց վերջին վարդ։

Մանկութեան ոսկէ ժամերն,
Անցեր են անդառնալի,
Կորած սիրոյս յիշատակ,
Դու ես միայն, վերջին վարդ։

Գարնան օրերն անցել են,
Ցօթ ամառն է ինձ էրում,
Մինչ սպասում եմ քու տեսքին,
Դո՛ւ ամառուայ վերջին վարդ։

Երջանիկ կեանքիս օրերը.
Ցաւ են դառել առաջիս,
Ուրիշ օրեր, ուրիշ կեանք
Միտքըս բերիր, վերջին վարդ։

Շատ չի տեւել՝ կը բացուի ․
Առաջիս սեւ գերեզման,
Էս աշխարհիս միայն քեզ
Հետս կ՚առնում, վերջին վարդ։

Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ　　　Բ. ՊԱՏԿԱՆԵԱՆ

ՎՈՒՆՑ ՕՐ ՎՈՒՐ

Վունց օր վուր զարիփ բուլբուլըն մէ տարօվ բաղին կարօտ է,
Էնէնց կու լայ քու սիրօղըն՝ ձեռիդ արաղին կարօտ է,
Դուն ուրիշի հիդ մի՛ խօսի, քու ճուրտն աղին կարօտ է.
Հասիլ է ծուցիդ շամամըն՝ ոսկէ թարաղին կարօտ է։

Մէ ղադ չը կայ՝ գուման ածիմ՝ ասիմ՝ էն նըման է գունքըդ,
Անդալամ անզարնիշ քաշած օսկու պէս է փայլում ունքըդ,
Բօյէմէդ չուրս մատն ավէլի լըցվիլ է դօշդ ու թիկունքըդ.
Զարօվ արըէշումով հուսած մազիրըդ՝ շաղին կարօտ է։

Դուն խօ՛մ էն գըլխէն գօված իս, ես քիզ նուրմէկ գօվիմ արի՛.
Ծուցըտ վարաղնած հուջրա է, հուտ ունէ մուշկ ու անբարի.
Երիք հարուր ու վաթսուն ու վից ամէն անդամդ զարարի.
Կուռըդ չիմշատ, մատնիրըդ մում՝ բըրօլէ ճաղին կարօտ է։

Ես էլ ուրիշ եար չ՚իմ սիրի աշխարումըս դուն իս իմըն,
Թէ մէ շափաթ քիզ չ՚իմ տէսնի, կու կըտրիմ քամանչի սիմըն.
Թէգուզ թաքավուրըն կանչէ, թէգուզ Լօղըման հէքիմըն՝
Վո՞ւր մէ դարդս կու հասկանայ նա, դուգունըս դաղին կարօտ է.

Գիշեր, ցէրէկ ման իմ գալի էշխէդ եանա եանա, գօզալ.
Անգա՛ճ արա մաստաղ իմ քիզ, մէ քիչ կամաց գընա՛, գօզալ.
Աշխարըս ո՞ւմն է մընացի՝ վուր ինձ ու քիզ մընայ գօզալ.
Մագա՞մ մէռաւ Սայաթ-Նօվէն՝ անգաճըդ խաղին կարօտ է։

ՍԱՅԱԹ-ՆՕՎԱ

1758

ՎՈՒՇ ՎՈՒՇ

Վո՛ւշ, վո՛ւշ. վըշտի՛ս մի ճար արէք.
Ֆո՛ւշ. փո՛ւշ, սըրտէս փուշը հանէք.
Վո՛ւշ վուշալէ՛ն, փուշ փուշալէ՛ն.
Սիրտը կըծող, ցաւ կըրակէն,

Փրփըրադեղ ծովն է յուզում,
Ժեռ քարափի կուրծքը դարնում.
Զարդ ու փշուր, մէկէն դառնում,
Ցուսակրտուր՝ յետ նահանջում։
Իսկ ժեռ քարը անյայտ մտքի,
Ցետից ընկած ձէն չի հանում.
Վո՜ւշ վուշալէ՜ն, փուշ փուշալէ՜ն,
Ցաւ կըրակէն, մըխկըրտալէն.
Փրփըրադէղ ծովն է յուզում,
Լալ հառաչանք, աղերս թափում.
Ա՜խ, իմ սրտիս խորունկ վէրքէն,
Ցաւն է կաթում մըրմըռալէն։
Վէրքըն անհո՜ւն, ցաւն անդարման,
Արիւն հոսում կըսկըծալէն.
Վուշ վո՜ւշ, վուշ վո՜ւշ,
Վուշ վո՜ւշ, վուշ վո՜ւշ, վո՜ւշ։

ԳՐ. ՍԻԻՆԻ

ՎԱԻՐ ՈՐ ԳՆԱՍ

Վուր որ գնաս քիզ հիդ գուքամ,
Էլի կ'ասիմ, դուն իմ եարն իս.
Ցիսուսի պէս որ չարչարես
Էլի կ'ասիմ, դու իմ եարն իս։
Զալլաթ կանչիր, հիդըդ բանի
Երկու աչկիրս մէկ տիղ հանի.
Ինք էլ գըցի, ջուրը տանի,
Էլի կ'ասիմ դո՜ւն իմ եարն իս։
Քամանչախս դարտակ փէտեր,
Օսկէ թելեր չարան ունէր.
Շատ մարթիք կու լացացունէր,
Շատ մարթիք կուրախացունէր։

ՍԱՅԵԱԹ-ՆՕՎԱ

ՀԱՄԵՐԳ

Վըտակը ժայռից ներքեւ է թըռչում,
Թափ առած ընկնում քարերի գըլխին.
Զարկւում աւազին, շաչում է ճըչում,
Ծըչում անհանգիստ փըրփուրը բերնին։
Ինչպէս ծերունին, ձէնով պառաւած,
Զայնակցում է ժիր թոռնիկին երգին,
Այնպէս էլ ծերուկ անտառը կամաց,
Արձագանգ տալի ջըրի աղմուկին։
Այն ինչ բնութեան զուարթ համերգի,
Ունկընդիրն անխօս ու յաւէրժական,
Ժայռը մըտախոհ՝ իր մըռայլ մըտքի,
Ետեւից ընկած լըսում է նըրան։

Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

Ա. ՏԵՐ-ՂԱԶԱՐԵԱՆ

ՓԱՐԵՐԳ ՔԷՍԱՊԻ

Տինիյրքը վէզընք թնտու,
Մէքթուպը կուգու Հնտու,
Աէշկէյն ուզողէն տըւըք՝
Սատկա կուրթու կը խնտու։
Զայնը իդան հէրիցըք,
Թէօզը սընտկին հէնիցըք,
Կտրէճ տղան հէյ վէզզի՝
Գլխէյն չարաղ քէրիցըք՝
Էշկէյն էնէօնդ իդլիսա,
Իս ըզքի փէնճէրին տեսա,
Ունցուծս-չունցուծս պըր ծէխիմ՝
Ըննում քու տէտէյն փեսա։

Իս կը խումիմ քու գինէն,
Զըմ լիլինու քու ձինէն,
Թը կուգուն ըարէնին դէմ՝
Զը պըր ղէտուէմ քու մինէն։

Լեռնիրին կուգու պողը,
Ծոյլին կը քէցին զողը,
Կունիր չէնէօշ մումէյ մը՝
Վէրմըլէն խկից ղթողը։

ՏՂԼԷ ԽԱՄԱՆ

Տըլէ խամա՜ն. *Արեւն առե Վանայ ծովին,*
Տըլէ խամա՜ն. *Ես քեզ սիրի աշնան հովին։*
Խաման, խաման, հէ՜յ։

Տըլէ խամա՜ն. *Վարդ բացուեցաւ, քաղել չըկայ,*
Տըլէ խամա՜ն. *Եարս բարակ է, սեղմել չի գայ։*
Խաման, խաման, հէ՜յ։

Տըլէ խամա՜ն. *Եարս պըղտիկ է, սիրել չըկայ,*
Տըլէ խամա՜ն. *Շատ խորոտ է, պաչել չի գայ։*
Խաման, խաման, հէ՜յ։

Տըլէ խամա՜ն. *Արի՛ երթանք սարն ի սէյրան,*
Տըլէ խամա՜ն. *Բե տանողի՝ տընիկ վէրան։*
Խաման, խաման, հէ՜յ։

Տըլէ խամա՜ն. *Արեւն ելաւ, Վանայ ծովէն,*
Տըլէ խամա՜ն. *Վանայ ծովէն, դարդի բովէն։*
Խաման, խաման. հէ՜յ։

Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

ՏՈՒՅ, ՏՈՒՅ

Տո՜ւյ, տո՜ւյ, տո՜ւյ. տո՜ւյ.
Սիրուն աղջիկ եմ,
Վարդի փընջիկ եմ,
Տո՜ւյ, տո՜ւյ, տո՜ւյ, տո՜ւյ. տո՜ւյ, տո՜ւյ։
Ոսկեզօծ մազիկ,
Կարապի վըզիկ,
Տո՜ւյ, տո՜ւյ, տո՜ւյ, տո՜ւյ, տո՜ւյ. տո՜ւյ։

Տո՜ւյ, տո՜ւյ, տո՜ւյ, տո՜ւյ,
Մի բուռ կըրակ եմ,
Մութ տան ճրագ եմ,
Տո՜ւյ, տո՜ւյ, տո՜ւյ, տո՜ւյ, տո՜ւյ. տո՜ւյ։
Իմ սիրտն է խօսում,
Ես երգ եմ ասում,
Տո՜ւյ, տո՜ւյ, տո՜ւյ, տո՜ւյ, տո՜ւյ, տո՜ւյ։

ՏՈՒՆ ԱՐԻ (*)

Տո՜ւն արի, տո՜ւն արի, իմ աղբէր,
Արի՛, իմ խորոտ աղբէր։

Կ. Վ.

ԳԵՂՋԿՈՒՀԻՆ

Տուր ինձ բահն ու թին, փոցղը, տափանը,
Արեւը գարնան՝ թող դէմքըս այրէ,
Շորերս գօտկիս, ծամըս կը կապեմ
Առողջ թեւերըս ես վեր կը քաշեմ։

(*) *Նախ՝* «Երեւան բաղ եմ արել ջան արեւ», *և* «Արեւը կայնէ կէսօր» (Գ)։

Նըրա կրակոտ համբույրի տակին,
Քաղցր է կրել բեռը հոգսերի,
Եւ աշխատանքը չարքաշ գեղջուկի,
Նա մեզ կը բերի ե՛ւ բաղդ, եւ բարիք։
Անգործութիւնից թօշնած այտերով,
Դէպի մայր հողը դիմեցէք շուտով.
Ո՜, դուք տերեւներ քամուց հալածուած,
Ո՜, դուք ծաղիկներ գիշերով ծաղկած։

Կ. ՋԱՔԱՐԵԱՆ

ՏՕԼԱԽՕ

Տօլախօ՛.
Մէկ օր մենք ժողվանք, գացինք ուրախութիւն.
Մեզնից մէկ վերուց ասաց, եկէք չընենք տղայութիւն,
Դընանք այգին, գօնդ մը քաշենք, պար մը բռնենք
հետ մեր քէյֆին.
Էն աստղեր ծեթ-պէտ աստղեր թող ճըլվըլան
վեր մեր գըլխուն.
Էն լուսին, բարձրիկ լուսին, թող փըլփըլայ
վեր մեր գօնդին։

Հ. ՊԵՐՊԵՐԵԱՆ — ՋԻԹՈՒՆԻ

ՑՈՐԵՆ ԵՄ ՑԱՆԵՐ

Ցորեն եմ ցաներ,
Ելեր է պարկի,
Պղտիկուց եմ սիրեր,
Զեմ կըրնար թարկի։
Տարոնի չորս բոլոր
Մանր ու բէթ գեղեր,
Էն եարն որ կը սիրեմ
Խորոտկի ցեղ էր։

ԳՐ. ՍԻԻՆԻ — Յ. ՍԱՄՈՒԷԼԵԱՆ

ԱՇՆԱՆ ԵՐԳ

Ցրտահա՛ր, հողմավա՛ր
Դողացին մեղմարար
Տերեւները դեղին,
Պատեցին իմ ուղին...

Ճաճանչները թօշնան...
Կանաչներս աշնան.—
Իմ խոհերը մոլար՝
Ցրտահա՛ր, հողմավա՛ր...

Կրակներս անցան.
Ցուրտ ու մէգ է միայն...
Անուրջներս երկնածին
Գնացի՜ն, գնացի՜ն...։

Ռ. ՄԵԼԻՔԵԱՆ — Վ. ՏԷՐԵԱՆ

ՀՈՎՈՒՈՒՀԻԻՆ ԵՐԳԸ

Փարախին ճռճռան դռնակը բացի.
— Հօ՛ հէ՜յ, հօ՜յ, ուլիկնե՛րս, դուրս ելէք շուտով,
Թո՛ղ ձեր բառաչէն օղն ալեկոծի,
— Հօ՛ հէ՜յ, հօ՜յ, ուլիկնե՛րս, փարփառ աչերով։

Այս գիշեր մայրըս ձեռքերս հինայեց,
— Հօ՛ հէ՜յ, հօ՜յ, ուլիկնե՛րս, մատներս են կարմիր,
Հանիս համբոյրով մ'արբունքըս օրհնեց,
— Հօ՛ հէ՜յ, հօ՜յ, ուլիկնե՛րս, շրթներս են կարմիր։

Վարդով եմ պճնած գլուխըս գանգրահեր,
— Հօ՛ հէ՜յ, հօ՜յ, ուլիկնե՛րս, երկինքն է ժպտուն,
Շուրջըս կը թռչտին նախշուն թիթեռներ,
— Հօ՛ հէ՜յ, հօ՜յ, ուլիկնե՛րս, աշխարհն է ծիծղուն։

Հծծիւններ կուգան անտառին խորէն,
— Հօ՛ հէ՛յ, հօ՛յ, ուլիկնե՛րս, սիրածըս հոն է,
Ծառերը սիրոյ հեքեաթ կը հնչեն,
— Հօ՛ հէ՛յ, հօ՛յ, ուլիկնե՛րս, իմ եարըս հոն է։

Ճակտիս կապած եմ Նարօտ մետաքսէ,
— Հօ՛ հէ՛յ, հօ՛յ, ուլիկնե՛րս, լե՛ռ երթանք այսօր,
Սարերու տըղան ինծի կը սպասէ,
— Հօ՛ հէ՛յ, հօ՛յ, ուլիկնե՛րս, քո՛վն երթանք այսօր...։

Հ. ՊԵՐՊԵՐԵԱՆ — Ա. ԼԵՅԼԱՆԻ

ՊԱՐԵՐԳ (*)

Փափուրի, ջա՜ն,
Մըտայ բըլբուլի բաղը,
Փափուրի, ջա՜ն,
Երգեցի անուշ տաղը:

Լուսնակը շող ա քցել,
Իմ եարը քօղ ա քցել,
Փափուրի ջան, ելի։

Բարակ քամին տալիս ա,
Ալ քօղը, դող ա քցել։
Փափուրի ջան, ելի։

Ծամեր ունիս ծիրանի,
Քամին տայ թել թել անի.
Սիրուն աչերըդ, եա՛րօ,
Խելքս ու միտքս կը տանի։
Փափուրի ջան, ելի։

Կ. Վ.

(*) Նախ երգել՝ «Անձրեւն եկաւ ճաղալէն»:

ՎԱՐԴԸ

Փոքրիկ տըղան մի վարդ տեսաւ,
Տեսաւ մի վարդ դաշտի միջին.
Վարդը տեսաւ, ուրախացաւ,
Մօտիկ վազեց՝ սիրուն վարդին.—
Սիրուն վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը՝ դաշտի միջին։

Տըղան ասաց. «Քեզ կը պոկեմ,
Ա՛յ կարմիր վարդ, դաշտի միջին.»
Վարդը ասաց՝ «Տե՛ս, կը ծակեմ,
Որ չը մոռնաս փըշոտ վարդին».—
Փըշոտ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին։

Ու անհամբեր՝ տըղան պոկեց.
Պոկեց վարդը դաշտի միջին.
Փուշը նըրա ձեռքը ծակեց.
Բայց էլ չօգնեց քընքուշ վարդին.—
Քընքուշ վարդին, կարմիր վարդին,
Կարմիր վարդը դաշտի միջին։

Ռ. ՄԵԼԻՔԵԱՆ — (ԿԷՕԹԷ) (թրգ.) Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԳԵՂՋԿՈՒՀՈՒ ԵՐԳԸ

Քաղ հանում եմ մօտ սարին,
Մատաղ լինիմ իմ եարին.
Մէջքին էրծաթ քամար ա,
Մեռնիմ ունքի կամարին։

Ուրագըս սարքած, սըրած,
Մաչիկըս սապրուց կարած,
Տույ, տույ, տույ, տույ.
Մաչիկըս սապրուց կարած,
Տույ, տույ:
Ես իմ կարմիր երեսըս
Երես երեսին դըրած,
Տույ, տույ, տույ, տույ:

Յ. ՍՏԵՓԱՆԵԱՆ

ԲԱԼԱ ՃԻՐԻՆ

Բանաքեա բարձր տեղ ա,
Բալա ճիրին, ամման ամման,
Ջուրը հիւանդի դեղ ա,
Թառլան ճիրին, ամման, ամման
Բալա ճիրին, ամման, ամման.
Սիրած սիրածին չեն տայ,
Էս ի՞նչ անօրէն դեղ ա:

Ա՜յ տղայ սեւ չուխաւոր,
Սաղմօսը ծոցիդ սաւոր,
Էրնէկ կը տամ էն օրը՝
Մեր տունը գաս թագաւոր:

Ա՜յ տղայ, բաղումն արի՛,
Ոտներդ շաղումն արի՛,
Էս թաղը ղալմաղալ ա,
Ման տուր՝ էն թաղումն արի՛:

ՔԱՆԻ ՎՈՒՐ ՋԱՆ ՄԻ ԵԱՐ

Քանի վուր ջան մի՝ եա՛ր, քի ղուրբան իմ. արա ի՞նչ անիմ՝
Արտասունք հանիմ, չատ հօքուց հանիմ,- եա՛ր, ղաղէդ տանիմ:
Ասիր.«Ջէյրան իմ.» թո՛ւղ քի սէյր անիմ. եար, մըտիկ անիմ.
Մո՛ւտ բաղչէն նազով, քիզ գովիմ սազով, եար խլթիմազով:

Մազիրըդ դաստա, պըռօշըդ փըստա. հէյրանի վախտ է.
Ե՛կ նընդինք չօլըն՝ վուր հանինք գօլըն, ջէյրանի վախտ է.
Բըլբուլըն վարդին, վարդըն բաղին սէյրանի վախտ է:
Մո՛ւտ բաղչէն նազով, քիզ գովիմ սազով, եար խլթիմազով:

Նուռ գանք հանդամով. երկնային նամով թուփըն թացվիլ է:
Խաղ կանչինք հանգով. լալէքն ռանգով, վարթըն բացվիլ է:
Սուսան սընբուլօվ՝ վարիր բըլբուլօվ բաղըն լըցվիլ է:
Մո՛ւտ բաղչէն նազով, քիզ գովիմ սազով, եար խլթիմազով:

Պատվական չինած, նըման նըմանած Լէյլու գիդարին.
Եա՛ր, ուշկըս գընաց՝ մազիրըդ մընաց վրայ մուհաջարին.
Բաղըն զարթարած, բըլբուլըն քընած վարթի սաջարին.—
Մո՛ւտ բաղչէն նազով, քիզ գովիմ սազով, եար խլթիմազով:

Հաքիլ ես ատլաս, թուրլու զար ու խաս՝ սալբու դալ բօյուն.
Ձէռիդ ունիս թաս, լըցնիս ինձ տաս՝ ղուրբան իմ ֆօվուն.
Թաք զուն բաղչէն գաս՝ անիս մասնէ մաս քու Սայաթ-Նօվուն:
Մո՛ւտ բաղչէն նազով, քիզ գովիմ սազով, եար խլթիմազով:

1757 ՍԱՅԱԹ-ՆՕՎԱ

ԱՐՏՈՅՑԻ ԵՐԳԸ

Քեզ եմ գովում, ծաղիկ գարուն,
Ալ ու ալւան ծաղիկ սիրուն,
Քո սիզանը անհատնելի
Իմ ձագերին կեր է տալի:

Իմ ձագերը բընիս միջին,
Ձագ ու բունս էլ ծոցիդ միջին,
Քեզ եմ զոհում ծաղիկ գարուն,
Ալ ու ալւան ծաղիկ սիրուն։

Ա. ԽՆԿՈՅԵԱՆ

ԱՆՈՒՇ ԳԱՐՈՒՆ

Քեզ եմ մընում անուշ գարուն,
Ծաղիկ հարիս հետըդ գալուն.
Դու կարօտ ես վառ արևի,
Ես իմ կեանքի գարուն եարի։

Դու վարդ ունես քեզ հըմայող.
Քո կեանքի հետ, նա էլ մարող.
Ես եար ունեմ յաւէտ գարուն,
Իմ հոգու մէջ՝ վառ մնայուն։

Անքուն աչքով ես կը սպասեմ,
Սէրը սրտումս վառ կը պահեմ,
Վարդի թըփից փունջ կը քաղեմ,
Սիրած եարիս նըւէր բերեմ։

Դ. ՂԱԶԱՐԵԱՆ — ԳՐ. ԳՐԻԳՈՐԵԱՆ

ՍԻՐԵՐԳ

Քեզ չը տեսնել ուխտեր էի.
Բայց, ա՜խ, էլի հանդիպեցայ.
Քուրի՛կ, վէրքըս լաւ է հիմի.
Մի սև բոպիի տեղը կայ։

Էն սև բոպին մութ ամպի պէս,
Սևցուց դէմքը արևի,
Ու ման կուգամ սև չուքի պէս,
Սարեր, ձորեր, ամայի։

Ես հովիկ լինէի, դու Նազուկ ցարասի,
Գըգուէի կարօտով մազերըդ սնդուսի.
Ես եղնիկ լինէի, դու աղբիւր պաղպաջուն,
Խըմէի համբոյրըդ, շըթներով տոչորուն։
Ես թիթեռ լինէի, դու կարմիր բոց, կըրակ,
Կիզուէի գըկիդ մէջ, մեռնէի ոտքիդ տակ։

Ա. ՊԱՐԹԵՒԵԱՆ — Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ՔՆՈՒԻՆ ԵԿԱՒ

Քնուին եկաւ մեր բակը,
Դիւ լիւ, լիւ, լիւ, դիւ, լիւ, լիւ, լիւ, դիւլ լի,
Մեղրով կուժը չալակը.
Դիւ լիւ, լիւ, լիւ, լիւ, դիւ լիւ, լիւ, լիւ, դիւ լիւ, լիւ, լիւ։
Ուսի թոկը կըտըրւեց.
Էն կուժն ընկաւ կոտըրւեց։

ԳՐ. ՍԻՒՆԻ

ՀՈՎՈՒԵՐԳ

Քէլէր, ցոլէր՝ իմ եարը.
Արևի տակին
Քէլէր, ցոլէր՝ իմ եարը.
Սարի սովոր,
Մեն մենաւոր,
Շէ՛կ տըղայ,

Շո՛ղ արեգակ,
Թո՛ղ արեգակ,
Ե՛կ, տղայ։

Քէլէր, ցօլէր՝ իմ եարը,
Աղբիւրի ակին
Քէլէր, ցօլէր՝ իմ եարը․
Կանաչ առուով,
Ճանաչ առուով,
Ե՛կ, տղայ,
Բաղովն արի,
Շաղովն արի,
Շէ՛կ տղայ։

Քէլէր, ցօլէր՝ իմ եարը,
Գերանդին ուսին
Քէլէր, ցօլէր՝ իմ եարը․
Հունձ ես արել,
Քրտինք դառել,
Շէ՛կ տղայ,
Հով ծառի տակ,
Զով ծառի տակ,
Ե՛կ, տղայ։

Քէլէր, ցօլէր՝ իմ եարը,
Ջա՛ն աչքի լուսին,
Քէլէր, ցօլէր՝ իմ եարը․
Հով է, քընի՛ր,
Զով է, քընիր,
Ե՛կ տղայ,
Հունձ ես արել,
Շատ բեզարել,
Շէ՛կ տղայ։ Կ. Վ.

ՔԷԼԷ, ՔԷԼԷ

Քէ՛լէ, քէ՛լէ, քէլքիդ մեռնեմ,
Քո գոլական խելքիդ մեռնեմ։
Սիրաւոր լորիկ, վիրաւոր լորիկ,
Լորիկ, սեւաւոր լորիկ, լորիկ ջան։
Քէ՛լէ, քէ՛լէ, սոյիդ մեռնեմ,
Քո չինարի բոյիդ մեռնեմ։
Քէ՛լէ քէ՛լէ քօղիդ մեռնեմ,
Քո լուսընկայ չողիդ մեռնեմ։
Քէ՛լէ, քէ՛լէ, բերնիդ մեռնեմ,
Քո սիրունիկ ձէնիդ մեռնեմ։
Քէ՛լէ, քէ՛լէ, ձեռիդ մեռնեմ,
Քո հուր կըրակ սէրիդ մեռնեմ։
Քէ՛լէ, քէ՛լէ, աչիդ մեռնեմ,
Քո անուշիկ պաչիդ մեռնեմ։ Կ. Վ.

ՕՐՕՐՈՑԻ ԵՐԳ

Քնի՛ր անուշ, սիրուն բալա,
Նայ, նայ օրօր, նայ, նայ օրօր․
Քնիր մատաղ, հերիք մի լա,
Նայ, նայ օրօր, նայ, նայ օրօր։
Մեր կեանքն ուրախ, ծափ ու ծիծաղ,
Շըղթայ ու լուծ, չը կայ հիմայ,
Նընջիր քաղցըր, չընչիր խաղաղ,
Իմ նուշ անուշ, սիրուն բալա։
Քնի՛ր անուշ, սիրուն բալա,
Նայ, նայ օրօր, նայ, նայ օրօր,
Սիրտըդ բացուած կարմիր լալա,
Նայ, նայ օրօր, նայ, նայ օրօր։

ԳՐԻԳ Կ. ԶԱՔԱՐԵԱՆ

ՆԱԶԷԻ ՕՐՕՐԸ

Քնի՛ր, իմ բալիկ, օրօր ի՛չ արա,
Դու լաց մի՛ լինիր, ես շա՛տ եմ լացել։

Կոյր կռունկները սուգ ու շիւանով
Մեր սեւ երկնքով եկան անց կացան,
Ա՜խ, մեր լեռներում նրանք կուրացան,
Դու լաց մի՛ լինիր, ես շա՛տ եմ լացել։

Հողմն է հեծեծում սեւ անտառներում,
Անտէր մեռելի սուգն է այն, բալի՛կ,
Անտէր ու անթաղ մեռելները շատ,
Դու լաց մի՛ լինիր, ես շա՛տ եմ լացել։

Կարաւանն անցաւ, բարձած արցունքով,
Սեւ անապատում ծունկ չոքեց, մնաց,
Այն մեր աշխարհի դարդ ու զուլումն է.
Դու լաց մի՛ լինիր, ես շա՛տ եմ լացել։

Գայլերն են ոռնում հեռու դաշտերում,
Մի՛ վախեր, բալիկ, քնիր ուսս արա,
Մարդի ձայն չըկայ, ո՛չ շունչը թունոտ.
Դու լաց մի՛ լինիր, ես շա՛տ եմ լացել։

Դալուկ շըրթունքիդ իմ կաթը սառեց,
Գիտեմ. այն դառն է, չես ուզում, բալի՛կ,
Ա՜խ, վըշտիս թոյնն է քամուել նըրա մէջ,
Կուրծքըս ցաւոտ է. ես շա՜տ եմ լացել։

Կաթիս հետ մէկտեղ սեւ վիշտըս ծըծի՛ր,
Հոգուդ մէջ թող նա սեւ վըրէժ դառնայ,
Ծըլի՛ր, բոյ քաշիր. բոյիդ ես ղուրբան.
Դու լաց մի՛ լինիր, ես շա՛տ եմ լացել։

Ցուլունք եմ շարել, կապել օրոցքիդ՝
Չար աչքերի դէմ, մեր չար դուշմընի,
Քընի՛ր ու աճի՛ր շո՛ւտ արա, բալի՛կ,
Դու լաց մի՛ լինիր, ես շա՛տ եմ լացել։

Քընի՛ր ու աճի՛ր, թիկունքիդ ղուրբան,
Եւ ճամբէ՛դ գընա,— հըսկայի՛ ճամբէն,—
Մենք դուլթ չըտեսանք, դու խրո՛խտ անցիր,
Եւ լաց մի՛ լինիր, ես շա՛տ եմ լացել։

Երկաթ կըռունկով՝ թունաւոր օձի
Գըլուխը փըշրիր անողորմ օձի,
Հըղօր ոտքիդ տակ չարիքը դողայ.
Դու լաց մի՛ լինիր, ես շատ եմ լացել։

Քընի՛ր, իմ բալիկ, օրօր ի՛չ արա,
Դէ՜հ, շո՜ւտ, բո՛յ քաշիր, ես շատ եմ լացել...։

Յ. ԻԽՎԷՋԵԱՆ　　　Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

ՔՆԻՐ ՂԱՐԻԲ

(ԱՇՈՒՂ ՂԱՐԻԲ)

Քնի՛ր, Ղարիբ, անուշ քընով,
Ես քեզ այստեղ, ա՛խ, կը հսկեմ,
Ա՛խ, այրւում եմ,
Ո՛հ, վառւում եմ,

Քո սիրովը խելագարւում եմ։
Այստեղ հանգիստ անուշ քնած է,
Արդեօք ինչպէ՞ս ես զարթեցնեմ.
Ա՛խ, այրւում եմ,
Ո՛հ վառւում եմ,
Քո սիրովը խելագարւում եմ։

ԱՇՈՒՂ ՋԻՒԱՆԻ

ԾՈՎ ԱՉԵՐ

Բընքուշ սըրտով ես սիրեցի,
Լուռ ու խորունկ ծով աչեր.
Վըշտով յօղուած արցունքով լի,
Սեւ ու սիրուն հեզ աչեր։

Ախ, աչերը սէր խոստացան,
Սիրտըս ցոլաց աստղի պէս.
Վախ, աչերը ինձ մոռացան,
Սիրտըս մարաւ՝ աստղի պէս։

Բ. ԿԱՆՍԱՋԵԱՆ

ՔՈՅՐ ԻՄ ՆԱԶԵԼԻ

Քոյր իմ նազելի, նայիր քո դիմաց՝
Վիրաւոր, աւեր սիրտս եմ բացել,
Ա՛խ, նըւիրական ինձ քո գիրկը բաց
Եւ գուրգուրիր ինձ. ես շա՛տ եմ լացել...։

Բընքուշ ձեռներով աչերըս սըրբի՛ր,
Մի՛ թող ինձ լալու — ես շատ եմ լացել,
Ճակտիս մըռայլ՝ մըշուշը ցըրի՛ր,
Եւ գուրգուրիր ինձ, ես շա՛տ եմ լացել...։

Դ. ՂԱԶԱՐԵԱՆ   Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ՔՈՒՆ ԵՂԻՐ ԲԱԼԱՍ

Քուն եղիր, բալաս, աչքըդ խուփ արա՛,
Նախշուն աչքերուդ քուն թող գայ վըրայ.

Օր օր օր բալաս, օր օր ու նանի,
Իմ անուշիկիս քունը կը տանի:

Ոսկի խաչ վըզիդ՝ քեզի պահապան,
Նարօտ կապիլ է ծարէն տէրպապան։

Մամի հիլուններ կախիլ եմ ես ալ,
Նազար չիս առնուլ. քուն էղի՛ր, մի՛ լալ։

Աս քանի՞ մօրըդ անքուն աչքովը
Անցիլ է օրեր օրօցքիդ քովը։

Օրօցքըդ օրրիմ, օրով բոյ քաշիս,
Մըղկըտան ծանով սիրտըս չի մաշիս։

Դուն-ալ քուն էղիր, ինծի ալ քուն տո՛ւր,
Սուրբ Աստուածամայր անուշիս քուն տո՛ւր։

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

ԼՈՒՍՆԻՆ ՏԱԿ

(ՆԱՒԵՐԳ)

Օդն է զով, գիշերն է պղուոր,
Աստղիկն անուշ կը պըլպըլայ.
Ալեաց վերայ նաւակ մը մեղմօրօր,
Նազելաճեմ կը սուրայ։

Թիավարեցէ՛ք խոր լռութեան մէջ,
Զըւարթ աշխոյժ նաւաստիք.
Խառնեցէ՛ք վառ, դաշն ելեւէջ,
Ալեաց մրմունջին զողտրիկ:

Լուսընկայ գիշերն է անուշ,
Կապոյտն անուշ կը պըսպըղայ,
Ծովն ու ալիք՝ հագեր են ժպիտ,
Լուսոյ անձրեւ կը տեղայ։
Թիավարեցէ՛ք, խոր լռութեան մէջ եւ լն։

Լուռ ու մունջ բնութիւն երազուն,
Մըշիկ, մըշիկ կը նընջէ,
Աստուծոյ աչքն է միմիայն արթուն,
Բնութեան վերայ կը հըսկէ:
Թիավարեցէ՛ք, խոր լռութեան մէջ եւլն.

ԱՆԴԱՐՁ ԵՐՋԱՆԿՈՒԹԻՒՆ

Օ՛, իմ անդարձ երջանկութիւն,
Դու օտար թըռչուն՝
Հեռու ափերի,
Է՛լ ո՛չ մի գարուն
Քեզ ետ չի բերի:
Ցաւէտ կորած կապոյտ թըռչուն.
Խենթ սիրոյ թեւերով
Իմ սիրտը հեզ մը տար.
Հեռացար գաւերով
Օ՛, թըռչուն մեզ օտար.
Դու հէքեա՛թ, դու երա՛զ,
Դու կարօ՛տ՝ միշտ անհաս:

Վ. ՄՐՈՒԱՆՋՑԵԱՆՑ

ՕԽՏԸ ՍԱՐՈՎ

Օխտը սարով հեռո՛ւ քեզնէն,
Քու շուաքով այրում եմ, եա՛ր,
Օխտը սարով բաժան քեզնէն,
Քու կարօտով էրւում եմ, եա՛ր:
Դարդիս դարմա՛ն, եարիս մանյա՛մ,
Կեանք ու արեւ եարս ո՞ւր ա:

Գիշեր-ցերեկ զրկուած քընից,
Ծով է կըտրում աչքըս համբին,
Բալքի զարիբ մի համբորդից
Կարօտ եարէս խաբար առնեմ:
Դարդիս դարմա՛ն, եարիս մանյա՛մ,
Թագ ու պըսակ եարս ո՞ւր ա:
Օխտը տարի ծոմ ու պասով
Օր ու արեւ սեւցուցի, եա՛ր,
Բալքի Մըշու Սուլթան զօրքով՝
Իմ մուրազըս տար ինձի, եա՛ր:
Դարդիս դարմա՛ն, եարիս մանյա՛մ, եւլն.

ՆԵԱ ՋԱՆ

Օրե՛ր, գարնան անո՛ւշ օրե՛ր,
Ո՞ւր էք կորեր:
Բերդիցը դուրս ելայ, Ալագեազ տեսայ,
Խանում Նեա՛ ջան. վա՛յ.
Արածրած աշխարհքը դըրախտի պէս ա.
Դուն կեցիր բարով,
Ես կ'երթամ լալով.
Լալով ողբալով,
Գէօչ ու բարխանով,
Սարեր ման գալով:
Արարան աչերիս դուման ա դառել,
Խանում Նեա ջան. վա՛յ,
Իմ կեանքն ու արեւը եաման ա դառել:
Դուն կեցիր բարով. եւլն.
Արի գընանք քո ման գալած արտերը,
Խանում Նեա ջան, վայ.
Քեզի տեսայ նորացան իմ դարտերը:
Դուն կեցիր բարով. եւլն.

Վ. ՄՐՈՒԱՆՋՑԵԱՆՑ

ՕՐԸ ՄԹՆԵՑ

Օրը մթնեց, ճամբէս երկա՛ր...
Ուժերս հատած, ես մենակ,
Ա՛խ, ո՞ւր ես դու, ա՛յ անջիգհար,
Ինձ ո՞ւր թողիր մեն-մենակ։

Քո ճամբէն եմ բռնել գալիս —
Դու փախչում ես, անգո՛ւթ եար,
Էլ ի՞նչ ես ինձ նշան տալիս,
Ի՞նչ ես քըցում քարէ քար։

Արեւս անցաւ. սիրուդ համար
Սիրտըս էրուեց անկըրակ...
Ա՛խ, դու անուշ իմ երա՛զ եար,
Ինչո՞ւ թողիր ինձ մենակ։

ՅՈՎՀ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՄՈԿԱՑ ՄԻՐԶԷ

Օրն էր ուրբաթ.
Լուս ի շաբաթ.
Գեաշդ էրիր ենք Մալաքեաւէն.
Թըղթիկ մ'եկաւ Ջըզիրու քաղքէն.
Առին բերին Մալաքեաւէն,
Տուին ի ձեռ Մոկաց Միրզէն։
Հազա՛ր ափսոս Մոկաց Միրզէն։

Առեց, կարդաց քաղցրիկ լեզուէն.
Էրաւ մաղղէն.
Շըլեց աչքեր կախեց չանէն.
Քաշուեաւ գոյն կարմիր երեսէն։
Հազա՛ր ափսոս Մոկաց Միրզէն։

Կանչեց. ասաց իւր մըշակին.—
Դո՛ւս քաշի բոզ—բեդաւին.
Վըրայ դըրէք թամքը սադաֆին.
Սաֆար կ'երթամ ջուր Ջըզիրէն.
Հազա՛ր ափսոս Մոկաց Միրզէն։

Գնաց հասաւ չուր Զամբարէն.
Խաթուններ թափան փանջարէն.
Թափան Մոկաց Միրզի թամաշէն.
Զըկէր իւր նըման բոլոր դունիէն։
Հազա՛ր ափսոս Մոկաց Միրզէն։

Գընաց հասաւ չուր Ջըզիրէն.
Եկան, ժողվան քաղաք ղըմէն.
Մոկաց Միրզէն՝
Կ'արժէր քաղաք ղըմէն։
Հազա՛ր ափսոս Մոկաց Միրզէն։

Խէր չը տեսնէր Կոլոտ փաշէն.
Բաժն էր կոլոտ, բըրչամ երկէն.
Կանչեց Մոկաց Միրզէն,
Տարաւ իւր օդէն։
Բէմուրադ կենէր Կոլոտ փաշէն։

Առեց փաշէն, իջաւ չուկէն,
Եառա, առեց մէջ խաղըլէն,
Առեց, բերաւ դանակ դիղից մէկ երեսէն,
Կամեց՝ կամ մ'ինք կերաւ,
Մէկ եառա՝ Մոկաց Միրզէն։
Բէմուրադ կենէր Կոլոտ փաշէն։

Հեծաւ ձին Մոկաց Միրզէն։
Բամից մաղղէն.
Շըրջաւ բալակ աչքեր, կախաւ լամէն.
Թափաւ մըրուսէն,

Թափաւ մազեր կարմիր երեսէն,
Թափաւ բեղեր նազիկ պըռկէն,
Թափաւ գեղին ջուր սիպտակ լեչէն։
Բէմուրադ կենէր Կոլոս փաշէն:
Եկանք, հասանք չուր Խընկատարէն.—
Բարով հասանք չուր Խընկատարէն։—
Տեսանք ժուռ ժուռ նաշը ներքուց բերին։
Հազա՛ր ափսոս Մոկաց Միրզէն,
Բէմուրադ կենէր Կոլոս փաշէն:
Եկանք, հասանք չուր Բըռնաշէն.—
Յարով հասանք զուր Բըռնաշէն։—
Կուժն ու կըթխէն կապուտ նաշէն՝
Պուտ պուտ արիւն Թափէր գետին։
Հազա՛ր ափսոս Մոկաց Միրզէն:

Կ. Վ.

ՑԱՒ ՊԱՆԴՈՒԽՏԻ

Օտար աշխարհ կը թափառիմ կիսաշունչ,
Հօր ու մօրմէ, սիրականէ զըրկուած.
Բիրտ հարուածներ ես կը կրեմ անմըռունչ,
Միթէ սա՞ է սահմանած կեանքն ինձ Աստուած։

Ղարիպ մ'եմ ես, սիրտըս խոցուած ու վշտոտ՝
Խաներու մութ անկիւնները կը հալի.
Հայրենիքիս օդին, ջըրին եմ կարօտ,
Ու քարերուն որք են շատ շատ բաղձալի։

Օտար երկինք ա՛խ, մռայլ է ինձ համար,
Օտար սըրտեր չեն փափախեր, չեն ըզգար,
Մեր ցաւերը, մեր վիշտերը անհամար,
Օտար խիղճեր՝ օտարին դէմ, քար են քա՛ր։

Հ. ՊԷՐՊԷՐԵԱՆ — Տ. ԳԱԼԱՑՃԵԱՆ

ԽԱՉ, ՕԳՆԵԱ ԻՆՁ

Օրօրանիս մօտը նստած՝
Մայրըս անուշ երգելով
Ինձ շատ անգամ քուն էր արած՝
Խաչանըշան կնքելով։

«Աջն ու խաչը քեզ պահապան»,
Անթիւ անգամ կրկնել էր,
Խաչն իր սիրոյն միշտ ապաստան
Ամէն ժամում կաչել էր։

Երբ որ թոթով լեզուս բացաւ՝
Խաչի դասըն աւանդեց.
«Խա՛չ, օգնեա՛ ինձ» կրկնիր, ասաւ,
Գըթոտ սիրով պատուիրեց։

Գ. ԱՍՈՂԻԿ

ՕՐՕՐ

Օրօր, օրօր, իմ սիրունիկ.
Օրօր ասեմ դու նանա՛,
Երկար ապրես կարմիր օրեր,
Կարմիր արև ունենաս։

Օրօր, օրօր, իմ անուշիկ,
Օրօր ասեմ դու նանա՛,
Ալ վարդ դառնան քարն ու փուշը,
Որ ճամբով էլ դու գընաս։

Ռ. ՄԵԼԻՔԵԱՆ

Բ. ՄԱՍ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՊԱՐԵՐԳ ՎԱՆԱՅ

Ա՜խ, սեւաւոր.
Սեւիկ աղջիկ,
Քեզի կուտամ
Վանայ փաշին,
Կարմիր փէսին,
Զօլ չօլ դօշին,
Վա՜յ։

Ա՜խ, մէրի՜կ.
Ես ինչ կ'անեմ,
Վանայ փաշին,
Կարմիր փէսին,
Զօլ չօլ դօշին,
Վա՜յ։

Ղուրբան կ'ելնիմ
Իմ Սադօյին,
Թէք քօլօղին.
Ձեռքի փետին
Զարխի թելին,
Վա՜յ։

Կ. Վ.

ԱՂՈՒԷՍԻ ԵՐԳԸ

ՎԱՆԵՑՈՑ

Աղուէսն էկաւ վիրին թաղէն,
Ոռ՜ւ պր՛ճիճկօ, պրճի՛ճկօ, պրճի՛ճկօ.
Մածուն կէրաւ՝ թափաւ վէրէն.
Ոռ՜ւ պր՛ճիճկօ, պրճի՛ճկօ, պրճի՛ճկօ.
Աղուէսն ասաց, «իմ տեղը նեղ ի»,
Ոռ՜ւ պր՛ճիճկօ, պրճի՛ճկօ, պրճի՛ճկօ.
«Հաւու ճետը փորիս գեղ ի».
Ոռ՜ւ պր՛ճիճկօ, պրճի՛ճկօ, պրճի՛ճկօռ՜ւ:

ԱՂՈՒՈՐՆԵՐՈՒՆ

Աղուորներուն համար Տէ՛ր իմ,
Մոմի նրման պիտի հալիմ.
Չեմ դիմանար ես արեւին,
Տառապանքին ու ծարաւին։

Աղուորներուն համար Տէ՛ր իմ,
Ծառի նրման պիտի աճիմ,
Ես չեմ վախնար փոթորիկէն,
Կայծակներէն ու կըրակէն։

Աղուորներուն համար Տէ՛ր իմ,
Մեռնիլ կ'ուզեմ, ի՞նչպէս ապրիմ.
Աղուորներուն համար Տէ՛ր իմ,
Ապրիլ կ'ուզեմ, ի՞նչպէս մեռնիմ։

Գ. ԱԼԵՄՇԱՀ   Ն. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՆԱԶԵՐՈՎ, ՆԱԶԵՐՈՎ

Աղջիկ, նազերով, նազերով,
Դիլբար, նազերով, նազերով,
Աղջիկ, մի՛ գար մեր կալերով,
Դիլբար, մի՛ գար մեր կալերով։

Դիլբար ձին էր նալերով,
Աղջիկ, մի՛ գար մեր կալերով։

Աղջիկ, մի՛ գար մեր տուն ծուխ ի,
Դիլբար, մի՛ գար, մեր տուն ծուխ ի,
Կարմիր իրես, աչքեր թուխ ի։

Արի՛ երթանք հորթկայ խոտիկ,
Դիլբար, երթանք հորթկայ խոտիկ,
Տեսնենք վի՞ր եարն է խորոտիկ։

Աղջիկ, նազերով, նազերով,
Դիլբար, նազերով, նազերով։

Ռ. ՄԵԼԻՔԵԱՆ

ԱՂՋԻԿ ՈՒՆԻՄ

Աղջիկ ունիմ հունարի,
Գըլխին ունի ջունարի,
Աղջիկ ունիմ հունարի,
Բոյը սալը ու չինարի։

Աղջիկ ունիմ հունարի,
Տալ չեմ հազար թումանի,
Գըլխին ինչքան մազ ունի,
Էնքան իլթիմազ ունի։

Բուրդ բերէք րաժինք անի,
Ուղտ բերէք բարձի տանի,
Գեղով կըգան խնամի,
Տալ չեմ աղջիկըս տանի։
Որ խընամին քեզ տանի,
Բաս քու մէրն ի՞նչ անի,
Ով կարայ որ քեզ տանի,
Իր մօր ձեռից դուրս հանի։

Կ'ԵԱՆՔՆ ԱՆՈՒՇ

Ամպն ի երկինք, հովն անո՛ւշ,
Ծառ ու ծաղիկ, թովն անո՛ւշ…
Մարմանդներու մովն անո՛ւշ,
Մեր արտերու ծովն անո՛ւշ։

Մըշակներու քէլքն անո՛ւշ,
Կուռ չարքերու փէլքն անո՛ւշ…
Աշխատանքի երգն անո՛ւշ,
Աշխատաւոր ձեռն անո՛ւշ։

Գաղիտ փիրուզ կեանքն անո՛ւշ,
Մէջը տըռուզ հասկն անո՛ւշ…
Սէր, ժպիտ, յոյզ, բերքն անո՛ւշ,
Վառ արեւլոյս կարգն անո՛ւշ։—

ԳՐ. ՍԻԽՆԻ

ՍԻՐՏՍ

Ա՛յ հեւ է, հեւ է սիրտս…
Թիթեռի թեւ է սիրտըս.
Քանց սէրը կրակ չըկայ,
Անուզզայ խեւ է սիրտըս։

Ա՛յ հեւ է, հեւ է սիրտըս…
Աշնան արեւ է սիրտըս.
Քանց այգին բարի չըկայ,
Չորցած տերեւ է սիրտըս։

Ա՛յ հեւ է, հեւ է սիրտըս…
Անհանգարտ դեւ է սիրտըս.
Քանց մահը քաղցրիկ չըկայ,
Ալ բա՛ւ է՝ տուէք սիրտըս…

Հ. ԱՐԵԳԵՆՑ

ԱՅՆՊԷՍ ՆԱԶԻԿ

Այնպէս նազիկ, այնպէս թեթեւ, այնպէս օրօր,
Փայլում ես դու։

Ոսկեհուսիկ, օ՜, հրաթեւ, այնպէս բոսոր
Փայլում ես դու։

Դու վիթ անհօտ, դու խուսափուկ, այնպէս անուշ,
Նայում ես դու։

Եւ այնպէս տօթ, այնպէս փափուկ, այնպէս քընքուշ,
Փայլում ես դու։

Նայուածքըդ տէգ, ժպիտըդ նետ, օ՜, խընայի՛ր,
Խայթում ես դու։

Ինքըդ արեւ, սէրըդ աղէտ, օ՜, մի՛ նայիր,
Դիւթում ես դու։

Աշխարհն ամէն քո ոտքի տակ, թագուհու պէս
Տիրում ես դու։

Օ՜, հրեղէն չար արեգակ, ում որ նայիս,
Այրում ես դու։

Վ. ՏԷՐԵԱՆ

Ա. ՏԵՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ

ՔԵՕՐՕՂԼԻ

Ա՛յ Քէօրօղլի, ջա՛ն Քէօրօղլի,
Քեզ խաբեց Համզան Քէօրօղլի,
Հա՜յ, հա՜յ, հա՜յ.
Բայց որ դարձար դու ջաղացպան,
Կանչիր թող գան, ջա՛ն Քէօրօղլի, ջա՛ն,
Ջա՛ն Քէօրօղլի, ջա՛ն.
Ջա՛ն Քէօրօղլի, ջա՛ն։

Մարդուս բաղդն էլ ահա էսպէս
Պըտըտւում է ջաղացքի պէս. հէ՜յ…
Մէկ օր ահռելի վիշապ ես,
Միւս օր ջաղացպան՝ Քէօրօղլի. ջա՛ն…

Թէեւ ղըր-աթիցըդ զըրկւած,
Բայց թուր ունես վըրէդ կախած. հէ՜յ…
Համզան բոտրուկ թոկից փախած.
Բայց դու էլի ջա՛ն Քէօրօղլի. ջա՛ն…

Բայց դու էլի Քէօրօղլին ես,
Ժողովուրդին սիրելին ես. հէ՜յ…
Թէկուզ ջաղացպան էլ լինես,
Քեզ պատիւ կը տան Քէօրօղլի. ջա՛ն…։

Ա. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ

Ղ. ԱՂԱՅԵԱՆ

ԱՅԾԵԱՄ

Անհոգ ես, չես գիտեր ինչ կայ քո մասին.
Պտըտում են քո խեղճ անձի վնասին.
Դամրոններով, բարակներով միասին.
Փախիր, այծեամ, փախիր, որսկանն է գալիս.
Ձագուկներդ տխուր, լալիս են լալիս:

Որսկանը հրացով քեզի ման կուգայ,
Կ'ուզէ ձեռքերը արիւնովդ լուայ.
Խղճալի քո տղաք սար ու ձոր կուլան.
Փախիր այծեամ, փախիր, եղն։
Որսկանը գութ չունի, կ'անէ կրակը,
Կամ քեզի կ'սպաննէ կամ քո զաւակը,
Ի զուր չ'անցնիր հրացանի գնդակը։
Փախիր այծեամ, փախիր, եղն։
Ջորեր մի' մտներ, վտանգաւոր է.
Որսկան ման կուգայ այնտեղ, սովոր է,
Թարայրից խփելով քեզ կը գլորէ։
Փախիր այծեամ, փախիր, եղն։
Դաշտումը ման մի գար, թէ մտածես լաւ,
Քեզ կը վիրաւորեն, կ'ստանաս մեծ ցաւ.
Դուրս մի ելլեր դու խիտ անտառից բնաւ,
Փախիր այծեամ, փախիր, եղն։

ՋԻՒԱՆԻ

ՕՐՕՐ

—Անուշ քնիկ աչերն առեր,
Անուշ հովերն ալ տարուբեր.
Իմ տատրակիս քունն է եկեր,
Անուշ երգով ըսեմ օրօր։

—Ես քուն չունիմ, անգութ մայրիկ,
Հերիք աչերս կապես, հերի'ք.
Մէկ պահիկէն կ'ընեմ պաճիկ,
Զիս արձակէ մ'ըսեր օրօր։

—Մինչև չիլան մատաղ մանկտիք,
Ծիծ չեն խտար անոնց, գառնի'կ.
Դուն չլացած, իմ մէկհատիկ,
Ես ծիծ կուտամ, կ'ըսեմ օրօր։

—Խղճուկ սրտով ձայն եմ ձգեր,
Կը ճըճըւամ դուն չես լսեր.
Անուշ ձայնիդ ես զմայլեր,
Ես կուլամ, դուն կ'ըսես օրօր։

—Արցունքներըդ մարգարտի պէս
Երեսդ ի վար ի՞նչ կը թափես.
Մի' լար ձագուկ, մի' լար, մեղք ես.
Ով կ'ուզես՝ ան ըսէ օրօր։

—Դիրկդ ինծի հանգստարան,
Ծիծերդ բերնիս անուշ ծորան.
Իրիկուան դէմ պառկիմ օրրան,
Աչքըս գոցէ, ըսէ օրօր։

—Քընացընեմ իմ աղաւնիս,
Մեծացընեմ սիրով որդիս.
Կարմիր վարդի նման բացուիս,
Շուքըդ նստիմ ըսեմ օրօր։

—Քիչ մը թուլցուր թևերս, ոտքերս,
Ալ թըմրեցան փափուկ մսերս,
Անուշ մըրափն առնէ աչերս,
Ապա սեղմէ, կարդա օրօր։

—Այդ սուտերովդ չեմ խաբուիր ես.
Կ'ուզես որ զիս նստեցնես,
Չի քընանաս, ծիծըս ուտես,
Դատարկ տեղը ըսեմ օրօր։

—Քիչ մը ճօճօր, քիչ մը ճարճար,
Քիչ մը տանտան, քիչ մը պարպար.
Քիչ մ'ալ պապան՝ առ հօպպա տար,
Քիչ մ'ալ մէնմէն, հոքը օրօր։

—Այդ քու լեզուդ կ'ուտեմ հիմա,
Քու կանգունովդ կտաւ չըկայ·
Տանտան, մէնմէն ալ հարարա,
Աչուկ պահպահ, ըսեմ օրօր։
—Սիրտդ քար է, ալ հասկցայ,
Լացի, լացի, ճար չգտայ·
Ալ քնանամ, ճարը չկայ·
Երկա՜ն, երկա՜ն ըսէ օրօր։

Բ. Ս. ՍԱՀԱԿԵԱՆ

ԳՕՁԱԼ

Անգին ակըն վըրէդ շարած՝ անրան ոսկու ռախտ ես, գօզալ·
Աստուած քիդ ու նըրան պահէ՝ ում հիդ վուր նըշխանտ ես, գօզալ·
Բլբուլին լեզու չինէցիր՝ դուն վարթի դըրախտ ես, գօզալ·
Վարթըն՝ մէկ ամիս ումըր ունէ, դո՛ւն ամէնան վախտ ես, գօզալ։

Մէմէկ մէմէկ է՛լ չ'ի սալի՝ Թարիփը զարաւ քուլինչօվ·
Պատիրըդ՝ զարօվ զըրբարօվ, գօշամէդ խալօվ խալինչօվ,
Տախտակնիրըն՝ էրծաթէմէն, միխիրըն՝ ոսկէ գուլինչօվ·
Խօսրօվ փաշայմէն թօղած, դո՛ւն, թօփուղի տախտ ես, գօզալ։

Սկանդարի Զուլղարի թօղած ջավահիր ես, անգին լալ ես.
Դանգըն դանգի միչէն հանած, հիդքաշած մըխալ մըխալ ես.
Եփ դուն սէյրանգահըն կ'էհաս՝ ոչ օվ այնումըդ 'է գալիս,
Փաք չ'ունիս փաշահզադիմէն, անգամ՝ առանց սախտ ես, գօզալ։

Թէգուզ մըտօք ճարտար ըլի, կանց Սօղօմոն դադա ըլի,
Թէգուզ մարքարիտօվ լիքըն. թէգուզ սադափ սադա ըլի.
Թէգուզ արէգագ լուսնիակ. թէգուզ հուրիզադա ըլի.
Էտ քո՛ւ ամէն մարիփաթօվ գիփունին կու ախտիս, գօզալ։

Երգնուց վըրէդ ձուն է էկի՝ փունջ մանիշակ նուր ես, ջանում.
Մօդըդ նըստօղն կու էրվի՝ էտ նազի տէր վուր ես, ջանում.
Դիռ Սայեաթ-Նօվէն չ'է մէռնի՝ դուն ինչի՞ տխուր ես ջանում.
Թաք ես մէռնիմ, դուն սաղ ըլիս. գէրէզմանըս վաղ տի՛ս, գօզալ.

1758 ՍԱՅԵԱԹ ՆՕՎԱ

ՀԻԱՍԹԱՓՈՒՄ

Անցո՛րդ, դուն չես այն երազը գըրգալիր
Որ միտքիս մէջ կուգայ հիւ։
Ցակինթի շողն ես կ'երազեմ Թարթափուն,
Անհուն խաւար մըն ես դուն։

Կը Թափթըփի ըղձայլանքի փունջս համայն,
Ծաղիկները վար կ'իյնան,
Ա՜հ, մի՛ բըռներ ձեռքերովդ Թերթերնին,
Իրենք իրենց թող մեռնին։

Անոնց մահուան յուղարկաւոր միայն ե՛ս,
Գիտի ըլլամ միայն ես,
Ու պիտ' կանչեմ հովերն, անձրեւն ու քամին.
Որ գան առնեն ու տանին։
Անցո՛րդ, դուն չես այն երազը գըրգալիր։

ԱՐԱՑ ՊԱՐԹԵՒԵԱՆ ՀԱՅԿԱՆՈՒՇ ՄԱՌՔ

ՆՈՐ ԳՈՒԹԱՆ

Ալագեազ Թաւ գօշերում,
Երգն է հընչում մեր հանդերում։
Հէ՜յ ջան, հէ՜յ ջան, լէ, լէ. լէ,
Երգն է հընչում մեր հանդերում։
Հէ՜յ ջան, հէ՜յ ջան, լէ, լէ, լէ, լէ,
Երգն է հընչում մեր հանդերում։

Հէ՜յ, սեւ հողեր, վար կ'ուզէք,
Գութանի պէս եար կ'ուզէք՝
Հէ՜յ ջան, հէ՜յ ջան, լէ, լէ, լէ,
Գութանի պէս եար կ'ուզէք.
Հէ՜յ ջան, հէ՜յ ջան, լէ, լէ, լէ, լէ,
Գութանի պէս եար կ'ուզէք՝

ՎԱՐԴԳԷՍ ՏԱԼԵԱՆ ԱՐ. ՏԻԳՐԱՆԵԱՆ

ԱՇԽԱՐՈՒՄՍ ԱԽ ՉԻՄ ՔԱՇԻ

Աշխարումըս ա՛խ չ՛իմ քաշի, քանի վուր ջա՛ն իս ինձ ամա.
Անմահական ջըրօվ լիքըն օսկէ փինջան իս ինձ ամա.
Նըստիմ. վըրէս շըվաք անիս՝ ղարըբաղ վըրան իս ինձ ամա.
Սուչս իմացի՛, էնէնց սպանէ՝ Սուլթան ու խան իս ինձ ամա։

Մէչկըդ սալըբու չինարի պէս, ռանգըդ Փըռանգի ատլաս է.
Լիզուդ շաքար, պըռօշըդ ղանդ, ակռէքըդ մարքրիտ ալմաս է.
Օսկու մէչըն մինա արած աչկիրըդ ակնակապ թաս է.
Պատվական անգին ջավայիր, լալ Բադէշխան իս ինձ ամա։

Ես էս դարդին վո՞ւնց դիմանամ՝ մադա՞մ սիրտըս ունիմ քարած.
Արտասունքս արուն չինէցիր, խիլքըս գըլխէս ունիմ տարած.
Նուր բաղ իս, նուր բաղչի մէչըն բօլօրքըդ վարթօվ չափարած.
Վըրէդ շուռ գամ բըլբուլի պէս՝ սիրօվ սէյրան իս ինձ ամա։

Քու էշխըն ինձի մաստ արաւ. ես զարթուն իմ, սիրտս է քընած.
Աշխարս աշխարօվ կըշտացաւ, իմ սիրտըս քիզնից սօվ մընաց.
Եար, քիզ ինչօ՞վ թարիփ անիմ՝ աշխարումըս բան չը մընաց.
Կրակէ ծօվէմէն դուս էկած՝ ռաշ, ջէյիրան իս ինձ ամա։

Ի՞նչ կու՛լի մէկ հիգըս խօսիս՝ թէ վուր Սայեաթ-Նօվու եար իս.
Ծուխկըդ աշխարըս բըռնիլ է՝ արէգագի դէմըն փար իս.
Հուտօվ՝ հիլ, միխակ, դարիչին, վարթ, մանուշակ, սուսանբար իս.
Կարմըրագուն դաշտի ծաղիկ, հօվտայ շուշան իս ինձ ամա։

ՊԱՐ ՆԱԽԱՏԵԱՑ

Աշխոյժ նաւաստին
Անվեհեր ճակատ՝
Ընդդէմ փոթորկին,
Երգէ անփոյթ, զուարթ՝
Լարի՛բ, թիւմպէրէլէլլէ, հա՛ հա՛, հա՛:

Կոհակք փրփրադէզ
Զեն սոսկում, վախ մեզ,
Հողմունք սաստկահար
Գրգռեն մեզ ի պար՝
Լա՛րիբ, թիւմպէրէլէլլէ, հա՛, հա՛, հա՛:

Օ՛ն, խըմենք զուարթ,
Գինին մինչ յատակ.
Օ՛ն, գրկենք զիրար,
Պարենք անդադար՝
Լա՛րիբ. թիւմպէրէլէլլէ, հա՛, հա՛, հ՛ա:

Լռեցէ՛ք, գիտցէ՛ք,
Մինչ մենք հոս եկած ենք.
Ահա ծերն՝ իւր ոտքերն
Հոս հոն շուռ՝ տանի փոյթ՝
Լա՛րիբ, թիւմպէրէլէլլէ. հա՛, հա՛. հա՛:

Ա՛յ, ա՛յ, ա՛յ, պիտ՚ իյնայ,
Օ՛ն, բռնենք՝ մեզք է մե՜ղք.
Հա՛ հա՛ հա՛ կը խընդայ,
Ամէնքս ալ ծափ զարնենք՝
Լա՛րիբ. թիւմպէրէլէլլէ, հա՛, հա՛, հա՛:

Ջանգակն ուժգնապիրկ
Կոչէ մեզի կարգ,
Վերջ տանք խնդութեան,
Քաշենք մեր պարան։
Լա՛րիք, քիւմպէրէկլլէ հա՛, հա՛, հա՛:

ԱՄՊԵՐՈՒՄ ԹԱԳՆԸՒԱԾ

(ՔԷՕՐՕՂԼԻ)

Ամպերում թագնըւած, իմ սիրուն արեւ,
Մէկ փայլում ես, մէկ էլ ծածկւում խաւարում.
Վանդակի մէջ դրւած սոխակի նման,
Մէկ երգում ես, մէկ էլ լռում ու տխրում.
Ինչո՞ւ, հոգիս, ինչո՞ւ,
Ինչո՞ւ ես տխրում,

Արեւազուրկ ծաղիկ, անջուր գալկահար,
Վարդ, դու կուզես քիչ մը բիւլբիւլ սիրահար,
Ազատ մարդըդ քեզ անում է կոցահար,
Գիտէ որ դու իրան սրտով չես սիրում.
Ինչո՞ւ, հոգիս, ինչո՞ւ,
Ինչո՞ւ չես սիրում։

Քէօրօղլուս պէս մի քաջի ես դու արժան,
Որ դրախտ դարձնեմ այդ կեանքըդ դաժան.
Դու կը լինիս իմ սիրուհիս անբաժան,
Այժմէն իսկ իմ հոգին քեզ եմ նըւիրում.
Հաւատա՛ ինձ, հոգի՛ս,
Քեզ եմ նըւիրում։

Ղ. ԱՂԱՅԵԱՆ

ԱՌԱՆՑ ՔԻԶ Ի՞ՆՉ ԿՕՆԻՄ

Առանց քիզ ի՞նչ կօնիմ սօյրաթն ու սազըն,
Ջէռնէմէս վէր կօծիմ չանգիրըն ու մէմէկ,
Զունքի ուշկ ու միտկըս իրար շաղէցիր,
Փահմէս կու հիռացնիմ հանգիրըն մէմէկ։

Մէ գուգունըն էրկու դաղին ի՞նչ անէ,
Մէ նօքարըն էրկու աղին ի՞նչ անէ,
Մէ բաղմանչին էրկու բաղին ի՞նչ անէ,
Փէյվանդ գ՚ուզէ թազա տընգիրըն մէմէկ։

Ղուրթ ին ասի փիր ուստաքար դադիրըն.
«Բաղ չինէցի, վարթն քաղէցին վադիրըն.»
Ջափէն ես քաշէցի, սափէն եադիրըն.
Բաղիփէն էկաւ միզ էս բանգիրըն մէմէկ։

Առանց քիզ ի՞նչ կօնիմ աշխարհս մալըն.
Չ'իմանայ փալազըն, *չ'իմանայ* ղալըն,
Կու հաքնիմ մաղէղէն, կու հաքնիմ շալըն,
Կ'էրթամ ու ման գու քամ վանքիրըն մէմէկ։

Բըլըքամ մէ մարթ ռաստ գա՛յ՝ վուր ինձ խըրատէ.
Գօ՛զալ, քու էշխէմէն սիրտըս ազատէ,
Կանց եօթըն իմաստնասիրայըն շատ է՝
Է՛ս քու. Սայա՛թ-Նօվա, բանքիրըն մէմէկ։

ՍԱՅԱԹ-ՆՕՎԱ

ԼՈՐԻԿ

Առաւօտուն փըշից հով,
Արտը ծըփաց, դարձաւ ծով,
Արտի միջից թըռաւ լոր,
Թըռաւ ընկաւ ձորէ ձոր.
Կըլորիկ, գըլորիկ ա՜յ լորիկ,
Օրոր-մորոր շորորիկ:

Լօրիկ, լօրիկ, էս տարի
Արտըս արել եմ գարի,
Ուր որ երթաս, չո՛ւտ արի,
Արտիս միջին ծըւարի.
Կըլօրիկ, գըլօրիկ ա՛յ լօրիկ.
Օրօր-մօրօր ծօրօրիկ:

Ա. ԽՆԿՈՅԵԱՆ

ՋԱՆ ԳԻՒԼՈՒՄ

Արեւը կամար-կամար,
Ջան գիւլում ջա՛ն ջա՛ն,
Կապել է ոսկի քամար,
Ջան ծաղիկ ջա՛ն ջա՛ն.
Ցիսուն օր պաս եմ պահել
Ջան գիւլում ջա՛ն ջա՛ն,
Իմ ախպօր ճամբի համար,
Ջան ծաղիկ ջա՛ն ջա՛ն:

Իմ ախպէրը սարումն ա,
Ձըւին դօշնածալումն ա.
Ախրէ՛ր ջան չըւիդ ածա՛
Քոյրըդ Լոռւայ քարումն ա։

ԱՐԻ՛ ԻՆՁ ԱՆԳԱՃ ԿԱ՛Լ

Արի՛ ինձ անգաճ կա՛լ, ա՛յ դիվանա սիրտ,
Հայա սիրէ՛, ազար սիրէ՛, ար սիրէ՛.
Աշխարքըս քունն ըլի, ի՞նչ պիտիս տանի՝
Աստուած սիրէ՛, հօքի սիրէ՛, հար սիրէ՛ ։

Էն բանն արա՝ վուր Աստուծու չարքումն է,
Խըրատնիրըն՝ գըրած Հարանց վարքումն է,
Երիք բան կայ՝ հօքու մարմնու կարքումն է՝
Գիր սիրէ՛, ղալամ սիրէ՛, դավթար սիրէ՛ ։

Ե՛կ արի՛ սի՛րտ, մի՛ կէնա դուն մէ դամաղի,
Հալալ մըտիկ արա՛ հացի ու աղի,
Հէնց բան արա՝ մարթ վըրէդ չը ծիծաղի՝
Խըրատ սիրէ՛, սաբըր սիրէ՛, չար սիրէ՛ ։

Հընպարտութին չ՚անիս՝ դուր գուքաս Տէրիդ,
Խօնարութին արա՛ կանց քիղ դէվէրիդ,
Աստուած դիփունանցըն մին հօքի էրիտ՝
Աղկատ սիրէ՛, ղօնաղ սիրէ՛, տար սիրէ՛ ։

Սայա՛թ-Նօվա, էրնէ՛կ քիղ, թէ է՛ս անիս՝
Հօքուդ խաթրի մարմնուդ ունըրը կէս անիս.
Թէ գ՚ուզիս վուր դադաստան չը տէսանիս՝
Վանք սիրէ՛, անապատ սիրէ՛, քար սիրէ՛ ։

1753 ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ

Ա՛Խ, ՀԱՅԿԱՆՈՅՇ

Արխալուխըդ կարել եմ,
Ոսկի կոճակ շարել եմ,
Ա՛խ, ա՛խ, Հայկանոյշ,
Նանի ջան, դարդ մի անի,
Ես սիրածըս ճարել եմ։
Հայկանոյշ, Հայկանոյշ,
Պաչիկներըդ մեղրէն աւելի՛ անուշ:

Բանքուլիդ կալին մեռնիմ,
Երեսիդ խալին մեռնիմ,
Ա՛խ, ա՛խ, Հայկանոյշ,
Լըսել եմ կարդացող ես,
Սաղմոսիդ ձայնին մեռնիմ։
Հայկանոյշ, Հայկանոյշ, և լն.

Ծառին տակը հով քամի,
Բանքուլըդ քամին տանի,
Ա՛խ, ա՛խ, Հայկանոյշ,
Բա՛, դու սարում ու ձորում,
Իմ քունը ո՞նց կը տանի։
Հայկանոյշ, Հայկանոյշ, և լն։

ԲԱՄԲԿԻ ՏԱԿԻՆ

Բամբկի տակին գիւլամբարին,
Սիրել եմ Թագա Նուբարին։
Մեր բամբակը, ձեր բամբակը՝
Գիւլ-Նուբարին,
Սիրել եմ Թագա Նուբարին։

Դու դաշտ կուգաս հուլա-հուլա,
Կու նըմանիս բամբկի քուլա.
Աչքըս տեսաւ սիրտըս կուլայ,
Գիւլ-Նուբար ջան,
Կու նըմանիս բամբկի քուլա։

Մեր ջուխտ գուլթան դաշտ կու բանի,
Գիւլ-Նուբարը հաց կու տանի.
Աչքով, ունքով մարդ կու՛ սպանի,
Մարդ կու սպանի,
Գիւլ-Նուբարը հաց կու տանի։

Ռ. ՄԵԼԻՔԵԱՆ

ԻՄ ԵՐԳԸ

Գանձեր ունեմ անտակ անծէր,
Ես հարուստ եմ, ջան, ես հարուստ,
Ծով բարութիւն, շընորհք ու սէր,
Ճոխ պարգեւ եմ առել վերուստ։

Անգին հանքը իմ գանձերի,
Սրտիկս է չէն ու ազատ,
Ինչքան էլ որ բաշխեմ ձրի,
Սէրն անվերջ է ու անհատ։

Եար նա նա նայ, ջան նա նա նայ.
Եար նա նա նա նայ. Եար նա նա նայ,
Ջան նա նայ. Եար նա նա նա նայ:

Երկիւղ չունեմ, ա՛հ չունեմ ես,
Գողից, չարից, չար փորձանքից.
Աշխարհքով մին ահա էսպէս՝
Շաղ եմ տալիս իմ բարձունքից։

Ես հարուստ եմ, ես բախտաւոր
Եմ, ծընընդեան պայծառ օրէն,
Էլ աշխարհ չեմ գալու հոն որ
Իր տուածն եմ տալիս իրեն։

Եար նա նա նայ. ջան նա նա նայ,
Եար նա նա նա նայ, Եար նա նա նայ,
Ջան նա նայ, Եար նա նա նա նայ:

Գ. ԱԼԵՄՇԱՀ Յ. ԹՈՒՄԱՆԵԱՆ

ԳՈՎՔ ՆԱՐԻՍ

Գարնան նըման խայտալով,
Մարող կեանքիս շունչ տուիր,
Հուր աչքերովդ ծով-ծով,
Սիրտըս նորից վառեցիր։

Քաղցրաժպիտ Մայիս ես,
Լուսիկ, յուսիկ ինձ համար,
Ինչպէս հրեշտակ գալիս ես
Սըգաւորիս մխիթար։

Վարդի նըման բուրաւէտ,
Գոհար շաղով դու ցօղուած,
Բլբուլ դարձայ ես քեզ հետ։
Ձեռքիդ գերի կախարդուած։

ՅՈՎՀ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ՍԱՐՕՆ ԵՒ ՄԱՐՕՆ

ՍԱՐՕ.— Գարունն եկաւ, Մարօ ջան,
Արեւն ելաւ վառուն,
Ծըլքըլչում են, եարօ ջան,
Սառն աղբիւրներն, առուն.
Մեր երկիրն էլ, Մարօ ջան
Ոնց որ ծաղկած գարուն.
Էս ի՞նչ անուշ ու վառ ես,
Ջա՞ն, սաւետի երկիր։

ՄԱՐՕ.— Արեւն ելաւ, Սարօ ջան,
Պաչեց դօշը սարի,
Քո արօրը, եարօ ջան,
Քըշիր դէսը արի.

Թեւըդ քըշտիր, Սարօ ջան,
Մեր արտերը վարի,
Էս ի՞նչ անուշ ու վառ ես,
Ջա՞ն, սաւետի երկիր։

ՍԱՐՕ.— Ջահել ես դու, Մարօ ջան,
Ոնց որ կարմիր խընձոր,
Աշխատում ես եարօ ջան
Արտումը հընձւոր.
Դու մեր գեղին Մարօ ջան
Արեւի շող ոնց որ,
Էս ի՞նչ անուշ ու վառ ես,
Ջան սաւետի երկիր։

Ռ. ՄԵԼԻՔԵԱՆ — Ա. ՎՇՏՈՒՆԻ

ՊԷՊՈՅԻՆ ԵՐԳԸ

Դամբը ձեռիս աշխատում եմ,
Հալալ աշխատանքս եմ ուտում,
Վա՜յ էն մարդին աշխարհումըս,
Խալխի դատած հացն է ուտում։

Հալալ մարդու սիրտը ուրախ.
Ճակատը միշտ բաց է ըլլում,
Վա՜յ էն մարդին, որ համ գըջլում,
Համ էլ անկուշտ լաց է ըլլում։

Դամբը ձեռիս ջուրն եմ մտնում,
Գըլգըլալէն քըտինք թափում,
Տանը նըստած առանց հացի
Բիրս ու գեղիս լաց են ըլլում։

Լուսնակը լուս, գիշեր խաւար,
Առաւօտը բաց է լինում,
Խլբլթալէն լօթի ձրկներ՝
Բազարումը հաց են ըլլում։

Ա. ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ　　　Ե. ՉԱՐԵՆՑ

ՀԻՒՂԸ

Դաշտի ճամբու մը վրան,
Կամ ըստորոտը լերան,
Ուղեւորին ժամանման
Ըսպասող հիւղն ըլլայի.
Ու գրգուանքիս կանչէի
Ես ճամբորդներն անժաման,
Ու ճամբուն վրայ մենաւոր,
Ու ճամբուն վրայ ոսկեման,
Եկւորներուն դիմաւոր՝
Ծըխանիս ծուխն ամպէի.

Ու գրգանքիս կանչէի
Ուղեւորներ պարտասուն,
Ու բարեւի մը փոխան՝
Հազար բարիք ես տայի։
Հազար բարիք ես տայի,
Դոյլ կրակին ճարճատուն,
Կութքը բերրի դաշտերուն,
Բոլոր միրգերն աշունի.
Ու մեղր ու կաթ ու գինի....

Ու ձմեռներն ալ համբուն,
Հըրաւիրակ զըւարթուն,
Կանգնէի քովը ճամբուն.
Ու ձիւնապատ հէք մարդուն

Ես հայրօրէն լայնաբաց
Երկու թեւըս պարզէի.
Միշտ քաղցրագին, նիւթացա՛ծ,
Հրաւէ՛րն ես ըլլայի։

Ա՛հ, ըլլայի՛, ըլլայի՛,
Դաշտի ճամբու մը վրան,
Կամ ըստորոտը լերան,
Ուղեւորին ժամանման
Ըսպասող հի՛ւղն ըլլայի։

ԱՐԱՑ ՊԱՐԹԵՒԵԱՆ　　　Մ. ՄԵԾԱՐԵՆՑ

ՍԻՐԵՐԳ

Դուն ելեր ես սարն ի սէյրան,
Դու կը նմանիս չոլի ջէյրան,
Ջահիլ տըղան ըրիր հայրան.
　Կայնի՛ր սէյր անեմ, սէյր անեմ,
　Բոյիդ հայրան եմ, հայրան եմ:

Դուն ելեր ես վերի վերի,
Կըրակն ընկեր, սիրտըս կերի,
Ջահիլ տըղան ըրիր գերի.
　Կայնի՛ր սէյր անեմ, սէյր անեմ,
　Բոյիդ հայրան եմ, հայրան եմ:

Դուն ելեր ես կըտըրները,
Դեղին բաբուջ կըրընկները.
Կիւլ ա փաթին բըռընկները.
　Կայնի՛ր սէյր անեմ, սէյր անեմ,
　Բոյիդ հայրան եմ, հայրան եմ:

Դուն ելեր ես լըւացք կ'անես,
Շամամ ծիծերըդ բաց կ'անես,
Ինձ տեսնելիս սուտ լաց կ'անես.

Կայնի՛ր, սէյր անեմ, սէյր անեմ,
Բոյիդ հայրան եմ, հայրան եմ:

Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

ԿԱՆՉԸ

Ելէ՛ք, ելէ՛ք, որ նորից
Երգերն հընչենք մեր ձորից,
Ելէ՛ք, հողն է խորուել,
Ելէ՛ք, առնենք հոռուել:

Հէ՛յ, քարակող ձորերից,
Անձուկ ու մութ հորերից,
Քարափներից, ջրափից,
Ելէ՛ք, ելէ՛ք, մրափից:

Ելէ՛ք, ելէք միաձայն,
Թողէք ձեր հին կեանքը ծոյլ,
Էս արեւոտ վառ օրին՝
Կապէք եղներն արօրին,

Հէ՛յ, դարաւոր խուղերից,
Աւաններից, գիւղերից,
Թաց պատերից, մութ հորից,
Ելէ՛ք, ելէ՛ք, դուք նորից:

Կ. ԶԱՔԱՐԵԱՆ

ԳԻՒՂԱՑԻ ԳԵՂԵՑԿՈՒՀԻՆ

Ես քեզ տեսայ երբ կուգայիր հով սարից,
Դուն կ'երգէիր էշխով տարուած՝ քո եարից.
Բիւլբիւլն առաւ քո անուշ ձէն, լուռ եղաւ,
Ես գինովցայ էն քո երգած՝ հուր սէրից:

Ա՛յ, ա՛յ, նազերով, ա՛յ, ա՛յ, սազերով սարն եկար,
Մեր բիւլբիւլի երգն խլելով տուն եկար:

Ես քեզ տեսայ՝ վարդի թուփին մօտ կանգնած,
Կոյս վարդերով շուշան կուրծքըդ զարդարած...
Քեզ նայողներ՝ քո բոյր, գեղով շիկնեցան,
Ես մնացի անհուն սէրովդ ըզմայլած...,

Ա՛յ, ա՛յ, նազերով, ա՛յ ա՛յ, սազերով դուրս եկար,
Մեր պարտէզի փունջ վարդերով տուն եկար:

Հ. ՊԵՐՊԵՐԵԱՆ — Յ. ՔՀ. ՍԱՐՀԱՏԵԱՆ

ՈՒՇ ԳԻՇԵՐԻՆ

Ու ուշ գիշերին,
Յոգնած մի ալիք,
Լացով, յառաչով,
Եկաւ ու ինկաւ
Գիրկը մայր երկրի·
Ա՜խ, ճակատս յոգնած
Ո՞վ պիտի շոյէ,
Ու ո՞ւմ սիրտն է բաց
Այս հեռու օտար
Ափում ինձ համար:

Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ — Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ԱՇԽԱՐՀՈՎ ՄԷԿ

Է՜յ, հէ՜յ, ինչքա՜ն սրտեր ունենք՝
Աշխարհով մէկ, աշխարհով մէկ,—
Ջահել սրտի մարդեր ունենք՝
Աշխարհով մէ՜կ, աշխարհով մէ՜կ։

Արեւն ելել, սարն է փռնել,
Շողքը կարմիր ճամբէքով մէկ.
Աշխատանքի արտն է բռնել,
Հանդն ու արտն աշխարհով մէկ։

Գութանների ձէնն է ընկել
Դաշտերի մէջ աշխարհով մէկ.
Գեղ-գեղովի իրար ընկեր
Աշխատանքի՝ աշխարհով մէ՜կ։

Առուների ջուրը էս օր
Առատ-առատ դաշտերով մէկ.
Վառ ու պայծառ սրտերը մեր՝
Աշխարհի դէմ, աշխարհով մէ՜կ։

ԱԶԱՏ ՄԱՆՈՒԿԵԱՆ   ԱՂ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

ՌԱՆՉՊԱՐԻ ԵՐԳԸ

Է՜յ, ջան սարեր, ոսկի սարեր,
Ձերն ա հիմի ուժը մեր,
Ձեր սըվխըրեան դոշին մատաղ,
Մերն ա հիմի բերքը ձեր։

Ջա՜ն, էլ չը կան օրերն էն հին,
Չը կայ հանող մեր հոգին.
Քաշի՛ Բաշօ, քաշի՛ Մանած,
Հօ՜, հօ՛, քաշէ՛ք, քիչ մնաց։
Է՛յ, ջան սարեր, ոսկի սարեր,
Ջան սարեր։

Կ. ԶԱՔԱՐԵԱՆ   Ե. ԳԱԼԱՅՃԵԱՆ

ԷՇԽԷՄԷԴ ՀԻՎԱՆԴԱՑԻԼ ԻՄ

Էշխէմէդ հիվանդացիլ իմ, գիդի համա իմ լալի.
Վախում իմ թէ դարդըն հալէ, եդի համա իմ լալի.
Շահի կարքած վէքիլի պէս գիդի համա իմ լալի.
Տանէն դուս արածի նըման տիդի համա իմ լալի։

Մէ տիդ հուքմի հէքիմ չը կայ՝ դուարըն է համ, կանչիմ հարա.
Վի կէնայ Լօղմայ հէքիմըն՝ բալքամ դարդիս անէ չարա.
Տի՛ս թէ ինչպէս է չըփօթիլի՝ դու իմ խիլքին մըտիկ արա՛.—
Ջուրըն էկաւ՝ գէրանս տարաւ, ծիդի համա իմ լալի։

Սըրտըս էշխէմէն էրած է, դուգուն դաղըն ի՞նչ կօնիմ
Վո՛ւնց զօրա ունէ, մո՛ւնց չափար՝ ես էնպէս բաղն ի՞նչ կօնիմ.
Անգի լարըն կըտըրվիլ է՝ դարդակ սազաղն ի՞նչ կօնիմ.
Նիտըս քարումըն կօտրէցի, թիդի համա իմ լալի։

Ղալամըն գիրըս չ'է գըրում՝ մէչ չուրացած թանքի նըման.
Խօսկիրըս մէմէկ չ'ի սալի՝ իմաստնէրու բանքի նըման.
Մէչըն չ'իմ կանացի մըտնի՝ ծօվի ծածկած վանքի նըման.
Խօստօմնահէրըս հեռացաւ, միդի համա իմ լալի։

Դիվանըն՝ մէլիք տանուտէր. քաղաքտիղըն՝ Սուլթան Խան իս.
Բաղումըն՝ վարթ ու մանիշակ. սարումըն՝ սիրուլ սուսան իս.
Ղարուլ ունէ Սայեաթ-Նօվէն՝ թաք քու ձէռօվ դուն սըպանիս.
Մէռնէլուս համա չ'իմ հօքում, ցիդի համա իմ լալի։

ՍԱՅԱԹ-ՆՕՎԱ

ՎՇՏԻ ԾԻԾԱՂ

Թախիծըս թաղեմ ղալուկ ժպտի մէջ,
Ցաւի ճիչերիս հագցընեմ ծիծաղ.
Թող իմ խենդ սէրը-տառապանքը պերճ՝
Մաշէ իմ սիրտը՝ թաքուն ու դանդաղ։
  Հոգուս աշունն ու հծծիւնները խուլ՝
  Պահեմ շատ խորունկ, մարդ թող չիմանայ.
  Սիրտըս՝ մենաւոր մի խրճիթ խարխուլ,
  Իմ աւեր սրտին մարդ չի մօտենայ։
Ես մոռացել եմ ժամ ու ժամանակ,
Ո՞ղջ եմ թէ մեռած՝ էլ ես չըգիտեմ.
Անհաս կարօտը հիւանդ կրծքիս տակ՝
Ծիծաղում եմ ես՝ կանգնած մահուան դէմ։

Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ   ՀՄԱՅԵԱԿ ՇԷՄՍ

ՉԿԱՅ ՔԵԶԻ ՊԷՍ

Թամամ աշխարհքումն չկայ մին, աննման ջան, քեզի պէս,
  Ճակատն մէյտան, քեզի պէս,
  Ունքերն քեաման, քեզի պէս,
  Աչքերն մաստան, քեզի պէս,
  Պռօշն մարջան, քեզի պէս,
  Սուրահի կեարդան, քեզի պէս,
Կինն ո՞նց է կարող ծնանիլ մարալ ու ջէյրան, քեզի պէս։

Քեզ տեսանողն ասում է, սա հողեղէն չէ, հրեշտակ է,
  Կերպարանքն արեգակ է,
  Հար թուշն մին լուսնեակ է,
  Աչքերն փրստահ ճրագ է,
  Լեզուն դժոխքի կրակ է,
  Բուխաղն մեղր ու կարագ է,
Որքան վարավուրդ եմ անում՝ չկայ էլ նման, քեզի պէս։

Գեղեցկութիւն բաժանողից շատ փայ ստանողն դու ես,
  Միշտ ուրախանողն դու ես,
  Ամակ իմանողն դու ես,
  Դատաստան անողն դու ես,
  Մարդոյ ջան առնողն դու ես,
  Սէյնադ սպանողն դու ես,
Քեամանդարների միջումն չկայ մին որսկան քեզի պէս։

(ԱՇՈՒՂ ՍԱՅԵԱԹ)   Պ. Տ. Յ. ՄԱՏԱԹԵԱՆ

ԹԵԹԵՒ ՈՒ ԹԵԹԵՒ

Թեթեւ ու թեթեւ
Բռնած իրար թեւ
Պարում էր Անոն,
Պարում էր Մանոն.
Շոշիկ, Յոլիկ,
Վաչիկ ու Խաչիկ,
Սուրիկ, Նուրիկ,
Օննիկ ու Սոնիկ.
Ել չի դիմացան
  Իրար անցան—
Տըւին թեւ թեւի,
Թըռան վեր վերի՛։

Ա. ԽՆԿՈՅԵԱՆ

ԹԸԽԿՈՆԴԱ

Թըխկոնդա, դըլէն թըխկոնդա.
Դըլէն դըխկոնդա, դըլէն թըխկոնդա,
Բաղի բիլբուլ, սուսան սմբուլ.
Կոնդա, դըլէն թըխկոնդա,
  Դըլէն թըխկոնդա։

Գնացի սարը սընձի,
Ոտքըս գլուխ մէկ գընձի,
Ախոն կոնդա, դու մի կոնդա,
Թըխկոնդա, դըլեն թըխկոնդա,
Դըլեն թըխկոնդա։

Պեծը միրուքըդ խանձի,
Դըլեն թըխկոնդա, դըլեն թըխկոնդա,
Ծըռար չը տըւիր ընձի,
Դըլեն թըխկոնդա. դըլեն թըխկոնդա,
Դըլեն թըխկոնդա։

ՍՊ. ՄԵԼԻՔԵԱՆ

ՏԻՐԵՐԳ

Թող տուր մըտնեմ ա՛յ գեղաղէմ,
Քո պարտէզը նոր ծաղկած.
Թող տուր այնտեղ անյագ դիտեմ,
Քո վարդերը նոր բացուած։

Թող որ մըտնեմ քաղեմ հիմայ,
Քանի պահն է նոր գարնան.
Ջուրտ ձըմեռը շուտով կուգայ,
Գարնան յուշերը կը մնան։

Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ — Հ. ՇԷՄՍ

ԻՄ ՍԻՐՏԸ

Իմ սիրտը սաղ ես արել.
Ջիգեարըս դաղ ես արել,
Ինձանից հեռացել ես,
Ինձ բէզարմաղ ես արել։

Շատ մարդկանց ես խաբել,
Սիրոյդ ես իմ կրակել,
Ինձ-հօ թոկով չես կապել,
Ամա դուստաղ ես արել։

Սիրելիդ՝ ինձ ատել ես,
Ղոել ես, նախատել ես,
Ջիգեարըս կտրատել ես,
Արնաշաղախ ես արել։

Ինձ տեսնելուս տո՛ւր բարով,
Խորհուրդըդ սա՛ս գրով,
Ինձ-հօ, մորթել չես սըրով,
Անսուր մատաղ ես արել։

Մայիլ եմ դոշիդ խալին,
Անուշ խելք ու քեամալին,
Խըղճալի Գուրջի մալին
Կարկըտահար ես արել։

ԳՈՒՐՋԻ ՆԱԻԷ

ԼՈՒՍՆԻ ՆՄԱՆ

Լուսնի նըման պայծառ երես բոլորած,
Ես մընացի կարօտ համբուրի համար.
Վարսերդ ոսկի թելի նըման ոլորած,
Ես մընացի կարօտ, ետ տալու համար։

Ունքերըդ կապել է կամար կըրակով.
Աչքերըդ վառել է պայծառ ճըրագով,
Ափսո՛ս որ ծածկել ես բարակ լաչակով,
Ես մընացի կարօտ, տեսնելոյ համար։

Բերանդ կարմիր գինի, լեզուդ համեղ նուշ,
Դու մինակ կու խըմես ու կ'անես անուշ,
Նազաշըն թօղել ես ծարաւ ու բէուշ.
Ես մընացի կարօտ, խօսելոյ համար։

ՆԱՂԱՇ ՅՈՎՆԱԹԱՆ

ԾԱՂԻԿ ԷԻ

Ծաղիկ էի նորաբողբոջ՝
Սարի լանջում, երկնի տակ.
Ինձ կը գիւթէր առուի խոխոջ,
Ինձ կ'ողջունէր արեգակ։

Գիշերները աստղ ու լուսին
Վար կ'իջնէին երկընքէն,
Որ հէքեաթներ ինձ ասէին,
Կախարդական, ոսկեղէն։

Գառների հետ լուսածագին
Եկար սարը՝ ջա՛ն աղջիկ,
Ինձ քաղեցիր, դըրիր անգին
Կըրծքիդ վըրայ գեղեցիկ.

Այնտեղ զըւարթ՝ ես ապրեցայ
Երազներով երջանիկ,
Սիրտըդ ինձ դաւեց սեւաչեայ,
Ես չորացայ, ջա՛ն աղջիկ։

Գ. ԱԼԵՄՇԱՀ   Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ԲՈՒԽՈՒՐԻԿ

Ծըխէ՛, ծըխէ՛, ո՛վ բուխուրիկ հայրենի,
Կարօտանքիս այրումով.
Ես հեռու եմ բայց ծուխդ հոգւոյս կը հասնի,
Իմ սարերուս հովերով։

Դիւթուած հիւղակ՝ սըրինգներով հովուական,
Դալարին մէջ լուռ քընով,
Անգամ մը գէթ քաղցրութեանդ մէջ մայրական
Գայի անուշ երազով։

Ծըխէ՛, ծըխէ՛, ո՛վ բուխուրիկ հայրենի,
Կարօտանքիս այրումով։

Գ. ԱԼԵՄՇԱՀ   Հ. Վ. ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ԿԱՔԱՒ ԹՌԱՒ

Կաքաւ թըռաւ բանձր քարին,
Կուլայ մըրմուռ իր ջիգեարին.
Ինձ մօտ տարէք Սիփան սարին,
Կարօտել եմ անուշ եարին։
Արի՛, եար ջան, բարո՛վ արի,
Զընգզընգալէն սարո՛վն արի։

Սիփան սարը զառ չիման է,
Եարն եմ սիրեր, աննըման է,
Մեռնիմ եարոջ շորոր քէլքին,
Ջինար բոյին, արեւ տեսքին։
Արի՛, եար ջան, բարո՛վ արի,
Ծաղկըներով՝ սարո՛վն արի։

Դու բարակ ես, բարունակ ես,
Արեգական նըմանակ ես,
Մէջ իմ սրտին անանակ ես,
Հոգիս էրեւու, բաց կրակ ես։
Արի, եար ջան, բարով արի,
Նարօտ կապած՝ սարովն արի։

ԳՐ. ՍԻՒՆԻ

ԾԱՄԹԵԼ
(ՇԱՄԻՐԱՄԻ ԱՌԱՍՊԵԼԻՑ)

Հանէրը, նանէրը, նանէրը, նանէրը...
Նանօ ջանօ... նանէրը ջան...

ԱՂՋԻԿ.— Ծանդր ու թըփի ծամթել կըտրաւ
Ծոլերն ընկաւ.
Ջըմ ծամթել հան ի ծոլերաց։

Հանինա, նինա, նինա, ջանըմ նինա...

ՏՂԱՅ.— Լողւորդի վարպետն ես եմ,
Ծամթել չըմ հանի ծոլերուց.

Հանինա, նինա, նինա, ջանըմ նինա...

ԱՂՋԻԿ.— Բէ կու-կուտամ մըրկած սըրտիկս,
Դէ խանա ծամթելն ի ծոլէն։

ՏՂԱՅ.— Լողւորդի մէկն էլ ես եմ.
Աչքիս վըրէն երթամ լող տամ
Խանեմ քեզ ծամթել ծոլէն,
Բերեմ հիւսեմ, բերեմ հիւսեմ
Ծամիդ վըրէն։

ՍՊ. ՄԵԼԻՔԵԱՆ

ԽՂՍՕ ՋԱՆ (*)

Հէ՛յ, Խղսօ ջա՛ն,
Հօ՛, Խղսօ ջա՛ն,
Յակօն եկեր՝
Դուռ կը տըփէ.
Խղսօն նըստեր՝
Բուրդ կը գըզէ,
Հէ՛յ, Խղսօ ջա՛ն,
Հօ՛, Խղսօ ջա՛ն։

ՀԷՅ ՁԵԶ ԵՄ ԵՐԳՈՒՄ

Հէ՛յ, հէ՛յ, ձեզ եմ երգում, ձեզ,
Հանդի, քարի ընկերներ.
Հէ՛յ, ճա՛ն, ձեզ եմ գովում, ձեզ,
Հեռացած հօտաղներ։

Հագին ձեր հին կապանակ,
Ձեռքին՝ թերթի մի կըտոր,
Աշխատանքի կուռ բանակ,
Գիւղում մեր նոր ու ելնող։

Հէ՛յ, հէ՛յ, ձեզ եմ երգում, ձեզ,
Հանդի, քարի ընկերներ,
Հէ՛յ, հէ՛յ, ճա՛ն, ձեզ եմ գովում, ձեզ.
Դո՛ւք, արեւակէզ հօտաղներ.
Հէ՛յ, ճա՛ն։

Ա. ՏԵՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ　　ԱԼԱՋԱՆ

(*) Նախ՝ «Տըլէ եաման աւեն աւէ»:

ՀԷ՛Յ, ՋԱՆ, ԱՆՑԱՆ

Հէ՛յ, ջա՛ն, անցան բուք ու բորան՝
Ձմեռ պապին՝ ձիւնին հետ.
Հովն է խաղում՝ սար ու դաշտում,
Օրը պայծառ, բուրաւէտ։

Հէ՛յ, ջան, շուտով, երգ ու տաղով՝
Կը գայ գարուն ցանկալի.
Պայծառ արեւ, կանաչ տերեւ,
Խաղ ու ծաղիկ կը բերի։

ՍՈՎԽՈԶԻ ԵՐԳԸ

Հունձք ենք արել, տուն տարել,
Վարն ու ցանքը շուտ պրծել,
Բաղ, բաղչաներ նոր տնկել,
Գեղն անտառով խիտ պատել։

Սովխոզները չէն մենան,
Կոլխոզները չէն մնան.
Էս ամէնը թող տեսնան,
Որ համբէքը բոլ տընքան։

Ջէթ հըրագի տեղ՝ լեքտրիկ.
Մաս փափուչի տեղ՝ կօշիկ.
Զօր հացի տեղ՝ տաք խորտիկ,
Մենք ապրում ենք երջանիկ։

Սովխոզները չէն մնան, և լն:

ԳՐ. ՍԻԻՆԻ

ՀՕ՛Յ ՆԱՐ

Հօ՛յ նա՛ր, հօ՛յ նար, հօյ նար,
Հօ՛յ նար, ջա՛ն, հօյ նար:
Արեւ ծագեց սարերուն,
Հօ՛յ նար, ջա՛ն հօյ նար...
Թափուեց կանաչ դաշտերուն.
Հօյ նար, ջա՛ն հօյ նար...
Նրանէն ծաղիկ կը քաղէ.
Հօյ նար, ջա՛ն հօյ նար...
Կրծքին զարկած կը պարէ,
Հօյ նար, ջա՛ն հօյ նար...
Ծաղիկն էնտեղ նուռ կ'եղնէ.
Հօյ նար, ջա՛ն հօյ նար...
Սիրտս արիւնով կը վառէ,
Հօյ նար, ջա՛ն հօյ նար...
Եղնիկն ես սարերուն,
Ծաղիկն ես դաշտերուն։
Ծառ ու ծաղիկ դաշտի մէջ,
Աղջիկ, տըղայ պարի մէջ.
Կեանքն աշխարհի միշտ էսպէս,
Կուգան, կ'երթան հովի պէս։

Բ. ԿԱՆԱՉԵԱՆ

ԱՇՈՒՆ-ԳԻՇԵՐ

Զիւնիկ լուսին,
Սարի ուսին,
Դեղին-կարմիր շողալէն,
Ալիք-ալիք խաղալէն,
Ծովի ծոցին՝
Ալ ժապաւէն
Տուել բոցին։

Ծառեր, հողմեր,
Ամէն կողմեր,
Թռչուն դառնել երգելով,
Հեռու-հեռու հերկելով,
Երան-երան
Թռելով
Օդի վրան։

Կ. Վ.

ՁՈՒԿՆ Է ԼՈՂՈՒՄ

Ձուկն է լողում վճիտ ջրում,
Վճիտ ջրում լճակի,
Վառ արեւի շողերի տակ՝
Ցոլք է տալիս արծաթի։

Հա՛, սուրում է, հա՛, սուզւում է՝
Բիւրեղ ծոցը լճակի,
Բիւր նազանքով՝ մեղմ փարւում է՝
Պուտ-պուտ թեւին կոհակի։

Մ. ԱՆՁԵԻ

ՄԱՅԻՍՆ ԵԿԱՒ

Մայիսն եկաւ, հով արեց,
Էրւած սրտիս դով արեց,
Լեռներ, հովիտ, զառ հագած
Ձայիր, չիման մեզ բերեց։

Բարով, մայիս, ալ մայիս,
Դարման արիր սուգ սրտիս,
Քեզնէ ուզած են չուչան,
Արար բերիր իմ եարիս։

Նախշուն մայիս, ալ մայիս,
Կա՛ց՝ իմ սրտից քեզ լուր տամ,
Սէր տուր, լոյս տուր սեւ սրտիս,
Ջիւան կեանքից տամ վարամ։

ԳՐ. ՍԻՒՆԻ

ԻՐԻԿՈՒՆ

Մայրիկն հակած էր խընամոտ,
Օրօրոցին վըրայ պըզտիկ,
Իր սիրոյ վարդը խընկահոտ,
Կը գոցէր աչքն իր հանդարտիկ։

Ցօղնած եկաւ հայրիկը տուն,
Բայց նայելով մէյ մը զաւկին,
Մէյ մ'ալ երգող հարսին ժպտուն,
Լոյսով լեցւան սիրտն ու հոգին։

Մոռցաւ ամէն հոգ ու ցաւեր,
Ծունըր դըրաւ օրրանին քով,
Միակ համբոյր մը կը բաւէր՝
Անոնց ճակտէն սիրագորով։

Մէկն իր բոյնին խօսող թռչուն,
Միւսն ալ ձագուկն անուշաբոյր,
Արցունքներով աչքը լեցուն՝
Համբոյրն առաւ, տուաւ համբոյր։

Փ. ՈՍԿԵԱՆ

ՄԱՆԱԾ ԹԻԼԸՍ

(Մինա բաչու երգածից)
(ՇՈՇԻ ԳԻՒՂ՝ ՂԱՐԱԲԱՂ)

Մանած թիլըս հաստ եկաւ,
Վար ու ցանքըս նէաստ եկաւ,
Կարճ ձեռքիս, բարակ մէջքիս
Ի՞նչ զուլում ար ռաստ եկաւ...
  Սեւ քաչերը տոն ընգին,
  Լէչ տեսին երրա պըրծին.
  Ախ երրա պըրծին...
  Քէդխան՝ եզը, բաղն՝ էծը.
  Խարջի, պարտքի ահղ տարին.
  Խարջի, պարտքի տեղ տարին։

Եորղան, տէօշակ՝ գէրն առաւ,
«էս խըչհամրիւր» խաչ արաւ.
Դիւքանչին էլ մէջ մտաւ,
Տոն, տեղ լոխ սըրից տարաւ։
  Տոնը պըխչակ-հա՛ր չը կայ,
  Ա՛խ, վա՛խ, տար չը կայ...
  Անտէր խոխա-տար չը կայ,
  Եզն ու կիւթա՛ն, վըէր չը կան,
  Սոված փորին ճար չը կայ.
  Սոված փորին ճար չը կայ։

ԳՐ. ՍԻՒՆԻ

ՎԱՐԴԵՐ

Մանուկ օրէս վարդ եմ սիրեր,
Ծաղիկներէն անհամար.
Ով է չորս դիս վարդ է փըռեր,
Այսքան վարդեր ինծ համար։

Վարդ ամէն տեղ՝ մարգերու մէջ,
Այտերու, կուրծքի վըրայ,
Վարդ մ'է արդէն արեւը պերճ,
Որ ինծ վերէն կը ժըպտայ։

Վարդն է ծաղկեր կեանքի ճամբան,
Բոյրէն գինով ես կ'երթամ.
Երբ ես մեռնիմ շիրմիս վրան
Անոնք նորէն թող ժըպտան։

Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ   ՀՄԱՅԵԱԿ ՇԷՄՍ

ՏՈՒՅ ՏՈՒՅ

  Մարգիս միջին կայ համեմ,
Հէ՜յ, տույ, տույ, տույ, տույ, տույ Վարոսի.
  Իմ սիրտ սըրտիդ մէջ քամեմ,
Հէ՜յ, տույ, տույ, տույ, տույ, տույ Սարոսի.
  Բըլբուլ դառնամ էդ սըրտէդ.
Տույ, տույ, տույ, տույ, տույ Վարոսի,
  Մի կուշտ, անուշ ջուր խըմեմ.
Հէ՜յ, տույ, տույ, տույ, տույ, տույ Սարոսի.
  Ունիմ մի յուշ քաղցր, անուշ.
Տույ, տույ, տույ, տույ, տույ, տույ,
  Ցանել եմ վուշ հոն՝ ի Մուշ.
Տույ, տույ, տույ, տույ տույ, տույ.
  Ելել է նուշ վարդն ի թուշ.
Տույ, տույ, տույ, տույ, տույ, տույ.
  Քո պագն անուշ քան ըղնուշ,
Տույ, տույ, տույ, տույ, տույ, տո՜ւյ:

ԳՐ. ՍԻՒՆԻ

ՄԻ ԵՐԳ ԳԻՏԵՄ

Մի երգ գիտեմ ես աննման
Հզօր՝ մուրճի թափի նման,
Որոտի պէս հատու, խրոխտ
Մի երգ գիտեմ ես աննման,
Մի երգ գիտեմ աննման։
Ծնուել է նա մութ հանքերից,
Մետաղակուռ երակներից,
Ու ձայն առել գլունքների
Ցասկոտ ու շեշտ՝ հուր զարկերից։

Հէ՛յ, իմ երգը միշտ աննման
Հզօր՝ մուրճի թափի նման,
Որոտի պէս հատու, խրոխտ
Մի երգ գիտեմ ես աննման
Մի երգ գիտեմ աննման։
Հմայք ունի երգըս այնպէս,
Հոգուս ժամին թէ որ երգես,
Թախիծ ու վիշտ կը չքանայ,
Լքուած հոգու նեցուկ է նա,

Ա. ՄԱՅԻԼԵԱՆ Ց. ՅԱԿՈԲԵԱՆ

ՄԻ ՔԻՉ ԺԱՄԱՆԱԿ

Մի քիչ ժամանակ ինձ էլ լսեցէք,
Սրտիս դարդերը մէկ-մէկ իմացէք.
Աշխարհի բանը ո՛չ ոք չիմացաւ,
Եարի դարդերը, եարն էլ չիմացաւ։
Վարդը բացւում է բլբուլի համար,
Սիրուն աղջիկը՝ ջահելի համար.
Աշխարհքի մէջը հեշտը բան չըկայ,
Սիրած եարի պէս դժուար բան չըկայ։

Եարըս հեռացաւ՝ ինձ էլ մոռացաւ.
Կեանքըս խաւարեց, արեւ չը տեսայ.
Եա՛ր, քեզի համար միշտ ման եմ գալիս,
Մարդիկ ասում են,—կը խելագարուիս։

Աշուղ ԳԷՈՐԳ ՋՈՒԼԱ

ՆԱՆՆԻ ԲԱԼԱ

Նաննի, բալա, նաննի, նաննի, նաննի,
Նաննի. ձագուկ, նաննի, նաննի. օրօ՛ր:
Ալիւր մաղենք, հաց ընենք,
Կըրակ վառենք լիս ընենք,
Շան լակոտին դուս ընենք,
Բալա, նաննի, նաննի, օրօ՛ր։
Նաննի, բալա, նաննի, նաննի, նաննի.
Նաննի, ձագուկ, նաննի, նաննի, օրօ՛ր:

ԳՐ. ՍԻՒՆԻ

ՇԱՏ ՍԻՐՈՒՆ ԻՍ

Շատ սիրուն իս, Շախաթայի, ասօղին՝ խաբր չ'իս անի.
Անջաղ գըցիս էշխի մէչըն, հիդ կ'էհաս՝ քար չ'իս անի։
Էշխըն հէտի կըրակ ունի՝ վո՛ւնց կու էրվի վո՛ւնց կ'երթայ.
Թէգուզ նընգնիմ ծօվի մէչըն՝ հօվնալու ճար չ'իս անի։
Բաս Աշուղըն վո՞ւնց դիմանայ էտ քու տըված կէծակուն,
Դուն ինքնակալ թաքավուր իս՝ բէհուբաղար չ'իս անի։
Թէ վուր սարէրուն հանդիբիս՝ կու հալիս մումի նըման.
Թէ վուր քաղաք տիղ հանդիբիս՝ կու քանդիս,-վար չ'իս անի։
Իսկի բէհուբաղար չ'ունի՝ Շախաթայիս չ'ասօղըն.
Ինդու համա, Սայաթ-Նօվա. շատ էյթիբար չ'իս անի։

ՍԱՅԵԱԹ-ՆՕՎԱ

ԱՄՊԵՐՆ ԵԿԱՆ

Ճարան չարան ամպերն եկան,
Ա՜խ, մուժն առաւ իմ ճամբէն,
Ո՞ւր դից կ'երթամ, ո՞ւր տեղ կուգամ,
Միտքըս շըւար ու չիտեմ։

Ես ի՞նչ կոկիծ սիրտըս ծածկեց,
Բուլբո՜ւլ, քեզնէն հեռու կ'երթամ,
Վարդի փուշը սիրտըս ծակեց,
Դարդը սրտիս խոլոր կ'երթամ։

Սար ու ձորեր ձիւնն է իջեր,
Բամին պաղ պաղ կը փըչէ,
Ես մենակ եմ, ես անընկեր,
Բամին ճակտիս կը փըչէ։

Ճարան չարան ամպերն եկան,
Ա՜խ, մուժն առաւ իմ ճամբէն,
Ո՞ւր դից կուգամ. ո՞ւր տեղ կ'երթամ,
Միտքըս շըւար ու չիտեմ։

Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ   Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ԳԻՆԻԻ ԵՐԳԸ

Ով որ խելք ունի
Թող խըմէ գինի,
Որ չի փուշմանի
Աշխարհն գալէն,
Ի՞նչ էր մտածում, ոսկի էր դիզում.
Դատարկ աշխարհում ի՞նչ էր երազում.
Մեռնիլը որ կայ բոլորիս համար,
Աշխարհն է հաւասար:

Ածեցէք թառը,
Մորթեցէք գառը,
Գինու տակառը
Անգին բան է։
Ի՞նչ էր մտածում, ոսկի էր եւլն։
Ծառի տակ նըստած,
Սիրական գըրկած՝
Անուշ երգելը
Ինչ աղւոր բան է։
Ի՞նչ էր մտածում, ոսկի էր եւլն։

ՉԵՄ, ՉԵՄ

Չեմ, չեմ, չեմ կընայ խաղայ,
Մաս փարուչըս կը ճըռճըռայ.
Չեմ, չեմ, չեմ կընայ խաղայ,
Սոլած փորըս կը ղըռղըռայ.
Չագու կեսուրս կը կըռկըռայ,
Հոտած տալըս կը քըռքըռայ,
Չալաչք կեսարս կը խըռխըռայ,
Տանձգլուխ տաքըրս կը մըռմըռայ։

ԳՐ. ՍԻԻՆԻ

ՔԱՌԵԱԿ

Չը գիտեմ ո՞ր օրէն, միախաղ, միալար
Ես մի երգ կը լըսեմ, անընդհատ անդադար.
Այդ երգն անփոփոխ, այդ երգն անիրաւ
Չը գիտեմ ո՞ր օրէն, միշտ կուլայ միշտ կուլայ՛

Գ. ԻՓԷԿԵԱՆ
Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

ՇՈՂՆ ԸԼԼԱՄ

(ՊԱՐԵՐԳ)

Պարտէզ իջնեմ վարդ ըլլամ,
Քաղած փունջիդ զարդն ըլլամ.
Զորս հովերէն որորուիմ,
Նազանքներով օրօրուիմ,
Թափրիդ վարդի հոտն առնեմ,
Հեքիաթներու տէրն ըլլամ:

Այս աղբիւրի մօտն ըլլամ,
Կարմիր կուժիդ ջուրն ըլլամ,
Մազերդ ուսիդ նազինազ,
Քունն աչքերուդ ծարաւնաս.
Լոյս չի բացուած վազես ինձ,
Լուսինն անգամ չի տեսած:

Ճերմակ, թեթեւ շողն ըլլամ,
Զոյգ ցողերուդ շողն ըլլամ,
Կապոյտ, վճիտ քո այգւոյն,
Լուսաստղն ըլլամ արծաթգոյն,
Ըլլամ, ըլլամ շողն ըլլամ,
Լոյս պսակիդ տէրն ըլլամ:

Ա. ՏԷՐ ՄԿՐՏԻՉԵԱՆ   ՋՕՀՐԱՊ ԿԱՐՕ

ՋԱՆՍ ՄՐՄՈՒՌ

Ջանըս մըրմուռ,
Սիրտըս փըշուր,
Ա՜խ, կապել ես
Եար ինձ քո դուռ.
Հէ՜յ, անուշ եար,
Հէ՜յ, անգիզեար,
Ա՜խ, իմ սրտին
Արա մի ճար:

Քո դուռն է կուռ
Քանց քար ամուր,
Կեանք-կապիչդ, ուռ,
Ո՞ւր, երթամ, ո՞ւր.
Հէ՜յ անուշ եար, ևլն.

ԳՐ. ՍԻՒՆԻ

ՁԻՆՈՒՈՐԻ ԵՐԳԸ

Ռազմի գնացող զինուորներից
Նա է ուրախ, ով ձի ունի:

Թռալլըռը լա լա, թռալլըռը լա լա,
Հէ՛յ, հէ՛յ, հէ՛յ, հէ՛յ, հէ՛յ, հէ՛յ,
Հօ՛յ, հօ՛յ, հօ՛յ, հօ՛յ, հօ՛յ, հօ՛յ,
Հէ՛յ, հէ՛յ, հէ՛յ, հէ՛յ, հէ՛յ, հէ՛յ,
Հօ՛յ, հօ՛յ, հօ՛յ, հօ՛յ, հօ՛յ, հօ՛յ:

Վերադարձող զինուորներից
Նա է ուրախ, ով կին ունի:

Թռալլըռը լա լա. թռալլըռը, ևլն.

Զէնքն ու գինին անհրաժեշտ են
Զինուորներին մինչեւ ի մահ.

Թռալլըռը լա լա, թռալլըռը. ևլն.

Զէնքով թշնամու դէմ կռուիլ.
Բարեկամի հետ գինիով:

Թռալլըռը լա լա, թռալլըռը. ևլն.

Բ. ԿԱՆԱՉԵԱՆ

ԱՍՏՈՒԱԾԱԾՆԻ ԿԻՐԱԿԻ

Սուրբ Աստուածածնի կիրակի,
Արեւը դեռ չէր ծագել.
Գեղեցկուհին իջաւ այգի.
Կանաչ կարմիրն էր հագել,
  Եւ մանրաքայլ յուշիկ յուշիկ
  Պատրուսինէն նա անցաւ.
  Քաղեց խաղող. մեղր անուշիկ.
  Շար չմաթի մէջն ածաւ։
Բայց չմաթը վեր քաշելիս,
Նըրա տակից լոյս շողաց.
Արեւ չկայ մէգն է լալիս,
Ինչո՞ւ այգին շողշողաց.
  Իսկ խաղողը, ա՛յ դաւաճան,
  Խայտաց ծոցում խենդի պէս,
  Լեզու առաւ կանչեց «Ջան, ջան,
  Մուրազս առայ վերջապէս.
«Լաւ է մի ժամ ինձ այս անուշ
Ծոցում քաղցր տրորուել,
Քան մայր ճիւղիս վրայ մուշ մուշ,
Տարիներով օրօրուել»։ Ն. ԲՈՒՋԱԿ

ՍԻՐՈՒՆ ԳԻՇԵՐ

Սիրուն գիշեր,
Լուսնի շողեր
Պար են բռնել
Գետի հետ.
Գետն է հոսում,
Օրօր ասում,
Փըրփըրում է
Ջըրի հետ։ Ա. ՄԱՆՈՒԿԵԱՆ

ԴՈՒՆ ԵՍ ՊԱՏՃԱՌԸ

Քաղցրիկ գարունն է եկեր,
Ծաղկեր են թուփն ու ծառը,
Անամպ, կապոյտ է եթեր,
Կ'երգէ զըւարթ ծիծառը.
Մարգը կանաչ է հագեր,
Բոյր է ամբողջ անտառը.
Սիրտըս լոկ սեւ է կապեր,
Դուն ես սուգիս պատճառը։

  Դուն մէկ հատիկ էիր, իմ
  Սիրոյս միակ տաճարը.
  Գացիր, ու ես քուն չունիմ,
  Ալ մութ է ինձ աշխարհը.
  Ջուր կը փնտռեմ, չեմ գտներ
  Մօտըս դարձիդ մէկ ճարը.
  Թաց են աչերս օր գիշեր,
  Դուն ես լացիս պատճառը։

Ես քեզ միայն սիրեցի…
Որքա՜ն անուշ էր ձայնըդ.
Ազնիւ էիր, մըտացի,
Ես ո՞ւր գըտնեմ նըմանըդ.
Ջուրկ քու տեսքէդ՝ կը հիւծիմ,
Աչքս է պատեր խաւարը.
Ա՛խ, այս ցաւէն կը մեռնիմ,
Դուն ես մահուանս պատճառը։

Հ. ՊԷՐՊԷՐԵԱՆ Մ. ՏԱՄԱՏԵԱՆ

ՋՐՎԷԺ

Քըչքըչալով սարի լանջից
Ցած է իջնում
Գետը բարակ.
Ցած է իջնում ձորի միջից
Դուրս է փախչում
Արագ-արագ...

Դուրս է փախչում ձորի միջից,
Առաջ վազում
Ոլոր-մոլոր,
Եւ ահաւոր ու մութ կիրճից
Գալիս, հասնում՝
Անդունդը խոր...

Ու հէնց մէկ էլ մի վիթխարի
Լեռ ապառաժ՝
Մի մեծ քարի
Գըլխից յանկարծ ընկնում է ցած,
Գոռում, գոչում
Ու շառաչում...,

Ց. ԱՂԱԲԱԲԻ

ՔՈՒ ՓԱՓԱՔՈՎԴ

Քու փափաքովդ վառւում եմ. արի՛, սիրական, ո՞ւր տեղ ես.
Երկնային ամպերու մէջ նստող ծիածա՛ն, ո՞ւր տեղ ես։

Ի՞նչ պատահաւ անուշիկ որ դուն հեռացար ինձանից.
Բաղցրախօս անուշ լեզու, անուամբ գովական, ո՞ւր տեղ ես։

Ճանապարհըդ նայելով աչքերուս մէջ լոյս չմնաց,
Ե՛կ երեւոյթ, տեսանեմ, ազնիւ սիրական, ո՞ւր տեղ ես։

ՕՀԱՆ ԵՒ ԱՐՇԱԿ

(ՈՒՇ ԼԻՆԻ, ՆՈՒՇ ԼԻՆԻ)

ՕՀԱՆ.— Օհանն եմ, Օհանն եմ,
Զփլաղ գիւղի քէօհվան եմ.
Վրես մեծ չին ա,
Սէլսկի ստարշինա,
Նաչալնիկից ստացած ունեմ ես մենդալ
Խօր-էգուց դառնալու եմ գեներալ։
Օհանն եմ, Օհանն եմ,
Զփլաղ գիւղի քէօհվան եմ.
Ունեմ մի զաւակ,
Անունն է Արշակ.
Կ'ուզեմ առնել նրա համար մի աղջիկ.
Մեր տան լայեղ՝ սիրուն, համեստ ու փափլիկ։
Օհանն եմ, Օհանն եմ,
Զփլաղ գիւղի քէօհվան եմ։

ԱՐՇԱԿ.— Ես էլ իմ հօր տղէն եմ,
Ջեր ըսպասած փեսէն եմ.
Բա՛յց խուրջինս, տո՛ւր դանակը,
Խնձոր կիսեմ, տամ եարիս
Դիլիմ, դիլիմ, դիլիմ, դիլիմ։
Հէրըս ինձ էստեղ բերաւ,
Սիրուն կընիկ խոստացաւ.
Բա՛յց խուրջինս, տո՛ւր դանակը, եւլն:
Կնկանս պիտի եար կանչեմ,
Ամբողջ օրը պի՛նդ պաչեմ.
Բա՛յց խուրջինս, տուր դանակը, եւլն:

Գ. ԵՐԻՑԵԱՆ

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ

Երգարանիս ժողովրդային, գեղջուկ եւ սիրային երգերու տպագրութիւնը ըստ մեր առաջադրութեան լրացնելէ վերջ, ազգային-հայրենասիրական երգերու յաւելուածով մը կ'ամբողջացնենք զայն:

Արդարեւ, կը խորհինք թէ ցեղի բարքին, նկարագրին եւ ապրումներուն արտայայտիչ այդ երգերը, մեր տառապանքի, յուսահատութեան կամ ոգեւորութեան պահերուն, պէտք է տեւապէս մնան շրթներու վրայ, իրենց յուզող, խանդավառող, հայրենասիրական եւ հայրենաբաղձական տուչութեամբ: Դարերով խորթ լուծի տակ հեծող հայուն, ազատութեան մարտնչումներու նուիրուած եւ մեր հաւատքին չափ զօրաւոր ներշնչարաններ եղող յեղափոխական պայքարի երգերը, ամենեն խուլ եւ ցայտուն պոռթկումներն են մեր ազգային բաղձանքներուն:

Ա. Տ. Ս.

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ԵՐԳ

Ազատն Աստուած այն օրից՝
Երբ հաճեցաւ շունչ փչել,
Իմ հողանիւթ շինուածքին,
Կենդանութիւն պարգեւել.

Ես անբարբառ մի մանուկ՝
Երկու ձեռքըս պարզեցի,
Եւ իմ անզօր թեւերով՝
Ազատութիւն գրկեցի։

Մինչ գիշերը անհանգիստ՝
Օրօրոցում կապկապուած,
Լալիս էի անդադար,
Մօրս քունը խանգարած՝

Խնդրում էի նորանից՝
Բազուկներըս արձակել.—
Ես այնօրից ուխտեցի՝
Ազատութիւնը սիրել։

Թոթով լեզուիս մինչ կապերն՝
Արձակուեցան բացուեցան,
Մինչ ծնողքըս իմ ձայնից
Խնդացին ու բերկրեցան,

Նախկին խօսքն որ ասացի՝
Չէր հայր կամ մայր, կամ այլ ինչ,
«Ազատութի՛ւն» դուրս թըռաւ,
Իմ մանկական բերանից։

«Ազատութի՛ւն» ինձ կրկնեց,
Ճակատագիր վերեւից.
«Ազատութեան դու զինուոր
Կամի՞ս գրուիլ այս օրից»։

«Ո՛հ, փշոտ է ճանապարհդ՝
Քեզ շատ փորձանք կ'սպասէ.
Ազատութիւն սիրողին,
Այս աշխարհը խիստ նեղ է»։

Ազատութի՛ւն. գոչեցի,
Թող որոտայ իմ գլխին
Փայլակ, կայծակ, հուր, երկաթ,
Թո՛ղ դաւ դընէ թշնամին։

Ես մինչ ի մահ կախաղան՝
Մինչեւ անարգ մահու սիւն,
Պիտի գոռամ պիտ կրկնեմ,
Անդադար՝ Ազատութի՛ւն։

ԿԱՐԱ-ՄՈՒՐԶԱ Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

Ի ՁԷ՛Ն

Ազատութեան այն վառ սէրը
Թունդ որոտայ իմ սրտում,
Իմ հայրենեաց սուրբ անունը
Ինձ պատերազմ է կանչում։

Ելէ՛ք, Ելէ՛ք Հայկազունք,
Ելէ՛ք, Հայկայ զաւակունք.
Ելէ՛ք Ելէ՛ք, Հայ եղբարք,
Առէ՛ք ձեր սուրն ու նիզակ:

Ահա՛, եղբարք, հայ եղբայրներ,
Առէ՛ք զըրահ, սուր, զէնքեր,
Մահը դաշտում Շաւարշանայ
Մեզի հրաւէր կը կարդայ։

Ելէ՛ք. Ելէ՛ք հայկազունք, ելն։

Ա՛խ, հայրենիք, սուրբ անունդ
Անշէջ վառի իմ սըրտում,
Մեր Հայ եղբարց շիրիմները
Իրանց գիրկն են մեզ կանչում։

Ելէ՛ք. Ելէ՛ք հայկազունք, ելն։

Այս օրերը մեր քաջ կեանքին՝
Նուիրական թող լինին.
Ով սիրում է ազատութիւն
Թո՛ղ չմոռնայ Հայ անուն։

Ելէ՛ք, Ելէք, հայկազունք ելն։

ԱՐԽԱՆԵԱՆԻ ԵՐԳԸ

Ազատութեան որդին եմ,
Արխանեան Գալուստն եմ.
Երբոր բանտէն ազատուիմ
Դարձեալ խումբ պիտի կազմեմ։

Թուով հինգ ընկեր էինք,
Մէկ սիրտ՝ մէկ հոգի էինք.
Դարձեալ չէինք յանձնուէր,
Աւա՜ղ, անօթի էինք։

Առաւօտ արշալոյսին,
Չորս կողմերնիս պատեցին,
Ամբողջ չորս օր չորս գիշեր
Չորս հարիւր թշնամիներ։

Բա՛ջդ խորէն ի՞նչ եղար,
Երեք գնդակով ինկար,
Մինչդեռ հոգի կուտայիր,
Դարձեալ պատերազմեցար։

Ջէնքերըս տուր մայրիկըս,
Սուրս ալ դուն տուր քոյրիկըս,
Երթամ կռուիմ վատին դէմ,
Խորէնին վրէժն լուծեմ։

ՆԱՀԱՏԱԿԱՑ ՅԻՇԱՏԱԿԻՆ.

Ազատութեան սիրոյն համար շատ արիւններ թափուեցան,
Անմեղ հայրեր ու զաւակներ եկան այստեղ թաղուեցան։

Ահա եղբարք ես ալ կ'երթամ ազգիս համար մեռնելու,
Ազատութեան սիրոյն համար ամբողջ կեանքս զոհելու։

Գերեզմանիս հողին վրայ թափէ՛ արցունք իմ մայրիկ,
Սըփռէ՛ ծաղիկ բուրումնաւէտ Նահատակ եմ ես յաւէտ։

Ահա այսօր Հայ եղբայրներ կուգան այստեղ ողբալու,
Նահատակաց հողին վրայ աղի արցունք թափելու։

Ո՛վ եղբայրներ. դո՛ւք ալ ելէք գերեզմանի խորերէն,
Ուրախացէք եւ ցնծացէք Ազատութեան կոչերէն։

ՄԱՂԹԱՆՔ

Նահատակաց յիշատակը օրհնեալ ըլլայ յաւիտեան,
Եւ արժանի անոնց հոգին՝ Երկնից Սուրբ Արքայութեան։

Յ. ՍԻՆԱՆԵԱՆ — Գ. ԿԻՒՄԻՒՇԵԱՆ

ՄԱՀԱՄԵՐՁ ՀԱՅՐԵՆԱՍԷՐԸ

Ազնիւ ընկեր, մեռանում եմ,
Բայց հանգիստ եմ ես հոգւով,
Իմ թշնամիքս ես օրհնում եմ,
Օրհնում եմ քեզ Աստուծով։
Հեռանում եմ, անգին ընկեր,
Զգնահատուած ոչ ոքից՝
Բայց հաւատաւ անձնանուէր
Ազգիս մշակ կը հաշուիմ։
Ազնիւ ընկեր, չըմոռանաս,
Անդաւաճան չեմ սիրով.
Ես սիրել եմ իմ հայրենիք,
Գնա՛ եւ դու, նոյն շաւղով։
Խեղճութիւնը Հայոց ազգին՝
Կարեկցաբար մտածիր.
Ոսկէ գրքոյկն Եղիշէի՝
Քաջ առաջնորդ քեզ ընտրիր։
Այնտեղ սուրբ կրօն, ազգ միաբան,
Ազատ կամքով ու խղճով,
Այնտեղ Վարդան, անմահ Վարդան.
Իւր խնկելի քաջերով։
Հայրենի՛ք, սեղան սրբութեան,
Ես Աստուծոյ առաջեւ,
Շատ կ'աղաչեմ, չատ կ'արտասուեմ,
Որ ծագէ քեզ նոր արեւ։
Իմ մտերիմ. մահս մօտ է,
Բայց հանգիստ եմ ես հոգւով,
Որովհետեւ խիղճս արդար է
Ճշմարտութեան ջատագով։

Մ. ԵԿՄԱԼԵԱՆ — Ս. ՇԱՀԱԶԻԶ

ԱԽ ՄԵՐ ՍԻՐՏԸ

Ա՜խ, մեր սիրտը լիքը դարդ, ցաւ,
Օր ու արեւ չը տեսանք.
Վա՜խ, մեր կեանքը սեւով անցաւ,
Աշխարհից բան չիմացանք։

Հարուստ մարդիկ կուտեն կը խմեն
Աշխարհի ճոխ սեղանից,
Մենք աշխարհի խորթ տղերքն ենք,
Մեզ փայ չըկայ աշխարհից։

Խեղճ աղքատի հոգին դուրս գայ
Քարից հողից հաց քամէ—
Բեռով հացը հարուստին տայ,
Հարուստն ուտէ վայելէ...

Խեղճ աղքատը դառը դատի—
Դատարկ նստի...է՜յ, աշխարհ,
Էլ ինչո՞ւ ես քարը թողնում
Քարի վրայ, քա՛ր աշխարհ...

Ա՜խ, մեր սիրտը լիքը դարդ ցաւ
Օր ու արեւ չը տեսանք.
Վա՜խ, մեր կեանքը սեւով անցաւ,
Աշխարհից բան չիմացանք։

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ՈՂԲ ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ

Ա՜խ, Վասպուրական, տխուր Հայաստան,
Անթիւ հերոսներ քեզ մէջ ժողվեցան.
Անհեղ կռուի մէջ այնքան դիմացան,
Ի սէր ազգութեան նահատակուեցան։

Ա՜խ բաւ է հայեր, միշտ այսպէս գերի,
Թողնել հայրենիք դիմել օտարի,
Օտարն սիրում է մեզ իբրեւ հիւրի,
Եւ մեր հացն ու ջուր դարձնում է աղի։

Ա՜խ բաւ է հայեր, ձեր անմիութիւն,
Պատիւ չի բերեր մեր հայ ազգութեան,
Պէտք է շուտ գտնել միութեան դարման,
Որով ազատենք մեր մայր Հայաստան։

Պէտք է միանայ ամբողջ Հայաստան,
Թող տեսնէ Եւրոպ ու Ամերիկան.
Պէտք է մենք լուծենք վրէժ հայկական,
Քանի այսպէս է Թուրքի դատաստան։

Վան փոքրիկ քաղաք իւր գաւառներով,
Լեցուեցաւ դիակ հարիւր հազարով,
Ներկուեցան դաշտեր հայու արիւնով,
Ձայն տուին երկինք ամպերն աստղերով։

Ելէ՛ք, ընկերներ առնենք հրացան,
Անգութ թշնամիք նոր կատաղեցան.
Մեր հայ եղբայրներ շրջապատուեցան
Եւ մեր տուները հրոյ ճարակ դարձան։

Ս. ԺԱՄԿՈՉԵԱՆ

ԱՒԵՏԱԲԵՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ

Ահա աղաւնին Նոյեան տապանին.
Թռած Մասեաց մառախլապատ երկնքէն,
Հրաւէր կարդայ ազատութեան հայրենեաց,
Ասդին անդին թափառական հայերուն,
Ձայն աւետեաց Հայաստանի բերանէն,
Ողջոյն կուտայ հայոց, ողջոյն նոր փառաց.
Հերի՛ք կ՚ըսէ, այսչափ հարիւր տարուան քուն.

Օ՜ն, աչք
Մեր հայրենեաց հրաւիրակին
Ակա՜նջ.
Զի պատգամ է այս երկնային։

Արթնութիւն արդ, պանդուխտ հայեր,
Հասաւ կ'անցնի հայոց օրեր.
Առէք ողջոյն ազատութեան,
Ողջոյն սիրոյ եղբայրութեան,
Վերջ միճակին ձեր գերութեան,
Ցերկնից հայոց այս է պատուէր։

Դարերէ ի վեր արիւն արցունքով
Թացաւ հայրենեաց քաղցր աւերակներ,
Թռչող հրեշտակն ալ ահա ինձ ընկեր,
Վկայ է խօսքիս՝ խնդում երեսով։
Այո՛, այո՛, հայ տղաք.
Վկայ. ես՝ ձեր հրեշտակ
Հայաստանի նոր գարնան
Ծաղկունքն ահա ձեզ կուտամ։

Օ՜ն անդր, քորք և եղբարք որդիք դիւցազանց,
Զերթ թռչներ գարնան գեղ գայլայլիկով՝
Սուրանք փոյթ ի գիրկ հայրենի փառաց։
Հոս թողունք, հոս,
Վատթար սրտեր,
Հետ առնունք սէր.
Հոս թողունք, հոս,
Ատելութիւն,
Ոսոխն հայուն,
Հոս թողունք, հոս.

Ազգերնիս մէկ, լեզունիս մէկ, հաւատքնիս մէկ,
Հայրենիք մէկ, հայրերնիս մէկ, փառքերնիս մէկ,
Ինչո՞ւ չըլլայ սրտերնիս մէկ.

Եւ արդ հոս ի սեւ կրից զինաթափ,
Ամէնքս ալ հաւասար հայ եղբարք,
Մեր զէնքը խաչ՝ ի կուրծս վառ ի վառ,
Օ՜ն զհետ հրեշտակիս ծափ ի ծափ՝
Զարնենք տաւիղք ոսկեքնար,
Սրբենք դառն ցաւի աչեր.
Աչխոյժ ի սիրտ, ձայն վար ու վեր.
Ապրի հայոցս աւետաբեր,
Ուրախութիւնն այս հայոց տար։
Օ՛ն պար, խաղ,
Մէն մ'ի ձախ,
Մէն մի յաջ,
Եւ, յառաջ.
Ուրախութիւնն այս հայոց տար։

Ն. ՄԵԶՊՈՒՐԵԱՆ

ԿԻԼԻԿԻԱ

Այգուն, այգուն իմ խըցկի մօտ,
Լուսամըպիտ մինչ ցառաւօտ,
Երգէ բլբուլն իմ Սիսուանայ՝
Կիլիկիա՜, Կիլիկիա՜, Կիլիկիա՜։
Գարուն կուգայ, ծաղկունք փթթին,
Դաշտերու մէջ, ի մէջ հովտին,
Բայց բլբուլիկն իմ դեռ ողբայ՝
Կիլիկիա՜, Կիլիկիա՜, Կիլիկիա՜։
Ա՜խ այն վարդին կարմիր թերթեր,
Արեամբ նախնեաց են ներկըւեր,
Եւ այն ցօղեր որ կը կաթին,
Արիւնն, արցունքն են Զապէլին։
Լո՛ւռ կաց. բլբուլ, ալ մի՛ երգեր,
Մի՛ նորոգեր մեր հին վիշտեր.
Լո՛ւռ կաց. քո տաղ վէրքեր բանայ՝
Կիլիկիա՜, Կիլիկիա՜, Կիլիկիա՜։

Ն. ՎՐԴ. ԴԱՆԻԷԼԵԱՆ

ԱՆՎԱԽ ԸՆԿԵՐ

Անվախ ընկեր, դիմենք չար-չար,
Կռուում հոգով ամրանանք,
Ազատութեան վեհ ճանապարհ
Հարթենք կրծքով մեզ համար։
Օրրանը մեր սև տառապանք.
Մեր մեծ ծընողն աշխատանք.
«Աշխատանքի ազատութիւն»
Լինի թող մեր դաւանանք։
Շըղթայակապ մենք տանջւեցինք
Եւ շատ զըրկանք կըրեցինք,
Ժանտ, բիրտ օրերն ահա անցան,
Հասել է ժամ հատուցման։
Հասել է ժամ մեր մեծ դատի,
Դէպի պայքար, դէպի մարտ.
Չենք վախեցել, չենք էլ վախի
Սև, մութ ուժից բիրտ ըմմարտ։
Հուժկու բազկով դէ՛ դուրս նետենք
Անարգ սև լուծ բռնութեան.
Եւ մայր հողի կրծքին մխենք
Մեր դրօշըն ազատութեան։

Ռ. ՄԵԼԻՔԵԱՆ-ԳՐ. ՍԻՒՆԻ

ՔԱՅԼԵՐԳ

Առա՛ջ, առա՛ջ. առա՛ջ, յաղթող բանակ. առա՛ջ.
Ցախուռն, անկանգ առա՛ջ, առա՛ջ,
Ելնենք գրոհի, առա՛ջ.
Մարտի ելնենք. գրոհի ելնենք,
Շտապ ելնենք, ելնենք։

Առա՛ջ, առա՛ջ, առա՛ջ, ետև նետենք դարը,
Նոր դար կերտենք, նոր կեանք։
Առա՛ջ, առա՛ջ, գունդ առ գունդ,
Գնանք մարտի երկաթակուռ,
Շտապ առա՛ջ, առա՛ջ։

ԿԱՐՕ ԶԱՔԱՐԵԱՆ — ԱԼԱՋԱՆ

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ԵՐԳԸ

Արագի ափին ծնած ընկեր,
Էն Արագին մենք մատաղ,
Մութ բանտերում տանջուած ընկեր,
Սուրբ տանջանքիդ մենք մատաղ։
Հո՛ւռռա, հո՛ւռռա, հո՛ւռռա,
Քաջ Նժդեհի սուրը շողշողայ:

Յար վախեցաւ քեզ աքսորեց
Իր աշխարհէն շատ հեռուն,
Մեզ մօտ եկար. բարով եկար,
Նոր իտէալներ մեզ բերիր։
Հո՛ւռռա, հո՛ւռռա, հո՛ւռռա,
Գարեգինի սուրը շողշողայ:

Արեան դաշտում, կռուի դաշտում,
Սուրըդ շողայ քաջ Նժդեհ.
Հո՛ւռռա, յառա՛ջ, դու գոռացիր.
Կուրծքըդ խաչով զարդարեցիր։
Հո՛ւռռա, հո՛ւռռա, հո՛ւռռա,
Քաջ Նժդեհի սուրը շողշողայ:

ՎԱՆԵՑԻ ՈՐԲԻՆ ԵՐԳԸ

Արե՛ւ, արեւ, դուրս եկիր,
Աչքըդ, ունքըդ ինձ ցո՛յց տուր,
Ցըրտից ջանըս դողում է,
Զըրկախ որբիս տաքացուր,
Հօր ու մօրըս ըսպանաւ
Նամարդ դուշմանն, ո՞ւր գընամ.
Փարա չունիմ փէտ առնեմ՝
Օջախ վառեմ տաքանամ,
Արե՛ւ, արեւ, թէզ արա.
Բուք–բորանը գալիս ա.
Էս օր ցըրտից որ մեռնեմ՝
Էլ արեւըդ ինչի՞ս ա....

ՍԻՄԷՈՆ ՍԱՓԱՐԵԱՆՑ

ԱՌԱՋԻՆ ՏԱՐԵԴԱՐՁ ԱԶԳ. ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՆ

Արի՛ք Հայկազունք, յառաջ ընթանանք,
Սահմանադրութեան նոր բարեւ մ'ալ տանք.
Որ ազգն երբ զանի փրկարար գոչեց,
Նոր հոգի, նոր կեանք անոր պարգեւեց,
Եկէք բարեկամք, առ բարձրեալն Աստուած,
Ուղղենք մեր մաղթանք սուրբ սրտէ բղխած,
Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն:
Զրկանք, բռնութիւն վատթար վարչութեան
Բերին մահն ի դուռն Հայոց ազգութեան.
Սահմանադրութիւնն եկաւ զայն վանեց
Եւ կենաց ուղին մեր առջեւ հարթեց:

Յառաջդիմութեան բացաւ ասպարէզ,
Ուր ամէն վայրկեան գործել պարտ է մեզ՝
Կեցցէ՛, կեցցէ՛, կեցցէ՛ միշտ
Ազգն ու Սահմանադրութիւն:

Յ. Գ. ՍԸՎԱՃԵԱՆ

ԵՐԳ ՈՒ ԳՆԱՑՔ

ԶՕՐԱՑՆ ՀԱՅՈՑ ԸՆԴ ՎԱՀԱՆԱՅ ՄԱՄԻԿՈՆԵՆՈՅ Ի ՇԱՒԱՐՇԱԿԱՆ ԴԱՇՏԻՆ ՎՐԷԺՔ

ՕՆ ԱՆԴՐ ՅԱՌԱՋ

Բա՛մ. փորոտան բարձուստ բոմբիւնք յԱյրարատեան դաշտն ի վայր.
Արի արանց արիւնք յեռանդն առատանան ի հրագայր.
Հրաւէր հայրենեաց հնչակի 'նդհանուր,
Հոգիք Հայկազանց բորբոքին ի հուր.
«Որք երկնաւորի պսակին էք կարօտ,
Որք երկրաւորիս փառաց երկնայորդ.
Հապ'ո՛ն արի արանց մանկունք՝
Հայրենավրէժքրդ Հայկազունք,
Հապ'ո՛ն ի զէն զունդազունդ
Յեռեալ ի պար թունդ ի թունդ՝
Ի զէ՛ն ի վրէ՛ժ, օ՛ն անդր յառաջ,
Ի զէ՛ն ի վրէ՛ժ, մի՛ ձախ մի՛ յաջ.
Օ՛ն անդր յառաջ,
Մի՛ ձախ մի՛ յաջ,
Օ՛ն անդր յառաջ,
Յառա՜ջ, յառա՜ջ,
Հապ'օ՛ն, յառա՜ջ:
Հայկեան փանդռանց որոտընդոստ դղրնչին բարբառք մարտագոռ.
Դառնագոռոչ անդրաձայնէ Պարսիկ կերկեր ի չփոր.

Շարժեն հրեշտակք թեւս լուսափողփողս,
Ճիւաղք ճիւաղաց կայտռեն ի դժոխս.
Շուրնդն չանթառաք ղեթերօք փարի,
Սարսափին սանդարք ի խոլ խաւարի։
Հապ'օ՛ն տարի առանց մանկունք, ել՛ն։

Հ. Ղ. Մ. ԱԼԻՇԱՆ

ՊԵՏՈՅԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Գարահիսար լեռան կրծքին՝
Նա էլ ինկաւ վիրաւոր.
Կուրծքը պատռած, սիրտը խոցուած,
Զար թշնամու գնդակով։
Ժէռուտ լեռան լերկ կատարից
Վա՛ր սլացիր, սեւ արծի՛ւ,
Թեւերդ բաց. լայն թեւերդ,
Ու ջնջանուն նո՛վ արա:
Խոցուած սրտից մուգ արիւնը
Կաթիլ-կաթիլ կը ծորայ...
Ա՜խ, ջիւանու կեանքն է հոսում
Յաւոտ կրծքի լայն վէրքից...
Ժէռուտ լեռան լերկ. ել՛ն։

ԴԺՈԽՔ–ՀՐԱՅՐԻ ԵՐԳԸ

Գերեզմանիս թող արձանին վրայ,
Գրեն, յաղթութեան թէ՝ կոթող է սա,
Թող տեսնէ Հայաստան, թող կարդան հայ քաջեր,
Տեսնեն իւրեանց ընկեր ,նահատակ է պառկեր,
Ծոցն Հայաստանի։

Անձնուէր եւ քաջ Ղազարեանի պէս,
Յուցնեն քաջութիւն քաջ Արմէնի պէս,
Գալարին ալիքներ, թափին գաղջ արցունքներ,
Տեսնեն իւրեանց ընկեր, նահատակ է պառկեր,
Ծոցն Հայաստանի։

Յուսով եմ կրնքած աչացս վերջին քուն,
Տեսնէ Հայաստան իւր ազատութիւն,
Իմ գերեզմանիս քով թող կայնին ու ձայնեն,
Ահա՛ ազատութիւն, եւ ահա փրկութիւն,
Քաղցր Հայաստանի։

Հանգչին ոսկորներ մէջ իմ տապանին,
Տեսնեմ փրկութիւն Մայր Հայաստանին.
Այն ատեն թող կնքեն իմ գերեզմանիս վէմ,
Ազատ դրօշակներով. հայու զինուորներով,
Ֆէտայիներով։

ԳՆԱ՛ ԲԼԲՈՒԼ

Գընա՛ բլբուլ, մեր աշխարհից.
Էլ դու էստեղ մի՛ երգիր.
Մեր օրը սեւ, մեր կեանքը ցաւ.
Էլ էս երկրում մի՛ երգիր։
Տանջուած սիրտը, անուշ երգից
Բրբըռում է, խորանում,
Սրտի վիշտը, քո երգերից՝
Փրփըրում է, լեռնանում
Գնա՛ բլբուլ, մեր աշխարհից.
Գնա՛ երգիր այլ երկրում:
Ասա՛ էնտեղ, որ մեր վարդից՝
Արեան թարմ հոտ է բուրում։

Որ ողբաձայն մրմնջացող
Վտակների հոսանքին՝
Միանում են արեան շիթեր,
Առաջ շարժւում մոլեգին։
Որ ծաղկազարդ հովիտներից
Մահուան ցուրտ հով է փչում,
Որ մեր երկրում կանաչ դաշտերն
Իսկոյն կարմիր են ներկւում։
Գնա՛ պատմիր, որ դու տեսար
Այրիացած մի երկիր,
Սարեր, ձորեր կարմիր հագած
Արիւնազարդ մեր երկիր։
Ա՜խ, ջան բլբուլ, էլ մի՛ կանգնիր,
Գնա՛, պատմիր աշխարհին,
Մեր ցաւն հոգին, վիշտն ու թախիծ,
Մեր օրերը դառնագին։

ԱՆԴՐԱՆԻԿԻ ՔԱՅԼԵՐԳԸ

Դաշնակցական խումբ գընանք մենք Սասուն,
Մեր հայ եղբայրներ մեզ են ըսպասում,
Անդրանիկը քաջ իւր ընկերներով.
Կ՚ուզէ պատերազմ կը սպասէ գարնան։

Մօտ է գարունը, շուտով կը բացուի.
Հայու խօսքը քաջ՝ շուտով կը լսուի,
Հայերը անվախ հոգւով միացած
Հրացան ուսերնին ոտքի են կանգնած։

Խմբապետները հոգւով են երդուած.
Ֆէդայի ուժով գնում են առաջ.
Առաջն է կանգնած Անդրանիկը քաջ.
Գոռում է գոչում, կ՚ուզէ պատերազմ։

Հերի՛ք, եղբայրներ, մենք շատ քնեցինք,
Բաւական չէ՞ մեզ այսքան համբերել,
Մայր Հայաստանը ձեռքից հանեցինք,
Հիմա ույժ ունինք, դարձեալ ետ կ՚առնենք։

ԴԱՐՁԵԱԼ ՓԱՅԼԵՑ

Դարձեալ փայլեց Սասնոյ գլխին
Ազատութեան դրօշակ.
Կեցցէ՛ Հայրենիք գոչելով
Բարձրացըրին աղաղակ։
Թընդաց, որոտաց ձայներից
Ողջ աշխարհը հայկական.
Խումբ-խումբ կը գան հայ զաւակներ
Հայրենիքին օգնութեան։
Գուրգէն, Վահան. Հըրայր-Դըժոխք
Քաջ Անդրանիկ ղեկավար՝
Տալւորիկի լեռներումը
Շըրջում էին անդադար։
Սարսափեցին քիւրդ ցեղերը,
Մինչ պալատը սուլթանի՝
Հրամայեց շուտ կործանել
Դիրքերը հայդուկների։
Ահա անգութ մեր թշնամին...
Սարսափելի տեսարան...
«ժամանակ է վրէժ լուծել...»
Գոչեց ձայնը հայկական։
Կըրակ տեղաց հայ քաջերի
Բընակավայր դիրքերից.
Կոտորուեցին թըշնամիներ
Անհուն գընդակներից։

ՄԱՀ ՔԱՋՈՐԴՒՈՅՆ

Դու զո՞վ խնդրես, մա՛յր իմ անուշ,
Ե՛կ, մի՛ գողար, մօտեցիր հոս,
Անլաց աչքով դիտէ զորդիդ
Ու իւր վէրքերն արիւնահոս։
  Բրդաց մայրեր քող լան, ու դուն
  Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։
Ինչպէս երբեմն օրրանիս մէջ
Կակուղ ձեռամբ փայփայելով.
Մանկիկ մարմնոյս հանգիստ տայիր՝
Իբրեւ հրեշտակ նուագելով.
  Զիս հանգչեցուր ի հող. ու դուն
  Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։
«Նորեկ որդւոյս կենացն արեւ
Ձեզի համար փայլի, Հայե՛ր»,
Այսպէս յայնժամ դու երգէիր,
Օրօրոցիս նըստեալ քովեր։
  Անոնց համար ճիչաւ, ու դուն
  Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։
Կարմիր կայլակք ցայտեն վէրքէս.
Սակայն, մա՛յր իմ, նայէ չորսդին,
Զարիւնոռոշտ սա քիւտերըն տե՛ս,
Հազարներով փռուած գետին։
  Կերաւ զանոնք սուրն մեր, ու դուն
  Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։
Մռընչեցին ինչպէս վիշապ
Ու մեր վրայ յարձակեցան,
Ո՛վ հայրենիք, ի հուր ի բոց
Քո համար մեր սիրտք վառեցան։
  Կարմիր ներկան ձորք մեր, ու դուն
  Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։

Ու ծափ զարկին մեր հարց ըստուերք,
Զի չէ՛ մեռած Հայոց կըրակ.
Ու ցնծացին այնչափ զոհեր,
Զի լուծաւ վրէժ յարեան վըտակ։
  Խնդաց Մասիս, մա՛յր իմ ու դուն
  Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։
Վերջին համբոյր տամ քեզ, մա՛յրիկ,
Հատուցանես զայն սիրուհւոյս,
Վերջին անգամ գրկեմ մեր հող,
Ուր արդ կ'իջնեմ ի ծոցն անլոյս.
  Խաչ մը տնկէ վրաս, ու դուն
  Ուրախ լուրեր տար ի Զէյթուն։

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՀԱՅՑԵՐՈՒՍ ԹՈՒՔԸ

Դուն խելօք հաշուով վաճառական ես,
Միւլք. փող ու ապրանք, կ'ասեն, շատ ունես,
Բայց թէ փողէդ շահ չունի Հայաստան,
Թքել ենք քո՛ւ ալ, փողի՛դ ալ վրան։
  Քաջ ես, լըսել ենք, ինքըդ մեծաւոր,
  Անուն յաղթողի ունիս փառաւոր.
  Բայց թէ թըրէդ շահ չունի Հայաստան,
  Թքել ենք քո՛ւ ալ, թրի՛դ ալ վըրան։
Ի վերուստ քանքար քեզի տուած է,
Հեղինակ անունդ աշխարհ փըռուած է.
Բայց թէ գըրչէդ շահ չունի Հայաստան,
Թքել ենք քո՛ւ ալ, գրչի՛դ ալ վըրան։
  Հեռատես մտքով դուն զարդարեցար,
  Հըզօր իշխանին սիրելին դարձար,
  Բայց թէ մըտքէդ շահ չունի Հայաստան,
  Թքել ենք քո՛ւ ալ, մըտքի՛դ ալ վըրան։

Բանուկ ու ճարտար գուն ունիս ձեռքեր,
Շատ կը յօրինես թանկագին բաներ,
Բայց թէ ձեռքէդ չահ չունի Հայաստան,
Թըքել ենք քո՛ւ ալ, ձեռքի՛դ ալ վըրան։

Երկինք շնորհեցին քեզ լեզու ճարտար,
Քարոզչի ստացար հռչակ ու հանճար,
Բայց թէ լեզուէդ չահ չունի Հայաստան,
Թըքել ենք քո՛ւ ալ, լեզուի՛դ ալ վըրան։

Մեծ ուսում առիր, եղար գիտնական,
Գովքովըդ լցուած է մարդոց բերան,
Թէ ուսումէդ չահ չունի Հայաստան,
Թըքել ենք քո՛ւ ալ, ուսմա՛նդ ալ վըրան։

Կուտամ քեզ պատիւ, կ՚ունենաս դու յարգ,
Ու կը դընեմ քեզ ազնիւ մարդոց կարգ,
Երբ օրօրանէդ մինչեւ գերեզման՝
Զըգտումըդ լինի փրկել Հայաստան։

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

ՀԱՅՐԻԿՆ ՀԱՅՈՑ

Եկել է գարուն, սոխակը սիրուն
Վարդի թըփի տակ, Հայրիկճան.
Երգէ Հայրենիք։
Ծիծեռնակ, բազէ, թռչունք համօրէն
Քաշում են միշտ ա՜խ, Հայրիկճան,
Օտարաց երկրէն։
Կռունկ մեր պանդուխտ՝ իւր բարձր դիրքով.
Փութայ ձայն տալ մեզ, Հայրիկճան,
Հայրենեաց սիրով։
Վասպուրականի երիտասարդներ
Եւ օրիորդներ, Հայրիկճան,
Սեւեր են հագեր։

Պատանիք, մանկունք, օրիորդք, կուսանք,
Հայրիկ կանչելով, Հայրիկճան,
Քաշեն հառաչանք։
Մեր սիրտն ու հոգին քու հոգւոյդ ղուրպան,
Հրեշտակ Հայ ազգի, Հայրիկճան,
Դարձիր Հայաստան։

ԶԻՆԻՈՐ

Ես զինւոր եմ Հայաստանի,
Ճակատըս բաց ու հըպարտ.
Հէ՜յ, հէ՜յ...

Թուրըս կարմիր կըտրուկ ու յաղթ,
Ու սուինըս միշտ անպարտ.
Հէ՜յ, հէ՜յ...

Ճակտիս աստղը յաւէրժ փայլուն,
Ճամբէս լոյս է եւ ուրախ.
Հէ՜յ, հէ՜յ...

Իմ թիկունքում շարքեր կանգուն
Միշտ աներկուն, մի՛շտ անվախ.
Հէ՜յ, հէ՜յ...

Մեր դրօշը ծածանում է
Կապոյտներում լայնարձակ.
Հէ՜յ, հէ՜յ...

Եւ դիմում ենք առաջ, առաջ—
Դէպի առա՛ջ. յաղթանակ.
Հէ՜յ, հէ՜յ....

Ռ. ՄԵԼԻՔԵԱՆ
Ա. ՏԷՐ-ՂԵՒՈՆԴԵԱՆ
Գ. ՄԱՀԱՐԻ

ՂԱՐԻՊ ՄՇԵՑԻ

Ես մշեցի համբոյր եմ հեռու տեղերէն,
Ձեզ շատ բարեւ բերեր եմ Հայոց գեղերէն.
Ախպէրքըս ինձ ղրկեցին դէպի էս կուման—
(Մի վախնաք, չուզեմ ձեր մանէթն ու թուման).
Վարագայ Սուրբ Խաչէն բերեր եմ ձեզ լուր.
Խըղճացէք Հայ ազգիս, տուէք մէկ-մէկ թուր։

Հայ ազգը մեր տեղը նեղ օր կը քաշի.
Օսմանլին ու քիւրդը կեանքերս կը մաշի.
Որ կ'ըլլայ՝ գիրեվար կ'անէ մեր տըղոց,
Որ կ'ըլլայ՝ արտերս ձգէ կրակ ու բոց.
Թէ չօգնէք՝ մենք ալ կ'ըլլանք ցիր ու ցան.
Խըղճացէք հայ ազգիս, տուէք մեզ հրացան։

Սուրբ ժամերս դարձուցին անասնոց կայանք.
Խորաններս պղծեցին. քանդեցին սուրբ վանք.
Խեղճ Հայն օրն ի բուն ծաղր է ու ծանակ,
Ո՛վ եղբարք. բերեր եմ ձեզ ա՛յսպէս սեւ բօթ—
Չուզենք մենք ձեր ոսկին, տուէք մեզ վառօդ։

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

ՀԱՌԱՋԱՆՔ ԱՔՍՈՐԱԿԱՆԻ

Երբ ալեկոծ ծովին վրայ
Իմ մակոյկը խորտակուի,
Ես փրփրադէզ ալեաց մէջը
Դեռ իմ յոյսը չեմ կտրի։

Բոլոր ուժովս եւ համարձակ
Բազուկներս կը շարժեմ.
Ալիքները պատառելով
Դէպի ափունք կը թռչեմ։

Անհաւասար այս կռուի մէջ
Թէ ուժերըս ինձ թողնեն՝
Ալիքները յորձանք տալով
Դէպի անդունդ ինձ տանեն։

Այն ժամանակ գէթ սփոփանք
Ես գտնում եմ նրա մէջ, —
Որ մեռնում եմ քաջի նըման.
Կռիւ տալով մինչեւ վերջ։

Ես Կուկունեան Սարգիս անուն՝
Աքսորման մէջ ինկած եմ,
Ազատութեան սիրոյն համար
Կեանքս ու հոգիս զոհած եմ։

Ձեռքերս շղթայ, ոտքերս շղթայ,
Մութ բանտին մէջ ինկած եմ,
Հայրենիքիս սիրոյն համար
Կեանքս ու հոգիս զոհած եմ։

Գերեզմանիս քարին վրայ
Սէրըդ սիրով դու երգիր,
Եւ փոխանակ իմ երեսին՝
Շիրմիս քարին համբուրիր։

Մընա՛ք բարեաւ, սուր, հրացան,
Մընա՛ք բարեաւ, ընկերներ,
Անցան օրերս ազատութեան,
Եկան բանտի շըղթաներ։

Գերեզմանիս չորս բոլորը,
Վարդ, մանիշակ թո՛ղ բուսնին,
Իմ հայրենեաց խե՛ղճ զաւակունք
Այս վարդերով ըզբօսնին։

Գ. ԹԱԴԷՈՍԵԱՆ

ԿԻԼԻԿԻԱ

Երբոր բացուին դռներն յուսոյ
Եւ մեր երկրէն փախ տայ ձմեռ,
Չըքնաղ երկիրն մեր Արմենիոյ
Երբ փայլէ իւր քաղցրիկ օրեր,
Երբոր ծիծառն իւր բոյն դառնայ,
Երբոր ծառերն հագնին տերեւ՝
Ցանկամ տեսնել զիմ Կիլիկիա,
Աշխարհ՝ որ ինձ ետուր արեւ։
Տեսի դաշտերն Սուրիոյ,
Լեառն Լիբանան և իւր մայրեր,
Տեսի զերկիրն Իտալիոյ,
Վենետիկ եւ իր կոնտոլներ.
Կըղզի նման չիք մեր Կիպրեայ,
Եւ ոչ մէկ վայրն է արդարեւ
Գեղեցիկ քան զիմ Կիլիկիա,
Աշխարհ՝ որ ինձ ետուր արեւ։
Հասակ մը կայ մեր կենաց մէջ,
Ուր ամենայն իղձ կ'աւարտի.
Հասակ մը ուր հոգին ի տենչ՝
Յիշատակաց իւր կարօտի.
Յորժամ քնարն իմ ցրտանայ,
Սիրոյն տալով վերջին բարեւ՝
Երթամ ննջել յիմ Կիլիկիա,
Աշխարհ՝ որ ինձ ետուր արեւ։

Ն. ՌՈՒՍԻՆԵԱՆ

ՄՕՐ ՀՐԱՒԷՐԸ Ի ՄԱՐՏ

Զարթի՛ր որդեակ, յուշ բեր, վե՛ր կաց.
Պատերազմի փողն հնչեց,
Զարթի՛ր, գոչեց ձայնն հայրենեաց,
Կենաց, մահու ժամ հընչեց։

Պատրաստեր եմ քո զէնքերը,
Ահա գլխիդ վերեւ կան,
Ինչպէս երբեմն քո գրքերը՝
Երբ կ'երթայիր վարժարան։

Եկիր կապեմ սուրը մէջքիդ,
Ասպար կախեմ քո ուսէդ,
Եւ սուրբ դրօշակ հայրենիքիդ
Թող ծածանի աջ թեւէդ։

Փոխան գրքիդ ահա սուսեր,
Փոխան թղթի՝ կռուի դաշտ.
Գնա՛ մեռիր ազգիդ համար,
Թող մայր-երկիրդ ապրի հաշտ։

Քսան տարի կերակրեցի
Մինչ հասակդ այդ արիր.
Այդ հասակիդ մայրըդ մեռնի,
Դուն ալ քու ազգիդ մեռիր։

Յառա՛ջ, որդեակ. ի մարտ անմահ,
Տուէ՛ք անվախ կուրծք, ճակատ,
Հոգ չէ թէ քեզ կը գտնէ մահ,
Զի յայնժամ է ազգն ազատ։

Պ. Յ. ՆԱԹԱՆԵԱՆ

ԱԶԱՏՈՒԹԵԱՆ ՄԱՐՏԻԿՆԵՐԻՆ

Ըն սեւ գիշերում տուման տարտերի
Փրփըրած ծովում ընկաք ու մեռաք.
Ա՛յ իմ ազիզնե՛ր, տաղուած սրտերի,
Եամա՛ն օրերի դուք յոյս երկնառաք։

Ծփուն ալիքներ փրփուր թեւերով
Ինչպէ՞ս սիրտ արին ու ձեզ կուլ տուին,
Ա՜յ իմ ազիզներ, որ էն Մեծ Ցաւով
Դուք ճամբայ ընկաք Մուրադի ափին։
Էն վառ փարոսը, որ դուք վառեցիք,
Տարտերի ծովի մութ դէմքի վրայ
Լո՜յս է տարածում... անցնում են մարդիկ՝
Ուր առաջինը դուք բացիք ճամբայ։
Ես ձեզի չեմ լայ, դուշմանը թող լայ—
Էն զուլ օրերի գետնաքարշ ընկեր.
Ես էլ, ազիզնե՛ր, ձեր ճամբէն ընկայ,
Թողած լոյսերիդ շողերն եմ գրկեր...

Մ. ԹԻՐԵԱՔԵԱՆ   Շ. ԿՈՒՐՂԻՆԵԱՆ

ԳՈՂԹՆԻ ՔՆԱՐՔ

Թէ հայրենեաց պսակազիր
Գողթնի քնարք լռեր են,
Երկնից թող գան անմահ հոգիք,
Հայոց քաջեր պըսակել։
Մասեաց գագաթ թող գան բազմին,
Երկնից գունդ գունդ հրեշտակներ,
Աստուած իջեր ի Հայաստան,
Հայոց արիւն հոտոտել։
Փախէք ամպեր Շաւարշանէն,
Ալ մի՛ ցօղէք ձեր ցօղեր,
Շաւարշանը ոռոգուած է
Հայոց քաջաց արիւնէն։
Եւ կը ծլին ու կը ծաղկին
Այս դաշտին մէջ ոչ խոտ, վարդ.
Այլ Վարդանայ ընկած երկիր
Պիտի ծաղկի սուրբ հաւատ։

Քանդակագործ քաջ Եղիշէն
Գրիչ ի ձեռն գայ յԱրտազ.
Զափէ, ձեւէ, գրէ, դրոշմէ
Կեանք, մահ, հաւատք Վարդանայ։
Ո՜հ Վարդանայ անուան արժան
Մասիս կանգնի մահարձան,
Մենաստաններ խաչն ի գմբէթ,
Աւետարան սուրբ հաւատ։

Գ. Վ. ՍՐՈՒԱՆՁՏԵԱՆՑ

ԹԻԿՈՒՆՔԴ ԼԱՅՆ

Թիկունքդ լայն, թեւերդ ուժգին,
Կրունկդ ամուր պինդ պողպատ,
Սիրել գիտես, կռուիլ չիտես,
Դու անզգայ երիտասարդ։
Քոյրդ տանում են քիւրդերը,
Եղբօրդ արիւնն են ծծում,
Դու անտարբեր սառն արիւնով,
Հանգստութիւն ես փնտռում։
Ամօ՛թ քեզի, հազար ամօթ,
Որ զէնք չունիս քո ձեռին,
Քո եղբայրը կռուի դաշտում,
Տապալում է թըշնամին։
Ձեռքդ տուր ինձ երդուենք այստեղ,
Թողնենք փառքը աշխարհի,
Գնանք, կռուինք առիւծաբար,
Ի սէր ճնշուած Հայ ազգի։

ՄՈՒՇ

Թո՛ղ երգէ բլբուլ Մշու դաշտերում,
Թո՛ղ վարդեր բացուին Սասնոյ լեռներում,
Թո՛ղ մեր թշնամիք սարսեն սարսափեն—
Գազան ոսոխներ ճաքեն, տըրաքուեն։
Մշու դաշտերը ծաղկունքով բացուած,
Հայու սերունդը կը պահէ Աստուած,
Ինչքան որ կ'ուզեն թշնամիք թո՛ղ գան,
Սասնոյ լեռներէն ի՞նչ պիտի տանան։
Ինչո՞ւ չը ծաղկէ ծաղիկն անխնայ,
Այդ թշնամուցը ո՞վ կը վախենայ.
Թող հայ աղջիկը երգէ վառվռուն,
Սուր զէնքը ձեռին՝ ջարդ տայ թշնամուն...

ՎՐԷԺ

Թող կորնչին բռնապետներ
Հայաստանի սուրբ հողից,
Բռնակալի անարգ լուծը
Ջընջուի Հայաստանից։
Բաւական է որքան նոքա
Հայու արիւն ծըծեցին,
Հայու ջանքով՝ աշխատանքով,
Պետութիւն պաշտպանեցին։
Հայու հացը, հայու փողը
Մինչեւ ե՞րբ օտարն ուտէ,
Իր գարշելի պիղծ բերանով
Հայութիւնը անարգէ։
Վրիժուց կայծակ թող բորբոքի
Հայ առիւծների սրտում,
Թափել թշնամւոյն գլուխը
Դիւցազունների երկրում։

Սըրով սըրի դէմ մարտնչիլ,
Արեան դէմ արիւն հանել,
Մեր մէկ հաւը գողացողին
Ամբողջ տունը թալանել։

Աչքերու տեղ՝ աչքեր հանել,
Ատամի տեղ՝ ատամներ,
Միակ հարուածի փոխարէն՝
Ամբողջ ազգը կոտորել։

Այս անօրէն՝ անխիղճ դարում,
Այլոց վրայ յոյս դընել,
Նշանակում է յաւիտեան
Կեանքիցը հըրաժարուել։

Մ. ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ

ՅՈՅՍ

Թո՛ղ փըչէ քամին պաղ պաղ երեսիս,
Վերէն ամպերէն սաստիկ ձիւն թող գայ,
Որքան որ կ'ուզէ՝ թող փըչէ հիւսիս,
Յուսով եմ, վաղ ուշ, գարուն պիտի գայ։

Թուխպը թո՛ղ պատէ երկինքը պայծառ,
Թանձր մառախուղ երկիր թո՛ղ փակէ,
Տարերք աշխարհիս խառնուին իրար,
Յուսով եմ, վաղ ուշ, արեւ պիտ՚ ծագէ.

Թո՛ղ գայ փորձութիւն, թո՛ղ գայ հալածանք,
Խաւար թո՛ղ դառնայ անաղօտ լոյսը.
Սարսափելի չեն Հայիս տառապանք,
Միայն... չը հատնէր խղճուկին յոյսը։

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

ԵՂԲԱՅՐ ԵՄՔ ՄԵՆՔ

Ի բիւր ձայնից բնութեան շքեղ՝
Թէ երգք թռչին սիրողաբար,
Մատունք կուսին ամենագեղ,
Թէ որ գարնեն փափուկ քընար,
Չունին ձայն մի այնքան սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն:
Տո՛ւր ինձ քու ձեռք, եղբայր եմք մենք,
Որ մըրըրկաւ էինք զատուած,
Բաղդին ամէն ոխ չար ու նենգ,
Ի մի համբոյր ցըրուին ի բաց.
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն:
Երբ ալեւոր Մայր Հայաստան
Տեսնէ զորդիս իւր քովէ քով,
Սըրտին խորունկ վէրքըն դաժան
Բալցր արտասուաց բուժին ցօղով:
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն:
Մէկտեղ լացինք մենք ի հընում,
Եկէ՛ք, դարձեալ յար անբաժան,
Խառնենք զարտօսր և ըզխնդում,
Որ բազմածնունդ ըլլայ մեր ջան.
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն:
Մէկտեղ յոգնինք, մէկտեղ ցանենք,
Մէկտեղ թափին մեր քըրտինքներ,
Ըղձուած բարեաց յերկինս հանենք,
Որ կեանք առնուն Հայոց դաշտեր:
Ընդ աստեղօք ի՞նչ կայ սիրուն,
Քան զանձկալի եղբայր անուն:

Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ԱՆԴՐԱՆԻԿԻՆ

Իբրեւ արծիւ սաւառնում ես լեռ ու ժայռ,
Թնդացնում ես երկինք գետին տենչավառ,
Սուրբ անունդ պիտի յիշուի դարէ դար.
Հըսկայ լերինք քեզ ապաստան, Անդրանի՛կ:
Թըշնամիներ երբ լսեն քո անունը,
Օձերի պէս պիտ՝ սողան իրանց բոյնը.
Երակներիդ ազնիւ քաջի արիւնը
Չը ցամաքէ՜ մինչ յաւիտեան, Անդրանի՛կ:
Հայոց կուսանք դափնեայ պըսակ թող հիւսեն,
Քնքոյշ ձեռամբ քո ճակատը պըսակեն,
Գոհարներով անվախ կուրծքդ զարդարեն,
Կեցցե՛ս յաւէտ դու անսասան, Անդրանի՛կ:
Հայաստանի սոխակները քեզ համար
Թող դայլայլեն գիշեր-ցերեկ անդադար.
Անյաղթ մընաս, դո՛ւ քաջ կտրիճ սիրահար,
Հայրենիքի տէր ու պաշտպան, Անդրանի՛կ:

Ի ԶԷ՛Ն ՀԱՅԵՐ

Ի զէ՛ն, Հայեր, ի սուր եւ ի հրացան,
Տաճկահայաստանից կոչում է մի ձայն.
Լեռից լեռ թընդում է ահեղ հրաման,
Թռէ՛ք, Հայեր թռէ՛ք դէպի՛ Հայաստան,
Դէպի, դէպի, դէպի Հայաստան,
Թռէ՛ք, Հայեր, դէպի Հայաստան:
Արեւելք, արեւմուտք, հարաւ եւ հիւսիս
Դըղըրդաց ու թնդաց քաղցըր աւետիս.
Հայկայ քաջ զաւակաց առիւծ կրծքերից
Ազատութիւն հնչեց ամէն կողմերից.
Ամէն, ամէն, ամէն կողմերից.
Ազատութիւն հընչեց ամէն կողմերից:

Փրկութեան աւետիք առած ի բերան՝
Խումբ խումբ Հայեր դէպի Տաճկահայաստան
Դիմում են ցնծութեամբ իբրեւ հարսանիք,
Ուխտած՝ սուրբ արիւնով փրկել հայրենիք։
    Փրկել, փրկել, փրկել հայրենիք,
    Ուխտած՝ սուրբ արիւնով փրկել հայրենիք։
Տաճկահայաստանը ոտքի է կանգնում,
Առիւծաբոց վրէժ, վրէժ է գոռում.
Արիւնով ներկուած են բոլոր դաշտերը,
Լոկ արիւն են հոսում բոլոր գետերը։
    Բոլոր, բոլոր. բոլոր դաշտերը.
    Արիւնով ներկուած են բոլոր գետերը։
Թշնամին զարհուրած փախուստ է դիմում,
Անթիւ աւար ու գանձ իր յետին թողնում.
«Յաղթութի՜ւն. յաղթութի՛ւն» գոչենք միաձայն.
Թշնամին պարտուած է, կեցցէ՛ Հայաստան.
    Կեցցէ, կեցցէ. կեցցէ Հայաստան,
    Թշնամին պարտուած է. կեցցէ՛ Հայաստան։

ՎԱՐԴԱՆ

Իմ Հայրենեաց հոգի Վարդան,
Հոգիս հոգւոյդ եղնի ղուրպան.
Որ Տղմուտի ափերի քով,
Վաթսուն հազար կտրիճներով,
Զարկիր. զարկուար, ինկար քաջ-քաջ.
Պարսիկք սրփռած ի ձախդ ու յաջ։
    Իմ հայրենեաց արեւ Վարդան,
    Հոգիս հոգւոյդ եղնի ղուրպան։

Աւետարանն ու խաչն առիր.
Տարիր երկինք բարձրացուցիր.
Եւ դու ալ յետ թողիր գացիր,
Անուշ արեւդ հողին տուիր.
Որ հայրենեաց շողայ արեւ
Շաւարշանայ դաշտին վերեւ։
    Իմ հայրենեաց արեւ, Վարդա՛ն,
    Հոգիս հոգւոյդ եղնի ղուրպան։
Արիւնդ կարմիր, կարմիր թափուաւ,
Դաշտն ու ծաղիկ ներկուեցաւ.
Լուսնակն ելաւ ամպի տակից.
Պաղ-պաղ թափեց ցօղիկն յաչից.
Որ հայրենեաց վարդեր բացուին.
Երգէ պլպուլն դրախտի սարին։
    Իմ հայրենեաց արեւ, Վարդա՛ն,
    Հոգիս հոգւոյդ եղնի ղուրպան։

Ս. Ն. ՑԻԼԷԿԵԱՆ

ՀԱՅՐԵՆԻՔ

Իմ հայրենիք գիս կը կանչէ,
Հեռու եմ Հայաստանէն.
Հայու որդւոյն կը վայելէ՞
Հեռանալ Հայաստանէն։
    Միթէ արծաթ. ոսկի. գոհար,
    Կը փոխէ՞ Հայաստանը,
    Այն որ կ'ողբայ որդւոցն համար.
    Խղճալի Հայաստանը։
Խոր տխրութեան մէջ է թաղուեր,
Թագուհի Հայաստանը.
Բոպիկ ոտքով, արձակ մազով
Կ'արտասուէ Հայաստանը։

Անգութ երկինք ալ չի յիշեր.
Մոռցեր է Հայաստանը.
Անսիրտ հայերն ալ չեն սիրեր
Անուշիկ Հայաստանը։

Ո՜հ, թողէ՛ք զիս՝ խօսիմ ազատ,
Երգեմ միշտ Հայաստանը.
Անո՛յշ երկիր, կոյս անարատ,
Աննըման Հայաստանը։

Ա. ՀԱՅԿՈՒՆԻ

ԽԱՆԻ ԵՐԳԸ

Լուսին չկար, մութ գիշեր էր.
Մի խումբ կ'երթար արագ-արագ.
Տեսանք որ քաջ խանի խումբն էր.
Զինուած էին բոլոր նրանք։
Կեանքերը ազգին նուիրած.
Կտրիճ խանը առաջ ինկած՝
Գընում էին Տաճկաց սահման.
Թռչում էին կրակի նըման։

Հըրացանները ուսերին,
Դըրօշակը պարզել էին.
Գընում էին ուրախ, զուարթ,
Ազատութի՜ւն երգում էին։
Մութ անտառից անցնում էին.
Ամէն մէկը առիւծ էին,
Նժոյգ ձիանց վրայ նստած՝
Մերկ սըրերը քաշել էին։

Երբ քաջ խանը ելաւ բասեն,
Թնդանօթներ արձակեցին.
Հայ քաջերի մօսիններից
Գընդակները գոռգոռացին։

Երբ քաջ խանը հրահանգ կուտար՝
— Արի՛ք առիւծներըս իմ քաջ.
Մտան թշնամու խիտ շարքեր,
Կոտորեցին ձախըն ու աջ։

Կեցցէ՛ խանը իւր խմբովը.
Սարսափ թողեց Բասենումը.
Երեք օր ու գիշեր կռուեց,
Աչերիցը կտրեց քունը։
Հայաստանի հողին վրայ
Քաջը թափեց իւր արիւնը.
Յիշենք Հայեր, չի մոռանանք
Կտրիճ խանի սուրբ անունը։

ԼՈՒՍԻՆ

Լռեց, Ամպերն եկան ծածկեցին
Երկինքն, ու լուսինն աչքէս խլեցին.
Մնացի մենակ. հոգիս վրդովւած,
Ձեռներս ծոցիս, գլուխս քարշ առած.
Եւ այնուհետեւ ամէն իրիկուն
Մնում եմ լուսնի խաղաղ ծագելուն.
Նորա տխրամած դէմքը նայելիս՝
Յիշում եմ թշուառ վիճակը ազգիս։

Ա՜խ, ցոլա՛—փայլէ՛, տխրադէմ լուսին,
Գուցէ քո փայլից փայլ տաս և Հային։
Պատմէ շատերուն Վարդանի մահը,
Կամ ի՞նչպէս կորաւ Հայ ազգին գահը,
Կամ ի՞նչ վեհ սիրով սիրում էր Վարդան
Մայրենի հողը, — աշխարհն Հայաստան։

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

ՍԻՓԱՆԱՅ ՔԱՋԵՐ

Լօ, լօ՛, լօ՛, սէգ Սիփանայ սարի վերան,
Կտրիճներ ըշտապով գալիս են միանում.
Այն տեղ անահ որդիք՝ անյաղթ Սիփան լերան
Ջէնք ու զրահի են ընթանում։

Ինչո՞ւ վառւում են զինւում,
Կատարն իվեր ելնում անհամբեր.
Արիւնն է նոցա բորբոք սրտի մէջ եռում.
Սուրում, անցնում են ամպեր
Քան Սիփանայ սո՛ր քամին
Սըլանում են դէպի վար, դաշտի մէջ է թշնամին.

Նա է վառում նոցա վըրէժն անմոռաց,
Դաւաճանաբար վատթար թշնամին
Հատու սուսերը հանել, հայ իշխանին սպանել,
Այս է վառում քաջերին։
Հայ որեարն էլ ոտի կանգնած,
Այժմ թշնամուն, մահու մարտի է կանչում.
Ու վրէ՛ժ, արեան վրէ՛ժ է նա պահանջում,
Ու թշնամին պարտըւած,
Թողնում, փախչում սարէ սար,
Ցետ է մնում մեծ աւար։

Արիւն թափեցին փոխանակ արեան,
Արիւն քամեց ամեհի սուսեր,
Սուրը յագեցաւ, յետ դըրին պատեան,
Ելնում են հիմա սէգ Սիփանն ի վեր։
Սէգ Սիփանայ կանաչ գագաթին,
Քաջերն անում են մեծ խնդում,
Եւ ամպերի թանձրութեան միջին
Հսկայ Սիփանայ սար թընդում.
—«Էլ մօտ չեն գայ մեզ թշնամիք,
Սուր տեսան մեր պողպատիկ։

ԽԱՂԱՂ ԴԱՇՏԻ ՈՐԴԻՔ

Խաղաղ դաշտի որդիք. լեռները ելնենք,
Արօր, գութան մոռնանք, հրացան առնենք.
Խեղդուած մեր բողոքը յայտնենք զէնքերով
Եւ մեր արդար դատը վարենք արիւնով.
Մեր կեանք, մեր մահ թող լինի ազատ,
Ճնշուած հայու որդիք հարազատ։
Քան թէ ամէն վայրկեան կենդանի մեռնիլ,
Ազատութեան վճռենք աներկիւղ զոհուիլ.
Փափուկ մահճում հանգիստ կեանքը վայել է
Ով որ հայրենիքում ազատ ապրում է։
Մեր կեանք, մեր մահ թող լինի եւլն։
Ըստրկութեան շղթան խուլ շառաչում է,
Ազատութեան ճնշուած ձայնը կոչում է.
Ազատ լեռներ թող մեզ լինի ապաստան
Եւ ընդարձակ ձորեր՝ ազատ գերեզման։
Մեր կեանք, մեր մահ թող լինի եւլն։

ԽԱՒԱՐԵԼ ԵՄ

Խաւարել եմ ինչպէս գիշեր,
Իմ չորս կողմս է փոթորիկ.
Չունիմ քեզ սէր, չունիմ քեզ սէր,
Ես սիրում եմ իմ հայրենիք։
Այնտեղ անթիւ անբաղդ մայրեր,
Որդեկորոյս ծնողներ,
Եղբայրազուրկ անթիւ քոյրեր
Թափում են յորդ արցունքներ։
Ինձ մի՛ սիրիր, ինձ մի՛ սիրիր,
Ես շատ ու շատ փոխուել եմ.
Ա՛ռ թաշկինակդ սրբիր աչերդ,
Ես քեզ սիրել կարող չեմ։

Մնա՛ս բարեաւ, իմ աչքի լոյս,
Սէրդ լինի ինձ խրախոյս,
Արդ արտասուք ես պիտ' թափեմ
Որ իմ ցաւերս ըսփոփեմ։

Ա՛խ, տուէ՛ք ինձ մի քաղցր քուն,
Կեանքից հեռու սլանամ,
Այն աշխարհը՝ ուր խնդութիւն,
Ուր սէրն է միշտ անթառամ։

Ս. ՇԱՀԱԶԻԶ

ՀԱՄԱԶԱՍՊԻ ԵՐԳԸ

Ծագեց արեւ ազատութեան,
Փախէ՛ք ամպեր երկնքից,
Համազասպը իր խմբովը
Կուգույ խաչէն գաւառից։

Գալիս էին բազում զօրքով.
Ազիզբեգով Բէկովը,
Յանկարծ ինկաւ Ասկերանը,
Հերոսների ուռկանը։

Թուրք խուժանը սարսափահար
Փախչում էին, գլխակոր,
Թողնելով իրանց յետեւից,
Դիակներ հարիւրաւոր։

Հայերիս տէր Դաշնակցութիւն,
Քաջեր ունիս սրտալի,
Ամբողջ աշխարհ հռչակուեցաւ
Համազասպը պանծալի։

ԵՐԳ ՊԱՆԴՈՒԽՏԻ

Ծիծեռնա՛կ, ծիծեռնա՛կ,
Դու գարնան սիրուն թռչնակ,
Դէպի ո՞ւր, ինձ ասա՛,
Թռչում ես այդպէս արագ։
Ա՛խ, թռիր ծիծեռնակ,
Ծընած տեղըս Աշտարակ.
Անդ չինի՛ր քո բոյնը,
Հայրենի կտուրի տակ։
Անդ հեռո՛ւ, ալեւոր
Հայր մ'ունիմ սգաւոր,
Որ միակ իւր որդւոյն
Սպասում է օրէ օր։
Երբ տեսնես դու նորա,
Ինձնից շատ բարեւ արա՛,
Ասա՛, թող նըստի լայ.
Իւր անբաղդ որդու վրայ։
Դէ՛հ, սիրուն ծիծեռնակ,
Հեռացի՛ր, թռի՛ր արագ.
Դէպ' Հայոց երկիրը,
Ծընած տեղըս Աշտարակ։

Գ. Ա. ԴՈԴՈԽԵԱՆ

ԿԱՄԱՒՈՐՆԵՐՈՒՆ ԵՐԳԸ

Կամաւոր հայ զինուոր ենք,
Պատերազմի կը վազենք,
Վրէժի մէջ մկրտուած,
Թուրք արեան ենք ծարաւած։
Կեցցէ՜ քաջ Անդրանիկ եւ ընկերներ,
Կեցցէ՜ մի՛շտ հայ կամաւոր,
Մի՛շտ կեցցե՛ն, միշտ կեցցե՛ն հերոսներ։

Թող Թուրքերը իմանան
Բանակները հայկական.
Կը կոտրենք աջ ու ձախ,
Կամաւոր ենք, չունինք վախ։
Կեցցէ՜ Քաջ Անդրանիկ. և յն.

Երթանք դէպի Հայաստան,
Պարզենք դրօշը հայկական
Որուն տեսքէն պանծալի,
Թող վատ Թուրքը սարսափի։
Կեցցէ՜ Քաջ Անդրանիկ. և յն.

ԿԱՐՄԻՐ ԶԻՆՒՈՐ

Կարմիր զինւոր, կարմիր զինւոր,
Պարծանքն ես Հայաստանի.
Կռուի դաշտում, խաղաղ կեանքում,
Պահապանը մեր երկրի։

Երկու ուղի ունես գծած,
Խաղաղ կեանքում՝ փրկութիւն,
Իսկ միւսը՝ գոռ կռուի դաշտում
Թշնամու դէմ յաղթութիւն։

Գիտենք, որ դու կարմիր զինւոր,
Գիտութիւնը կը սիրես.
Եւ գիտութեան պաշարն առած՝
Հայրենիքը կը փրկես։

ԳՐ. ՍԻՒՆԻ — Վ. ԽԱՉԱՏՐԵԱՆ

ԽԱՆԱՍՈՐԻ ԱՐՇԱՒԱՆՔԸ

Կարկուտ տեղաց Խանասորայ դաշտումը,
Ֆէտայիներ դաշնակցական՝ վրէժ առան հովտումը։

Սոսկաց քիւրդը՝ քնաթաթախ Մազրիկցին,
Զէր երազում ընջուել խոպառ քաջ ֆէդայու գնդակից։

— Եամա՜ն. Աստուած. ֆէդան եկաւ ո՞ւր փախչիմ,
Աստ՛ց, որդուն կրծքին սեղմած լեղապատառ քրդուհին։

— Մի՛ վախենար, հանգիստ կացիր, բաջի ջան,
Կանանց երբեք ձեռք տալու չէ վրէժխնդիր քաջ ֆէդան։

Մի ժամուայ մէջ Մազրիկ ցեղը-ջնջուեցաւ,
Խանասորայ կանաչ դաշտը կարմիր գոյնով ներկուեցաւ։

Հայե՛ր, յիշէք նուիրական այս օրը.
Յուլիս ամսոյ քսանհինգին կատարեցէք մեր տօնը։

ԹՈՐՈՍ

ԽԱՆԱՍՈՐԻ ՔԱՅԼԵՐԳ

Կռուեցէ՛ք տղերք, կռուեցէ՛ք քաջ քաջ.
Անվեհեր կանգնած թշնամուն առաջ.
Ցանկալի է մեզ միշտ ազնիւ մահը.
Չեռու մեզանից ոսոխին ահը.
Ցառա՛ջ խիզախենք իբրեւ նահատակ,
Ի զուր թող չանցնի մեզնից մի գնդակ։

Մեզ տօնախմբեն մեր նախնի քաջեր.
Մեզի կը սպասեն մեր հէք եղբայրներ.
Ազատ չծընանք, գէթ մեռնինք ազատ,
Մեր սիրտն ու հոգին պահենք անարատ.
Այս անգամին էլ ցոյց տանք թշնամուն,
Թէ ի՛նչ է Հայու ուժն ու քաջութիւն։

Ահա՛ քիւրդերը փախչին սարսափած,
Ահա՛ դիակներ արեամբ շաղախուած.
Կրակ տեղացէ՛ք, անդադար կրա՛կ,
Փառք Դաշնակցութեան առատ է գնդակ.
Օ՛ն, կռուինք, տղերք, մինչեւ շունչ վերջին,
Արժանի լինինք փառաց պսակին:

Մեռնինք յուսալով, մերն է ապագան,
Մեռնինք, բայց կեցցէ՛, կեցցէ՛ Հայաստան.
Այսպէս յորդորեց ու ինկաւ արին,
Թողլով մեզ անուն յիշատակ բարին.
Անեղ կռուի մէջ մի փոքրիկ հերոս,
Անմոռանալի կտրիճ Մարտիրոս:

Մ. Ե.

ԿՌՈՒՆԿ

Կռո՛ւնկ, ուստի՞ կուգաս, ծառա՛յ եմ ձայնիդ,
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս.
Մի՛ վազեր, երամիդ շուտով կու հասնիս.
Կռունկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:

Թողել եմ ու եկել մըլքերս ու այգիս,
Քանի որ ա՛խ կ'անեմ, կու քաղուի հոգիս,
Կռո՛ւնկ, պահ մի կացի՛ր՝ ձայնիկդ ի հոգիս.
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:

Քեզ խապար հարցնողին չես տանիր տալապ,
Ձայնիկդ անոյշ կու գայ քան ըղձըրի տոլապ.
Կռո՛ւնկ, Պաղտատ իջնուս՝ կամ թէ ի Հալապ,
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս.

Աստուած՝ քեզնէ խնդրեմ մուրվաթ ու քէրամ,
Ղարիպին սիրտն է խոց, ճիկէրն է վէրամ,
Կերած հացն է լեղի ու ջուրն է հարամ.
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս.

Ո՛չ ըղլուր օրն գիտեմ, ո՛չ ըգկիրակին,
Զարկած է գլխ չամփուրն բռնած կըրակին,
Այրիլս չեմ հոգար՝ ձեզնէ կարօտ եմ.
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:

Պաղտատու կուգաս՝ կ'երթաս ի Սէհրադ,
Թղթիկ մի գրեմ, տամ քեզ ամանաթ.
Աստուած թող վկայ լինի քո վըրադ.
Տարեալ հասուցես զայդ իմ սիրելեաց:

Գրել եմ մէջ թղթիս՝ թէ հոս մնացի.
Օրիկ մի օրանց դաչերս չը բացի.
Սիրելիք, ձեզնէ կարօտ մնացի.
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն խապրիկ մի չունի՞ս:

Աշունն է մօտեցել. գնալու ես թէպտիր.
Երամ ես ժողվել հազարներ ու բիւր.
Ինձ պատասխան չտըւիր, ելար գնացիր.
Կռո՛ւնկ, մեր աշխարհէն գընա՛, հեռացի՛ր:

Ն. ՔՈՒՉԱԿ

ՀՕՆԻ ԵՐԳԸ

Հա՛ կառուցուեց նոր հայրենիք.
Խորհուրդների Հայաստան.
Սէգ բանուորներ ու գիւղացիք
Հիմա տէրն են այս նոր տան:
Ձեզ ուրախ լուր, մեզ ուրախ լուր,
Նոյ է կոչում ՀՕՆԸ ամենուր:

Հիմա միայն խինդ է ու տօն.
Հիմա պայքար, ջանք ու գործ,
Դէ՛, բե՛ր ու զարկ երկաթ, բետոն,
Վեր բարձրացաւ շէնքը նոր՝
Ձեզ ուրախ լուր, մեզ ալն.

ՀԱՅ ԱՊՐԻՆՔ

Հայ ապրինք, եղբարք, մարդկութեան մէջը,
Հայ կընքեր է մեզ պատմութեան էջը,
Հայ անուամբ զմեզ կ'ողջունեն երկինք.—
Եղբա՛րք, Հա՛յ ապրինք:

Հա՛յ ապրինք.— Մեր հայրն է այն դիւցազուն,
Որ զԱզատութիւն սովրեցուց մարդուն,
Ու մեզ վեհ անուն մը տուաւ բաժինք,
Եղբա՛րք, Հա՛յ ապրինք:

Մեր աշխահն է սուրբ.— Մեր հողուն վըրան,
Աստուած է քալեր, հանելով զԱդամ.
Մեր լեզուն առեղծեր ու խօսեր նախ ինք,—
Եղբա՛րք, Հա՛յ ապրինք:

Հայն ու մարդկութիւն՝ նոյն ունին օրրան,
Երկիր փրկութեան է մերս Հայաստան,
Կըրօնից նախկին սեղան է Մասիք.—
Եղբա՛րք. Հա՛յ ապրինք:

Հայուն պերճ անուն՝ ո՛չ միայն յերկիր,
Այլ և յեթերց մէջ շողայ լուսալիր,
Քաջ Հայկին աստեղք անմահ են յերկինք.—
Եղբա՛րք. Հա՛յ ապրինք:

Մեր քաղցր հայրենիք, մեր Թագ. գաւազան,
Ամպեր են ծածկեր արեւի նման,
Ցուցացէ՛ք, արև կուտան մեզ երկինք.
Եղբա՛րք, Հա՛յ ապրինք:

Ո՛չ, ճակատագիր մեր՝ չէ միշտ տըխուր,
Ըզթշուառութեան ուտել հացն ու ջուր,
Նոր երջանկութեան ապագա՛յ մ'ունինք...
Եղբա՛րք, Հա՛յ ապրինք:

Հա՛յ ապրինք, որ մեր որդիքն ալ, եղբա՛րք,
Կարենան պարծիլ որ զմեզ ունին հարք,
Զըլլա՛նք հայ անուան չըլլանք նախատինք.—
Եղբա՛րք, Հա՛յ ապրինք:

Հա՛յ ապրինք — Օր մը յաղթական մահուան
Պիտի բարձրանայ անմահ Հայութիւն...
Ո՛հ, ա՛յն օր մեզի շուտ ծագէ, երկի՛նք...
Եղբա՛րք, Հա՛յ ապրինք:

ԽՈՐԷՆ ԵՊԻՍԿ. ՆԱՐ-ՊԷՅ

ՀԱՅԱՍՏԱՆ

Հայաստա՛ն, երկիր դրախտավայր,
Դու մարդկանոյ ցեղին օրրան,
Դու և բնիկ իմ Հայրենիք,
Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն:

Ի վեհ անունդ սիրտ իմ, ո՛հ, յոյժ
Ոգեւորի ի նոր խրախոյս,
Եւ անձկայրեաց ի քեզ յուսամ,
Ի քեզ, ի քեզ, յո՛յս իմ միայն.
Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն:

Հայաստան, անուն փարելի.
Ի քեզ հանգիստ Նոյեան Տապան
Եգիտ, եւ քեւ ապրեցաւ Նոյ.
Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն:

Գնաք քաջառաջք ազնուարուգխք,
Ցնողդ բարի առնէն յուռթի,
Թէ ապրիմ ես, թէ մինչ ցնծամ,
Թէ, թէ պանծամ փառք իմ միայն,
Հայաստա՛ն, Հայաստա՛ն, Հայաստա՛ն:

Կ. Վ. Յ. ՄԻՐԶԱ-ՎԱՆԱՆԴԵՑԻ

ՄՈՒՐԱՏԻ ԵՐԳԸ

— Հայաստանից եկած զինուոր,
Պատմի՛ր ինձի հայրենիքից,
Անդրանիկի զինուորները,
Վրէժ լուծո՞ւմ են քիւրտերից։
— Ուրախ եղիր դու հայ տղայ.
Ունիս պաշտպան քաջ Անդրանիկ,
Մուրատի պէս հոտոտ ծաղիկ,
Էլ ի՞նչ ուզում է հայրենիք։
Գէորգ Չաւուշն ու Հրայրը,
Սարսափեցրին Թիւրքիստանը.
Կոտորուեցաւ ողջ բանակը,
Ազատուած է Հայաստանը։

ԿՌՈՒԻ ԵՐԹ

Հայ եղբայրներ, գէ՛հ գունդ ի գունդ,
Արեան դաշտը մենք նետուինք,
Սուրը ձեռին, հուրը կրծքին,
Վառած սրտեր բորբոքին։
Արեւելքից լոյս է ծագում
Եւ Հայաստանն ուժքին ցնծում,
Օ՛ն, օ՛ն յառա՛ջ,
Օ՛ն ի մա՛րտ. օ՛ն ի հրապայր,

Մեր արիւնով, մեր արիւնով
Ճամբայ բանանք հա՛յ եղբարք, ջա՛ն եղբարք։
Թշնամւոյն դէմ մենք սլանանք
Հեղեղի պէս, փոթորկի պէս.
Նրա արիւնով լեռներ ներկենք,
Միրծ գիակով՝ դաշտեր պատենք։
Թո՛ղ վերջապէս տեսնէ վաթան,
Պարզած դրօշակն Ազատութեան։

ՀԱՅՐԵՆԱՍԷՐ

Հայրենիքդ մոռցի՛ր, կ՚ըսեն օտարներ,
Անիծեալ է, լոկ փուշ ունի ու աւեր.
Մեր հող գրախտ, ջուրն օշարակ,
Օդը քաղցր է, օդը քաղցր է։
Եկուր պանդուխտ, սրտիկդ անոր նուիրէ,
Թէև ամուլ, ամայի ըլլայ երկիրս հայրենի.
Ես կը սիրեմ Հայաստան, ապրի՛ հոգիս Հայաստան:

Թո՛ղ հայութեան առջև լռէ պատմութիւն,
Թո՛ղ տիեզերք մոռնայ հայուն քաջութիւն.
Ես կը սիրեմ, չեմ մոռանար,
Անըրման. անըրման,
Իմ մայրենի այրիացեալ Կիլիկիան.
Թէև ամուլ, ամայի. ըլլայ երկիրս հայրենի,
Ես կը սիրեմ Կիլիկիան, ապրի՛ հոգիս Կիլիկիան։

ՀԱՅՐԵՆԻՔ

Հայրենի՛ք, Հայրենի՛ք,
Օդդ սիրուն, ջուրդ սիրուն, դո՛ւն սիրուն,
Պէս պէս գոյնով ծաղիկներդ զարդարուն.

Չեն դադարիր աշխատելով օրն ի բուն,
Քո հարազատ մշակներդ, Հայրենի՛ք։

Հայրենի՛ք, Հայրենի՛ք.

Երբոր լինի գարնանամուտ, նոր գարուն,
Կը բազմանան վըտակներդ, Հայրենի՛ք,
Շար ի շար ցնծութեամբ երգերով զուարթուն,
Շարժւում են բանակներդ, Հայրենի՛ք։

Հայրենի՛ք, Հայրենի՛ք.

Դուն դրախտն ես, քեզի սուրբ գիրքը վկայ,
Քու մէջիցդ անմահութեան հոտ կուգայ.
Հազար ափսոս՝ լուսաւորուած չեն հիմայ,
Ժողովուրդդ, զաւակներդ, Հայրենի՛ք։

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿԻՆ

Հայրի՛կ, Հա՛յրիկ, քո հայրենիք
Վասպուրական մեր աշխարհ,
Վարդի փոխան քեզ փուշ բերաւ,
Յաւերդ դառան բիւր հազար։
Մայիսն եկաւ սոխակներով,
Վարդի թփիկ որոնեց,
Փոխան թփի փըշեր գտաւ,
Լալահառաչ ձայն հանեց։
Հայրիկն ասաց.— «իմ հայրենեաց,
Փուշն անուշ է քան զվարդ,
Ես այն փշոց մէջը դարձեալ
Կը որոնեմ սիրուն վարդ։
Այն սայրասուր փշերն ամէն,
Փունջ կապեցէք շար ի շար,
Թողէ՛ք գլխիս պսակ կապեն,
Որուն ճակատս է յօժար։»

Հա՛յրիկ, Հա՛յրիկ, քո սուրբ ճակատ
Արիւն, արցունք են, ո՜հ, միշտ,
Փթթեալ վարդից կարմիր թերթեր,
Կը պսակեն փառօք զարդ։

Հ. ՃԱՆԻԿԵԱՆ

ԱՌ ՀՆՉԱԿ

Հեռաւոր երկիր նըստած դու նըժդեհ
Հայրենեաց բաղդին մտաւոր ես տեղեակ.
Քարոզ քաջարի նոր ըսկըզբանց վեհ,
Յեղափոխութեան ձայնատու Հընչակ։

Նոր գաղափարի քու ցանած սերման
Ազնիւ պըտուղներ, հասուննան արագ.
Կարին եւ Պոլիս որոտման նըման՝
Անդրանիկ շարժմունք ծընան քեւ, Հընչակ։

Չար բըռնակալը Հայոց կեղեքիչ,
Վախէն պահուեցաւ ոսկի գահին տակ.
Խուլ Եւրոպայի թընդաց մէն գահլիճ,
Հայը ցընցուեցաւ, կարմրեցաւ Հընչակ։

Այսօր քո սերմանց նոր պըտուղք ահա,
Հասած կարմըրին արեան նըմանակ.
Կենաց եւ մահու սուրբ ժամ մերձենայ,
Կարմիր հրաւէրիդ ակն ունինք, Հընչա՛կ։

Կոչնակդ հընչեցո՛ւր, հընչեցուր արեկ.
Թող Հայք ոտք ելլեն ծագէ մինչեւ ծագ.
Փըշրէ՛ ժանտ շըղթան, ծագի՛ նոր արեգ,
«Ազա՛տ ենք», հընչէ՛, ոսկեզօ՛ծ Հընչակ։

Մ. ՏԱՄԱՏԵԱՆ

ՔԱՅԼԵՐԳ ԱՅՆԹԱՊԻ ԻՆՔՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ

Հեռո՛ւ կեցէք, դուք վախկոտներ,
Մենք նոր սերունդ, նոր Հայկեան.
Մկրտուած ենք հայ արիւնով
Դիւցազններուն որ ինկան։

Դուրս պիտի գանք մենք կամաւոր,
Եւ թուլութեան ձեր չղթան՝
Հարուածներով սուրբ դաշոյնի
Փշրենք պիտի յաւիտեան։

Ձայնն ահեղ մեր պոմպաններուն
Ի զէն հայե՛ր. կը գոռան.
Նահատակաց թարմ դիակներ
Հողին տակէն կը խայտան։

Ա՛խ հայրենիք, գո՛ւ Կիլիկիա,
Սրբէ՛ արցունքդ, ալ հերի՛ք.
Զի քու սիրոյդ, տառապանքիդ,
Մեռնիլ գիտցան Այնթապցիք։

Լ. ԼԵՒՈՆԵԱՆ Յ. ԱՂԱԵԱՆ

ԽՐԱԽՈՅՍ

Հերի՛ք որդեակք, այսքան տարուան տառապանք.
Հերի՛ք դաժան անգութ քիւրտի ոտքն ինկանք.
Բանի խոնարհ գլուխ տուինք գայլերին,
Ա՛յնքան ծանր բեռներ դրին մեր վզին։

Հերի՛ք, ելլենք ցոյց տանք թէ մենք հարազատ
Հայ քաջերի արիւնից ենք եւ ազատ.
Թէեւ չունինք ո՛չ սուր, ո՛չ թուր, ո՛չ նիզակ,
Մեր բահերն էլ կ'անեն նրանց շանսատակ:

Ինչո՞վ են նրանք մեզ տիրելու արժանի.
Նրանք մարդ չեն՝ այլ գազաններ վայրենի.
Մերն է ձիրքը. մերն է ուսումն ու հանճար,
Մերն է հողը, մենք ենք նրա տէրն արդար։

Հերի՛ք, ելլենք ցոյց տանք թէ մենք ե՛ն։

Նրանց են մեր կոյս աղջիկունքը. հարսունքը.
Նրանց են մեր ճակտի քրտանց արդիւնքը.
Նրանց սուրի ծայրն է կախեա մեր հոգին.
Նրանց գամփռը մեզնից շատ է թանկագին։

Հերի՛ք, ելլենք ցոյց տանք թէ մենք ե՛ն։

Տ. ՋՈՒՀԱՃԵԱՆ ՄՆԱԿԵԱՆ

ՀԵՐՈՍ ԱՆԴՐԱՆԻԿ

Հերոս մանչից, Սուլթան դողդողաց.
Վիլհէլմի աչքից արտասուք ցողաց.
Սուրըդ թշնամու կրծքին շողշողաց.
Հայոց ղեկավար, հերո՛ս Անդրանիկ։

Քեզ համար պէտք է կատարենք մաղթանք,
Անգութ թշնամուն ցոյց տուող տանջանք,
Դուն պէտք է լինես մեր փառքն ու պարծանք,
Քաջ գործակատար, հերոս Անդրանիկ։

Պարզէ՛ դրօշակ. տեսնէ Եւրոպան,
Թող բացականչէ՝ — կեցցէ՛ Հայաստան,
Կեցցե՛ս դուն յաւէտ, հերոս հայկական,
Հայոց ղեկավար, հերո՛ս Անդրանիկ։

Դուն պէտք է փրկես ամբողջ Հայաստան.
Կարին եւ Սասուն. մայրաքաղաք Վան,
Տիգրանակերտից մինչեւ Շաւարշան,
Տիրեց մեզ համար հերոս Անդրանիկ։

ՎԱՐԴԱՆԻ ԵՐԳԸ

Հիմի է՞լ լռենք, եղբարք, հիմի է՞լ.
Երբ մեր թշնամին իր սուրն է գրել,
Իր օրհասական սուրը՝ մեր կրծքին,
Ականջ չի դնում մեր լացուկոծին։
Ասացէ՛ք, եղբարք. Հայե՛ր, ի՞նչ անենք,
Հիմի է՞լ լռենք։
Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին
Դաւով, հրապոյրով տիրեց մեր երկրին,
Ջնջեց աշխարհից Հայկայ անունը.
Հիմքից կործանեց Թորգոմայ տունը,
Խլեց մեզանից թագ, և՛ խօսք և՛ զէնք.
Հիմի է՞լ լռենք։
Հիմի է՞լ լռենք, երբ մեր թշնամին
Խլեց մեր սուրը—պաշտպան մեր անձին,
Մըշակի ձեռքիցն էլ խոփը խլեց,
Այդ սուր ու խոփից մեր շղթան կռեց.
Վա՜յ մեզ, շղթայով կապուած գերի ենք.
Հիմի է՞լ լռենք։
Թո՛ղ լռէ մունջը, անդամալոյծը,
Կամ՝ որոց քաղցր է թըշնամու լուծը.
Բայց մենք, որ ունինք հոգի ու սիրտ քաջ՝
Ե՛կ, անվախ ելնենք թշնամու առաջ,
Գոնէ մեր փառքը մահով յետ խլենք,
Ու այնպէս լռենք։

ԳԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

ՁՕՆ ՀՆՉԱԿԻՆ

Հնչի՛ր դու, հնչի՛ր, աններման Հնչակ,
Քո գիլ-գիլ ձայնով, զօղանջով ուժգին.
Հնչի՛ր, արթնացո՛ւր դու քնածներին,
Տարածի՛ր մէն վայր մեր վեհ նպատակ։

Նոր կեանք է տալիս մեզ, ոգի, կորով,
Քո վառ հնչիւնի մէն մի ելեւէջ.
Լեցնում մեր սրտեր կայծերով անշէջ,
Եւ Ազատութեան ներշնչում գորով։
Զարանենք ոսոխ,— դահճապետ Սուլթան,
Վամփիր բորենի.— արիւնարբու Զար
Ճնշեն, կոտորեն, կեղեքեն մեզ յար,
Մեր կեանքն ու արիւն ծծեն, յղփանան։
Անընդհատ հնչի՛ր. Հնչակ յար ազատ,
Անխիղճ ոսոխներն՝ գձուձ և անարգ.
Քո ահեղ ձայնով կոչի՛ր դու ի կարգ.
Եղի՛ր մեր սրտի թարգման հարազատ։
Կոչենք միաձայն.—"Կեցցէ՛ անսասան
Վեհ գաղափարի սրբազան Հնչակ,
Վառ Արշալոյսի պարզենք դրօշակ.
Հնչի՛ր. «Մօտ է մեր Ազատ Ապագան»։

Յ. ԹԱՆՋՈՒՏԵԱՆ

ՀՐԱԺԱՐԻՄՔ ԸՆԿԵՐՆԵՐ

Հրաժարիմք ընկերներ, հին օրէնքներից,
Թափ տանք նրանց փոշին մեր ոտներից.
Մենք կ'երթանք հալածուած ընկերների հետ,
Մենք կ'երթանք մերկ, սոված բանուորների հետ.
Դաւադիր թշնամուն մենք միշտ կ'անարգենք
Ու նրանց կռուի դաշտ կը կանչենք։
Խիզախենք ընկերներ, այս կռուի՛ն արդար,
Թո՛ղ կործանին կարգերը միշտ վատթար.
Չենք ուզում պուրժուաներ, կղեր ձրիակեր,
Չի լինինք աղքատներ, տրուկ ծառաներ.
Թո՛ղ ելենք հիմնելու արդար աշխատանք,
Ընկերվար դրօշին փառք պարծանք։

ԿՈՒԳԱՆ ՈՒ ԿԵՐԹԱՆ

Զախորդ օրերը ձըմրայ նըման կուգան ու կերթան.
Վհատելու չէ, վերջ կ՚ունենան կուգան ու կերթան.
-Դառըն ցաւերը մարդու վերայ չեն մընայ երկար.
Որպէս յաճախորդ՝ չարուէ-չարան կուգան ու կերթան։

Փորձանք, հալածանք եւ նեղութիւն ազգերի գլխից,
Ինչպէս ճանապարհի կարաւան կուգան ու կերթան,
Աշխարհը բուրաստան է յատուկ, մարդիկը ծաղիկ,
Որքա՜ն մանուշակ, վարդ, բալասան կուգան ու կերթան։

Ո՛չ ուժեղը թող պարծենայ. ո՛չ ալ տկարը տըխրի,
Փոփոխակի անցքեր զանազան. կուգան ու կերթան,
Արեւը առանց վախենալու ցայտում է լոյսը,
Ամպերը դէպի ապօթարան կուգան ու կերթան։

Երկիրը ունեալ զաւկին է փայփայում մօր պէս,
Անկիրթ ցեղերը թափառական, կուգան ու կերթան.
Աշխարհը հիւրանոց է, Ջիւան, մարդիկ հիւր են,
Այսպէս է կանոնը բնական, կուգան ու կերթան։

ԱՇՈՒՂ ՋԻՒԱՆԻ

ԿԱՐՆՈՅ ՇԱՐԺՈՒՄԸ

Ձայն մը հնչեց Էրզրումի Հայոց լեռներէն,
Թունդ թունդ ելան Հայոց սրտեր զէնքի չաչիւնէն։

Հայ գիւղացին դարուց ի վեր սուր զէնք չէր տեսած,
Դաշտը թողուց, սուր, հրացան բահի տեղ առած։

Քնքոյշ կեանքը ծանր է թուում հայ օրիորդին,
Զէնքը ձեռին յորդորում է Հայոց քաջերին։

Հայ տիկինը ստիպում է ամուսնոյն գնալ,
Պատերազմի դաշտին վրայ վէրք տալ՝ ստանալ։

Հայ ծերուկը ցուպը ձեռին լալով խնդրում է,
Հայրենիքի ազատութիւն տեսնել ու մեռնիլ։

Անմիութիւն տունը քանդող հայոց խեղճ ազգին,
Հրաժարեցաւ, տեղի տուաւ միութեան ձայնին։

Լսեց Թուրքը ու սառեցաւ արիւնը վատին,
Չէր երազել Հային տեսնել նա այդ վիճակին։

Ուրախացաւ Մայր Հայաստան, ելաւ կանգնեցաւ,
Հինգ դարերի սուգ, տառապանք մի քիչ մեղմացաւ։

ԾՈՎԱԿ

Ջա՛յն տուր, ո՛վ ծովակ, ինչո՞ւ լռում ես,
Ողբակից լինել չը կամի՞ս դժբաղդիս,
Շարժեցէ՛ք զեփիւռք, ալիքը վէտ-վէտ,
Խառնեցէք զարտասուս այս ջրերիս հետ։

Հայաստանի մէջ անցքերին վկայ,
Սկզբից մինչեւ ցարդ խնդրեմ ինձ ասա՛,
Մի՞թէ միշտ այսպէս պիտ՝ մնայ Հայաստան,
Փշալից անապատ, երբեմն բուրաստան.

Մի՞թէ միշտ այսպէս ազգս խղճալի,
Կը լինի ծառայ օտար իշխանի,
Մի՞թէ Աստուծոյ աթոռի մօտին,
Անարժան է Հայն եւ Հայի որդին։

Արդեօք գալո՞ւ է մի օր ժամանակ,
Տեսնել Մասիսի գլխին մի դրօշակ,
Եւ ամէն կողմից պանդուխտ հայազգիք
Դիմեմ դէպ իւրեանց սիրուն հայրենիք։

ՐԱՖՖԻ

ՁԱՅՆ ՏՈՒՐ ՈՎ ՓԵԴԱ

Ձա՛յն տուր, ո՛վ փէդա, ինչո՞ւ ես տրտում,
Լուռ ու մունջ նըստած, երկար մտածում.
Աւա՛ղ, երկար մտածում,
Տխուր երկար մտածում։
Շարժեցէ՛ք տըղերք սուրեր շողշողուն,
Թափեցէ՛ք կըրակ թշնամեաց գլխուն,
Գաղան թշնամեաց գլխուն,
Դաժան թշնամեաց գլխուն։
Թափենք մեր արիւն իբրեւ ախոյեան
Լինի առաջնորդ մեր ազատութեան,
Սիրուն մեր ազատութեան,
Անուշ մեր ազատութեան։
Շտապեցէ՛ք, ընկերք, խմբուիլ միատեղ,
Մետաքսէ դրօշակ ծածանի այնտեղ.
Թող մի՛շտ ծածանի այնտեղ
Սիրուն ծածանի այնտեղ։
Պարզեցէ՛ք դրօշակ վեհ Դաշնակցութեան,
Լինի առաջնորդ մեր ազատութեան,
Սիրուն մեր ազատութեան,
Անուշ մեր ազատութեան։
Քանի այսպէս է Հայը խղճալի,
Զինուած պիտ՚ լինի ամբողջ փէդայի.
Սիրուն ամբողջ փէդայի.
Կտրիճ ամբողջ փէդայի։

ԱՐԱՔՍԻ ԱՐՏԱՍՈՒՔԸ

Մայր-Արաքսի ափերով
Քայլամոլոր գնում եմ,
Հի՛ն, հի՛ն դարուց յիշատակ՝
Ալեաց մէջը պտրում եմ.

Բայց նոքա միշտ յեղյեղուկ՝
Պղտոր ջրով եղերքին
Դարի՛ւ, դարի՛ւ խփելով՝
Փախչում էին լալագին։

— Արա՛քս, ինչո՞ւ ձկանց հետ
Պար չես բռնում մանկական.
Դու դեռ ծովը չի հասած՝
Սգաւոր ես ինձ նըման։

Ինչո՞ւ արցունք ցայտում են՝
Քո սէգ, հըպարտ աչերից.
Ինչո՞ւ արագ փախչում ես
Այդ հարազատ ափերից։

Մի՛ պղտորել յատակդ,
Հանդարտ հոսէ՛ խայտալով.—
Մանկութիւնը քո կարճ է,
Շուտ կը հասնիս դէպի ծով։

Վարդի թփեր թո՛ղ բուսնին
Քո հիւրընկալ ափի մօտ,
Սոխակները նոցա մէջ
Երգեն մինչեւ առաւօտ։

ԴԱՄԱՌ-ՔԱԹԻՊԱ

ՄԵՆՔ ԱՆԿԵՂԾ ԶԻՆՈՒՈՐ ԵՆՔ

Մենք անկեղծ զինուոր ենք, առանց ի վիճակ,
Ուխտել ենք ծառայել երկար ժամանակ.
Պարսկաստանի խորքից եկել է նամակ,
Գնում ենք բարով, կ'ուշանանք տարով,
Արիւն, սուր ու հուր պատերազմի դաշտ կ'սպասեն մեզի։

Դուշմանը մեզ տուեց Ջանֆիդայ անուն,
Այդ անուան համաձայն տեսաւ զօրութիւն.
Մենք չենք ուզեր ազատ կամքի բռնութիւն,
Ուխտել ենք կռուել. այդ սիրով մեռնել.
Համոզուած ենք որ միայն զէնքով կայ հայոց փրկութիւն։
Ստամբօլը պիտի լինի արեան ծով.
Ամէն կողմից կռիւ կը սկըսի շուտով.
Կոտորից Բաշկալա, անցնենք հեշտ կերպով.
Աջից Վարդանը, ձախից Իշխանը,
Գրաւենք Այրակ, տարածենք սարսափ,
Փա՛ռք Դաշնակցութեան։

Բաշկալա գաւառում, այն պատերազմին.
Աւելի մեծ սարսափ տիրեց Սուլթանին.
Քաջ Ջէյթունը յաղթեց վատ չար գազանին.
Կեցցէ Ջէյթունը, խրոխտ Սասունը, Դաշնակցութիւնը
Բախտաւոր օրեր, պարծանք Հայերին։

ՄԵՆՔ ՊԷՏՔ Է ԿՌՈՒԵՆՔ

Մենք պէտք է կռուենք և ո՛չ լաց լինենք,
Ազգի կորուստը զէնքով յետ խլենք.
Այսքան դար լացինք, ո՞ւր է լոզը,
Մեզ ի՞նչ չահ բերեց արցունքի ծովը։
Այլ ևս չըլանք և ո՛չ լաց լինենք.
Կրակուած սրտով մեր գործը վարենք.
Անվեհեր քաջին այս է պատկանում,
Միշտ ազատ մեռնել կռուի լայն դաշտում։

Մոլի և երկչոտ թշնամին թող լայ,
Երբ հայ քաջի դէմ կռիւ դուրս կուգայ.
Մենք վախեցող չենք մահից տանջանքից,
Եւ ոչ ալ մահու դաժան գնդակից։

Անէծք այն հօրն, որ չի մղում որդուն,
Որ ազգի սիրոյն նա թափէ արիւն.
Ամօ՛թ այն Հային և բիւր նախատինք,
Որ ազգի սիրոյն չի գործում բարիք։

ՄԵՐ ՀԱՅՐԵՆԻՔ

Մեր հայրենիք թշուառ, անտէր,
Մեր թշնամեաց ոտնակոխ,
Իւր որդիքը արդ կանչում է,
Հանել իւր վրէժ, քէն ու ոխ։
Մեր հայրենիք շղթաներով
Այսքան տարի կապկապած,
Իւր քաջ որդւոց սուրբ արիւնով
Պիտի լինի ազատուած։
Ահա՛, եղբայր, քեզ մի դրօշ,
Որ իմ ձեռքով գործեցի.
Գիշերները ես քուն չեղայ,
Արտասուքով լուացի։
Նայի՛ր նրան երեք գոյնով՝
Նուիրական մեր նշան,
Թող փողփողի թշնամու դէմ,
Թո՛ղ կործանի Տաճկաստան։
Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ՝ մեռնի.
Բայց երանի որ իւր ազգի
Ազատութեան կը զոհուի։
Գընա՛, եղբայր, Աստուած քեզ յոյս,
Ազգիս սէրը քաջալեր.
Գնա թէև չեմ կարող գալ.
Բայց իմ հոգին քեզ ընկեր։

Թրգմ. Իտալ. Մ. ՆԱԼԲԱՆԴԵԱՆՑ

ԸՆԿԵՐՎԱՐԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԳ

Միանանք բանուորներ հայ, այլազգ՝ բոլոր երկրի.
Յանուն գաղափարի, խեղճ ճնշուած աղքատների.
Դրօշ տանք, խորտակենք բերդը ցեցերի,
Մինչեւ ե՞րբ մենք ուտենք փշրանք հացերի.
Հացը մենք կ'արտադրենք արիւն քրտինքով,
Նրանք կուշտ իսկ մենք միշտ՝ քաղցած օրերով։

Միանանք հողագործ բոլոր մշակ ընկերներ,
Պրոլետար բանուորներ, շահագործուող ռէնջպէրներ,
Կոխկրտենք օրէնքը հողատէրերի,
Եւ խլենք մենք հողը ձեռքից վատերի,
Հողը մեր, ջուրը մեր, աշխատանքը մեր,
Մենք հերկենք, մենք ցանենք, արդիւնքը չէ մեր։

Բաւ է բաւ ընկերներ՝ կրենք լուծը չարերի.
Կապիտալիստների, առանձնաշնորհեալների.
Վար առնենք դիմակը վատ կղերների,
Որ չանեն մեզ ստրուկ չար աստուածների.
Ընդգրկենք սկզբունք սօցիալիզմի,
Հօ՝ երկրի վրայ հիմնենք դրախտն երկնքի։

ՓՈՔՐԻԿ ԶԻՆՈՒՈՐ

Մի նոր ծաղիկ բացուեց էսօր,
Մեր շարքերում՝ մի նոր ծաղիկ.
Ցանկանք նրան բազուկ հզօր,
Ըմբոստ հոգի ու սիրտ արի.—

Ողջո՛յն, ողջոյն էս օրին,
Ողջո՛յն, փոքրիկ զինուորին:

Կը մեծանաս, բոյ կը քաշես,
Կը միանաս մեր բանակին.
Մեզ հետ հինը կը տապալես,
Հիմք կը դնես մեր լաւ կեանքին.

Ողջոյն, ողջոյն էս օրին, *և լն.*

Ռ. ՄԵԼԻՔԵԱՆ　　　Գ. *ՄԱՀԱՐԻ*
ԳՐ. ՍԻԻՆԻ

ՔԱՅԼԵՐԳ Հ. Յ. ԴԱՇՆԱԿՑՈՒԹԵԱՆ

Մշակ, բանուոր, ռէնջպէր ախպէր,
Արի՛ք, միանանք, յառաջ գնանք,
Աշխատանքի դատի պաշտպան՝
Դաշնակցութեան թեւ թիկունք տանք։

Ա՜խ, մենք տանջուենք, քրտինք թափենք,
Արիւն վաստակ դատենք, դիզենք,
Շահագործող ցեցեր վատնեն,
Իսկ մեզ չոր հաց բաժին հանեն։

Դէ՜հ, սեւ օրեր, բողոք դարձէ՛ք,
Արիւն, քրտինք երկունք մտէք,
Տանջանք, զրկանք, լեզու առէ՛ք,
Սօցիալիզմի ճամբան բացէ՛ք...

1900　　　ԳՐ. ՍԻԻՆԻ

ՔԱՅԼԵՐԳ

Ռ. Ա. ԿՈՒՍԱԿՑՈՒԹԵԱՆ

Եկէք, բոլորուինք մեր սուրբ ուխտին շուրջ,
Մեր գործն է վսեմ, մեր պայքարն է լուրջ,
Վառուած ողջամիտ սկզբունքներով,
Մեր պարտքն անվհատ կատարենք սիրով։

Նոր սիրտ, նոր հոգի, նոր խանդ առէք, Հա՛յք,
Ռամկավարութեան ծագեցաւ մեզ այգ:

Ցրուած Հայութեան սիրտերէն բաժան
Բառնանք թունաւոր քէն ու ոխ դաժան.
Ջանանք փոխարկել բիրտ նիւթը՝ լոյսի
Եւ թող միտքն ըլլայ ուղեցոյց յոյսի՝
Նոր սիրտ, նոր հոգի, նոր խանդ ելնի։

Իջնե՛նք ռամկին մօտ, ժողովրդին մէջ,
Ձեռքերնիս բռնած լոյսի ջահն անշէջ.
Քննենք, պրպտենք ցաւոց աղբիւրն յորդ,
Նոր կեանքին ըլլանք խիզախ ռահայորդ՝
Նոր սիրտ, նոր հոգի, նոր խանդ ելնի՝

Հերի՛ք՝ տարուեցանք պատրանքներով սին.
Հերիք սնուցինք կեղծ յոյսեր մթին,
Հասած է արդէն ողջմտութեան ժամ,
Մէկդի՛ վանեցէք երազներ ունայն՝
Նոր սիրտ, նոր հոգի, նոր խանդ ելնի՝
Գ. ԽԱՆՃԵԱՆ

ՔԱՅԼԵՐԳ ՄԱՐՏԱԿԱՆ

Յառաջ ընթանանք, եղբայրնե՛ր,
Մարտի հրաւէր կարդալով.
Հայրենեաց ազատութիւնը
Գնենք մեր սուրբ արիւնով՝

Բաւ է որքան տառապեցանք,
Բաւ է որքա՜ն մենք լացինք,
Այսուհետեւ կռուի դաշտը
Նետուինք ու ազատ մեռնինք՝

ԿԱՄԱՒՈՐԱԿԱՆ ՔԱՅԼԵՐԳ

Յառա՛ջ. նահատակ ցեղի անմահներ,
Վեց դարու անմոռ վրէժի զըրահներ.
Կատարն հայրենի լերանց հեռագոյն՝
Երթանք կոթողել դրօշակն եռագոյն՝
Հրակայ նուիրման
Տորմի՛ղ հրաթեւ,
Կամաւո՛ր բանակ.
Յառա՛ջ անսասան,
Յառա՛ջ անդեդեւ
Դէպի յաղթանակ։

Վատին սեւ արիւն մեր հողն ոռոգեց,
Տարագիր Հայն իր կեանքը նորոգեց,
Երէկ չղթայուած՝ այսօր ինքնավար,
Յարեալ վեհօրէն զամբանէն խաւար՝
Հրակայ նուիրման ելնի՝
Գ. ԿԱՌՎԱՐԵՆՑ

ԱՂԲԻՒՐ ՍԵՐՈԲԻ ԵՐԳԸ

Նոյեմբեր ամսուն՝ գնդակ որոտաց.
Պաշարուած ենք մենք, սիրուն իմ Սօսէ.
Զէնքեր վեր առնենք քաջութիւնն հոս է,
Սիրած Սերոբիդ ընտրեալն այս է՝

Ձայն տուաւ Սօսէն. — Սերոբ ջա՛ն հոս եմ,
Զինուած պատրաստուած ձայնիդ կ'սպասեմ,
Գիշեր ու ցորեկ կողքիդ կռուելու,
Պատրաստ է Սօսէն քեզ հետ մեռնելու՝

Ո՜հ, դու, Սերոբ ջա՛ն, կեանքիս հատորը,
Արիւնով ներկեցիր Տալւորիկ ձորը.
Առիւծի նայուածքով դիտում ես բոլորը,
Զարաչար կռուելով այդ ամբողջ օրը։
    Հասի՛ր, Գէորգ ջա՛ն, քաջ ընկերներով,
    Սերոբ կը զոհուի իր կորիւններով.
    Դէ՜հ հասէ՛ք շուտով, հասէ՛ք օգնութեան,
    Սերոբ կը զոհուի ի սէր ազգութեան։

ՆՈՐԵԿ ԳԵՂՋԿՈՒՀԻ

Նորեկ գեղջկուհի, աղջիկ նոր դարի,
Գարունդ է եկել, գոմից դո՛ւրս արի։
    Արեւը կարմիր կապել է կամար,
    Ազատ օրեր է բերել քեզ համար։
Դաշտերըդ կանաչ, լայն ու ընդարձակ,
Կանչում են, ընկե՛ր, եղի՛ր համարձակ։
    Հերի պէս ուժեղ, թերի պէս կրտրուկ,
    Հին ադաթին դու մի՛ լինի ըստրուկ։
Քանդիր հին գիւղը, բանտը սեւ ու մութ.
Նորութեան համար եղիր լուսամուտ։
    Նորը հրնի դէմ հանիր պայքարի.
    Նորեկ գեղջկուհի, աղջիկ նոր դարի։

Ռ. ՄԵԼԻՔԵԱՆ — ԽՆԿՈ ԱԽՊԷՐ

ԽԱՐԱԼԻ ԲԼԲՈՒԼ

Նպատակիս գէթ մի մասը կատարուէր,
    Խարալի բլբուլ եմ.
Հայրենիքիս ազատութիւնն տեսնեմ ու մեռնեմ.
Խար արի, տուն արի, շուտ արի բլբուլ եմ.
    Սարերի գիւլն եմ։

Ա՜խ, իմ դարդըս շատացել է չեմ կարող,
    Խարալի բլբուլ եմ.
Դարդի ձեռից ո՞ր ջուրն ընկնեմ ազատուեմ,
Տուն արի, շուտ արի, խարալի բլբուլ եմ,
    Սարերի գիւլն եմ։

Ա՜խ, անբաղդ հայդուկիս, Տէ՛ր իմ, դու խղճա,
    Խարալի բլբուլ եմ,
Մի՛ թողնիր քուրդի գնդակով զուր գնամ կորչեմ,
Խարի արի, տուն արի, շուտ արի բլբուլ եմ,
    Սարերի գիւլն եմ։

ՀԱՌԱՋԱՆՔ

Նպատակիս հասնիմ միայն,
Թող գլխս հանեն կախաղան.
Կախաղանէն խեղդուկ ձայնով
Պիտի գոչեմ, ա՜խ, Հայաստան։

    Ա՜խ, Հայաստան, սիրտս ու հոգիս
    Քեզ նուիրեմ, ընդունէ՛.
    Թէ կարելի, թո՛ղ ես մեռնիմ,
    Վերականգնի, ա՜խ, Հայաստան։

Անոր սիրոյն բանտն ալ դրախտ,
Պալատ է այն ինձ համար.
Ձեռքերս, ոտքերս շղթայ դառնեն,
Երջանկութիւն է ինձ համար։

ԳԱՐՈՒՆ

Ո՜հ, ի՛նչ անուշ եւ ի՛նչպէս զով,
Առաւօտուց փըչես, հովիկ,
Ծաղկանց վրայ գուրգուրալով,
Եւ մազերուն կուսին փափկիկ.
Բայց չես հովիկ իմ հայրենեաց,
Գընա՛, անցի՛ր սրտէս ի բաց:

Ո՜հ, ի՛նչ աղու եւ սրտագին,
Ծառոց մէջէն երգես, թռչնիկ,
Սիրոյ ժամերն ի յանտառին
Զմայլեցան ի քո ձայնիկ.
Բայց չես թռչնիկ իմ հայրենեաց,
Գընա՛, երգէ՛ սրտէս ի բաց:

Ո՜հ, ի՛նչ մրմունջ հանես, վտակ,
Ականակիտ եւ հանդարտիկ.
Քո հայելւոյդ մէջ անապակ,
Նային զիրենք վարդն ու աղջիկ.
Բայց չես վտակ իմ հայրենեաց,
Գընա՛, հոսէ՛ սրտէս ի բաց:

Թէպէտ թռչնիկն ու հովն Հայոց,
Աւերակաց թռչին վերայ,
Թէպէտ պղտոր վտակն Հայոց,
Նօճիներու մէջ կը սողայ.
Նոքա հառաչք են հայրենեաց,
Նոքա չերթան սրտէս ի բաց:

Տ. ՋՈՒՀԱՃԵԱՆ　　　　Մ. ՊԷՇԻԿԹԱՇԼԵԱՆ

ՀԱՅ ՄԵՌՆԻՆՔ

Ո՛չ, եղբա՛րք, ո՛չ, օտարներէն չկայ յոյս,
Մի՛ աչուըներդ, մի՛ դարձընէք յայս յայն կոյս,
Օտարն զձեզ թէեւ սիրէ հիւրաբար,
Օտարն, ա՜հ, միշտ է օտար:
Օտարը ձեր վիշտ կը դիտէ անգօրով,
Ի՞նչ փոյթ որ դուք թափէք արցունք արիւնով,
Ով որ Հայ չէ, Հայուն ցաւեր նա չը զգար,
Ի՞նչ կը խաբուիք անդադար:
Մի՛ դուք ձեր յոյս, մի՛ աւանդէք օտարին,
Մի՛ խոր վէրքերնիդ ցուցնէք անգութին,
Ցարգահատա՞նս կը յուսայք օգնութիւն,
Ձեր կը ծաղրե՜ն մերկութիւն:
Դիտեմ ձեր բեռը ծանր է, ծանրը, ո՛վ Հայեր,
Բայց կը կարծէ՞ք զայն վերցընեն օտարներ,
Թողէ՛ք զօտար, տուէք եղբայր եղբօր թեւ
Եւ զօրացէ՛ք անդեդեւ:

Խ. ԵՊՍԿ. ՆԱՐՊԷՅ

ԲԱՆՏԱՐԿԵԱԼՆ ԱՌ ԾԻԾԵՌՆԱԿ

Ով ծիծեռնակ վարանած թռչնիկ, ի՞նչ տրտմագին
Ձայնիւ կ՚եղանակես մօտ իմ բանտին.
Միթէ վարուժանդ սիրուն
Հոս միայնա՞կ թողուց զքեզ,
Ու դուն անմխիթար կը հեծեծես,
Ո՜հ, լա՛ց ուրեմն ինծի պէս:
Բայց երանի՛ քեզ, բի՛ւր երանի, կընաս թըռչիլ,
Թեւթեւ թեւոցդ ի թափ ընդ սար, ընդ ձոր.
Իսկ հոս արեւուն նշոյլն աղօտ
Մութ բանտիս է անթափանց,
Եւ ոչ մեղմ հովիկ մի՛ շունչ զովագին
Կը տանի ձայներս իմ սիրելեաց:

Գէթ դուն գնա՛ գտնել սիրելիս. սլացի՛ր արագ.
Սակայն դարձիր նորէն մօտ չուառիս,
Եւ հոս հանգչէ այս իրիկուն.
Լի՛ր դու վկայ տխուր մահուանս
Եւ շիրմիս վրայ ճըռճըռալով՝
Գէթ դու յիշէ զիս անմոռաց։

ԳՐՕՍՍԻ — Թարգմ. ԵՂԻՇԷ ՎՐԴ. ԴՈՒՐԵԱՆ

ՍԵՐՈԲ ՓԱՇԱՅԻ ԵՐԳԸ

Ո՛վ որ քաջ է ի՞նչ կը սպասէ.
Արդէն ժամանակն է թո՛ղ գայ,
Մահ-պատերազմի օրհասն է,
Ո՛վ որ անվախ, քաջ է, թո՛ղ գայ։
Կամ կռուելով մեռնինք, անցնինք,
Կամ զէնքով փրկութիւն ստանանք,
Կռուելով փրկենք Հայրենիք,
Ազնիւ մտածողը թո՛ղ գայ։
Մերթ Սասնոյ մէջ, մերթ ի Սիփան
Կռիւ անենք միշտ անխափան,
Կռուելով փրկենք Հայրենիք,
Այս յոյս ունեցողը թո՛ղ գայ։
Այս հինգ դար է մեզ կը սպաննեն,
Բռնի՝ կրօնքէ կը հանեն,
Մեր կին, աղջիկներ կը տանեն,
Պատիւ ունեցողը թո՛ղ գայ։
Քարէ հոգի, երկաթէ մարդ
Հալածէ թո՛ղ վատը նամարդ,
Անվախ քարի տակ չոքողը.
Անսխալ խըփողը թո՛ղ գայ։
Վերջապէս մենք ունինք կռիւ,
Զէնքով պիտի մաքրենք հաշիւ.
Մեր հայրենեաց փառքն ու պատիւ՝
Սերոբ փաշան սիրողն թո՛ղ գայ։

ՍԷՐ ՀԱՅՐԵՆԵԱՑ

Մենք շառաւիղն ենք ազգի մը հին,
Որուն միտքը միշտ ձըգտեցաւ լոյսին.
Ան դարեր ամբողջ կերտեց ու զոհեց,
Եղաւ վաստակովն ու ցաւովն իր մեծ։

Ուխտած ենք ցըմահ՝ ծառայել անոր,
Որ ան երջանիկ ըլլայ եւ հըզօր.
Եկէ՛ք եղբայրներ՝ հաւատքով լեցուն,
Կատարենք մեր պարտքն, անխոնջ, աննըկուն։

Ո՛վ սէր հրաշագործ, սէր հայրենիքի,
Դուն ես որ կուտաս մեզ խանդ ու հոգի.
Ո՛վ ազատութեան արեգակ անշէջ,
Քու բոցդ է տիրող մեր սրտերուն մէջ։

Ո՛վ ազատութիւն՝ տենչ արդարութեան,
Դուն մեր ուղեցոյցն ես, ազնուական.
Եկէ՛ք եղբայրներ, հաւատքով լեցուն,
Կատարենք մեր պարտքն, անխոնջ, աննըկուն։

Թո՛ղ ոգին ազգաց համերաշխութեան,
Ու սէրն հայրենեաց՝ մեր մէջ միանա՛ն.
Լոյս իմաստութեան՝ նըւիրումի հուր.
Դո՛ւք եղէք մեզի առաջնորդ մաքուր։

Ո՛վ մայր մեծարոյ, Հայ Ազգ ալեւոր,
Փառքիդ է ձօնուած մեր ուժը բոլոր.
Եկէ՛ք եղբայրներ. հաւատքով լեցուն.
Կատարենք մեր պարտքն. անխոնջ, աննըկուն։

Ա. ԶՕՊԱՆԵԱՆ
Ա. ՏԱՐԹԵՒԵԱՆ

ԱՇՈՒՂԸ

Սեւ խաւարը իմ ընկերն է անբաժան,
Ես չգիտեմ ի՞նչ ասել է պայծառ օր,
Բայց այսօրուայ խաւարն է խոր, հոգեհան...
Դիակները փըռփռում են ահաւոր,
  Եւ պատմում են իրենց ցաւերն անպատում,
  Որից Աստուած զուցէ դողայ երկընքում։
Հին դարերից ցաւեր չալկած յամրօրէն,
Հառաչելով անցաք արեան ծովերով,
Համբերութեան գասեր առիք լեռներէն...
Քնէ՛ք այժմ բոցով, ցաւով, վէրքերով,
  Եւ պատմեցէք ձեր ցաւերն անպատում,
  Որից Աստուած զուցէ դողայ երկընքում։
Խօսի՛ր քնար... արար-աշխարհ թէ լռի
Ցաւի, արեան, տառապանքի լուռ ծովում,
Կոյր աշուղը հառաչանքի պարտք ունի
Թշուառութեան ու անէծքի վայրերում։
  Այսքան չարիք թէ մոռանան մեր որդիք,
  Թո՛ղ ողջ աշխարհ Հային կարդայ նախատինք...
Երեք լար կայ. մէկը մէկից սգաւոր.
Մէկն արիւն, մէկն արցունք է քամում,
Եւ երրորդը, այն ամենից թունաւոր,
Անէծք ունի իր թրթռուն խաղերում։
  Այսքան չարիք թէ մոռանան մեր որդիք,
  Թո՛ղ ողջ աշխարհ Հային կարդայ նախատինք։
Դիակների մէջտը լացի ու ցաւեր...
Քանի՛ դարեր լռկ ողբ ու սուգ ենք անում,
Այժըմ անէծք դահիճներին մարդակեր,
Վրէ՛ժ միայն, լոկ վրէժ եմ պահանջում...
  Այսքան արիւն թէ ձեզ ներեն մեր որդիք,
  Թո՛ղ ողջ աշխարհ Հային կարդայ նախատինք...

Ա. ԱՀԱՐՈՆԵԱՆ

ԱԼԱԳԵԱԶԻՆ

Սեւ-մութ ամպեր ճակտիդ գիզւան,
Դուման հագար, Ալագեա՛զ,
Սրտումս արեւ էլ չի ծագում,
Սիրտս է՛լ դուման, Ալագեա՛զ։

  Ջառ փէշերըդ անցայ, տեսայ,
  Առանց դարդի սիրտ չը կայ,
  Ա՛խ, իմ դարդըս, ջա՛ն Ալագեազ,
  Իմ դարդի պէս դարդ չը կայ...

— Է՛յ, Մանթաշի Նըշխուն հաւքե՛ր,
Իմ դարդը, որ ձերն եղնէր,
Ձեր էդ զա՛ռ-վա՛ռ, խաս փետուրներ
Կը սեւնային. քանց գիշեր։

  — Է՛յ, Մանթաշի մարմանդ հովե՛ր,
  Իմ դարդըս որ ձերն եղնէր,
  Ձեր ծաղկանուշ բուրմունքն անուշ
  Թոյն ու տօթի կը փոխուէր։

Հէ՛յ վա՛խ... կոտրան իմ թեւերըս,
Ընկայ գիրկդ, Ալագեա՛զ.
Ա՛խ, մեծ սրտիդ սեղմեմ սիրտըս.
Լամ, արուն լամ, Ալագեա՛զ...

ՍՏ. ՄԵԼԻՔԵԱՆ Ա Ի. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ՍԵՐԵՄՋԵԱՆԻ ՅԻՇԱՏԱԿԻՆ

Վէրքերով լի ջանփիտայ եմ.
Թափառական տուն չունեմ.
Եարիս փոխան զէնքս եմ գրկել,
Մի տեղ հանգիստ քուն չունեմ։

Արիւնոտ երկիր, սուգ ու շիւան,
Ինձ դուրս կանչեց փակ կեանքից.
Տանջուած հայրենիքի սէրը
Չի վախեցուց ինձ վտանգից։

Ես կոչուեցայ ջան-ֆիտայի,
Դարձայ զինւոր գաղափարի,
Թող իմ թափած արեան շիթեր,
Օրինակ դառնայ հայ զինւորի։

Ահա՛ հանգիստ հող կը մտնեմ,
Յոյս դո՛ւք էք, ընկերնե՛ր,
Շարունակէ՛ք մեր սուրբ գործը
Դաշնակցութեան վե՛հ քաջեր։

ԵՐԳ ՊԱՏԵՐԱԶՄԻ

Վրէ՛ժ կը գոռան շիրմաց խորէն
Գոռ դիւցազանց ստուերքն ահեղ.
Վրէ՛ժ կը մռմռան արդ տխրօրէն
Մեր հէք եղբարց արեանց հեղեղ։

Մասեաց ժեռուտ սարն բոցավէժ
Մեր սրտերուն խոր ժայթքէ վրէժ...
Օ՜ն, անվեհեր վանենք զրկանք,
Որ Հայաստան առնէ նոր կեանք։

Բիւր սուր, հուր, մահ,
Չազդեն մեզ ահ...
Արդ քաջալանջ
Նետուինք յառաջ։

Սուր մեր յագուրդ
Վատ և անգութ՝
Թող թշնամւոյն
Խըմէ արիւն...։

Պ. ԴՈՒՐԵԱՆ

ՏԱԼՒՈՐԻԿԻ ԿՏՐԻՃ

Տալւորիկի կտրիճ եմ ղորդ,
Քաղքըցու պէս չեմ թուլամորթ.
Սարի զաւակ, քարի որդի,
Հին, քաջ Հայոց եմ մնացորդ։

Տալւորիկի զաւակ եմ քաջ.
Չեմ խոնարհիր Թուրքին առաջ.
Քարոտ լերանց եմ ազատ լաճ.
Չեմ տեսեր ո՛չ արօր, ո՛չ մաճ.

Հայ աղբրտիք, ջան աղբրտիք,
Տալւորիկի զաւակ եմ քաջ,
Ազատութեան սիրոյն համար
Եկէ՛ք դէպ ինձ առաջ, առա՛ջ:

Երբ իմ աչերս բացի յաշխարհ,
Ազատ տեսայ մեր սար ու քար.
Մինչեւ փակեմ աչքս ի խաւար,
Պիտ՛ չը կոխէ հոս ոտք օտար։

Իմ մամ ծնաւ զիս՝ սարերու ծոց,
Ընկոյզի կոճղ մ'ինձ օրօրոց.
Տըկլոզ ծնայ, մեծցայ տըկլոզ,
Կեանքիս բաժինն է կռիւ ու բոց։

Հայ աղբրտիք, ջան աղբրտիք և լն։

Ոտքս բոբիկ, կուրծքս միշտ բաց,
Ի՞նչ փոյթ՝ թէ քոյրս ալ մերկ մնաց,
Ինձ մօտ մէկ է արեւ, բուք, ցուրտ,
Բաւ է չիշխեր վրաս Թուրք, քուրտ։

Մեզմով պարծի այսօր Սասուն,
Մենք ենք խրախոյս Հայոց Նըկուն,
Տալւորիկ սար, ժայռոտ Զէյթուն
Տան իրարու ազատ ողջոյն։

Հայ աղբրտիք, ջան աղբրտիք և լն։

Մ. ՏԱՄԱՏԵԱՆ

ՀԱՅԻ ՄԱՂԹԱՆՔ

Տէ՛ր, կեցո՛ Դու զՀայս
Եւ արա՛ զնոսա պայծառս,
Կեցո՛, զՀայս։

Զօրորմութիւնդ վերին
Հաճեաց ձօնել Նոցին,
Զի նովիմբ մարթասցին
Ապրիլ յաստիս։

Ո՛վ Տէր մեր, Տէր փութա,
Զազգ մեր համայն փրկեա՛
Ի թշնամեաց.

Կափո՛ զաչս նոցուն,
Հա՛տ զարմատոյ զբուն
Եւ զազգ մեր պարտասուն
Արա՛ հզօր։

Մ. Դ. ԹԱՂԻԱԴԵԱՆՑ

ՔԱՅԼԵՐԳ ԶԷՅԹՈՒՆԻ

Քանի՞ թմրինք, բաւ է եղբարք.
Ճրջինք աչերնիս աջ ու ահեակ,
Շատ ըստրուկներ եղան ազատ,
Միայն մենք մնացինք հլու հնազանդ։
Բաւ է եղբարք որչափ կրեցինք գերութիւն,
Քիչ մ'ալ ըլլենք, ցոյց տանք նրանց քաջութիւն:

Կեցցէ՛ Զէյթուն, ապրի՛ Զէյթուն,
Թող չտեսնէ ըստրկութիւն,
Քանի ունի մեզ պէս քաջեր
Կեցցէ՛ Զէյթուն, ապրի՛ Զէյթուն։
Բաւ է եղբարք որչափ կրեցինք *եւ լն։*

Զէյթունցի ենք, մեր դրօշանք՝
Է պատերազմ եւ արշաւանք.
Սուր, թուր, գնդակ եւ հրացան
Մեր խաղալիք են յաւիտեան։
Բաւ է եղբարք որչափ կրեցինք *եւ լն։*

Զէյթունցի ենք, քաջեր ունինք,
Ոսոխներէն մենք վախ չունինք,
Մեր դրօշանքն է պատերազմ,
Պատերազմներ ու արշաւանք։
Բաւ է եղբարք որչափ կրեցինք *եւ լն։*

ԱՐԾԻՒ ԽՈՒՄԲԻ ԵՐԳԸ

Քաջասիրտ առիւծ ոտքի կանգնեցաւ,
Հայաստան կրկին արեան ծով դարձաւ,
Բարգէն խմբապետ, քաջ զինուոր՝ Կնեազ
«Արծիւ» խմբի հետ Սասուն խառնուեցաւ,
Բա՛ւ է թուլութիւն, ցոյց տանք քաջութիւն
Միշտ բարձր պահենք Հնչակեան անուն։

Մոզկայ Սարի գլուխ դիրքեր բռնեցինք.
Հրացաններ պատրաստ ձեռքերնիս առինք,
Քաջ Բարգէնի մենք հրահանգին սպասեցինք
Երբ «Կրակ» գոռաց, կայծակ թափեցինք.—
Առաջին կռիւ հոն ըսկըսեցինք,
Թշնամու արեամբ լեռներ լուացինք։

Սև Սարն է «Արծիւ» խմբի ապաստան,
Ռազմի երգերով քաջ-քաջ կռուեցան,
Տմարդի ոսոխք գետին փռուեցան,
Թշնամու արեամբ լեռներ ներկուեցան.
Առիւծի նման նրանք մռնչեն,
«Կամ ազատութիւն կամ մահ» պահանջեն։

ՅԱՍՈՒՄ

ԵՐԳԵՐ ՈՒ ՎԷՐՔԵՐ

Օտա՛ր, ամայի՜ ճամբէքի վըրայ
Իմ կարաւանս մեղմ կը ղօղանջէ.
Կանգնի՛ր, կարաւանս, ինծի կը թուայ
Թէ Հայրենիքէս ինձ մարդ կը կանչէ։

Բայց լո՜ւռ է շուրջըս ու շըշուկ չը կայ,
Արեւա՛ռ, անզո՛րր այս անապատում.
Ա՜խ, հայրենիքըս ինձ խորթ է հիմայ,
Ու քնքուշ սէրըս ուրիշի գըրկում։

Դընա՜, կարաւանս, ինձ հետըդ քա՜շ տար,
Օտա՛ր, ամայի ճամբէքի վըրայ,
Ուրտեղ կը յոգնիս, գլուխըս դիր վար—
Ժէռ—քարերի մէջ, փըշերի վըրայ...։

Ա. ԻՍԱՀԱԿԵԱՆ

ՊԱՆԴՈՒԽՏԻ ԵՐԳ

Օտար երկինք, օտար արեւ,
Որ շողում էք գլխիս վերեւ,
Ինչքա՛ն շողաք... դուք ինձ համար
Միշտ կը մնաք գիշեր խաւար...

Սիրտս տոչոր՝ ձեզ նայելով,
Անտէր, պանդուխտ կեանքս լալով.
Որ չի անցնում — Հայրենիքիս
Վառ կարօտը չայրէ հոգիս։

Մատաղ լինիմ նորա պայծառ
Էն երկնքին, ուր սիրավառ
Ոսկի՜ արեւն ինձ վերեւից
Փայփայել է մանուկ օրից։

Հայրենիքիս խաղաղ ծոցում,
Ինչպէս փափուկ օրօրոցում,
Ես մեծացել, կեա՛նք եմ առել,
Նրա շնորհով էլ մարդ դառել։

Ո՞նց մոռանամ ես էն օրհնած
Սարն ու ձորը ծաղկով լցուած.
Էն կենսատու ջուրն ու հողը,
Գարունքի էն հովն ու ցօղը։

Ո՞նց մոռանամ ես էն փարթամ
Դաշտն ու արտը, ուր շատ անգամ,
Ասես, թիթեռ, թըրթըռացել,
Արար-աշխարհ եմ մոռացել...

Ուր լսել եմ սրտիս ազիզ
Գեղջուկ մշակ եղբայրներիս
Դառն լացը, կուշտ ծիծաղը,
Ուրախ-ուրախ երգն ու տաղը...

Օտա՛ր երկինք, օտար արեւ,
Որ շողում էք գլխիս վերեւ,
Ինչքա՛ն շողաք... դուք ինձ համար
Միշտ կը մնաք գիշեր խաւար...

Ա. ԾԱՏՈՒՐԵԱՆ

ՕՏԱՐՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Օտար երկիր, օտար պանդուխտ կը հեծեմ,
Դու, հայրենիք, քեզ յիշելով կ'արտասուեմ.
Չը կայ ծնող, չըկան որդիք, քոյր, եղբայր,
Չիք ամուսին, որով ցաւերս մեղմանար։

Օտար երկին, արև, աստղեր և լուսին
Թէև պայծառ՝ ինձի խաւար կը թուին.
Բնակարանս տխուր պանդոկ օտարաց,
Օդս օտար, ջուրս օտար, օտար հաց:

Ո՞ւր է հայրս, ո՞ւր է մայրս քաղցրանուն,
Ո՞ւր զաւակունքս, ո՞ւր սիրելիքս սիրասուն.
Սակայն ունիմ քովս Յիսուս, փրկէ զիս.
Նա օտար չէ, Նա իմս է, սիրէ զիս:

ՎԵՐՋ

ԲԱՌԱՑՈՒՑԱԿ

Աբրա. Ապա:
Ագար. Համեստութիւն:
Ագլբրանց արուն. Կարմիր ծաղիկ մը:
Ագունիկ. Աղաւնեակ:
Այան. Բարձր:
Այլուղ. Թաշկինակ:
Անգած. Ականջ:
Անգուման. Անյոյս:
Աշիլ. Նայիլ:
Ափտալ. Հաւաստալ:
Ար. Էր:
Արա տալ. Կտրել տալ:
Արբար. Մեծ, վեհանձն, վեհազոյն:
Բալիկ. Զաւակ:
Բար անել. Համեմատել:
Բագ. Բէկ, պէկ:
Բաղդադի. Մէջքին կապելիք թաշկինակ:
Բար. Պտուղ:
Բեթամալ անել. Վիրաւորել:
Բէզարիլ. Ձանձրանալ, յոգնիլ:
Բէմուրվաթ. Անողորմ:
Բութա. Սիրահար:
Բունիաթ. Շէնքի սէմը:
Գէլ. Գայլ:
Գէթ անել. Վնաս տալ:
Գուման, կիւման. Յոյս:
Գօլ. Լին:
Դաղա. Իմաստուն:
Դաղ անել. Այրել:
Դէր. Տէր, տէրտէր, քհնյ:
Դըմպլիկ. Կորիկ, ճնճուշիկ:
Դիզար. Դէմք, երես:
Դիփ. Ամէն:
Դուզ. Դող:
Դօշ. Կուրծք:
Եադ. Օտար:
Երրա. Վրայ:
Երնել. Ցորենը յարդէն զատել:
Զալում. Անիրաւ:
Զար. Ոսկի թէլ:
Զառնիշան. Ոսկեշող:
Զարբար. Ոսկենիւս, ոսկեթէլ:
Զեռ, Զէռ. Պէս. նման:
Զընգալ. Զրնգ զրնգ ձայն հանել:
Էգուց. Վաղը:
Էղման. Այսպէս:

Էլ. Օտար:
Ընգին. Ինկան:
Էնգուր. Անոր համար:
Էշխ. Եռանդ, կորով. սէր:
Էստուց. Հոսկէ:
Թա՛շել. Նետել:
Թառլան. Երիտասարդ. գեղեցիկ:
Թարիփ անել. Գովասանք տալ, պատմել:
Թարկել. Թորկել. Թողուլ, ձգել:
Թուխպ. Մառախուղ:
Թունդիր. Թոնիր:
Թօլ անել. Գլորել:
Թօն. Անձրեւ:
Ժուռ. Խակ, տհաս:
Իլթիմազ. Միջնորդութիւն, Աղաչանք:
Ինթիզար. Կարօտանք. Սպասում:
Իսկի. Բնաւ:
Լալ. Թանկագին քար:
Լաչի. Լաչակ:
Լաչին ջան. Եզան տրուած փաղաքշական անուն:
Լափին տալ. Յորձանքով հոսիլ:
Լողուորչի. Լուղորդ:
Լուր. Լոր:
Խալ. Պիսակ (պէնկ):
Խար. Վարդի փուշ, չոր խոտ:
Խարջ. Հարկ, պատշան:
Խաւք. Հաւք, թռչուն:
Խնոցի. Կարագ հանելու անօթ:
Խոխա. Երեխայ:
Խորոտիկ. Գեղեցիկ:
Խիւթան. Գութան:
Կոլոտ. Կարճահասակ:
Կուրտիկ. Կնոջական հագուստ:
Կուց. Ափ:
Կռնել. Կռթնիլ:
Կռներ. Բազուկներ:
Հագին. Հագուստ:
Համբէք. Երկրագործի օգնականին:
Հայա. Ամօթ
Հանդ. Դաշտ:
Հանդամ. Կարգ, ընկերակից:
Հանց. Հէնց, այսպէս:
Հաչան. Ցորենի խուրձ:
Հաչակ. Երեքժանի թի:
Հար. Հայր:
Հէնչափ. Այնչափ:
Հըրէս. Ահա:
Հիդ. Հետ:
Հորիք. Գութանի եզներու առաջին զոյգը:
Հուքմի հէքիմ. Հրամայող. վճիռ:
Հօլ անել. Ճամբայ իյնալ. գործի սկսիլ:
Հօռովել. Մշակի բացագանչութքն:
Ձիգ տալ. Քաշել:
Ղազար անել. Պատծել, բարկանալ:
Ղալազ. Թերութիւն, սխալ:

Ղաստ. Աշխատանք, ջանալ:
Ղափազա. Վանդակ:
Ճամխել. Ճամբել:
Ճիպտին տալ. Ճիպոտով զարնել:
Մագամ. Մի՞թէ:
Մալուլ. Տկար, հիւանդ, տրտում:
Մալում անիլ. Ծանօթացնել, նըկատել:
Մասոր. Վայրի վարդ:
Մարալ. Գեղեցիկ:
Մարջան. Ուլունք, (մէրճան) բուստ:
Մէ. Մէկ:
Մէջլում. Խենթ:
Մընլամ. Սպեղանի:
Միզ. Մազ:
Մով. Կապոյտ:
Մուգ. Գոց գոյն:
Մումուռ. Թունդ:
Մըքուք. Կկոց:
Նազանի. Նազելի:
Նախրատափ. Արօտավայր:
Նախշուն, Նաշխուն. Զարդարուն, գոյնզգոյն, գեղեցիկ:
Նաքազ. Ագահ, կծծի:
Նէաստ. Ձախող:
Նուբար. Առաջին բերք:
Նօքար. Սպասաւոր:
Շախպազայի. Եղանակի մը անունը:
Շահիփ. Մեծ, բարձրագահ:
Շանց անել. Ցոյց տալ:
Շառ. Զրպարտութիւն, չարիք:
Շար. Շարոց, արդարութիւն, դատաստան:
Շարբար. Նուրբ մանած մետաքս:
Շէկլիկ. Խարտեաշ:
Շէյտայ. Արբշիռ, գինով:
Շըմշատ. Շիմշատ. Բարձր, գեղեցիկ (հասակ) տօսախ:
Շիրմաղի. Փղոսկր:
Շիւան. Լաց ու կոծ:
Շուաք. Սրահ:
Շուշէ. Սիրտ:
Որձակ. Մատաղ ախոր:
Ունըր. Կեանք:
Չալապու. Տէր, Չէլէպի:
Չարկամ. Սատանայ:
Չի կանա. Չի կրնար:
Չուլթ. Տպածոյ, չիք:
Չուր, չուրի. Մինչեւ:
Չուց. Ինչպէս, ինչքան:
Չրաղ. Ճրագ:
Պէզարիլ. Յոգնիլ, ձանձրանալ:
Պըր. Պիտի:
Պուճուր. Պզտիկ:
Պռուկ. Շրթունք:
Պրիշակ. Աւերակ:
Ջէրան. Այծեամ, եղնիկ:
Ջոկել. Զատել:
Ջունուն. Խենթ:
Ռեխ Բերան, երախ:
Սալրի. Նոճի:

Սէլւոր. Սայլորդ:
Սէյրան անել. Զբօսնուլ, շրջիլ:
Սիմ. Արծաթէ պղինձէ թել:
Սին. Սուն. Սիւն:
Սինձ. Վայրի խնձոր:
Սիվ. Սեւ:
Սղկել. Փշրել:
Սոլդագար. Առեւտրական:
Սուսամ. Հիրիկ. կապոյտ ծաղիկ մը:
Սօյբաթ. Խօսակցութիւն:
Վալէ. Շղարշ:
Վարար. Տեղատարափ (անձրեւ):
Վըէր. Որ:
Վոթել. Թափել:
Վունց. Ոչ. որպէս, ինչպէս:
Վունց օր վուր. Ինչպէս որ:
Տար. Օտար:
Տեղ լոխ. Ամէնը:
Տոն. Տուն:
Րանգ. Իրանգ, գոյն:
Փընչան. Ըմպանակ, գաւաթ:
Փաստա. Պիստակ:
Քարար. Խորոված:
Քաչ. Կճիռ:
Քաքուլ. Ճակտի մազի փունջ, խոպոպ:
Քէլել. Քալել:
Քէլք. Քայլ, քալուածք:
Քէդխան. Տանուտէր:
Քթոց. Կողով:
Քիզիզ. Քեզ ինչ:
Քիր. Քոյր:
Քիրմէ. Գօշի:
Քոլ. Մացառ, ցախ:
Քոլոզ. Թաղիքէ սրածայր գլխարկ:
Օխնուիլ. Օրհնուիլ:
Ֆութէ. Ապարօշ:

ՑԱՆԿ ԵՐԱԺԻՇՏՆԵՐՈՒ	ԾՆ. ԹՈՒԱԿ.	ԷՋ.
Ներածութիւն		Ե
1. Նահապետ Քուչակ	ԺԶ. Դար	Թ
2. Սայեաթ-Նովա	1712	Ժ
3. Պապա Համբարձում	1768	ԺԳ
4. Եղիա Տնտեսեան	1834	ԺԶ
5. Տիգրան Չուխաճեան	1836	ԺԷ
6. Նիկողայոս Թաշճեան	1841	ԺԹ
7. Աշուղ Ջիւանի	1846	Ի
8. Կարա-Մուրզա	1854	ԻԲ
9. Նիկողայոս Տիգրանեան	1856	ԻԳ
10. Մակար Եկմալեան	1857	ԻԶ
11. Կոմիտաս Վարդապետ	1869	ԻԸ
12. Ալեքսանդր Սպենդիարեան	1871	Խ
13. Գրիգոր Սիւնի	1876	ԽԲ
14. Ազատ Մանուկեան	1878	ԽԳ
15. Արմէն Տիգրանեան	1879	ԾԳ
16. Սպիրիտոն Մելիքեան	1880	ԽԶ
17. Անտոն Մայիլեան	1880	ԽԸ
18. Ռոմանոս Մելիքեան	1883	Ծ
19. Դանիէլ Ղազարեան	1883	ԾԵ
20. Արշակ Ադամեան	1884	ԾԷ
21. Անուշաւան Տէր-Ղեւոնդեան	1887	ԾԶ
22. Սարգիս Բարխուդարեան	1887	ԾԸ
23. Բարսեղ Կանաչեան	1888	ԾԹ
24. Վարդան Սարգսեան	1892	ԿԵ
25. Կարօ Զաքարեան	1893	ԿԱ
26. Վաղարշակ Սրուանձտեանց		ԿԳ
27. Աշոտ Պատմագրեան	1898	ԿԲ
28. Ց. Մեհրապեան		ՀԱ
29. Միհրան Թումաճանեան		ՀԲ
30. Արամ Խաչատուրեան	1903	ԿԸ
31. Արայ Պարթեւեան		ՀԲ
32. Համբարձում Պէրպէրեան	1905	ԿԹ
33. Գուրգէն Ալէմշահ	1907	ՀԳ

ՑԱՆԿ ԵՐԳԵՐՈՒ	ԽՕՍՔ	ԵՐԱԺՇՏԹ.	ԷՋ
1. Աբարանը քարոտ ա	Ժողովրդ.		9
2. Ալագյազ բարձր սար ա	»	(Կ. Վ.)	10
3. Ալագյազ բարձր սարին	Յ. Յովհաննէսեան	(Կ. Վ.)	11
4. Ալագյազ բարձր տեղ ա	Ժողովրդ.	(Կարա-Մուրզա)	11
5. Ալագյազ թաւ գօշերում		(Ար. Տիգրանեան, Վ. Տալեան)	381
6. Ալագյազ սարն ամպել ա	Ժողովրդ.	(Կ. Վ.)	12
7. Ալակեօզ աչերդ	Գ. Երիցեան	(ՈՒՇ ԼԻՆԻ ՆՈՒՇ)	13
8. Ալ այլուգըս կորաւ		(Կ. Վ.)	13
9. Ալ ու ալուան եմ հագել		(Աշուղ Գ. Տալեան)	15
10. Ա՜խ, Անուշ, Անո՜ւշ	Յ. Թումանեան	(Ա. Տիգրանեան)	16
11. Ա՜խ. իմ կաքաւիկ		(Ա. Տէր-Ղազարեան)	16
12. Ա՜խ, իմ ճամբէն			17
13. Ա՜խ, ինչպէս սիրում եմ		(ԱԴԱՄ ԵՒԱ)	18
14. Ա՜խ, հեռացէ՛ք դուք		(Աշուղ Ջիւանի)	19
15. Ա՜խ, մարա՛լ ջան	Ժողովրդ.	(Կ. Վ.)	19
16. Ա՜խ, սեւաւոր, սեւիկ		(Կ. Վ.)	372
17. Ակոսիս մեծ կարասին	Հ. Վ. Զագրեան		20
18. Ահա եկաւ լուսին արծաթ	Լ. Շանթ		21
19. Աղաչում եմ քեզ հայր		(Աշուղ Ջիւանի)	22
20. Աղուէսն եկաւ վերին	Ժողովրդ.		373
21. Աղուէս պառկեր	»		22
22. Աղուոր ես չունիս	»	(Կ. Վ.)	23
23. Աղուորներուն համար	Ն. Պէշիկթաշլեան	(Գ. Ալէմշահ)	373
24. Աղջի՛, անաստուա՛ծ	Յ. Թումանեան	(Ա. Տիգրանեան)	24
25. Աղջի անունդ է Շուշան	Ժողովրդ.		210
26. Աղջի բախտաւոր	Յ. Թումանեան	(Ա. Տիգրանեան)	24
27. Աղջիկ աղուոր, աղջիկ	Ժողովրդ.	(Կ. Վ.)	25
28. Աղջիկ եմ տանը դրած	»	(Կ. Վ.)	26
29. Աղջիկ նազերով, նազերով	»	(Ռ. Մելիքեան)	374
30. Աղջիկ ունիմ հունարի	»		374

	ԽՕՍՔ	ԵՐԱԺՇՏԹ.	ԷՋ
31. Աղջիկս քեզ բարով տեսայ		(ՄԱՇՏԻ ԻԲԱՏ)	27
32. Աղջի հարսնառդ եկաւ	Ժողովրդ.		28
33. Աղջկերք պար բռնեցէք	Ղ. Աղայեան		27
34. Ամէն գիշեր մեր պարտիզ.	Ա. Իսահակեան	(Ա. Տ. Ղեւոնդեան)	29
35. Ամէն սազի մէջըն գոված	Սայաթ-Նովա		131
36. Ամպել ա ձիւն չի գալի, մթնել ա	Ժողովրդ.		29
37. Ամպել ա ձիւն չի գալի չոլեր, ջան	»	(Կ. Վ.)	30
38. Ամպերում թագնուած	Ղ. Աղայեան		384
39. Ամպի տակից ջուրն է	Յ. Թումանեան	(Ա. Տիգրանեան)	31
40. Ամպն ի երկինք. հովն		(Գր. Սիւնի)	375
41. Ամօ՜թ քեզ. Մօսի՛	Յ. Թումանեան	(Ա. Տիգրանեան)	33
42. Այ աղջիկ ծամով աղջիկ	Ժողովրդ.	(Կ. Վ.)	32
43. Այդ ի՞նչ է քո դարդը		(ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ)	297
44. Ա՛յ հեւ է, հեւ է սիրտս	Հ. Արեգենց	(Հ. Պէրպէրեան)	375
45. Ա՛յ խանում ես եկել եմ		(ՄԱՇՏԻ ԻԲԱՏ)	33
46. Ա՛յ խորոտիկ. խորոտիկ	Ժողովրդ.		34
47. Ա՛յ Մաշտի ուրախացիր	»		34
48. Այն ինչ մորմոք է	Գ. Կառվարենց	(Հ. Պէրպէրեան)	35
49. Այնպէս նազիկ	Վ. Տէրեան	(Ա. Տէր-Ղեւոնդեան)	376
50. Այն օրն երբ Եւան		(ԱԴԱՄ ԵՒԱ)	36
51. Ա՛յ ջան տղայ, չոբան	Յ. Թումանեան	(Ա. Տիգրանեան)	214
52. Այս գիշեր ե՛կ ման արի	Գ. Իփէկեան	(Հ. Պէրպէրեան)	41
53. Ա՜յ սիրուն աղջիկ	Ա. Իսահակեան		36
54. Ա՛յ վարդ լսիր	Ա. Ծատուրեան	(Ա. Սպենդիարեան)	38
55. Այր մարդիկ անառակ		(ՁՍՐՑԱՇ)	165
56. Ա՛յ Բէօր Օղլի	Ղ. Աղայեան	(Ա. Խաչատուրեան)	377
57. Անդ ուր ձիւնապատ			38
58. Անհոգ ես, չես գիտեր		(Աշուղ Ջիւանի)	377
59. Անձրեւն եկաւ չաղալէն	Ժողովրդ.	(Կ. Վ.)	39
60. Անուշ քնիկ աչերն առեր	Ք. Ս. Սահակեան		378

	ԽՕՍՔ	ԵՐԱԺՇՏԹ.	ԷՋ
61.	Անգին ակըն վրէգ	Սայաթ Նովա	380
62.	Անցիր սեւ ամպ	Յ. Յովհաննիսեան (Ա. Տ. Ղեւոնդեան)	40
63.	Անցա՛րդ, դուն չես	Հ. Մառֆ (Ա. Պարթեւեան)	381
64.	Աշխարհի սկիզբից	Վ.րոյր	41
65.	Աշխարումս ախ չ՚իմ	Սայաթ-Նովա	382
66.	Աշխոյժ նաւաստին		383
67.	Աչերիդ մէջ խորհրդաւոր	Աշուղ Գ. Տալեան	42
68.	Աչերուդ փայլն որ չեղնէր	(Հ. Պէրպէրեան)	43
69.	Աչքերով խորունկ	Եր. Արեան (Ա. Պարթեւեան)	44
70.	Առանց քեզ ի՞նչ կօնիմ	Սայաթ-Նովա	385
71.	Առաւօտ լոր մտաւ արտ	Ժողովրդ. (Կ. Վ.)	44
72.	Առաւօտուն բարի լուս	» (Կ. Վ.)	45
73.	Առաւօտուն թունդիր մուխ	»	46
74.	Առաւօտուն փչեց հով	Ա. Խնկոյեան	385
75.	Առնեմ եղեմ էն սարը	Ժողովրդ. (Կ. Վ.)	47
76.	Ասում են ուռին	Յ. Թումանեան (Ա. Տիգրանեան)	48
77.	Աստուած օգնական լինի	(ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ)	48
78.	Արազը հեչտացել ա	Ժողովրդ.	50
79.	Արազից ջուր ա գալի	»	211
80.	Արազն եկաւ լափին	Յ. Յովհաննիսեան	51
81.	Արեւ բացուեց թուխ	Յ. Թումանեան (Կ. Վ.)	52
82.	Արեւ ըլլամ՝ ծաթի՛մ	Տ. Չիրունի	53
83.	Արեւը կայնեց կէսօր	Ժողովրդ. (Կ. Վ.)	53
84.	Արեւը կամար կամար	»	386
85.	Արեւը նոր ծագել ա	Գ. Երիցեան (ՈՒՇ ԼԻՆԻ, ՆՈՒՇ)	54
86.	Արեւ թըռմըրով եկաւ	Ժողովրդ. (Կ. Վ.)	155
87.	Արեւի շողին տակ	» (Ա. Մայիլեան)	54
88.	Արեւի պէս սիրուն	Ա. Իսահակեան (Հ. Մեհրապեան)	56
89.	Արեւն այտէն՝ ծիրան	(Կ. Վ.)	55
90.	Արեւն իջաւ սարի գլխուն	Ա. Իսահակեան	57

	ԽՕՍՔ	ԵՐԱԺՇՏԹ.	ԷՋ
91.	Արի, գութան, վարի՛	Յ. Թումանեան (Ա. Տիգրանեան)	57
92.	Արի ինձ անգաճ կալ	Սայաթ-Նովա	386
93.	Արի համով զուլուզ արա	Սայաթ-Նովա	58
94.	Արի՛ Մանան, արի՛ գնանք	Ժողովրդ. (Ռ. Մելիքեան)	59
95.	Արխալուխդ կարել եմ	»	387
96.	Արծթի բարձր գեղ ա	»	59
97.	Արշին մալչի մալ ցոյց տուր	(ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ)	281
98.	Արօր, արօր, խիզախ	(Կ. Վ.)	60
99.	Արօրն ասաց տատրակ	Ժողովրդ. (Կ. Վ.)	60
100.	Բաժակներ առնունք	Քամառ-Քաթիպա	62
101.	Բամբկի տակին	(Ռ. Մելիքեան)	388
102.	Բան եմ ասում	Պ. Պռօշեանց (Դ. Ղազարեան)	147
103.	Բարի լուսի զանգեր	Յ. Թումանեան	64
104.	Բարձր սարեր, ա՛յ սարեր	Յ. Թումանեան (Ա. Տիգրանեան)	62
105.	Բարձր սարերու հովիկ	(Կ. Վ.)	63
106.	Բերդիցը դուրս ելայ	(Վ. Սրուանձտեանց)	65
107.	Բերէք շիշը, բերէ՛ք	Քամառ-Քաթիպա	66
108.	Բզէզը թռաւ ծառերուն	Տ. Չիրունի (Հ. Պէրպէրեան)	66
109.	Բէկի աղջիկը երեւի սա է	(ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ)	67
110.	Բըլբուլի հիդ լաց իս	Սայաթ-Նովա (Ս. Բարխուդարեան)	67
111.	Բըկիդ մարջան ես կապել	(Ա. Պատմագրեան)	68
112.	Բլբուլ թռաւ բարձր	Ժողովրդ.	69
113.	Բոյր մը ցնցող կը ծաւ.	Յ. Ճ. Սիրունի	70
114.	Գանգատւում են միշտ	(ԱԴԱՄ ԵԽԱ)	71
115.	Գանձեր ունեմ անտակ	Յ. Թումանեան (Գ. Ալէմշահ)	389
116.	Գարնան գութան հանեցի	Ժողովրդ. (Կ. Վ.)	71
117.	Գարնան նման խայտալով	Յ. Յովհաննիսեան	390
118	Գարուն ա, ձիւն ա արել	Ժողովրդ. (Կ. Վ.)	72
119.	Գարունն եկաւ կարմիր	Ա. Իսահակեան (Ա. Պարթեւեան)	72
120.	Գարունն եկաւ, Մարօ	Ա. Վշտունի (Ռ. Մելիքեան)	390

	ԽՕՍՔ	ԵՐԱԺՇՏԹ.	ԷՋ
121. Գացէք, տեսէք ո՞վ	ժողովրդ.		73
122. Գացի արտեր բունի	»		74
123. Գեղեցիկ հատուէտ	Ղ. Մանուէլեան	(Ռ. Մելիքեան)	75
124. Գետակի վրայ թեքուել	Ա. Իսահակեան		76
125. Գիշերն անուշ է	Մ. Մեծարենց	(Ա. Պարբեւեան)	78
126. Գիշերն եկաւ, աստղունքն	Ա. Իսահակեան	(Դ. Ղազարեան)	76
127. Գիշերն եկաւ, եկաւ		(Ռ. Մելիքեան)	76
128. Գիշերն ուշ է	Դ. Կաուվարենց	(Վ. Սրուանձտեանց)	77
129. Գիշեր ցերեկ կը հառաչեմ		(Ա. Սպենդիարեան)	78
130. Գիւղին ծայրը վտակին	Մ. Պոնտացի	(Մ. Թիրեաքեան)	78
131. Գնա, գնա տղիդ եմ	ժողովրդ.	(Կ. Վ.)	79
132. Գնաց, գնաց սիրուհիս		(Աշուղ Ջիւանի)	80
133. Գնչու աղջիկ, դու		(Ա. Տէր Ղազարեան)	81
134. Գութանը հաց եմ բերում		(Կ. Վ.)	82
135. Գալիչու ճամբէն տուղ	ժողովրդ.		82
136. Դամբը ձեռքս աշխատում	Ե. Չարենց	(Ա. Խաչատուրեան)	391
137. Դաշտի ճամբու մը վրան	Մ. Մեծարենց	(Ա. Պարբեւեան)	392
138. Դաշտ ու այգի դեղին	Հ. Հայրապետեան	(Կ. Կոլենի)	83
139. Դարդ մի՛ անի, ջան	Սայաթ-Նովա		84
140. Դարդս լացէ՛ք, Սարի	Ա. Իսահակեան		83
141. Դեղնած դաշտերին	Յ. Թումանեան	(Ռ. Մելիքեան)	85
142. Դէ՛, գնա կարապ	Ե. Սարդարեան		85
143. Դէ՛հ, շուտ արի՛	ժողովրդ.		86
144. Դիլբար ջան	»	(Դ. Ղազարեան)	87
145. Դու անմեղ ես քո աչերն			87
146. Դու գնում ես	Վ. Տէրեան	(Ա. Տէր Ղեւոնդեան)	88
147. Դու խօսք տուիր	ժողովրդ.	(Գր. Սիւնի)	88
148. Դուն էլեր ես	»	(Վ. Սրուանձտեանց)	393
149. Դուն էն գլխէն	Սայաթ-Նովա	(Սպ. Մելիքեան)	90
150. Դուն էն հուրին ես	Սայաթ-Նովա		91

	ԽՕՍՔ	ԵՐԱԺՇՏԹ.	ԷՋ
151. Դու նստել ես աղբրա	Ա. Իսահակեան	(Հ. Մեհրապեան)	92
152. Դու ո՞ր սարէն կուգաս	Յ. Թումանեան	(Ռ. Մելիքեան)	93
153. Դու չես հաւատում			93
154. Դուրս եկ իմ եար		(Աշուղ Ջիւանի)	94
155. Եար մ'ունէի բոյով			94
156. Եա՛ր ջան արի	ժողովրդ.	(Կ. Վ.)	95
157. Եա՛ր, քեզ նման		(Աշուղ Շերամ)	95
158. Եա՛ր, քիզ իսկի	Սայաթ-Նովա		96
159. Եարօ ջա՛ն, դու	ժողովրդ.		97
160. Ելէք, ելէք որ նորից	Պահարէ	(Կ. Զաքարեան)	394
161. Եկաւ սէրն այս գիշեր	Հմայեակ Շէմս	(Վ. Սրուանձտեանց)	98
162. Եկէք քոյրեր սէգ	Յ. Թումանեան	(Ա. Տիգրանեան)	98
163. Ե՛կ իմ սիրած		(ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ)	223
164. Ե՛կ իմ սրինգ	Գ. Պէշկէօթիւրեան		99
165. Ե՛կ մայրական		(Աշուղ Ջիւանի)	101
166. Ես աղջիկ եմ եար	ժողովրդ.		101
167. Ես աղջիկ եմ թէլ կը	»		102
168. Ես աղջիկ եմ հէր չունիմ	»	(Կ. Վ.)	103
169. Ես ապրում էի մի	Յ. Թումանեան	(Ա. Տ. Ղազարեան)	103
170. Ես բլբուլ եմ	Ա. Խնկոյեան	(Ռ. Մելիքեան)	104
171. Ես եկել եմ որ դու		(Աշուղ Ջիւանի)	105
172. Ես լսեցի մի անուշ ձայն	Ս. Շահազիզ	(Բ. Կանաչեան)	107
173. Ես կը գնամ միայն նրան		(ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ)	108
174. Ես ղարիբն եմ		(Աշուղ Ջիւանի)	109
175. Ես մէ ղարիբ բուլբուլի	Սայաթ-Նովա		109
176. Ես մի գանգատ ունեմ		(Աշուղ Ջիւանի)	110
177. Ես որ մեռնիմ	Ա. Իսահակեան	(Ա. Պարբեւեան)	111
178. Ես որ տեսայ սիրտս		(Աշուղ Ջիւանի)	111
179. Ես որքան էլ ծերացած		(ՄԱՇՏԻ ԻԲԱՑ)	112
180. Ես չեմ թողնի որ		(Աշուղ Ջիւանի)	112

		ԽՕՍՔ	ԵՐԱԺՇՏԹ.	ԷՋ
181.	Ես սարէն կուգայի	Ժողովրդն.	(Կ. Վ.)	113
182.	Ես սիրել եմ մի զոյգ			116
183.	Ես սիրել եմ վարդը	Յ. Թումանեան		114
184.	Ես սիրեցի բայց	Վ. Թէքէեան	(Գ. Ալէմշահ)	115
185.	Ես սիրում եմ կարմիր	Յ. Թումանեան	(Ա. Մանուկեան)	116
186.	Ես քեզ տեսայ երբ	Յ. Յհ. Սարհասեան	(Հ. Պէրպէրեան)	395
187.	Ես քու ղիմէթն չիմ	Սայաթ-Նովա	(Ս. Բարխուդարեան)	117
188.	Ես դա՛ռ, ե՛ռ, իգիթ	Յ. Թումանեան	(Ա. Տիգրանեան)	118
189.	Երազումս մի աստղ		(Աշուղ Ջիւանի)	120
190.	Երազումս տեսայ կոյսն		(Աշուղ Ջիւանի)	121
191.	Երեւանայ սարիցն եմ	Արարատեան		121
192.	Երեւան բաղ եմ արել նէյնիմ		(Վ. Սրուանձտեանց)	122
193.	Երեւան բաղ եմ արել ջան	Ժողովրդն.	(Կ. Վ.)	122
194.	Երեւանից դուրս եկայ	»	»	123
195.	Երէկ տեսայ քեզ	(Ս. Շահազիզ)		123
196.	Երթիկ երթիկ բռնել ես	Ժողովրդն.		124
197.	Երկարի՛ր գիշեր	Նահապետ Քուչակ		125
198.	Երկինքն ամպել է		(Կ. Վ.)	125
199.	Եւ այս գարուն կ'անցնի		(Ա. Տէր Ղեւոնդեան)	126
200.	Եւ ուշ գիշերին	Ա. Իսահակեան	(Վ. Սրուանձտեանց)	395
201.	Եօթն օր եօթ գիշեր	Ժողովրդն.	(Կ. Վ.)	126
202.	Զա՛ր, զընգը զար	»	(Կ. Վ.)	128
203.	Զարկեցէ՛ք թառը			128
204.	Զի՞նչ ու զինչ տամ	Ժողովրդն.	(Կ. Վ.)	129
205.	Զոյգ զոյգ կռունկ	»	(Կ. Վ.)	130
206.	Զըւարթ նաւաստին	Զ. Հ. Ասատուր		130
207.	Զուգուած զարդարուած	Ա. Խնկոյեան		131
208.	Է՛յ բէմուրադ մի՛	Սայաթ-Նովա		132
209.	Է՛յ ժողովուրդ երգս լսէք	Շիրվանզադէ	(ՁԱՐ ՈԳԻ)	133
210.	Է՛յ հէյ, ինչքա՛ն	Ա. Վարդանեան	(Ա. Մանուկեան)	396

		ԽՕՍՔ	ԵՐԱԺՇՏԹ.	ԷՋ
211.	Է՛յ, ջան սարեր	Ի. Գալայճեան	(Կ. Զախարեան)	396
212.	Էն ո՞վ էր, նանի՛	Յ. Թումանեան	(Ա. Տիգրանեան)	133
213.	Էն տեսակ կին	Յ. Թումանեան	(Ա. Սպենդիարեան)	134
214.	Էնքան սիրուն ու գիտուն	Ա. Վահունի	(Ռ. Մելիքեան)	135
215.	Էշխէմէդ հիւանդացիլ	Սայաթ-Նովա		397
216.	Էշխէմէն էնպէս վառվիլ	»		136
217.	Էշխըն վառ կըրակ է	»		136
218.	Էջմիածին երթամ ուխտ	Ժողովրդն.	(Կ. Վ.)	137
219.	Էս առուն ջուր է գալի	»	»	138
220.	Էս գիշեր ամպհով գիշեր	Ա. Իսահակեան	(Վ. Սրուանձտեանց)	139
221.	Էս գիշեր զով գիշեր	Ժողովրդն.		139
222.	Էս գիշեր լուսը տեսայ	»	(Կ. Վ.)	140
223.	Էս գիշեր, լուսնակ գիշեր	»	»	141
224.	Էս ճամբէքը ոլոր ա	»		142
225.	Էսպէս է սսել հնուց	Յ. Թումանեան	(Ա. Սպենդիարեան)	143
226.	Էս քանի օր է առանց		(Աշուղ Ջիւանի)	144
227.	Էսօր ամպ ա պարզում	Ժողովրդն.		211
228.	Էս օր իմ եարին տեսայ	Սայաթ-Նովա		144
229.	Էս օր նորը նորել է		(Յ. Ստեփանեան)	145
230.	Էս օր ուրբաթ է պաս է	Ժողովրդն.	(Կ. Վ.)	146
231.	Ընչանք ես դիմանամ	Պ. Պռօշեանց	(Դ. Ղազարեան)	147
232.	Թագւոր բարով	Ժողովրդն.	(Կ. Վ.)	148
233.	Թագւորի մէ՛ր, դուս արի	»	»	148
234.	Թախիծս թաղեմ	Հմայեակ Շէմս	(Վ. Սրուանձտեանց)	398
235.	Թամամ աշխարհ պտուտ	Սայաթ-Նովա		149
236	Թամամ աշխարհքումն	Պ. Յ. Մասաբեան	(Աշուղ Սայաթ)	398
237.	Թառամեցաւ կարմիր	Պ. Պռօշեանց	(Դ. Ղազարեան)	150
238.	Թեթեւ ու թեթեւ	Ա. Խնկոյեան		399
239.	Թէ առնէի զուշ եղնէի	Ժողովրդն.		150
240.	Թըրխկոնդա դըլեն	»	(Սպ. Մելիքեան)	399

	ԽՕՍՔ	ԵՐԱԺՇՏԹ.	ԷՋ
241.	Թոյլ տուր մոնեմ այ	Հմայեակ Շէմս (Վ. Սռուանձտեանց)	400
242.	Թոյլ տուր մոնեմ խնձոր	Նահապետ Քուչակ	151
243.	Ժէռ քարափին	Շ. Կուրղինեան	151
244.	Իմ գլխու փուլթէն	Ժողովրդն.	152
245.	Իմ խենթ գարնան օրեր	Հմայեակ Շէմս (Ն. Ալեքսանեան)	154
246.	Իմ չինար եարին	(Կ. Վ.)	154
247.	Իմ չինարի եարը	Ժողովրդն. (Կ. Վ.)	155
248.	Իմ սիրած եկ քեզ եմ	(ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ)	156
249.	Իմ սիրականի կարօտից	Ն. Քուչակ	156
250.	Իմ սիրտը միշտ	Վ. Տէրեան (Վ. Սռուանձտեանց)	157
251.	Իմ սիրտը սաղ ես արել	Գուրջի Նաւէ	400
252.	Ինձ մի՛ խնդրի, ես չեմ	Յ. Թումանեան (Ա. Մայիլեան)	157
253.	Ինձ որ հարցնէք կնկայ	Գ. Երիցեան (ՈՒՇ ԼԻՆԻ ՆՈՒՇ)	158
254.	Ինձ ու իմ սիրէկան	Սայաթ-Նովա	159
255.	Ի՞նչ ասացիր եկար	Աշուղ Ջիւանի	160
256.	Ի՞նչ կայ էրնակ	Յ. Աղաբաբի (Ռ. Մելիքեան)	162
257.	Ի՞նչ կայ որսից լաւ		162
258.	Ի՞նչ կօնիմ հէքիմըն	Սայաթ-Նովա (Ս. Բարխուդարեան)	163
259.	Ինչո՞ւ այլ տեղ փնտռել	(ԶԱՐՏԱՇ)	164
260.	Ինչո՞ւ բինկէօլը մտար	Ժողովրդն. (Ռ. Մելիքեան)	166
261.	Ինչ վատ ես տրամադրուած	(ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ)	290
262.	Ինջինար եարջան	Ժողովրդն.	167
263.	Ինքս հարուստ	(ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ)	167
264.	Իրիկուան դէմ արտը	Զուլֆաեան (Ա. Պարթեւեան)	168
265.	Լէ՛, լէ՛, եաման	Ժողովրդն.	168
266.	Լէ, լէ, լէ, լէ թամզարա	»	169
267.	Լէ՛պ հօ՛, լէ, լէ	»	170
268.	Լէփօ լէ, լէ	»	170
269.	Լճի մէջ նաւակը	Թամառ-Քաթիպա (Բ. Կանաչեան)	171
270.	Լոյսդ տեսայ այս	Ազատուհի (Հ. Պէրպէրեան)	173
271.	Լուսաստղ գըցեց դուռ	(Կ. Վ.)	173
272.	Լուսինն ելաւ էն սարից	Յ. Աղաբաբի (Ռ. Մելիքեան)	174
273.	Լուսնակ գիշեր		175
274.	Լուսնակը սարի տակին	Ժողովրդն. (Կ. Վ.)	175
275.	Լուսնակն անուշ	» (Կ. Վ.)	176
276.	Լուսնակն ելաւ	Յ. Թումանեան (Դ. Ղազարեան)	177
277.	Լուսնի նման պայծառ	Նաղաշ Յովնաթան	401
278.	Խնձորի ծառի տակին	(Յ. Մեհրաբեան)	178
279.	Խնձոր ունիմ կծած ա	Ժողովրդն.	179
280.	Խումար պառկե	» (Կ. Վ.)	179
281.	Ծաղիկ էի նորաբողբոջ	Ա. Իսահակեան (Գ. Ալէմշահ)	402
282.	Ծաղկոց մտայ	Յ. Թումանեան (Ա. Տէր Ղեւոնդեան)	181
283.	Ծառէն կախուէր է	Ա. Գասպարեան (Հ. Պէրպէրեան)	18t
284.	Ծառիս տակը մանիշակ	Ժողովրդն.	182
285.	Ծիլ, ծիլ, ծի՛լ ա	Ա. Խնկոյեան (Ռ. Մելիքեան)	187
286.	Ծիրանի ծառ	Ժողովրդն. (Կ. Վ.)	188
287.	Ծլել է արտըս	Ալազան (Ա. Տէր Ղեւոնդեան)	189
288.	Ծխէ՛, ծխէ՛, ով	Հ. Վ. Յովհաննէսեան (Գ. Ալէմշահ)	403
289.	Ծովը յոգնած	Ա. Իսահակեան (Վ. Սռուանձտեանց)	189
290.	Ծով մը կապոյտ	Սիպիլ (Հ. Պէրպէրեան)	190
291.	Ծովուն խաւք մը	Ժողովրդն.	191
292.	Ծոցիդ կախուած		192
293.	Կայնել եմ գալ չեմ	Ժողովրդն. (Կ. Վ.)	193
294.	Կայնել ես կանչում էլ	» (Կ. Վ.)	194
295.	Կայնել ես վարդի հովին	» (Կ. Վ.)	194
296.	Կանգնել ես հպարտ	Մ. Կորցունի (Դ. Ղազարեան)	207
297.	Կ'անձրեւէ տղաս	Վ. Թէքէեան (Հ. Պէրպէրեան)	195
298.	Կանչէ՛ կռունկ	(Կ. Վ.)	196
299.	Կապոյտ երկնքում	Գ. Բարխուդարեան	196
300.	Կարմիր գինիով	Գ. Կառվարենց	197

	ԽՕՍՔ	ԵՐԱԺՇՏԹ.	ԷՋ
301.	Կաքաւ թռաւ բանձր-	(Գր. Սիւնի)	403
302.	Կաքաւի պէս ման	(Ա. Տէր Ղեւոնդեան)	200
303.	Կեանքի նաւակն	Ռ. Որբերեան (Ա. Պարբեւեան)	198
304.	Կէս գիշեր է	Ռեբեկա Կէպէնյեան	199
305.	Կէս գիշեր էր	Կ. Զարխչեան (Դ. Ղազարեան)	200
306.	Կէրմէյր ֆըստան	Ժողովրդ.	201
307.	Կիւրճիստանի մարալ	Գ. Սարեան (Դ. Ղազարեան)	203
308.	Կլոր պար մէջը ծառ	Յ. Աղաբաբի	204
309.	Կողբա ելան սէլերը	Ժողովրդ. (Ա. Տէր Ղեւոնդեան)	204
310.	Կողբայ սարը զոշա է	»	202
311.	Կոտ ու կէս կորեկ	(Ռ. Մելիքեան)	205
312.	Կ'ուզեմ իյնալ	Ա. Տխրունի	206
313.	Կ'ուզեմ լինեմ	Ա. Խաճակեան (Վ. Սրուանձտեանց)	206
314.	Կուժն առայ, ելայ	Ժողովրդ. (Կ. Վ.)	207
315.	Կրանբամբուլին		208
316.	Հաբրբանը նստել ա	Ժողովրդ.	212
317.	Հաբրբան, ջա՛ն է ջան	»	209
318.	Հագեր ես կարմիր	Ա. Խաճակեան (Վ. Սրուանձտեանց)	213
319.	Հազա՛ր երնէկ	Աշուղ Շերամ	213
320.	Համբարձումն եկաւ	Յ. Թումանեան (Ա. Տիգրանեան)	214
321.	Հայոց աղջիկներ	(Ա. Խաչատուրեան)	215
322.	Հանգիստ եղիր Օհան	Գ. Երիցեան (ՈՒՇ ԼԻՆԻ ՆՈՒՇ.)	216
323.	Հաները, նաները	(Սպ. Մելիքեան)	404
324.	Հարբել եմ ու չեմ	Ն. Քուչակ	217
325.	Հարհանդ մարմանդ	Կոստանեան (Ա. Մայիլեան)	218
326.	Հեռաւոր ու ամայի	Ա. Զօպանեան (Ա. Պարբեւեան)	219
327.	Հեռու դղեակի	Վ. Տէրեան (Ռ. Մելիքեան)	219
328.	Հէ՜յ, Եղսօ ջա՛ն	Ժողովրդ.	405
329.	Հէ՜յ իմ սիրուն		220
330.	Հէ՜յ, հէ՜յ ձեզ եմ	Ալազան (Ա. Տէր Ղեւոնդեան)	405

	ԽՕՍՔ	ԵՐԱԺՇՏԹ.	ԷՋ
331.	Հէ՜յ պարոններ	Յ. Թումանեան (Ա. Սպենդիարեան)	221
332.	Հէ՜յ, ջա՛ն անցան		406
333.	Հէ՜յ ջան է ջան	Վ. Այասեան (Դ. Ղազարեան)	222
334.	Հըլէ՛ ինձ համար	(ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ)	223
335.	Հինգ էծ ունիմ	Ժողովրդ. (Կ. Վ.)	224
336.	Հոռո՛մ, հոռոմ	» (Կ. Վ.)	224
337.	Հով արա Լեղվար	(Յ. Ստեփանեան)	225
338.	Հո՛վ արէք, սարե՛ր	(Կ. Վ.)	226
339.	Հովերն առան	Ա. Խաճակեան (Գր. Սիւնի)	226
340.	Հովիւը սարում տխրեց	(Բ. Կանաչեան)	227
341.	Հո՛վ, հո՛վ հո՛վ լինի	Ժողովրդ. (Կ. Վ.)	228
342.	Հովն անուշ հովն անուշ	(Վ. Սրուանձտեանց)	230
343.	Հունձք ենք արել	(Գր. Սիւնի)	406
344.	Հօդալլօ ջա՛ն	» (Կ. Վ.)	229
345.	Հօ՛ եա՛, հօ՛ եա	(ՁԱՐՏԱՇ)	230
346.	Հօ՜, երգում կ'անե՛մ	Պ. Պռօշեանց (Դ. Ղազարեան)	231
347.	Հօ՛լ արա, գո՛մէշ ջան	Ժողովրդ. (Կ. Վ.)	232
348.	Հօ՛լ արա եզը	» (Կ. Վ.)	233
349.	Հօ՜, հօ, յառաջ	Գարեգին Վրդ.	234
350.	Հօ՜յ եար, ամպել ա	Ժողովրդ.	234
351.	Հօ՜յ եար, հօ՜յ եար	» (Կ. Վ.)	235
352.	Հօ՜յ, Հեյինէ, Հեյինէ	»	236
353.	Հօ՜յ Նազան իմ	» (Կ. Վ.)	238
354.	Հօ՜յ նար, ծամեր	(Կ. Վ.)	239
355.	Հօ՛յ նար, հօ՛յ նար ջանըմ	» (Վ. Սարգիսեան)	240
356.	Հօ՜յ նա՜ր, հօ՜յ նար	» (Բ. Կանաչեան)	407
357.	Հօյ նար նարէ նար	Յ. Քհ. Սարմաստեան (Հ. Պէրպէրեան)	241
358.	Հօ՜, ջան, եղներ	Ա. Տէր Ղազարեան	242
359.	Հօ՜, ռօլ օ՜ լօ	(Կ. Վ.)	231
360.	Հօ՜. օրհնեալ է Աստուած	(Կ. Վ.)	243

	ԽՕՍՔ	ԵՐԱԺՇՏԹ.	ԷՋ
361. Ձէնըդ քաղցըր	Սայաթ-Նովա		249
362. Ձըձում, կարագ	ժողովրդյն.		250
363. Ձի՛գ տու, քաշի՛	»	(Կ. Վ.)	251
364. Ձինիկ լուսին		(Կ. Վ.)	407
365. Ձմեռն անցաւ	Ա. Իսահակեան	(Ա. Մանուկեան)	252
366. Ձմեռն ինչ կ'ուզէ			252
367. Ձուկն է լողում	Մ. Աձեւ		408
368. Ղարիբ եմ Կարս		(Կ. Վ.)	254
369. Ղուշս գնաց, թռաւ	Աշուղ Շերամ		254
370. Ճամբայ տուէք յառաջ	ժողովրդյն.		255
371. Ճամբայ տուէք սար ու			255
372. Մաճկալ ես, բեզարած	Ա. Իսահակեան		256
373. Մայիսն եկաւ հով արեց		(Գր. Սիւնի)	408
374. Մայրիկին եազմա բերին	ժողովրդյն.	(Կ. Վ.)	257
375. Մայրիկն հակած էր	Գ. Ոսկեան		409
376. Մայրս մանէ մանածս	ժողովրդյն.		258
377. Մանած թելըս հաստ		(Գր. Սիւնի)	410
378. Մանուկ օրէս վարդ	Հմայեակ Շէմս	(Վ. Սրուանձտեանց	410
379. Մաշտի Իբատ դու		(ՄԱՇՏԻ ԻԲԱՏ)	258
380. Մատնիքը մատովս չէր	ժողովրդյն.	(Կ. Վ.)	259
381. Մարալօ՜ ջա՛ն, մարալօ	»	(Հ. Պէրպէրեան)	260
382. Մարգիս միջին կայ համեմ		(Գր. Սիւնի)	411
383. Մեր բաղը ծառ ա		(Կ. Վ.)	262
384. Մեր դրանը խնկի ծառ	ժողովրդյն.	(Կ. Վ.)	263
385. Մեր թագւորին ի՞նչ պիտի	»	(Կ. Վ.)	264
386. Մեր թագւորն էր խաչ	»	(Կ. Վ.)	264
387. Մեր Սօսը Վարդին	Պ. Պռօշեանց	(Գ. Ղազարեան)	266
388. Մեր տան ետե քառսուն	ժողովրդյն.		266
389. Մեր տուն ձեր տան դիմաց		(Վ. Սրուանձտեանց)	262
390. Մեր տուն, ձեր տան մօտիկ		(Կ. Վ.)	267

	ԽՕՍՔ	ԵՐԱԺՇՏԹ.	ԷՋ
391. Մէ խօսք ունիմ	Սայաթ-Նովա	(Ս. Բարխուդարեան)	267
392. Մէկ ձի առայ		(ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ)	268
393. Մէջլումի պէս կօրաւ	Սայաթ-Նովա		269
394. Մըր խօր պապկը	ժողովրդյն.		270
395. Մի երգ գիտեմ ես	Յ. Յակոբեան	(Ա. Մայիլեան)	412
396. Մի թունաւորիր	Ա. Տիգրանեան	(Ն. Գալէնտէրեան)	271
397. Մի՛ լար, աղուո՛րս	Վահրամ Թաթուլ		272
398. Մի՛ լար բլբուլ	Զ. Փանոսեան		272
399. Մի՛ լար. մի՛ թացիր	Դ. Դեմիրճեան	(Ռ. Մելիքեան)	273
400. Մի՛շտ գքեզ կ'երազեմ	Ս. Զաւէն		274
401. Մի քիչ ժամանակ		(Աշուղ Գէորգ Զուլա)	412
402. Նանա՛ բալիկըս	ժողովրդյն.	(Ա. Տէր Ղեւոնդեան)	274
403. Նանիկ արա՛, անուշ	Ա. Խնկոյեան		275
404. Նաննի. բալա՛ նաննի	ժողովրդյն.	(Գր. Սիւնի)	413
405. Նոր է բացուել	»	(Կ. Վ.)	275
406. Նորէն գարուն, ծաղիկ		(Վ. Սրուանձտեանց)	276
407. Նորից անձրե՛ւ	Վ. Տէրեան	(Ա. Տէր Ղեւոնդեան)	276
408. Շագը՛ր-չուգո՛ւր	ժողովրդյն.	(Կ. Վ.)	277
409. Շատ աղուորիկ աղջիկ	»		277
410. Շատեր եկան իմ	Մ. Ղարաբէկեան	(Գ. Գալէնտէրեան)	278
411. Շատ սիրուն ես	Սայաթ-Նովա		413
412. Շարան շարան ամպերն	Ա. Իսահակեան	(Վ. Սրուանձտեանց)	414
413. Շափաղ կուտաս	Ա. Իսահակեան	(Ռ. Մելիքեան)	279
414. Շէկ տըղի պօյին	ժողովրդյն.	(Յ. Ստեփանեան)	279
415. Շիկուկ չիկուկ	»		280
416. Շորորա՛ Անուշ ջան		(Կ. Վ.)	280
417. Ո՞հ եարաբ վերջ		(ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ)	281
418. Ո՜հ, ինչ սեւ վիճակ	Յ. Թումանեան	(Ա. Տիգրանեան)	282
419. Ո՜հ, ի՞նչ քաղցր բան	"	(Կ. Վ.)	283
420. Ո՛չ թռչունին եւ ոչ	Կ. Ոսկեան	(Յ. Սինանեան)	284

	ԽՕՍՔ	ԵՐԱԺՇՏԹ.	ԷՋ
421. Ո՛չ տրտունջ, ո՛չ	Վ. Տէրեան	(Ն. Գալէնտէրեան)	284
422. Ոսկի երազ ես տեսայ	Մ. Տամամեան	(Հ. Պէրպէրեան)	285
423. Ո՞վ ես դուն որ	Գ. Գալճաեան		285
424. Ո՞վ իրաւունք ունի		(ՄԱՇՏԻ ԻԲԱՑ)	286
425. Ով կեանք ունի	Ա. Խանակեան		287
426. Ո՛վ մեծասքանչ	Ն. Մեզպուրեան	(Կ. Վ.)	288
427. Ով որ խելք ունի	Աշուղական		414
428. Ոտքերիդ տակ	Աշուղ Ջիւանի		289
429. Ո՞րտեղից պատահեց		(ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ)	289
430. Որսկան ախպէ՛ր	Ա. Խանակեան		290
431. Որքա՜ն լաւ օրերս			291
432. Որքա՜ն քաղցր է	Ա. Տ. Յովհաննէսեան	(Ն. Գալէնտէրեան)	292
433. Ուռի ես կռանալ մի՛	Ժողովրդ.		292
434. Ուստի՞ գուքաս, ղարիբ	Սայաթ-Նովա	(Ս. Բարխուդարեան)	293
435. Ուստի՞ կուգաս չորորալէն		(Կ. Վ.)	294
436. Ո՞ւր ես, ձայն տուր	Գ. Երիցեան	(ՈՒՇ ԼԻՆԻ ՆՈՒՇ.)	294
437. Ո՞ւր էր թէ զեփիւռիկ	Մ. Պէշիկթաշլեան	(Վ. Սրուանձտեանց)	295
438. Ո՛ւր էք կորեր	Ա. Խանակեան	(Վ. Սրուանձտեանց)	295
439. Ուր տեղ սիրուն կին	Ա. Ի.		296
440. Չաթըրըս գլխիս գըցիմ		(ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ)	297
441. Չեմ, չեմ, չեմ, կրնայ		(Գր. Սիւնի)	415
442. Չը գիտեմ ո՞ր օրէն	Գ. Իփէկեան	(Վ. Սրուանձտեանց)	415
443. Չըմ, չըմ, չըմ կենայ	Ժողովրդ.		298
444. Չինար ես, կեռանալ մի	»	(Կ. Վ.)	299
445. Չիս ասում թէ՝ լա՞ց	Սայաթ-Նովա	(Ս. Բարխուդարեան)	300
446. Պալատից դուրս	Աշուղ Ջիւանի		301
447. Պալքօնը ման էս	Ժողովրդ.		302
448. Պաղ աղբիւրի մօտ	»		302
449. Պաղ պաղ փչեց	Ա. Խանակեան	(Վ. Սրուանձտեանց)	304
450. Պատէն ծնած ծառի	Վահրամ Թափուլ	(Ա. Պարթեւեան)	303

	ԽՕՍՔ	ԵՐԱԺՇՏԹ.	ԷՋ
451. Պարախոտը եկաւ	Ժողովրդ.		303
452. Պարտէզ իջնեմ վարդ	Զօհրապ Կարօ	(Ա. Տ. Մկրտիչեան)	416
453. Պարտէզ ունիմ դրախտ	Ժողովրդ.	(Կ. Վ.)	305
454. Պարտքով կովը ծախեցին	»	(Կ. Վ.)	305
455. Պեզզազու աղջիկ	»	(Կ. Վ.)	306
456. Պսակ-պսակ, տիկնի	»	(Ռ. Մելիքեան)	307
457. Պօյըդ բարձր սալվի	Աշուղական		307
458. Ջա՛ն ա՛ղբէր ջան	Ժողովրդ.	(Կ. Վ.)	308
459. Ջան, մարալ ջա՛ն	»	(Կ. Վ.)	309
460. Ջան ջան սարեր	Վ. Աղասեան	(Ա. Մայիլեան)	310
461. Ջանս մրմուռ		(Գր. Սիւնի)	416
462. Ջուր կուգայ վերին	Ժողովրդ.	(Կ. Վ.)	310
463. Ջուրն առայ եկայ	»	(Սպ. Մելիքեան)	311
464. Ռազմի գնացող	»	(Բ. Կանաչեան)	417
465. Սամսան կ'ելնէր	»		312
466. Սարերը հովել ա	»	(Գր. Սիւնի)	313
467. Սարերը ման եմ եկել	»	(Գր. Սիւնի)	314
468. Սարերի հովին մեռնեմ	»	(Գր. Սիւնի)	314
469. Սարերի վրով գնաց	»	(Կ. Վ.)	315
470. Սարէն ելաւ երկու մուխ	»	(Կ. Վ.)	316
371. Սարէն ելաւ ջուխտ մը	»	(Վ. Սրուանձտեանց)	317
472. Սարէն կուգայ ձիաւոր	»	(Գր. Սիւնի)	317
473. Սարը սարի նման չէ	»	(Կ. Վ.)	318
474. Սարի լանջին	Հ. Հայրապետեան	(Գ. Ղազարեան)	319
475. Սարին կատարն եմ	Յ. Ճ. Սիրունի		320
476. Սա՛ր, սար, ես	Ժողովրդ.	(Կ. Վ.)	320
477. Սափորն ուսիս դրի	»	(Կ. Վ.)	321
478. Սեւ աչերէն շատ վախեցիր			322
479. Սեւորակ աչեր՛, աչեր	Ս. Շահազիզ		323
480. Սեւորակ աչեր, սիրունիկ			324

		ԽՕՍՔ	ԵՐԱԺՇՏԹ.	ԷՋ
481.	Սեւորակ տղայ	Սարմենի	(Դ. Ղազարեան)	324
482.	Սեւուկ ամպեր վրայ եկան		(Կ. Վ.)	322
483.	Սեւ սեւ աչերիդ	Աշուղական		325
484.	Սէր մը գաղտնի	Վ. Թէքէեան	(Հ. Պէրպէրեան)	326
485.	Սիրելի ջան հեռացար	Պ. Պռօշեանց	(Դ. Ղազարեան)	326
486.	Սիրել եմ սերն երեսին	Ժողովրդ.	(Կ. Վ.)	209
487.	Սիրեցի եարս տարան	Ա. Իսահակեան		327
488.	Սիրուհի՛ս, քեզ համար		(Վ. Սրուանձտեանց)	328
489.	Սիրուն աղջի՛կ. ի՞նչ	Յ. Թումանեան	(Ա. Տիգրանեան)	329
490.	Սիրո՛ւն աղջի՛կ, ո՞ւր	Աշուղական	(Աշուղ Շերամ)	330
491.	Սիրուն աղջիկ սարերով	Յ.-Բհ. Սարհատեան	(Հ. Պէրպէրեան)	331
492.	Սիրուն աստղեր հուր	Ա. Զարդ	(Գ. Ալէմշահ)	331
493.	Սիրուն գիշեր, լուսնի		(Ա. Մանուկեան)	418
494.	Սիրուն թռչնիկ թռի՛ր		(ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ)	332
495.	Սիրուն մանիշակ, արդեօք			332
496.	Սիրուն մանիշակ ինչո՞ւ			333
497.	Սիրուն ուռենի	Ա. Խնկոյեան	(Ռ. Մելիքեան)	334
498.	Սիրո՛ւն ջան, սիրուն	Ժողովրդ.	(Կ. Վ.)	334
499.	Սիրտս դարձել է	Ն. Քուչակ		335
500.	Սիրտս կը թռի	Թլկատինցի	(Հ. Պէրպէրեան)	336
501.	Սիրտս նման է էն	Ժողովրդ. (ԱՆՏՈՒՆԻ)	(Կ. Վ.)	336
502.	Սիրտս քեզի օրրան	Գ. Ճիզմէճեան	(Ա. Պարթեւեան)	337
503.	Սո՞նա եա՛ր, Սոնա եա՛ր	Ժողովրդ.	(Կ. Վ.)	337
504.	Սովորելով փորձեցի		(ԱՐՇԻՆ ՄԱԼ ԱԼԱՆ)	338
505.	Սուրբ Աստուածածնի	Ն. Քուչակ		418
506.	Սուրբ Կարապետ չայիր	Աշուղական		339
507.	Սուրբ Կարապետ քո	Ժողովրդ.		340
508.	Սրտիս թագուհի	Յ. Թումանեան		341
509.	Վա՛յ կաքաւիկ	Յ. Թումանեան	(Ռ. Մելիքեան)	342
510.	Վա՛յ, վա՛յ, Մօ՛սի ջան	Յ. Թումանեան	(Ա. Տիգրանեան)	342

		ԽՕՍՔ	ԵՐԱԺՇՏԹ.	ԷՋ
511.	Վառեց երկինք իր մոմերը			343
512.	Վարդը ձեռքիդ դու	Յ. Յովհաննիսեան		344
513.	Վարդի ջրով, եա՛ր	Ժողովրդ.	(Կ. Վ.)	344
514.	Վարդ կօշիկը. վարդ	Կարա Մուրզա	(Ռ. Մելիքեան)	345
515.	Վերէն ես կուգայի	Աշուղական		345
516.	Վերջին վարդ, վերջին	Բ. Պատկանեան	(Վ. Սրուանձտեանց)	346
517.	Վունց օր վուր	Սայաթ-Նօվա		347
518.	Վո՞ւչ, վո՞ւչ վշտիս		(Գր. Սիւնի)	347
519.	Վուր որ գնաս	Սայաթ-Նօվա		348
520.	Վտակը ժայռից ներքեւ	Յ. Թումանեան	(Ա. Տ. Ղազարեան)	349
521.	Տըլէ եաման. արեւն	Ժողովրդ.	(Վ. Սրուանձտեանց)	350
522.	Տինիյրքը վէղընք թնտու	»		349
523.	Տո՞ւյ, տո՞ւյ	Ա. Խնկոյեան	(Ռ. Մելիքեան)	351
524.	Տո՛ւն արի	Ժողովրդ.	(Կ. Վ.)	351
525.	Տուր ինձ բահն ու		(Կ. Զաքարեան)	351
526.	Տօլաւօ՛, մէկ օր մենք	Զիրունի	(Հ. Պէրպէրեան)	352
527.	Ցորեն եմ ցաներ	Յ. Սամուէլեան	(Գր. Սիւնի)	352
528.	Ցրտահար, հողմավար	Վ. Տէրեան	(Ռ. Մելիքեան)	353
529.	Փարախին ճռճռան	Ա. Լէյլանի	(Հ. Պէրպէրեան)	353
530.	Փափուրի ջան	Ժողովրդ.	(Կ. Վ.)	354
531.	Փոքրիկ տղան մի	Թրգ. Յ. Թումանեան	(Ռ. Մելիքեան)	355
532.	Քաղ հանում եմ	Ժողովրդ.	(Յ. Ստեփանեան)	355
533.	Քաղցրիկ գարունն է	Մ. Տամատեան	(Հ. Պէրպէրեան)	419
534.	Քանաքեռ բարձր տեղ	Ժողովրդ.		356
535.	Քանի վուր ջան իմ	Սայաթ-Նովա	(Ս. Բարխուդարեան)	357
536.	Քեզ եմ գովում	Ա. Խնկոյեան		357
537.	Քեզ եմ հիւսում անուշ	Գր. Գրիգորեան	(Դ. Ղազարեան)	358
538.	Քեզ չը տեսնել ուխտել	Ա. Իսահակեան	(Ա. Պարթեւեան)	358
539.	Քեռին եկաւ մեր բակը		(Գր. Սիւնի)	359
540.	Քէլէր, ցօլէր՝ իմ եարը	Ժողովրդ.	(Կ. Վ.)	359

	ԽՕՍՔ	ԵՐԱԺՇՏԹ.	ԷՋ
541.	Քէ՛լէ, քէ՛լէ	(Կ. Վ.)	361
542.	Քըշքըշալով սարի	Յ. Աղաբաբի	420
543.	Քնի՛ր անուշ սիրուն	Գրիգ (Կ. Զաքարեան)	361
544.	Քնի՛ր, իմ բալիկ	Ա. Ահարոնեան (Յ. Իւվէզեան)	362
545.	Քնի՛ր, Ղարիբ	Աշուղ Ջիւանի	363
546.	Քնքուշ սրտով	(Բ. Կանաչեան)	364
547.	Քոյր իմ նազելի	Ա. Իսահակեան (Գ. Ղազարեան)	364
548.	Քուն եղիր բալաս	Գամառ-Քաթիպա (Բ. Կանաչեան)	364
549.	Քու փափաքով	Աշուղ Ջիւանի	420
550.	Օդն է զով, գիշերն է		365
551.	Օ՜, իմ անդարձ երջանկութ.	(Վ. Սրուանձտեանց)	366
552.	Օխտը սարով հեռու	Աշուղական	366
553.	Օհանն եմ. Օհանն եմ	Գ. Երիցեան (ՈՒՇ_ԼԻՆԻ ՆՈՒՇ.)	421
554.	Օրե՜ր, գարնան անուշ	(Վ. Սրուանձտեանց)	367
555.	Օրը մթնեց համբէս	Յ. Յովհաննիսեան	368
556.	Օրն էր Ուրբաթ	Ժողովրդն. (Կ. Վ.)	368
557.	Օտար աշխարհ	Տ. Գալայճեան (Հ. Պէրպէրեան)	370
558.	Օրօրանիս մօտը նստած	Գ. Ասողիկ	371
559.	Օրօր, օրօր իմ սիրունիկ	(Ռ. Մելիքեան)	371

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԳԵՐ

	ԽՕՍՔ	ԵՐԱԺՇՏԹ.	ԷՋ
560.	Ազատն Աստուած	Մ. Նալբանդեանց (Կարա Մուրզա)	423
561.	Ազատութեան այն վառ		424
562.	Ազատութեան որդին եմ		425
563.	Ազատութեան սիրոյն	Գ. Կիւմիւշեան (Յ. Սինանեան)	426
564.	Ազնիւ ընկեր մեռանում	Ս. Շահազիզ (Մ. Եկմալեան)	427
565.	Ա՜խ, մեր սիրտը լիքը	Ա. Իսահակեան	428
566.	Ա՜խ, Վասպուրական	Ս. Ժամկոչեան	428
567.	Ահա ապաւնին	Ն. Մեզպուրեան	429
568.	Այգուն, այգուն	Ն. Վրդ. Դանիէլեան	431

	ԽՕՍՔ	ԵՐԱԺՇՏԹ.	ԷՋ
569.	Անվախ ընկեր	(Ռ. Մելիքեան - Գր. Սիւնի)	432
570.	Առա՛ջ, առա՛ջ յաղթող	Ալազան (Կ. Զաքարեան)	432
571.	Արագի ափին ծնած		433
572.	Արե՛ւ, արեւ դուրս	Ս. Սափարեանց	434
573.	Արի՛ք Հայկազունք	Յ. Գ. Սրվանձեան	434
574.	Բա՛մ. փորոտան	Հ. Ղ. Մ. Ալիշան	435
575.	Գարահիսար լերան		436
576.	Գերեզմանիս թող		436
577.	Գնա՛ բլբուլ մեր աշխարհից		437
578.	Դաշնակցական խումբ		438
579.	Դարձեալ փայլեց		439
580.	Դու զո՞վ խնդրես	Մ. Պէշիկթաշլեան	440
581.	Դուն խելօք հաշուով	Գամառ-Քաթիպա	441
582.	Եկել է գարուն		442
583.	Եկէ՛ք, բոլորուինք	Գ. Խաննեան	483
584.	Ես գինւոր եմ	Գ. Մահարի (Ռ. Մելիքեան)	443
585.	Ես իմ անոյշ Հայաստանի	Ե. Չարենց (Հ. Պէրպէրեան)	106
586.	Ես իմ աշխարհի	Յ. Հայրապետեան (Վ. Սրուանձտեանց)	106
587.	Ես Մշեցի համբորդ եմ	Գամառ-Քաթիպա	444
588.	Երբ ալեկոծ ծովին	Գ. Թաղէոսեան	444
589.	Երբոր բացուին	Ն. Ռուսինեան	446
590.	Զարթի՛ր որդեակ	Պ. Յ. Նարպեան	446
591.	Էն սեւ գիշերում	Շ. Կուրղինեան (Մ. Թիրեաքեան)	447
592.	Թէ հայրենեաց	Գ. Վ. Սրուանձտեանց	448
593.	Թիկունքդ լայն		449
594.	Թո՛ղ երգէ բլբուլ		450
595.	Թո՛ղ կորնչին	Մ. Մարտիրոսեան	450
596.	Թո՛ղ փչէ քամին	Գամառ-Քաթիպա	451
597.	Ի բիւր ձայնից	Մ. Պէշիկթաշլեան	452
598.	Իբրեւ արծիւ		453

	ԽՕՍՔ	ԵՐԱԺՇՏԹ.	ԷՋ.
599.	Ի զէ՛ն՝ հայեր, ի սուր		453
600.	Իմ հայրենեաց	Ս. Ն. Ֆէյէկեան	454
601.	Իմ հայրենիք գիս	Ա. Հայկունի	455
602.	Լուսին չկար		456
603.	Լռեց՝ Ամպերն	Գամառ-Քաթիպա	457
604.	Լօ, լօ, լօ՛ սէգ Սիփանայ	(Կ. Վ.)	458
605.	Խաղաղ դաշտի որդիք		459
606.	Խաւարել եմ ինչպէս	Ս. Շահազիզ	459
607.	Ծագեց արեւ ազատութեան		460
608.	Ծիծեռնա՛կ, ծիծեռնակ	Գ. Ա. Դոդոխեան	461
609.	Կամաւոր հայ գինուոր		461
610.	Կարմիր գինուոր	Վ. Խաչատրեան (Գր. Սիւնի)	462
611.	Կարկուտ տեղաց	Թորոս	463
612.	Կռուեցէ՛ք տղերք	Մ. Ե.	463
613.	Կռունկ ուստի՞ կուգաս	Ն. Քուչակ (Կ. Վ.)	464
614.	Հա՛ կառուցուեց		465
615.	Հայ ազրինք, եղբարք	Խորէն Եպ. Նար-պէյ	466
616.	Հայաստա՛ն, երկիր	Յ. Մ. Վանանդեցի (Կ. Վ.)	467
617.	Հայաստանից եկած		468
618.	Հայ եղբայրներ, դէ՛հ		468
619.	Հայրենիքդ մոռցի՛ր կ'ըսեն		469
620.	Հայրենիք, հայրենիք		469
621.	Հայրի՛կ, Հայրիկ, քո	Հ. Ճանիկեան	470
622.	Հեռաւոր երկիր	Մ. Տամատեան	471
623.	Հեռո՛ւ կեցէք	Յ. Աղաեան (Լ. Լեւոնեան)	472
624.	Հերի՛ք որդեակք	Մնակեան (Տ. Չուխաճեան)	472
625.	Հերոս մանչեց		473
626.	Հիմի է՞լ լռենք	Գամառ-Քաթիպա	474
627.	Հնչի՛ր դու, հնչի՛ր	Յ. Թմնչուտեան	474
628.	Հրաժարիմք ընկերներ		475

	ԽՕՍՔ	ԵՐԱԺՇՏԹ.	ԷՋ.
629.	Ձախորդ օրերը	Աշուղ Ջիւանի	476
630.	Ձայն մը հնչեց		476
631.	Ձա՛յն տուր ո՛վ ծովակ	Ռաֆֆի	477
632.	Ձա՛յն տուր ո՛վ փէգա		478
633.	Ղարիբ աղբէր, արի՛	Շ. Կուրղինեան	253
634.	Մայր-Արաքսի ափերով	Գամառ-Քաթիպա	478
635.	Մենք անկեղծ գինուոր		479
636.	Մենք չարաւիղն ենք	Ա. Չօպանեան (Ա. Պարթեւեան)	491
637.	Մենք պէտք է կռուենք		480
638.	Մեր հայրենիք	Մ. Նալբանդեանց	481
639.	Միանանք բանուորներ		482
640.	Մի նոր ծաղիկ	Գ. Մահարի (Ռ. Մելիքեան)	482
641.	Մշակ, բանուոր	(Գր. Սիւնի)	483
642.	Յառա՛ջ, ընթանանք		484
643.	Յառա՛ջ, նահատակ	Գ. Կառվարենց	485
644.	Նոյեմբեր ամսուն		485
945.	Նորեկ գեղջկուհի	Խնկօ Ապէր (Ռ. Մելիքեան)	486
646.	Նպատակիս գէթ մի մասը		486
647.	Նպատակիս հասնիմ միայն		487
648.	Ո՛հ ի՛նչ անուշ	Մ. Պէշիկթաշլեան (Տ. Չուխաճեան)	488
649.	Ո՛չ եղբա՛րք, ո՛չ	Խորէն Եպ. Նար-պէյ	489
650.	Ո՛վ ծիծեռնակ	Եղիշէ Վրդ. Դուրեան	489
651.	Ո՛վ որ քաջ է	"	490
652.	Ջա՛ն Ազրբայջան	Ա. Վշտունի (Ա. Տ. Ղեւոնդեան)	308
653.	Սեւ խաւարը	Ա. Ահարոնեան	492
654.	Սեւ-մութ ամպեր	Ա. Իսահակեան (Սպ. Մելիքեան)	493
655.	Վէրքերով լի ջան		493
656.	Վրէ՛ժ կը գոռան	Պ. Դուրեան	494
657.	Տալւորիկի կարիճ	Մ. Տամատեան	495
658.	Տէ՛ր, կեցո՛ դու զՀայս	Մ. Թաղիադեանց (Մ. Եկմալեան)	496

ԽՕՍՔ		ԷՋ
659. Քանի՞ թմրինք		496
660. Քաջասիրտ առիւծ	Յոսում	497
661. Օտա՛ր, ամայի՛ ճամբէքի	Ա. Խանփակեան	498
662. Օտար երկինք, օտար արև	Ռ. Ծատուրեան	498
663. Օտար երկիր, օտար պանդուխտ		499
Բառացուցակ		501
Ցանկ կենսագրութիւններու		505
Ցանկ ժողովրդային և այլ երգերու		506
Ցանկ ազգային երգերու		524

ՍՄ Հայագիտական գրադարան
MAL046433

ԳԻՆ՝	Թղթակազմ		Լաթակազմ
ՍԻՒՐԻԱ ԵՒ ԼԻԲԱՆԱՆ	160 Ս. դհ.	—	175 Ս. դհ.
ՖՐԱՆՍԱ	35 Ֆրանք	—	40 Ֆրանք
ԵԳԻՊՏՈՍ	30 Ե. դհ.	—	35 Ե. դհ.
ԱՄԵՐԻԿԱ ԵՒ ԱՅԼ ԵՐԿԻՐՆԵՐ	1.50 Տոլ.	—	1.75 Տոլ.

Ստանալու համար դիմել՝

A. DER-SAHAKIAN

39, TILEL, ALEP - SYRIE